

ՀԱՆՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀՈԴԿԱԾՆԵՐ
ԵԼՈՒՅԹՆԵՐ
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԵԾ
2008

ВО ИМЯ НАЦИОНАЛЬНОГО ЕДИНЕНИЯ

АРТАШЕС ГЕГАМЯН

СТАТЬИ
ВЫСТУПЛЕНИЯ
ИНТЕРВЬЮ

ЕРЕВАН
ТИГРАН МЕЦ
2008

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայտնությունն արած չեն լինի, եթե ասեն, որ այսօր մեր երկրի հասարակական-քաղաքական, պետական-կուսակցական ամենաճանաչված, հեղինակավոր ու ազդեցիկ գործիչներից մեկը Արտաշես Գեղամյանն է: Վերջին երեք տասնամյակների ընթացքում նա մշտապես եղել է հասարակական-քաղաքական կյանքի բովում, իր ելույթներով, հոդվածներով, հարցազրույցներով արծագանքել ու արծարծել է ազգային-համամարդկային հնչեղություն ունեցող հարցեր: Հարցեր, որոնք առանձնանում են կենսական հնչեղությամբ ու հիմնավորումներով՝ ազգային գաղափարական հենքի վրա: Իսկ վերջին ութ տարիների ընթացքում, ներկայացնելով Հայաստանի խորհրդարանը եվրոպական և միջազգային ամենահեղինակավոր կառույցներում, Արտաշես Գեղամյանը բարձր է պահել մեր ժողովրդի ու հայոց պետականության պատիվը՝ լայն ճանաչում և հարգանք առաջացնելով իր անձի նկատմամբ նաև համաշխարհային ճանաչում ունեցող քաղաքական ազդեցիկ լիդերների միջավայրում:

2006 թ. հրատարակվել է Ա.Գեղամյանի «Հողվածներ, հարցազրույցներ, ելույթներ» ստվարածավալ ժողովածուն, որտեղ ի մի էին բերվել հեղինակի 30-ամյա հասարակական-քաղաքական ակտիվ գործունեության ժամանակագրությունը՝ արտացոլված նրա գրավոր և բանավոր խոսքում:

Սույն հատորում ընդգրկված են 2006 թ. հոկտեմբերից 2007 թ. դեկտեմբեր ժամանակահատվածում Ա.Գեղամյանի հոդվածները, հարցազրույցներն ու ելույթները, թվով __ նյութ: Դրանք, ըստ էության, նշված ժամանակահատվածում մեր պետության ու ժողովրդի պատմության շարադրանքն են՝ երկրում ընթացող զարգացումների վրա անմիջական ազդեցություն ունեցող մասնակցի խորաթափանց հայացքով, գիտա-

վերլուծական համոզիչ մակարդակով: Հեղինակն իր մտքերը ներկայացնում է պատասխանատվության խոր զգացումով, երկրի և ժողովրդի հանդեպ տածած անսահման սիրով ու հարգանքով: Իսկ իրողությունների, փաստերի շրջանակը մեծ ընդգրկում և բախտորոշ նշանակություն ունեցող հարցեր են՝ ինքնատիպ, ճշմարիտ մեկնաբանություններով: Սրանով հանդերձ, գիրքը կյանքի հարուստ ճանապարհ անցած, մեծ կենսափորձ կուտակած, բանիմաց և ուղղամիտ մարդու իմաստալից խոհերն ու մոտեցումներն են մեր երկրի մոտիկ անցյալի, ներկայի և գալիքի, մեր հասարակությանը հուզող ու հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների մասին: Դրանից կարող են դասեր քաղել, շատ բան սովորել ինչպես քաղաքականությամբ զբաղվողները, այնպես էլ ներկա և ապագա սերունդները:

... Նախաձեռնելով հատորի հրատարակությունը, խնդիր է դրվել մեր հասարակությանը ներկայացնել Հայաստանի հասարակական-քաղաքական հայտնի գործչի՝ Արտաշես Գեղամյանի բեղմնավոր և արդյունավետ գործունեության վերջին մեկ տարվա արդյունքը: Ի դեպ, մերօրյա և ոչ մի գործիչ, կարծում են, նման հետևողական աշխատանք չի կատարել ու չի կատարում: Այս առումով Ա.Գեղամյանը մեր միջնադարյան գրիչների հայտնի պատգամի արժանավոր ժառանգն է՝ «Ձեռս գնայ, դառնայ ի հող, Գիրս մնայ յիշատակող»:

Ավարտելով հակիրճ խոսքս Ա.Գեղամյանի սույն ժողովածուի մասին, կրկնեմ, որ ընթերցողն ուսանելի շատ բան կքաղի տարբեր պարբերականներում տպագրված, այստեղ ի մի բերված՝ հարցադրումներից, խորհուրդ-մտորումներից, քաղաքական կանխատեսումներից... Անկասկած, հատորը երևույթ է մեր իրականության մեջ, այն իր բովանդակային մասով դրական արժեք կունենա ու ազդեցություն կթողնի Հայաստանի Հանրապետությունում ընթացող զարգացումների վրա...

*ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
բանասիրական
գիտությունների դոկտոր*

ԽՓԻՐ ՅՈՒՐԱՅԻՆԻԴ, ՈՐ ՕՏԱՐՆԵՐԸ ՎԱՆԵՆԱՆ

«Ազգային Միաբանություն» խմբակցության անունից
Արտաշես Գեղամյանի ելույթը՝ «Ազգային ժողովի պատգամավոր
Հակոբ Ռաֆիկի Հակոբյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին»
հարցի քննարկման ժամանակ
(Ազգային ժողովի արտահերթ նիստ, 13.10.2006 թ.)

«**Ա**զգային Միաբանություն» խմբակցությունն ամենևին էլ մտադրություն չուներ հրապարակել ԱԺ արտահերթ նիստում հնչած Արտաշես Գեղամյանի ելույթը: Տարիներ շարունակ իշխանությունների կողմից հեռուստատեսությամբ և մամուլով ապատեղեկատվություն է տարածվել, ինչի ականատեսը եղել ենք բոլորս: Սակայն պատկերացնել անգամ չէինք կարող, որ այդ աստիճան կենդանի ուսուցանելու նիստում հնչած ընդդիմադիր պատգամավորների ելույթները, հատկապես Արտաշես Գեղամյանի բանավոր խոսքի բովանդակությունը: Ըստ որում, հատկանշական էր, որ այդ գործընթացի մեկնարկի սկիզբն այս անգամ անձամբ տվեց պարոն Ռ.Քոչարյանը ԱԺ արտահերթ նիստից անմիջապես հետո՝ Արարատի մարզում լրագրողների հետ կայացած հանդիպման ժամանակ:

Ինքնին հասկանալի էր, որ գործող իշխանությունները, մինչև ականջները խրված լինելով թալանի ու կոռուպցիայի մեջ, փորձելու էին պատրանք ստեղծել, թե, իբր, պայքարում են այդ չարիքի դեմ: Առավել ևս ԱԺ ընտրություններից առաջ խիստ անհրաժեշտ էր մեծամասնական ընտրակարգով պատգամավոր դարձածներին ցույց տալ, թե ինչ է իրենց սպասվում, եթե լռելյայն չենթարկվեն պարոնների Ռ.Քոչարյան-Ս.Սարգսյան զույգին: Թերևս, նորությունն այն էր,

որ նրանք որոշում կայացրին այս անգամ «հանձնել» Սերժ Սարգսյանի հետ մտերիմ մարդու համարում ունեցող անձին:

Հարգելի գործընկերներ, այս արտահերթ նիստը, ըստ էության, նշանակում է, որ մեր գործընկեր, պատգամավոր Հակոբ Հակոբյանը տարիներ շարունակ (1991 թ. սկսած), իբր, խուսափել է հարկեր մուծելուց, հետո ծեծկռտուքն է, որ պատճառ է դարձել այս քննարկման համար: Եվ սա կատարվում է այն հանրապետությունում, որտեղ, դիմում են պարոն գլխավոր դատախազին, օրը ցերեկով հարյուր միլիոնավոր դոլարների կողոպուտ է իրականացվում: Ես ինձ հաշիվ են տալիս՝ ո՞ր ամբիոնից, ո՞ւմ դիմելիս, ի՞նչ են ասում: Ասածս որ մերկապարանոց չլինի, անդրադառնամ փաստերին: Եվ, այսպես, դեռ 1999 թ., երբ որոշվում էին էլեկտրաէներգիայի սակագները, հաշվարկային հաշիվ վերցվեց 1 դոլարը 552,5 դրամին համարժեք, և սահմանվեց 1 կիլովատ-ժամ էլեկտրաէներգիայի սակագին՝ 4,52 ԱՄՆ ցենտին համարժեք դրամ: Դրանից հետո, ինչպես գիտեք, սակագների փոփոխություն տեղի չի ունեցել, բայց դոլարային առումով միայն 2006 թ. 8 ամիսների ընթացքում սահմանված սակագնի գնաճի տեմպը դոլարային արտահայտությամբ կազմել է 145,5%՝ 1999թ. նկատմամբ: Արդյունքում՝ 2006 թ. առաջին կիսամյակի պաշտոնական տվյալներով հավելյալ շահույթը կազմել է 23,1 մլն դոլար [կամ՝ 10 մլրդ 253 մլն դրամ. 2 մլրդ 82 մլն կվտ.ժX (5.63-4,52) ցենտ=23,1 մլն դոլար]: Դրա հետ մեկտեղ նշենք, որ 2004 թ. դոլարի արժեզրկման հետևանքով հավելյալ շահույթը կազմել է 3 մլրդ 401 մլն դրամ, իսկ 2005 թ. համապատասխանաբար 17 մլրդ 978 մլն դրամ: Ընդհանուր առմամբ, անցած 2 տարի 6 ամիսների ընթացքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում կամ չի հարկվել 31 մլրդ 632 մլն դրամի հասնող հավելյալ շահույթ, կամ գրպանվել է: Այս անօրինականությունների առաջն առնելու համար, ի՞նչ արեցին. սեփականատիրոջը փոխեցին, վաճառեցին էլեկտրացանցերը: Հիմա ի՞նչ, հարց են տալիս Ձեզ, գնանք Գլադունչիկի (Հայաստանի

էլեկտրացանցեր ՓԲԸ-ի գործադիր տնօրեն) հետ կռիվ սարքենք, որ այս հարցն էլ ԱԺ-ի քննարկման առարկա դառնա՞:

Հանգամանք երկրորդ՝ կապի բնագավառից: «Արմենտելի» հետ կապված դուլար-դրամ վայրիվերումների արդյունքում դարձյալ մի զարմանահրաշ թվաբանության ականատեսն ենք դառնում, որը գետեղված է ոչ այլուր, այլ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թ. հունվար-դեկտեմբեր» և «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թ. հունվար-դեկտեմբեր» պաշտոնագրքերում: Կարդում ենք, 2005 թ. հունվար-դեկտեմբերին հեռախոսային խոսակցություններից ստացված հասույթը կազմել է 42 մլրդ 739,7 մլն դրամ (էջ 49): Եվ կողքն էլ գրված է համադրելի գներով 2004 թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ գրանցված է 116,4% աճ: Նկատենք, որ 2004 թ. հեռախոսային խոսակցություններից ստացված հասույթը կազմել է 45 մլրդ 461,3 մլն դրամ (էջ 56): Պարոն Հովսեփյան, կրկնեմ, որ թվերը բերված են 2005 թ. ազգային վիճակագրական ծառայության ժողովածուի էջ 49-ից և 2004 թ. նույն ժողովածուի էջ 56-ից: Կնշանակի, որ, պաշտոնական թվաբանության համաձայն, 42 միլիարդը կազմում է 45 միլիարդի 116,4%-ը: Ո՞րն է այս թնջուկի բանալին: Պատասխանը մեկն է՝ կրկնակի թվաբանությունը: Ակնհայտ է, որ 2004 թ. հեռախոսային խոսակցություններից գանձված 45 մլրդ 461,3 մլն դրամ հասույթը 116,4% աճի տեմպի դեպքում, ինչպես արձանագրված է 2005 թ. պաշտոնագրքում, պետք է կազմեր 52 մլրդ 916,9 մլն դրամ, այլ ոչ թե արձանագրված 42 մլրդ 739,7 մլն դրամը: Այսինքն՝ 2005 թ. ավելի քան 11 մլրդ դրամի նշված տարբերությունը (52 մլրդ 916,9 մլն – 42 մլրդ 739,7 մլն) կամ գրպանվել է, կամ հարկային դաշտից որպես հավելյալ շահույթ դուրս է մղվել: Բա էս թվերի հետևում թաքնված հանցագործությունները թողած, պարոն գլխավոր դատախազ, մենք ի՞նչ ենք ընկել ու առաջնահերթություն տալիս հարկումից, իբր, դուրս մնացած 270 մլն դրամից հարկեր չվճարողի հետևից: Կրկնում եմ, իբր, և հիմա կասեմ դրա

պատճառը: Բա ես ինչպես հավատամ այն մարմնին, որը 2004 թ. ապրիլի 13-ին, ասես որպես հանցագործի տուն, եկավ մեր բնակարանը խուզարկության: Է, այդ նույն դատախազությունն էր, չէ՞: Քավ լիցի, ես գիտեմ, որ նրանք հանձնարարություն են կատարել՝ Ռոբերտի և Սերժի: Հիմա ես ո՞նց հավատամ այդ դատախազությանը, ասեք, կամ ո՞րս հավատա: Այս քննարկումը հիշեցնում է Աստվածաշնչում նկարագրված Մարիամ Մագդաղենացու են հայտնի դատը, երբ Տերն ասում է. թող Մարիամ Մագդաղենացու վրա քար չարտի նա, ով անմեղ է: Հիմա պրն Քոչարյանը ստիպում է, որ քարը չարտի կռակցիան, որը պակաս մեղքեր չունի: Լավ է անում, տղերք, հասնում է ձեզ. “Бей своих, чтобы чужие боялись!” — էս ա սրանց որդեգրած սկզբունքը:

Շարունակեմ երկրում իրականացվող հանցագործությունների թվարկումը. 2004 թ. դեկտեմբեր ամսին 132 մլն դոլարով սեփականաշնորհվեց Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի 60%-ը, այն է՝ հսկիչ փաթեթը: Եվ, ուրեմն, այս ձեռնարկության շահույթը հենց այդ նույն 2004 թ. կազմել էր շուրջ 115 մլն դոլար: Նշանակում է՝ 14 ամսում կոմբինատի կոլեկտիվն ամբողջությամբ իր շահույթի հաշվին կարող էր սեփականաշնորհել ձեռնարկությունը և դրանով իսկ դառնալ եզակի դեպք՝ «Ժողովրդական ձեռնարկություն» («Народное предприятие») հիմնելու համար: Տղերքը Գերմանիայում պեղեցին «Քրոնիմետ» անվանումով ինչ-որ կազմակերպություն, որն էլ սեփականաշնորհեց կոմբինատը՝ հնարավորություն ընձեռելով Հայաստանում թալանած «սև փողերն» այնտեղ լվանալու: Երբ լինում են Գերմանիայում, հարցնում են մարդկանց՝ արդյոք գիտե՞ք «Քրոնիմետ»-ի մասին, ենթադրելով, որ դա պետք է լինի շատ խոշոր ընկերություն, որ կարողացել է սեփականաշնորհել մեր այդ հսկան: Ջարմացած պատասխանում են՝ «Արսելոր», «Միտալլսթիլ» լսել ենք, «Սևերստալ» նույնպես լսել ենք, բայց «Քրոնիմետ»-ի մասին չենք լսել: Է, որտեղի՞ց լսեիք: Արածներն ի՞նչ է՝ թալան. սեփականաշնորհել են 132 մլն դոլարով, երբ միայն տարեկան շահույթը

կազմել է 115 մլն:

Բերեն մեկ այլ օրինակ. 2002 թ. Ֆինանսների նախարարության ֆինանսների գլխավոր վարչությունը համապատասխան տեղեկանք էր կազմել, ըստ որի «Միկա Լիմիտեդը» պետությանը պարտք էր մնում 2 մլն 957 հազար դոլար: Այդ փաստն արձանագրելուց հետո, չանցած 15 օր, անհասկանալի ծագումով ինչ-որ փաստաթուղթ մեջտեղ բերեցին և այդ շուրջ 3 մլն դոլարանոց պարտքը ջրեցին: Արդյունքում «Միկա Լիմիտեդը» պետությանն էլ պարտք չի: Էս մարդու լկտիությունն էլ հասավ այնտեղ, որ մայիսի 3-ի ավիավթարից հետո, դեռ տարին չլրացած, Թաթայի համերգի սպոնսորությունն է անում, ֆինանսավորում: Էս մարդը մեր հայկական աղաթների հետ ոչ մի առնչություն չունի: Ջոհերի հարազատների երեսին արցունքը դեռ չի չորացել, իսկ ինքը Թաթա է խաղացնում, որն իր կարիքն ամենևին չունի: Այ, էս են սրանց բարքերը:

Եվ այս պայմաններում էլ մեզ ուզում են համոզել, որ այսօր քննարկվող հարցը, իրոք, կրիմիալի դեն պայքար է: Կամ էլ, ի՞նչ, էդ «ֆուլկոնտակտ»-ի հայտնվելը ծեծկռտուքի վայրում պատահակա՞մ էր: Իհարկե, ոչ. նրանք նույն մարզված տղաներն են, ովքեր 2004 թ. ապրիլի 5-ին 250 ոստիկանների աչքերի առաջ ծեծուջարդի ենթարկեցին անգեն մարդկանց, այդ թվում կանանց, այդ թվում լրագրողների: Ճիշտ այն մարդիկ են, ովքեր ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը նույնպիսի վայրագ գործողությունների դիմեցին: Ճիշտ այն նույն մարդիկ են, ովքեր Աշոտ Մանուչարյանին, Սուրեն Աբրահամյանին ծեծուջարդի ենթարկեցին: Ի՞նչ, կարծում եք, չե՞նք հասկանում: Է, որ իմանաս արդարություն են ուզում հաստատած լինել, կգնաս, ինքդ էլ կկռվես, կկանգնես կողքները: Բայց ի՞նչ է իրականում կատարվում. տղերքը ընտրությունների են գնում: Այս քննարկումով մեծամասնականով պատգամավոր անցկացրածներին հասկացնում են՝ եթե անգամ իսկ մաքուր էլ եք աշխատել, գիտեք չե՞, ինչ ուզենք, վրաներդ կսարքենք: Դրա համար էլ՝ «Ինչ ասենք, ոնց ասենք, ըտենց էլ պետք է անեք»: Այ, էս է ստեղծված վիճակը: Եվ այստեղ պետք չէ

մարդկանց թյուրիմացության մեջ զցել: Մենք պետք է վերջապես հասկանանք, որ էս հանցավոր բարքերով պետությունը տանում են կործանման: Դրսում գնում ես, կռիվ ես անում երկրի վարկը բարձր պահելու համար, բա որ վաղը, մյուս օրը, գնանք մեր շահերը կրկին պաշտպանենք, է, կկանգնեն, կասեն՝ ոտից գլուխ հանցագործության մեջ թաղված երկիր եք ու դեռ խոսո՞ւմ եք: Դուք էլ փաստերով դա եք հաստատում: Մենք ո՞նց ենք դրա տակից դուրս գալու: Հայրենասիրությունից են խոսում: Գտան, մարդ գտան՝ Հակոբ Հակոբյանին, որին քավության նոխազ են դարձնում: Բա էդ ո՞նց եղավ՝ մյուս կողմից մի հոգի չի նստել, չէ՞ որ երկուստեք կռիվ է եղել, չէ՞ որ Հակոբ Հակոբյանի վարորդը հիմա էլ հիվանդանոցում պառկած է: Է, որովհետև Սարկիսյան Գրիշը հակառակ կողմի կռիշան է, ո՞րս չի հասկանում: Որովհետև Սարկիսյան Գրիշն ու Սարգսյան Սերժը ներքին հակասություններ ունեն, իսկ մաէստրո Ռոբերտ Քոչարյանն էլ նրանց հարաբերությունները ռեգուլիրովկա է անում (հիշեցնենք, որ Հակոբ Հակոբյանը Հանրապետական կուսակցության շարքերն է մտել Սերժ Սարգսյանի թիմով): Եվ հերիք է մարդկանց աչքերին թող փչեք, հերիք է էսքան մարդկանց ուշադրությունը շեղեք այլ ուղղությանը, որը ճշմարտության և իրականության հետ կապ չունի: Ձեր ժպիտն ինձ հուշում է (դիմում է հանրապետության գլխավոր դատախազին.-*խմբ.*), որ դեսյատկա են խփել:

«Ազգային Միաբանություն» խմբակցությունն այս իշխանությունների կողմից այսօր բեմականացված ֆարսին չի մասնակցելու: Շնորհակալություն:

ԵՐԲ ՎՏԱՆԳՎԱԾ Է ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սիրելի ընթերցող, ձեր դատին ենք ներկայացնում Արտաշես Գեղամյանի բանավոր զեկուցման շարադրանքը, որը հնչել է ս/թ հոկտեմբերի 16-ին «Հակակրիմիալ շարժման» կողմից կազմակերպված հասարակական լուսնների ժամանակ: Ջեկուցում, որը, իրավամբ, իշխանությունների վարած տնտեսական ու դրամավարկային արատավոր քաղաքականության դատավճիռը դարձավ: Ա.Գեղամյանի ելույթում համոզիչ բացահայտված է երկրում իրականացվող աննախադեպ կողոպուտի մեխանիզմը, որը ծանր հարված է հանրապետության գրեթե յուրաքանչյուր բնակչի և երկրի էկոնոմիկայի համար:

Հարգելի գործընկերներ, այսօր քննարկվող հարցը, թերևս, այն եզակիներից է, որը, ասես թե, լուսապատճենում է երկրի ողջ տնտեսությունը: Ստորև փորձեն ներկայացնել խնդրո առարկա հարցի էությունը:

Եվ, այսպես, ի՞նչ են ասում մեր իշխանավորները, երբ ճգնում են հիմնավորել դոլարի արժեզրկումը և դրամի արժևորումը: Նախևառաջ պնդում են, որ դա պայմանավորված է տնտեսության դինամիկ զարգացմամբ ու օտարերկրյա մեծածավալ ներդրումներով: Մի խոսքով, ուզում են ժողովրդին համոզել, որ Հայաստանի տնտեսությունը չափազանց առողջ է և դրա պտուղն էլ այն է, որ ազգային դրամն արժևորվում է: Մինչդեռ պաշտոնական վիճակագրությունը վկայում է ճիշտ հակառակը՝ տնտեսության լուրջ հիվանդ լինելու մասին: Տնտեսությունը բնութագրող ցուցանիշները, որ այժմ բերելու են, վերցված են Հայաստանի Հանրապետության ազգային

վիճակագրական ծառայության ու Կենտրոնական բանկի պաշտոնագրերից:

Իշխանությունները, մասնավորապես, նշում են, որ դոլարի արժեզրկումն ու դրամի արժևորումը ՀՆԱ-ի աննախադեպ աճի հետևանք են: Ձեր ուշադրությանն են ներկայացնում հետևյալ թվերը. 2001 թ. մեկ դոլարի փոխարժեքը պաշտոնապես հայտարարված է եղել 555 դրամ: 2001 թ. ՀՆԱ-ի աճի տեմպերը նախորդ տարվա նկատմամբ եղել է 109,6%: 2002 թ. մեկ դոլարի փոխարժեքն աճել և դարձել է 573,35 դրամ, ՀՆԱ-ի աճի տեմպն էլ երկանիշ թվով է բնութագրվել. այն նախորդ տարվա նկատմամբ եղել է 112,9%: Շարունակեմ. 2003 թ. դոլարը կրկին արժևորվել է, մեկ դոլարն արժեցել է 578,77 դրամ և նույնպես արձանագրվել է ՀՆԱ-ի երկանիշ աճ, այն է՝ 113,9%: Այսինքն՝ պնդումը, թե դրամի արժևորումը պայմանավորված է տնտեսական աճով, վերը բերած 3 տարվա ցուցանիշները փաստում են, որ դա ոչ այլ ինչ է, քան մեր իշխանությունների կողմից հրապարակ իջեցված ապատեղեկատվություն, բլեֆ: Իսկ երբ 2004 թ. արձանագրվում է արդեն ՀՆԱ-ի ավելի ցածր աճի տեմպ (եթե 2003 թ. 113,9% էր, ապա 2004 թ.՝ 110,1%), դոլարն արժեզրկվում է՝ դառնալով 533,40 դրամ: Նույն միտումն արձանագրվել է 2005 թ. և 2006 թ. ութ ամիսների ընթացքում: Իսկ ի՞նչպես կարելի է բացատրել այս ամենը. չէ՞ որ ՀՆԱ-ն ավելի դինամիկ էր աճում այն տարիներին, երբ աճ էր գրանցվել դոլարի փոխարժեքում: Պարզապես, 2003 թ. նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամանակ իշխող տղերքն ընտրողներին կաշառք տալու համար ահագին ծախս էին քաշել և կրած «նյութական վնասը» վերականգնելու համար գտել էին եզակի ճանապարհը, այն է՝ ժողովրդից հետ վերցնել իրենց տված գումարները: Ինչո՞ւ են ժողովրդից ասում, որովհետև բնակչության զգալի մասն օգտվում է դրսից ստացվող դոլարային օգնությունից, այսպես կոչված, տրանսֆերտներից, ինչն էլ կողոպուտի ենթարկեցին: Անգամ իսկ հաշվի չառան այն, որ եթե դրսից ստացվող դոլարային օգնությունը չլինի, ապա բոլորս գիտենք, որ

ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը սովի կմատնվի: Եվ դա արեցին շատ ու շատ հնարամտորեն: Ստահոգիչն այն է, որ հիշատակած տարիների ընթացքում՝ 2001-2006 թթ., մենք ականատեսն ենք եղել ինչպես Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների, այնպես էլ առևտրային բացասական հաշվեկշռի աճի աննախադեպ տեմպերի, որը պետք է հանգեցներ դոլարի արժևորմանը, սակայն տեղի ունեցավ հակառակը: Պարզեցնեն միտքս. այդ ընթացքում դրսից մեր երկիր ավելի շատ ապրանք է բերվել, քան հանրապետությունից հանվել է, և առևտրային հաշվեկշիռը, այսինքն՝ հիշատակած ժամանակահատվածում ներմուծման ու արտահանման տարբերությունը, եղել է սոսկ և սոսկ բացասական, այն էլ՝ իր մեջ ներառելով աճի տեմպեր: Հիմա ձեզ հայտնեն այդ թվերը: Եվ, այսպես, 2002 թ. ներմուծման աճի տեմպը 2001 թ. նկատմամբ կազմել է 113,3%, 2003 թ. 2002-ի նկատմամբ՝ 128%, 2004 թ. 2003-ի նկատմամբ՝ 106,4%, 2005 թ., երբ ՀՀ-ում արդեն շեշտակի արժեզրկվեց դոլարը, 130,8%, իսկ 2006 թ. հունվար-օգոստոսին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, ներմուծման աճի տեմպը կազմել է 120%, բացասական հաշվեկշռի աճի տեմպն էլ՝ 150,4%: Այստեղ վտանգավորն այն է, որ արտահանման նվազում է տեղի ունենում, որի արդյունքում արդեն մեր՝ տեղական, հայրենական արտադրողը դժվարանում է իր արտադրանքը դրսում իրացնել: Դրա խոսույն վկայությունն այն է, ամենաթարմ թիվը բերեն, որ նախորդ տարվա համեմատ 2006 թ. հունվար-օգոստոսին գրանցվել է արտահանման ծավալի կրճատում, որ կազմել է 96,4%: Այսինքն՝ արտահանման ծավալը սեղմվել է:

Հարց է առաջանում ինչո՞ւ է երկրի մակրոտնտեսությունում ստեղծվել նման պարադոքսալ իրավիճակ և ո՞րն է դրա պատճառը: Հիշենք, որ 2005 թ. առևտրային հաշվեկշիռը եղել է բացասական՝ կազմելով 817,6 մլն դոլար: Վերստին բերեն մի շարք ուշագրավ փաստեր: Այսպես, վիճակագրությունը վկայում է, որ դատական ատյանների կողմից ընդունված վճիռների չկատարումը հասնում է ծայ-

րաստիճան վտանգավոր չափերի: Մասնավորապես այն վճիռների, որոնք տնտեսվարող սուբյեկտներին պարտադրել են պետության հասանելիք գումարները մուծել բյուջեի և Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի հաշվին: Մինչդեռ այդ գումարների զգալի մասն այդպես էլ չի վերականգնվել: Օրինակ, 2003 թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեին, Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին, ֆիզիկական և իրավաբանական անձանց օգտին կատարողական բոլոր վարույթներով բռնագանձման ենթակա գումարներից չի վերականգնվել 47 մլրդ 705 մլն դրամ: Այլ կերպ ասած՝ ճարպիկ տղերքը ֆիկտիվ հիմնարկներ են ստեղծում, մեծածավալ գործարքներ կատարում, այդ գործարքներն անելուց հետո, արհեստականորեն այդ հիմնարկները փակում են, իբր, սնանկանալու պատճառով, և արդյունքում պետությունը, զորօրինակ, կրկնեն, միայն 2003 թ. դատարանով որոշված 47 մլրդ 705 մլն դրամ այդպես էլ չի կարողացել վերականգնել: Այս թիվն արձանագրված է Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003 թ. հունվար-դեկտեմբերին» պաշտոնագրքի էջ 170-171-ում: 2004 թ. նույնաբովանդակ ցուցանիշը կազմել է 31 մլրդ 534 մլն դրամ (տե՛ս 2004 թ. պաշտոնագրքի էջ 172-ը): Իսկ 2005 թ. չի վերականգնվել 25 մլրդ 803 մլն դրամ (տե՛ս համապատասխան պաշտոնագրքի էջ 165-ը): Ինչպես տեսնում եք, թալանի կիզակետը 2003 թ. էր՝ վերը հիշատակված պատճառով: Կրկնում են, տղերքը փող էին ծախսել և այն շտապ պետք էր ոչ միայն վերականգնել, այլև մի բան էլ ավել գռվել: Ասեն նաև, որ պաշտոնագրքերի էջերը միտումնավոր ընթերցեցի, որովհետև իշխանական լրատվամիջոցները վաղը առանց անհարմար զգալու կհայտարարեն՝ բերվեցին թվեր, որոնք հայտնի չէ, թե որ աղբյուրից էին վերցված: Եվ, այսպես, վերջին երեք տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության բյուջեն, ինչպես նաև Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը չեն ստացել 105 մլրդ դրամ գումար, այլ կերպ ասած՝ դրանք

գրպանվել են: Անտարակույս, այդ գումարները գրպանվել են ոչ թե ընդդիմադիր քաղաքական գործիչների, այլ յուրացվել և թալանվել են իշխանության հովանու ներքո գործող օլիգարխների ու քրեածին անձանց կողմից: Սա ակնհայտ է բոլորիս համար, որովհետև խոսքը չի գնում անգամ իսկ 250-300 մլն դրամից հարկեր չմուծելու մասին, ինչի համար մեծ խաբարով Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարեցին, պատրանք ստեղծելով, թե, իբր, կրիմիալի դեմ պայքար են ծավալում: Խոսքը, հարգելի գործընկերներ, գնում է 105 մլրդ դրամ յուրացված, թալանված գումարների մասին, ինչն արձանագրվել էր Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության պաշտոնագրքերում: Ասեմ ավելին. պաշտոնական վիճակագրության համաձայն 2005թ., ըստ կազմակերպությունների ամփոփ ֆինանսական տվյալների, Հայաստանի Հանրապետությունում շինարարության ոլորտի միայն 65,5%-ն է, որ աշխատել է եկամուտով, կրկնում են, 65,5%-ը, իսկ 34,5%-ն էլ աշխատել է վնասով կամ առանց շահույթի: Ուղղակի վնասով աշխատող շինարարական կազմակերպությունների կշիռը կազմել է 12,9%, վերջիններիս կրած վնասն էլ 587,7 մլն դրամ: Եվ այս ցուցանիշներն իշխանություններն ընդունել են «հալած յուղի» տեղ: Ստացվում է, որ շինարարության ոլորտում աշխատող կազմակերպությունների ավելի քան մեկ երրորդը, չունենալով շահույթ կամ կրելով վնասներ, այնուամենայնիվ, 2005 թ. 2004 թ. նկատմամբ ընդհանուր առմամբ ապահովել է 134,2% շինարարության աճի տեմպ: Համեմայն դեպս, վիճակագրական ծառայությունը սա է փաստում (տե՛ս 2005 թ. պաշտոնագրքի էջ 36-ը): Իսկ շինարարության ճնշող ծավալները, ինչպես փաստում է նույն վիճակագրությունը, 81,16%-ը, հայտնի է, որ իրականացվում է Երևան քաղաքում, այն էլ՝ էլիտար շենքերի կառուցումով: Ես տեսնում եմ, որ այստեղ շինարարության հետ առնչվող մարդիկ կան, որ կհաստատեն հետևյալ թվերը. մեկ քառակուսի մետր բնակելի մակերեսն ամենաճոխացված թվերով այսօրվա շուկայական գներով շինարարի վրա նստում է լավագույն դեպքում 250-300 դոլար: Ամենաորակ-

յալ շինանյութի օգտագործման պարագայում անգամ 300 դոլարը չի գերազանցում: Մինչդեռ, ինչպես գիտեք, մեկ քառակուսի մետրի համար վաճառքի գները նվազագույնը 750-ից 1500 դոլար են կազմում: Այլ կերպ ասած՝ մեկ քառակուսի բնակմակերեսի վաճառքից երաշխավորված է նվազագույնը 500 դոլար մաքուր շահույթ: Նշենք, որ, մասնավորապես, Երևան քաղաքում 2005 թ. շահագործման է հանձնվել 250923 մ² բնակմակերես: Արդյունքում՝ էլիտար շենքերի շինարարությունն իրականացնող իշխանամերձ ձեռներեցները հարկային մարմիններից թաքցրել են նվազագույնը 124 մլն 461 հազար դոլար կամ 57 մլրդ 335 մլն դրամ շահույթ: Ահա սա է փաստում պաշտոնական վիճակագրությունը:

Հաջորդ իրողությունը: Երբ սահմանում էին էլեկտրաէներգիայի սակագները, հաշվարկային միավոր էր վերցվել 1 դոլարը 552,4 դրամ փոխարժեքով: Մինչ օրս էլ սակագնի հաշվարկման հիմքում այս փոխարժեքն է: Դոլար-դրամ վայրիվերումների արդյունքում ունեցանք հետևյալ պատկերը. 2006 թ., մասնավորապես, սեպտեմբերի դրությամբ, մեկ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիան, եթե 1999 թ. հաշվարկված էր ու կազմում էր 4,52 ցենտ, ապա հիմա կազմում է 6,58 ցենտ (սեպտեմբերին դոլարի արժեքը կազմել է 380 դրամ): Եվ դոլարի արհեստական արժեզրկման հետևանքով միլիարդավոր դրամներ դուրս են մնում պաշտոնական հաշվառումից: Որպեսզի ձեզ թվերով չհոգնեցնեն, միայն բերեն առավել կարևորները. 2004 թ. դոլարի արժեզրկման արդյունքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն ստացել է 6 մլն 377 հազ. դոլար կամ 3 մլրդ 401 մլն դրամի հավելյալ շահույթ: 2005 թ. այդ նույն ցուցանիշը կազմել է 17 մլրդ 978 մլն դրամ, իսկ 2006 թ. ութ ամիսների ընթացքում՝ 10 մլրդ 253 մլն դրամ: Եվ, այսպես, փաստորեն, 2 տարի 6 ամիսների ընթացքում հավելյալ շահույթը, որ դուրս է մնացել հարկային դաշտից և չի հարկվել, կազմել է 31 մլրդ 632 մլն դրամ: Ես միտումնավոր եմ ասում՝ դուրս են մնացել, որովհետև դա են վկայում այդ ՓԲԸ-ի հարկային մուտքերը: Սակայն համոզված կարելի է ասել, որ այդ գու-

մարները պարզապես յուրացվել են, որովհետև պաշտոնական վիճակագրական և ոչ մի վերլուծության մեջ ստացված հավելյալ շահույթի ծավալները չկան: Այսինքն՝ 31 մլրդ 632 մլն դրամ էլ տղերքն այստեղ կերան: Ձավեշտն այն է, որն արդեն իսկ ավանդույթ է դառնում, որ երբ հարկերից խուսափելու կամ թալան անելու դեպքերն արդեն ակնհայտ են լինում, ազգային ջոջերը դիմում են հայտնի հնարքին, ռուսերեն ասած՝ «опускают концы в воду»: Պարզապես նրանք վաճառում են հարկերից խուսափող այդ ձեռնարկությունները, ինչի ականտեսը եղանք «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի դեպքում ևս: Նրանք «Միդլենդ ռեսուրսիս» կոչված շինծու կազմակերպությանը պատկանող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն վաճառեցին ռուսական հայտնի «ՌԱՕ ԵԷՍ» հոլդինգի ստորաբաժանումներից մեկին: Վաճառքից հետո արդեն իսկ ուժի մեջ է մտնում «не пойман, не вор» դիպուկ կարգախոսը:

Իշխանությունների, մեղմ ասած, թողտվության պայմաններում, հերթական մեծ կողոպուտ հիշեցնող փաստն ի հայտ եկավ արդեն «Արմենտելի» պարագայում: Վարչակազմը դուլար-դրամ փոխարժեքի հետ առնչվող հարցերում իր խարդավանքներում էնքան է խճճվել, որ գործը հասցրել է զավեշտի: Այսպես, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թ. հունվար-դեկտեմբերին» պաշտոնագրքում (էջ 49) նշված է, որ հեռախոսային խոսակցություններից ստացված հասույթը կազմել է ոչ ավել, ոչ պակաս, քան 42 մլրդ 739,7 մլն դրամ: Եվ կողքն էլ գրված է՝ համադրելի գներով 2004 թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ գրանցված է 116,4% աճ: Նշենք, որ 2004 թ. հեռախոսային խոսակցություններից ստացված հասույթը կազմել է 45 մլրդ 461,3 մլն դրամ (տե՛ս 2004 թ. պաշտոնագիրք, էջ 56): Ստացվում է, որ 42 մլրդ 739,7 մլն դրամը, համաձայն պաշտոնական վիճակագրության, կազմում է 45 մլրդ 461,3 մլն դրամի 116,4%-ը: Այս զարմանահրաշ թվաբանության հետևում թաքնված է, մեղմ ասած, հարկերից խուսափելու միտում, եթե չասենք՝ կողոպուտ: Պարզեմ միտքս. 2004 թ. հեռախոսային խո-

սակցություններից գանձված 45 մլրդ 461,3 մլն դրամ հասույթը 116,4% աճի տեմպի ապահովման պարագայում պետք է գրանցեր 2005 թ. ստացված 52 մլրդ 916,9 մլն դրամի հասույթ, մինչդեռ վիճակագրական պաշտոնագրքում արձանագրված է 42 մլրդ 739,7 մլն դրամ: Ըստ էության, հաշվառումից դուրս է մնացել ավելի քան 10 մլրդ դրամ (52 մլրդ 916,9 մլն – 42 մլրդ 739,7 մլն): Այլ կերպ ասած՝ այդքան գումար կամ գրպանվել է, կամ չի հարկվել: Պաշտոնական տեղեկագրքում զետեղված թվեր են սրանք: Տղերքը խառնվել են ու մոռացել, որ 2005 թ. դոլարի փոխարժեքը 2004 թ. համեմատ արժեզրկվել է 16,4%-ով և եթե հեռախոսային խոսակցություններից ստացված հասույթի աճի տեմպերը բնութագրելիս լինեինք դոլարային արտահայտությամբ, ապա, իրոք, կգրանցվեր 116,4% աճի տեմպ: Այն աստիճանի են խառնվել, որ դոլարային արտահայտությամբ աճի տեմպը բռնել ու դրել են դրամով, երբ արձանագրված է նախորդ տարվա համեմատ փաստացի ավելի ցածր ցուցանիշ: Կատարված մեքենայությունների մեջ դրականը, թերևս, այն է, որ հետևել այս խարդավանքն ի հայտ են բերել: Եվ այստեղ, երբ համադրելի զներով ես վերլուծություն անում, ապա, իրոք, համոզվում ես, որ «Արմենտելում» 10 մլրդ 35 մլն դրամ առնվազն շրջանցել է հարկային ոլորտը, եթե չասենք՝ թալանվել է: Ձեռագիրը նույնն է: «Արմենտելն» էլ են վաճառում, արդեն իսկ տեղավորվելով այս դեպքը բնութագրելու համար սազական՝ «ищи ветра в поле» մեկ այլ կարգախոսում: Վաճառքից հետո էլ կասեն՝ «Արմենտելը» հարկային մարմիններին տարեկան հաշվետվություններ է ներկայացրել, պետական ատյաններն էլ ընդունել են դրանք, ոչ ոք այլևս մեղադրել չի կարող որևէ մեկին:

Անօրինականությունների, թալանի ցանկը կարելի է շարունակել, բայց, կարծում եմ, հիշատակածս փաստերը բավական են պնդելու, որ Հայաստանի Հանրապետության տնտեսության զգալի ոլորտը գործում է ստվերում: Եվ այդ ստվերում գործող «հերոսները» արդեն այն աստիճանի են լկտիացել, որ, տնտեսության զգալի մասը ստվե-

րում գործելու պարագան նկատել չտալով, զբաղված են աչքակապությամբ՝ գլուխ գովելով, թե տնտեսությունն աճ է ապրում: Մինչդեռ մենք ականատեսն ենք երկրի մակրոէկոնոմիկայի լրջագույն հիվանդության: Այնուամենայնիվ, ո՞րն է հանելուկը, ինչպե՞ս է ստացվում, որ տնտեսության այս պայմաններում հանկարծ դրամն արժևորվում է, դոլարն էլ անկում է ապրում: Այսօր, խորհրդարանական լսումների ժամանակ Կենտրոնական բանկի խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանին դիմեցի հարցով, թե վճարային հաշվեկշիռն անցած տարիների ընթացքում ի՞նչ քվերով են բնութագրվում: Եվ, այսպես, համաձայն Կենտրոնական բանկի պաշտոնական տվյալների, վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով [պարզաբանեմ. ընթացիկ հաշիվ ասելով՝ նկատի ունեն երկիր մուտք գործող վճարների (ապրանքների) և երկրից դուրս իրականացվող վճարների հարաբերակցությունը որոշակի ժամանակահատվածում]: Կենտրոնական բանկը փաստում է, որ 2002 թ. վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը եղել է բացասական, ունեցել է ճեղքվածք 148 մլն դոլարի չափով, 2003 թ.՝ 190 մլն դոլարի չափով, 2004 թ.՝ 161 մլն դոլարի չափով, 2005-ին՝ 104 մլն դոլար, 2006 թ. առաջին կիսամյակում՝ 187 մլն դոլարի չափով բացասական հաշվեկշիռ: Այսինքն, վերջին հաշվով, վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ճեղքվածքի չափով երկրից դոլար ավելի է տարվել, քան ներմուծվել է: Եվ այս պարագայում արտարժույթի շուկայում պետք է հակառակ պրոցես ընթանար. եթե դոլարը երկրից դուրս է տարվում, ապա ֆինանսական շուկայում դոլարի պակասուրդ է զգացվում և վերջինիս փոխարժեքը, բնականաբար, պետք է բարձրանար: Իսկ մեզանում կատարվում է հակառակը: Բա այս հանելուկը, ո՞րն է: Հանելուկը շատ պարզ է. ազատական շուկայական հարաբերություններ որդեգրած երկրներում տնտեսության բնականոն և նորմալ աշխատանքի համար մոնետիզացիայի գործակիցը նվազագույնը պետք է լինի 30-ից 40%, իսկ զարգացած այնպիսի երկրներում, ինչպիսիք են, մասնավորապես, Ֆրանսիան, Ճապոնիան՝ այն գերա-

զանցում է 50%-ը: Ի՞նչ է նշանակում մոնետիզացիայի գործակից. դա շրջանառության մեջ առկա փողի զանգվածի տոկոսային հարաբերակցությունն է ՀՆԱ-ի նկատմամբ: Հիշատակածս անցած տարիներին Հայաստանի Հանրապետությունում այդ թիվը պաշտոնական տեղեկատվության համաձայն տատանվել ու կազմել է 15-18%: Մինչդեռ մակրոտնտեսության բնականոն գործունեության համար մոնետիզացիայի գործակիցը, ինչպես ասացի, պետք է կազմի նվազագույնը 30-40%: Բայց մեր երկրի տնտեսության մեջ այդ ցուցանիշը, կրկնեմ, կազմել է 15-18%, դա էլ այն դեպքում, երբ հաշվի չի առնվել ահռելի չափերի հասնող ստվերային տնտեսությունը: Իսկ վերը բերածս թվերը և, ինչու չէ, Համաշխարհային բանկի համապատասխան վերլուծությունները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում տնտեսության 40%-ը գործում է ստվերում: Հանգամանք, որը և ոչ մի հակառակ փաստարկով որևէ պետական մարմնի կողմից մինչ օրս չի հերքվել: Այսպիսով, եթե մենք ստվերում գործող տնտեսության 40%-ն էլ գումարելի ենք դարձնում ՀՆԱ-ին, ապա ստացվում է, որ մոնետիզացիայի գործակիցը կազմում է ոչ թե 15-18%, այլ իրականում՝ 10-12%: Իսկ ինչի՞ է դա հանգեցնում. մեր մակրոէկոնոմիկայում արհեստականորեն ստեղծում են դրամական բազայի պակասուրդ, որը կաթվածահար է անում տնտեսության բնականոն աշխատանքը: Սա հետևանք է այն բանի, որ դրամի բազան 4 անգամ պահանջվածից պակաս է: Իսկ մենք Ձեզ հետ գիտենք, որ երբ ապրանքի առաջարկը շատ ավելի քիչ է, քան պահանջարկը, ապա, բնականաբար, տեղի է ունենում մեծ պահանջարկ ունեցող ապրանքի գնի աճ: Տվյալ դեպքում ապրանքի դերում հանդես է գալիս ազգային դրամը: Եվ, ահա, սա է, որ արհեստականորեն արժևորում է դրամը: Եվ դա տեղի է ունենում պայմանավորված չլինելով այդ աճն ապահովող տնտեսական անհրաժեշտ համապատասխան ցուցանիշներով: Ավելի պարզ ասած՝ արհեստականորեն դրամի պակասուրդ են ստեղծում, իսկ դա էլ իր հերթին հանգեցնում է դրամի արժևորման: Ըստ որում, պահանջվածից 4 անգամ պակաս

դրամի բազա է շրջանառվում երկրի էկոնոմիկայում: Եվ այն, որ Կենտրոնական բանկի խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանն Աժ Լսումների ժամանակ հայտարարեց, թե, իբր, մեծածավալ ներդրումներ, մեծածավալ ինվեստիցիաներ են արվում երկրի տնտեսության մեջ, նույնպես հերքվեցին հենց իր կողմից՝ ԶԶ վճարային հաշվեկշռում բերված պաշտոնական թվերով: Պրն Տ. Սարգսյանը խոսում էր Զայաստանում իրականացվող միլիարդավոր դոլարների հասնող ներդրումների մասին, մինչդեռ Կենտրոնական բանկի տրամադրած ԶԶ վճարային հաշվեկշռի դինամիկան բնութագրող ցուցանիշները վկայում են միանգամայն այլ միտումների մասին: Այսպես, 2002 թ. օտարերկրյա ներդրումներն ուղղակի կազմել են 110,7 մլն դոլար, 2003 թ.՝ 125, 2004 թ.՝ 216, 2005 թ.՝ 251 և 2006-ի առաջին կիսամյակում՝ 107 մլն դոլար: Այսինքն՝ բերված թվերը վերստին հերքում են Տ.Սարգսյանի պնդումները, որ դրամի արժևորումը պայմանավորված է եղել նաև Զայաստանում կատարվող միլիարդավոր դոլարների հասնող ներդրումներով: Կրկնեմ, որ էկոնոմիկայում արիեստականորեն պահանջվածից 4 անգամ պակաս դրամ կա շրջանառության մեջ, իսկ դոլարային կտրվածքով դա նվազագույնը 400 մլն դոլարին համարժեք պակաս դրամ է: Ինքնին հասկանալի է, որ տարեկան կտրվածքով հազիվ 200 մլն դոլարի հասնող ընդհանուր վճարային հաշվեկշիռը, ներառյալ ուղղակի օտարերկրյա ներդրումները, դրամի պակասուրդի նման չափերի պայմաններում դրա արժևորման համար դրական ազդեցություն, այն էլ այդքան շոշափելի, չպետք է ունենային: Այսօր արդեն որոշ պաշտոնյաներ փորձում են միջազգայացնել այս խնդիրը: Արդեն իսկ կան հրապարակումներ, որոնց հեղինակները դրամի նման արժևորումը բացատրելիս գյուտ են անում, ասելով, որ նման երևույթ ժամանակին արձանագրվել է նաև զարգացած այնպիսի երկրների տնտեսությունների մեջ, ինչպիսիք են, մասնավորապես, Զոլանդիան, Մեծ Բրիտանիան, Նորվեգիան: Այդ երևույթն էլ տնտեսագետները որակել էին «հոլանդական հիվանդություն» տերմինով: Նման տեսակետ հայտնողների

հաշվարկը շատ պարզ է: Նրանք կարծում են, որ գործ ունեն այնպիսի մարդկանց հետ, ովքեր որ լսեն «հոլանդական հիվանդության» մասին, իսկույն նրանց չոքերը կթուլանան, էլ հարցի մեջ չեն խորանա: Իսկ ի՞նչ է իրականում, այսպես կոչված, «հոլանդական հիվանդությունը» իրենից ներկայացնում: Անցյալ դարի 50-ական թվականների վերջին — 60-ականների սկզբին Յուսիսային ծովում հայտնաբերվեցին բնական գազի վիթխարի պաշարներ: Դրանց շահագործումից Յուլանդիայի տնտեսության մեջ դոլարային մեծածավալ ներհոսք եղավ: Այդ պայմաններում հոլանդական գուլդենն արժևորվեց (այն ժամանակ, պարզ է, որ գուլդենը, քանզի դեռ եվրո չկար), որովհետև մեծ քանակությամբ դոլար էր երկիր մտնում: Դոլարային մեծածավալ հոսքը անրապնդեց գուլդենը՝ արժևորելով այն դոլարի նկատմամբ: Արդյունքում, բացի հունքային ոլորտից, որն ապահովում էր Յուլանդիայից ապրանքների արտահանման շոշափելի ծավալը, դոլարային կտրվածքով բարձրացավ տնտեսության մնացած բոլոր ճյուղերի արտադրանքի ինքնարժեքը: Ինքնարժեքը բարձրացավ, արտահանվող ապրանքների մրցունակությունը համաչափորեն ընկավ, ինչն իր հերթին բերեց Յուլանդիայից արտահանվող ապրանքների ծավալների կրճատմանը: Այս երևույթն իր հերթին հանգեցրեց Յուլանդիայի տնտեսության ոչ հունքային ճյուղերի ստագնացիային: Ահա հենց այս երևույթն էլ տնտեսագետները անվանեցին որպես «հոլանդական հիվանդություն»: Ժամանակին դրանով հիվանդացել են, ինչպես ասվեց, նաև Մեծ Բրիտանիայի, Նորվեգիայի էկոնոմիկաները: Նորվեգիայի դեպքում «հիվանդության» պատճառ էր դարձել Յուսիսային ծովում հայտնաբերված նավթի պաշարները, որոնց արտահանումից ստացվող արտարժույթը գրանցել էր օրըստօրե աճող ծավալներ: «Յիվանդացել» էին նաև Ինդոնեզիայի ու Կոլումբիայի էկոնոմիկաները: Յիմա կասեն՝ Կոլումբիան ուր, Յուլանդիան ու Նորվեգիան ուր: Կոլումբիայի էկոնոմիկան ենթարկվել էր նմանատիպ «հիվանդության», սակայն այլ պատճառով: 70-ական թվականներին Բրազիլիայում, խիստ անբարենպաստ եղանակի

հետևանքով, ինչպես փաստում է վիճակագրությունը, սուրճի բերքատվության շեշտակի անկում գրանցվեց: Գիշտ այդ ժամանակ Գվատեմալայում երկրաշարժ տեղի ունեցավ, ինչն իր հերթին բերեց սուրճ արտադրող այդ երկրից արտահանման ծավալների զգալի նվազեցմանը: Սուրճ արտահանող այս երկու հիմնական երկրներում գրանցված արտահանման աննախադեպ անկման հետևանքով Կոլումբիայից համաշխարհային շուկա ներկրված սուրճի գները գրանցեցին զգալի աճ: Կոլումբիան դոլարային կտրվածքով սկսեց ստանալ մեծ եկամուտներ, որի արդյունքում երկրի էկոնոմիկայի մնացած ճյուղերը ենթարկվեցին նույն ցնցումներին, ինչին 60-ականների սկզբին ենթարկվել էր Հոլանդիայի տնտեսությունը: Հարց է ծագում, իսկ ո՞րն է Հայաստանի էկոնոմիկայում և ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակի տարբերությունը հիշատակված երկրների համեմատությամբ: Ի տարբերություն վերոհիշյալ երկրների, Հայաստանի Հանրապետությունում ապրանքների արտահանումը գնալով նվազում է, անգամ, ինչպես ես հիշատակեցի, 2005-ի հունվար-օգոստոսի համեմատությամբ 2006 թ. երկրից արտահանվող ապրանքների ծավալը կրճատվել ու կազմել է 96,4%: Ամփոփելով միտքս ասեմ, որ «հոլանդական հիվանդության» հիշատակումը Հայաստանի պարագայում ոչ այլ ինչ է, քան իշխանությունների կողմից միտումնավոր հրապարակ նետված տերմին, որով կփորձեն մոլորեցնել մեր հանրությանը: Ի դեպ, Ռուսաստանի Դաշնությունում արդեն իսկ տարիներ շարունակ գրանցվում է արտահանման ծավալների (նավթի և գազի) դինամիկ աճ, որն ուղեկցվում է արտարժույթի աննախադեպ մեծ հոսքով երկրի ֆինանսական շուկա, սակայն այնտեղ պետական այրերը շատ հեռատես են վարվել: Մասնավորապես, մի քանի թիվ բերեմ: Եթե 1999-2000 թթ. Ռուսաստանի ոսկու և արտարժույթի պահուստները կազմում էին ընդամենը 12 մլրդ դոլար, ապա այժմ դրանք հասել են 287 մլրդ դոլարի: Ահա սա հասկանալի է, երբ այս ամենի արդյունքում ռուսական ռուբլին ամրապնդվում է արտարժույթի համեմատ: Ասեմ ավելին, այնտեղ խե-

լացի են մտածել և այդ ավելցուկ դուլարներով ստեղծել են, հիմնել են վերականգնողական-հավասարակշռող ֆոնդ, այսպես կոչված, “стабилизационный фонд”, ուր այդ տարադրամային կուտակումները գնում են: Այլ կերպ ասած՝ ֆինանսական շուկայում իրականացվում է արտարժույթի (դուլարի) ստերիլիզացիայի քաղաքականություն, որի նպատակն է ավելցուկ դուլարները դուրս բերել շրջանառությունից, որ կարգավորեն, չթուլլատրեն ռուսական ռուբլու արժևորումը: Պետական այրերն այնտեղ գիտակցում են, որ ռուբլու արժևորումը կբերի ռուսաստանյան արտադրության ապրանքների մրցունակության շեշտակի անկման: Իսկ արտահանման նվազեցումը, ինչպես վերն ասվեց, բերում է տեղական արտադրության ծավալների կրճատման, որն էլ իր հերթին հանգեցնում է արտադրության ծավալների սեղմման, շատ դեպքերում՝ փակման, ինչի արդյունքում աճում է գործազրկությունը: Ահա թե ինչ է կատարվում նորմալ, բնականոն ճանապարհով իշխանություն ձևավորած երկրներում: Եվ այս բոլորը, երբ վերլուծում ես, ականայից հարց ես տալիս՝ իսկ ո՞ւմ է ձեռնտու Հայաստանում դրամի արհեստական արժևորումը: Պատմության փորձությունը բռնած հայտնի հարցադրում է սա: Ձեռնտու է՝ օլիգարխներին, ձեռնտու է ճիշտ այն մարդկանց, ովքեր մասնագիտացել են ապրանքներ ներմուծելու մեջ, իսկ մենք ձեզ հետ քաջատեղյակ ենք, որ արտաքին առևտրի ոլորտն ամբողջովին մոնոպոլիզացված է: Լինի դա ցորենի ներկրումը, լինի բենզինի, դիզելային վառելիքի, ծխախոտի և այլնի, բոլոր այդ ոլորտները գործում են մենաշնորհային կարգավիճակում: Եվ այդտեղ անելիք ունեն միայն ու միայն պարոններ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի յուրայինները կամ էլ իրենց հպարտ ձևացնող, բայց վերջիններիս թրի տակով անցած, երբեմնի իրենց «ավտարիտետ» համարող մարդիկ: Վերջիններիս չէի հիշատակի ընդհանրապես, եթե չլիներ մի հանգամանք, որը պետք է բարձրաձայնել: Մենք գործ ունենք մարդկային այն տեսակի հետ, ովքեր սեփական վախը քողարկելու համար փորձում են անհասկանալի ինչ-որ կապեր փնտրել ընդդիմության և իշ-

խանութիւնների միջև, չմոռանալով արանքում կասկածանքի որդ սերմանել հասարակության մեջ՝ ակնարկելով իմ ու Սերժ Սարգսյանի միջև, իբր, եղած կապի մասին: Այս հնամաշ հնարքը հետապնդում է մեկ խնդիր. շեղել մարդկանց ուշադրութունն արդեն իսկ ցցուն դարձած իրենց բարոյական անկումից:

Եվ, այսպես, ի՞նչ են շահում ներմուծողները. շահում են այն, որ եթե 2005 թ., ինչպես հիշատակեցի, դոլարի արժեզրկումը եղել է 16,4%, ապա կնշանակի, որ արդեն սահմանի վրա արտասահմանից ապրանքներ ներկրողները, մասնավորապես հիշատակածս մոնոպոլ ճյուղերում, նվազագույնը 10% երաշխավորված հավելյալ եկամուտներ ունեն՝ միայն դոլար-դրամ խաղից: 2005 թ. Հայաստան է ներմուծվել 1 մլրդ 717 մլն դոլարի ապրանք: Ի սկզբանե, ներմուծողները սահմանում առանց որևէ ջանք գործադրելու նվազագույնը 171 մլն դոլար հավելյալ շահույթ արդեն իսկ իրենց գրպաններն են դրել: Կրկնում են, առանց որևէ ջանքի, զուտ այդ խաղի արդյունքում: Սրանից մի քանի օր առաջ թերթերից մեկում տպագրվեց Վահրամ Ներսիսյանցի (պրն Քոչարյանի խորհրդականներից է) հարցազրույցը, ուր նա ասում էր. «Կարծում են, մեր ներկրողները, ներմուծողները, քանի որ դոլարի արժեզրկման արդյունքում արտոնյալ պայմաններում են հայտնվել, իրենք խիղճ կունենան (ուրեմն Վահրամ Ներսիսյանցն ապավինում է ներմուծողների խղճին.- *Ս.Գ.*) և ներմուծվող ապրանքների գները չեն թանկացնի, որովհետև արդեն իսկ սահմանում իրենք երաշխավորված շահույթ են ստանում»: Մինչդեռ բոլորս գիտենք, որ տեղի է ունեցել նաև ներկրվող ապրանքների գների շեշտակի աճ՝ հենց դոլարային կտրվածքով: Մասնավորապես, տավարի մսի, դիզելային վառելիքի, բենզինի, ծխախոտի, շաքարավազի: Այսպես, վերջինիս գները դոլարային կտրվածքով աճել են 44%-ով, դիզելային վառելիքինը՝ 12%-ով, բենզինինը՝ 14%-ով, ծխախոտինը՝ շուրջ 45-50%-ով: 2006 թ. առաջին կիսամյակում ներկրվել է 62 միլիոն 984 հազ. տուփ ծխախոտ: Ներկրողների եկամուտները, ծխախոտի գների աճի պայմաններում, պատկերացրեք, շուրջ 50%-ով ավել-

լացել են: Ընդհանուր առմամբ, ներկրումից ստացված հավելյալ շահույթը կազմել է առնվազն 350-400 մլն դոլար: Ինքնին հասկանալի է, և դա է վկայում գանձված ուղղակի հարկերի դինամիկան, որ շատ դեպքերում մենք գործ ունենք չհարկվող եկամուտների փաստի հետ:

Եվ երբ այս բոլոր թվերը վերլուծում ես ու այդ թվերի հետևում տեսնում ես, թե բարձրագույն իշխանություններն ինչպիսի գնահատականներ են տալիս խնդրո առարկա երևույթներին, ապա մնում ես զարմացած, երբ ասում են, թե հակակրիմինալ շարժման փուլիկը պայթեց: Ոչ, պարոնայք իշխանավորներ, այստեղ ոչ թե հակակրիմինալի փուլիկը պայթեց, այլ մեկ ուրիշ փուլիկ պայթեց: Այս դեպքում մենք ականատես դարձանք, որ տնտեսական ոլորտը սպասարկողները պարոն Քոչարյանին ապատեղեկացնելով, փաստորեն, դնում են փուլիկի տեղ և նրան անհեթեթ տեղեկատվություն տալիս: Ես երբեք ու երբեք չէի ուզեմ քննարկումը անձնական դաշտ տեղափոխել, սակայն ինձ զարմանք է պատճառում այն գործընթացը, որին ականատես դարձանք վերջերս: Ազգային ժողովի վերջին արտահերթ նիստում (պատգամավորին դատական հետապնդման ենթարկելու հարցի քննարկման ժամանակ), երբ ելույթ ունեցա, դիմեցի երկրի գլխավոր դատախազին՝ վերը բերված փաստերի մասին ուղղակիորեն բարձրաձայնելով, նշելով նաև դրանց սկզբնաղբյուրները: Եվ, ի՞նչ եք կարծում, դրան ի՞նչ հետևեց: Ինչպես միշտ եղել է, ելույթս չհեռարձակվեց, ենթատեքստից կտրված առանձին պնդումներ եթեր արձակվեցին, որից թյուր տպավորություն կարող էր ստեղծվել (իհարկե, միամիտ մարդկանց մոտ, ովքեր մեր իշխանությունների հնարքներին ծանոթ չեն), որ ընդդիմությունը, մասնավորապես, «Ազգային Միաբանությունը», իբր, փորձ է անում պաշտպանել հենց իրենց՝ իշխանությունների հենասյունը հանդիսացող անձին, որը թույլ է տվել ֆինանսական կոպիտ չարաշահումներ: Ահա այսպես են փորձում թյուրիմացության մեջ զցել մարդկանց: Մինչդեռ, եթե ապրեինք նորմալ, իրավական երկրում, երբ, պաշտոնագր-

քերից բերված թվերով, հիշատակելով էջերը, մատնանշում ես խոշորածավալ, առնվազն չհարկված շահույթների մասին (իսկ մենք գործ ունեինք, ինչպես հիշում եք, մի դեպքում չհարկված 105 մլրդ դրամ շահույթի, մեկ այլ դեպքում՝ 31 մլրդ դրամի հետ) փոխանակ անհապաղ միջոցներ ձեռնարկեն պետության շահը վերականգնելու ուղղությամբ, խոսում եմ ինչ-որ փուլիկների մասին: Գիտակցելով այս ամենը Ազգային ժողովի անբիռնից հայտարարվեց, որ մենք չենք մասնակցելու իշխանությունների կազմակերպած հերթական ֆարսին: Ավելին, ասվեց, որ այդ ֆարսը կրկին ապացուցում է, որ վարչակազմը պարզապես պատրանք է ստեղծում, թե պայքարում է կրիմինալի դեմ, իսկ իրականում թոզ է փչում ժողովրդի աչքերին:

Կարելի էր նաև բազմաթիվ այլ փաստեր ու փաստարկներ բերել, բայց, կարծում եմ, հետևություն անելու ժամանակն է: Չետևությունն էլ այն է, որ Կենտրոնական բանկը ֆորմալ առումով իրականացնում է Սահմանադրությամբ իրեն վերապահված գործառույթներ՝ վարելով սղաճի զսպման քաղաքականություն, ինչն իրականում ոչ այլ ինչ է, քան հանրությանը մոլորեցնելու գործընթաց: Ավելին, մենք ականատեսն ենք, որ Հայաստանի Հանրապետության տնտեսությունում թաքնված սղաճը բնութագրվում է երկամիշ թվերով: Վարվող դրամավարկային քաղաքականության արդյունքում Կենտրոնական բանկը, ըստ էության, կամա թե ակամա, քողարկում է ստվերային տնտեսությունում շրջանառվող միլիարդավոր դրամների հասնող կողոպուտը: Այսինքն՝ մենք ձեզ հետ ականատեսն ենք (անմեղության կանխավարկածից ելնելով, թերևս, զգուշավոր արտահայտվեմ) նվազագույնը բացարձակապես անիրազեկ իշխանությունների կառավարման արդյունքում պետությանը հասցվող խոշորածավալ նյութական վնասների փաստի: Իսկ եթե իրերն անվանելու լինենք իրենց իսկական անուններով, ապա հարկ է արձանագրել, որ գործ ունենք քրեածին անձանց հետ սերտաճած ղեկավարության հովանու ներքո երկրում իրականացվող ալան-թալանի հետ: Կամ էլ, մեղմ սասած, վկաներն ենք նրանց անգրագիտության, կամ էլ բանկային

համակարգի գործառույթների ու առավել ևս տնտեսական քաղաքականության չիմացության: Սակայն բոլորիս է հայտնի, որ նրանք այդ ամենը լավ էլ գիտեն, որովհետև որտեղ իրենց շահն է, լավ էլ հասկանում են: Այս ամենի հետևանքով Հայաստանի Հանրապետության տնտեսությունը հայտնվել է նախակոլապսային իրավիճակում, որը հղի է երկրի համար վտանգավոր պայթյունով: Արատավոր նման քաղաքականության պտուղները մենք կճաշակենք 2007-2008 թթ., երբ կարծանագրվի, որ մեր հայրենական արտադրողները հարկադրված են եղել սեղմել արտադրությունը, փակել դրանք, որովհետև դոլար-դրամի արհեստական նման փոխարժեքի պայմաններում անգամ իսկ մեր երկրում սպառում ունեցող տեղական արտադրանքը չի դիմանա ներկրվող նմանատիպ ապրանքների մրցակցությանը: Առավել ևս, երբ ակնհայտ է Հայաստանի ներքին շուկան գրավելու միտումը՝ ներմուծվող ապրանքները դեմախնդային (այսինքն՝ ինքնարժեքից պակաս) գներով ողողելու միջոցով: Արդյունքում մենք կունենանք երկիր, որը գոյատևում է միայն ու միայն դրսից ստացվող օգնության, տրանսֆերտների շնորհիվ, ինչը շատ վտանգավոր երևույթ է:

Հարգելի գործընկերներ, ես ողջունում եմ հակակրիմինալ շարժման նախաձեռնող խմբին՝ նման կենսահույզ հարցը քննարկման առարկա դարձնելու համար: Նաև ցավ եմ ապրում, որ պաշտոնական ատյաններից այդպես էլ չեկան, չմասնակցեցին: Մինչդեռ ուրբաթ օրվա «Իրավունք» թերթում հայտարարություն էր տպագրվել, հրավիրվել էին նաև պարոն Քոչարյանը, Անդրանիկ Մարգարյանը, Տիգրան Սարգսյանը, ֆինանսների նախարարը, այսինքն՝ բոլոր այն պաշտոնյաները, ովքեր ուղղակիորեն պատասխանատվություն են կրում երկրում ստեղծված այս ողբալի վիճակի համար:

Ամփոփեմ խոսքս. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկան գտնվում է խորը ճգնաժամի մեջ, վարվող դրամավարկային քաղաքականությունը քողարկում է մակրոէկոնոմիկան ճարակած հիվանդության վտանգավորությունը: Ուստի, նախ, անհրաժեշտ է անհա-

պաղ ստվերից հարկային դաշտ դուրս բերել հարյուրավոր միլիարդ դրամի հասնող չհարկվող հավելյալ շահույթները: Երկրորդ, անհրաժեշտ է տալ Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսության իրական վիճակի գնահատականը, որից ելնելով մշակել դրամավարկային այնպիսի քաղաքականություն, որի մեխը լինի տնտեսության առողջացումը, հայրենական արտադրողների համար բարենպաստ պայմանների ստեղծումը, արտահանման խթանումը: Միմիայն նման քաղաքականության իրականացումը կնպաստի երկրի էկոնոմիկայի համաչափ ու դինամիկ զարգացմանը, որն էլ իր հերթին կզսպի սղաճը: Հակառակ պայմաններում մենք վտանգում ենք մեր երկրի ու հայոց պետականության ապագան:

ԵՐԲ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՏԵՐ ԿԿԱՆԳՆԻ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ

... Հռոմեացիները ընկալեցին
հաղթելու արվեստը և պարտվողին
գթություն պարգևելը...

Սիրելի ընթերցող, Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում հոկտեմբերի 17-ին «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունում Արամ Աբրահամյանի հեղինակային հաղորդման ժամանակ հնչած ելույթների շարադրանքը (կրճատումներով)՝ «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի, քաղաքագետ Աղասի Ենոքյանի և «168 ժամ» թերթի տնտեսական մեկնաբան Արա Գալոյանի մասնակցությամբ:

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը նպատակահարմար գտավ այն ներկայացնել Ձեր դատին՝ խնդիր ունենալով լայն հանրությանն իրազեկել կուսակցության հատկապես արտաքին քաղաքականության ոլորտում որդեգրած դիրքորոշումների մասին:

Ա.Աբրահամյան - Հաղորդման նպատակն է ներկայացնել կուսակցությունների մոտեցումները մեր ներքին և արտաքին քաղաքականության հրատապ խնդիրների շուրջ: Այսօր մեր հաղորդման հյուրն է «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը: Նրա հետ բանավիճում են քաղաքագետ Աղասի Ենոքյանը և «168 ժամ» թերթի տնտեսական մեկնաբան Արա Գալոյանը: Հաղորդմանը մասնակցում են նաև Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական պետական համալսարանի ու Երևանի պետական համալսա-

րանի ուսանողները, ինչպեսև «Ժողովուրդն է տերը երկրի» միավորման ներկայացուցիչները:

Եվ այսպես, պարոն Գեղամյան, ես չեմ կարող չհիշեցնել, որ 2003 թ. բանավիճելով Սերժ Սարգսյանի հետ Դուք առաջարկեցիք, որ Հայաստանը մտնի ռուբլու գոտու մեջ և հանրահավաքներից մեկի ժամանակ դիմեցիք անձամբ Վ.Պուտինին: Ձեր վերաբերմունքն այս երեք տարվա ընթացքում փոխվե՞լ է, սառե՞լ է ռուսների նկատմամբ, թե մնացել է նույնը:

Ա. Գեղամյան - Նախ, շնորհակալություն հայտնեմ Ձեր տված հարցումը թաքնված զովագրի համար: Կնշանակի, 2003 թ. իմ բանավեճը Սերժ Սարգսյանի հետ այնքան տպավորիչ է եղել, որ երեքուկես տարի անց Դուք այդ բանավեճից դրվագներ եք մեջբերում: Հիշում եք նաև, որ ես հանրահավաքներից մեկի ժամանակ ռուսերեն լեզվով դիմեցի Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինին, դիմեցի ռուսերենով, որովհետև իմ տեղեկություններով նա հայերենին չի տիրապետում և, բնական է, որ իր համար հասկանալի, մայրենի լեզվով դիմեցի: Ինչ վերաբերում է՝ մոտեցումներս փոխվել են, թե չէ, փորձեմ հարցին փոքր-ինչ ընդարձակ պատասխանել: Այս կամ այն երկրների միջև առկա հարաբերությունները բնութագրելիս մենք նախևառաջ պետք է հարց տանք, արդյոք այդ հարաբերությունները բխո՞ւմ են Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության հայեցակարգից և շահերից, տեղավորվո՞ւմ են դրանք հայեցակարգային սկզբունքներում ու ձևակերպումներում, թե ոչ: Ցավոք, 8 տարիների ընթացքում, խոսքս իշխանափոխությունից հետո ընկած ժամանակահատվածի մասին է, մեր երկիրն այդպես էլ չունեցավ Ազգային անվտանգության հայեցակարգ: Հիմա խոստանում են, որ մոտ ժամանակներս կունենանք դա, քանզի արդեն փորձագիտական քննություն է բռնել: Չունենալով նման հայեցակարգ, ասել, թե հայ-ռուսական հարաբերությունները դրական միտում և դրական հեռանկար են խոստանում, թե ոչ, կլինի ոչ պրոֆեսիոնալ: Բայց, բնականաբար, իմ վերաբերմունքը ես պարտավոր եմ ներկայացնել: Վերհիշենք Հայաս-

տանի աշխարհագրական դիրքը. մենք հարևան ենք Վրաստանի, Ադրբեջանի, Իրանի և Թուրքիայի հետ: Ադրբեջանի ու Թուրքիայի հետ, մեղմ ասած, Հայաստանի հարաբերությունները բարեկամական չեն: Իրանի Իսլամական Հանրապետության հետ, ունենալով հաստատված բարիդրացիական հարաբերություններ, չմոռանանք ասել, որ 2005 թ. սկզբներին Մուհամմադ Խաթամին, այն ժամանակ դեռ այդ երկրի պրեզիդենտը, իր հրապարակային ելույթներից մեկում հերթական անգամ հայտարարեց, որ Իրանը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ ներառյալ ազատագրված տարածքներն ու Ղարաբաղը: Սահմանակից երկրներից մնում է Վրաստանը, ում հետ նույնպես հաստատված են բարիդրացիական հարաբերություններ: Սակայն այսօր, ցավոք, Վրաստանը լուրջ խնդիրներ ունի Ռուսաստանի հետ: Նշենք, որ մեր հարևան Վրաստանը հավակնում է անդամակցել Հյուսիս-ատլանտյան դաշինքին՝ ՆԱՏՕ-ին, հանգամանք, որն ամենևին էլ չի ողջունում Ռուսաստանը: Ահա այս տարածաշրջանային արտաքին քաղաքական խճանկարում, երբ հայտնվել ենք Ադրբեջանի հետ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» հարաբերությունների մեջ, չի կարող մտահոգիչ չլինել ստեղծված իրավիճակը: Առավել ևս, երբ Ձեզ հետ միասին ականատեսն ենք դառնում, թե Թուրքիայում ինչ բուռն ու թշնամական արձագանք ունեցավ վերջերս Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից ընդունված հայերի ցեղասպանությունը չճանաչելու համար քրեական պատասխանատվություն սահմանելու մասին օրինագիծը: Այս պարագայում Հայաստանը, տրամաբանական է, որ պետք է ձգտի դաշնակից ունենալ...

Ա.Աբրահամյան - Որը՝ Ռուսաստանն է:

Ա.Գեղամյան - Որը, ելնելով մեր դարավոր հարաբերություններից և, ինչու չէ, թե դրանց դրական, թե բացասական խորքից, այո, Ռուսաստանն է, որը, իրոք, առավել հարմար դաշնակից է: Ըստ որում, հետաքրքրականն այն է, որ եթերում հիշատակված հայ-ռուսական պայմանագրերը կնքվել են հիմնականում նախորդ իշխանությունների օրոք և իրենց զարգացումն են ստացել նոր իշխանությունների

կառավարման տարիներին: Այսինքն, նոր իշխանությունները, որոնք շատ ու շատ հարցերում, հատկապես արտաքին քաղաքականության բնագավառում, դեմ են նախորդներին և քննադատում են նրանց, այս հարցում, կարծես թե, համամիտ են վերջիններիս հետ: Ինչ վերաբերում է եթերում հնչած այն հարցին, թե Ռուսաստանում շարունակում են հայերին սպանել, անդրադառնամ նաև այդ ցավոտ խնդրին: Ցանկացած սպանություն, անտարակույս, խստագույնս դատապարտելի է և պետք է դատապարտվի: Նման մոտեցումը կասկած չպետք է հարուցի: Սակայն ես ուզում եմ անդրադառնալ հետևյալին. ինչո՞ւ նույն լրատվամիջոցները լռության են մատնում մեզանում առկա խիստ մտահոգիչ փաստերը: Այսպես, 2002 թ. Հայաստանում եղել է 69-ը դիտավորյալ սպանություն, 30 սպանության փորձ, 2003 թ.՝ 76 դիտավորյալ սպանություն, 34 սպանության փորձ, 2004 թ. 75 սպանություն և 39 սպանության փորձ, 2005 թ. 55 սպանություն, 24 սպանության փորձ: 2006 թ. հունվար-օգոստոսին էլ գրանցվել է 54 սպանության դեպք և 21 սպանության փորձ: Փաստեր, որոնք զգալիորեն գերազանցում են անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշները:

Ա.Աբրահամյան - Պարոն Գեղամյան, Ձեզնից ակնկալում եմ կարճ պատասխան հարցին՝ ռուբլու գոտի պիտի մտնենք, թե՞ չէ, ասացե՞ք այդ կամ ոչ:

Ա.Գեղամյան - Հարցն այդպես դնել տնտեսագիտորեն կոռեկտ չէ, որովհետև այսօր արդեն իսկ ակնհայտ են հետաքրքիր զարգացումներ, որոնք կարող են լուրջ ազդեցություն ունենալ խնդրո առարկայի վրա: Այսպես, վերջերս Սոչիում կայացած Եվրամիություն-Ռուսաստան գազաթաժողովի ժամանակ Եվրահանձնաժողովի առևտրի հարցերով կոմիսարը՝ Մենդելսոնը, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի առաջ հարց բարձրացրեց, որ Ռուսաստանը և Եվրամիությունը համատեղ զբաղվեն միասնական տնտեսական գոտի ստեղծելու ուղղությամբ: Մենդելսոնը, խոսքս երգահան Ֆելիքս Մենդելսոնի մասին չէ, կոմպոզիտորի մասին չէ, այլ Եվրա-

հանձնաժողովի առևտրի հարցերով կոմիսարի մասին է, ով կարևորեց Եվրամիություն-Ռուսաստան միասնական տնտեսական գոտու ստեղծման հարցը: Այսինքն՝ անգամ Եվրամիությունը Ռուսաստանի հետ ուզում է ստեղծել ընդհանուր, ազատ տնտեսական գոտի և, բնականաբար, սպասվելիք զարգացումների նման պարագայում Հայաստանը, այո, պետք է ձգտի անպայման անդամակցել տնտեսական այդ գոտուն՝ Ռուսաստանի միջոցով:

Ա.Աբրահամյան - Պարզ է: Երկու հարցի վերաբերյալ էլ մեր փորձագետները, երևի, կունենան կարծիքներ: Սկսենք սպանություններից:

Ա.Ենոքյան - Չէ, իմ հարցը պարոն Աբրահամյանին էր ուղղված: Խոսքը ռուսակա՞ն, թե՞ բելոռուսական ռուբլու մասին էր: Եվ պարոն Գեղամյան, դուք նշեցիք, որ Պուլտինը չգիտի հայերեն, բայց, ինձ թվում է, այն ամենից հետո, ինչ որ նա արել է Հայաստանի հետ, արդեն պետք է իմանար հայերեն, բայց, այնուամենայնիվ, Ռուսաստանն ունի Ազգային անվտանգության դոկտրին, մենք չունենք Ազգային անվտանգության դոկտրին: Եվ, ծանոթանալով Ռուսաստանի Ազգային անվտանգության դոկտրինին, մենք տեսնում ենք, թե ինչ դեր ունեն ռուսական ռազմաբազաները Ռուսաստանի անվտանգության համար: Դրանց խնդիրը, իհարկե, Հայաստանի անվտանգությունն ապահովելը չի: Դրանց խնդիրը, ասենք, Ռուսաստանի վրա հավանական հարձարկման դեպքում մի քանի ժամով այդ հարձակունը հապաղեցնելն է: Միաժամանակ, միջազգային ռազմական փորձագետները պնդում են, որ ռուսական դրոշակի առկայությունը թուրքական սահմանի մոտ ստիպում է Թուրքիային մի քանի դիվիզիա ավել պահել հայ-թուրքական սահմանի վրա: Այդ դեպքում կարելի՞ է արդյոք միարժեքորեն դրական գնահատել ռուսական ռազմաբազայի առկայությունը Հայաստանում:

Ա.Գեղամյան - Ռուսական ռազմաբազայի առկայության մասին ես դեռևս ոչ մի գնահատական թե՛ դրական, թե՛ բացասական առումով, չեմ տվել: Ուղղակի, ուրիշ բան, որ այդ հարցին կանդրադառնամ,

դուք դա՞ ի նկատի ունեք: Չմոռանանք, որ Թուրքիան Հյուսիս-ատլանտյան դաշինքի անդամներից մեկն է և ռազմական բնագավառում ինքնուրույն ոչ մի որոշում չի կայացնում: Ուստիև Ռուսաստանի հետ հնարավոր լարումը ընդհանրապես, և, մասնավորապես, Թուրքիայի, պայմանավորված կլինի ՆԱՏՕ-Ռուսաստան հարաբերությունների սրմամբ: Այսօրվա իրավիճակում, երբ ՆԱՏՕ-ի հենասյուն կազմող երկրներից Գերմանիան և Ֆրանսիան Ռուսաստանի հետ հաստատել են ռազմավարական կապեր, ավելին՝ փորձագետները դա որակում են որպես Բեռլին-Փարիզ-Մոսկվա առանցք, խոսել ՆԱՏՕ-ից սպառնացող վտանգի մասին և դա պայմանավորել Հայաստանում տեղաբաշխված Ռուսաստանի ռազմակայանով, կարծում են, արդարացված չէ: Դրա հետ մեկտեղ, օրակարգային հարց է 2007 թ. Եվրամիություն-Ռուսաստան համագործակցության հեռանկարային պայմանագրի ընդունումը: Չմոռանանք նշել, որ նմանատիպ գործող պայմանագրի ժամկետը լրանում է հենց այդ տարի: Ի դեպ, գործող պայմանագրում սևը սպիտակի վրա ընդգծված է առանցքային երկու հարց՝ Եվրամիություն-Ռուսաստան ներքին ու արտաքին անվտանգություն ապահովելու խնդրում համագործակցության մասին, ինչպես նաև համագործակցություն հունանիտար (առողջապահության, կրթության, գիտության) ու տնտեսական ոլորտներում: Այսինքն, երբ Ռուսաստանը և Եվրամիությունը մի կողմից, Ռուսաստանը և ՆԱՏՕ-ն մյուս կողմից ծավալել են գործնական հարաբերություններ, ավելին, երբ ի դեմս ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի և Եվրամիության հանձնաժողովի նախագահի ու դրանց համապատասխան կառույցների կողմից տարվում է Ռուսաստանի հետ երկարաժամկետ պայմանագիր կնքելու աշխատանք, այդ պարագայում թուրքական տասը, թե քսան դիվիզիա կլինի մեր սահմանի մոտ, դա և ոչ մի հարց չի լուծի: Առավել ևս, դուք շատ լավ գիտեք, որ աշխարհում սպառնազինության այսօրվա մակարդակն այնպիսին է, որ դիվիզիաները չէ, որ տարածաշրջանում կարող են հարցեր լուծել:

Ա.Ենոքյան - Ռուսական մի դիվիզիան հարց լուծո՞ւմ է:

Ա.Գեղամյան - Ռուսական մեկ դիվիզիան բարոյական շատ մեծ խթան է մեզ համար, ըստ որում, որպեսզի հեռուստադիտողի մոտ ակամա չստեղծվի այն տպավորությունը, թե ես Ռուսաստանի դեսպանությունն եմ ներկայացնում, ասեմ, որ պարզապես հնչած հարցերի պատասխաններն եմ տալիս...

Ա.Աբրահամյան - Դուք ներկայացնում եք Հայաստանի քաղաքական ուժերից մեկը, որը պետք է դեմ կամ կողմ խոսի:

Ա.Գեղամյան - Ռուսաստանի դրոշի առկայությունը մեր սահմանում, այո, հավասարազոր է թուրքական 10-ը դիվիզիայի, որովհետև այդ երկրի դրոշը չի պղծվի Թուրքիայի կողմից, իսկ դա արդեն իսկ երաշխիք է, որ այդ դրոշը և մեր սահմանները կմնան անառիկ: Ցավոք, մենք տեսանք, թե ինչ լարված իրավիճակ ստեղծվեց հարևան Վրաստանում, երբ այնտեղ ձերբակալել էին ռուսաստանցի չորս սպաների: Ծայրաստիճան լարված դրությունը հնարավոր եղավ լիցքաթափել միայն այն բանից հետո, երբ պարոն Դե Գուխտը՝ Բելգիայի արտաքին գործերի նախարարը, երկիր, որն այսօր ԵԱՀԿ-ի նախագահողն է, անձամբ ժամանեց տարածաշրջան ու ձերբակալված ռուս զինվորականներին ազատեց:

Ա.Գալոյան - Ես կուզենայի նշել հետևյալը: Պարոն Գեղամյան, Դուք ասացիք, որ Ռուսաստանը մեր տնտեսական ամենախոշոր գործընկերն է, դա այդպես չի:

Ա.Գեղամյան - Ես չեմ ասել, որ մեր տնտեսական ամենախոշոր գործընկերն է: Մենք տնտեսության մասին դեռ ընդհանրապես չենք խոսել: Ես ինչ ասել եմ, ասածիս տերն եմ:

Ա.Գալոյան - Համաձայնվեք, որ Ռուսաստանը մեր ամենախոշոր գործընկերը չի տնտեսական առումով: Ռուսաստանը Հայաստանի նկատմամբ տնտեսական շատ կոշտ քաղաքականություն է վարում: Բոլորս գիտենք, որ նույնիսկ Թուրքմենբաշին, վարկատու բոլոր կազմակերպությունները, Հայաստանի տնտեսական պրոբլեմները հաշվի առնելով, պարբերաբար վերակառուցում են մեր պարտքը՝

ժամանակ տալով, հետաձգելով: Ռուսաստանը մեր միակ տնտեսական գործընկերն է, որը երբեք չի վերակառուցել պարտքը, տոկոս է հաշվել, տուգանք է նշանակել ուշացրած տոկոսների համար և մինչև վերջին կոպեկը տարել է իր փողը, անգամ վերահաշվարկ անելով: Անցած տարվա հոկտեմբերին տարավ վերջին 3 միլիոն դոլարը: Ռուսաստան-Հայաստան տնտեսական հարաբերությունները թվեր ունեն զուտ այն պատճառով, որ ռուսները մեր մոտ վերցնում են էլեկտրացանցեր, կայաններ և վաղը, մյուս օրը տեսնում ենք դինամիկան, որը հայ-ռուսական տնտեսական հարաբերություններում անընդհատ նվազում է գրանցում: ԱՊՀ երկրները մեր արտաքին տնտեսական բալանսում պարբերաբար փոքրացնում են իրենց մասնաբաժինը: Եվ Ռուսաստանի ներկայությունը մեր երկրում, իմ կարծիքով, տնտեսական կլիմի միայն հետևյալ տեսքով. Հայաստանից կգնան էն ֆինանսական միջոցները, որոնք ռուսական ընկերություններն աշխատում են Հայաստանի տարածքում՝ մեր իշխանությունների թեթև ձեռքով 25 դրամ գանձելով ամեն կիլովատ հոսանքի դիմաց:

Ա.Աբրահամյան - Հարց տվեք, հարցը ո՞րն է:

Ա.Գալոյան - Ես ուզում եմ ասել, որ Ռուսաստանը Հայաստանում տնտեսական շահ որպես պարտնյոր հայ մարդու համար օր օրի ավելի քիչ է ներկայացնում... Իմ խոսքն էլ ոչ մի կերպ հնարավոր չէր նույնացնել Ռուսաստանի դեսպանատան աշխատակցի խոսքի հետ: Այ, այդ էի ուզում ասել:

Ա.Գեղամյան - Նախ, շնորհակալություն եմ ուզում հայտնել պարոն Գալոյանին: Հարգելի հեռուստադիտողներ, հարգելի լսարան, մենք ակնատեսը եղանք, որ «168 ժամ» թերթի տնտեսական մեկնաբանն իր այս օրինակով, փաստորեն, ոչ թե երկու, այլ մեկ գնահատական նշանակեց Հայ-ռուսական տնտեսական համագործակցության պետական հանձնաժողովի աշխատանքներին, որովհետև միջտնտեսական կապերի ընդլայնումը և զարգացումը կորողինացնում է այդ հանձնաժողովը, որն էլ Հայաստանի կողմից գլխավորում

է պարոն Սերժ Սարգսյանը: Ես լիովին համաձայն եմ, որ այդ աշխատանքները ձախողված են, որ այդ աշխատանքների հիմքում ստրուկի հոգեբանություն է դրված, որն անհապաղ պետք է փոփոխության ենթարկվի:

Ա.Գալոյան - Ստրուկի հոգեբանությունը բազաներից է գալիս, երբ որ մենք վճարում ենք, որ ինչ-որ մեկի զինվորը գտնվի մեր երկրում, մենք արդեն տալիս ենք ամեն ինչ այդ երկրին և այդ երկիրը մեր հետ ընդհանրապես հաշվի չի նստում:

Ա.Գեղամյան - Մենք դարձյալ անդրադառնում ենք մայր հարցին, այն է՝ երկիր, որն անկախության 15 տարիների ընթացքում այդպես էլ, Գյումրվա բարբառով ասած, չդմշեց Ազգային անվտանգության հայեցակարգ մշակել, այդ երկրից, այդ իշխանություններից ավելին սպասել, քան կա՝ միամտություն կլինի: Ինչ վերաբերում է ռազմական բազաներին, ապա դրանց դերը անիմաստ է բացասական առումով բնութագրել և գերազնահատել էլ պետք չէ, ու Հայաստանում իշխանությունների կողմից վարվող տնտեսական արատավոր քաղաքականությունը պետք չէ երբեք ու երբեք պատճառաբանել ռազմական բազաների առկայությամբ:

Ա.Գալոյան - Պարոն Գեղամյան, Դուք որպես քաղաքական գործիչ, երևի, ստիպված եք մի քիչ ավելի զուսպ լինել, ես որպես լրագրող մի քիչ ավելի ազատ կասեմ, որ այդ անվտանգության հայեցակարգը ես գիտեմ ինչու է ձգձգվում, դուք էլ գիտեք, ես կիրապարակեմ. չի կարելի մի հայեցակարգ ուղարկել Ռուսաստանի հետ համաձայնեցնելու, հետո վերցնել նույնը ուղարկել ՆԱՏՕ-ի հետ համաձայնեցնելու...

Ա.Գեղամյան - Այսինքն, Դուք Սերժ Սարգսյանին որպես պաշտպանության նախարար էլ երկուս նշանակեցիք:

Ա.Գալոյան - Ես Սերժ Սարգսյանի անձի հետ որևէ պրոբլեմ չունեմ, ես խոսում եմ Հայաստանի Հանրապետության քաղաքականության մասին, իսկ արտաքին քաղաքականության պատասխանատուն մեր սահմանադրական կարգի համաձայն երկրի նախագահն է:

Եստեղ խնդիրը սա է, որ չի կարելի ռազմական իրարամերժ շահեր ունեցող կառույցների տալ փորձաքննության: Դա կծգվի, կծգծգվի, էն որ ասում են՝ էս տարի կլինի, էկող տարի կլինի, մինչև չհասցվի փիլիսոփայական արսոյուտ անիմաստ տեսքի, դա չի ընդունվի, որովհետև չի կարելի Ռուսաստանի շահերը պաշտպանել ՆԱՏՕ-ում:

Ա.Ենոքյան - Ես ուզում եմ բոլորիս ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ հայ-ռուսական հարաբերությունները, և ոչ միայն տնտեսական, հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների կոորդինատորն այսօր պաշտպանության նախարարն է և ոչ թե արտաքին գործերի նախարարը: Այսինքն՝ հայ-ռուսական հարաբերությունները չեն կազմում մեր արտաքին քաղաքականության մաս, այլ կազմում են ինչ-որ մի առանձին խողովակ մեր արտաքին քաղաքականության: Եվ, բնականաբար, այդ պայմաններում ի՞նչ անվտանգության դոկտրինի մասին կարող է խոսք լինել: Մենք բոլորս կարող ենք պատկերացնել, թե այդ անվտանգության դոկտրինը ինչպես և ինչ իմաստ կունենա:

Ա.Աբրահամյան - Պարոն Գեղամյան, բա՞ն էք ուզում ավելացնել դրան, հակադրվեք կամ համաձայնվեք...

Ա.Գեղամյան - Ինձ ոգևորում են իմ գործընկերների մեկնաբանությունները: Փաստորեն, ի մի բերելով ասվածը, ակնհայտ է դառնում, որ մեր իշխանությունների կողմից ձախողված են թե՛ հայ-ռուսական տնտեսական հարաբերությունները և թե՛, ինչու չէ, ազգային անվտանգության առանցքը կազմող հայ-ռուսական ռազմավարական հարաբերությունները: Ըստ որում, այդ ամենի մեղավորը, ինչպես ես հասկացա Ձեր մեկնաբանություններից, պաշտպանության նախարարն է: Այս հարցում Դուք ճիշտ եք. նախագահին այնքան հեռատեսություն է ունեցել, որ հայ-ռուսական հարաբերությունների կոորդինացումը հանձնել է պաշտպանության նախարարին և վերջինիս նկատվող ձախողումների համար կպահի որպես «*маленькая дьявотья*»: Ձեզ ասեմ, հայ-ռուսական հարաբերությունները կարելի էր

բովանդակային նոր մակարդակի վրա բարձրացնել, եթե, շատ ճիշտ են ասում, իրոք, գործընկերային հարաբերություններ հաստատվեին և ոչ թե հանգեցնեին գույք՝ պարտքի դիմաց գործառույթների, երբ, կարծես, 110 մլն դոլարի դիմաց տալիս են առաջավոր տեխնիկայով զինված ռոբոտների գործարանը, հետամուտ չլինելով, որ դա չկանգնի երեք տարի շարունակ, այլ միջոցներ ձեռնարկեն, որ դա աշխատի: Իշխանությունների անգործությունն այս հարցում շատ լուրջ հարված է հայ-ռուսական հարաբերություններին:

Ա.Աբրահամյան - Գուցե երիտասարդներն ուզում են հարցե՞ր տալ կամ դատողություննե՞ր անել:

Սահակ Սարգսյան - Իմ հարցը պրն Գեղամյանին հետևյալն է. պրն Գեղամյան, Դուք, այ, իրավացիորեն նշում եք, որ այս կամ այն հարցում իշխանավորները մեղավոր են: Տեղի ունեցավ հանրաքվե, որի մասին մենք բոլորս գիտենք, այդ խայտառակ կոչված միջոցառումը ԱՊԶ-ի դիտորդները, մասնավորապես, Կրեմլից ուղարկված, զնահատեցին, որ դա համապատասխանում էր շատ նորմալ ընտրությունների չափանիշներին: Այստեղ մեր իշխանությունների մեղավորությունը ինչո՞ւմն է:

Ա.Գեղամյան - Նախ, շնորհակալություն ձեր այդ դիտարկման համար, Դուք շատ ճիշտ եք. 21-րդ դարում չի կարելի առաջնորդվել այն հոգեբանությանը, որ մեր երկրի ճակատագիրը պետք է տնօրինի օտարը՝ լինի դա բարեկամ, թե բարիդրացիական հարաբերություններ ունեցող երկիր: Իսկ ինչ վերաբերում է հանրաքվեի արդյունքների ճանաչմանը, գիտեք, այստեղ մենք ձեզ հետ միասին ակնատեսը դարձանք մի մեծ խաբկանքի: Եթե ԱՊԶ երկրներից ժամանած դիտորդական առաքելությունը առանց այլևայլության ճանաչեց, որ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն անցավ նորմալ, ասպա արևմտյան երկրների ներկայացուցիչները, որոնք ներգրավված էին Եվրախորհրդի, Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության դիտորդական պատվիրակություններում, ըստ էության, մի կողմից ասացին, որ, այո, ընտրական տեղամասերում իսկապես աշխուժություն չկար, սակայն մյուս կողմից ակնարկեցին քանի որ այս Սահ-

մանադրությունը նախորդից մեկ քայլ առաջ է, ապա եկեք սվադենք, եկեք մոռանանք կատարվածը: Այսինքն, մի դեպքում անօրինականությունը բացահայտ են փորձում հաստատել, մյուս դեպքում քողարկված: Ըստ իս, տվյալ մոտեցումների հեղինակներն արժեն մեկը մյուսին:

Ա.Աբրահամյան - Էլի հարց, եթե հարց չկա, ես մի հարց ունեմ, պարոն Գեղամյան: Եթե դուք ասում եք, որ Ռուսաստանը ՆԱՏՕ-ի և Եվրամիության հետ այնքան ընկերացել են, ապա ինչո՞ւ է ՆԱՏՕ-ի անդամ դառնալու հավակնություն ունեցող Վրաստանը քշում ռուսական զորքերին իր տարածքից: Այսինքն՝ այստեղ հաստատ, առանց ՆԱՏՕ-ի, առանց Ամերիկային հարցնելու նրանք հակառուսական քայլերի չէին գնա:

Ա.Գեղամյան - Թե ինչո՞ւ է քշում ռուսական զորքին, դա պետք է հարցնել Միխայիլ Նիկոլայևիչ Սահակաշվիլուն: Ուրիշ բան, որ մենք մեզ հարց տանք, իսկ դրանից Վրաստանը շահեց, թե՞ տուժեց: Իմ դիտարկմամբ, Վրաստանը առայժմ, ավա՛ր, կորուստներ է կրում: Ինչու են ասում ավա՛ր, որովհետև Չայաստանի Չանրապետությանը շատ և շատ ձեռնտու է, որ մենք ունենանք կայուն տնտեսություն, իր հարևանների հետ բարիդրացիական հարաբերություններ ունեցող գործընկեր Վրաստանի Չանրապետություն: Գաղտնիք չէ, որ Վրաստան-Ռուսաստան այսօրվա հարաբերությունների սրվածությունը հավասարաչափ կորուստների է բերում Չայաստանի տնտեսությանը, որովհետև դուք գիտեք, որ դրա հետևանքով Չայաստանը Ռուսաստանին կապող Վերին Լարսը փակված է: Ստեղծված վիճակից դուրս գալու երկուստեք ընդունելի առաջարկներ ներկայացնելու փոխարեն՝ մերոնք հիմա ինչ-որ անհեթեթ բաներից են խոսում, հայտարարություններ անում, թե լաստանավերով Նովոռոսիյսկից կամ Կովկասից բեռներ են ուզում փոխադրել: Խոսում են 50 վազոնանոց լաստանավերով բեռնափոխադրման մասին, մոռանալով դրանից բխող հավելյալ ծախսերի մասին, մոռանալով, որ առանց այդ էլ անցած 8 ամիսների ընթացքում Չայաստանից արտահանման ծավալը կազմել է անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի 96%-ը: Հիմա այդ ցուցանիշն էլ ավելի կկրճատվի, որովհետև բեռնափոխադրման ճանապարհածախսը կթանգանա, դա կմտնի ինքնարժեքի մեջ, ինքնարժեքը կբարձրա-

նա, արտահանվող ապրանքի մրցունակությունը դրսի շուկաներում կրճկվի: Այլ կերպ ասած՝ տվյալ պայմաններում մեզ համար օրի պես ձեռնտու է, որ Վրաստանը կարգավորի իր հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ:

Ա.Աբրահամյան - Ձեր հիշատակած Միխայիլ Նիկոլայևիչն առանց Ամերիկային հարցնելու, արդյոք կզնա՞ր կտրուկ քայլերի:

Ա.Գեղամյան - Դուք, շատ ճիշտ դիտարկում արեցիք: Դրա մասին վերլուծական մի շարք հոդվածներ կային, մասնավորապես, հանրահայտ «Կրեմլ.օրգ քաղաքական փորձագիտական ցանց»-ի ինտերնետային կայքում: Վերջերս խնդրո առարկայի շուրջ իր տեսակետն էր հայտնել Ռուսաստանի Դաշնության սոցիոլոգիական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, քաղաքագիտության դոկտոր Ալեքսանդր Չաչիան: Ըստ որում, նա ուղղակիորեն գրել էր, որ, այո, առանց Միացյալ Նահանգների Վրաստանը Ռուսաստանի հետ հարաբերությունների սրման քայլին չէր դիմի: Բայց ես ուզում եմ ձեզ հիշեցնել, որ այդ հարաբերությունների սրացումից հետո ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջորջ Բուշի նախաձեռնությամբ հեռախոսազրույց է եղել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ, որը, ինչպես վկայում են ՋԼՄ-ները, տևել է 17 րոպե: Այդ ընթացքում, ի թիվս Լիբանանի, Պաղեստինի հետ կապված հարցերի, քննարկվել են նաև ռուս-վրացական հարաբերությունները: Մենք ձեզ հետ ականատեսը դարձանք, որ Բուշ-Պուտինի հեռախոսազրույցից հետո վրացական իշխանություններն արդեն իսկ հրաժարվեցին իրենց մարտնչող ճարտասանությունից, միևնույն ժամանակ Ռուսաստանի պաշտոնյաների հրապարակային ելույթներում արձանագրվեց փոքր-ինչ մեղմացում Վրաստանի հասցեին տրվող գնահատականներում: Դուք ճիշտ եք, այո, կարելի է ենթադրել, որ Վրաստանը տվյալ պարագայում ունեցել է Ամերիկայի Միացյալ Նահանգների աջակցությունը: Եվ դա, ամենայն հավանականությամբ, ստացել է այն ժամանակ, երբ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի լիազուրմար նիստում Միխայիլ Սահակաշվիլին ելույթ ունեցավ, որն արժանացավ Միացյալ Նահանգների մշտական ներկայացուցիչ Բոլտոնի հավանությանը: Թերևս, դա են վկայում մամուլում եղած հրապարակումները:

Ա.Աբրահամյան - Ես ուզում եմ ասել, որ Դուք, երբ ասում եք, որ Ռուսաստանը միանալու է Եվրամիությանը...

Ա.Գեղամյան - Ես չեմ ասում, Մենդելսոնն է ասում, խոսքը միասնական ազատ տնտեսական գոտու մասին է:

Ա.Աբրահամյան - Դա ռեալ էք համարում մոտակա ժամանակներում:

Ա.Գեղամյան - Դա պետք է հարցնել Եվրահանձնաժողովի առևտրի հարցերով կոմիսար Մենդելսոնին: Ի դեպ, ասեմ, որ Մենդելսոնը բնավ պատահական մարդ չի, նա, հասկանալի լեզվով ասած, Եվրամիության «կառավարության» առևտրի նախարարն է, այդ ոլորտի կոմիսարն է: Եվ նախաձեռնությունը, այդ առաջարկը եղել է կոմիսարի, այլ ոչ թե Ռուսաստանի Դաշնության նախագահի կողմից: Կարծում եմ, Եվրամիությունը, որին անդամակցում են Եվրոպական ամենազարգացած 25 երկրներ, լուրջ է մտտեցնում, թե ի՞նչ մարդու, ի՞նչ գիտելիքներ ունեցող անձի է նշանակում կոմիսար և, կարծում եմ, նախարարը, Եվրամիության «կառավարության» նախարարը բավականին գիտակ ու պատասխանատու անձնավորություն է, ում ասածները ես իրավունք չունեմ կասկածանքով ընդունել:

Ա.Աբրահամյան – Շատ լավ, Արայիկը թող ասի, և մենք այդ թեման կավարտենք:

Ա.Գալոյան - Ես ուղղակի ուզում էի հիշեցնել, որ մման խնդիրները մեկ տասնամյակի խնդիրներ չեն: Ռուսաստանը և Բելուռուսն արդեն 10 տարի է փորձում են նույն ռուբլին օգտագործել ու չի ստացվում և չի ստացվելու՝ զոնե տեսանելի ժամանակահատվածում: Եվ հեռուստադիտողի մոտ կարող է թյուր պատկերացում ստեղծվել, որ եթե էսօր չէ, ապա առաջիկա 3 տարում Ռուսաստանն ու Եվրոպան տնտեսական միացյալ գոտի կունենան: Ցավում եմ, էդպիսի բան չի լինի:

Ա.Գեղամյան – Միասնական տնտեսական գոտին ամենևին չի պարտադրում, որ ընդհանուր տարադրամ օգտագործվի: Ասածիս ամենավառ ապացույցն այն է, որ Եվրամիության 25 երկրներից Մեծ Բրիտանիան ունի իր տարադրամը՝ ֆունտ ստեռլինգը, Շվեդիան իր կռոնը, Դանի-

ան էլ՝ իր տարադրամը: Բայց բոլորն էլ գործում են միասնական տնտեսական գոտում: Հայաստանի դեպքում խոսքը բացառապես գնում է ազատ տնտեսական գոտու ստեղծման մասին, ինչը երբեք ու երբեք չի հակասում, որ յուրաքանչյուր երկիր ունենա իր տարադրամը, առհավատյան հիշատակածս Մեծ Բրիտանիան, Շվեդիան և Դանիան: Հեռուստադիտողին էլ ուղղակի ինֆորմացիայի կարգով ասեմ, որ Ռուսաստանի հետ միասնական ազատ տնտեսական գոտու նախաձեռնողներից է նաև Ղազախստանը: Երկիր, որի էկոնոմիկան առաջիկա 10 տարիների ընթացքում, ինչպես համոզված նշում են հեղինակավոր փորձագետները, կարող ենք ասել, որ աշխարհի 10 ամենազարգացած էկոնոմիկա ունեցող երկրների շարքին է դասվելու:

Ա.Ենոքյան – Մեկնաբանություն. Եվրամիությունն իր բոլոր հարևանների հետ մշակում է տնտեսական քաղաքականություն, ասենք՝ Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի և այլնի հետ այդ քաղաքականությունը կոչվում է եվրոպական հարևանների քաղաքականություն, Թուրքիայի հետ հարաբերությունները կոչվում են ընդգրկման քաղաքականություն, Ռուսաստանի հետ քաղաքականությունն էլ կոչվում է միասնական տնտեսական քաղաքականություն:

Ա.Աբրահամյան – Շատ լավ, Ձեր դիրքորոշումը հայ-ռուսական հարաբերությունների հետ կապված հասկանալի է:

Ա.Գեղամյան–Հայ-ռուսական հարաբերություններն այսօր, այս իշխանությունների պարազայում լուրջ ճգնաժամ են ապրում, որովհետև հանրության, հասարակության սպասելիքներն այդ հարաբերություններից շատ ու շատ ավելի մեծ են, քան կան: Դա են վկայում պարբերաբար անցկացվող հարցումները, մասնավորապես, վերջերս հանրահայտ «Գելափ»-ի կազմակերպության կողմից Հայաստանում կատարված ուսումնասիրությունները: Բայց քանի որ Հայաստանի իշխանությունների կողմից այս գործում չկա մշակված ոչ ռազմավարություն, ոչ էլ մարտավարություն, ուստի մենք ունենք այն, ինչ այսօր ունենք, այն է՝ անսպառ հնարավորությունների նվազագույն օգտագործում: Սա իմ գնահատականն է:

Այնուհետև քննարկվեցին դոկար-դրամ փոխարժեքի շուրջ հրատապ հնչեղություն ունեցող հարցեր ու պատասխաններ, ինչին չենք անդրադառնում, քանի որ Արտաշես Գեղամյանը «Իրավունք» թերթի հոկտեմբերի 31-ի համարում արդեն իսկ դրան անդրադարձել է:

Ա.Աբրահամյան - Եկեք դահլիճին էլ լսենք: Խնդրեմ:

Գոհար Բեգիրյան - Այստեղ շատ գրավիչ ձևակերպումներ հնչեցին, ի՞նչ լուծում եք առաջարկում: Բայց, կարծում եմ, որ ոչ մենք, ոչ դուք, ոչ էլ պարոն Գեղամյանը չպետք է լուծումներ առաջարկեն: Դրա համար մենք ունենք կառավարություն, դրա համար մենք ունենք պատկան մարմիններ, որոնց վարձել ենք, որոնց աշխատավարձ ենք տալիս: Մեր՝ հարկատուներինս հաշվին, այդ մարդիկ ապրում են, գործունեություն են ծավալում, ուստի, իրենք էլ թող որոշեն այս ստեղծված իրավիճակից ինչպես դուրս գան: Ես պարզապես ուզում եմ Ֆրանսիայի օրինակը հիշեցնել, երբ որ նավթի գները բարձրացան, այնտեղ կառավարությունը սկսեց ժողովրդին բացատրել, որ սա օրինաչափ է, որ սա տնտեսագիտական գործընթացների առանցքում է և այլն, և այլն: Ժողովուրդն ասաց. ինձ դա չի հետաքրքրում, ինձ հետաքրքրում է այն, որ դուք կարգավորեք և նավթի գինը մնա այնքան, որ ինձ ձեռք տա: Շատ լավ է, շատ ողջունելի է, որ մենք նմանատիպ կոչեր ենք անում, ասում ենք՝ մի թալանեք, ստվերից դուրս եկեք, մտեք հարկային դաշտ: Բայց մենք էլի մի հատ շատ պարզ հարցի չպատասխանեցինք, ոչ թե չպատասխանեցինք, այլ չփորձեցինք ուղղակի այդ տեսանկյունից նայել հարցին: Ի՞նչ պետք է անի հասարակ քաղաքացին: Ո՞նց պետք է ապրի, ո՞նց պետք է կողմնորոշվի:

Ա. Գեղամյան – Հասարակ քաղաքացին իր ցատունն ու զայրույթը պետք չէ, որ տանը՝ խոհանոցում կամ բակում նարդի, էլ չեն ասում դոմինո խաղալուց արտահայտի: Հասարակ քաղաքացին, երբ տեսնում է, որ իշխանությունների ապաշնորհ քաղաքականության հետևանքով արդեն իսկ անելանելի վիճակում է հայտնվել, երբ ընդդիմադիր քաղաքական ուժերը, ինչու չէ, նաև հասարակական կազ-

մակերպությունները կոչ են անում ժողովրդին ոտքի ելնել, պետք է ինքը տեր կանգնի իր շահերին, ինքն իր իրավունքների տերը դառնա: Ցավոք, մեր երկրում ստեղծվել է շատ և շատ ծանր իրավիճակ: Այսօր Հայաստանի քաղաքացիները, որոնք, ավա՛ղ, շատ վատ կացության մեջ են հայտնվել, իրենց գոյությունը պահպանում են շնորհիվ արտասահմանում աշխատող իրենց հարազատներից ստացած դրամական օգնությունների: Այլ կերպ ասած, այո, դրսի օգնությամբ կարողանում են իրենց գոյությունը պահպանել, և այն վիճակի չեն հասցվել, որ հարկադրված լինեն ոտքի կանգնել, փողոց դուրս գալ: Նրանք, անշուշտ, հոգու խորքում շատ են ուզում, որ փոփոխություններ լինեն: Բայց որքան ես եմ շփվում մարդկանց հետ, կարող եմ եզրակացնել, որ եթե ոտքի չեն կանգնում, կնշանակի դեռ դանակը ոսկորին չի հասել: Առավել ևս, մեզանում, ասես թե, դարձել է արդեն սովորություն, որ մեր քաղաքացին փորձում է իր ծանր վիճակի համար մեղավորին միշտ դրսում փնտրել և ոչ թե իր մեջ: Իր մեջ ասելով, նկատի ունեն այն, որ եթե յուրաքանչյուրն իր իրավունքները պաշտպանի և, ինչպես Գոհարն ասաց, ֆրանսիացու հոգեբանությամբ առաջնորդվի, հավատացնում եմ ձեզ, իրավիճակն այլ կլինի: Ահա հենց նրա համար եմ կոչված քաղաքական կուսակցությունները, որ մեր քաղաքացիների մեջ հնարավորինս հավատ ու հույսներ շնչեն սեփական ուժերի նկատմամբ: Խնդիրը մեկն է. երբ ժողովուրդն արդեն իսկ վճռական լինի համախմբվելու, կոնսոլիդացիայի ենթարկվելու, սեփական իրավունքներին տեր կանգնելու համար, ապա հենց այդ գաղափարների շուրջ կարելի կլինի երկրում ստեղծված ծանր իրավիճակը շտկել՝ կարևորություն չտալով այս կամ այն կուսակցության դրոշի գույնին:

ՌԻԵՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՓԱՅՈՒՆՆԵՆ . . .

Հարգելի ընթերցող, Ձեր դատին ենք ներկայացնում ս/թ հոկտեմբերի 26-ին Ազգային ժողովի նիստում «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի նախագծի քննարկման ժամանակ «Ազգային Միաբանություն» խմբակցության ղեկավար Արտաշես Գեղամյանի բանավոր խոսքի շարադրանքը:

Հարգելի գործընկերներ, հոգեբանների շրջանում կա ընդունված մի տեսակետ: Եթե երկրում կատարվել է շատ ծանր հանցագործություն, որն իշխանություններն ուզում են քողարկել, ապա դրան, որպես կանոն, հաջորդում է մեծ հնչեղություն ունեցող որևէ ուրիշ գործ, ցանկալի է, որ վերջինս առնչվի կատարված այդ ծանր հանցագործության հետ: Խնդիրը մեկն է. մարդկանց ուշադրությունը շեղել այլ ուղղությամբ: Երբ ուշադիր հետևում ենք այն իրարանցմանը, որը պայմանավորված է այս օրինագծի («Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին») անընդմեջ քննարկումն Ազգային ժողովի վզով փաթաթելու հանգամանքով, ճիշտ և ճիշտ հիշում ու մտովի համաձայնվում ես հոգեբանների վերը նշված հայտնի տեսակետին:

Այժմ անդրադառնանք քննարկվող բուն հարցին: Ի՞նչ ի նկատի ունեն մասելով տեղի է ունենում ծանր հանցագործություն: Ի նկատի ունեն այն, որ ճիշտ այս ամբիոնից էլ քանիցս թմբկահարվել է, թե Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է ՀՆԱ-ի աննախադեպ աճ և դրա առանցքը կազմում է շինարարության ոլորտը, ուր, մասնավորապես, 2005 թ. 2004 թ. նկատմամբ արձանագրվել է

134,2% աճի տեմպ: Սակայն գրանցված աճի տեմպը չէ, որ մտահոգիչ է, այլ դրա հետևումն թաքնված անօրինակությունների շարքը: Բնականաբար, հետաքրքրվում են՝ այդ ինչի՞ արդյունքում և ինչպե՞ս է գրանցվել այդ աճը: Եվ երբ խորանում են այդ հարցում, ապա հանդիպում են զավեշտալի մեկ այլ փաստի, ըստ որի վնասով աշխատող կամ եկամուտ չունեցող շինարարական կազմակերպությունների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ 2005 թ. ամփոփ տվյալների համաձայն կազմել է 34,5%: Կրկնում են, խոսքը տեսակարար կշռի մասին է: Այսինքն՝ ստացվում է, որ շինարարական կազմակերպությունների միայն 65,5%-ն են ցույց տալիս, որ աշխատում են շահույթով: Մասնավորապես, 2005 թ. Ազգային վիճակագրական ծառայության շինարարությունում գործող կազմակերպությունների ամփոփ ֆինանսական արդյունքների վերլուծության համաձայն տարեկան շահույթը կազմել է ընդամենը 2 մլրդ 206 մլն դրամ, իսկ ուղղակի վնասով աշխատող շինարարական կազմակերպությունների կրած վնասն էլ 587,7 մլն դրամ է եղել: Եվ ակամայից մտածում են, թե մեր շինարարներին ֆինանսավորողներն ինչքան անձնագոհ ու հայրենասեր են, որ ավելի քան 425 մլրդ դրամի կատարած շինարարական ծավալների պայմաններում բավարարվել են ընդամենը 2 մլրդ 206 մլն դրամ շահույթով: Նկատենք, որ շինարարական այդ ծավալների 81,16%-ը բաժին է ընկնում Երևան քաղաքին, իսկ մենք ձեզ հետ քաջ գիտակցում և տեսնում ենք, որ Երևան քաղաքում էլ այդ ամենը, փաստորեն, պայմանավորված է, այսպես կոչված, էլիտար շենքերի կառուցմամբ: Ցանկացած շինարարի եթե հարցնես, ապա կասի (բարեբախտաբար, մեր խմբակցությունում կա այդպիսինը՝ Ալեքսան Կարապետյանը), որ մասնագիտական վերլուծություններն վկայում են, որ Երևան քաղաքում մեկ քառակուսի մետր բնակարանային մակերեսի կառուցումը շինարարի վրա անգամ իսկ շուկայական ամենաթանկ գներով նստում է 250-ից 300 դոլար: Մինչդեռ դրանց վաճառքի շուկայական գները կազմում են ոչ ավել, ոչ պակաս նվազագույնը 750-ից 1500 դոլար: Այսինքն՝ մեկ քառակուսի

մետր բնակելի մակերեսից ամենաքիչը ունեն 500-ից 1200 դոլար մաքուր շահույթ: Հիմա անցնենք պարզ թվաբանությանը: Այսպես, 2005 թ. Երևան քաղաքում շահագործման է հանձնվել 250923 քառակուսի մետր բնակմակերես: Բազմապատկեք դա նվազագույն շահույթի հետ, այն է՝ 500 դոլար շահույթ ստացված մեկ քառակուսի մետր վաճառված բնակմակերեսից, և կստանաք էլիտար բնակարային շինարարություն իրականացնողների կողմից 57 մլրդ դրամ չհայտարարագրված հավելյալ շահույթ: Սակայն, ինչպես վերը նշեցի, վիճակագրական ծառայության պաշտոնագրքում գրանցվել է ընդամենը 2 մլրդ 206 մլն դրամի շահույթ և 134,2% շինարարության աճի տեմպ: Հարգելի պարոն նախարար (դիմում է Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանին.- *խմբ.*), ճիշտ է, այս փաստն անուղղակիորեն է առնչվում ձեր ղեկավարած բնագավառի հետ, բայց միթե՞ Դուք շահագրգիռ չեք, որ այս հանցագործությունը կատարողներն օր առաջ նստեն դատարանում՝ մեղադրյալի աթոռին և պատասխան տան, թե ինչպե՞ս է ստացվել, որ 2005 թ. շինարարական ոլորտում ցույց է տրվել ընդամենը 2 մլրդ 206 մլն դրամի շահույթ՝ թաքցնելով հարկային մարմիններից առնվազն 55 մլրդ դրամի փաստացի առկա շահույթ: Եվ այս պարագայում այդ անօրեններն այն աստիճան են լկտիացել, որ անգամ իսկ հրաժարվում են բնակիչներից օտարված սեփականության դիմաց մինիմալ գումարները փոխհատուցել՝ լինեն դա Բուզանդի փողոցի, Հյուսիսային պողոտայի, թե քաղաքի իրացվող մյուս տարածքների բնակիչները: Փոխարենը խղճուկ գումարներ են տալիս մարդկանց: Իսկ ինչպե՞ս է ստացվել, որ այս թվերը, որոնք գրանցված են պաշտոնական վիճակագրական տեղեկագրքերում և բնութագրում են շինարարության ոլորտում թաքնված մեծածավալ շահույթները, հանկարծ շրջանցել են մեր Կառավարությանը, շրջանցել են դատախազությանը: Դա տեղի է ունեցել այն պարզ պատճառով, քանի որ էլիտար բնակելի շենքերի շինարարության հովանավորներն են պարոններ Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը՝ իրենց յուրայիններով հանդերձ: Ասեն ավել-

լին. շինարարական ինդուստրիան սեփականաշնորհված է նրանց ամենամտերիմ մարդկանց կողմից: Այսինքն, կարելի է ենթադրել, որ կատարվում է կրկնակի հանցագործություն, և այդ ոլորտում առկա հավելյալ շահույթները նույնպես դուրս են մնում հարկումից: Այստեղ թող հանկարծ որևէ մեկին չթվա, որ փորձառու իրավաբան Ռաֆիկ Պետրոսյանը քննարկվող օրինագիծը ներկայացնելիս լեզվի սայթաքում թույլ տվեց, երբ, ի միջիայլոց, ասաց, որ հնարավոր է վարչապետն անգամ իսկ այս օրինագիծը կարդացած չլինի: Պարզապես նա բոլորիս գլխի գցեց, որ իր կուսակից Անդրանիկ Մարգարյանն այս մեծածավալ կողոպուտի հետ և ոչ մի առնչություն չունի: Իշխանափոխությունից հետո լավագույն դեպքում նա անփութություն դրսևորելու, հարցերի մեջ չխորանալու համար թեթև պատասխանատվության կենթարկվի: Հիմա այս բոլոր հարցերը դրել են մի կողմ, քննարկում են օրինագծի այս կամ այն հոդվածի խմբագրական հարցերը: Ինչ խոսք, դա էլ է հրատապ, քանզի ցանկացած խնդիր, որն առնչվում է անգամ իսկ մեկ մարդու հետ մեզ համար նույնպես շատ կարևոր է: Սակայն, ակնհայտ է, որ այս բոլոր հարցերն ընդհանրապես քննարկման առարկա չէին դառնա, եթե մենք կարողանայինք ստվերից հարկային դաշտ դուրս բերել 57 մլրդ դրամի հասնող գումարները և այդ 57 մլրդ դրամից ընդամենը 10 մլրդ դրամը որպես փոխհատուցում տայինք բնակիչներին՝ իրենց կրած կորուստներին համարժեք: Մեր ժողովուրդը, հատկապես կենտրոնաբնակ երևանցիները, այս քաղաքի թշնամիները չեն, ընդհակառակը, նրանք առաջին հերթին կուզենային, որ բարեկեցիկ տեսք ունենար Երևան քաղաքը:

Սիրելի գործընկերներ, հարգելի լրագրողներ, ասածս այն է, որ տղերքը խոշորածավալ թալանը քողարկելու շատ հետաքրքիր հնարք են գտել՝ մարդկանց ուշադրությունը շեղելով քննարկվող այս օրինագծի վրա: Օրենքի քննարկվող նախագիծը, ինչ խոսք, իր բնույթով, կրկին ու կրկին մշեմ, հակաժողովրդա-

կան է, ինչպես ցանկացած գործառույթ, որն իրականացվում է այս անօրեն իշխանությունների կողմից:

«Ազգային Միաբանություն կուսակցությունը», վերստին դիմելով Արդարադատության նախարարին, հայտարարում է, որ եթե այս բոլոր հարցերը մանրակրկիտ քննարկման, վերլուծության առարկա չդառնան, միջոցներ չձեռնարկվեն պետության կրած վնասները վերականգնելու և այդ գումարներով Բուզանդի, Չյուսիսային պողոտայի ու իրացվող մյուս տարածքների բնակիչների կրած կորուստները փոխհատուցելու համար, ապա, ուրեմն, կնշանակի Կառավարությունը դատախազության հետ փայ ունեն նշված ալան-թալանի մեջ: Շնորհակալություն:

ԲԱՎԱԿԱՆ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՐՁՆԵՔ ԽՈՊԱՆ, ԹՈՂԵՔ ԳՆԱՅԵՔ ...

*Մի՛ դատեք, որ Աստուծուց չդատուեք,
Որովհետև ինչ դատաստանով որ դատեք,
Նրանով եք դատուելու...*

Ավետարան ըստ Մատթեոսի 7.1-2

Վերջին շրջանում Ազգային ժողովի «Ազգային Միաբանություն» խմբակցության պատգամավորների հրապարակային ելույթները խիստ նյարդայնացրել են իշխանություններին: Պատճառները հասկանալի են: Մասնավորապես, հակակրիմինալ շարժման շրջանակում Արտաշես Գեղամյանի ունեցած ելույթում բացահայտվել էին հանրապետությունում իրականացվող հարյուրավոր միլիարդ դրամի հասնող կողոպուտի հասցեները: Իշխանություններն ամեն ինչ արեցին, որ այդ փաստերը լռեցվեն: Ավելին, Ռ.Քոչարյան-Ս.Սարգսյան զույգին ուղղված «Ազգային Միաբանության» պատգամավորների քննադատական խոսքը նրանց սպասարկու գրչակները վերահասցեագրեցին այլ ուղղությամբ: Ղարաբաղյան կլանը սպասարկող առանձին թերթեր և նրանց ծվլլալով ձայնակցող «Ազգ» թերթի միջոցով փորձ արվեց հրահրել «Ազգային Միաբանություն» և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունների առձակատում: Ջուզահեռնան խնդիր էր դրված լարվածություն ստեղծել «Ազգային Միաբանության» և Ռուսաստանի հայերի միության միջև, հաշվի առնելով այն, որ այդ կառույցի ղեկավար Արա Աբրահամյանի գույքը դարձած «Ազգ» թերթը վաղուց ի վեր դարձել է Սերժ Սարգսյանի կողմից նյութվող դավերի կատարածուն:

Ստահոգիչ է, որ «Կրենլի մարդ» ներկայացող Արա Աբրահամյանը բացահայտ պաշտպանում է Հայաստանի կոռուպացված իշխանություններին, աջակցելով Քոչարյան-Սարգսյան զույգի քաղաքականության իրագործմանը. պառակտել Հայաստան-Արցախ միասնական ժողովրդին, թշնամանք սերմանել երկրի քաղաքական ուժերի շրջանում: Տղերքը ազգը բաժան-բաժան են անում, որ շարունակեն տիրել: Ջուր ջանքեր են, ժողովուրդը վաղուց գիտի, որ նրանց փեշերը արդեն վառված են:

Ստորև Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Ազգային ժողովի արտահերթ նիստում (նոյեմբերի 9-ին) Արտաշես Գեղամյանի ելույթի շարադրանքը:

Հարգելի գործընկերներ, երբ ՀՀ կառավարությունը մեծ օպերատիվությամբ «Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու առաջարկով հարցը դարձրեց Ազգային ժողովի արտահերթ նիստի քննարկման առարկա, ճիշտն ասած, ուրախացա: Ինձ թվաց, որ մեր Կառավարությունն արձագանքել է հակակրիմինալ շարժման շրջանակում իմ ունեցած զեկուցմանը, ինչու չէ, նաև այս ամբիոնից հնչած ելույթներիս, որոնցում առարկայորեն փաստված էին մեծածավալ թալանի մի շարք դեպքեր և հակաօրինական դրսևորումներ, ըստ որում ճշգրիտ հասցեներով, որոնց ականատեսն ենք մենք բոլորս: Հիշեցնեն, թե ինչի մասին է խոսքը: 2003 թ. ՀՀ պետական բյուջեին, Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին, ֆիզիկական և իրավաբանական անձանց օգտին կատարողական բոլոր վարույթներով բռնագանձման ենթակա գումարներից չի վերականգնվել 47 մլրդ 705 մլն դրամ, 2004 թ.՝ 31 մլրդ 534 մլն դրամ և 2005 թ. չի վերականգնվել 25 մլրդ 803 մլն դրամ: Ընդհանուր առմամբ երեք տարիների ընթացքում բյուջեն և սոցապահովագրության հիմնադրամը չեն ստացել 105 մլրդ 42 մլն դրամ: Միայն երևան քաղաքում 2005 թ., այսպես կոչված, էլիտար շենքեր կառուցողները, որոնք, ինչպես բոլորս գի-

տենք, գործում են պարոններ Քոչարյան-Սարգսյան զույգի հովանավորությամբ, հարկումից թաքցրել էին նվազագույնը 55 մլրդ դրամ հավելյալ շահույթ: Եվ ցավն այն է, որ այդ շինարարությունն իրականացվել է հիմնականում Բուզանդի փողոցում, Յյուսիսային պողոտայում, որոնց բնակիչներին բռնի ուժով դուրս են շարտել իրենց պապենական տներից՝ չնչին գումարներով փոխհատուցելով վերջիններիս կրած վնասները: Առանց անհարմար զգալու, Քոչարյան-Սարգսյան զույգի ճնշմանը տեղի տալով, ՀՀ կառավարությունը նորից շուտափույթ Ազգային ժողով է բերում «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի նախագիծը և կրկին ու կրկին դարձնում քննարկման առարկա: Եվ քանի որ Բուզանդի փողոցի, Յյուսիսային պողոտայի բնակիչների դեմ կատարած այդ չարագործությունը իշխանությունները առայժմ մարսեցին, ախորժակները բացվեց և հիմա նույն ճակատագրին են փորձում արժանացնել, այսպես կոչված, «Ֆիրդուսանոց» թաղամասի բնակիչներին: Էլ չենք խոսում այնտեղ աշխատող հազարավոր մարդկանց գործազուրկ դառնալու վտանգի մասին: Այստեղ էլ իշխանությունները ծրագրել են գործել նույն եղանակով, նույն ոճով:

Անցած երկու տարի ութ ամիսների ընթացքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն դոլար-դրամ մեքենայությունների արդյունքում ստացել էր հավելյալ շահույթ 31 մլրդ 632 մլն դրամի չափով, որը նույնպես դուրս էր մնացել հարկումից: Նույն մեքենայությունների արդյունքում 2005 թ. «Արմենտելը» ստացել էր 10 մլրդ հավելյալ շահույթ, որը նույնպես չէր հարկվել: Այս բոլոր փաստերը ոչ միայն հնչեցվել են հենց այս ամբիոնից, այլ նաև տպագրվել են «Իրավունք» թերթի վերջին երեք համարներում:

Նշված տագնապահարույց խնդիրները թողած, որոնք հարկային ծառայության տիրույթում պետք է որ լինեին, բանուգործները թողած կարևորում են հարկային մարմինների կուսակցականացման հնարավորության հարցերը: Իսկ ես կարծում էի, որ բարձ-

րացրածս պրոբլեմները, իրոք, անհանգստացրել են իշխանություններին, նրանք էլ դրանից ելնելով «Չարկային ծառայության մասին» օրենքում առաջարկում են իրենց տալ նոր լիազորություններ, որ այդ հանցագործներին օրինականության, օրենքի դաշտ բերեն: Այո, Սահմանադրությանը չի հակասում, որ հարկային ծառայողները դառնան կուսակցական: Հաշվարկը պարզ է, անհրաժեշտ է, որ վերջիններս Ազգային ժողովի և նախագահական առաջիկա ընտրություններում լուրջ դերակատարություն ունենան, գիտակցելով, որ եթե դա չունենան, ապա իշխանափոխությունից հետո, ինչն անխուսափելի է, նույն հարկային մարմինների աշխատողներին կասվի՝ չէ՞ որ Գեղամյանի մատնանշած նյութերը ոչ միայն բանավոր են եղել, այլև տպագրվել են, ինչպես վերն ասվեց, «Իրավունք» թերթում: Եվ, այս պարագայում, նրանց կպարտադրեն սեփական կաշիները փրկելու համար անդամագրվել, բնականաբար, իշխող կուսակցությանը: Այսինքն՝ մենք ձեզ հետ ակամատեսն ենք 2007 թ. ընտրությունները կեղծելու առաջին փուլի ավարտին: Ըստ որում, փուլն այս օրինագծով չէ, որ սկսվել է: Այն սկսվել է այս տարվա ամռանը, երբ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանն անդամագրվեց Հայաստանի Հանրապետական կուսակցությանը: Դրա արդյունքում, բոլորս էլ հասկանում ենք, ընտրությունների ժամանակ զինվորականները սպայական կազմի ուղեկցությամբ արդեն շարքով կգնան, կքվեարկեն իշխանությունների օգտին և հլա թող նրանցից որևէ մեկը համարձակվի դեն քվեարկել: Հարց է ծագում, որտեղի՞ց է իմ այս հանոզումները: Դա պայմանավորված է հետևյալ իրողությամբ. դեռ 2003 թ. նախագահական ընտրությունների ժամանակ որդիս ծառայում էր բանակում, նրա բանակային ընկերոջը ծեծուջարդի էին ենթարկել, քիչ էր մնացել հաշվանդան դարձնեին, ինչ է, թե քվեարկել էր նախագահի թեկնածու Արտաշես Գեղամյանի օգտին՝ չենթարկվելով սպայի հրամանին: Ահա սա է երկրում տիրող իրավիճակը: Եվ հիմա փորձում են մեզ համոզել, որ այս օրինագիծը

քննարկման բերելով մարդկանց՝ հարկային ծառայողների իրավունքների պաշտպանության ջատագովներ են դարձել:

Վերը հիշատակած օրինագանցությունների՝ հարկերից խուսափելու և թալանի փաստերի մասին հրապարակայնորեն հնչեցրել են անգամ իսկ Հանրային հեռուստատեսության ալիքով «Խորհրդարանական շաբաթ» ծրագրում: Կարծում էի, որ պարոն Քոչարյանը կարծագանքի ելույթներիս: Եվ, իրոք, արծագանքը երկար սպասեցնել չտվեց: Բայց, դժբախտաբար, փորձեցին հիշատակած հանցագործությունները պարտակել և քննադատական խոսքս տեղափոխել մեկ այլ դաշտ: Այն է՝ սրում առաջացնել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության և «Ազգային Միաբանություն կուսակցության» միջև, մասնավորապես, Գագիկ Ծառուկյանի և իմ: Հաշվարկը շատ պարզունակ էր. դրան կհաջողդեր այն, որ հայտնի իշխանավորները ինձ ահաբեկելու համար քիլլեր կուղարկեին, ինչպես բազմիցս արել են այլոց հանդեպ (առհավատչյան Շահեն Հովասափյանի չբացահայտված սպանությունը, Հայկ Բաբուխանյանի, Աշոտ Մանուչարյանի, Սուրեն Աբրահամյանի, Հովհաննես Գալաջյանի նկատմամբ գործադրված սպանության փորձերը, հաշվեհարդարները), պատվիրատու էլ կներկայացնեին Գագիկ Ծառուկյանին, երկուսիս հարցը միանգամից կլուծեին:

Սա է դարաբաղյան կլանի ճիզվիտական հաշվարկը: Այդ հաշվարկի ականատեսը եղել են 2003 թ. նախագահական ընտրություններից առաջ, երբ Տիգրան Նաղդալյանի սպանությունից հետո Հանրային և գրեթե բոլոր հեռուստաալիքներով Արտաքին գործերի նախարար Վարդան Մինասիս Օսկանյանը եթերում հայտարարում էր, որ այդ սպանությունը տանում է այն մարդկանց ուղղությամբ, ովքեր վերջերս ռուսաստանյան մամուլում հանդես են եկել հողվածներով: Իսկ ինչպես բոլորին հայտնի էր, այդ ես էի ռուսաստանյան մամուլում հանդես եկել հայաստանյան իրական վիճակը բնութագրող հողվածներով: Այսինքն՝ մատնացույց էր արվում Արտաշես Գեղամյանին որպես Տիգրան Նաղդալյանի ահաբեկման կազմակերպիչ:

Տղերքը գիտեին, թե ինչ են անում. կրքեր էին բորբոքում, որին կհետևեր ինձ ահաբեկելը: Դրանից հետո մեղքը կբարդեին Նադդալյանի հարազատների վրա, որոնք, իբր, վրեժխնդիր են եղել «սպանության կազմակերպչի» նկատմամբ: Այն օրերին, շնորհիվ այս սցենարի բացահայտմանը «Հայկական ժամանակ» թերթում, հրաշք տեղի ունեցավ և երկրորդ ահաբեկչությանը նրանք չգնացին: Հիմա էլ պրն Քոչարյանի շահերը սպասարկող թերթը հեզմանքով է հիշում այդ դեպքերից հետո «բրոնեժիլետ» հագնելուս փաստը: Սրա իմաստն է՝ մարդկանց ուշադրությունը շեղել երկրում տիրող ալան-թալանից, ահաբեկչություններից, հետո էլ ամեն ինչ անել, որ խառնվի քաղաքական ներկա դաշտը:

Պարոններ Ռ.Քոչարյան և Ս.Սարգսյան, բավական է մեր ժողովրդին դնեք անհասկացողի տեղ, բավական է Հայաստանը դարձնեք խոպան: Եկել, անօրեն վաստակած միլիարդների տեր եք դարձել, վերջապես կանգ առեք, թողեք գնացեք: Չեմ էլ ասում՝ պատասխանատվության կենթարկենք, թողեք գնացեք, որովհետև, ավա՛ղ, ձեզ հետ էլ է կապվում բոլորիս համար նվիրական Արցախի ազատագրական պայքարը: Շնորհակալություն:

**«ВОРОВАТЬ НАДО МЕНЬШЕ!» —
«ՊԵՏՔ Է ՔԻՉ ԳՈՂԱՆԱԼ»**

Գողութիւն մի՛ ընէր
ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆԸ, ԵԼԻՑ 20, 15

Սիրեւի ընթերցող, Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում նոյեմբերի 14-ին և 15-ին Ազգային ժողովի քառօրյա նիստերում 2007 թ. պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ հնչած «Ազգային Միաբանություն» խմբակցության ղեկավար Արտաշես Գեղամյանի բանավոր ելույթների շարադրանքը: Նկատենք, որ ելույթներում արծարծված հարցադրումները, երկիրը խորը ճգնաժամից հանելու ուղիների մատնանշումը պահանջում են սկզբունքորեն նոր հենքի վրա դնել բյուջետային քաղաքականության ողջ համակարգը: Որքան էլ իշխանությունները չլսելու և չտեսնելու տան Ա.Գեղամյանի նոր մոտեցումները, միևնույն է «Ազգային Միաբանություն կուսակցությունը» ժողովրդի աջակցությամբ առաջիկայում կյանքի է կոչելու դրանք:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔԱՌՕՐՅԱ ՆԻՍՏՈՒՄ
(14 նոյեմբերի 2006 թ.)

Հարգելի գործընկերներ, 2007 թ. բյուջեի նախագիծը իշխանությունների կողմից բնութագրվել է որպես սոցիալական ուղղվածություն ունեցող, երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը միտված ծրագրային փաստաթուղթ: Հարգելի Վարդան Խաչատրյանը բյուջեյն բնութագրեց նաև տնտեսագիտության համար անհայտ «իրա-

չալի» տերմինով: Ձեզ հետ փորձենք վերլուծել, որքանով են իրականությանը համապատասխանում բյուջեին տրված այդ գնահատականները:

Ի սկզբանե ասեմ, որ բյուջետային մուտքերի, սոցիալական, գիտության, կրթության, առողջապահության ոլորտներին հատկացվող գումարների աճը, անշուշտ, զովելի է: Սակայն մեր խնդիրն է բյուջեի նախագծին տալ անկողմնակալ գնահատական: Ուստիև մի քանի խոսք բյուջետային ուղերձում հայտարարված խնդիրների ու առաջարկվող լուծումների՝ կասկածելի տրամաբանվածությունն ունեցող ձևակերպումների մասին: Այսպես, ՀՀ կառավարության զեկույցի մաս I-Ա-ի առաջին-երկրորդ էջերում «Տնտեսական զարգացում» բաժնում կարդում ենք. «Ձեռք բերված հաջողությունների պահպանման և ամրապնդման, երկրի տնտեսությունը հեռանկարային զարգացման ամուր և որակապես նոր հիմքերի վրա դնելու գործարար և ներդրումային միջավայրի շարունակական բարելավման, մրցունակ և գիտատար ճյուղերի զերակշռության ապահովման նպատակով 2007 թ. իրականացվող միջոցառումներն ուղղված կլինեն»:

- վերջին տարիներին ձեռք բերված ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճի տեմպերի միտումների պահպանմանը»:

Հիմա դառնանք Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնագրքերին՝ պարզելու, թե արտահանման այդ ի՞նչ առաջընթաց աճի տեմպերի մասին է խոսքը, որը Կառավարությունը հորդորում է, թե պետք է պահպանել: Նշենք, որ, համաձայն Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տեղեկատվության, ՀՀ արտաքին առևտրի շարժընթացը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով. 2004 թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունում նախորդ տարվա համեմատ արտահանման աճի տեմպը կազմել է 104,3%, իսկ ներմուծման աճի տեմպը՝ 105,6%: Այլ կերպ ասած՝ ներմուծման աճի տեմպը առաջանցիկ է եղել արտահանման աճի տեմպի նկատմամբ: 2005 թ. արտահանման և ներմուծ-

ման աճի տեմպերը գրեթե հավասարվել են՝ կազմելով համապատասխանաբար 131,5% և 130,9%: Մինչդեռ 2006 թ. հունվար-սեպտեմբերին գրանցվել է արտահանման նվազում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ կազմելով 99,1%, իսկ ներմուծման աճի տեմպը եղել է զգալիորեն առաջանցիկ արտահանման համեմատ՝ կազմելով 119,4%: Ի՞նչ, Կառավարությունը մտադիր է «պահպանել» առաջանցիկ արտահանման միտումները, ինչպես հռչակված է նրա զեկույցում:

Այդ փաստաթղթում առկա է նաև ևս մեկ անտրամաբանական պնդում: Ուղերձում նշված է, որ «2007 թ. իրականացվելիք միջոցառումներն ուղղված կլինեն Հայաստանի, որպես տնտեսական գործընկեր, վարկանիշի բարձրացմանն ու համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման դրական արդյունքների ամրապնդմանը»: Այլ կերպ ասած՝ Կառավարությունը որպես դրական արդյունք է բնութագրում այն փաստը, որ մեր արտահանողները կորցնում են իրենց դիրքերը համաշխարհային շուկայում՝ այս տարվա 9 ամիսների ընթացքում գրանցելով արտահանման ծավալների կրճատում: Կամ էլ որպես դրական արդյունք են դիտվում այն փաստերը, որ Հայաստանը դուրս է մնացել տարածաշրջանում իրականացվող տնտեսական խոշորածավալ ծրագրերից, մասնավորապես, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի թե՛ շինարարությունից, թե՛ հետագա շահագործումից՝ դուրս մղվելով տնտեսական լուրջ շահութաբերություն ունեցող այդ կոմունիկացիաների անցկացման համար տարանցիկ երկիր դառնալու հնարավորությունից: Այստեղ հարկ է հիշատակել նաև մեկ այլ տագնապահարույց երևույթի մասին. արդեն իսկ գործնական հիմքերի վրա դրվող Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթգծի կառուցումից հետո Հայաստանը վերջնականապես դուրս կմղվի տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն ցանկացած ծրագրում դերակատարություն ստանձնելուց: Չլինի՞ թե նշված դեգինտեգրացիոն վտանգավոր միտումներն են Կառավարության կողմից այդ ոլորտում բնութագրվում

որպես դրական արդյունքներ, ավելին, հետոն էլ խնդիր է դրվում ամրապնդել դրանք:

Երրորդ. զեկույցում նշված է նաև, որ «2007 թ. իրականացվելիք միջոցառումներն ուղղված կլինեն զբոսաշրջության ոլորտի շարունակական զարգացմանը»: Կարողում ենք բյուջեի նախագիծը, որտեղ այդ ոլորտին վերաբերող բաժնուն նշված է. «ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագրի համաձայն 2007 թ. բյուջեի նախագծով սահմանված է, որ ծախսերը կազմելու են 2006 թ. նախատեսված ծախսերի 90,6%-ը»: Այս ցուցանիշը նույնպես չի խոսում Կառավարության զեկույցում մատնանշված զբոսաշրջության ոլորտի շարունակական զարգացման օգտին:

Կարծում են, որ բերված այս 3 օրինակներն ինքնին խոսում են այն մասին, որ 2007 թ. բյուջեի նախագիծը կազմելիս խորությամբ չեն ուսումնասիրվել վտանգավոր այն միտումները, որոնք առկա են: Չեն խորացել, մասնավորապես, թե ինչ^ով է պայմանավորված 2006 թ. հունվար-սեպտեմբերին (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ) արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի անկման (98,4%), էլեկտրաէներգիայի արտադրության անկման (94,8%) պատճառների մեջ: Վերլուծության չեն ենթարկել այն փաստը, որ շինարարության ոլորտը, որն իր ծավալներով կազմել է ՀՆԱ-ի 22,9%-ը՝ արձանագրելով 139,6%-ի աճի տեմպ անցած 9 ամիսների արդյունքով, ինչ^ու նույնքան ակտիվությամբ աչքի չի ընկել իր հարկային մուծումներով: Այստեղ հարգելի Տիգրան Սարգսյանը խոսեց շինարարությունում բարձր շահութաբերության մասին: 2005 թ. պաշտոնական վիճակագրությունը վկայում է, որ արձանագրվել է ընդամենը 2 մլրդ 206 մլն դրամի շահույթ: Դուք իրավացի եք, չափազանց շահութաբեր ոլորտ է, որովհետև, այո, ստվերում շահույթները նվազագույնը կազմել են ոչ ավել, ոչ պակաս, քան 55 մլրդ դրամ: Շահույթներ, որոնք դուրս են մղվել հարկային դաշտից: Ահա սրանք են փաստերը: Առանց երկմտելու կարելի է պնդել, որ այդ ոլորտի առնվազն 80%-ը, ցե-

րառելով, այսպես կոչված, էլիտար շենքերի շինարարությունը, գործում է սովորում:

Ի դեպ, այստեղ խոսվեց նաև աճող ներդրումների մասին: Մինչդեռ 2006 թ. 1-ին կիսամյակում, համաձայն նույն Կենտրոնական բանկի պաշտոնական տեղեկատվության, այն է՝ Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի ցուցանիշների, ուղղակի օտարերկրյա ներդրումները կազմել են 107,6 մլն դոլար: Պարծենալ ներդրումների այսպիսի ծավալներով առնվազն ամոթալի է: Ստահագությամբ նշեն, որ Ադրբեջանում օրեկան կատարվում է 10 մլն դոլարի ներդրում, որը տարեկան կտրվածքով կազմում է 3,5-4 մլրդ դոլար: Բա լավ, այս հարցերի մասին ո՞վ պետք է մտածի և ինչպե՞ս կարելի է նման ողբալի վիճակում հայտնվելու պարագայում խոսել սոցիալական ուղղվածություն ունեցող պետական բյուջեի մասին:

Հարգելի գործընկերներ, մի քանի խոսք բյուջեի իրական ուղղվածության մասին: ՀՀ 2007 թ. բյուջեի նախագծում ընդհանուր բնույթի պետական ծառայությունների, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության, ազգային անվտանգության և դատական գործունեության ապահովմանն ուղղված ծախսերը կազմում են բյուջետային բոլոր ծախսերի 36,2%: Վերը նշված ոլորտներին հատկացվող ծախսերի մակարդակով Հայաստանը բացահայտորեն դասվում է աշխարհի չակերտավոր առաջատարների շարքին: Նշենք, որ զարգացած երկրներում վերը նշված բնույթի ծախսերի համար հատկացվում է բյուջեների մոտավորապես 11%-ը, իսկ համաշխարհային միջին ցուցանիշը չի գերազանցում 20%-ը: Ուստիև առաջարկվող բյուջեն Հայաստանի Հանրապետությունը բնութագրում է որպես ռազմա-ոստիկանա-բյուրոկրատական երկիր: Այս իրողությունն ապացուցում են նաև բյուջետային մի շարք ցուցանիշներ: Այսպես. Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը երաշխավորում է առողջապահությանը հատկացվող ծախսերը պահպանել ՀՆԱ-ի 5%-ից ոչ պակաս: Բյուջեի առաջարկվող նախագծում առողջապահությանը հատկացվող ծախսերը կազմում են

կանխատեսված ՀՆԱ-ի ընդամենը 1,63%-ը կամ պահանջվածից 3 անգամ պակաս: Լավ, առողջապահության նախարարը հարգանք վայելող անձ է, շնորհք ունի դրսից, միջազգային կազմակերպություններից կարողանում է բյուջեի չափով գրանտներ բերել: Բայց չէ՞ որ դա հարցի լուծումն չէ:

Գաղտնիք չէ, որ Հայաստանի համար սեփական արտադրանքի մրցունակությունն արտաքին շուկաներում ապահովելու հարցն արդեն իսկ դարձել է հրամայական պահանջ: Դրա մասին արդեն ասվել էր:

Հարգելի գործընկերներ, ինչպես վկայում է համաշխարհային փորձը, վերը նշված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է, որ գիտությանն ուղղվող ծախսերը պահպանվեն ՀՆԱ-ի 1,5-ից 3%-ի մակարդակի վրա: Հիշեցնեն, որ քննարկվող բյուջեի նախագծում այդ ծախսերը սահմանված են ՀՆԱ-ի 0,19%-ի չափով՝ պահանջված գումարներից 9-ից 16 անգամ պակաս:

Միջազգային ամենահեղինակավոր փորձագիտական կենտրոնների գնահատմամբ XXI դարի մարտահրավերներին դիմակայելու համար արդեն իսկ այսօր անհրաժեշտ է, որ կրթական համակարգին հատկացվող ծախսերը կազմեն ՀՆԱ-ի 5-7%-ը: Առաջարկվող նախագծում այդ ծախսերը կազմում են կանխատեսվող ՀՆԱ-ի 2,96%-ը կամ պահանջված գումարից 2 անգամ պակաս: Կարծում են, որ բերված օրինակները բավարար են պնդելու համար, որ վարվող բյուջետային քաղաքականությունը, որն արտացոլված է Հայաստանի Հանրապետության 2007 թ. պետական բյուջեի նախագծում, կրում է ձևական բնույթ, մեղմ ասած, համահունչ չէ երկրի առջև ծառայած խնդիրների լուծման համար ներկայացվող պահանջներին: Իսկ թե ինչպիսի՞ն են Հայաստանին ուղղված մարտահրավերները և որո՞նք են դրանց առաջն առնելու ճանապարհները, ես կանդորադառնամ իմ հաջորդ ելույթում, որով հանդես կգամ «Ազգային Միաբանություն» խմբակցության անունից:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔԱՌՕՐՅԱ ՆԻՍՏՈՒՄ
(15 նոյեմբերի 2006 թ.)

Հարգելի գործընկերներ, 2007 թ. պետական բյուջեի նախագծին օբյեկտիվ գնահատական տալու համար անհրաժեշտ է պատասխանել մեկ հարցի՝ որքանով է այն նպաստում Հայաստանի Հանրապետության առջև ծառայած մարտահրավերների հաղթահարմանը: Այդ իսկ նպատակով մեկ անգամ ևս նշենք այն սպառնալիքները, որոնք սասանում են երկրի անվտանգությունը:

Առաջին. Միավորված ազգերի կազմակերպության «Պարենային անվտանգությունն աշխարհում» ամենամյա զեկույցում նշված է, որ 2005 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության ազգաբնակչության 29%-ը կամ ավելի քան 900 հազար մարդ թերսնված են, սովի են մատնված:

Երկրորդ. Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների համաձայն տագնապահարույց շարժընթաց է արձանագրված ժողովրդագրության բնագավառում: Ընդդիմադիր պատգամավորներն այս ամբիոնից արդեն իսկ ներկայացրել են փաստացի տվյալներ, որոնք վկայում են վերջին տարիներին ազգաբնակչության աճի տեմպերի շեշտակի նվազման մասին, ուստի դրանք չկրկնեն: Սակայն Ձեր ուշադրությունն են սևեռում մեկ այլ շատ կարևոր իրողության վրա: Պետության հիմքերի հիմքը, հենասյունը հանդիսացող հայկական ընտանիքը տարեցտարի ենթարկվում է լուրջ փորձությունների: Այսպես, 2004 թ. գրանցվել է 16975 ամուսնություն և 1968 ամուսնալուծություն կամ ամուսնացածների 11,59%-ը բաժանվել են: 2005 թ. ամուսնալուծությունների տեսակարար կշիռն ամուսնացածների թվում կազմել է 14,4% և այս տարվա 9 ամիսների ընթացքում այդ ցուցանիշը հասել է 17,87%-ի:

Երրորդ. վտանգավոր չափերի է հասնում բնակչության արտահոսքը հատկապես սահմանամերձ գյուղերից, որոնք տարեցտարի

դատարկվում են: Արդյունքում ներկայումս այդ գյուղերի բնակչության հիմնական մասը կազմում են տարեցներն ու կանայք: Սոցիալական ծանր վիճակից դրդված, գյուղերում գործազրկության մատնված տղամարդիկ հարկադրված են լքել իրենց տները, մեկնել արտագնա աշխատանքի: Դրան հաջորդում է այն, որ երկրից դուրս վերջիններս տնավորվում են՝ իրենց մոտ տանելով հարազատներին կամ էլ օտարության մեջ նորից են ամուսնանում, ընտանիք կազմում: Այս հարցը լուր ժողովրդագրական չէ, այն ուղղակիորեն առնչվում է ազգային անվտանգության խնդիրների հետ. սահմանամերձ գյուղերը դատարկվելով՝ անպաշտպան են դարձնում Հայաստանի պետական սահմանը: Իսկ մենք գիտենք՝ թե ո՞ր սահմանը ինչպիսի՞ հարևանների հետ է:

Չորրորդ. Լուրջ մարտահրավեր է նաև Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետության շրջափակումը: Դրա հետևանքները, գուժարած երկրում վարվող անհեռանկար թե՛ տնտեսական, թե՛ դրամավարկային քաղաքականությունն արդեն իսկ զգացնել են տալիս երկրի էկոնոմիկայում խորացող բացասական դրսևորումների ի հայտ գալով: Այսպես, նկատվում են արդյունաբերական արտադրանքի ծավալների, էլեկտրաէներգիայի արտադրության, ընդհանուր օգտագործման տրանսպորտի, բեռնաշրջանառության, արտահանման ծավալի կրճատման միտումներ: 2006 թ. հունվար-սեպտեմբերին (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ), ինչպես նշել էի իմ նախորդ ելույթում, արձանագրվել է անկում՝ արդյունաբերությունում 98,4%, էներգետիկայում 94,8%, բեռնափոխադրումներում 98,6%, արտահանումում 99,1%:

Էլ չեն խոսում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացի ձախողման հետևանքով ակներև դարձած բազում անկանխատեսելի մարտահրավերների մասին:

Հիմա տանք ընդամենը մեկ հարցի պատասխան. արդյոք 2007 թ. բյուջեի նախագիծը (ընդունման դեպքում) հաղթահարո՞ւմ է երկրի առջև ծառայած մարտահրավերները կամ հիմքեր դնո՞ւմ է դրանց

դիմակայելու համար: Ավա՛ղ, ոչ: Ի՞նչ, նվազագույն աշխատավարձը հասցնելով 20 հազար դրամի, թոշակի միջին չափը 13586 դրամի, մենք 900 հազարից ավելի սովի մատնված մարդկանց ցա՞վն ենք դարձնում: Իհարկե, ոչ: Մի՞թե բյուջեի հեղինակները չգիտեն, որ նվազագույն պարենային զամբյուղի արժեքը ներկայումս կազմում է 20620 դրամ, իսկ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 31961 դրամ՝ հաշվի չառած գալիք տարում ծրագրված սղաճը: Կամ էլ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելով 35 հազար դրամ, ի՞նչ, դրանով ծնելիության խթանման խնդի՞ր է լուծվելու: Այդ գումարը լավագույն դեպքում նորածինի համար մի քանի ամսվա պամպերսի հարց սկի չի լուծի, այն էլ, եթե երեխային չմրսեցնեն: Այո, խրախուսելի է, որ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընտանեկան նպաստի իրավունք ունեցողները երրորդ և ավելի երեխայի ծննդյան դեպքում միանվագ նպաստի չափն առաջարկվել է սահմանել 200 հազար դրամ: Սակայն մի՞թե պարզ չէ, որ նպաստով իրենց գոյատևությունն ապահովող ընտանիքներին հատկացվող այդ գումարը ծով հոգսերի մեջ և ոչ մի հարց չի լուծի:

Գաղտնիք բացահայտած չեն լինի, եթե ասեն, որ մեր ազգը պատմության քառուղիներում ամենադաժան փորձությունների միջով անցնելով հարատևել է շնորհիվ ընտանիքի կուռ գաղափարի, օջախի կենսունակության: Այսօր մենք ականատեսն ենք դարերի խորքից մեզ ժառանգված գոյատևման այդ զորեղ գործոնի խարխլմանը, որը, առանց չափազանցության, հուժկու հարվածում է երկրի անվտանգությանը: Ի՞նչ է, բյուջեում նախատեսվո՞ւմ է այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ միջոցներ տրամադրել, արդյոք կա՞ն երիտասարդ ընտանիքների կայացմանն ուղղված պետական ծրագրեր: Ավա՛ղ, դրանք չկան:

Բյուջեից չի երևում նաև, թե որոնք են լինելու վարվող տնտեսական քաղաքականության գերակայությունները՝ ուղղված արդյունաբերության, գյուղատնտեսության զարգացմանը, հատկապես այդ

ողորտների այն ճյուղերին, որոնք կապահովեն վտանգավոր չափերի հասնող ներմուծման ծավալների շեշտակի կրճատում: Այս խնդիրը չափազանց կարևոր է, որովհետև արդեն իսկ միտում է նկատվում, երբ կենսաապահովման առաջին անհրաժեշտության ապրանքներ ներմուծողները փորձում են որոշ ապրանքատեսակներ Չայաստանի շուկայում սպառել դեմպինգային, այն է՝ ինքնարժեքից ավելի ցածր գներով: Հետապնդվող նպատակը մեկն է. ամառողջ մրցակցության արդյունքում սնանկացնել նույն ապրանքները թողարկող տեղական արտադրողներին՝ հետագայում մոնոպոլ դիրքեր գրավելու և գնա-յին բարձր քաղաքականություն իրականացնելու համար:

Հարգելի գործընկերներ, ես հասկանում եմ, որ Կառավարության անդամները կարող են բարձրաձայնել, թե այդ ամենի մասին իրենք էլ պակաս տեղեկացված չեն, սակայն խնդիրն այն է, կպատճառաբանեն նրանք, որ բյուջեի առաջարկվող լուծումները բխում են առկա հնարավորություններից, որոնք էլ սահմանափակում են 557 մլրդ 851 մլն դրամ ծախսային մասով:

Ահա հենց այստեղ է, որ մոտենում ենք բյուջեի ձևավորման սկզբունքներին, որոնք ունեն կարևորագույն նշանակություն: ՀՀ-ում պետական բյուջեները կազմվում են՝ ելնելով նախորդ տարվա հիմնական ցուցանիշների գերազանցումն ապահովելու սկզբունքից: Այդ մոտեցումը ներհատուկ էր տնտեսվարման պլանային մոդելին: Կա նաև այլ մոտեցում, որը, ըստ իս, շատ ավելի արդյունավետ կարող է լինել մեր երկրի համար: Այսպես, ԱՄՆ-ում, ճապոնիայում, Եվրամիության մի շարք երկրներում, ինչպես նաև 2007թ. սկսած մասամբ Ռուսաստանի Դաշնությունում կիրառվում է բյուջեի կազմավորման այլ մոտեցում: Ի սկզբանե որոշվում է, թե երկրի համար ո՞ր խնդիրներն ունեն գերակա նշանակություն, որո՞նք են լուծում պահանջող մարտահրավերները: Այդ ամենը պարզելուց հետո բյուջե կազմավորողներն անդրադառնում են համապատասխան ֆինանսական աղբյուրների հայթայթմանը, այն է՝ բյուջեի մուտքային մասի ձևավորմանը: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնությունում ար-

դեն իսկ կյանքի են կոչվում ազգային չորս ծրագրեր (Национальные проекты), կազմավորման փուլում է հիմնգերորդը: Հետաքրքրական մոտեցումներ են դրված ԱՄՆ-ի պետական բյուջեի ձևավորման հիմքում: Սկզբում ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատը, այնուհետև սենատը որոշում են երկրի համար առաջնահերթ նշանակություն ունեցող խնդիրները: Դրան հաջորդում է ազգային գերակայություն ճանաչված հիմնահարցերի լուծմանն ուղղված նպատակային ծրագրերի հաստատումը: Ըստ որում, սկզբնական շրջանում շատ չեն էլ կարևորում, թե ինչ աղբյուրներից է իրականացվելու ֆինանսավորումը: Այլ խոսքերով ասած՝ ելնելով երկրի ազգային գերակայություններից առաջնահերթություն են տալիս բյուջեի ծախսային մասի կազմմանը: Հետո պահանջվող գումարները համադրում են բյուջեում սպասվող մուտքային եկամուտների հետ, այնուհետև մշակում պակասող գումարների հայթայթմանն ուղղված գործառնությունները: Մասնավորապես, 2005 թ. ԱՄՆ-ում որպես գլխավոր ազգային գերակայություն է ճանաչվել ամերիկացիների երկարակեցությունն ապահովելու խնդիրը և հենց դրանով էր նաև պայմանավորված, որ առողջապահությանը հատկացված բյուջետային ծախսերը 5 անգամ գերազանցում էին Պենտագոնին տրված գումարները:

Հարգելի գործընկերներ, ամփոփելով խոսքս նշեմ, որ ՀՀ բյուջետային համակարգը կարիք ունի արմատական վերանայման, արդիականացման: Այսօր, պետական բյուջեի կազմավորման հիմքում դրված սկզբունքները, մուտքային և ծախսային մասի ձևավորման հիմքում դրված մոտեցումները չեն ապահովում երկրի առջև ծառայած մարտահրավերներին դիմակայելը: Կրկնում են, իհարկե, ինձ ընդդիմախոսողները կասեն, թե դրա համար անհրաժեշտ են ֆինանսական զգալի միջոցներ: Այստեղ է, որ ուզում են պնդել՝ այդ միջոցները երկրում կան, սակայն գտնվում են ստվերում: Եվ ես միանգամայն համամիտ եմ նախարար Վարդան Խաչատրյանի հետ, որ հնարավոր է բյուջեի մուտքային մասը հասցնել ՀՆԱ-ի 22-25%-ի: Նշեմք,

որ անգամ իսկ հարևան Թուրքիայում բյուջետային եկամուտները 2005 թ. կազմել են ՀՆԱ-ի 26,5%: Իսկ ինչն¹ է հիշատակեցի Թուրքիան, որովհետև Եվրոպայում այդ երկիրը ճանաչված է որպես առավել կոռումպացված: Իսկ Եվրամիության անդամ երկրներում այդ ցուցանիշը 30-ից 40%-ի սանդղակում է գտնվում: Ֆրանսիայում, Դանիայում, Շվեդիայում և Եվրամիության անդամ չհանդիսացող Նորվեգիայում այդ ցուցանիշը մոտենում է 50%-ի: Իսկ մեզ մոտ որպես մեծ նվաճում է ներկայացվում այն, որ հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 2007 թ. մուտքերը կկազմեն ՀՆԱ-ի 15,7%-ը՝ 2006 թ. ծրագրային 14,7% -ի և 2005 թ. փաստացի 14,0%-ի դիմաց: Մինչդեռ, կրկնեն, որ այդ ցուցանիշը հասցնելով ընդամենը 22%-ի՝ բյուջեի մուտքերում կարելի է ակնկալել լրացուցիչ 184 մլրդ դրամի հասնող գումարներ:

Վերջում պատմությունից հիշեն մի դրվագ. երբ ռուսաց թագավոր Ալեքսանդր II-ը 1880 թ. ենթարկվեց երկաթուղային «վթարի», որը կարծել էր թե արագության և երկաթուղային գծի անսարքության հետևանք է (սակայն հետագայում պարզվեց, որ մահափորձ էր), իրեն յուրովի դրսևորեց: Երբ չինովնիկները սպասում էին զանազան հանձնաժողովների ստեղծմանը, հետաքննությունների անցկացմանը, ռուսաց թագավորը փաստի առնչությամբ իրեն ներկայացված զեկուցագրի վրա մակագրեց՝ «Воровать надо меньше!» («Պետք է քիչ գողանալ»):

Ցարի այս խոսքերն ավելի քան տեղին են մեր երկրի համար: Եթե մենք մեր իշխանություններին հորդորենք չհովանավորել զողերին, չենթարկվել ճնշումներին (ինչի ականտեսը մենք այսօր եղանք) և վերջ դնել գողություններին, ապա հնարավոր կլինի փրկել հայոց պետականությունը:

«Իրավունք», 17 – 23. XI. 2006:

ՊԱՐՈՆ ՔՈՇԱՐՅԱՆ, ԸՆԴՈՒՆԵՔ ՁԵՐ ՀԵՐԹԱԿԱՆ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔԱՌՕՐՅԱ ՆԻՍՏՈՒՄ
(14 նոյեմբերի 2006 թ.)

Հարգելի գործընկերներ, այսօր ես շատ խաղաղ եմ տրամադրված, որովհետև երեկ տեղի ունեցավ անսպասելին: Պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանը դրսևորեց հոգատարություն իմ առողջության, մասնավորապես, հիշողությանս նկատմամբ, որը, ինչ խոսք, ոգևորում է ինձ, և այս հայտարարությունն ամբողջությամբ որպես շնորհակալական խոսք նվիրում եմ նրան:

Երբ կասկածի տակ վերցվեց հիշողությունս այն կտրվածքով, ըստ որի Հայաստանի Հանրապետությունում կատարվում է մեծածավալ կողոպուտ, միամիտս մտածեց. մեկ անգամ ևս ուշադիր նայեմ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տեղեկագրքերը: Ոչ միայն նայեցի, այլ նաև չզլացա, արտագրեցի «Խորհրդարանական ժամում» հիշողությամբ հնչեցված տվյալները: Այսպես, 2003, 2004, 2005 թթ. պետական բյուջեին, Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին կատարողական բուլոր վարույթներով բռնագանձման ենթակա զումարներից չի վերականգնվել 105 մլրդ 42 մլն դրամ: Հայցում եմ Ձեր ներողամտությունը. ես ասել էի 105 մլրդ դրամ, 42-ը սոռացել էի մշել: Ավելին, հիշել էի, որ միայն Երևան քաղաքում 2005 թ. իրականացված, այսպես կոչված, էլիտար շենքերի կառուցողներից չէր հարկվել նվազագույնը 55 մլրդ դրամին համարժեք հավելյալ շահույթից գանձման ենթա-

կա գումար: Այ մարդ, եղքանը սրանց համար քիչ էր, այս տարվա 9-ը ամիսների ընթացքում էլ հենց այդ ոլորտներում գոյացած 23 մլրդ դրամ հավելյալ շահույթը նույնպես չի հարկվել: Տղերքը գողացել են, որովհետև ապահով են այս երկրում, որովհետև էլիտար շենքերի շինարարությունն իրականացնում են, ինչպես հայտնի է բոլորին, միայն և միայն զույգի՝ պարոններ Ռ.Քոչարյանի ու Ս.Սարգսյանի յուրայինները:

Բացի այդ, նայեցի, տեսա, որ, այո, ճիշտ էի հիշատակել «խորհրդարանական ժամում», «Արմենտելի» հարկումից դուրս թողած գումարները կազմել են ոչ ավել, ոչ պակաս 10 մլրդ դրամ: Ճիշտ էի հիշել նաև այն, որ նույն վիճակն է արձանագրված «Յայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում. անցած 2 տարի 6 ամիսների ընթացքում այնտեղ 31 մլրդ 632 միլիոն դրամ հավելյալ շահույթ նույնպես չի հարկվել:

Այս հարցերը թողած, պարոն Քոչարյան, ձեր խոսնակը ինչի՞ց է խոսում: Թող այս գողության փաստերի մասին խոսի: Ընդունեք, որ այս անգամ էլ իմ բերած փաստերը ձեզ պարտության մատնեցին: Այնպես եք նյարդայնացել, ոնց որ հեջ պարտված չեք եղել: 1998 թ. պարտվեցիք, 2003 թ. պարտվեցիք, 2004 թ. ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը կրկին պարտվեցիք, երբ Արցախից սպեցնագ բերեցիք ու անզեն ժողովրդին ծեծել տվեցիք, 2005 թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական հանրաքվեին դարձյալ պարտվեցիք: Է, լավ, հո Ձեր ձեռքը կրակը չե՞նք ընկել: Երկրում համատարած գողություն է, փաստերի մասին էլ ասում են, ի՞նչ եք բոստանները զցում այս խոսակցությունը: Էն երիտասարդ տղային էլ անհարմար վիճակի մեջ եք զցում: Պարոն Քոչարյան, ընդունեք Ձեր հերթական պարտությունը:

«Իրավունք», 17 – 23. XI. 2006:

**«ՉԿԱՆ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ՈՒ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ
ԹՇՆԱՄԻՆԵՐ, ԿԱՆ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՇԱՀԵՐ»**

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

«ԻՐԱՔԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԲԱԶՄԱԶԳ

ԴԻՎԻԶԻԱՅԻ (Կենտրոնական հարավ, ԲԱԴ-Կ-Յ) ԴԵԿԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ՆՄԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՓՈՒՆԸՄԲՈՄԱՆ
ՀՈՒՇԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ ԵՎՍ ՄԵԿ ՏԱՐՈՎ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱԶԱՐԿԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(5 դեկտեմբերի 2006 թ.)

Հարգելի գործընկերներ, քննարկվող հարցը շատ ավելի կարևոր է, քան թվում է առաջին հայացքից և կարող է ճակատագրական դառնալ Հայաստանի Հանրապետության համար: Խնդրո՞ւ առարկայի շուրջ այս ամբիոնից դժվար է խոսել այն պարզ պատճառով, որովհետև եթե ես, ինչպես բնորոշ է ընդդիմությանը և հատկապես «Ազգային Միաբանությանը», փորձեմ հիմնավորել Հայաստանի պետական շահը, ապա վաղը, անտարակույս, տվյալ դեպքում, պարոն Քոչարյանի շահերը պաշտպանող «Փակագիծ» թերթը կգրի. «Բա որ ասում էինք՝ Գեղամյանն ու Սերժ Սարգսյանը իրար հետ մոտիկ են»: Որովհետև սրանք թքած ունեն Հայաստանի պետական շահ ասածի, Հայաստանի պետականության անվտանգության վրա: Այ, այս աստիճանի են ապականել հանրապետության քաղաքական դաշտը: Իսկ որն ավելի զավեշտալի է, արդեն զգվե՞տո՞ղ է սկսել մեջմերը: Այն է՝ դարաբաղյան կլանի ներսում ով Սերժ Սարգսյանի հետ հենց իրենցից, հաշիվ ունի մաքրելու, փորձում է այդ բազարին մասնակից

դարձնել «Ազգային Միաբանությանը»: Դա չի նշանակում, որ ես այսօր չեմ քննադատելու պաշտպանության նախարարին, բայց ոչ քննարկվող փաստաթղթի կապակցությամբ: Ուրիշ հարցով հենց այսօր հայտարարությամբ հանդես եկամ:

Հիմա ներկայացնեմ այս հարցի շուրջ մեր տեսակետները. ի՞նչ է փոխվել անցած մեկ տարվա ընթացքում: 2005 թ. օգոստոսի 25-ին քաղաքական հայտնի գործիչ Հենրի Քիսինջերը ԱՄՆ-ի կառավարական շրջանակներին մոտ կանգնած «Վաշինգտոն պոստ» ազդեցիկ թերթում հանդես էր եկել վերլուծականով, ուր մասնավորապես նշել էր, որ Իրաքից Միացյալ Նահանգների զորքերի դուրս գալու եզակի ճանապարհը դա հաղթանակն է, ռազմական ճանապարհով հաղթելը: Կրկնում եմ. վերլուծականը հրապարակվել էր 2005 թ. օգոստոսին: Ճիշտ և ճիշտ նույն Հենրի Քիսինջերը արդեն իսկ մեկ տարի անց՝ 2006 թ. նոյեմբերի 17-ին բրիտանական «Բի-Բի-Սի» հանրահայտ հեռուստաընկերությանը տված հարցազրույցում հայտարարել էր. «Իրաքում տեղակայված կոալիցիան ուժերի համար ռազմական հաղթանակը ներկայումս անհնար է»: «Այնպես որ, եթե ԱՄՆ կառավարությունը ցանկանում է առաջընթաց ապահովել Իրաքում և տարածաշրջանում ամբողջությամբ, ապա նա պետք է երկխոսության մեջ մտնի Իրաքի հարևան երկրների հետ, այդ թվում՝ Իրանի», - ավելացրել էր Հ. Քիսինջերը: Իրաքի հարցն այն աստիճան խրթին է ԱՄՆ-ի պրեզիդենտներ հայր և որդի Բուշերի համար, որ նրանց ընտանիքին շատ մտերիմ անձնավորություն, այն է՝ Բուշ ավագի օրոք ԱՄՆ պետքարտուղար Ջեյմս Բեյքերի գլխավորությամբ ստեղծվեց երկկուսակցական հատուկ հանձնաժողով (Ջեյմս Բեյքեր — Լի Յամիլտոն նախագահությամբ): Վերջինիս գերխնդիրն է, հաշվի առնելով հարցի շուրջ դեմոկրատների և հանրապետականների կարծիքները, մշակել փոխընդունելի մոտեցումներ, որոնց նպատակն է ուղիներ առաջարկել Իրաքյան պատերազմից ԱՄՆ-ին պատվով, փառքով դուրս բերելու համար: Դրան հետևեց վերջերս՝ նոյեմբերի 18-ին, Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերի հայտնի հարցազրույցը

Քաթարի աշխարհահռչակ «Ալ Ջազիրա» հեռուստաալիքին: Երբ հեռուստալրագրողը նրան հարց ուղղեց, թե դուք արդյոք այժմ բաժանում եք այն տեսակետը, ըստ որի իրաքյան կամպանիան ոչ այլ ինչ էր, քան յուրովի աղետ, Բլերը պատասխանեց. «Դա այդպես է»: Դրան արդեն հետևեց այն, որ բրիտանական պառլամենտում (համայնքների պալատում) լիբերալ-դեմոկրատների առաջնորդ Մենզիս Կենթելը շտապեց հայտարարել, որ «այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ ռազմավարական սխալն ակնհայտ է... քանզի վարչապետը համաձայն է, որ դա «աղետ է», ապա պառլամենտը և բրիտանացի ժողովուրդը, որոնց մոլորության մեջ են գցել, արժանի են, որ իրենցից ներողություն հայցեն»: Ավելին, առաջարկվեց հեղինակավոր պատգամավորներից ստեղծել յոթհոգանոց հանձնաժողով՝ հետաքննելու համար այն իրադարձությունները, որոնք հանգեցրին 2003 թ. Իրաք ռազմական ներխուժմանը: Հարցն այն աստիճան բարդ և խրթին է, որ ճիշտ նույն Թոնի Բլերը, իր վերոհիշյալ հայտնի հեռուստաելույթում ասել էր նաև, որ իրաքյան հիմնահարցի կարգավորմանն անպայման պետք է ներգրավվեն Սիրիան ու Իրանը: Գիշտ այն նույն Իրանը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, որի նկատմամբ պատժիչ սանկցիաների կիրառման կողմնակից են թե՛ Միացյալ Նահանգները, թե՛ Մեծ Բրիտանիան: Արդարության առաջ չմեղանչելու համար նշենք, որ Բլերը նաև ավելացրել էր, որ իրենք շարունակում են անհամաձայնություն հայտնել Իրանի միջուկային ծրագրերին:

Հիշեցնեմ նաև, որ երկու տարի առաջ Իսպանիայում Անսարի գլխավորած աջ կողմնորոշում ունեցող կուսակցությունների կազմած կառավարությունը երկրի պառլամենտական ընտրություններում տապալվեց և իշխանության եկավ ձախ ուժերի կառավարությունը՝ Սապատերոյի գլխավորությամբ: Հատկանշական է այն, որ արտաքին քաղաքական ոլորտում վերջիններիս որդեգրած մայր սկզբունքը եղել է իսպանական ռազմական ստորաբաժանումների դուրսբերումը Իրաքից: Ընտրություններից հետո կազմավորված իսպանա-

կան կառավարությունը այդպես էլ վարվեց:

Քաղաքական նմանատիպ զարգացումների ականատեսը եղանք մաև վերջերս Իտալիայում տեղի ունեցած ընտրությունների ժամանակ: Այստեղ ևս հաղթանակ տարան Ռոմանո Պրոդիև և ձախ ուժերը, որոնք արտաքին քաղաքականության ոլորտում որդեգրել էին Իրաքից իտալական զորքերի անհապաղ դուրսբերման հարցի հրամայականը: Եվ, հավանաբար, պրն Սարգսյան, Ձեր տեղեկությունն այն մասին, որ մինչ օրս դեռ շուրջ 1600 իտալացի զինծառայող շարունակում է մնալ Իրաքում, փոքր-ինչ հնացած էր: Այսպես, «ANSA» գործակալությունը դեկտեմբերի 1-ին «Ирак остался без итальянцев» խորագրի ներքո հրապարակել է նյութ, ըստ որի իտալացի վերջին 60 զինվորներն արդեն իսկ Իրաքի հարավի Էն-Նասիրիա քաղաքում գտնվող ռազմակայանից դուրս են եկել և Քուվեյթով վերադառնում են Իտալիա:

Իրաքի հարցը ճակատագրական էր մաև թե Բուշի վարչակարգի և թե նրա գլխավորած Հանրապետական կուսակցության համար: Ինչպես գիտեք, ԱՄՆ-ի դեմոկրատական կուսակցությունը նախընտրական պայքարում արտաքին քաղաքական ոլորտի գերակա հարց էր համարել Իրաքի պատերազմի դադարեցումը և այնտեղից ամերիկյան զորքի շուտափույթ դուրս հանումը: Ասեմ ավելին, որ ԱՄՆ-ի առայժմ գործող այս կոնգրեսում դեմոկրատների լիդեր Նենսի Պելոզին այսօր առաջ է քաշում նորընտիր կոնգրեսում դեմոկրատական մեծամասնության առաջնորդի պաշտոնում հաստատել կոնգրեսական Ջոն Մերտին, որը հանդես է գալիս Իրաքից ամերիկյան զորքերի անհապաղ դուրսբերման առաջարկով: Դրա հետ մեկտեղ դեմոկրատներն առաջարկում են սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի և զինված ուժերի կոմիտեի ղեկավարներ հաստատել սենատորներ Ջոն Բայդենին և Կարլ Լևինին, որոնք նույնպես կողմնակից են Իրաքից ԱՄՆ-ի զորքերի դուրսբերման:

Ահա սա է այն իրավիճակը, որը ստեղծվել է իրաքյան պատերազմի շուրջ: Ասվածին գումարելի դարձնենք մաև այն իրողությունը, որի մասին այս ամբիոնից արդեն խոսվել է. կրկնեն, Իրաքում տեղակայ-

ված են 800-ից ավել վրացական զինվորական կոնստինգենտ և 150-ից ավելի ադրբեջանական: Դրա հետ մեկտեղ նշեն, որ 2007 թ. հունվարի 1-ից ադրբեջանական զինված ուժերի հիմնական միավորումներից մեկը՝ Բաքվի կորպուսը, ամբողջությամբ անցնելու է ծառայության ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան: Ասենք, որ այդ կորպուսում հավաքագրված է ադրբեջանական զինուժի 20%-ը: 2007 թ. կեսից սկսվելու է Ադրբեջանի զինված ուժերի մնացած 4 կորպուսների վերազինումը և ծառայությունը ՆԱՏՕ-ի ստանդարտներին համապատասխան: Այս գործընթացը ծրագրված է ավարտել 2008 թ. վերջերին, երբ ադրբեջանական բանակը իր գործունեությունն ամբողջությամբ կհամապատասխանեցնի ՆԱՏՕ-ի պահանջներին: Վրաստանն էլ իր հերթին, ինչպես գիտեք, ստացել է ամերիկյան սեմատի միաձայն որոշումը, ըստ որի երաշխավորվում է նրա անդամակցությունը ՆԱՏՕ-ին՝ արագացված տեմպերով: Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս հարցերը իրար հետ կապ չունեն, սակայն դրանք խիստ և խիստ փոխշաղկապված են:

Այս ամենը հաշվի առնելով՝ հիմա եկեք մտածենք, թե խնդրո հարցի շուրջ Հայաստանի դիրքորոշումն ինչպիսին պետք է լինի, որ բխի մեր երկրի և ժողովրդի շահերից: Իսկ թե ինչպիսին է «Ազգային Միաբանություն կուսակցության» վերաբերմունքը այս հարցում, որպեսզի մտքերս ժամանակի սղության պատճառով չաղճատվի, ես խմբակցության անունից իմ ելույթում դա կիրապարակեմ:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

(5 դեկտեմբերի 2006 թ.)

Հարգելի գործընկերներ, հարցի քննարկումը շատ հետաքրքիր հունով է ընթանում: Պատգամավորներից մեկը իրեն այս ամբիոնից իրավունք վերապահեց խրատական դասեր տալ հռետորներին՝ չխորանալով խնդրի էության մեջ: Մեր գործընկերներից մեկ ուրիշն

Էլ 19-րդ դարի 2-րդ կեսի բրիտանական վարչապետի հանրահայտ խոսքերը, չգիտես ինչու, վերագրեց իրենց խմբակցությանը. այն է՝ «Չկան հավերժական բարեկամներ ու հավերժական թշնամիներ, կան հավերժական շահեր»: Եվ պետք չէ այս միտքը վերագրել ՄԱԿ խմբակցությանը: Ինչ վերաբերում է քննարկվող բուն հարցին, ապա, իրոք, Իրաքի շուրջ ստեղծված վիճակը ծայրաստիճան բարդ ու լարված է: Եվ չափազանց մեծ է գայթակղությունը այս ամբիոնից քննարկվող հարցի շուրջ ամբոխահաճո ելույթներ ունենալ: Առավել ևս դա ավելի դյուրին կրնակավի քաղաքական այն իրավիճակում, որն այսօր ստեղծված է Հայաստանի Հանրապետությունում: Այո, մեծ է վտանգը առ այն, որ Իրաքը կարող է մասնատվի երեք, անգամ իսկ արդեն ձայներ են հնչում չորս մասերի մասնատելու մասին՝ դրանից բխող վտանգավոր և անկանխագուշակելի հետևանքներով: Խոսքը գնում է Իրաքը քրդական, շիական, սունիական առանձին պետությունների բաժանելու մասին, էլ չասենք, որ վերջերս լսվում են նաև ձայներ ասորական և քրիստոնյա բնակչությանը ինքնավար պետական միավորի մեջ համախմբելու մասին: Արդեն իսկ Թուրքիայում գործող «ժողովրդական հասարակություն կուսակցության» (որը այդտեղ գործող միակ լեգալ քրդական կուսակցությունն է, շեշտեմ խոսքը Թուրքիայում արգելված Քրդստանի բանվորական կուսակցության մասին չէ) Քրդստանի «մայրաքաղաք» Դիարբեքիրի (մեր պատմական Տիգրանակերտի հարևանությամբ) բաժանմունքի ղեկավար Հիլմի Այդոգդուն 2006 թ. նոյեմբերի 2-ին «Ռոսբալտ» ինֆորմացիոն հանրահայտ գործակալությանը տված հարցազրույցում ուղղակիորեն ասել էր, որ այժմ դյուրին է ստեղծել քրդական պետություն: Ակնարկը ավելի քան պարզ էր. չմոռանանք, որ 20 մլն էթնիկ քրդեր ապրում են Թուրքիայում և շուրջ 20 մլն էլ բնակվում են Իրաքում և Սիրիայում: Այսինքն՝ մենք այսօր, թվում է թե 46 հայ զինծառայողների Իրաք գնալ-չգնալու հարցն ենք քննարկում, մինչդեռ այսօր մենք որոշում ենք, թե ինչպիսին պետք է լինի Հայաստանի դերակատարությունը, այո, Մեծ Մերձավոր Արևելք տարածաշրջանի հնարա-

վոր զարգացումներում: Ահա սրանով է պայմանավորված հարցի լրջությունը: Ահա սա է ստիպում, որ մենք զգացմունքային կողմը դնենք մի կողմ և կատարենք սառը հաշվարկ՝ մեկս մյուսին փոխարացնելով և օգնելով ընդունելու ճիշտ որոշում: Ակնհայտ է, որ կայացված սխալ որոշումը ու դրանից բխող հետևանքները կործանարար չեն լինելու ոչ միայն իշխանության կամ ընդդիմության համար, այլ դրանք կործանարար են լինելու հայոց պետականության համար: Ահա այսպիսին պետք է լինի մոտեցումը, որը մենք պարտավոր ենք որդեգրել: Արդյունքում ունենք այն, որ ԱՄՆ-ում կոնգրեսի միջանկյալ ընտրություններից հետո, իրաքյան պատերազմի դեմ հանդես եկող դեմոկրատները և՛ ներկայացուցիչների պալատում, և՛ սենատում մեծամասնություն կազմեցին: Հիշենք նաև, որ այդ ընտրություններից մեկ շաբաթ անց պարոն նախարարի այստեղ հիշատակած Իրաքում տեղակայված ամերիկյան զինված ուժերի կենտրոնական հրամանատարության ղեկավար գեներալ Ջոն Աբիզաիդը սենատի զինված ուժերի կոմիտեում ելույթ ունենալով պահանջել էր, որ ամերիկյան ռազմական ներկայությունը Իրաքում աճի, ավելանա: Գեներալի այս առաջարկը հավանության էր արժանացել պրեզիդենտ Ջորջ Բուշի կողմից: Վերջինս իր հերթին հարց է բարձրացնում, որ լրացուցիչ 20000 զինծառայողներով համալրվեն ամերիկյան ստորաբաժանումները Իրաքում: Եվ այս ամենը կատարվում է ընտրություններում Իրաքից ամերիկյան զինված ուժերը դուրս բերելու կողմնակից դեմոկրատների տարած հաղթանակից հետո: Ասեմ ավելին՝ արդեն իսկ պրեզիդենտը կոնգրես է մտել առաջարկով, որով պահանջում է Իրաքում ռազմական ներկայությունը շարունակելու համար 2007 թ. 127 մլրդ դոլարի ֆինանսավորում, որն ավելին է այդ նպատակով 2006 թ. հատկացված գումարներից: Հատկանշական է և այն, որ պահանջվող գումարը գերազանցում է կոսմիկական հետազոտություններին հատկացվող ֆինանսավորումը: Նշեմ, որ այդ հետազոտությունների համար հատկացվող միջոցները Միացյալ Նահանգներում աննախադեպ մեծ են:

Այսինքն, կրկնեն, մենք գործ ունենք ծայրաստիճան լուրջ և բարդ խնդրի հետ: Եվ այստեղ ինչ-որ մակերեսային, հարցի մասին անտեղյակ ու անկապ վերլուծություններ անել, հիշատակել կարմիր բանակը, դեղին կամ մարնջագույն հեղափոխություն, առնվազն անլուրջ է: Առավել ևս խիստ վտանգավոր է, երբ այս ամբիոնից հանկարծ փորձում են այս հույժ կարևոր հարցը տեղափոխել (տվյալ պարագայում գոյություն չունեցող) մեկ այլ հարթության վրա, այն է՝ Ռուսաստանի Դաշնություն - Ամերիկայի Միացյալ Նահանգներ հարաբերությունների ոլորտ և այն դիտարկել այդ երկրների միջև, իբր, առկա հակամարտությունների ծիրում: Լավ, զոնե մամուլին ծանոթացեք, հասկացանք, ռուսական հեռուստատեսություն չէք նայում, զոնե իմտերնետով կարդացեք: Այսպես, նոյեմբերի 15-ին Միացյալ Նահանգների թիվ 1 «բորտը»՝ ինքնաթիռը, վայրէջք կատարեց «Վուկովո-2» օդանավակայանում: Տեղի ունեցավ շուրջ երկու ժամանոց գործնական հանդիպում - «լանչ» Ջորջ և Լորա Բուշերի ու Լյուդմիլա և Վլադիմիր Պուտինների միջև: Շատ կարճ հարցազրույցի ժամանակ Վլադիմիր Պուտինն ընդամենը մեկ բան ասաց, որ անկախ որևէ հանգամանքից (ակնարկը թափանցիկ էր, որ խոսքը զնում է ԱՄՆ կոնգրեսի ընտրություններում Բուշի կուսակցության պարտության մասին) ու հնարավոր փոփոխություններից անձամբ ինքը և Ռուսաստանի Դաշնությունը մնում են Ջորջ Բուշի հավատարիմ բարեկամը, ինչպես դա եղավ Գերմանիայի Դաշնության նախկին կանցլեր Գերհարդ Շրյոդերի պարագայում: Այո, վերջինիս հետ նաև անձնական լավ կապերի արդյունքում որոշում ընդունվեց հյուսիս-եվրոպական գազատարի կառուցման մասին, որից Ռուսաստանը մեծապես շահեց, էլ չեն ասում, որ Գերմանիան նույնչափ շահած դուրս եկավ դրանից: Վերջապես, կրկին շեշտեն, չի կարելի քննարկվող հարցին չտիրապետելու հետևանքով անել անհեթեթ եզրակացություններ՝ խնդրո առարկան պայմանավորել Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ-ի միջև, իբր, առկա հակամարտությամբ: Դա վտանգավոր է: Դա կարող է շահարկումների առարկա դառնալ ոչ թե դի-

մություն-ընդդիմություն հարթության վրա, այլ շահարկվի Ադրբեջանի և Թուրքիայի կողմից: Եվ պետք չէ Չայաստանի Չանրապետությունը արհեստականորեն դարձնել որևէ երկրի քաղաքականության կցորդ և այս ամբիոնից սխալ եզրակացություններ ներկայացնել: Դա է պահանջում տարրական տրամաբանությունը: Ինչպես նաև տարրական տրամաբանությունն էլ հուշում է հետևյալը. հուսալի գործընկեր լինելը կարող է մեր երկրին շատ ավելի մեծ դիվիդենդներ, օգուտներ բերել, քան այս ամբիոնից կեղծ հայրենասեր երևալը: Իսկ հուսալի գործընկեր լինելը դա այն է, որ չմոռանանք, թե ինչպես ճիշտ այդ նույն Բուշի վարչակազմը որոշում էր կայացրել «Չազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակում ի թիվս 17, թե 18 երկրների՝ Չայաստանի Չանրապետությանը կենսական հարցերի լուծման համար տրամադրել 235 միլիոն դոլարի օգնություն: Ի՞նչ, միայն լավ օրվա լավ ընկեր միշտ լինենք: Բա, եթե այդպես է, այդ օգնությունը չվերցնեիք, չէ՞ որ այն ժամանակ էլ ԱՄՆ-ն պատերազմում էր Իրաքում: Վերստին ասեմ, սա շատ լուրջ հարց է և կարելի էր ավելի ծավալուն, համակարգված վերլուծություններ անել: Վերլուծություններ անել նաև աշխարհաքաղաքական հնարավոր զարգացումների մասին և որոշել Չայաստանի Չանրապետության տեղը դրանցում: Տարածաշրջանային զարգացումներում մեր երկրի ճշգրիտ տեղը որոշելը իմ կարդացած նյութերի հիման վրա հուշում են, որ եզակի ճիշտ որոշումը կլինի հետևյալը. ստեղծված իրավիճակում մենք պետք է վարվենք այնպես, ինչպես վարվել էինք Բուշի վարչակազմի համար լավ օրերում (մինչև կոնգրեսի վերջերս կայացած ընտրությունները), երբ հայ զինվորներին Իրաք ուղարկելու հարցին կողմ էինք քվեարկել:

«Ազգային Միաբանություն» խմբակցությունը կողմ է, որ մեկ տարով երկարաձգվի Չայաստանի զինվորական ստորաբաժանման առաքելությունը Իրաքում:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ
(5 դեկտեմբերի 2006 թ.)

Անցած ուրբաթ օրը հենց այս դահլիճում տեղի ունեցան, ըստ իս, շատ կարևոր մի փաստաթղթի՝ «Ազգային անվտանգության ռազմավարության» հայեցակարգի շուրջ քննարկումներ, որին «Ազգային Միաբանությունը» չէր մասնակցել, ինչը տարակուսանք էր առաջացրել հեղինակների մոտ: Օգտվելով առիթից, ուզում եմ շնորհակալություն հայտնել հիշատակված փաստաթղթի հեղինակներին: Նրանք իրենց հերթին հիմնավոր ապացուցեցին այն ճշմարտությունը, ինչի մասին քանիցս խոսել է ընդդիմությունը՝ պարոններ Քոչարյան-Սարգսյան զույգը այլևս սպառնալիք է Հայաստանի Հանրապետության համար: Եվ, այսպես, փաստաթղթի էջ 5-ում ուղղակիորեն գրված է. «Ներքին անհամաչափ սպառնալիքներն են՝ սոցիալական շերտավորման խորացումն ու աղքատությունը»: Հիշեցնեմ, որ հանրապետության ազգաբնակչության 30%-ը կիսասոված կյանքով է ապրում, 10% ամենահարուստների եկամուտները 10% ամենաաղքատների եկամուտներից 20 անգամից ավել է կազմում, մինչդեռ 7-8 անգամ ավելիի դեպքում արդեն տազնապի շեփոր պետք է հնչեցվի: Փաստաթղթում որպես ներքին սպառնալիք է նշված նաև «հոգևոր ու բարոյական արժեքների աղճատումը, խոսքի ազատության ճնշման և իրազեկման պակասի հետևանքով առաջացած սոցիալական լարվածությունը»: Այն, որ մեզանում խոսքի ազատությունը ճնշվել է իսպառ և հեռուստամիջոցներով լավագույն դեպքում դուք կարող եք բարերանների տեսնել և ոչ մի դեպքում ընդդիմադիր որևէ գործչի, դա բոլորիս համար ակնհայտ է: Իսկ հոգևոր ու բարոյական արժեքների աղճատման մասին էլ շատ դիպուկ ասաց հարգարժան Վահան Հովհաննիսյանը, երբ նշեց, որ եթե հասարակական քննարկում լինի՝ «Անապատի կարմիր արևը» կարող է Հայաստանի պետական օրհներգի համար հիմք դառնալ:

Փաստաթղթում որպես ներքին սպառնալիքներ են համարվում նաև «հասարակական և պետական հարաբերությունների քրեականաացումը, կոռուպցիան հատկապես՝ կաշառակերությունը, իշխանությունների հանդեպ հանրության զանգվածային անվստահությունը»։ Կարծում են, այս թեզերը նույնպես ապացուցման կարիք չեն զգում, որովհետև արատավոր այդ երևույթների առկայությունը մեր երկրում բազմիցս հիմնավոր ներկայացվել է: Ճիշտ այս օրերին սոցիոլոգիական հետազոտությունների «Գեւափ»-ի կազմակերպության մասնակցությամբ հրապարակվել են վերլուծություններ, ըստ որոնց Չայաստանի ազգաբնակչության 65%-ից ավելին չի վստահում այս իշխանություններին: Կաշառակերության փաստերի մասին քանիցս նշվել է, անգամ իսկ հասցեներն են տրվել, թալանված գումարների անգամ իսկ չափերը հրապարակվել են՝ համապատասխան հղումներ կատարելով Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տեղեկատվության վրա: Այլ խնդիր է, որ դրանց առաջն առնելու փոխարեն, դարաբաղյան կլանը (կլան ասելով ես ի նկատի ունեն հանցավոր այն տարրին, ում ձեռքը կրակն է ընկել նույն արցախահայությունը և հայաստանաբնակ հայությունը) իրենց թերթուկի միջոցով փորձում է շեղել մարդկանց ուշադրությունը: Սրանք դաշտն են փոխում, ուզում են մեզ ներքաշել բանսարկությունների ոլորտ, որտեղ, ինչ խոսք, անգերազանցելի են: Ապատեղեկատվությունը զետեղում են թերթերում, ապա հեռուստամիջոցներով մամուլի տեսության ժամերին իրենց իսկ գրած հերյուրամքները մասսայականացնում:

Սա է սրանց հունարը: Պարոններ Քոչարյան-Սարգսյան՝ դուք պարտվել եք, պատվով հեռացեք: Այդ գործում մենք ձեզ կօգնենք:

ԻՆՏԵԳՐՍԱԼ ՄԻԱԿ ՃԻՇՏ ՃԱՆԱՊԱՐՅՈՒ

Մտորումներ Վիկտոր Դալլաքյանի՝ «Մեր ապագայի բանալիները»
հոդվածի մասին («Առավոտ», 2006 թ. նոյեմբերի 10):

Մեր օրերում մարդկության լուսավոր դեմքերը զանազան երկրներից և մայրցամաքներից ձգտում են համապատասխան պատասխաններ գտնել համաշխարհային զարգացման օբյեկտիվ և մեծամասամբ դրական այնպիսի միտումների վերաբերյալ, որոնք բնութագրվում են գլոբալիզացիա տարողունակ հասկացությամբ: Այդ իրողության գիտակցումը ստիպում է մտորել, թե Հայաստանի Հանրապետությանը ինչպես ներգրավվել գլոբալիզացվող աշխարհ: Ընդ որում, ամանձնահատուկ կարևորության խնդիր է դառնում այն պետական ռազմավարության մշակումը, որը կոչված է նվազեցնել գլոբալիզացիայի հնարավոր բացասական հետևանքները և առավելագույնս ավելացնել դրանով պայմանավորված օգուտները:

Ուշագրավ է, որ աղետի կանխագուշակման կամ արդի աշխարհում տեղի ունեցող գործընթացների իմաստավորման փորձերով հարուստ են բեստսելլեր դարձած ժամանակակից արևմտյան մասնագետների, նախևառաջ՝ Ֆրենսիս Ֆուկոյամայի, Պատրիկ Բյուկկենենի, Էմանուել Տոդտի, Սենյուել Խանդինգտոնի, Ֆարիդա Ջաքարիայի, Դյագոլիշ Բխագվատիի և այլ հեղինակների գրքերը:

Ասվածի համատեքստում միաժամանակ տարակուսանք և խոր տագնապ է առաջացնում մեր պետական այրերի մեկուսանալը ձևավորվող նոր աշխարհակարգում Հայաստանի դերը որոշելու վերաբերյալ այդքան կենսական հարցերից: Հանրապետության իշխանությունը գլխավորող անձանց քաղաքական բացարձակ կարճատեսությունը և նրանց կողմից ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշր-

ջանային մասշտաբով արդի իրողությունների ըմբռնումը կարելի է որակել ոչ այլ կերպ, քան որպես անհրազեկություն: Անհրազեկություն, որը վտանգում է հայկական պետության ազգային անվտանգության հիմքերը:

Եվ իշխանական, և մերձիշխանական քաղաքական մտքի լճացման այս ճնշող ֆոնի վրա պատեհաժամ է ներկայացվում Վիկտոր Դալլաքյանի բարեխիղճ փորձը՝ նորովի իմաստավորել հայ ժողովրդի և հայկական պետականության կայացման պատմությունը: Եվ ոչ միայն իմաստավորել, այլև, որն ավելի արժեքավոր է, որոշել հայկական քաղաքակրթության համաշխարհայինին ինտեգրվելու ճանապարհը: Առանձնապես կարևոր է, որ «Մեր ապագայի բանալիները» հետազոտության հեղինակն ընդգծում է այդ ինտեգրման միակ ճիշտ ճանապարհը, որը հիմնված է հատուկ գործոնների հաշվառմամբ՝ քաղաքացիական հասարակության ձևավորման սկզբունքների, ինչպես նաև միջին ձեռներեցության գերիշխող դերի առկայությամբ գործող ազատական տնտեսության վրա:

Վիկտոր Դալլաքյանի «Մեր ապագայի բանալիները» հոդվածը, իմ կարծիքով, ունի անվիճելի արժեք մեր այն հայրենասերների համար, որոնք 21-րդ դարի արմատական փոփոխությունների էպոխայում սուր անհրաժեշտություն են զգում հայ ժողովրդի ազգային նույնականության պահպանման հեռանկարների և ձևերի մասին սեփական պատկերացումների ձևավորման: Դրական գնահատականի և ամենայն հավանության է արժանի հետազոտության հեղինակի նվիրվածությունն այն գաղափարին, որ բուռն փոփոխվող աշխարհում Հայաստանի բարգավաճումը հնարավոր է և կապված է քրիստոնեական արժեքների հիման վրա հանրապետության քաղաքացիների հոգևոր մաքրման հետ:

ԸՆԴԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

Հարցազրույց «Ազգային Սիաբանություն կուսակցության»
նախագահ Արտաշես Գեղամյանի հետ

- **Պ**րն Գեղամյան, Ձեր ղեկավարած կուսակցությունը կրկին բանակցում է ՀԺԿ-ի հետ և ցանկանում է խորհրդարանի ընտրություններից առաջ դաշինք կազմել այդ կուսակցության հետ: Ինչպե՞ս եք պատկերացնում այդ համագործակցությունը, քանի որ փորձը ցույց է տալիս, որ «Ազգային Սիաբանությունը» և ՀԺԿ-ն չեն կարողանում երկարաժամկետ սերտ համագործակցություն հաստատել:

- Ընդդիմադիր դաշտի քաղաքական բոլոր ուժերն այսօրվանից դատապարտված են համագործակցել՝ ազատ, արդար ընտրություններ կազմակերպելու գործում: Նրանք պարտավոր են ընտրակեղծիքների համար պարարտ հող ստեղծող յուրաքանչյուր ոտնձգության դեպքում միասնական լինել: Եվ այս պարագայում սկզբունքային նշանակություն չունի՝ դաշինքո՞վ ես մտնում Ազգային ժողով, թե այդ հրամայական պահանջները պահպանելով՝ արդեն ԱԺ-ում ես դառնում դաշնակից: Հայաստանի ճակատագրով մտահոգ ուժերը այսօր գեթ մեկ նպատակ են հետապնդում. թույլ չտալ, որ իշխանությունները գողանան ժողովրդի քվեները, թույլ չտալ, որ ընտրությունները կեղծելու հետևանքով երկրում իրականացվի պառլամենտական հեղաշրջում: Հեղաշրջում, որի պարագլուխներն արդեն իսկ նշնարվում են՝ ի դեմս հանցավոր և օլիգարխիկ տարրերի վրա հենված դարաբաղյան կլանի ներկայացուցիչների:

- Եվ ի՞նչ եք կարծում, այս անգամ ՀԺԿ-ի հետ համագործակցությունը կստացվի, երկար կտևի, թե ոչ: Եվ ՀԺԿ-ի հետ դաշինքով գնալու դեպքում պատրաստ եք լինել համամասնական ցուցակի երկրորդ համարը:

- Համագործակցությունը ՅԺԿ-ի հետ կստացվի այնքանով, որքանով դա դրականորեն դրսևորվեց 2004 թ. ապրիլյան համաժողովրդական վերելքի օրերին, երբ «Ազգային Միաբանությունը», «Հանրապետությունը», ՅԺԿ-ն, ԱԺՄ-ն, ԱԺԴ-ն, ԱԺԿ-ն և ընդդիմադիր դաշտի մեր մյուս գործընկերները միասնական էին, ինչպես և միասնական էին 2005 թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական փսփոխությունների հանրաքվեն բոյկոտելու գործում: ՅԺԿ-ի հետ դաշինքով գնալու դեպքում, կարծում եմ, ձեր հետաքրքրությունը բավարարող հարցը նույնպես կգտնի թե մեզ և թե ՅԺԿ-ին բավարարող հիմնավորումները: Ցավում եմ, որ բովանդակային հարցերը և վճռականությունը թոթափել ապագային այս վարչակարգը կարծես թե ձեզ սպասվածից ավելի քիչ են հուզում, քան համամասնական ցուցակում ընդգրկվելիք գործիչների հերթականությունը:

- Նախորդ համապետական ընտրությունների փորձը ցույց է տվել, որ անկախ ընտրողների մասնակցության թվից և արդյունքներից իշխանությունները հրապարակում են իրենց ուզած տվյալները: Հետևաբար, ի՞նչ եք անելու այդ ամենի դեմն առնելու համար:

- Ձեր հարցադրման մեջ, անշուշտ, կա ճշմարտություն: Եվ այդ հաշվի առնելով, մենք շեշտը դրել ենք մեր տարածքային կազմակերպությունների կազմակերպական ու գաղափարական ուժեղացման վրա: Մենք կարողացել ենք մեր կուսակցության ցանկացած տարածքային ղեկավարի մեջ արթնացնել վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, հույս ու հավատ ներշնչել հաղթանակի անխուսափելիության հանդեպ, և որ ամենակարևորն է՝ վճռականություն, որ իր իսկ անձնական գործողությունների հետևողականությամբ է պայմանավորված ընտրությունների հաջողությունը: Ստեղծված իրավիճակը, իշխանությունների ձեռնարկած գործողությունները էլ ավելի են օգնում մեզ համոզելու ժողովրդին՝ ապագային այս իշխանություններից ձերբազատվելը օրվա հրամայականն է: Եթե համեմատելու լինենք «Ազգային Միաբանության» 2007 թվականի ներուժը 2003 թվականի հետ, ապա համեմատության ոչ մի եզր

չկա: Մենք այսօր շատ ավելի զորեղ ենք. անցած տարիներն աշխատեցին ի օգուտ «Ազգային Միաբանության», ժողովուրդը մեկ անգամ ևս համոզվեց ԱՄԿ-ի նախագահության կանխատեսումների ճշմարտացիության, առաջարկած մարտավարության ու ռազմավարության արդարացիության մեջ:

- Այդ ամենը բավարար՞ է լցոնումների, թվանկարչության դեմն առնելու համար, քանի որ այսօրվա վարչախումբը պատրաստ չէ երբեք հանձնել իշխանությունը:

- Իշխանությունները, եթե համեմատելու լինենք 2003 թվականի հետ, այսօր այլևս միատարր չեն: 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի բոյկոտը վերստին ապացուցեց, որ ընդդիմությունն իրականում լուրջ հեղինակություն է վայելում ժողովրդի ճնշող մեծամասնության շրջանում: Առաջիկայում համագործակցելով ընդդիմադիր քաղաքական ուժերի հետ, համոզված եմ, որ կկարողանանք դառնալ անպարտելի ուժ: Եվ այն լցոնումները, որ, ավա՞ղ, տեղի էին ունեցել նախկին ընտրություններին, այլևս անիրագործելի են դառնալու: Իշխանությունները գիտակցում են, որ վերարտադրվելն իրենց իսկ հետագա կենսագրության համար հղի է լրջագույն վտանգներով: Որովհետև նրանց ապիկար լինելու հանգամանքն ապացուցվեց և պարզորոշ դարձավ ոչ միայն Հայաստանի ներսում, այլև Հայաստանից դուրս: Այս իշխանությունները վերարտադրվելու նպատակով պատրաստ են անգամ իսկ դավադրություն նյութել հեղաշրջման պատրանք ստեղծելու նպատակով խնդիր ունենալով միջազգային հանրությանը մոլորեցնել, թե ընդդիմադիր քաղաքական ուժերն իբր հակված են ոչ սահմանադրական ճանապարհով գնալ իշխանափոխության: Ավելին, փորձում են հրամցնել, որ եթե իշխանափոխությունն էլ տեղի ունեցավ, ապա ԼՂ հիմնահարցի խաղաղ կարգավորման սկզբունքների շուրջ գործող իշխանությունների հետ ձեռքբերված պայմանավորվածությունները ջուրը կլցվեն: Վարչակազմը այսօր շատ ավելի թուլացած է և հոգեբանորեն պատրաստ է իշխանափոխության: Ռ. Քոչարյանը, որ

պետք է լինի Սահմանադրության և օրենքների կատարման երաշխավորը, արդեն կես տարի առաջ փորձում է միջամտել ԱԺ ընտրություններին, այն էլ կանխագուշակություններ անելով, թե քաղաքական որ ուժը ինչ տեղ ու դեր կունենա, միաժամանակ իր վրայից զցելով այդ ընտրություններն արդար անցկացնելու անձնական պատասխանատվությունը: Նա արդեն կասկածում է իրեն հենարան հռչակած քաղաքական ուժերի իրական մտադրությունների մեջ, և այս գլխից ասում է՝ ես բոլորիդ տեր կկանգնեմ, դուք էլ ինձ տեր կանգնեք:

- Այսինքն՝ բացառում եք վերարտադրվելու հավանականությունը:

- Վերարտադրվելու հավանականությունը հավասար է զրոյի: Եթե նրանք ճիգեր գործադրեն ու փորձեն զբաղվել գծանկարչությամբ (ընտրությունների արդյունքները նկարելով), դա հղի է քաղաքացիական պատերազմով, որի ողջ պատասխանատվությունն էլ կընկնի ընտրակեղծիքների հետևում կանգնած իշխանավորների ու կրիմինալի վրա: Օլիգարխիկ-քրեածին վարչախումբը դատապարտված է անհաջողության:

Զրուցեց՝ ԱՐՄԱՆ ԳԱԼՈՅԱՆԸ

ГДЕ ЕСТЬ НЕФТЬ И ГАЗ, ТАМ ГОСПОДСТВУЮТ ДВОЙНЫЕ СТАНДАРТЫ

(Страсбург, 23 января 2007 года)

Стартовавшая в понедельник в Страсбурге зимняя сессия ПАСЕ примечательна тем, что в ее повестке значился доклад о выполнении Арменией обязательств, взятых перед Советом Европы. В ходе дебатов по докладу, который обсуждался 23 января, выступали руководитель армянской делегации Тигран Торосян и ее члены Армен Рустамян и Степан Демирчян. К подробностям этого и других событий сессии ПАСЕ “НВ” еще будет возможность обратиться. А пока публикуем состоявшееся 23 января выступление члена армянской делегации Арташеса ГЕГАМЯНА на другом заседании ПАСЕ, посвященном проблеме использования энергетических ресурсов как инструмента политического давления. Лидер “НЕ” обращается к этой теме в контексте изоляционистской по отношению к Армении политики Турции и Азербайджана.

Уважаемые коллеги!

Обсуждаемый сегодня на ПАСЕ вопрос “Об опасности использования энергетических ресурсов в качестве инструмента для оказания политического давления” особенно актуален для Армении, которая ощущает постоянное давление со стороны своих соседей —Турции и Азербайджана. Именно по инициативе этих государств в обход Армении были проложены нефтепровод Баку—Тбилиси—Джейхан и газопровод “Баку—Тбилиси—Эрзерум”. И это в условиях, когда

по единодушному мнению международных экспертов с точки зрения технико-экономической целесообразности трубопроводы должны были быть проложены через территорию Армении. Что это, если не красноречивый пример использования энергоресурсов в качестве неприкрытого инструмента для оказания экономического давления на Армению путем ее изоляции от осуществляемых в регионе крупных экономических проектов. Экономическое давление, которое впоследствии трансформировалось в политическое в ходе переговорного процесса по мирному урегулированию проблемы Нагорного Карабаха. Более того, именно обладание энергоресурсами способствует тому, что вот уже 17-й год Турция и Азербайджан безнаказанно осуществляют экономическую блокаду Армении. Ежегодные убытки, которые несет экономика Армении, в полтора раза превышают бюджет республики. Повторяю, складывается впечатление, что членам Совета Европы — Турции и Азербайджану блокада Армении сходит с рук, потому что перекачиваемые центральноазиатская и каспийская нефть и газ диверсифицируют поставки энергоносителей в Европу, смягчая ее зависимость от российских поставок. Дальше-больше. Уверовав в несокрушимую силу “черного золота”, указанные страны пошли по пути дальнейшей экономической изоляции Армении. Уже во втором квартале 2007 года будет начато строительство железнодорожной линии Карс (территория Западной Армении, ныне Турции) — Ахалкалаки (Грузия) — Тбилиси — Баку проектной стоимостью более 400 млн долларов. И это при условии, когда готовая хоть сейчас к эксплуатации железнодорожная магистраль Карс — Гюмри (Армения) — Тбилиси из-за блокады со стороны Турции бездействует. К сожалению, весьма робкие нарекания Евросоюза и Конгресса США, сводившиеся к недопущению финансирования этого проекта со стороны подконтрольных им финансовых институтов, были по просту проигнорированы как Турцией, так и Азербайджаном. Однако эти вопросы так и не стали предметом бур-

ного обсуждения европейскими и американскими средствами массовой информации. Оно и понятно. Армения — небольшое государство, ее недра не имеют ни нефти, ни газа, так что нуждами этого гордого народа сильные мира сего могут и пренебречь. Проформы ради наши европейские и американские друзья слегка пожурили богатый нефтью и газом Азербайджан — и дело с концом. Вот вам и классический пример использования энергетических ресурсов в качестве инструмента политического давления. Не это ли наглядное подтверждение тому, что там, где есть нефть и газ, господствуют двойные стандарты, — будь то экономика или политика, а о морали говорить здесь вовсе не приходится?

Уважаемые коллеги! Актуальность обсуждаемого вопроса бесспорна.

Необходимым условием при этом, на мой взгляд, является объективный анализ положения дел, которое складывается за последние годы в столь важной сфере экономики стран-членов Совета Европы. Важность проблемы во многом обусловлена и тем, что член Совета Европы Россия поставляет странам Евросоюза более четверти потребляемой ими нефти и обеспечивает свыше 40% их потребностей в природном газе.

Итак, готовясь к выступлению, я внимательно проанализировал несколько десятков публикаций по обсуждаемой теме, которыми пестрели весьма авторитетные европейские и американские средства массовой информации. В худших традициях времен “холодной войны” уже сами заголовки публикаций стращали европейских читателей надвигающейся по вине России неизбежной бедой. Вот некоторые из них: “Европейские нефтяные потрясения ... и новые возможности (“Christian Science Monitor”, 11 января 2007 г., США); “Европа и энергетическая зависимость” (“АБС”, 10 января 2007 г., Испания); “Берегись русского медведя!” — вот лозунг энергетического будущего Европы”, (“The Independent”, 10 января 2007 г., Великоб-

ритания); “Энергия свободной Европы” (“The Financial Times”, 10 января 2007 г., Великобритания); “Хотите видеть лапу Путина на крапе?” (“The Economist”, 12 января 2007 г., Великобритания); “Он больше не играет в “хорошего парня”, (“Newsweek”, 15 января 2007 г., США). Перечень этих страшилок можно было бы и продолжить, однако, думается, в этом нет необходимости. Непредвзятый анализ публикаций приводит к выводу о том, что мы имеем дело с филигранно проводимым чистой воды информационным шантажом, направленным против России, под благовидным прикрытием, а именно: под предлогом защиты интересов европейских энергопотребителей от основного поставщика энергоресурсов в Европу, то есть от России. Да, я не оговорился, политическому давлению подвергается сама Россия, а в основу давления положена раздуваемая СМИ версия о якобы ненадежности партнера-поставщика. При этом авторы публикаций, акцентируя на “газовый кризис” между Россией и Украиной в январе 2006 года, на “нефтяной кризис” между Россией и Беларусью в январе 2007 года, почему-то умалчивают о том, почему Евросоюз так и не решился применить положения Договора к Энергетической хартии для прекращения вмешательства украинской и белорусской сторон в транзит российского газа и нефти в Евросоюз. Ведь этот документ предусматривает, что государство-участник Договора не имеет права прекращать транзит энергоресурсов через свою территорию в случае конфликта с третьей страной по поводу условий поставок таких энергоресурсов. Думается, евроструктурам известно, что Украина, являющаяся участником данного Договора, нарушила это положение (ст. 7 Договора).

Наличие двойных стандартов при оценке действий поставщиков и потребителей энергоресурсов просматривается и в другом вопросе. Так, критикуя Россию за сохранение монополии за “Газпромом”, “Транснефтью” или “Роснефтью” над транзитом газа и нефти по территории России, они попадают в парадоксальное положение.

Настаивая на прекращении монопольного положения этих организаций в вопросах транзита нефти и газа, России одновременно навязываются по существу монопольные “транзитеры” газа и нефти в лице Украины, Беларуси и Польши. Когда же Россия прокладывает Северо-Европейский газопровод непосредственно к основным потребителям “голубого топлива”, ее обвиняют в каком-то давлении на Польшу и прибалтийские республики. Благо на этот счет канцлером Германии Ангелой Меркель 16 января с.г. были даны соответствующие разъяснения польской газете “Жече Посполита”. Госпожа канцлер замечает: “опасения, что этот проект (имеется ввиду Северо-Европейский газопровод по дну Балтийского моря) угрожает интересам других стран-членов ЕС абсолютно беспочвенны, поскольку немецкие партнеры думают о создании возможности транспортировки газа в Польшу и страны Балтии”. При этом канцлер Германии подчеркнула, что нет никаких технических помех тому, чтобы газ шел в обратном направлении: из Германии в Польшу и прибалтийские республики.

Уважаемые коллеги! Вопросы энергетической безопасности являются важнейшими направлениями деятельности любого государства. И совершенно очевидно, что каждая страна, занимая ту или иную позицию, стремится обеспечить прежде всего свои собственные экономические и политические интересы. В этой связи особая ответственность ложится на ПАСЕ, которая призвана выработать универсальные принципы сотрудничества между государствами, приемлемые как для производителей, так и для потребителей энергоресурсов.

Арташес Гегамян

Член армянской делегации в ПАСЕ,

Европейские Народные Партии / Христианские демократы

СВЕРНУТЬ СТРАНУ С ДЕМОКРАТИЧЕСКОГО ПУТИ РАЗВИТИЯ – ЗНАЧИТ СОВЕРШИТЬ ПРЕСТУПЛЕНИЕ ПЕРЕД АРМЯНСКИМ НАРОДОМ

23 января на зимней сессии Парламентской Ассамблеи Совета Европы, как известно, обсуждался вопрос “О выполнении Арменией своих обязательств перед ЕС”. На выступления по данному вопросу записалось 19 депутатов, причем 8 из них – члены турецкой и азербайджанской делегаций. После ряда выступлений председательствующий прекратил прения и предложил ораторам, которые не успели выступить, сдать свои выступления в Секретариат ПАСЕ для их регистрации. Этим правом воспользовался член армянской делегации Арташес Гегамян, который также официально был в списке ораторов, но, к сожалению, дело до его выступления не дошло. Примечательно, что непосредственно перед А. Гегамяном в списке ораторов были представители азербайджанской делегации Гюльтекин Гаджиева, Ганира Пашаева и руководитель турецкой делегации в ПАСЕ Мюрат Мерчан, а вслед за А. Гегамяном значились член азербайджанской делегации Айдин Мирзазаде и турецкой делегации Мевлут Чавушоглу. Обращает на себя внимание и то, что против поправок к резолюции и итогового документа проголосовали лишь члены азербайджанской и турецкой делегаций.

Представляем вашему вниманию текст выступления Арташеса Гегамяна.

Уважаемые коллеги!

Прошло шесть лет с того дня, как Республика Армения стала полноправным членом Совета Европы. Эти годы явились своего рода испытанием для древнейшей армянской цивилизации — ровесницы Древнего Рима и Вавилона, первой в мире принявшей христианство как государственную религию. И сегодня, выступая с этой высокой трибуны ПАСЕ, организации, которую президент ПАСЕ, уважаемый г-н Ван дер Линден, по праву назвал совестью Европы, хочется по совести поразмыслить о пройденном Арменией пути. И в этом неоценимую помощь оказывают нам тщательно подготовленные доклады наших коллег Жоржа Коломбие и Микко Эло.

Да, в их докладах справедливо было отмечено, что конституционные изменения закладывают правовую основу для разделения и самостоятельного функционирования законодательной, исполнительной и судебной властей республики. Более того, для граждан Армении, депутатов Национального Собрания, органов самоуправления, судов и омбудсмена, законодательством предусмотрена возможность апеллирования к Конституционному Суду по вопросам защиты прав граждан. В соответствии с европейскими критериями преобразован Совет Правосудия, начаты реформы системы юриспруденции. И здесь нам особенно важно не поддаваться соблазну самоуспокоения и вспомнить уроки истории. Вспомнить историю столпов демократии — греческих полисов, городов - государств, Республиканский Рим, которые в свою эпоху имели самые совершенные, демократичные законы. Наличие демократичных законов обеспечивало им могущество и процветание до тех пор, пока они свято соблюдались, не попирались властными элитами и которые не смели подминать их под себя. Попирание законов привело к падению Республиканского Рима и на его месте родилась империя Гая Юлия Цезаря. И пролилась кровь некогда его ближайшего друга Катона-Младшего Утического, убежденного республиканца, ко-

торый в знак протеста собственноручно кинжалом распорол себе живот и разбросал свои внутренности, чтобы невозможно было спасти ему жизнь и, не проведи господь, жить ему в Императорском Риме.

Истинные приверженцы демократии должны суметь побороть в себе соблазн довольствоваться лишь фантомом демократии, формально основанном на демократических по духу законах, но зачастую принятых отнюдь не демократическим путем. Главным фактором и критерием при оценке соответствия того или иного государства основополагающим принципам Совета Европы, по нашему глубокому убеждению, является степень правовой защищенности его граждан. Жизненность законов и способность правящей элиты претворять их в жизнь — вот экзамен, который должны выдержать правящие и оппозиционные партии Армении в ходе предстоящих в мае 2007 года выборов в Национальное Собрание. Сумеет ли выдержать такое испытание на демократичность нашего общества, придет к осознанию того, что в глобализирующемся мире для необратимого прогресса Армении необходимым условием является создание жизнеспособной законодательной базы. Но это лишь необходимое условие, способное стать и достаточным лишь при проявлении политической воли властей претворять их в жизнь.

Уважаемые коллеги!

Здесь самокритично хотелось бы признаться в том, что в становлении демократического общества Республика Армения несколько отстала от Нагорно Карабахской Республики. Граждане Арцаха-Карабаха глубоко осознали, что приверженность демократическим ценностям и неукоснительное следование им — вот единственный путь к подлинной независимости и свободе. Именно приверженность свободе и независимости породила у карабахцев общенародный порыв, который нашел свое демократическое развитие во всенародном референдуме по принятию Конституции Нагор-

но - Карабахской Республики. Подавляющее большинство избирателей проголосовали за принятие новой конституции. В этой связи вызывает глубокое сожаление, что факт принятия конституции Карабаха, основного Закона государства, который составлен в полном соответствии с принципами и критериями, положенными в основу самых демократичных европейских государств, получил столь неадекватную и недоброжелательную оценку со стороны Совета Европы. Вызывает недоумение также и то, что вот уже семнадцать лет реально существующему государству ставится в упрек желание его граждан жить по европейским моральным и правовым нормам.

Уважаемые коллеги!

Генеральный секретарь Совета Европы Терри Девис в выступлении с трибуны ПАСЕ с классической, истинно английской дипломатичностью, достойной сэра Бенджамина Дизраели или сэра Дэвида Ллойд-Джорджа, высказал свое отношение к самопровозглашенным республикам. Генеральный секретарь Совета Европы по сути сказал, что он признает самопровозглашенные республики Южного Кавказа и Преднепровостровскую республику тогда, когда ООН признает факт изменения границ Грузии, Азербайджана и Молдовы.

Демократические преобразования в Армении и Нагорном Карабахе являются единственно верным путем в установлении подлинной независимости. И свернуть наши страны с этой дороги - значит совершить преступление перед армянским народом. Но сделать это, к счастью, уже никому не по силам как в Армении, так и в Арцахе. Уж тем более это не по силам Азербайджану и Турции, у которых весьма своеобразное представление о демократии. Так, взять хотя бы экономическую блокаду Армении, коварное убийство в Будапеште армянского офицера Гургена Маргаряна — слушателя курсов, проводимых в рамках программы НАТО, и последующую героизацию убийцы в Азербайджане. Я уже не говорю об убийстве в Стамбуле известного правозащитника, талантливого армянского

журналиста, редактора газеты “Акос” Гранта Динка. И с таким багажом понимания демократии в ПАСЕ из уст наших коллег и в эти дни звучат фарисейские нравоучения о нарушениях прав человека в Армении и Арцахе. Выступления азербайджанских коллег напоминают трагические времена Третьего Рейха, когда в основу пропаганды фашистского режима был положен известный постулат: надо лгать нагло и постоянно, чтобы тебе поверили. Слава богу, что будущее Европы не определяют подобные ораторы, которых по праву можно причислить к духовным наследникам печально известного Йозефа Геббельса.

Благодарю за внимание.

*Арташес Гегамян
Член армянской делегации в ПАСЕ,
Европейские Народные Партии /Христианские демократы*

ԲԱՑ ՆԱՍԱԿ ԶՅ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ ՊԱՐՈՆ ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

ԶՅ Ազգային ժողովի պատվիրակության կազմում ս/թ. հունվարի 20-ից 26-ը գտնվում էի պաշտոնական գործուղման մեջ Ստրասբուրգում՝ ԵՆԽՎ նստաշրջանին մասնակցելու առաքելությամբ:

Այդ օրերին ոգևորություն ապրեցի, երբ տեղեկացա, որ հունվարի 15-ին կայացած «Ազգային Միաբանություն կուսակցության» մամուլի ասուլիսը հետաքրքրություն է առաջացրել ԶՅ գլխավոր դատախազությունում: Վերջինս «օպերատիվությամբ» հունվարի 23-ին դիմել էր ինձ (իհարկե, ոչ Ստրասբուրգի, այլ Երևանի հասցեով)՝ խնդրելով մանրամասնություններ ներկայացնել «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանն առնչվող հարցի կապակցությամբ՝ ասուլիսում իմ տված պատասխանի առումով:

Հունվարի 24-ին ԱՄԿ փոխնախագահ Ալեքսան Կարապետյանը դատախազություն էր ուղարկել մամուլի ասուլիսի նկարահանված ամբողջական վավերագիր տեսաերիզը: Ջարմանք է հարուցում այն, որ Գլխավոր դատախազությանը չհետաքրքրեցին ասուլիսի ժամանակ բերված խոշորածավալ թալանի փաստերը, մասնավորապես Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի թալանչիական սեփականաշնորհումը, երբ վաճառքի գինը գրեթե համաչափ էր կոմբինատից ստացվող մեկ-մեկուկես տարվա շահույթին: Դատախազությանը չէր հետաքրքրել նաև այն, որ Երևան քաղաքում էլիտար շենքերի շինարարությունից ու վաճառքից միայն 2005 թ. զարտուղի ճանապարհներով հարկումից թաքցվել էր առնվազն 55 մլրդ դրամի գերշահույթ կամ էլ դոլարի արհեստական արժեզրկման արդյունքում ազգաբնակչությունից շորթված շուրջ 105 մլրդ դրամի գումարների փաստը և այլն, և այլն:

Ինչևէ, խնդիր ունենալով օգնել Գլխավոր դատախազությանը՝ իրավաբանորեն բնութագրել Գագիկ Ծառուկյան-Սաշիկ Սարգսյան անունների շուրջ հայաստանյան թերթերում արդեն իսկ 2 տարի շարունակ հրապարակվող ձախողված մահափորձի մասին թափանցիկ ակնարկները, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ստորև ներկայացվող հարցադրումների վրա:

Գլխավոր դատախազությանն առաջարկում ենք պարզել. այդ ի՞նչը կամ ո՞վ ստիպեց ձեռներեց Սաշիկ Սարգսյանին հրաժարվել գերշահութաբեր իր բիզնեսից Հայաստանում, որը հիմնականում իրականացնում էր Գ. Ծառուկյանի հետ համատեղ (զազալցակայանների ցանց, էլիտար շենքերի շինարարություն և այլն): Չէ՞ որ Սաշիկ Սարգսյանի բիզնեսն առավել քան պաշտպանված էր Հայաստանում: Այդ ո՞ր գերուժն էր, որ Ազգային ժողովի պատգամավոր Ս. Սարգսյանին պարտադրեց զիջել բիզնեսի իր մասնաբաժինը, տևական ժամանակով չգբաղվել իրեն հոգեհարազատ օրենսդրական աշխատանքով և երկարատև գտնվել Կալիֆորնիայում, ուր, հայաստանյան լրատվամիջոցների հաղորդմամբ, ձեռնարկել էր շինարարական բիզնես: Համոզված եմ, որ Գլխավոր դատախազությունը, անշուշտ, ծանոթ է նաև մեր մամուլում հրապարակված այն տեղեկատվությանը, ըստ որի Կալիֆորնիայի հարկային ծառայությունները գրանցել էին 38 մլն դոլարի գումար, որը պատկանում էր հիշյալ հայ ձեռներեցին: Ինքնին այդ տեղեկությունը, որն այդպես էլ պաշտոնապես չհերքվեց, ուշագրավ է ոչ միայն նշված գումարի մեծությամբ, այլև, կարծում ենք, որ Գլխավոր դատախազությանը պետք է հետաքրքրեր դրա ծագումնաբանության օրինական լինելու հանգամանքը: Գաղտնիք չէ, որ Սաշիկ Սարգսյանի բիզնեսից մուծվող հարկերը երբևէ չեն գերազանցել նշված գումարի անգամ իսկ 5%-ը:

Կարծում եմ, Գլխավոր դատախազության ուշադրությունից չի վրիպել նաև այն իրողությունը, որ պարոն Գ. Ծառուկյանը, ունենալով պարոն Ռ. Քոչարյանի բարձր և անթաքույց հովանավորությունը, հատկապես վերջին 2 տարիների ընթացքում դրսևորում է առանձ-

նահատուկ զգուշավորություն՝ Երևան քաղաքում շրջելով նվազագույնը չորս թիկնազորային մեքենաների և մեծաքանակ թիկնապահների ուղեկցությամբ: Թե ո՞ւմից է զգուշանում պարոն Գ. Ծառուկյանը, չպե՞տք է արդյոք Գլխավոր դատախազությանը մտորումների տեղիք տա:

Հարկ են համարում նաև նշել, որ Գլխավոր դատախազությունը 2002 թ. դեկտեմբերի 28-ին տեղի ունեցած Տիգրան Նաղդալյանի սպանությունից հետո այդպես էլ հետամուտ չեղավ, թե ի՞նչ փաստերի հիման վրա 2003 թ. հունվար ամսին հայաստանյան բոլոր հեռուստակայաններով օրեկան մի քանի անգամ տիրաժավորվում էին ՀՀ արտաքին գործերի և արդարադատության նախարարների հայտարարությունները, համաձայն որոնց Տիգրան Նաղդալյանի սպանության հետքերը, իբր, տանում էին դեպի Արտաշես Գեղամյանը: Ջարհուրելի զրպարտանք, որն այդպես էլ անհետևանք թողնվեց դատախազության կողմից՝ իրավական գնահատական տալու տեսակետից: Արդյոք ո՞վ արգելեց Գլխավոր դատախազությանը նման հայտարարություններին չարձագանքել և հեղինակներից այդ ստոր զրպարտանքը հիմնավորող պարզաբանումներ չպահանջել:

Լուրջ մտորումների տեղիք է տալիս նաև այն, որ հանրապետության Գլխավոր դատախազությունն այդպես էլ անհետևանք թողեց պարոն Սերժ Սարգսյանի նկատմամբ, իբր, մահափորձ կազմակերպած Ազգային անվտանգության ծառայության նախկին գնդապետ Լևոն Աբրահամյանի՝ առաջին ատյանի դատարանում հնչեցրած հայտարարությունը: Հայտարարություն, որտեղ պարոն Աբրահամյանն ուղղակիորեն ասել էր, որ քննչական մարմինները պարտադրել են իրեն տալ կեղծ ցուցմունք, ըստ որի այդ հանցագործության պատվիրատուն հանդիսանում է Արտաշես Գեղամյանը: Նա նշել էր նաև, որ նման հայտարարություն անելու դեպքում որպես փոխհատուցում իրեն խոստացել էին պատժի մեղմացում: Գլխավոր դատախազությունն այդպես էլ չանդրադարձավ Լևոն Աբրահամյանի այդ հայտարարությանը, որը հեռարձակվել էր «Ազատություն» ռադիո-

կայանով և տեղ էր գտել մամուլի էջերում: Ինչպես և չամդրադարձավ արդեն իսկ մամուլին տված Լ. Աբրահամյանի հարազատների վկայություններին, առ այն, որ վերջիններիս սպառնացել էին՝ ասելով, որ եթե Լ. Աբրահամյանը Վերաքննիչ դատարանում պնդի իր նախորդ հայտարարությունը Գեղամյանի դեմ կեղծ ցուցմունք տալու պարտադրանքի մասին, ապա հաշվեհարդար կտեսնեն արդեն իսկ նրա հարազատների, մերձավորների նկատմամբ: Այս տեղեկությունը նույնպես հրապարակվել էր հայաստանյան մամուլում, սակայն կրկին անհետևանք էր թողնվել Գլխավոր դատախազության կողմից:

Մեկ իրողության մասին ևս: Գլխավոր դատախազության գլխավոր քննչական վարչության պետ Անդրանիկ Միրզոյանը 2004 թ. հունիսի 17-ին «Գոլոս Արմենիի» թերթում տպագրած «Վերջակետը կդրվի օգոստոսին» հոդվածում հանդես էր եկել հայտարարությամբ, ըստ որի իմ գործընկեր Աժ պատգամավոր Սմբատ Այվազյանը, իբր, Գ. Մեսրոպյանին և Ա. Մանգասարովին վարձել էր որպես քիլլերներ 2004 թ. մարտ-ապրիլ ամիսների հանրահավաքների ժամանակ իմ դեմ ահաբեկություն կատարելու նպատակով: Այս գործն էլ շինծու էր և նպատակ էր հետապնդում անվստահության մթնոլորտ ստեղծել ընդդիմադիր քաղաքական ուժերի միջև: Ինչպես և սպասվում էր, դա էլ հօդս ցնդեց, և «քիլլերները» կրեցին սինվոլիկ պատիժ: Իսկ թե «բացահայտված» այդ «ահաբեկիչները» համապատասխան ծառայությունների գործակալներ էին, թե ոչ, կարծում եմ, դա ևս պետք է հետաքրքրեր Գլխավոր դատախազությանը: Համոզված եմ, որ ցանկության դեպքում հնարավոր էր պարզել իրողությունը:

Բանասարկության և դավադրության դասական հերթական հաջորդ փաստը: Շուրջ 2 տարի առաջ հրապարակ իջեցվեց վարկած, թե, իբր, ՀՀ տրանսպորտի և կապի նախկին նախարար Է. Մադաթյանը ձեռնարկել էր ահաբեկության փորձ Սերժ Սարգսյանի և այլ պաշտոնյաների ու խոշոր ձեռներեցների նկատմամբ: Իրենց համար ավանդույթ դարձած գործելակերպի համաձայն, դատարան բերվեց ոչ անհայտ քրեական մի հեղինակություն՝ «Կծան Միշա» մականու-

նով, որը հայտարարեց, թե իր լսածով այդ ահաբեկչության պատվիրատուն, իբր, Արտաշես Գեղամյանն է: Իշխանությունների ջանքերն այսքանով, իհարկե, չսահմանափակվեցին: Հիմա էլ, ըստ շրջանառվող լուրերի, պարոն է. Մադաթյանին առաջարկում են հաստատել «Կծան Միշայի» ցուցմունքը, որպես փոխհատուցում խոստանալով վերջինիս վրայից հանել իրենց իսկ կողմից նրա դեմ նյութված շինծու մեղադրանքները:

Անգամ իսկ հիշատակված փաստերը վկայում են, որ իշխանությունները շարունակում են թե՛ իմ, թե՛ «Ազգային Միաբանություն կուսակցության» դեմ ուղղված և իրենց կողմից ուղղորդվող զրպարտությունների ու ահաբեկչությունների քաղաքականությունը: Վարչակազմը խնդիր է դրել ժողովրդի ուշադրությունը շեղել երկրում մեր կողմից բացահայտված խոշորածավալ ալան-թալանից, օրըստօրե աճող ծանրագույն օրինազանցություններից: Միաժամանակ փորձ է կատարվում «Ազգային Միաբանություն կուսակցությանը» ներքաշել ճղճիմ բանսարկությունների ոլորտ՝ շեղելով նախընտրական այս ժամանակաշրջանում կուսակցության ուշադրությունը մղվող արդարացի պայքարից: Նպատակը մեկն է. սասանել ժողովրդական լայն զանգվածների վստահությունն ու հավատը «Ազգային Միաբանություն կուսակցության» հանդեպ:

Հույս են հայտնում, որ Գլխավոր դատախազությունը լրջորեն հետամուտ կլինի նամակունս բերված տեղեկությունների ուսումնասիրմանը և կպաշտպանի օրենքը, այլ ոչ թե բարձրաստիճան պաշտոնյաների ու նրանց մերձավորների շահերը:

*Արտաշես Գեղամյան
«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ,
ՀՀ Ազգային ժողովի «Ազգային Միաբանություն»
խմբակցության ղեկավար*

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԿՈՌՈՒՊՑԻՈՆՆԵՐՆԵՐԻ ԽՐԱԽՃԱՆՔԸ

Հարգելի գործընկերներ, օրերս հանրապետության Գլխավոր դատախազը մամուլի ասուլիսում անդրադարձ կատարեց ս/թ հունվարի 15-ի իմ հայտնի հայտարարություններին (խոսքը Գագիկ Ծառուկյանի դեմ Սաշիկ Սարգսյանի կազմակերպած մահափորձի մասին է): Ցավոք, պարոն Աղվան Յովսեփյանը համեստորեն լռեց և չհիշեց իրեն ուղղված 7 էջանոց իմ դիմումը, որը գիտակցաբար, բաց նամակի տեսքով կանխավ հրապարակել էի մամուլում: Չհիշատակեց նաև այն, որ այս դիմումին կցել էի գրավոր 13 տարբեր նյութեր, որոնք վերջին երկու տարիների ընթացքում զետեղվել էին հայաստանյան մամուլում, և որոնք վերստին ապացուցում էին ասուլիսի ժամանակ իմ հնչեցրած բոլոր պնդումների հիմնավորվածությունը: Թերևս, եթե դրանց նման անդրադարձ կատարեր պարոն Յովսեփյանը, ապա զերծ կպահեր հայտնի մարդկանց այն գայթակղությունից, որ զավթելով հեռուստաեթերն, ասես թե, գավառական անսլուխ դամբյաշի նման եթերից փուչիկներ փչեն: Եվ զարմանք է հարուցում այն, որ դեռ հոխորտում են այն իշխանավորները, վարչակազմի այն ներկայացուցիչները, որոնց բնութագիրը վերջերս տպագրվել է «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ-Հայաստան» հեղինակավոր կազմակերպության հավատարժան զեկույց-հարցախույզում, որը կատարվել էր 2006 թ. նոյեմբեր-դեկտեմբերին: Ի՞նչ է գրված այս զեկույցում. «Ինչպե՞ս կզնահատեիք կոռուպցիայի տարածվածության աստիճանը հետևյալ պետական կառույցներում» հարցմանը տրվել է հետևյալ պատասխանը. «ՀՀ Նախագահ»՝ 75,4%-ը համարում են այդ համակարգը շատ կոռումպացված, կոռումպացված և մասամբ

կոռունպացված, «ՀՀ նախարարներ»՝ 93,7%-ը համարում են շատ կոռունպացված, կոռունպացված և մասամբ կոռունպացված: Իսկ թե ո՞վ է սուպերնախարարը և դիրիժիորը, բոլորս գիտենք: Եվ, վերջապես, հարցվածների 84,8%-ը «ՀՀ դատախազությունը» համարում է շատ կոռունպացված, կոռունպացված և մասամբ կոռունպացված: Այս վերջին թվերը ինձ զարմացնում են, խոսքս դատախազությանը վերաբերող թվերի մասին է, որովհետև այդ մարդիկ ինչպես բոլորս գիտենք, հիմնականում ծառատունկով ու շուրջպարերով են զբաղված: Թե ե՞րբ հասցրին դրանից դուրս էլ կարճ ժամանակում կոռունպացված և շատ կոռունպացված լինել, դա էլ թողնում են հետազոտողների խղճին:

Ավարտելով խոսքս, ես էլ իմ կողմից ասեմ. համբերատար սպասում են դիմումիս մեջ շարադրված հարցերին վերաբերող Գլխավոր դատախազի պաշտոնական բացատրություններին: Բացատրությունները ստանալուց հետո կրկին կասեմ, թե ովքեր են մեր երկիրը կործանողները, ովքեր են թալանչիները և առաջիկայում ովքեր են լինելու փուչիկի պես պայթողները: Եվ այդ գործում, բնականաբար, մենք նրանց կաջակցենք:

*Արտաշես Գեղամյան
Աժ «Ազգային Միաբանություն»
խմբակցության ղեկավար
6 փետրվարի 2007 թ.*

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ՌՈՒԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԾԱԿԱՏԱԳԻՐԸ ԿՈՐՈՇԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

Ս/թ փետրվարի 12-ին Ռուսաստանի Դաշնության հեղինակավոր «Ռեզնուն» լրատվական գործակալությունն իր կայք էջում զետեղել էր «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի մեկնաբանությունները Հայաստանի ներքաղաքական զարգացումների շուրջ: Ստորև Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում դրանք:

«Առճակատումը «Բարգավաճ Հայաստան» կուսակցության և Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) միջև առկա է ճիշտ այնքանով, որքանով այն գոյություն ունի «Սերժ Քոչարյանի» և «Ռոբերտ Սարգսյանի» միջև», - «REGNUM» լրատվական գործակալության թղթակցի հետ ունեցած զրույցում հայտարարեց «Ազգային Միաբանություն» ընդդիմադիր կուսակցության առաջնորդ Արտաշես Գեղամյանը՝ նշելով, որ չի սխալվել՝ նախագահի և պաշտպանության նախարարի անունների նման մեկնաբանությունում:

Նրա խոսքերով առճակատում բացարձակապես չկա, ուղղակի Քոչարյանն ու Սարգսյանը «ֆիլիզդան ձեռնածություն են անում Հայաստանի քաղաքական դաշտում՝ օգտվելով քաղաքականության մեջ անփորձ գործիչներից, ովքեր հայտնվել են պայքարի այդ թևում»: «Ուրիշ բան է, որ նրանց միջև գոյություն ունի գործառույթների հստակ բաժանում և ոչ միայն բնակչության ուղեղները պուդրայելու հարցում, այլև աշխարհաքաղաքական վեկտորների սպասարկման գործում», - ասաց նա՝ ավելացնելով, որ Սերժ Սարգսյանը (Հայաստանի պաշտպանության նախարարը-խմբ.) խաղեր է տալիս Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի, իսկ Ռոբերտ Քոչարյանը (Հայաստանի նախագահը- խմբ.) հյուսիսային

հարևանի՝ Ռուսաստանի հետ: Խոսելով այն մասին, թե որքանով է դա ստացվում վերոհիշյալ անձանց մոտ, Արտաշես Գեղամյանը նշեց, որ պետության դեկավարը, ճիշտ այնպես, ինչպես և պաշտպանության նախարարը, «սնանկ են իրենց արտաքին քաղաքական բոլոր երրորդություններում, հակումներում, բոլոր այն դրսևորումներում, որոնք նրանք փորձում են ներկայացնել որպես քաղաքական կողմնակցություն այս կամ այն գերտերությանը»: Որպես իր խոսքերի ճշմարտացիության ապացույց, Գեղամյանը նատնանշեց այն փաստը, որ Ռոբերտ Քոչարյանն Ազգային անվտանգության ռազմավարության հայեցակարգ է վավերացրել, որը ոչ այլ ինչ է, քան Հայաստանի՝ սահուն կերպով ՆԱՏՕ-ի մեջ անցնելը նախապատրաստող փաստաթուղթ:

«Նախագահական ընտրություններից հետո Ռոբերտ Քոչարյանի դերը ամենևին էլ չեն որոշելու ոչ «Բարգավաճ Հայաստանը», ոչ էլ ՀՀԿ-ն», - համարում է «Ազգային Միաբանություն կուսակցության» ղեկավարը, - այլ «նրա ճակատագիրը կորոշեն ընդդիմադիր կուսակցությունները, որոնք, անշուշտ, կգան իշխանության, ինչպես նաև այդ գործին մասնակից կդառնան Հայաստանի գործընկեր պետությունները՝ լինեն դրանք Կուլեկտիվ Անվտանգության Պայմանագրի կազմակերպության երկրները, Եվրամիությունը, և թե նույն ԱՄՆ-ն: Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ 2003 թ. Ռոբերտ Քոչարյանը պահպանեց իշխանությունը բացառապես ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Եվրամիության ներողամիտ դիրքորոշման շնորհիվ, այսինքն՝ ուժերի այն կենտրոնների, որոնք իրենց վերահսկողության և պատասխանատվության տակ են վերցրել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում լուծելու խնդիրը: «Իհարկե, նրանց դերն ու տեղը Ռոբերտ Քոչարյանի հետագա ճակատագրում չի կարելի ոչ մի դեպքում նսեմացնել», - ասաց ընդդիմադիր գործիչը:

Պատասխանելով այն հարցին, արդյոք հնարավոր է իրականացնել իշխանությունների սցենարը նոր գումարման Ազգային ժողովի և Կառավարության ձևավորման գործում, Գեղամյանը նշեց, որ սցենարները կարող են տարբեր լինել, սակայն տվյալ դեպքում կարևոր է ոչ թե սցենարը, այլ բեմադրող ռեժիսորը: «Տվյալ դեպքում Ռոբերտ Քոչարյանն ու

Սերժ Սարգսյանը համահեղինակներ են և սցենարի ռեժիսոր-բեմադրիչներ, սակայն այդ գործում նրանք չեն կարող մրցել Ֆեդերիկո Ֆելիցիի հետ», - կարծում է Գեղամյանը: Նրա գնահատականով՝ Հայաստանի վերը նշված պաշտոնական անձինք «ընդամենը գավառական ինքնու ռեժիսորներ են և ի վիճակի չեն Հայաստանի քաղաքական դաշտում «ֆիլմ» բեմադրել»:

«Նրանք պետք է մտորեն ընդդիմության հետ մեկտեղ խաղի կանոնների մշակման մասին և, որ ամենակարևորն է, ստանան համապատասխան երաշխիքներ իշխանությունը սահուն փոխանցելու համար: Իսկ երաշխիքները կլինեն ոչ թե քաղաքական շահարկումների ոլորտում, այլ քաղաքական կոմպրոմիսի մեջ: Գալով իշխանության՝ ընդդիմությունն անպայման հաշվի կառնի ներկայիս վարչախմբին սևացնելու աննպատակահարմարությունը, քանի որ աղբբեջանական և թուրքական քարոզչամեքենան կօգտվի այդ հանգամանքից, որպեսզի կոծկի վերջին 17 տարիներին Լեռնային Ղարաբաղի և հայ ժողովրդի նկատմամբ իր իսկ կատարած հանցագործությունները: Դրանք երկու տեսակ են և ունեն բազմագործոն բնույթ: Ես, առնվազն, խոսում եմ տնտեսական հանցագործությունների մասին, որոնք իրականացվել են Աղբբեջան-Թուրքիա երկյակի կողմից, ինչպես, օրինակ, Հայաստանի շրջափակումը, և արդեն լռում եմ այն սանձարձակությունների ու վարագությունների մասին, ինչին ենթարկեցին հայերին», - հայտարարեց նա:

Մեկնաբանելով շահարկվող լուրերն այն մասին, որ «Օրինաց երկիր» կուսակցության անցումն ընդդիմություն՝ իշխանությունների սցենարի մի մասն է, Գեղամյանը նկատեց, որ 2006 թ. մայիսի 21-ին «Շանթ» հեռուստաընկերության եթերի ավարտից հետո ինքը սեղմեց «Օրինաց երկիր» կուսակցության ղեկավար Արթուր Բաղդասարյանի ձեռքը: «Դրանից հետո արդեն իմ ճշմարտությունը կպաշտպանեմ միանգամայն այլ հարթությունում՝ չնսեմացնելով, չնվազեցնելով և չներկացնելով ով էլ, որ լինի: Ես հավատարիմ կլինեմ այն բանին, որ սեղմեցի նրա ձեռքը», - եզրափակեց Գեղամյանը:

ԿԳՏՆԻ ԱՐԴՅՈՒՔ «ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ» ԱՌԱՋՆՈՐԴՆ ԻՐ ՊԵՆՏԵԼՈՊԵՒՆ

Հաշվի առնելով ազգաբնակչության ճնշող մասի տրամադրությունները, Հայաստանի նոր գումարման խորհրդարանում մեծամասնություն կկազմեն ընդդիմադիր քաղաքական կուսակցությունները: Այս մասին «REGNUM» լրատվական գործակալության թղթակցի հետ զրույցում հայտարարեց «Ազգային Միաբանություն կուսակցության» առաջնորդ Արտաշես Գեղամյանը: Նրա խոսքերով, ընտրությունները կեղծելու հնարավոր մտադրությունները հղի են սոցիալական պայթյունով և, ցավոք, արյունահեղությամբ, քանի որ ժողովրդի համբերության բաժակը լցված է: «Երեքհազարամյա մշակույթ ունեցող ազգին չի կարելի ցած գլորել մինչև համազգային բոմժերի մակարդակի, որոնք զմայլվում են ինչ-որ ողորմությամբ, որ ամենախորամանկ ձևերով մատուցվում են իրենց ու իրենց երեխաներին», - գտնում է նա:

Պատասխանելով այն հարցին, թե իրեն տեսնո՞ւմ է Հայաստանի վարչապետի պաշտոնում, Արտաշես Գեղամյանը նշեց. «Գլխավորն այն չէ, որտեղ եմ ես ինձ տեսնում, գլխավորն այն է, թե որտեղ եմ ես ավելի պետք իմ ժողովրդին»: «Կարծում եմ, Երևանի քաղաքապետի պաշտոնից հրաժարականիցս հետո անցած 17 տարիներին աշխատել եմ ոչ պակաս ինտենսիվ, քան պաշտոններ զբաղեցրած ժամանակ: Ես գիտելիքներ եմ կուտակել և ափսոս կլինի, եթե դրանք իրենց լիարժեք կիրառությունը չգտնեն երկրում», - հայտարարեց Գեղամյանը՝ հիշեցնելով, որ Տրոյական պատերազմից սկսած Ոդիսևսը 17

տարի շարունակ ճանապարհորդում էր և, ի վերջո, հասավ նպատակին՝ Իտալե կղզի՝ իր Պենեյլոպեի մոտ: «Ահա և ես՝ արդեն 17 տարի է, որ պետական պաշտոնյա չեմ: Ողիսևսի ճակատագիրը հոգեհարազատ է ինձ և ես, անշուշտ, կհասնեմ իմ «Իտալե կղզուն»: Իսկ «Իտալե կղզին», իմ պատկերացմամբ, դա արևի երկիր Հայաստանն է, որը մշտապես բոլորին հրապուրել է իր իմաստությամբ, անբիժ մաքրությամբ», - իր խոսքն ամփոփեց քաղաքական գործիչը:

ԳԵՂԱՄՅԱՆՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՔՆՆԱԴԱՏԵԼ Է ԷՍՏՈՆԻԱՅԻՆ

ԵԱՅԿ խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի պատվիրակության անդամ Արտաշես Գեղամյանը երեկ Վիեննայում երկու ելույթ է ունեցել: ԵԱՅԿ ԽՎ քաղաքական հարցերի կոմիտեում իրենց ելույթներում Ռուսաստանի Պետդումայի նախագահի տեղակալ Լյուբով Սլիզկան և պատվիրակության անդամ Վլադիմիր Կուլակովն անդրադարձել են Էստոնիայի խորհրդարանում քննարկվող՝ անհայտ զինվորի շիրիմի տեղափոխման հարցին: Եվ Արտաշես Գեղամյանն էլ է ելույթ ունեցել այդ հարցի կապակցությամբ. «Մասնավորապես ասացի, թե ինձ համար փոքր-ինչ տարօրինակ է, որ այս հարցն արժարժում է միայն ու միայն ՌԴ պատվիրակությունը: Չէ՞ որ այդ անհայտ զինվորը կարող էր ազգությամբ հայ լինել, քանի որ հարյուրհազարավոր հայեր չեն վերադարձել Հայրենական մեծ պատերազմից: Կարող էր նաև լինել իսպանացի հանրապետական կամ Ֆրանսիայի դիմադրության շարժման անդամ: Ինչո՞ւ ենք մենք արհեստական կրքեր բորբոքում այս հարցի կապակցությամբ»: Եվ պաշտպանել է ՌԴ պատվիրակների առաջարկը՝ այս հարցը քննարկել լիազումար նիստում:

«Առավոտ», 23. 11. 2007:

ԳՈՐԾ ԵՆՔ ԱՆՈՒՄ, ԳՈՐԾ

Կեսկատակ արձանագրեց «Ազգային Միաբանություն կուսակցության» ղեկավար Արտաշես Գեղամյանը՝ ԵԱՀԿ ԽՎ-ում երեկ իր ունեցած ելույթների կապակցությամբ:

Երեկ Վիեննայում իր աշխատանքներն է սկսել ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի ձմեռային նստաշրջանը, որի աշխատանքներին չի մասնակցում ԵԱՀԿ ԽՎ-ում մեր պատվիրակության ղեկավար Վահան Յովհաննիսյանը: Իսկ պատվիրակության անդամ Արտաշես Գեղամյանը, որը մեկնել է Վիեննա, մեզ հաղորդեց. «Փետրվարի 22-ի առավոտյան Մշտական կոմիտեի (դրա անդամներն են ԵԱՀԿ ԽՎ-ի բյուրոյի եւ ազգային 56 պատվիրակությունների ղեկավարները.-Ա. Ի.) նիստում լսեցին ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Գորան Լենմարկերի հաղորդագրությունը, թե ինչպես է ԵԱՀԿ-ն մասնակցելու ԵԱՀԿ անդամ երկրներում առաջիկայում անցկացվելիք ընտրություններին, և հիշատակեց, որ մայիսին ընտրություններ են տեղի ունենալու Հայաստանում»:

Նշենք, որ մարտի կեսին է Հայաստան ժամանելու ԵԱՀԿ-ի երկարաժամկետ դիտորդական առաքելության առաջին խումբը, որի կազմում կլինեն 35-40 դիտորդներ: Իսկ ընտրությունների օրն ընտրական գործընթացին կհետևեն ԵԱՀԿ-ի արդեն 300 կարճաժամկետ դիտորդներ:

Լենմարկերի զեկույցից հետո ծավալվել է քննարկում, որին մասնակցել է նաև Արտաշես Գեղամյանը: Իր բավական ծավալուն ելույթում նա առավել կարևորել է երկարաժամկետ դիտորդական առաքելության՝ օր առաջ Հայաստան ժամանելը, քանի որ «ընտրակեղ-

ծիքների համար հիմքն ու նախապայմանները ստեղծվում են հենց այս օրերին»: Որպես ապացույց՝ օրինակ է բերել քաղաքական գովազդի համար հեռուստաընկերությունների սահմանած խիստ բարձր սակագները: «ԱՄԿ» առաջնորդը նշել է. «2003-ից ի վեր՝ 31-ով և ոչ մի ռոպե ուղիղ եթեր չեն ունեցել առանձին ընդդիմադիր գործիչներ, մասնավորապես՝ ձեր խոնարհ ծառա Արտաշես Գեղամյանը»: Հիշատակել է նաև ՍԳ փետրվարի 16-ի որոշման մասին, որով ընդդիմությունը փաստորեն զրկվում է ԱԺ հայտարարությունների և «խորհրդարանական շաբաթ» հաղորդաշարի միջոցով իր 3-ական ռոպե եթերներից:

«Ասացի, որ այստեղ խոսքը ոչ միայն ՀՀ-ում ազատ ու արդար ընտրություններ անցկացնելու մասին է, այլ նաև միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ ԵԱՀԿ-ի, քանի որ բազմիցս դատապարտող բանաձևեր են ընդունվել անցած ընտրությունների վերաբերյալ, բայց սայլը տեղից այդպես էլ չի շարժվել: Եվ ավելին՝ արհամարհվել են թե՛ ԵԱՀԿ ԽՎ-ի, թե՛ ԵԽԽՎ բանաձևերը, որոնցում բազմիցս նշվել է այն իրողության անթույլատրելիությունը, որ մինչ օրս չի վերաբացվել Հայաստանի այն եզակի հեռուստաալիքը՝ «Ա1+»-ը, որը հավասար հնարավորություններ էր տրամադրում թե՛ ընդդիմադիր, թե՛ իշխանական ուժերին: Այս ամենը Հայաստանի բնակչության լայն շերտերում ստեղծում է հուսահատության և թերահավատության մթնոլորտ՝ միջազգային կառույցների ու նաև՝ ԵԱՀԿ ԽՎ-ի հանդեպ», - պատմեց պրն Գեղամյանը: Սակայն հետո «ռևերանս» է արել Լեւոնակերին՝ նշելով, թե Հայաստան նրա վերջին այցելությանը «որոշակի հույսեր են արթնացել ոչ թե այս կամ այն ընդդիմադիր կուսակցության, այլ բնակչության մոտ՝ առ այն, որ ԵԱՀԿ-ն անտարբեր չէ Հայաստանի ճակատագրի հանդեպ և մտահոգ է այստեղ առկա զարգացումներով»:

Արտաշես Գեղամյանից անմիջապես հետո ելույթի համար ցուցակագրված էր Բելգիայի Սենատի խոսնակ Աննե Մարի-Լիզիը, որը նշել է, թե իրենց հայաստանյան գործընկերոջ բերած հիմնավորում-

ները «շատ լուրջ տագնապներ են առաջացրել իր մոտ, և ԵԱՀԿ-ն պետք է անպայման ամենայն ուշադրությամբ անդրադառնա այդ հարցերին ու ձեռնարկի հնարավոր բոլոր միջոցները, որ վերջապես ականատեսը դառնան Հայաստանում ազատ ու արդար ընտրություններ անցկացնելու հնարավորությամբ»:

Հետո գումարվել է ԵԱՀԿ ԽՎ-ի լիազուսար նիստը, որի ընթացքում ելույթ է ունեցել Վեհաժողովի երկարամյա փոխնախագահ, իսկ այժմ Գերմանիայի պատվիրակության անդամ Գերտ Վայսկիրխենը. «Նա մասնավորապես ասաց, թե անհամաձայնությունը, որ նկատում է ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի և ԵԱՀԿ ԽՎ-ի միջև, որոնք միասին են վերահսկում ընտրությունները՝ պետք է անհապաղ վերացվեն, քանի որ՝ ինչպես նա ասաց, մեր գործընկերը ելույթ ունեցավ Մշտական կոմիտեում և հայտնեց այն լուրջ մտահոգությունների մասին, որոնք պայմանավորված են Հայաստանի խորհրդարանական առաջիկա ընտրություններով: Ըստ նրա՝ պիտի կարողանան ժամանակին կարգավորել այդ հարցերը, որ ԵԱՀԿ-ն և ԺՅՄԻԳ-ը կարողանան միասնական թիմով իրենց դիտորդական առաքելությամբ աջակցել հայ ընտրողներին՝ անկաշկանդ կատարել իրենց քաղաքացիական պարտքը»: Արտաշես Գեղամյանը հիշարժան համարեց նաև այն, որ ԵԱՀԿ-ում նախագահող երկրի՝ Իսպանիայի հատուկ ներկայացուցիչ ժոզեֆ Բորելն իր ելույթում նույնպես անդրադարձել է առաջիկայում ՀՀ-ում սպասվող ընտրություններին ամենաակտիվ մասնակցությունը ցուցաբերելու անհրաժեշտությամբ:

Աննա Իսրայելյան

НЕЛЬЗЯ ЛГАТЬ ВО БЛАГО, НЕЛЬЗЯ ПРОМОЛЧАТЬ ВО БЛАГО...

*Выступления Арташеса Гегаяна
на Парламентской Ассамблее Организации по Безопасности
и Сотрудничеству в Европе (ОБСЕ) при обсуждении вопроса
“Энергетическая безопасность в регионе ОБСЕ”
(Вена, 23 февраля 2007 года)*

Уважаемые коллеги! Накануне Первой мировой войны Первый лорд Адмиралтейства Уинстон Черчилль принял историческое решение: заменить уголь нефтью в качестве топлива для кораблей британских Королевских Военно-морских сил (ВМС). Он намеревался это сделать, чтобы британский флот превосходил по быстротности немецкий. Но данная замена также означала, что отныне Королевские ВМС должны были полагаться не на уголь из месторождений в Уэльсе, а на поставки нефти из беспокойной Персии. Таким образом, энергетическая безопасность Великобритании превратилась в вопрос государственной стратегии.

Спустя более 90 лет вопросы энергетической безопасности приобрели глобальный характер. В этой связи считаю знаковым событием инициативу России о включении вопроса глобальной энергобезопасности в повестку ежегодного саммита “Группы восьми”, проходившего 15–17 июля 2006 года в Санкт-Петербурге. В итоговом документе лидеры “Группы восьми” приняли Санкт-Петербургский план действий по укреплению глобальной энергетической безопасности. Перед мировым сообществом бы-

ла поставлена конкретная задача эффективного решения трех взаимосвязанных проблем, а именно: обеспечения энергетической безопасности, экономического роста и экологии. Были определены семь основных направлений работы для достижения поставленных целей. Это, во-первых, повышение прозрачности, предсказуемости и стабильности глобальных энергетических рынков. Второе направление — это улучшение инвестиционного климата в энергетическом секторе. Третье направление — повышение энергоэффективности и энергосбережения. Четвертое — диверсификация видов энергии. Пятое — обеспечение физической безопасности жизненно важной энергетической инфраструктуры. Шестое — сокращение масштабов энергетической бедности. И, наконец, решение проблем изменения климата и устойчивого развития.

Многочисленные статьи по вопросам глобальной энергетической безопасности, опубликованные в последнее время в небезызвестных средствах массовой информации государств-членов ОБСЕ, к сожалению, и близко не подошли к осмыслению вышеприведенных целевых задач по обеспечению энергобезопасности. Авторы большинства публикаций, как правило, неоправданно политизируют проблему. Создается впечатление, что они все еще находятся в плену стереотипов той модели энергетической безопасности, которая создавалась по горячим следам мирового энергетического кризиса 1973 года. Главное внимание авторов статей сосредоточивается в основном, на том, как справиться с любым срывом поставок нефти или газа из добывающих стран. При этом в перебоях поставок энергоресурсов, как правило, усматривается злой умысел. Более того, сегодня евроамериканскому сообществу насаждается мнение о якобы ненадежности России как одного из ведущих мировых экспортеров нефти и газа. Что это, если не прямая профанация сути проблемы глобальной

энергобезопасности в отдельных странах ОБСЕ? Соблазну пошантажировать Россию поддались, увы, и некоторые европейские парламентарии в ходе состоявшегося 23 января с.г. обсуждения данного вопроса на Парламентской Ассамблее Совета Европы. Следует отметить, что политическая ангажированность, применение двойных стандартов при оценке положения дел с обеспечением глобальной энергобезопасности, а зачастую и невладеение предметом дискуссии, проглядывается и в выступлениях отдельных депутатов Парламентской Ассамблеи ОБСЕ.

Теперь о конкретных фактах. Политики и средства массовой информации стран-членов ОБСЕ в большинстве своем подняли вселенский шум после кратковременных сбоев поставок газа через Украину (в январе 2006 г.) и нефти через Белоруссию (в январе 2007 года) в страны Евросоюза. Но почему-то они дружно промолчали, когда в то же время под надуманными предлогами резко сократились, а то и вовсе прекратились, поставки нефти из Азербайджана по нефтепроводу Баку—Новороссийск с пропускной способностью до 12 млн. тонн нефти в год. В этом, видимо, есть и вина России, которая в отличие от своих евроамериканских партнеров не развернула информационную войну против ненадежных поставщиков. Более того Россия, как страна-транзитер каспийской нефти, не потребовала компенсации понесенных ею убытков из-за недопоставок нефти. Россия не упрекнула своих коллег за их молчание, хотя прекрасно понимала, что оно обусловлено осознанием европейцами факта изменения направления прокачки все той же каспийской нефти, но уже по нефтепроводу Баку—Тбилиси—Джейхан. Срыв поставок нефти в Новороссийск оправдывался благозвучным термином, именуемым диверсификацией поставок энергоресурсов в Европу. А ведь подобный сценарий готовился загодя. Еще за года два-три до эксплуатации нефтепровода Баку—Джейхан турецкие власти под благо-

видным предлогом предотвращения опасности экологической катастрофы в акватории стамбульского порта начали применять тактику усложнения прохождения танкеров из Новороссийска через проливы Босфор и Дарданеллы. При этом предупредительность турецких властей порой доходила до абсурда: стоило подняться небольшой волне или подуть обычному для этих мест ветру, как прохождение через пролив танкеров, преимущественно с российской нефтью, запрещалось. Примечательно, что в это же самое время пляжи, находящиеся поблизости, для отдыхающих-купальщиков не закрывались. Подобная избирательная предвзятость также оставалась незамеченной политиками и прессой, которые дружно отмалчивались. При этом штрафы и пени за срыв сроков поставок энергоресурсов в Европу Россией добросовестно выплачивались. Но стоило Минприроды России предъявить обоснованные претензии англо-голландской компании Royal Dutch-Shell за незаконную вырубку девственных лесов по маршруту пролегания трубопроводов в рамках нефтегазового проекта Сахалин-2, как опять-таки хором посыпались обвинения, а порою был откровенный шантаж, направленные против России. Что касается грубых нарушений природоохранного законодательства России, так это не беда, “своим” все дозволено, а вот российским танкерам путь через Босфор и Дарданеллы заказан...

Усматривая во всех этих проявлениях применение двойных стандартов, мы в Армении не удивляемся, что ОБСЕ не приняла никаких действенных мер, когда вопреки всем экспертным рекомендациям об экономической целесообразности прокладки трубопроводов через Армению, по политическим соображениям ее отстранили от участия в крупных энергетических проектах в регионе Южного Кавказа, осуществляемых государствами-членами ОБСЕ, будь-то нефтепровод Баку–Тбилиси–Джейхан или газопровод Баку–Тбилиси–Эрзерум. Почему-то и в этих случаях никто

так и не вспомнил о необходимости диверсификации маршрутов поставок не только азербайджанской, но также и центральноазиатской нефти и газа, путем прокладки, повторяю, экономически куда более эффективных нефте- и газопроводов через Армению. Причины потери “бдительности” нашими коллегами по ОБСЕ нам понятны, а логика их рассуждений примерно такова: не надо из этого делать проблему и невелика беда, что эти вопросы, хотя и столь животрепещущие для Армении, так и останутся без разрешения. При таких рассуждениях главный довод, который нередко можно было услышать заключался в том, что в результате реализации этих проектов Европа будет иметь дополнительный источник поставок казахстанской и азербайджанской нефти в объеме 50 млн тонн в год, альтернативный Российскому. Но что такая диверсификация поставок энергоресурсов и блокада Армении, осуществляемая Турцией и Азербайджаном, оборачиваются для республики обескровливанием ее экономики, так это для потребителей каспийских энергоресурсов государств-членов ОБСЕ не важно, ибо взамен европейские страны смягчат свою зависимость от поставок энергоресурсов из России.

Уважаемые коллеги! Уже очевидно, что экономические интересы и боль малых стран не воспринимаются как общая боль всеми 56-ю государствами-членами ОБСЕ. Думается, что до тех пор, пока крупные страны ОБСЕ в ущерб малым странам будут преследовать только цели обеспечения собственной энергобезопасности; до тех пор, пока ОБСЕ будет молчаливо взирать на продолжающуюся более 17 лет экономическую блокаду Армении со стороны Турции и Азербайджана; до тех пор, пока ОБСЕ будет поддерживать экономические проекты, ведущие к полной изоляции моей страны, в течение всего этого времени для Республики Армения не потеряют своей актуальности опасения президента России Владимира Путина. Президент России был прав,

когда, выступая на 43-й Мюнхенской конференции по вопросам политики безопасности, выразил тревогу сказав: “ОБСЕ пытаются превратить в вульгарный инструмент обеспечения внешнеполитических интересов одной или группы стран в отношении других стран, и под эту задачу “скроили” бюрократический аппарат ОБСЕ”.

В заключение хотелось бы надеяться, что ОБСЕ в основу философии по обеспечению глобальной энергетической безопасности положит простые человеческие истины: нельзя убивать во благо, нельзя воровать во благо, нельзя лгать во благо, нельзя промолчать во благо...

«ՀՀ-Ը ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՐՋ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ»
Վստահ է Արտաշես Գեղամյանը

- **Գ**յուներիի քաղաքապետի դեմ մահափորձը Դուք որակել էիք որպես անցում բնականոն կրիմինալ զարգացումների, ի՞նչ նկատի ունեիք:

- Արդեն այնպիսի իրավիճակ է, որ թե՛ ԵՄ-ն, թե՛ ՌԴ-ն կամ ԱՄՆ-ն կարող են Հայաստանը ընկալել որպես մի պետություն, ուր մարդիկ ի գորու չեն քաղաքակիրթ ճանապարհով լուծել խնդիրները և հարկադրված դիմում են զենքի ուժին, հակաօրինական, հանցագործ ճանապարհների: Ի՞նչ է նշանակում, երբ քաղաքապետի կամ հարկային ոստիկանության պետի նկատմամբ մահափորձ է կատարվում, սա նշանակում է, որ տվյալ երկրում արհամարհվում է օրենքը, արհամարհվում է պետության ներկայացուցիչը, որ տվյալ երկրում հանցավոր ճանապարհով հարցերը կարգավորելը, կարծես թե, դառնում է բնականոն իրավիճակ, և պատահական չէ, որ ԱՄԿ-ն իր կարգախոսն է ընտրել հենց սա՝ «Հայրենիքը փրկենք միաբանությամբ»: Ժողովուրդը մեծ սպասելիքներ ունի այս ընտրություններից, ժողովուրդը սպասում է, որ վերջապես հաղթի օրինականությունն ու օրենքը, և մենք կունենանք օրենքի ուժով գործող երկիր և ոչ թե օրենքները բռնաբարող իշխանությունների կողմից կառավարվող երկիր:

- Սակայն իշխանության ներկայացուցիչները նման դեպքերում սովորաբար ասում են՝ իսկ ո՞ր երկրում նման բաներ չեն լինում, ո՞ր երկրում չեն կրակում:

- Սեզանում ամբողջ արժեհամակարգը խեղված է, իմ ընդդիմախոսները կարող են ամբողջ եթերը հեղեղել Սուրբ Խաչ

եկեղեցու բացմանը մասնակցել-չմասնակցելուն նվիրված քննարկումներով, «Հայ Դատի»-ն մասին խոսեն, խոսեն, իրոք, կարևոր նշանակություն ունեցող խնդիրների մասին, բայց այդպես էլ մոռանալով, որ այդ բոլոր հարցերը միջոց են, որ հայ մարդը Հայաստանում իրեն պաշտպանված ու ապահով զգա: Չես կարող պատմական հուշարձանին տեր կանգնել և դա ընդունվի որպես անաչառ դրսևորում, երբ դու տեր չես կանգնում քո ամենակարևոր հարստությանը, այն է՝ հայ մարդուն: Խեղված է արժեհամակարգը, և սա է, որ պետք է տագնապ հարուցի իշխանությունների մեջ, որովհետև, եթե հայ մարդը իր սեփական երկրում պաշտպանված չէ, նա ինքը պատրաստ չի լինի իր երկիրը պաշտպանել: Հայաստանը ներկայիս իրավիճակում պաշտպանության լուրջ կարիք ունի: Կարդալով ցանկացած վերլուծական նյութ՝ զարմանում ես, թե ինչպես կարելի է երկիրը կատարյալ մեկուսացման մեջ զցել թե՛ տնտեսական, թե՛ աշխարհաքաղաքական բնագավառներում և խոսել ինչ-որ հարցերի շուրջ, երբ մայր հարցը Հայաստանի Հանրապետությունում ամենաանպաշտպան, ամենաանօգնական վիճակում հայտնված հայ քաղաքացին է:

- *Տեսա, որ արդեն պատրաստ են Ձեր կուսակցության նախընտրական պաստառները, որոնք իրենց չափերով շատ ավելի փոքրիկ են, քան «Բարգավաճ Հայաստանինը» կամ ՀՀԿ-ինը, Դուք դրանք քաղաքի ո՞ր մասերում եք պատրաստվում ցուցադրել և մտավախություն չունե՞ք, որ հսկայական պաստառների մեջ դրանք կկորչեն:*

- Մենք այդ հարցերին կարևորություն չենք տալիս, ավելի շատ կարևորություն ենք տալիս ընտրապայքարի բովանդակային մասին, իսկ բովանդակային մասը ներառված է մեր հակաճգնաժամային ծրագրում, որը, ինչպես օրենքն է պահանջում, ապրիլի 8-ից կբաժանվի ընտրողներին: Մեր ողջ քարոզարշավի մեխը լինելու է այն, որ յուրաքանչյուր հայ մարդ,

կարդալով այդ ծրագիրը, կարողանա իր տեղը որոշել Հայաստանը շենացնելու ճանապարհին, իրենից պահանջվող բնագավառը որոշի և, որ ամենակարևորն է, ներքին պահանջ զգամասնակիցը դառնալ սեփական երկրի ապագան կառուցելու գործին: Իսկ այդ պաստառները նպատակ ունեն քաղաքականությունից իրենց առավել հեռու պահած մարդկանց ծանոթացնել, հիշեցնել, թե ինչ կարգախոսով ենք մենք գնալու ընտրություններին:

Մարգարիտ Եսայան

**«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ»
ՄԻՆՉԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԿԵՆՏՐՈՆԱՆԱԿՈՒ Է**

«Ազգային Միաբանություն կուսակցությունը» ամառվա ամիսներին գերադասում է հանգստանալ, քանի որ ամառը լավագույն ժամանակը չէ ներկուսակցական հարցերը քննարկելու համար: Կուսակցության համար իրադարձային է լինելու սեպտեմբերը, երբ հանդիսավոր կերպով կնշվի ԱՄԿ-ի տասնամյա հոբելյանը:

Երբ մենք այցելեցինք ԱՄԿ գրասենյակ, Արտաշես Գեղամյանն իր աշխատասենյակում ծանոթանում էր մամուլի հրապարակումներին, որոնք նախընտրական ծանրաբեռնվածության պատճառով չէր հասցրել կարդալ: Մեր հարցին, թե ինչո՞վ է զբաղված կուսակցությունը, Արտաշես Գեղամյանը, առաջնորդվելով Ալեքսանդր Միխայլովիչ Գորչակովի հայտնի խոսքերով, որը նա արտասանեց 1856 թվականին Ղրիմի պատերազմում Ռուսաստանի կրած պարտությունից հետո, հիշեցրեց դրանք. «Ասում են՝ Ռուսաստանը բարկանում է, Ռուսաստանը պարզապես կենտրոնանում է»: ԱՄԿ առաջնորդը չորոշակիացրեց նախագահական ընտրություններին իր մասնակցության հարցը՝ նշելով, որ սեպտեմբեր ամսին կայանալիք հոբելյանական համաժողովի ընթացքում պարզ կլինի: «ԱՄԿ հոբելյանական համաժողովում մենք կքննարկենք երկրի առաջ ծառայած խնդիրները և դրանց հաղթահարման ճանապարհին կորոշենք ԱՄ-ի դերն ու դերակատարությունը, ինչու չէ՝ նաև կուսակցության ղեկավարների դերն ու դերակատարությունը: Նախագահական ընտրություններին մասնակցել-չմասնակցելը, չեն կարծում, թե այդ գործում կլինի առանցքային հարց», - մասնավորեցրեց պրն Գեղամյանը: Նրա մա-

տուցմամբ հորեյրանական կոնֆերանսի ընթացքում կուսակցությունն ի մի է բերելու տասնամյա աշխատանքը, դասեր է քաղելու արածից-չարածից և ճշտելու է, թե կուսակցությունն ինչ խնդիրներով է թևակոխելու նոր տասնամյակ: «ԺԵ» հարցին, թե ինչո՞ւ ԱՄԿ-ին չհաջողվեց մտնել խորհրդարան՝ Արտաշես Գեղամյանը պատասխանեց. «ԱՄԿ-ն իր առաջ խնդիր չէր դրել հաղթահարել 5 տոկոսի արգելանքը: Նա խնդիր էր դրել ազգը միաբանել և չէի ասի, որ մենք ձախողում ենք ունեցել: Այդ գործում մենք հաջողության հասել ենք, իսկ թե ինչ մեխանիզմների կիրառմամբ՝ սեպտեմբերին կմատնանշենք», - ասաց Ա.Գեղամյանը՝ բացատրելով, որ իրենք ցանկություն ունեն ազգին միաբանել ոչ թե անձերի, այլ ազգային գաղափարների ու այն մարտահրավերները հաղթահարելու ճանապարհների շուրջ, որոնք պարտադրված են նաև Հայաստանին: Մեր զրուցակիցը բոլոր կուսակցություններին, որոնք պատրաստվում են նախագահական մրցարշավին, հաջողություններ մաղթեց:

Արտաշես Գեղամյանի ներկայացմամբ՝ իր գլխավորած կուսակցությունն անցած 10 տարիների ընթացքում բազում ձեռքբերումներ ու բացթողումներ է ունեցել: Ձեռքբերումներից առանձնացրեց այն, որ ԱՄԿ-ի ձայնը լսելի է եղել ԵՄԽԿ-ում, Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության կազմակերպության վեհաժողովում, այն էլ 21 անգամ: Եվ ոչ միայն լսելի է եղել, այլ նաև շատ դեպքերում նպաստավոր հայոց պետականության ամրապնդման համար: «Սա ես պակաս չեմ կարևորում, որը չափազանց բարձր հրապարակային գնահատականի է արժանացել աշխարհիս բախտը որոշող երկրների պատվիրակների կողմից: Ձեռքբերում էր նաև այն, որ 1997-ին ԱՄԿ-ն ստեղծվելուց երկու տարի անց դարձավ խորհրդարանական կուսակցություն: Ութ տարի շարունակ մենք ներկայացված ենք եղել ԱԺ-ում», - նշեց այլևս արտախորհրդարանական կուսակցության ղեկավարը՝ ընդգծելով, որ ԱՄԿ-ն այս ընթացքում շատ իմաստուն է գտնվել և էլ ավելի է կոնսոլիդացրել իր շարքերը, իսկ հիմա էլ բավականին օպտիմիստորեն տրամադրված գնում է իր

10-ամյա հորեւյանին ընդառաջ: Իսկ ինչ վերաբերում է բացթողումներին, ապա դրանցից հիմնականն այն է, որ կուսակցությունը չկարողացավ այն գաղափարները, մտքերը, որոնք մեր երկրին խոստանում էին ավելի հեռանկարային զարգացումներ, դարձնել ժողովրդի սեփականությունը: «Չկարողացանք նաև ինքներս իշխանություն կազմելով դրանք կյանքի կոչել: Կան առանձին բացթողումներ, որոնք ներհատուկ են ցանկացած քաղաքական ուժի, որոնց չէի ուզենա անդրադառնալ», - եզրափակեց Արտաշես Գեղամյանը:

Թագուհի Թովմասյան

«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ԿԵՆՏՐՈՆԱՆՈՒՄ Է

Կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանը հայտնեց, որ իր կուսակցությունը մտահոգ է երկրի հնարավոր զարգացումներով:

- Քարոզարշավի ընթացքում նկատելի էր, որ ընտրողները շատ քերն են ընդունում «Ազգային Միաբանությանը», սակայն արդյունքում ընտրվեցին այլ ուժեր. Ձեր կարծիքով ինչո՞ւ այդպես եղավ:

- Ըստ իս, դա պայմանավորված է նրանով, որ Հայաստանի Հանրապետությունում դեռ կայացած չէ արժեքային համակարգը, և այն, որ «Ազգային Միաբանությանը» շատ քերն էին ընդունում, իսկ արդյունքում քվեները ստացան քաղաքական ուրիշ ուժեր, համոզում է մեզ, որ պետք է ամեն ինչ անել ոչ թե ԱՄ կուսակցության վարկանիշը բարձրացնելու ուղղությամբ, այլ, որ ձևավորվի այնպիսի արժեհամակարգ, որ նման անակնկալներն անհնարին լինեն Հայաստանի քաղաքական և հասարակական կյանքում: Ահա սա է խնդիրը, և այս խնդիրը լուծելը հավասարաչափ թե՛ ընդդիմությանն է, թե՛ իշխանություններին: Այն մարտահրավերները, որոնք, անտարակույս, արդեն իսկ ծառայել են ՀՀ պետականության առաջ, մարտահրավերներ են ոչ թե այս կամ այն իշխանավորի, կամ ընդդիմադիրի համար, այլ վտանգ են մեր ժողովրդի գլխին, և դրանց կործանարար հետևանքների գիտակցումն ու առկա մարտահրավերների հաղթահարմանն ուղղված գործերով, թերևս, կերևա յուրաքանչյուր քաղաքական ուժի հասունության աստիճանն ու մակարդակը: Այն կուսակցությունները, որոնց համար գերխնդիր է՝ ամեն գնով ներկայացված լինել Ազգային ժողովում, այս ընթացքում, թերևս, հասկանալի հարցեր էին փորձում լուծել, իսկ «Ազգային Միաբանությունը» շատ ավելի հա-

վակնոտ նպատակներ էր դրել ընտրապայքարի ընթացքում, և հիմա էլ դրանք չեն կորցրել իրենց արդիականությունը: Այն է՝ համախմբել ազգը, միաբանել ժողովրդին, որովհետև մենք ազգային միաբանության մեջ ենք տեսնում այն հաղթական գործոնը, որը հնարավորություն կընձեռի պատվով դուրս գալ այս դժվարին կացությունից, որում հայտնվել է մեր երկիրը:

- Ըստ որոշ վերլուծությունների, պարտված ընդդիմադիրները ընկճված են, տխուր են, հուսահատված են, սակայն մյուս կողմից ընդդիմադիր մի շարք ուժեր հանրահավաքներ են անցկացնում, նստացույցեր են անում: Ինչպիսի՞ն է կոնկրետ Ձեր կուսակցության և ձեր տրամադրությունը:

- «Ազգային Միաբանությունը» մտահոգ է, մտահոգ է ոչ թե սեփական վարկանիշի հետ առնչվող հարցերով, այլ մտահոգ է առաջիկայում երկրում և նրա շուրջ ընթացող հնարավոր զարգացումներով: Ակնհայտ է՝ հնարավոր չէ համապետական լուրջ խնդիրներ լուծել, երբ ազգը միաբան չէ, ավելին՝ պառակտված է, ուստի մեր բոլոր գործողություններն ուղղված են լինելու ժողովրդի լայն զանգվածների և իշխանությունների միջև օրըստօրե ընդգծվող վիճի, անջրպետը ոչ թե է՛լ ավելի խորացնելուն, ցցուն դարձնելուն, այլ հակառակը՝ կամրջելուն, մեկտեղելու քաղաքական բոլոր կարող ուժերին համազգային գաղափարների շուրջ՝ խնդիր ունենալով փրկել հայոց պետականությունը վերահաս վտանգներից: Հուսահատության մասին խոսք լինել չի կարող, որովհետև մարդ ընկճվում է այն ժամանակ (մտածող մարդու մասին է խոսքը), երբ տեսնում է, որ իր գաղափարները պետության, ժողովրդի համար կորցրել են հրատապությունը, հնացած են: Ընդհակառակը, ընտրություններից հետո մենք վերստին հանգվեցինք, որ այսօր խնդիրների խնդիրը ազգը միաբանելն է և ազգը զարգացման մայրուղի դուրս բերելը:

- Արդեն մի քանի գործիչներ հայտարարել են նախագահական ընտրություններում իրենց թեկնածության առաջադրման ցանկության մասին, Դուք և՞ս առաջադրվելու եք:

- Տեսնում եք, ձեր տված նախորդ հարցում կար, որ ընդդիմությունը կոտրվել է, մինչդեռ հակառակն է. տեսեք, արդեն քանի՞ քաղաքական ուժ իր պատրաստակամությունն է հայտնել մասնակցել նախագահական ընտրություններին: Սա՝ իմիջիայլոց: Խնդիրը ոչ թե սեփական մասնակցությունը բերել կամ չբերելն է նախագահական առաջիկա ընտրություններին, այլ մեզ համար շատ ավելի կարևոր է, որ ժողովրդի սեփականությունը դարձնենք այն գաղափարները, որոնք պահանջված և եզակի են ստեղծված իրավիճակում երկիրը վտանգավոր զարգացումներից զերծ պահելու համար՝ համախմբման, հաղթանակների ճանապարհ դուրս բերելու նպատակով: Առաջադրվել-չառաջադրվելու հարցին մենք դեռ չենք անդրադարձել: Պատմությունից, հավանաբար, հիշում եք, երբ 1856 թվականին Ղրիմի պատերազմում Ռուսաստանի կայսրությունը դաժան պարտություն կրեց Օսմանյան կայսրությունից՝ Թուրքիայից, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար իշխան Ալեքսանդր Միխայլովիչ Գորչակովն իր ընդդիմախոսներին պատասխանել էր. «Բոլորն ասում են, որ Ռուսաստանը բարկացած է, ոչ, Ռուսաստանը բարկացած չէ, Ռուսաստանը կենտրոնանում է»: Այ, հիմա, «Ազգային Միաբանություն կուսակցության» համար եկել է կենտրոնանալու այդ պահը: Մենք պետք է կենտրոնանանք, հասկանանք՝ հետընտրական ժամանակաշրջանում երկիրը ի՞նչ վիճակում է հայտնվել, որո՞նք են մեր պետականության դեմ ուղղված դրսից սպառնացող վտանգները, որո՞նք են երկրի ներսում առկա մարտահրավերները, և այդ ամենը գիտակցելով՝ խնդիր դնենք ոչ թե դրանք խորացնելու, որ այսօրվա իշխանությունների ձախողումների փաստերն ավելի ցցուն դարձնենք, այլ նպատակ հետապնդենք երկիրը ազգովի դուրս բերել այս, բառիս իսկական իմաստով, պայթյունավտանգ հորձանուտից, այս բազում փորձություններով վտանգված իրավիճակից: Կարծում եմ, ճիշտ կլինի, որ քաղաքական բոլոր ուժերը կարողանան անկողմնակալ ձևակերպել երկրի առաջ ծառայած մարտահրավերները, հատկապես արտաքին մարտահրավերների մասին է խոսքը: Այնու-

հետև, դրանց դեմն առնելու համար, գեթ մեկ անգամ բուլղոս խորհենք, մտածենք, թե ի՞նչ ներուժ ենք կարողանալու ձևավորել ողջ հայության շրջանում: Այս գործառույթներում, համոզված եմ, յուրաքանչյուր քաղաքական ուժ պահանջված է և իր սեփական դերակատարությունը պետք է գտնի, եթե չի ուզում պատմության լուսանցքում հայտնվել: Ահա, մեր կենտրոնանալը պայմանավորված է նշված հարցերի իմաստավորմամբ: Սեպտեմբերին, կուսակցության համար հոբելյանական այս տասներորդ տարում, հանդես կգանք համապարփակ վերլուծություններով: Մեր վերլուծություններում և գնահատականներում մենք ազնիվ ենք լինելու մեր ժողովրդի ու քաղաքական գործընկերների հանդեպ՝ լինեն ընդդիմադիր, թե իշխանական դաշտից: Այս ամենից հետո զարգացումներն ինքնին ցույց կտան՝ ո՞ր քաղաքական ուժը, ո՞ր քաղաքական գործիչներն են հանրապետությունը այս վիճակից դուրս բերելու համար առավել պահանջված: Հայրենիքը մեկն է, քաղաքական կուսակցությունները կգան ու կգնան (չասեմ ձմռան ու ձախորդ օրերի համատեքստում), բայց Հայրենիքը, հայոց պետականությունը խարխլողները, լինի իշխանություն, թե ընդդիմություն՝ մի կողմից, ամրապնդման ջատագովները՝ մյուս կողմից, գնահատվելու են սերունդների և պատմության կողմից: Այդ գիտակցմամբ է, որ «Ազգային Միաբանությունը» այսօր ամպագոռգոռ հայտարարություններով հանդես չի գալիս, իրեն առաջ չի գցում: Մենք պարզապես փորձում ենք վերափնաստավորել մեր անցած ուղին: «Ազգային Միաբանությունը» իր սեփական պատասխանատվության բաժինը Հայաստանի ներկա վիճակի համար տեսնում է և միգուցե շատ ավելի սուր է գնահատում իր դերակատարությունը, քան իշխանության մաս կազմող առանձին ուժեր: Մեր այսօրվա լռությունը թող լինի խորհրդավոր, որովհետև մենք, իրոք, կենտրոնանում ենք:

Մարգարիտ Եսայան

«ԵՍ ՉԵՍ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ
ԻՆՔՆԱՍՈՌԱՅ ԶԲԱՂՎՈՂՆԵՐԻՆ»

«Ազգային Միաբանություն կուսակցության» ղեկավար Արտաշես Գեղամյանին ներկայացնելու կարիք, թերևս, չկա: Նրան բոլորն էլ ճանաչում են: Սակայն ճանաչում են հիմնականում քաղաքականության տեսանկյունից: Մինչդեռ պարոն Գեղամյանը քաղաքականությունից ոչ քիչ հետաքրքրվում է կյանքի գրեթե բոլոր բնագավառներով: Եվ այդ ամենի հետ մեկտեղ, կարողանում է ժամանակ գտնել Արտաշես Գեղամյան Կրտսերի՝ իր թոռնիկի համար: Մինչ հարցազրույցը սկսելը, պարոն Գեղամյանի հետ ընտրում էինք այն լուսանկարները, որոնք պետք է ներկայացնեինք ամսագրի էջերում: Եվ բոլորին նա հիշում էր ամենայն մանրամասնությամբ՝ անուն-ազգանունով, աշխատանքով, նրանց հետ տեղի ունեցած հետաքրքիր միջադեպերով և այլն:

- Պրն Գեղամյան, Դուք շփումների մեծ շրջանակ ունեք, ինչպե՞ս է Ձեզ հաջողվում բոլորին անուն առ անուն հիշել:

- Յուրաքանչյուր լուսանկարի հետ հետաքրքիր մի պատմություն կա, ինչպե՞ս կարելի է մոռանալ հանդիպումները մեծագույն այնպիսի մարդկանց հետ, ինչպիսիք են Սիլվա Կապուտիկյանը, Կարեն Դեմիրճյանը, Ֆրունզիկ Մկրտչյանը, Էդուարդ Իսաբեկյանը, Ռուդոլֆ Խաչատրյանը, Երևանի ամենասիրված տղաներից՝ Ֆելիքս Դանիելյանը, Նորայր Թադևոսյանը... Նրանցից յուրաքանչյուրն իր ոլորտում լեգենդ էր: Ինչպե՞ս կարելի է կյանքի ամենավառ էջերը մոռանալ:

- Հետաքրքիրն այն է, որ Երևանի Ձեր նշած հարգված ու սիրված

տղաները, օրինակ, Սիրուն Ֆելոն, Ձեր լուսանկարներում արվեստի, գրականության մարդկանց հետ են: Այսօր դժվար է պատկերացնել թաղային որևէ հեղինակության մտավորական, արվեստի մարդու հետ շփման մեջ: Անգամ վերջիններիս անունները չգիտեն:

- Անհատականությունները՝ անկախ նրանից, թե որը որ բնագավառում է դրսևորվել, ի վերուստ տրված ինչ-որ անբացատրելի նախախնամության արդյունքում հանդիպում են: Եվ նրանց միավորում է առաջնորդի՝ ի սկզբանե տրված գեներ: Յուրաքանչյուրն իր բնագավառում մեծագույն հեղինակություն է եղել: Սիլվա Կապուտիկյանը՝ պոեզիայում, Ռուդոլֆ Խաչատրյանը՝ գրաֆիկայում: Երևանի տղաներից, օրինակ, Ֆելիքս Դանիելյանը (Սիրուն Ֆելոն) կամ Նորիկ Թադևոսյանը (Դըքի Նորոն) մեծ հարգանք էին վայելում: Նրանք էլ զգաստանում էին, երբ տեսնում էին Սիլվա Կապուտիկյան, Էդուարդ Իսաբեկյան մեծություններին: Կամ Ֆրունզիկ Սկրտչյանը. պետք էր տեսնել, թե նա ինչպիսի գուրգուրանքով էր վերաբերվում իրենից 2-3 տարի մեծ արվեստագետին, որին իր տաղանդով ամենևին չէր զիջում: Հարգանք կար ավագների նկատմամբ: Արժեհամակարգն այլ էր:

- Իսկ ի՞նչը փոխվեց: Անհատականություններն են քչացել, մտածելակերպն է փոխվել, թե՞...

- Ժամանակը թողնում է իր դրոշմը: Ցավոք, գլոբալիզացում ասված գործընթացների ժամանակ հատկապես փոքր ազգերին խիստ վտանգներ են հետապնդում, կարող է կտրվես քո ազգային արժեքներից, ակունքներից: Հիմա օտարացում կա մարդկանց մեջ: Իմ հայրական տունը, որտեղ անց են կացրել մանկությունս ու պատանեկությունս, մի մեծ շենք էր՝ կից «Նաիրիի» դիմաց: Այդ շենքի բոլոր բնակիչները կարծես մի ընտանիք լինեին: Եթե կողքի մուտքում հիվանդ էր լինում, որին հանգիստ էր պետք, երեխաները բղավոցով ֆուտբոլ կամ հավալա չէին խաղում, կամ հեռավորության վրա էին խաղում, որ չանհանգստացնեին: Դա ընդունված էր, չէր էլ քննարկվում: Պարկեշտությունը գալիս էր մեր ծնողներից, նրանցն էլ՝ իրենց

ծնողներից: Այն ժամանակվա հայերին բնորոշ է եղել մի ընտանիք, մի բռունցք դառնալու ներքին պահանջը, որովհետև նրանք երիտասարդական տարիներին, որպես կանոն, թշնամական միջավայրում են եղել՝ չորս կողմից շրջապատված թուրքերով:

- *Բայց հիմա կարծեք ավելի ենք շրջապատված թշնամիներով:*

- Այո, բայց այդ վտանգը մենք չենք զգում, որովհետև անցած տարիների ընթացքում մեր ինքնապաշտպանական այդ բնագոյը, կարծես թե, տրոհվել է: Մի կողմից՝ դա լավ է, որովհետև ինքնապաշտպանության բնագոյը, կամա թե ակամա, մարդուն կապանքների մեջ է դնում: Հիմա մենք այդ կապանքներից ազատվել ենք, բայց նորին դիմակայելու ընդունակ վարքագծի դրսևորում մեր մեջ դեռ չենք ձևավորել: Նաև պայմանավորում են նրանով, որ այսօր իմացության, գիրք կարդալու պաշտամունք չկա: Այն ժամանակ մենք մրցում էինք, թե մեզանից ո՞վ է ավելի շատ գիրք կարդացել: Հանգամանքների բերումով այնպես ստացվեց, որ իմ լավ ընկերներից մեկը՝ Իոսիֆ Հարությունյանը (կինո Երևանի Իոսիկը), մի քանի տարի բանտում անցկացրեց. մեր ընդհանուր ընկերոջը փորձում էին դանակահարել, նա կարողացավ հարձակվողին վնասազերծել և նույն դանակով հարվածել նրան: Երբ Իոսիկին տեսակցության էինք գնում, հարցնում էր՝ ի՞նչ հետաքրքիր նոր գիրք կա: Երեքուկես տարի նստելուց հետո, երբ դուրս եկավ բանտից, պատմում էր ոչ թե գաղութի առօրյայից, բարքերից, այլ ոգևորված ասում էր՝ գաղութի գրադարանի բոլոր գրքերը հասցրել են կարդալ: Դուք հիմա պատկերացրեք, որ մի սափրագլուխ, կանխամտածված հանցագործություն կատարելով (ոչ թե հանգամանքների բերումով), հայտնվի բանտում և իրեն այցելողներին ասի՝ ինձ համար բերեք Կաֆկայի աշխատությունները: Այսօր պարծենում են, թե ում մեքենան է ավելի շքեղ, ով կարող է անօրինական գործողություններ կատարել ու անպատիժ մնալ և այլն:

- *Պրն Գեղամյան, մեկ անգամ էլ վերադառնամ Ձեր հիշողության հետ կապված հարցին: Հարցազրույցների ժամանակ Դուք միշտ*

մեջքերումներն եք անում տարբեր հեղինակներից: Ընդ որում, այդ մեջքերումներն այնքան տեղը տեղին են լինում ու ճշգրիտ, որ երբեմն տպավորություն է առաջանում, թե նախապես գիտեիք՝ ի՞նչ հարց են Ձեզ տալու: Ինչպե՞ս է հաջողվում այդ ամենը հիշել:

- Դուք մինչ այս պահը ձեր տված հարցերին իմ պատասխաններին գո՞հ եք:

- *Իհարկե:*

- Ես նախապես չգիտեի, թե դուք ինձ ինչ հարցեր եք տալու, այնպես չէ՞: Մենք միայն պայմանավորվել ենք, որ քաղաքականության մասին հարցեր չեն լինելու: Ուղեղը, այսպես ասած, տեղեկատվություն պահպանելու «ընտրանքային ունակություն» ունի: Երբ գրականություն ես կարդում, այն, ինչ կարևոր է, մնում է հիշողությանդ համապատասխան անկյունում: Հետագայում, երբ քեզ հարց են տալիս, ակամայից հիշում ես, որ այս կամ այն քաղաքական գործիչը, գրողը, կամ բանաստեղծը նման հարցադրման առաջ արդեն կանգնած է եղել: Եվ եթե իսկույն ևեթ դու ինքդ պատասխանը չես գտնում, կամա թե ակամա, մեջքերում ես ինչ-որ մեկի խոսքը, որը դարեր է կարողացել ապրել և չի կորցրել իր արդիականությունը: Իսկ բանալին ոչ թե իմ հիշողության ֆենոմենի մեջ է (չնայած, փառք Աստծո, բավական լավ հիշողություն ունեմ), այլ շատ ավելի պարզ է: Համաշխարհային ողջ գրականության, փիլիսոփայության հենքն իր արմատներով գալիս է հին հունական փիլիսոփաներից: Աշխարհի մեծամասնությունը հոգևոր սնունդ է առնում այդ մեծերից՝ Սոկրատես, Դիոգենես, Արիստոտել և այլն: Միզուցե բացատրությունը դրանում է: Եվ բացի այդ, ինձ մոտ ժառանգական է. ավելի շատ մորիցս եմ ժառանգել, որ փորձում եմ համակարգված մտածել: Մայրս մաթեմատիկոս է, և, ինչքան էլ զարմանալի է, իմ ամենասիրած առարկան մաթեմատիկան է եղել և ոչ թե աշխարհաքաղաքականությունը, որի մեջ հիմա եմ խորանում:

- *Պրն Գեղամյան, Դուք ավարտել եք Պոլիտեխնիկական ինստիտուտը: Օրինաչափության պես ինչ-որ բան է ստացվում, մեր քաղա-*

քական դաշտում ներկայացված անձանց մեծ մասը Պոլիտեխնիկի շրջանավարտներ են: Ինչո՞վ դա կբացատրեք:

- Հավանաբար, այդ բուհը կրթական այն եզակի օջախներից էր, որ կարողանում էր մարդու մոտ արթնացնել ռացիոնալ, պրագմատիկ մտածողություն: Եվ եթե այդ պրագմատիկ մտածողությամբ կարողանում ես համակարգված մոտեցում ցուցաբերել տեխնիկական խնդիրների նկատմամբ և, դրա հետ մեկտեղ, սեր ունես հումանիտար գիտությունների հանդեպ՝ պատմություն, աշխարհաքաղաքականություն և այլն, ապա քո այդ մտածողությունը, երբ տեղափոխում ես քաղաքականության ոլորտ, դառնում է այն, ինչ այսօր շատ մոդայիկ է հնչում՝ «real politics»:

- Ձեր կարդացածությանը և տեղեկացվածությանը ոչ ոք չի կասկածում: Միևնույն ժամանակ, ասում են, որ շատ բուռն, աշխույժ երիտասարդություն եք ունեցել՝ կռիվներ և այլն: Անգամ Ձեր միտինգներից մեկի ժամանակ, երբ միջադեպ եղավ, և մեկին հարվածել էին, ասացիք՝ թեթև տարեք, ուզո՞ւմ եք վերնաշապիկս հանեն, վրայիս սպիները տեսեք:

- /Ծիծաղում է. - Բ. Թ./ Երբ տեսնում ես, որ ոմանք իրենց ճշմարտությունն ուզում են բռունցքի ուժով ապացուցել, հիշում ես քո «հերոսական» անցյալը: Չգիտեմ, թե ընթերցողն ինչպես կընկալի, բայց նշեմ, որ թիկունքիս քերծվածք անգամ չունեմ, քանի որ հակառակորդներիցս երբեք չեմ փախել: Ցավոք, ստացվել է այնպես, որ մոտիկներս ասում են՝ ամոթ է, որ լողափում առանց վերնազգեստի լինես, տարօրինակ տպավորություն կարող ես թողնել (հետվիրահատական 37 սպիների տեղերը լավ տեսանելի են): Հանգամանքների բերումով 1970 թ. մայիսի 9-ին երեք տեղից դանակահարվեցի: Վիրահատական սեղանին պառկած էի, և 3 ժամ շարունակ ոչ մի վիրաբույժ չէր մոտենում. վախենում էին, որ սեղանի վրա կմնամ: Միայն արյուն էին ներարկում, որովհետև արյունը լցվում էր օրգանիզմիս մեջ, և ճնշումն ընկնում էր: Վիրահատական բաժանմունքի վարիչը դարաբաղցի մարդ էր՝ Շաքարյան Աբրահամ Արտաշեսովիչ: Գնացիմ

և ամառանոցից նրան բերեցին. Հաղթանակի օրն էր, և նա հանգստանում էր: Գիտակցությունն տեղն էր, ու նա հարցրեց՝ տղա՛ ջան, անունդ ի՞նչ է: Ասացի՝ Արտաշես: Ասաց՝ ես, լինելով բժիշկ, ժամանակին հորս չկարողացա փրկել, բայց քեզ կփրկեն: Եվ այդ մարդը փրկեց ինձ: Մի լավ ֆիլմ կա՝ «Թռչուն են կռուճկները»՝ Ալեքսեյ Բատալովի գլխավոր դերակատարությամբ: Այնտեղ, երբ հերոսին շատ ծանր վիրավորում են, նա հիշում է իր ապրած ողջ կյանքը: Ես էլ վիրահատական սեղանին հիշում էի իմ ապրած կյանքը: Թվում էր՝ դրանից հետո պետք է ավելի հանգիստ լինեի, բայց ճիշտ հակառակը տեղի ունեցավ: Ես մտածեցի՝ եթե Աստված ինձ փրկեց, նշանակում է ուզում է, որ իմ տեսակը դեռ ապրի, իր խոսքն ասի, ճանապարհ անցնի: Բնականաբար, այս տարիքիս արդեն չի էլ ստացվի փողոցային բռնցքամարտով զբաղվել...

- *Բայց երբեմն էլ մեր Ազգային ժողովում գործը դրան էլ է հասնում, այսինքն՝ դա էլ չէր խանգարի:*

- Գիտեք, շատ հաճախ ծիծաղ է առաջացնում՝ վրդովմունքի հետ միասին, երբ փորձում են իրենց խրոխտ ու «կռիվ անող» ցույց տալ այն մարդիկ, ովքեր չկային այն ժամանակվա Երևանում, երբ կարելի էր իրապես տղամարդկային հատկանիշներով՝ համարձակությամբ, ուժով, կամքով, «դուխով», աչքի ընկնել: Ոչ մեկս չենք տեսել նրանց: Երևանի կռիվ անող բոլոր տղերքն իրար ճանաչում էին ու լավ էլ հարգում էին միմյանց, որովհետև քինախնդրություն չկար: Եթե խելքը չէր կտրում ճշմարտությունդ ապացուցել, դա փորձում էիր անել բռունցքներով, և դրանով ամեն ինչ վերջանում էր: Մյուս օրը դառնում էիր այդ մարդու լավ բարեկամը:

- *Երևի պատճառներից մեկն էլ այն էր, որ փող չկա՞ր մեջտեղը...*

- Փողի մասին բացարձակապես խոսք չկար: Մեր երիտասարդ տարիների բոլոր կռիվներն ազնվության, ասպետության կռիվներ են եղել: Նենգություն երբեք չի եղել: Այն ժամանակ, ցավոք, քաղաքի ամեն թաղամաս ուներ իր «գվարդիանները», խմբավորումները: Բայց մարդիկ փոխադարձ հարգանք ունեին: Երբ մի քանի հոգով մեկի

վրա հարձակվում էին, ու նա տղամարդավարի էր պահում իրեն, կռիվն իսկույն դադարում էր, և այդ մարդուն որպես անհատ ընդունում էին, միաժամանակ ասելով՝ քեզ խելոք պահի, թե չէ կպատժենք: Ըստ էության, գնահատում էին դիմացինի կամային հատկությունները, տղամարդկությունը: Մինչ օրս էլ այդ հարաբերությունները, այդ «հիերարխիա» կոչվածը պահպանվել է: Երևանի ամենասիրված, ամենահարգված մարդկանցից մեկը՝ Վարդգես Վարդանյանը (Կոնդի Վարդգեսը), ով հիանալի հայ է, ինձ համար էլի ավագ է, որովհետև ես գիտեմ՝ Վարդգեսն ով է: Նա եղել է իր սերնդի, իր տարիքի տղաների մեջ ամենահամարձակներից մեկը, ով և ոչ մի անգամ իրեն թույլ չի տվել կատարել ստոր արարք: Տասնյակ, հարյուրավոր երիտասարդների պաշտպանել է, օգնել է, որ զերծ մնան հաշիշամուլությունից, դումարբազությունից և արատավոր այլ երևույթներից: Մեր զրույցի սկզբում հիշատակածս այդ մարդիկ եղել են երևանյան փողոցների ասպետները:

Մի անգամ էլ սաստիկ կռիվ տեղի ունեցավ կինո «Նաիրիի» մոտ՝ այն աստիճանի, որ երթևեկությունը երկու կողմից կանգնել էր: Հավեսով իրար ծեծում էինք...

- Այդ ժամանակ քանի՞ տարեկան էիք:

- 19 տարեկան: Վոլոդյա Աբաջյանը (նա մեր դիմացի՝ արվեստագետների շենքում էր ապրում)՝ փորձեց բաժանել, բայց չստացվեց: Գիշտ է, հարգում էինք նրան, բայց կռվի թունդ ժամանակն էր: Եվ ի՞նչ եք կարծում, ի՞նչ արեց... Անցավ Չարենց արտասանելուն՝ «Ամբոխները խելագարված»: Ծիծաղում եք, բայց կռիվը դադարեց, կարծես սթափվեցինք: Նա յուրաքանչյուրիս մեջ գտավ այն մաքուրը, որը կար:

Մեր թաղում էր ապրում նաև Հրաչյա Ներսիսյանը: Փողոցում սովորաբար խմբված տղաներ էին լինում: Երբ նա դուրս էր գալիս փողոց, և այդ տղաները պարզապես բարձր խոսելիս էին լինում, միանգամից քար լռություն էր տիրում: Պատկառանք կար մեր մեծերի նկատմամբ: Մի բան էլ պատմեմ. երեխա ժամանակ դժվարությամբ

էինք տուն գնում՝ դե, խաղեր էինք խաղում և այլն: Հայրս մի լավ ընկեր ուներ՝ մեծագույն հայ մտավորական Հրանտ Մարտինի Մարտիրոսյանը: Նրա կինը, ազգությամբ ռուս տյոտյա Սիման, պատշգամբից կանչում էր ինձ, ասում էր՝ արի, Հրանտ Մարտինիչը քեզ ասելու բան ունի: 7-8 տարեկան էի, գնում էի, նա նամականիշների հիանալի հավաքածու ուներ և, ծանր աշխատանքային օրվանից հետո (Հրանտ Մարտինիչը շատ բարձր պաշտոնյա էր), ժամերով համբերատար ինձ բացատրում էր, թե ո՞ր նամականիշը բրիտանական ո՞ր գաղութինն է: Արդյունքում ես փայլուն աշխարհագրություն իմացա: Երբ նա հոգնում էր, նստում էր դաշնամուրի առաջ և Շոպեն էր նվագում: Ես կարող էի ժամերով լսել, հետո գալիս էի տուն և ծնողներիս խնդրում, որ Շոպենի ձայնասկավառակը գնեն: Այսինքն՝ այն ժամանակվա միջավայրն ուրիշ էր: Այդ միջավայրը պարտադրում էր, որ եթե ինչ-որ հավակնություններ ունես, ապավինես ոչ միայն բռունցքներիդ ու համարձակությանդ, այլ նաև՝ գիտելիքներիդ ու իմացությանդ:

- Լուսանկարներից երևում է, որ մտերիմ հարաբերություններ եք ունեցել արվեստի և մշակույթի շատ գործիչների հետ:

- Այն, որ ես, օրինակ, գեղանկարիչների հետ մտերմություն եմ անում, պայմանավորված է նաև նրանով, որ, հավանաբար, կարող եմ մասնագիտորեն նրանց հետ խոսել Միքելանջելոյի, Լեոնարդոյի, Ռաֆայելի, Գոյայի, ինպրեսիոնիստների, պոստիմպրեսիոնիստների մասին: Գեղանկարիչների համար էլ դա հետաքրքիր է, որովհետև այդ հարցերին նրանք որպես մասնագետ եմ մոտենում, իսկ ես՝ որպես մարդ, որը պարզապես սիրում է կերպարվեստը: Սիլվա Կապուտիկյանի հետ այնքան՝ զրույցներ եմ եղել գրականության մասին: Իմ որոշ մեկնաբանությունները նրա մոտ և՛ ծիծաղ եմ առաջացրել, և՛ գոհունակություն: Ասում էր՝ այսքան ժամանակ քննարկել եմք, բայց հարցերին այդ տեսանկյունից երբեք չենք մոտեցել:

Մարդ պետք է հետաքրքրություններ ունենա և գիտելիքներ: Օրինակ, ես վերջին 4 տարիների ընթացքում Եվրախորհրդի հորհրդա-

րանական վեհաժողովում և ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովում 21 ելույթ են ունեցել: Այդ բոլոր ելույթներս էլ շատ ծանր են եղել թուրք, ազերի պատվիրակների համար: Բայց ելույթներիցս և ոչ մեկը հակահարված չի ստացել, որովհետև բարձրաձայնել են ճշմարտությունը, և դա խարսխված է եղել մեծ ճանաչում ունեցող քաղաքական գործիչների կամ արվեստագետների ասածների, փաստարկների ու վերլուծությունների վրա:

- Պրն Գեղամյան, այդքան հետաքրքրությունների մեջ ինչո՞ւ հատկապես քաղաքականությունն ընտրեցիք: Ե՞րբ որոշում կայացրեցիք զբաղվել քաղաքականությամբ, ինչպե՞ս դա ստացվեց:

- Ասեմ, ուսանողական տարիներին քաղաքականության հանդեպ երբեք սեր չեմ ունեցել: Ընդհակառակը, դիպլոմային աշխատանքս գերազանց պաշտպանեցի: Այնտեղ գիտական տարրի տեսակարար կշիռն այնքան էր, որ պետական հանձնաժողովն ինձ երաշխավորեց նույն տարում ասպիրանտուրա ընդունվել: Ընդունվեցի և դարձա երջանկահիշատակ Էդուարդ Յովհաննիսյանի ասպիրանտը: Պետք է մեկնեի Կապան, սակայն հանգամանքների բերումով Էդ. Յովհաննիսյանը մնաց Ֆրանսիայում ու այնտեղից էլ գնաց Գերմանիա: Եվ այդ ժամանակ մեր ֆակուլտետի դեկանը՝ Վազգեն Գյուլխանդանյանը, ու կուսբյուրոյի քարտուղարը՝ Լաերտ Յովհաննիսյանը (երկուսն էլ շատ հարգված մարդիկ), ասացին՝ ուսանողությունը քո նկատմամբ հարգալից է տրամադրված, դարձիր կոմսոմոլի քարտուղար: Պատասխանեցի՝ ե՛ս ուր, կոմսոմոլի քարտուղարն ուր, իմ պրոֆիլը լրիվ ուրիշ է: Նրանք էլ, թե՛ ինչ է, վախենում ես չստացվի՞:

- Թասիրի էին գցում:

- Այդպես է ստացվում: Ձարմացած հարցրեցի՝ ի՞նչը պիտի չստացվի, տղաներ են, ճիշտ բան ասես, քեզ կլսեն ու կհարգեն: Ասացին՝ չէ, դու այդքան էլ հեշտ մի պատկերացրու... Մի խոսքով, ընտրվեցի ֆակուլտետի կոմսոմոլի կոմիտեի քարտուղար: Իսկ դա նշանակում էր, որ ֆակուլտետը պետք է առաջինը լիներ հնարավոր բոլոր ցուցանիշներով: Այդ ժամանակ «աքիլլեսյան գարշապարը» ու-

սանողական հանրակացարաններն էին: Կային տղաների խմբավորումներ, որոնք թռչակի օրը գալիս և ուսանողներից խլում էին թռչակը: Ոչ ոք դրա առաջը չէր կարողանում առնել: Պարագլուխներից մեկն էլ Նոխուռյան Անդրանիկն էր՝ Պարտիզան Անդոն էին ասում: Տղաներով գնացինք, բավականաչափ թեժ բռնցքամարտից հետո, այնուամենայնիվ, հաղթող դուրս եկանք: Հետո Անդոնին հրավիրեցի ֆակուլտետ, ասացի՝ դու ձեր թաղում ծեծ ես կերել, և որպեսզի դա չդառնա ավանդույթ, արի այնպես անենք, որ էլի դու լինես այդ թաղամասը «նայողը», բայց՝ կոմսոմոլի բյուրոյի կողմից երաշխավորված: Եվ Պարտիզան Անդոն, եթե առաջ խլում էր ուսանողներից թռչակը, մեր զրույցից հետո դարձավ ուսանողների պաշտպանը: Նրա օգուտն էլ այն էր, որ իրեն արդեն մոտենում էին ոչ թե որպես հանցավոր տարրի, այլ լիազորված մարդու, որը կարգուկանոն է պահպանում հանրակացարանի մասնաշենքերից մեկի պարետի կարգավիճակում:

Դրանից հետո՝ 1972 թ., երբ 22 տարեկան էի, որոշեցին ինձ ուղարկել Կարելիայի Ինքնավար Հանրապետություն՝ ղեկավարելու շինջոկատները: Հանրապետական շտաբի ղեկավար Կարեն Պողոսյանն ասաց՝ գլուխ կհանե՞ս: Պատասխանեցի՝ կփորձեմ: Դժվարությունն այն էր, որ Մոսկվայի և Լենինգրադի հանցագործ տարրերին հարկադիր աշխանքների ծառահատումների էին ուղարկել Կարելիա: Հիմա մի կողմից՝ այդ հանցագործ տարրն էր՝ Մոսկվայի և Լենինգրադի «բլատնոյները», անբարո կանայք և այլն, մյուս կողմից էլ՝ 19-20 տարեկան տաքարյուն հայ ուսանող տղերքը: Գնացինք, ու Կարելիայում անցկացրած 2,5 ամիսների ընթացքում ես հասկացա, թե ինչ է նշանակում մեծագույն պատասխանատվություն. հանրապետական ջոկատի ղեկավարությունը սուտկայում 2-3 ժամից ավելի չէր քնում, 660 հոգի էինք՝ 14 ջոկատ:

- Եվ բոլորի ղեկավարը Դո՞ւք էիք:

- Այո: Ջոկատներն ունեին իրենց հրամանատարները, բայց բոլորը ենթարկվում էին կենտրոնական շտաբին, որի հրամանատարը ես

էի: 660 հոգու գլխից մի մագ անգամ չընկավ: Միայն շինարարական աշխատանքներ կատարելիս գրանցվել էր եզակի դժբախտ պատահար. մեր տղաներից մեկն անզգուշաբար ընկել էր երկրորդ հարկից և կոտրել ձեռքը: Այն էլ ո՞վ ջոկատի հրամանատարը, որը Պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի դասախոս էր՝ «Անվտանգության տեխնիկա» առարկայի գծով: Եվ երբ 660 հոգին առոք-փառոք ետ եկան, ես պարզևատրվեցի հանրապետական ամենաբարձր պարգևով՝ Հայաստանի Գերագույն խորհրդի պատվոգրով: 22 տարեկանին այդպիսի պատվոգիր չէին տալիս, և դա միանշանակ չընդունվեց: Վեճերը հասել էին մինչև ՀԿԿ Կենտկոմի բյուրո: Հետո պարզվեց, որ Կարելիայի մարզկոմի երկրորդ քարտուղարը շնորհակալական նամակ էր ուղարկել Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղարին: Նշել էր, որ Հայաստանի ջոկատը փայլեց իր կարգապահությամբ, և նաև շատ ջերմ խոսքեր էր ասել իմ հասցեին: Ես չգիտեի էլ այդ մասին: Եվ այդ ժամանակ գիտակցությանս մեջ կարծես բեկում եղավ. երբ դու ղեկավար լինելով մասշտաբային աշխատանք ես կատարում ու տեսնում, որ դա քեզ մոտ ստացվում է, անկախ քեզնից ներքաշվում ես այդ գործընթացների մեջ: 1972 թ. ինձ համար բեկումնային եղավ. ես հասարակական աշխատանքի, ինքնադրսևորման ներքին պահանջ զգացի: Եթե առաջ լիդերությունը փողոցում էի հաստատում կամ կիրթ շրջապատում՝ գիտելիքներով, դրա մասշտաբները, միևնույն է, արդեն իսկ ինձ համար փոքր էին: Ես ավելի լայն ասպարեզ էի փնտրում, իսկ ամենաընդարձակն այդ ժամանակ կոմերիտմիությունն էր: Հետո ընդունվեցի կուսակցության շարքերը և այլն...

- Եթե կոմսոմոլի հետ կապված ճակատագրական այդ պահը չլիներ, Դուք գիտության մեջ կլինեիք:

- Այո, որովհետև գիտության նկատմամբ ես սեր ունեի, և դա իմ մեջ սերմանել էր Չեխովի անվան դպրոցի մեր մաթեմատիկայի ուսուցիչը՝ Արշավիր Նուրիջանյանը: Նա իր բոլոր աշակերտներին սովորեցնում էր մտածել:

- *Իսկ քաղաքականությունն ընդհանրապես Ձեզ ժամանակ թողնո՞ւմ է ընտանիքի և, մանավանդ, թոռնիկի՝ փոքրիկ Արտաշես Գեղամյանի հետ շփվելու համար:*

- Այսօր առավոտյան ժամը 5:20 -ին ես երկրորդ անգամ եմ պապիկ դարձել, երկրորդ թոռս է ծնվել (հարցազրույցը տեղի է ունեցել սեպտեմբերի 13-ին, հենց այդ օրն էլ ծնվել է պրն Գեղամյանի թոռնուհին՝ Մարիան.- *Բ. Թ.*): Դեռ մեր աշխատողներին էլ չեմ ասել, դե, ժամանակից շուտ չսկսենք մշել, աշխատանքի մեջ ենք /ծիծաղում է.- *Բ. Թ.*: Ես չեմ ընդունում քաղաքականությամբ ինքնամոռաց զբաղվողներին: Ժամանակի ընթացքում նրանք հասարակության համար կարող են վտանգավոր դառնալ, եթե իրենց խորթ է ներքին խորը պահանջը՝ սիրելու թոռներին, զավակներին, ծնողներին: Քո թոռան «ղադրը» որ չիմացար, ուրիշի թոռան «ղադրը» չես կարող իմանալ: Եթե քո թոռան ամեն փոշտոցից հետո չես ասում՝ վայ, հո չի՞ մրսել, ուրիշի թոռան փոշտոցը քեզ համար բացարձակապես ոչ մի նշանակություն չի ունենա: Ընտանիքն այն սրբացնող ինստիտուտն է, որի քաղցրությունը և զինը եթե քեզ համար չպարզես, ապա պետք է քաղաքականությունից հեռու մնաս: Չարացած քաղաքական գործիչը երկրին բարիք բերել չի կարող:

- *Իսկ Ձեր կինը, որդիներն ինչո՞վ են զբաղվում: Եվ որևէ կերպ արդյոք ազդե՞լ եք նրանց վրա՝ մասնագիտություն ընտրելու հարցում:*

- Ավագ որդիս իրավաբանական կրթություն է ստացել, ավարտել է ԵՊՀ -ն, խորացել է սահմանադրական իրավունքի հարցերում: Կրտսերս՝ Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետն է ավարտել: Այնուհետև զորակոչվել է բանակ, զորացրվելուց հետո մեկնեց Լոնդոն՝ «Մետրոպոլիտեն» համալսարանում ստացավ միջազգային բիզնեսի մագիստրոսի կոչում: Յիմա աշխատում է իր մասնագիտությամբ, Սոֆիայում է: Կինս դասավանդում է Երևանի ճարտարագիտական համալսարանի էկոնոմիկայի դեպարտամենտում: Դե, այսօրվանից էլ արդեն երկու թոռ-

նիկ ունեն՝ Մարիան և Արտաշես Մամիկոնի Քեղամյան Կրտսերը, որ կյանքս ուտում է...

- *Ինչո՞ւ:*

- Չարածճի է: Ես հիմա եմ զգում ինչքան անհանգստություն եմ պատճառել ծնողներիս:

- *Այսինքն, Ձեզ է քաշել:*

- Այո: Նման էլ է, ասում են: Իսկ ինչ վերաբերում է ազդելուն, ապա երեխաների վրա ազդեցություն է թողնում ծնողների վարքն ու բարքը, կենցաղային ամենօրյա դրսևորումները: Երբեմն, երբ հին ընկերներով հավաքվում ենք ու վերհիշում երիտասարդական տարիների մեր արկածները, տղաներս ասում են՝ յա, պապա՞, բա էլ մեզ վրա ինչո՞ւ ես խոսում... Բայց դրա հետ մեկտեղ, երբ իրենք տեսնում են, որ ամենատարբեր հանդիպումների ժամանակ երբեք գետնով չեն տալիս մեր ազգի պատիվը, գեղանկարչի հետ կարող եմ խոսել գեղանկարչության մասին, գրականագետի հետ՝ գրականության և այլն, երբ տեսնում են, որ իրենց ծնողը ձգտում է կատարելության, իրենք էլ փորձում են կամաց-կամաց խորանալ կյանքի տարբեր բնագավառներում: Որքան մոտիկից ես ծանոթանում երաժշտության, թատրոնի, գրականության և մշակութի այլ ոլորտներին, այնքան հասկանում ես մի բան՝ պետք է թշվառ լինես, որ ձգտում չունենաս այդ ամենը վայելելու:

Ջրուցեց Բաբկեն Թունյանը

**ԱՅՍՕՐ «ՅԱՅԵԼԻ» ԱԿՈՒՄԲԻ ՀՅՈՒՐՆ ԷՐ
«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ»
ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԸ**

Վարող - Պարոն Գեղամյան, նախագահական առաջիկա ընտրություններին մենք ականատես կլինե՞նք գաղափարական պայքարի: Այս առումով Ձեր կուսակցությունը ի՞նչ է անելու:

Արտաշես Գեղամյան - Սեպտեմբերի 29-ին մեր կուսակցության կոնֆերանսում Հայաստանի ներքին և արտաքին խնդիրների, մարտահրավերների վերաբերյալ խոր քննարկումներ եղան, փաստեցինք իրական թվեր, որոնք ցանկացած գիտակ փորձագետի մոտ կառաջացնեն լուրջ մտորումներ: Այս պարագայում միայն զարմանալ կարելի է՝ մեկուկես ժամանոց կոնֆերանսը հայկական մամուլում առաջ էր բերել բամբասանք, աղճատված մտքերի շարադրանք: Եթե օտարները ընթերցեն լրատվամիջոցների հրապարակումները և վերլուծեն Հայաստանի իրավիճակը, վաղը, մյուս օրը մենք բոլորս կարող ենք ծանր կացության մեջ հայտնվել: Հավատացնում եմ՝ դրանք երկու տարբեր աշխարհներ են պատկերում: Մամուլի որոշ հոդվածներ կարդալիս ակամայից հիշում ես Էրազմ Ռոտերդամացու «Գովք հիմարությանը» հանրահայտ աշխատությունը և զարմանում, թե նա որքան հեռատես է եղել, որ դեռ դարեր առաջ, իր ապրած ժամանակ կարողացել է գուշակել մեր այսօրվա առանձին թերթերի հրապարակումների հիմարությունները: Գաղափարական պայքար չի լինի այնքան ժամանակ, քանի դեռ լրատվամիջոցները, որոնք քաղաքական գործիչների և հասարակության լայն շրջանակների հաղորդակցման մի-

ջոց են, դուրս չգան խմբակային նեղ շահերից, պատվիրված հողվածներից:

Վարող - Այսինքն գաղափարական պայքար լինելու համար հիմնական մեխը լրագրողների վրա՞ է դրված:

Ա. Գեղամյան - Ոչ: Այն քաղաքական ուժերի, որոնք լրատվամիջոցներ ունեն: Նրանք հասկանում են, որ անկարող են իմ կողմից բարձրացված հարցերին պատասխան տալ և գաղափարական բանավեճը տեղափոխում են ճղճիմ բանասարկությունների ոլորտ: Սամուլի նմանօրինակ կեցվածքը վտանգավոր է Հայաստանի համար, որովհետև մենք ազգովի կարիք ունենք քաղաքական մտքի ընտրանու մեկտեղման: Իսկ դա չի խրախուսվում ոչ իշխանական, ոչ ընդդիմադիր, ոչ էլ մեկ ուրիշ լրատվամիջոցի կողմից:

«ԱՐ» հ/ը - Պարոն Գեղամյան, Ձեր կոնֆերանսի ընթացքում ամենագաղափարական միտքը, որ Դուք ասել եք, ո՞րն է, կկրկնե՞ք: Գուցե այս անգամ լրատվամիջոցներն ուշադրություն դարձնեն:

Ա. Գեղամյան - Փաստորեն, մեր հարգարժան «ԱՐ»-ի թղթակիցը ուզում է իրենց հեռուստատեսության՝ իրականությանը բացարձակ չհամապատասխանող մեկնաբանությունները խորացնել: Փորձեմ Աստվածաշնչյան խոսքերով պատասխանել՝ աչքեր ունեցողը կտեսներ, ականջ ունեցողը կլսեր: Բազմաթիվ հարցադրումներ ձեզ համար անհասկանալի մնացին: Դա, թերևս, իմ խնդիրը չէ, ձեր իմացության խնդիրն է: Ձեր մեկնաբանություններով ապացուցեցիք, որ տնտեսագիտությունից բացարձակ գաղափար չունեք: Ձեզ համար անհասկանալի են աշխարհաքաղաքական հարցադրումները, ասես, կտրված եք հայաստանյան իրականությունից:

Վարող - Պարոն Գեղամյան, եկեք չանձնավորենք:

Ա. Գեղամյան - Դուք վրա մի տվեք, ես չեմ անձնավորում: Խոսում եմ հաղորդման մակարդակի մասին: Ուզում եք իմանալ՝ որոնք էին գաղափարական մտքերը: Ես սիրով կտրամադրեմ մեր կոնֆերանսի տեսագրված հոլովակը, և դուք ամեն ինչ կհասկանաք: Այնտեղ ձեզ էլ կտեսնեք. ամեն նոր միտք լսելիս ձեր ընկերոջը ոգևորված աչքով

էիք անում ու, ի համաձայնություն իմ ելույթի, ժպտում: Ձեր սրտով էլ էր դա: Ուրիշ բան, որ երկփեղկվել էք: Այսօր տեսահոլովակը կբաժանվի նաև ԵԱԿԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների դեսպաններին: Ելույթս աղավաղել, բայց ա՞յդ աստիճանի: Պետք է տխրեցնեմ ձեզ, որովհետև շուտով այդ ելույթը վճարովի հիմունքներով ամբողջությամբ կտապագրվի հայկական թերթերից մեկում:

«Արմենիա» հ/ը - Այդուամենայնիվ, Ձեր ելույթի, մեկնաբանումների հիմնական մեխը մեկ-երկու տողով կներկայացնե՞ք:

Ա. Գեղամյան - Հայոց քաղաքական ընտրանին դատապարտված է միաբանվելու, որովհետև մեր հանրապետությունը կանգնած է պետականության կորստի վտանգի առջև: Իսկ դրա հիմնավորումները կետ առ կետ տրված են իմ զեկույցի մեջ:

Վարող - Պարոն Գեղամյան, ինչպե՞ս եք պատկերացնում ընդդիմություն-իշխանություն միավորումը:

Ա. Գեղամյան - Պետք է քաղաքական բոլոր ուժերը մեր երկրի առջև ծառայած մարտահրավերների վերաբերյալ ընդհանուր գաղափարական հենքեր մշակեն, որոնց վրա՝ ասել է թե հայոց փրկության հենքի վրա, կարողանան երկրի համար այլընտրանքային ուղիներ առաջարկել: Այն իշխանությունները, որոնք մեր երկիրը կանգնեցրել են մարտահրավերների առաջ, իրավիճակը ինքնուրույն շտկել չեն կարողանա: Ոչ թե չեն ուզում, այլ իրենց պատկերացումների և վարած քաղաքականության արդյունքն այն է, ինչը մենք այսօր ճաշակում ենք: Եվ ժամանակն է, որ միասնական ջանքեր գործադրենք երկիրը վտանգավոր հորձանուտից հանելու համար:

«ԱԼՄ» հ/ը - Հանրապետականը Ձեզ հակադարձում է ասելով՝ ճգնժամ չկա, այս դեպքում ինչպե՞ս եք միավորում պատկերացնում: Նաև՝ հասարակական ընկալումն ինչպիսի՞ն է, որովհետև անցած խորհրդարանական ընտրություններից առաջ «քլնգում» էիք իշխանությանը, իսկ այսօր նույն իշխանության հետ միավորման կոչ եք անում:

Ա. Գեղամյան - Ես հողագործ չեմ, այդ գործիքի հետ էլ ծանոթ չեմ,

որ քլնգեն իշխանությանը: Եթե դուք մնան եզրակացություն անելով՝ հիմնվում եք Էդուարդ Շարմազանովի հայտարարության վրա, ապա ճիշտ կլինի, որ վերհիշեք նաև այն իրողությունը, որ երբ Շարմազանովը լսեց վարչապետի հարցազրույցը «Ազգ»-ի խմբագրի հետ, նա հրաժարվեց իր մոտեցումից: Մինչդեռ այդ հարցազրույցում վարչապետը դրսևորեց իրատեսություն և նշեց բազում խնդիրներ մեր իրականության մեջ՝ հաստատելով իմ ասածները: Ուրիշ բան, որ մատնանշված խնդիրները ոմանք կարող են համարել ճգնաժամ, մյուսները՝ մտահոգիչ խնդիրներ: Ինչ վերաբերում է՝ հասարակությունը ինչպես կգնահատի այդ ամենը... Եթե «ԱԼՄ» հողիհնգը, ներկա լինելով մեր կոնֆերանսին, սակայն անգամ երեսուն վայրկյանանոց նյութ չցուցադրի իր եթերով, ապա դրա արդյունքում «ԱԼՄ»-ի հեռուստադիտողը ապատեղեկացված կմնա:

«Ազատություն» ռ/կ - Այնուամենայնիվ, միավորումը գործնականում ինչպե՞ս եք պատկերացնում: Կոնկրետ անուններ, ուժեր կնշե՞ք:

Ա. Գեղամյան - Կոնկրետ Տեր-Պետրոսյանը, Վազգեն Մանուկյանը, Ռոբերտ Քոչարյանը, Պարույր Չայրիկյանը, Սերժ Սարգսյանը, Արամ Կարապետյանը և մնացած քաղաքական բոլոր ուժերը նստեն մեկ սեղանի շուրջ և համաձայնության գան գոնե մեր երկրի մայր հարցի՝ Ղարաբաղի խնդրի վերաբերյալ: Որ չստացվի այնպես՝ ադրբեջանական կամ թուրքական մամուլը ՉՉ նախագահի թեկնածուներից մեկի գովքը անի, իսկ մյուսին «բազե» անվանի: Որպես հայ քաղաքացու դա ինձ վիրավորում է:

«Ազատություն» ռ/կ - Որքանո՞վ է դա իրատեսական, երբ հենց այդ առանցքային, մայր հարցի համար են Տեր-Պետրոսյանը և Ս. Սարգսյանը 98-ին նստել տարբեր սեղանների շուրջ: Աշխարհում այդպիսի փորձ կա՞, որ տարբեր գաղափարներ ունեցող մարդիկ, քաղաքական ուժերը միավորվեն:

Ա. Գեղամյան - Մի փոքր տարբեր երանգ ունեցող, բայց մնան մի դեպք ներկայացնեն ձեր ուշադրությանը. 1920 կամ 21 թվականին գեներալ Դենիկինը հարկադրված հեռացավ Ռուսաստանից, բայց

41-ին նա նամակ գրեց իրեն հարկադրաբար երկրից հեռացնողներին՝ բուլշևիկյան իշխանություններին, որտեղ գրում էր՝ հայրենիքս վտանգի մեջ է և ես պատրաստ եմ շարքային զինվորի կարգավիճակով ծառայել նրան: Մեկ այլ դեպք. 1945 թվականին ճապոնիային ստոնմային ռմբակոծության ենթարկած երկիրը՝ ԱՄՆ-ն, արդեն 1947 թ. ստանձնեց նրա անվտանգության երաշխավորի դերը: Այդպիսի բազմաթիվ դեպքեր էլի կան: Ուրիշ հարց է, որ քաղաքական ուժերը իրենց կաղապարված գաղափարների պատճառով չեն պատկերացնում այսպիսի գործընթաց, որովհետև բոլորը պարտադրված են տեղավորվել իրենց նեղիկ մտածելակերպի մեջ:

«Ազատություն» ռ/կ - Այսինքն՝ իրատեսակա՞ն էք համարում Տեր-Պետրոսյանի և այսօրվա իշխանության շփումը, համագործակցությունը:

Ա. Գեղամյան - Անշուշտ: Ասեմ ավելի՛ն՝ արդեն իշխանության հետ Տեր-Պետրոսյանը միջնորդավորված շփում ունեցել է՝ ի դեմս ՅՅԴ-ի: Իմ դերակատարությունն էլ այն է, որ քաղաքական դաշտում գտնվի որևէ մեկը, հարվածը իր վրա վերցնելով, խոսի կարևորագույն հարցերի մասին:

«Հայկական ժամանակ» - Ինչպե՞ս էք գնահատում ՅՅԴ-ՅՅՇ հանդիպումը: Ըստ Ձեզ, այն ինչպե՞ս կազդի նախընտրական պայքարի վրա:

Ա. Գեղամյան - Դրական եմ գնահատում: Այդ հանդիպումը ապացուցում է, որ մեր հայտարարությունը սեպտեմբերի յոթին թեպետ ոմանց կողմից սվիճներով ընդունվեց, բայց կյանքի կոչվեց: Գեղամյանի և ԱՄ կուսակցության բարձրացրած հարցերի շնորհիվ մարդիկ սկսեցին մտածել:

Վարող - Պարոն Գեղամյան, իսկ Տեր-Պետրոսյանի կամ ՅՅԴ-ի կողմից հանդիպման հրավեր ստացե՞լ էք կամ ինքներդ հրավիրե՞լ էք նրանց:

Ա. Գեղամյան - ՅՅԴ Գերագույն մարմնի կողմից, մասնավորապես, իմ կողմից հարգված Վահան Յովհաննիսյանը հինգշաբթի օրը ինձ

զանգահարեց և առաջարկեց հանդիպել: Համաձայնեցի, սակայն այն հետաձգեցի՝ շաբաթ օրվա մեր կոնֆերանսի պատճառով: Իսկ Բաբկեն Արարքցյանը դեռ երկու շաբաթ առաջ ինձ հեռախոսով տեղեկացրեց, որ Տեր-Պետրոսյանը ցանկանում է ինձ հետ հանդիպել: Մեկ օր հետո հանդիպեցի Արարքցյանին և ասացի, որ ես քաղաքական թիմ ունեմ և նմանատիպ հարցերն ընդհանուրի որոշմամբ եմ լուծվում, միայն իմ կուսակիցների հետ խորհրդակցելուց հետո կպատասխանեմ իրենց առաջարկին: Արդյունքում որոշեցինք, որ ես հանդիպեմ Տեր-Պետրոսյանի հետ: Հանդիպումը տևեց շուրջ երեք ժամ քսան րոպե: Ամենայն մանրամասնությամբ քննարկեցինք հայոց պետականության առջև ծառայած հարցերը: Որոշակի պայմանավորվածության չեկանք, որովհետև բազմաթիվ խնդիրների շուրջ տարբեր մոտեցումներ ունենք:

«Հայկական ժամանակ» - Պարոն Գեղամյան, այդուամենայնիվ, ընդունեք, որ ՀՀԴ-ՀՀՇ հանդիպումը «դժվար մարսվեց», նախագահական ընտրություններում դա որևէ կերպ կանդրադառնա՞ Յանրապետական թեկնածուի շանսերի վրա:

Ա. Գեղամյան - Ում համար դժվար մարսվեց, թող լուծողական խմի: Եթե ասեն, որ կազդի դրականորեն, նշանակում է կվիրավորեն ՀՀԴ-ին և Տեր-Պետրոսյանին, հակառակ դեպքում էլ կընկալվի, իբր, ես Ս. Սարգսյանին հաճոյանալ եմ ուզում: Իսկ մեր շահերից ելնելով կասեն, որ քաղաքական կուսակցությունների ոտքը քարին չի դիպչի այնքան ժամանակ, որքան կլսեն «Ազգային Միաբանություն կուսակցության» հորդորները:

Վարող - Նշեցիք, որ Տեր-Պետրոսյանի հետ շատ հարցերում համաձայնության չեկաք, այդ դեպքում ինչպե՞ս եք պատկերացնում 5-6 կամ ավել քաղաքական ուժերի համաձայնության գալու և միավորվելու խնդիրը, երբ երկու ուժերի դեպքում է դա կարծես անհնար:

Ա. Գեղամյան - Ձեր տրամադրությունը պետք չի գցել... Որովհետև Անվար Սադաթը և Իսրայելի վարչապետը, երբ Իսրայել-Եգիպտոս հարաբերությունները բանակցային այնպիսի փուլի էին հասցրել, որ

Եզիպտոսի հասարակությունը և քաղաքական ընտրանին ասում էր, որ եթե որևէ փաստաթուղթ ստորագրվի, որտեղ փոխզիջման անգամ հեռավոր հիշեցում լինի, ապա իրենք դա չեն ընդունի և ծանր հետևանքներ կառաջանա Անվար Սադաթի համար: Մինչդեռ Ամերիկայի միջամտությամբ խաղաղության պայմանագիր կնքվեց, իսկ Սադաթը ստացավ Նոբելյան մրցանակ: Այսինքն՝ մինչ բանակցության գնալը իրավիճակը լիակատար անհույս էր, սակայն հետո շրջադարձային փոփոխություն եղավ:

Iragir.am - Խոսեցիք Ղարաբաղի հարցում ներքին կոնսենսուսի մասին, նախագահական ընտրապայքարում բանավեճի հիմնաքարը Ղարաբաղի հարցն է լինելու: Նաև՝ Դուք ևս կարծում եք, որ մինչև չլուծվի Ղարաբաղի խնդիրը Հայաստանում մնացած խնդիրները լուծում չեն ստանա:

Ա. Գեղամյան - Իսկապես, Ղարաբաղի խնդիրը հիմնաքար հարց պետք է դարձնել: Ձեր երկու հարցերը իրար շաղկապված են: Քանի որ ԼՂ չլուծված հարցն է մեծապես հանգեցրել նրան, որ Հայաստանն այսօր շատ ծանր զարգացումների շեմին է կանգնած: Մենք մեկուսացված ենք տարածաշրջանում իրականացվող խոշորագույն ծրագրերից (Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի, Բաքու-Թբիլիսի-Մարաբդա-Ախալքալաք-Կարս երկաթուղու կառուցման ծրագրերից): Ռուս-վրացական կնճռոտ հարաբերությունների պատճառով արդեն երկրորդ տարին է, ինչ փակ է Վերին Լարսի անցակետը: Նաև այս պատճառով կիսամյակային արդյունքներով Հայաստանում արտահանման տեմպերը երկու անգամ նվազել են ներմուծման տեմպերից: Դրան գումարվում է Իրանի շուրջ ստեղծվող վտանգավոր զարգացումների կծիկը, որը անվտանգության տեսանկյունից կոժվարացնի բեռնափոխադրումներ իրականացնել Մեղրիի անցակետով: Այս ամբողջը պայմանավորված է ԼՂ հիմնահարցի չլուծված լինելու հանգամանքով: Եվ, կրկնում են, ովքեր էլ գան իշխանության, նրանք, ի սկզբանե, պետք է որդեգրած լինեն այս հարցի վերաբերյալ կոնսենսուսային դիրքորոշում:

«Ա1 +» - Կարծում եմ, բոլորն են հիշում՝ նախագահ Քոչարյանը ասել է, որ ընտրությունների ժամանակ Ղարաբաղի խնդրին անդրադառնալը անբարոյականություն է: Ինչպե՞ս կենկանքանք: Նաև նախագահական ընտրություններին ԱՄԿ-ն միայնա՞կ է գնալու կամ որևէ քաղաքական ուժ պաշտպանելու՞ է Ձեր թեկնածուին, հստակեցրե՞լ եք այս հարցերը:

Ա. Գեղամյան - Կարծում եմ, Ռ. Քոչարյանը վերանայել է իր այդ որոշումը: Ղա հիմնավորվում է նրանով, որ Տեր-Պետրոսյանի սեպտեմբերի 21-ի ելույթից հետո, կիրակնօրյա «360 աստիճանը» ամբողջությամբ նվիրված էր Տեր-Պետրոսյանի ելույթին, առավել ևս այն հարցերին, որտեղ արծարծվում էր Ղարաբաղի հարցը: Ես բացասական չեմ համարում այս քայլը: Քանի որ Քոչարյանը մարտավարական առումով իր տեսակետն ունի, ես՝ իմ: Կարծում եմ, իմնավելի շահեկան է, դրա մասին վկայում են այն բոլոր հարցադրումները, հարցազրույցները, որոնք տրվեցին իշխանության թևի ներկայացուցիչների կողմից՝ Վարդան Մինասիչի, վարչապետի, հանրապետականների և ՀՀԴ ներկայացուցիչների: Ինչ վերաբերում է ինձ վերագրվող «Նա գնաց մենակ» խորագրի ներքո մամուլի էջերում ընթացող քննարկումներին՝ նախագահական առաջիկա ընտրությունների կտրվածքով, ապա մեր կոնֆերանսի ընթացքում արդեն ասել եմ՝ խնդիր չի հետապնդվում նմանվել այն վագորդին, ով առաջնորդվում է՝ «Ֆինիշ չեմ հասնի, բայց գոնե կտաքանամ» կարգախոսով: Մենք նման խնդիր չենք հետապնդում: Իմ նպատակն է նախագահի թեկնածուի դերում ներկայացնել մեր երկրի առջև ծառայած առկա խնդիրները և առաջադրել լուծումներ, ոչ թե դրանք գաղտնիք պահել: Առաջիկայում կրկին հանդես կգամ ծավալուն վերլուծություններով: Իմ գործընկերները նպատակահարմար կհամարե՞ն և կկարևորե՞ն, որ այդ վերլուծությունները, իրողությունները իմ կողմից ներկայացվեն որպես նախագահի թեկնածուի առաջարկներ, ահա, սա է խնդիրը:

«Ա1 +» - Եթե, այնուամենայնիվ, նպատակահարմար չգտնեն, այդ

դեպքում Դուք կկողմնորոշվե՞ք ուն աջակցել:

Ա. Գեղամյան - Այդ դեպքում կփորձեմ աջակցել քաղաքական այն ուժին, որը նման վերլուծություններով հանդես կգա կամ հրապարակայնորեն կասի, որ, այո, Գեղամյանի ծրագրի հիմնադրույթները եզակի ճշմարտություն են և, ՀՀ նախագահի թեկնածուն կխոստանա, որ հետևելու է այդ հիմնադրույթներին:

Վարդո - Պարոն Գեղամյան, Ձեր «Հակաճգնաժամային ծրագիրը» անգամ ժողովուրդը չընդունեց և անցած խորհրդարանական ընտրություններին մոտ երկու տոկոս ձայն տվեց Ձեզ: Քաղաքական ուժերը ո՞նց պիտի այն ընդունեն:

Ա. Գեղամյան - Անժելայի՝ «Հայելի» ակումբի տնօրեն-վարդիլավն այն է, որ նա երբեմն-երբեմն ծուռ հայելիների աշխարհում է գտնվում... Որովհետև եթե խորհրդարանական անցած ընտրապայքարի գեթ մեկ հաղորդում ԱՄԿ-ի մասնակցությամբ նայեիք հեռուստատեսությամբ, ապա կտեսնեիք այն մարդաշատ հերթերը...

Վարդո - Իսկ արդյու՞նքը:

Ա.Գեղամյան - Հաշվապահի, ավելի ճիշտ հաշվետարի կեցվածք, Անժելա, մի ընդունեք, կարծում եմ, այնուամենայնիվ, որ դուք այսօր այստեղ հանդես եք գալիս որպես լրագրող և ոչ թե հաշվապահ: Այդ հերթերը գոյանում էին ընտրությունների նախօրեին, երբ խորհրդարան անցածների կողմից կաշառք էր բաժանվում: Իսկ ԱՄԿ-ն, անգամ իսկ համատարած ընտրախախտումների պայմաններում, հիսուն հազար ձայն է հավաքել, մոտավորապես 3.6 տոկոս:

«Հայկական ժամանակ» - Եթե Ձեր ասած վերլուծությունները ներկայացնի անգամ Ս. Սարգսյանը, կսատարե՞ք նրան:

Ա. Գեղամյան - Եթե ներկայացնի, ես կգնամ որևէ մամուլի ակումբ և հրապարակայնորեն ելույթ կունենամ՝ հիմնավորելով իմ հնարավոր պատասխանը: Ես և մեր կուսակցության անդամները քաղաքական այն գործիչներից չենք, որ առաջնորդվենք տվյալ պահի շահից

ելնելով: Ճիշտ է՝ մեր ասածները և՛ ընդդիմադիր, և՛ դիմադիր դաշտը սկզբից սվիններով է ընդունում, բայց նաև՝ հետո, գիտակցելով դրանց պահանջված լինելը, կատարում է:

«ԱՐ» հ/ը - Այսինքն՝ չեք բացառու՞մ Ս. Սարգսյանի թեկնածությունը պաշտպանելու տարբերակը:

Ա. Գեղամյան - Դարերից եկած մի ասույթ կա՝ երբեք մի ասա երբեք:

«Արմենիա» հ/ը - Ձեր ելույթում նշել եք նաև, որ Հանրապետականը կենսաթոշակների մատուցման իրագործում է Ձեր ծրագիրը: Ձեք կարծու՞մ, որ իրենց մոտ էլ է ստացվում իրագործել (հետագայում գուցե ավելի լավ, քան Դուք կիրագործեք) Ձեր ծրագիրը:

Ա. Գեղամյան - Ես դրա մեջ վատ բան չեմ տեսնում: Լինելով ընդդիմադիր գործիչ՝ այլ նպատակ եմ հետապնդում, այն է՝ վեր հանել երկիրը զարգացման ուղի դուրս բերելու առկա ռեզերվները, մատնանշել խնդիրների իրագործման ճանապարհները: Հանրապետականը հիշատակածս ռեսուրսները սկսել է օգտագործել և քննարկման է դրել 2.5 միլիարդանոց բյուջեի նախագիծ: Ի՞նչ է սրա համար պիտի տխրե՞մ: Կամ՝ ինչու՞ տխրեմ, եթե կենսաթոշակը ավելանալու է 60-65 տոկոսով: Կարևորը 500 հազար կենսաթոշակառուներից 300 հազարը օգտվելու են: Ուրիշ հարց է, որ մենք կարող ենք կենսաթոշակները 100 տոկոսով ավելացնել:

«ԱԼՍ» հ/ը - Մինչ կբարձրացնեն կենսաթոշակները, աննախադեպ գնաճ է գրանցվում:

Ա. Գեղամյան - Այս հարցադրմանը անդրադարձել եմ իմ ելույթում, նորից կկրկնեմ: 2007 թ. առաջին կիսամյակում պարենային նվազագույն զամբյուղը թանկացել է 16 տոկոսով: Սա այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ դրամն արժևորվել է 19.5 տոկոսով: Հայաստանում միջին հաշվով կյանքը թանկացել է 30-35 տոկոսով: Իրավիճակը շտկելու համար ստվերից հարկային դաշտ պետք է տեղափոխել շատուշատ ձեռնարկություններ: Եվ նախանշված 800-850 մլն դոլար բյուջեի ավելացումը պայ-

մանավորված է հենց մատնանշված գործոնի վերհանման փաստով:

«Նոյան տապան» - Կառավարության որոշման համաձայն՝ այդ 800-850 մլն դոլարով ավելացումը պայմանավորված է լինելու կենսաթոշակային հիմնադրամը պետբյուջեի մեջ ներառելով: Այսինքն՝ օլիգարխներին «թափ տալու» մեր հույսերը չե՞ն իրականանա:

Ա. Գեղամյան - Բյուջեի այսչափ ավելացումը պայմանավորված է լինելու երկու գործոնով: Մեկն արդեն նշել եմ, դա սովերայնության կրճատումն է, իսկ երկրորդ գործոնն այն է, որ, բյուջեի նման հավելաճ ապահովելու համար, անհրաժեշտ կլիներ ՀՆԱ-ի ավելացում մոտ 40 տոկոսով: Թերևս, ՀՆԱ-ի նման աճ չի ծրագրվում (խոսվում է 10-12 տոկոս ավելացման մասին):

arminfo.am - Վերջին հինգ տարվա ընթացքում ոչ Ղարաբաղի հարցը և ոչ էլ Հայաստանի ներքին հարցերը դրական փոփոխության չեն ենթարկվել: Դուք էլ այդ մասին միշտ քննադատաբար եք խոսել: Այսօր ի՞նչն է Ձեզ ստիպում միավորվել իշխանության հետ և նստել մեկ սեղանի շուրջ: Ինչպես նաև Ձեր հիշատակած ընդդիմադիր գործիչներից ոչ մեկը Ձեր այդ տեսակետը չի պաշտպանում:

Ա. Գեղամյան - Տեր-Պետրոսյանի հանդիպումը իշխանության, այսինքն՝ ՀՀ-ի հետ ցույց տվեց, որ իշխանության հետ առանձին հարցերի շուրջ միաբանվելու պահանջ կա: Ես այսօր էլ շարունակում եմ իշխանություններին քննադատել: Մեր կոնֆերանսում ներկայացրել եմ, որ Հայաստանում այս տարվա ընթացքում կատարված 434 բնակարանային գողության դեպքերից միայն 35 է բացահայտվել, 35 սպանություններից՝ 12-ը, դատարանների որոշումներով պետք է 21 մլրդ դրամ վերականգնվեր բյուջեում և անհատների մոտ, բայց չի կատարվել, ժողովրդական լեզվով ասած՝ «քցել են»: Նման շատ հարցեր արժարժվեցին իմ ելույթում, բայց միայն բանբասանքներին տուրք տվող լրագրողները չկարևորեցին դրանք:

arminfo.am - Ձեր կարծիքով՝ Հայաստանի այսօրվա իշխանությունը ցանկություն, կամք ունի՞ փոխել երկրում ստեղծված այս իրավիճակը:

Ա. Գեղամյան - Իմ մեջ հույս ներշնչեց հետևյալ փաստը. ԶԶ նախագահի առանձնասենյակում հարկային և մաքսային ղեկավարների խորհրդակցությունից անմիջապես հետո Վահրամ Բարսեղյանը՝ հարկային ծառայության պետը, նշեց, որ կա շինարարական մի ձեռնարկություն, որը 1 միլիարդ դրամից ավելի զանազան գործարքներ է իրականացրել, որի պարագայում հարկային մուտքերի տեսքով պետքուջե պիտի գնար նվազագույնը 350 մլն դրամ, մինչդեռ գնացել է 35 հազար դրամ: Մինչ օրս նման հայտարարություն չէինք լսել: Փաստը մենք պետք է իրատեսորեն արձանագրենք և խրախուսենք իրավիճակը փոխել ցանկացող իշխանությանը:

«Շանթ» հ/ը - ԱՄԿ-ն միշտ հանդես է եկել արմատական ընդդիմության կեցվածքով, իսկ այժմ նույն ընդդիմադիրների բառապաշարով՝ դարձել է կառուցողական ընդդիմություն: Ի՞նչն է պատճառը:

Ա. Գեղամյան - Պատճառ այն իրավիճակն է, որում հայտնվել է Զայաստանը և որի հետևանքով փոխվել է նաև Զայաստանի իրավիճակը: Զատկապես արտաքին քաղաքականության ճնշումների տեսանկյունից փոփոխություններն ակնհայտ են: Զայաստանը կարող է հայտնվել 100 տոկոսանոց շրջափակման մեջ: Իսկ այս պարագայում երկրի պետականության նավը խարխուլելը թշնամություն է: Մինչ այս՝ զարգացումներն այդքան վտանգավոր չէին: Չկար Ադրբեջան-Իրան պայմանավորվածությունը: Վրաստանն էլ արդեն «ՄԱՊ» ծրագրի շրջանակներում հայտ է ներկայացրել և 2008-ին կդառնա ՆԱՏՕ-ի անդամ: Լավ, բա եկեք հասկանանք՝ էս կուժն ու կուլան ու՞մ գլխին է կոտրվելու: Էլ չեմ խոսում վրացական էկոնոմիկայի զարգացման մասին, նաև այն մասին, որ այդ երկրի բյուջեի հարկերի և եկամուտների 40 տոկոսը պայմանավորված է Ադրբեջան-Վրաստան տնտեսական համագործակցությամբ: Վաղը, մյուս օրը հնարավոր է նրանց տնտեսական շահերը գերիշխեն դիցաբանական Զայասից և Քարթլուսից եկող ջերմությանը, և Վրաստանը, Աստված մի արասցե, փակի սահմանները: Ի՞նչ ենք անելու:

Վարող - Մտավախություն չունե՞ք, որ Ձեզ կառուցողական կեց-

վածքի համար կարող են մեղադրել իշխանության հետ համագործակցության մեջ:

Ա. Գեղամյան - Չոնոյի կայսր Դիոկլետիանոսը 305 թվականին հոժարական հրաժարվեց կայսր լինելուց: Երբ տարիներ անց նրան հարցրել են՝ ինչու է դա արել, պատասխանել է՝ եթե դուք տեսնեք, թե ինչ կաղամբ են աճեցնում, այդ հարցը ինձ չէք տա: Հիմա ես եմ ասում՝ ով ինձ կմեղադրի, թող գնա կաղամբ աճեցնի, բոստան ջրի կամ էլ արաղ քաշի, որովհետև ասողն անընդունակ է քաղաքական վերլուծություն անել:

«ՀՀ» օ/թ - Ինչպե՞ս եք գնահատում Ռուսաստանում տեղի ունեցող վերջին զարգացումները: Նկատի ունեն այն, որ ծրագրվում է , որ Ռուսաստանի ներկայիս նախագահը իր պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո դառնա վարչապետ:

Ա.Գեղամյան - Ռուսաստանում ընթացող զարգացումները դրական են գնահատում: Այն դասական օրինակ է. Ռուսաստանի քաղաքական ընտրանին ռուսաց պետականության, իշխանության հաջորդականության շահերը Պետդոմայի ընտրություններից առաջ դարձնում է իր գերակա խնդիրը, քանի որ ի դեմս իր նախագահի՝ Ռուսաստանը կրկին դառնում է աշխարհաքաղաքականությունը որոշող երկրներից մեկը: Եվ ճակատագրական սխալ կլիներ, եթե չորոշվեր իշխանության նման հաջորդականություն:

«Ա1 +» - Ըստ Ձեզ, Տեր-Պետրոսյանը կառաջադրի՞ իր թեկնածությունը:

Ա. Գեղամյան - Եկեք միասին տրամաբանենք: Տասը տարի շարունակ առաջին նախագահի կողմնակից մոլեռանդ քաղաքական գործիչները ինքնամոռաց ամեն ինչ արել են, որպեսզի Տեր-Պետրոսյանի շուրջ դրական իմիջ ստեղծեն: Հիշամետ մամուլի միջոցով փորձել են դաշտը մաքրել՝ միշտ հեզմանքով բարձրաձայնելով, որ չկա ընդդիմություն: Սեպտեմբերի 21-ի ելույթում իրենց բարձրացրած հարցերը ԱԺ-ում քանիցս հնչեցվել է հենց մեր՝ ԱՄԿ-ի կողմից: Այսօր ժամանակին մեր ասածները կրկնելով՝ նրանք փորձում են

դրանք ներկայացնել իբրև նոր, դարակազմիկ հարցադրումներ: Չի կարելի քաղաքական դաշտը միայն սևի ու սպիտակի մեջ ներկայացնել: Չի կարելի հասարակությանը, որը օդ ու ջրի պես միավորվելու կարիք ունի, պառակտել:

Վարող - Ձեր հակաճգնաժամային ծրագիրը արդյոք չէր ներկայացնում «սևը և սպիտակը»:

Ա. Գեղամյան - Բացարձակապես ոչ: Մենք ծրագրում խնդիրների լուծումներ ենք մատնանշում և ոչ թե ասում՝ կազմաքանդել է պետք երկիրը: Լևոն Տեր-Պետրոսյանը կառաջադրվի⁶, թե ոչ (հիմա սենսացիա են ասելու), դա կախված կլինի ՀՀ վարչապետի պաշտոնական առաջիկա այցերից: Արդեն 13-14 տարի է, ինչ Ղարաբաղի հարցի կարգավորման վերաբերյալ բանակցային գործընթացներ են իրականանում: Վարվող բանակցություններում առավել ակտիվ մասնակից կողմերը Ֆրանսիան է, ԱՄՆ-ն և Ռուսաստանը: Եթե բանակցային գործընթացը առայսօր չի վիժեցվել և արդյունքում, բարեբախտաբար, չի վերածվել պատերազմի, կնշանակի գերիզոր պետությունները Ղարաբաղի հարցի ստատուս քվոն, այսպես թե այնպես, ընդունել են: Կնշանակի, Եվրախորհուրդը, որը միաժամանակ անդամագրում է և՛ Հայաստանին, և՛ Ադրբեյջանին, ևս ընդունել է ստատուս քվոն: Ստեղծված իրավիճակում աշխարհաքաղաքական լուրջ երկրաշարժեր կլինեն, եթե այս գործում չպահպանվի հաջորդականությունը: Ամեն բան իր տեղը կդրվի հոկտեմբերի 20-25-ից հետո, երբ լինեն պաշտոնական կարևոր այցելություններ, որոնք էլ կորոշեն առաջադրվել-չառաջադրվելու հարցը:

«Հայկական ժամանակ» օ/թ - Դուք դրականորեն գնահատեցիք Ռուսաստանում ընթացող զարգացումները: Ստավախություն չունե՞ք, որ այն կտեղափոխվի նաև Հայաստան: Մանավանդ որ ԱԺ նախագահը արդեն հայտարարել է, որ չի կարելի բացառել Ռ. Քոչարյանի վարչապետ դառնալու սցենարը:

⁶«Հայելի», 3. X. 2007:

Ա. Գեղամյան - Կապրենք, կտեսնենք:

**«ՄԵՂՔԻ ԻՐԵՆՑ ԲԱԺԻՆՆ ՈՒՆԵՆ ՄԵՐ
ԱՅՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԸ, ՈՐՈՆՔ
ԳԵՐԱԴԱՍԵՑԻՆ ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔԸ»**

Ուղիղ կապ. Արտաշես Գեղամյան: ԱՄԿ նախագահին ուղղված հարցերն առնչվում էին ներքաղաքական, ինչպես նաև արտաքին քաղաքական հարցերին:

**«ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՀԱՆԳԻՍՏ ՉԻ ՏԱԼԻՍ «ԴԵՂԻՆԻ»
ԳԵՐԻ ԴԱՐՁԱԾ ԳՐՁԱԿՆԵՐԻՆ»**

-Ինչո՞վ կբացատրեք, որ, ի տարբերություն շատ կուսակցությունների, «Ազգային Միաբանություն կուսակցության» քաղաքական թիւնը Ազգային ժողովի կաշառված խայտառակ ընտրություններից հետո էլ ավելի համախմբվեց, դարձավ էլ ավելի վճռական, ինչում համոզվեցինք սեպտեմբերի 29-ին տեղի ունեցած Ձեր կոնֆերանսում (Գագիկ Սողոմոնյան, իրավաբան):

-Նախ, շնորհակալություն ձեր նուրբ ու ճշգրիտ դիտարկման համար: Այստեղ պատճառները մի քանիսն են: Առաջին. «Ազգային Միաբանություն կուսակցության» (ԱՄԿ) անդամների գերակշռող մասը, հատկապես ղեկավար կորիզը, դա նույն գաղափարները, նույն արժեհամակարգը ընդունողների և կրողների քաղաքական թիւն է: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ կուսակցությունն իր ստեղծման առաջին իսկ օրվանից՝ լինելով ընդգծված ընդդիմադիր ուժ թե՛ նախորդ, և թե՛ գործող իշխանությունների, չնայած վերջիններիս թա-

փած ջանքերի, այդպես էլ մնաց միաբան: Օրերս էլ իշխանական խոսափող հանդիսացող առանձին լրատվամիջոցներ փորձում էին կասկածի մթնոլորտ սերմանել մեզանում, նսեմացնել իմ գործընկերների ակնհայտ բարձր պրոֆեսիոնալ հատկանիշները, անտեսել նրանց կյանքի հարուստ փորձը: Դատեք ինքներդ. ԱՄԿ նախագահի տեղակալներ Ալեքսան Կարապետյանը և Գագիկ Թադևոսյանը դեռ տասնամյակներ առաջ եղել են հանրապետության շինարարական ամենահզոր հսկայի՝ «Երևանշինի» ղեկավար կազմում, Կորյուն Առաքելյանը և Սարգիս Մուրադխանյանը՝ Իջևանի և 26 կոմիսարների շրջանների ղեկավար կազմում, իսկ մնան բարձր պաշտոններ ստանձնելու համար այն տարիներին խորը գիտելիքների պաշար պետք է ունենայիր, կյանքի և աշխատանքի որոշակի ճանապարհ անցած լինեիր: Նույնը կարելի է ասել մեր կուսակցության շատ և շատ նվիրյալների մասին: Իրողություն, որը հանգիստ չի տալիս «դեղինի» գերի դարձած գրչակներին: Երկրորդ (իսկ միգուցե իր կարևորությամբ՝ առաջին). կա անդավաճան մարդկանց մի տեսակ, որի վարքագիծը պայմանավորված չէ ո՛չ երկրի իշխանություններով, ո՛չ էլ երկրում հաստատված հասարակական-քաղաքական համակարգով:

- Արդեն 60 տարեկան եմ, իրավաբան: Ես շատ եմ հետևել Ձեր ելույթներին, կյանքում շատ բան եմ տեսել և կասեմ, որ Դուք բոլոր հարցերում հազար անգամ ճիշտ եք: Աստված տա բոլորը միավորվեն-միաբանվեն Ձեր ծրագրի շուրջ, հակառակ դեպքում մեր ժողովրդի գլխին մեծ փորձանք է կախված:

- Շնորհակալություն ձեր տված գնահատականի համար: Ես ամբողջությամբ բաժանում եմ ձեր մտահոգությունները, ինքս էլ համոզված եմ, որ այս տազնապահարույց ժամանակներում մեր ժողովրդին հիմա, ավելի քան երբևէ, անհրաժեշտ է միաբանվել ...

«ԿԱՍԱՅԱԿԱՆՈՐԵՆ ԲԱՐՉՐԱՅՐԵԼ ԵՆ ԳՆԵՐԸ»

- Մինչև ե՞րբ պետք է գների բարձրացում լինի: Միակ բանը, որ կարողանում էի նորմալ ուտել, դա հացն էր, բայց դրա գինն էլ բարձրացավ: Յուղի ու կարագի մասին էլ չեմ խոսում, ձեթ ենք օգտագործում, բայց գինն էլ բարձրացավ: Ինչքա՞ն կարելի է դիմանալ, մինչև մեռնե՞լը: 40 տարի իզուր եմ աշխատել (նախկին մանկավարժ, կենսաթոշակառու Սարգսյան):

- Դուք միանգամայն իրավացի եք: Հայաստանի Հանրապետության ազգաբնակչության զգալի մասի սոցիալական վիճակը գնալով վատթարանում է, հատկապես անօգնական դրության մեջ են հայտնվել ավելի քան 500 հազար թոշակառուներ: Փորձեմ ձեր հարցին հնարավորինս հիմնավորված պատասխաններ տալ: Առաջին անհրաժետության սննդամթերքի թանկացման ետևում կան տարաբնույթ չարաշահումներ: Իշխանական քարոզչամեքենան փորձում է մեզ համոզել, որ պարենի համաշխարհային շուկաներում արձանագրվել է մի շարք ապրանքատեսակների գնաճ: Այո, դա այդպես է, սակայն պետք չէ ժողովրդին մոլորության մեջ զցել, քանի որ այդ թանկացումներն արձանագրվել են վերջին մեկ-մեկուկես ամիսների ընթացքում և պայմանավորված են 2007 թ. գյուղմթերքների սպասվելիք բերքի սակավության հետ (մասնավորապես՝ ցորենի, բուսական ծագում ունեցող յուղերի հունք հանդիսացող գյուղմթերքների և այլն): Սակայն իշխանամերձ շրջաններին հարող մեր «խելոքները», պարենի ներկրման շուկայում մենաշնորհային դիրք զբաղեցնողները կամայականորեն բարձրացրել են այն ապրանքատեսակների գները, որոնք գնվել են դեռ մինչև թանկացումները: Մասնավորապես, թանկացրել են 2007 թ. առաջին կիսամյակում էժան գներով ձեռք բերված և ներկրված 135 հազար 869 տոննա հացահատիկի գները, 14 հազար 606 տոննա բուսական յուղի, 1471 տոննա կարագի: Իսկ ինչո՞ւ է նրանց մոտ այդքան դյուրին ստացվում գների միաժամանակյա թանկացումը: Պատասխանը մեկն է, որովհետև նրանք ունեն մենաշնորհային դիրքեր հանրապետության պարենի շուկայում: Հանգամանք, որը բացառում է մրցակցություն և դրա արդյունքում ազատ

շուկային ներհատուկ գնագոյացում: Ահա հենց սրանով է պայմանավորված վերջին շրջանում գների բացահայտ թանկացման փաստը: Իսկ պարենի համաշխարհային շուկաներում գների բարձրացման արձագանքները մենք էլ ավելի ցավազին կզգանք 2007 թ. տարեվերջին և 2008 թ.: Իմ բերած փաստարկները քաղաքական կամք դրսևորելու դեպքում կարելի է շատ հեշտ ստուգել և դրանց առաջն առնել: Բավական է մաքսային ծառայությունից բարձրացվեն թե Ֆինլանդիայից կամ Նոր Զելանդիայից կարագի և յուղի ինչ խմբաքանակներ են ներկրվել Հայաստան, երբ են ներկրվել և ինչ գներով, նույնը հացահատիկի, բուսական յուղի, անգամ իսկ օճառի: Հարկ են համարում նաև հիշեցնել, որ 2007 թ. առաջին կիսամյակում 2006 թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ դուլարը դրամի համեմատ արժեզրկվել է 19,63 տոկոսով և այս իրողության արդյունքում ներկրողներն ի սկզբանե դրամական արտահայտությամբ ապրանքը գնելիս շուրջ 20-ով ավելի պակաս են վճարել: Այստեղ, փաստորեն, մենք ամրագրենք, որ մեր հայրենյաց օլիգարխ ներկրողները ստացել են երաշխավորված գերշահույթներ արդեն իսկ ներկրվող ապրանքները գնելիս, որոնք, անկասկած, համարժեքորեն չեն հարկվել: Երբ անցած ընտրություններին տղերքը փեշերով ընտրակաշառք էին բաժանում, բա չէիք մտածում, որ հետո այդ փողերը ժողովրդին կեղեքելով են հետ բերելու: Մի՞թե նախապես պարզ չէր, որ կրկին ժողովրդին են «նաշկելու», թող ներվի ինձ այս արտահայտությունը:

Ձեր ուշադրությունը կցանկանայի հրավիրել մեկ այլ իրողության վրա նույնպես: 2007 թ. երկրորդ եռամսյակում Հայաստանում նվազագույն պարենային զանբյուղի արժեքը կազմել է 23702 դրամ, նվազագույն սպառողական զանբյուղի արժեքը՝ 36739 դրամ: 2006 թ. նույն ժամանակաշրջանում նվազագույն զանբյուղների գները կազմել են 20437 և 31677 դրամ կամ մեկ տարվա ընթացքում արձանագրվել է դրանց թանկացումը 16%-ով: Ինչպես վերը նշեցի, դուլարի արժեզրկումը կամ դրամի արժևորումն էլ կազմել է 19,63%: Ըստ որում, դրամի արժևորումը ուղեկցվել է դրա գնողունակության շոշափելի անկմամբ, ինչն էլ տնտեսու-

թյան անառողջ լինելու խոսու՛ն վկայությունն է: Հաշվի առնելով նվազագույն պարենային և սպառողական զամբյուղների բաղկացուցիչ մասերի ծագումը (տեղական արտադրանք կամ ներկրված) կարելի է առանց վարանելու պնդել, որ անցած կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արձանագրվել է թաքնված գնաճ նվազագույնը 30%-ի սահմաններում: Մինչդեռ մենք լավ հիշում ենք, որ օրենքներով («Հայաստանի Հանրապետության 2007 թ. պետական բյուջեի մասին», «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի 2007 թ. դրամավարկային քաղաքականության մասին») ամրագրված է, որ 2007 թ. գնաճը չպետք է գերազանցի 4+ 1,5% սահմանը: Այլ կերպ ասած՝ մենք գործ ունենք երկու կարևորագույն օրենքների կոպիտ խախտման փաստերի հետ, ինչը հանգեցրել է հարյուր հազարավոր մարդկանց սոցիալական վիճակի կտրուկ ծանրացմանը, հատկապես մեր վաստակաշատ թոշակառուների և անձամբ Ձեր, հարգարժան տիկին Սարգսյան:

Ամփոփելով խոսքս, նշեմ, այլևս հրամայական պահանջ է, որ մենք վերանայենք երկրում իրականացվող թե՛ տնտեսական, թե՛ դրամավարկային քաղաքականությունը: Մի բան ակնհայտ է, որ երկրի տնտեսության նման վիճակում հայտնվելը արդյունք է այն մտածելակերպի, որը գերիշխում է երկրի կառավարիչների մոտ վերջին տաս տարիների ընթացքում: Պարզից էլ պարզ է, որ անհրաժեշտ են արմատական բարեփոխումներ, ըստ որում, առաջին հերթին իշխանավորների մոտեցումների, ինչու չէ, նաև ընդդիմության մտածողության մեջ: Անհրաժեշտ են այնպիսի բարեփոխումներ, որոնք կերաշխավորեն երկրի տնտեսության ճեղքումնային զարգացումը բարձր տեխնոլոգիաների, ինովացիոն տեխնոլոգիաների, աշխատանքի ամենաառաջավոր կազմակերպման հիման վրա: Դրան հասնելու, թերևս, եզակի հնարավորություն կբացվի մեր առաջ 2008 թ. նախագահական ընտրությունների ժամանակ: Եվ վերջում, ոչ թե որպես հանդիմանանք, այլ պարզապես որպես կարծիք նշեմ, որ ստեղծված սոցիալական ծանր վիճակի համար մեղքի իրենց բաժինն ունեն մեր այն հայրենակիցները, որոնք ԱԺ անցած ընտրությունների ժամանակ ծրագրային, համակարգված մոտեցումներին և նրանց կրողներին սա-

տարելու փոխարեն գերադասեցին ընտրակաշառքը:

«ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՀՁՈՐԱՑՈՒՄԸ ԿԵՆՍԱԿԱՆՈՐԵՆ
ԲԽՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՇԱՀԵՐԻՑ»

Ինչպե՞ս եք գնահատում ՌԴ-ում Զուբկովի նշանակումը վարչապետի պաշտոնում և Պուտինի համաձայնությունը Ռուսաստանի Պետական Դումայի առաջիկա ընտրություններում գլխավորել «Միասնական Ռուսաստան»-ի ընտրացուցակը (Սիլվա Մկրտչյան):

- Ես շատ դրական եմ վերաբերվում քաղաքական այն զարգացումներին, որոնք մեր օրերին ընթանում են Ռուսաստանի Դաշնությունում: Բնական է, հարց է ծագում, իսկ իմ այս վերաբերմունքը ինչո՞վ է պայմանավորված: Վերստին հիշենք, թե ի՞նչ վիճակում Վլադիմիր Պուտինը ստանձնեց Ռուսաստանի Դաշնության կառավարման դեկր: Մի քանի ցուցանիշ: ՌԴ համախառն ներքին արդյունքը 1999-ին կազմում էր ընդամենը 200 մլրդ դոլար, ՌԴ Կենտրոնական բանկի արտարժույթի և ոսկու պահուստները կազմում էին ընդամենը 15 մլրդ դոլար, երկիրը «թաղված» էր պարտքերի մեջ, մասնավորապես, վարկատուների՝ «Փարիզի ակումբին», «Հռոմի ակումբին», Համաշխարհային բանկին, Արժույթի Միջազգային հիմնադրամին: Կուտակված պարտքերը գերազանցում էին 160 մլրդ դոլարը: Իսկ ինչպիսին է այսօրվա Ռուսաստանը. ՀՆԱ-ն, որ իր ծավալով աշխարհի 9-րդն է գնողունակության ընդունակության պարիտետով (паритет покупательной способности), կազմում է 1 տրլն 200 մլրդ դոլար, արտարժույթի և ոսկու պահուստները 2007 թ. հունիսի 1-ի դրությամբ կազմել են ավելի քան 417 մլրդ դոլար, վերականգնողական հիմնադրամը (стабилизационный фонд) վաղուց հատել է 200 մլրդ դոլարի սահմանագիծը: Ես էլ չեմ խոսում Ռուսաստանի օրըստօրե աժող կշռի և դերակատարության մասին համաշխարհային ցանկացած լուրջ գործընթացներում: Այս ամենը Պուտինի նախա-

գահության տարիներին իրականացվող ներքին և արտաքին քաղաքականությունների արդյունքն է: Երկիրն ապրում է ակնհայտ վերընթաց, որը հրամայական է դարձրել վարվող քաղաքականության հաջորդականության ապահովման խնդիրը: Ահա հենց սրա գիտակցումն էր, որ Ռուսաստանի քաղաքական ընտրանին գտավ ամենաարդյունավետ որոշումը, այն է՝ նախանշված հավակնոտ ծրագրերի երաշխավորը դարձնել դրանց հեղինակին՝ Վլադիմիր Պուտինին, ընձեռնելով հնարավորություն Պետական Դումայի առաջիկա ընտրություններում «Եղինայա Ռոսիայի» հաղթանակի դեպքում ստանձնել ՌԴ-ի վարչապետի պաշտոնը: Ինքնին հասկանալի է, որ գործող վարչապետ Վիկտոր Ջուբկովը, ինչու չէ, նաև Պուտինի հավատարիմ գինակիցներ՝ Բորիս Գրիզլովը, Սերգեյ Սիրոնովը, Սերգեյ Իվանովը, Դմիտրի Մեդվեդևը այս հարցին մոտենում են պետական խոշոր գործիչներին ներհատուկ պատասխանատվությամբ, ինչի մասին է վկայում նրանց չթուլացող եռանդով աշխատելու փաստը: Եվ պատահական չէ, որ անգամ իսկ Ռուսաստանի նկատմամբ բարեկամական զգացմունքներով, մեղմ ասած, չփայլող արևմտյան հեղինակավոր լրատվամիջոցները, անցկացնելով պատմական զուգահեռներ, Վլադիմիր Պուտինին համեմատում են ԱՄՆ Երբեմնի ամենանշանավոր նախագահ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի կամ Պետրոս առաջին Ռուսաց թագավորի, կամ Եկատերինա Մեծ կայսրուհու հետ: Նշեն նաև, որ Ռուսաստանի Դաշնության հզորացումը կենսականորեն բխում է հայոց պետականության անրապնդման շահերից: Ըստ որում, օգտվելով առիթից սրտանց շնորհավորում են Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինին նրա ծննդյան 55 ամյակի առթիվ:

Չ.Գ. - «Իսկական Իրավունքը» միանում է այդ շնորհավորանքներին:

Վարեց Ռուսլան Թաթոյանը
(շարունակելի)

**«ՆՐԱՆՑ ՊԵՏՔ ԵՆ ՄԵԾ ՑՆՑՈՒՄՆԵՐ,
ՄԵՁ՝ ՄԵԾ ՀԱՅԱՍՏԱՆ»**

Մեր թերթի նախորդ համարում ներկայացրել էինք ԱՄԿ նախագահ Արտաշես Գեղամյանի հետ կայացած «Ուղիղ կապի» առաջին մասը, իսկ այսօր ներկայացնում ենք երկրորդ մասը:

«ՈՍԱՆՔ ԻՍ ԶՈՒՄՊ ԿԵՑՎԱԾՔԻՑ ԽԻՍՏ ԴՅՈՒՐԱԳՐԳԻՌ ԵՆ ԴԱՌԵԼ»

-Մենք Ձեզ շատ ենք սիրում, Ձեր գաղափարները հայ ազգի համար ամենակատարյալն են, մանավանդ Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորվելու հարցում: Նախագահական առաջիկա ընտրություններում Ձեր թեկնածությունը առաջադրելու՞ էք:

-Հավանաբար, դուք ի նկատի ունեք սեպտեմբերի 7-ին ընդունված ԱՄԿ նախագահության հայտարարությունը, որտեղ կոչ է արվել 2008 թ. նախագահական ընտրություններում հայտ ներկայացնելու մտադրություն ունեցող գործիչներին՝ թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր դաշտից, հանդիպել կլոր սեղանի շուրջ և գալ կոնսենսուսային համաձայնության՝ ԼՂ հիմնահարցի խաղաղ կարգավորման ուղղությամբ մոտեցումների հարցում: Մենք գտնում ենք, որ անհրաժեշտ է ընդունել միասնական բանաձև, որը զերծ կպահի և անիմաստ կդարձնի խնդրո առարկայի նկատմամբ դրսի շահագրգիռ ուժերի

միջամտությունը նախագահական առաջիկա ընտրությունների ժամանակ: Մեր այս առաջարկի արձագանքը երկար սպասեցնել չըտվեց: Ոմանք, չգիտես ինչու, հիշեցին դեռ 1999 ԱԺ խմբակցությունների կողմից ԼՂ հարցի կապակցությամբ ընդունած հայտարարությունը, փաստաթուղթ, որը մենք կարևորում ենք, սակայն որի տակ բացակայում են այս պահին նախագահի թեկնածու առաջադրվելու մտադրություն հայտնած առնվազն 4 գործիչների ստորագրությունները (Դավիթ Չակոբյան, Արամ Կարապետյան, Լևոն Տեր-Պետրոսյան, Տիգրան Կարապետյան): Որոշներն էլ, խնդիր ունենալով վիժեցնել մեր առաջարկը, իրենք իրենց հակասեցին, ասելով, որ ԼՂ-ի հարցի առնչությամբ լինելու են շահարկումներ (մինչդեռ մեր առաջարկն ուղղված էր ճիշտ այդ հնարավոր շահարկումների բացառմանը), արտահայտվեցին նաև ոչ համոզիչ այլ կարծիքներ: Այս զարգացումները, անկեղծ ասած, ինձ համար շատ հարցերի պատասխանները տվեցին: Մասնավորապես, նախագահականի խոսափողի համարում ունեցող ռուսալեզու թերթը, ի զարմանս ինձ, հասավ այնտեղ, որ իր իսկ սեփական փորձից ելնելով ավետեց՝ թե իշխանություններն ինձ շահագրգռել էին, որ ես հանդես գամ մման նախածեռնությամբ: Ասել կուզի, որ ի՞նչ, իշխանությունները շահագրգռված են, որ նախագահական ընտրությունների քարոզարշավի ընթացքում լինեն շահարկումներ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման գործում: Իրավամբ, ոմանք իմ զուսպ կեցվածքից խիստ ոյուրագրգիռ են դարձել: Չանգամանք, որը, անշուշտ, ինձ ոգևորում է: Լավ, եթե իշխանություններն ինձ շահագրգռել են, այդ թերթն էլ ակնհայտորեն լինելով իշխանության խոսափողը, ինչո՞ւ է իշխանություններին, ըստ էության, մեղադրում կաշառատվության մեջ, չէ՞ որ առանց դրա էլ նրանց մեղքերը հասարակության աչքում բազում են: Ինչո՞ւ այդ նույն «սկզբունքայնությամբ» իշխանական լրատվամիջոցները չեն դատափետում պարոն Ռ.Քոչարյանի միջնորդավորված (ՀՅԴ-ի միջոցով) հանդիպումը Լ.Տեր-Պետրոսյանի հետ: Չանդիպում, որը ես հակված եմ դրական գնահատել: Չէ՞ որ

մեր հայտարարության մեխը ճիշտ դրանում էր, կազմակերպել ընդդիմադիր և իշխանական ուժերի հանդիպում կլոր սեղանի շուրջ: Չեմ ուզում հավատալ, որ այս ամենը հետապնդում է գեթ մեկ խնդիր՝ ամենլ ամենը, որ նախագահական առաջիկա ընտրություններում հաղթողը, լինի ընդդիմադիր կամ իշխանական ճամբարից, պաշտոնը ստանձնի շատ խոցելի լինելու պարագայում: Չէ՞ որ այդ դեպքում նրա վզով հեշտ, դյուրին կլինի փաթաթել դրսում կամ ստվերում նյութով ոչ ազգանպաստ որոշումներ: Ուզում եմ հավատալ, որ այս դեպքում մենք գործ ունենք ինքնագործունեության, պրոֆեսիոնալիզմի պակասի հետ կամ որևէ այլ կենտրոնից դեկավարվող փաստի առկայության, այլ ոչ կանխամտածված դավադրության, այն էլ՝ ճիշտ իրենց իսկ նեղ շրջապատում:

Կարծում եմ՝ եկել է սթափվելու ժամանակը:

«ԱՎԱՂ, ԻՄ ԱՍԵՆԱՍՌԱՅԼ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻՑ ՇԱՏԵՐԸ
ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԴԱՌՆՈՒՄ»

-Ընտրություններից ընտրություն մեծ լսարաններում ելույթներ եք ունեցել և արդարացիորեն, քարը քարին չթողնելով, ներկայացրել եք այս վարչախմբի «քաջագործությունները»: Հիմա ինչո՞ւ եք առանցքային բոլոր քաղաքական դեմքերին կոչ անում միավորվել, դրանց հետ խորհրդակցել, համագործակցել: Միայն մի հարցում կարելի է համագործակցել, անցկացնել արդար ընտրություններ: Եթե դուք ուզում եք Ս.Սարգսյանին սատարել, անկեղծ ասացեք (Մարգարիտա):

-Ձեր դիտարկումը միանգամայն տեղին է: Այո, անցած 12 տարիների ընթացքում ես ոչ թե ընտրությունից ընտրություն, այլ մշտապես ունեցել եմ բազում ելույթներ, հարցազրույցներ: Եվ այդ ամենն ամփոփված է իմ հեղինակած ստվարածավալ (1030 էջանոց.- *խմբ.*) ժողովածուում, ինչպես նաև միջազգային ամենահեղինակավոր ատյաններում ունեցել եմ 21 ելույթ, որը նույնպես լույս է տեսել

առանձին գրքով և, վերջապես, 2007 թ. հրատարակվել է իմ հեղինակած հակաճգնաժամային ծրագիրը: Եվ դուք երիցս ճշմարիտ եք, ասելով, որ ես քննադատելով ոչ միայն գործող, այլև նախորդ իշխանություններին, այո, քարը քարին չեմ թողել ... Եվ, ավա՛ղ, իմ ամենամայլ կանխատեսումներից շատերը ներկայումս իրականություն են դարձել: Այսօր մենք տանուլ ենք տալիս հարևան Ադրբեջանի հետ, մասնավորապես, տնտեսական մրցակցությունում: Բերեմ մի քանի ցուցանիշ: 2007 թ. հունվար-ապրիլին Հայաստանում արտադրված արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 580,2 մլն դոլար, Ադրբեջանում 11,7 անգամ ավելի՝ 6 մլրդ 748 հազար դոլար: Ներդրումները հիմնական կապիտալում Հայաստանում կազմել են 133,55 մլն դոլար, Ադրբեջանում 12 անգամ ավելի՝ 1 մլրդ 870 մլն դոլար: Բեռների առաքումը Հայաստանում կազմել է 2,2 մլն տոննա, Ադրբեջանում 16 անգամ ավելի՝ 35,6 մլն տոննա: Համախառն ներքին արդյունքի աճի տեմպը Հայաստանում կազմել է 110,2 %, Ադրբեջանում՝ 136,2%: Բնակչության ծախսերը Հայաստանում ապահովել են 120,6% աճի տեմպ, Ադրբեջանում՝ 133,5%: Գործազուրկների տեսակարար կշիռը աշխատունակ բնակչության թվում Հայաստանում կազմել է 7,2%, Ադրբեջանում՝ 1,2%: Ոմանք կասեն, որ Ադրբեջանի զարգացման առաջընթաց տեմպերը մեծապես պայմանավորված են նավթի և գազի արտահանման գործոնով: Այո, դա այդպես է: Սակայն ճիշտ այդ հանգամանքը և այն, որ Ադրբեջանում նավթի ու գազի հետազոտված պաշարները, արտահանումը գործող մակարդակի վրա պահպանելով, հնարավորություն կընձեռի Ադրբեջանին նվազագույնը 25-30 տարի այս ոլորտներից ստանալ գերշահույթներ, ինչն էլ, կասկածից վեր է, կխթանի նաև այդ երկրի տնտեսության այլ ճյուղերի զարգացումը: Ի՞նչ, այս հարցերը չպետք է մտահոգեն մեզ: Կամ, արդյոք մեզ չպետք է մտահոգի այն, որ 2007 թ. օգոստոս ամսին մեր հարևան և բարեկամ երկրի՝ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեջադը Ադրբեջան կատարած պաշտոնական այցի ժամանակ հայտարարել էր.

«Ադրբեջանի զարգացումը՝ դա Իրանի զարգացումն է, ինչպես նաև Իրանի զարգացումը՝ դա Ադրբեջանի զարգացումն է...»: Նա հայտարարել էր իր համերաշխությունը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորմանը՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքի ապահովման պայմանում: Ավելին, Ճիշտ նույն օգոստոս ամսին կայացավ Թուրքիայի էներգետիկայի նախարարի պաշտոնական այցը Իրան: Այդ այցի արդյունքում երկու երկրների միջև կնքվեց պայմանագիր, համաձայն որի կողմերը ձեռնամուխ են լինելու Իրան-Թուրքիա-Հարավային Եվրոպա գազատարի շինարարությանը: Գազատարի շահագործումից Իրանից Եվրոպա, Թուրքիայի վրայով, կարտահանվի տարեկան կտրվածքով 25-30 մլրդ խորանարդ մետր բնական գազ, ինչն էլ իր հերթին կնպաստի այդ երկու երկրների Իրան-Թուրքիա, թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական մերձեցմանը՝ մեզ համար դրանից բխող անցանկալի հետևանքներով: Ես չեմ ուզում մեկ անգամ էլ մանրամասնեմ արդեն իսկ ձևավորված Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան տնտեսական և ռազմաքաղաքական դաշինքի հնարավոր ոչ հայանպաստ դրսևորումների մասին: Ահա, գիտակցելով այս օրըստօրե ահագնացող մարտահրավերների վտանգավոր զարգացումները մեր երկրի համար, հատկապես վերջին շրջանում, բնականաբար, դու պարտավոր ես վերանայել քո քաղաքական մոտեցումները: Այո, պարտավոր ես գործընկերներիդ և իշխանությունների հետ նստել կլոր սեղանի շուրջ ու մեկտեղել ջանքերը՝ խնդիր ունենալով մշակել ազգը, երկիրը վերահաս վտանգներից զերծ պահելու ուղիները: Նպատակը մեկն է՝ հանրապետության առջև ծառայած մարտահրավերների գիտակցումից դրդված անել ամենը, որ Հայաստանի քաղաքական ընտրանին միաբանվի, որ վերջ տրվի քաղաքական դաշտը «սև» ու «սպիտակի» բաժանելու գործընթացին, որ վերջ տրվի թե՛ իշխանությունների որոշակի հատվածի, այո՛, որոշակի, թե՛ ընդդիմության որոշակի հատվածի այն գործընթացներին, ինչի արդյունքում հայ մարդուն փորձում են զրկել այդ «սևին» ու «սպիտակին» այլընտրանք ունենալու բնականոն

հնարավորությունից: Ինչ վերաբերում է նախագահական առաջիկա ընտրություններում Սերժ Սարգսյանին կամ Լևոն Տեր-Պետրոսյանին, կամ սեփական անձս (առաջադրվելու դեպքում) պաշտպանել-չպաշտպանելուն, ապա իմ նախապատվությունն այս հարցում արտահայտեմ մեջբերումով: 1906 թ. մայիսի 10-ին ժողովրդական Դումային ներկայացնելով իր իսկ կողմից հեղինակած բարեփոխումների ծրագիրը, Ռուսաստանի վարչապետ Պյոտր Արկադևիչ Ստոլիպինն ասել է. «Սենք առաջարկում ենք Ձեզ համեստ, բայց ճշմարիտ ճանապարհ: Պետականության հակառակորդները կցանկանային ընտրել արմատականության ճանապարհը... նրանց պետք են մեծ ցնցումներ, մեզ պետք է մեծ Ռուսաստան»: Ահա այդպես էլ ընկալեք այսօրվա իմ քաղաքական կողմնորոշումները: Եթե ոմանք գիտակցաբար կամ անգիտակցաբար, ըստ որում, թե՛ իշխանական թևից, թե՛ ընդդիմադիր, երկիրը փորձում են զցել մեծ փորձությունների հորձանուտը, ապա «Ազգային Միաբանությունը» դրան դեմ է և, եթե նրանց անհրաժեշտ են մեծ ցնցումներ, մեզ՝ Մեծ Հայաստան: Եվ կուսակցության որդեգրած, մեր պետության համար պահանջված, այո, միակ և ճշմարիտ ճանապարհից, մեզ չեն կարողանա շեղել. ոչ հերյուրանքները, ոչ շանտաժը չեն կարող ազդեցություն ունենալ մեր որդեգրած քաղաքականության վրա: Ժամանակն է, որ տարբեր տրամաչափի մեր քաղաքական ախոյանները գիտակցեն մի պարզ ճշմարտություն, ժողովրդական լեզվով ասած՝ ժամանակին գարշահոտող, սակայն այժմ չորացած հայտնի նյութը մեր մաքուր մարմնին չի կաչի:

- *Հարցս շարունակեմ. Դուք նշել եք, որ Լևոն Տեր-Պետրոսյանի առաջադրվել-չառաջադրվելը կախված է Սերժ Սարգսյանի՝ Ֆրանսիա, ԱՄՆ կատարելիք այցերի հետ: Ստացվում է, որ մեր երկիրը ամբողջովին կախված է մեծ տերություններից և ընտրություններում ոչ թե ժողովուրդն է գործոնը, այլ մեծ տերությունները պիտի որոշեն՝ ով պիտի կարգվի ՀՀ նախագահ: Փաստորեն, թե՛ իշխանամետ, թե՛ ընդդիմադիր գործիչները Հայաստանը հասցրել են նման վիճակի, և բո-*

Լորդ պետք է հեռանան (Մարգարիտա):

- Վերջերս «Հայելի» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ խնդրո առարկայի շուրջ ես ասել եմ հետևյալը: Այն փաստը, որ 2000 թ. Հայաստանը և Ադրբեջանը միաժամանակ դարձան Եվրախորհրդի անդամ երկրներ, անուղղակիորեն հաստատում է, որ Եվրախորհուրդը, ըստ էության, ճանաչել է Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված ստատուս-քվոն: Երկրորդ. այն հանգամանքը, որ արդեն 13 տարի է՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների կողմից վարվող բանակցային գործընթացների արդյունքում հնարավոր է դարձել պահպանել խաղաղությունը, նշանակում է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երեք երկրները՝ ԱՄՆ-ն, Ռուսաստանն ու Ֆրանսիան «այսպես թե այնպես» նույնպես ընդունել են ստատուս-քվոն: Մեր ժամանակներում, առանձնապես կարևորելով Հարավային Կովկասի տարածաշրջանում առանց ԼՂ-ի էլ խիստ պայթյունավտանգ իրավիճակը (պայմանավորված Իրանի շուրջ խնդրվող զարգացումներով, վրաց- հարավ օսական, վրաց-աբխազական ռազմական հակամարտություններ ծավալելու վտանգով), ինքնին հասկանալի է դառնում այն, որ նույն Մինսկի խմբի համանախագահող երկրները՝ Ֆրանսիան, Ռուսաստանի Դաշնությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, այո, շահագրգռված են, որ ՀՀ-ում նախագահական ընտրություններից հետո ԼՂ-ի առնչությամբ վտանգավոր զարգացումները չլինեն: Սա էլ իր հերթին առաջ է քաշում խնդիր՝ գալիք նախագահական ընտրություններից հետո զոնե պահպանվի իրականացվող քաղաքականության հաջորդականությունը, չլինեն պատերազմական գործողություններ վերսկսելու դրդապատճառներ:

Եվ հատկապես երկրի ներսում ԼՂ հիմնահարցի խաղաղ կարգավորմանն ուղղված առաջարկվող մոտեցումները, Աստված մի արասցե, չհանգեցնեն հասարակության պառակտման էլ ավելի խորացմանը, եթե, չասենք, չհանգեցնեն քաղաքացիական պատերազմի... Ահա հենց սա ի նկատի ունենալով է, որ ես շատ եմ կարևորել

Ս.Սարգսյանի արտասահմանյան առաջիկա այցերը, ըստ որում, ասուլիսի ժամանակ որևէ երկրի անուն ես չեմ հիշատակել: Հիմա արդեն պարզ է դարձել, որ խոսքը ԱՄՆ և Ֆրանսիա կատարելիք պաշտոնական այցերի մասին է: Շեշտեմ մի բանում համոզված եմ, որ այդ պաշտոնական այցերի ժամանակ առանձնահատուկ տեղ կհատկացվի նախագահական առաջիկա ընտրություններն ազատ, արդար, ժողովրդավարության սկզբունքներին համահունչ անցկացնելու ապահովման բացառիկ նշանակությանը: Այնպես որ, ձեր կողմից հնչեցված գնահատականները որքանով անկեղծ եմ, այնքանով էլ չեմ բխում իմ կողմից հնչեցված մոտեցումներից: Ձեր հարցերից, թերևս, ակնհայտ է այն, որ վերջին շրջանի իմ ելույթները, լինելով ճշմարիտ, ինձ ամբոխահաճո չեմ դարձնում: Սակայն կանցնի շատ կարճ ժամանակ, և մարդիկ հերթական անգամ կհամոզվեն իմ անկեղծության և, թող ներվի անհամեստությունս, հեռատեսության մեջ:

Կարծում եմ, որ ժամանակն է խոսել ոչ թե այն հարցերի մասին, որոնք համբավդ են ավելացնում, այլ խոսել ծանր և հրատապ լուծումներ պահանջող խնդիրների մասին: Որքանով ինձ դա հաջողվեց՝ դատեք ինքներդ:

Վարեց Ռուսլան Թաթոյանը

ՀԱՐԿԱՎՈՐ Է ԱԶԳԸ ՄԻԱԲԱՆՈՂ ԾՐԱԳԻՐ
Վստահ է «Ազգային Միաբանություն կուսակցության»
(ԱՄԿ) նախագահը

«Առավոտ»-ի հարցին՝ որքանո՞վ է «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը հավանական համարում Ռոբերտ Քոչարյանի՝ ՀՀ վարչապետ դառնալը պոտինյան ճանապարհով, պարոն Գեղամյանը պատասխանեց իրեն հատուկ ոճով: Ըստ մեր զրուցակցի՝ «Վլադիմիր Պուտինը իր իշխանավարության տարիներին հնարավոր նման հանգուցալուծման համար կատարել է տրամաբանական մի շարք քայլեր. ասենք՝ ՌԴ Պետդումային 8 անգամ ուղերձ է հղել: Դրանց հանրագումարում ծնվեց եռամյա բյուջեի գաղափարը, որը հաստատման փուլում է, մշակվել, պետականորեն հաստատվելու գործի են դրվել ազգային ծրագրեր, որոնք խիստ կենսական ու հեռանկարային ուղղվածություն ունեն: Այդ ամենում արդեն պարզորոշ ուրվագծված են երկրի զարգացման հեռանկարային հիմնական ուղղությունները, տասնամյակներին միտված երկրի զարգացումները: Եվ շատ կարևոր է, որ այդ ծրագրերը հավանության են արժանացել ՌԴ բնաչություն կողմից, իսկ դրանց հեղինակն էլ աննախադեպ բարձր վարկանիշ ունի: Եվ ժողովուրդը, ում գլխով մինչև Պուտինի իշխանության գալը շատ ու շատ փորձություններ են անցել, հիմա աչքի լույսի պես ձգտում է պահպանել այդ ամենը, որ հանկարծ իշխանափոխության արդյունքում նշմարվող ձեռքբերումները հողս չցնդեն: Հենց այդ պատճառով էլ ժողովուրդն է շահագրգռված, որ Ռուսաստանում պահպանվի իշխանության հաջորդայնությունը: Մեզանում, ցավոք, եթե կա, ապա դա Կառավարության մեկ տարվա ծրագիրն է: Իսկ ժողովրդի սեփականությունը դարձած, հույս ու հավատ ներշնչող և ոչ մի ծրագրա-

յին փաստաթուղթ հրապարակում ընդհանրապես չկա, մինչդեռ վաղուց այն խիստ պահանջված է: Եվ եթե լինեին ազգը միաբանող նման ծրագրեր, ինչո՞ւ չէ, գուցե մենք էլ ձեզ հետ միասին ասեինք, որ ստեղծված իրավիճակում, անկախ մինչ օրս եղած քաղաքական լուրջ տարածայնություններից, երկրի համար չարյաց փոքրագույնը կլիներ Ռուսաստանում ընթացող գործընթացների օրինակով նման զարգացումներ ընթանային նաև Հայաստանում: Ավա՛ղ, այդ ամենը չկա: Ուրիշ բան, որ դրան մենք պետք է գանք և ինչքան շուտ, այնքան լավ, թեկուզ և իշխանությունների հետ համագործակցությամբ: Պետք է գանք այդ գաղափարի պահանջված լինելու գիտակցությամբ և այդ գաղափարը կյանքի կոչելու անհրաժեշտությամբ: Իհարկե, դրան անհրաժեշտ է, որ հասնենք ոչ թե այսօր իշխանություն ներկայացնող այս կամ այն քաղաքական ուժի միջոցով, այլ որակապես շատ ավելի ընդլայնելով խնդրո հարցով մտահոգ ու շահագրգիռ ուժերի շրջանակը: Այս գործառույթների նպատակն էլ պետք է լինի ոչ թե այս կամ այն ընդդիմադիր գործչին կառավարման որևէ լծակ փոխանցելը, այլ այդ ծրագիրը՝ քաղաքական պատասխանատու բոլոր ուժերի հետևում կանգնած ժողովրդական հոծ զանգվածների սեփականությունը դարձնելը»:

Մարգարիտ Եսայան

... ԳՈՒՐԳՈՒՐԵԼ ԵՎ ՍԻՐԵԼ ՔԵՁ ՎԻՐՎՎՈՐՈՂՆԵՐԻՆ...

Յարգելի ընթերցող, սույն թվականի սեպտեմբերի 29-ին կայացավ «Ազգային Միաբանություն կուսակցության» 10-րդ տարեդարձին նվիրված հորեյանական կոնֆերանս: Կառավարության նիստերի մեծ դահլիճը այս անգամ էլ լեփլեցուն էր, մարդիկ տոնական տրամադրությամբ եկել էին լսելու կուսակցության ղեկավար Արտաշես Գեղամյանին: Մեկ ժամ 10 րոպե տևած Ա.Գեղամյանի բանավոր զեկույցը լսվեց համակ ուշադրությամբ, որն ընդհատվում էր բուռն ծափահարություններով: Ավա՛ղ, չափից ավելի կուսակցականացված, հին ու նոր իշխանությունների գովքն անող լրատվամիջոցները իրենց հրապարակումներով ջանացին մարդկանց մոտ թյուր տպավորություն ձևավորել այդ իսկապես բովանդակալից միջոցառման մասին:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Արտաշես Գեղամյանի բանավոր խոսքի շարադրանքը:

Սիրելի ժողովուրդ, այս կոնֆերանսին նախապատրաստվելիս շատ երկար մտածում էի, լավ ինչից սկսեմ, ինչպես բացատրեմ այն ամենը, ինչ տեղի ունեցավ մայիսի 12-ին, առավել ևս դրանից հետո: Ամենայն ուշադրությամբ ընթերցում էի մեր մամուլը, ուշադրությամբ նայում էի հեռուստատեսության վերլուծական բոլոր ծրագրերը, բացարձակապես դրա պատասխանները չէի գտնում: Բազում հանդիպումներ եմ ունեցել մեր տարածքային կազմակերպությունների ղեկավարների հետ, ամենատարբեր մարդկանց հետ, յուրաքանչյուրի հետ լսողի դերում էի: Այնուամենայնիվ, չէի գտնում ինձ հուզող հարցերի բացատրությունը: Մտածեցի՝ դիմեն փորձված քայլի՝ կարդամ

հին հույներին, հռոմեացիներին, մեծ փիլիսոփաներին, միզուցե նրանց գործերում գտնեն պատասխանը: Գաղտնիք չէ, որ քաղաքակրթությունը անցած 27-30 դարերի ընթացքում փիլիսոփայության, հոգեբանության բնագավառում ոչ մի նոր բան գրեթե չի ավելացրել նրան, ինչ ժամանակին ասել են հին մտածողները՝ լինի դա Սոկրատեսը, լինի դա Յոնեթոսը, Պլատոնը, Արիստոտելը, Դիոգենեսը, չթվարկեմ բոլորին, կամ հին հռոմեացիները: Եվ, ինչ եք կարծում, կարդացի նաև աշխարհիս մեծերի հուշագրությունները, մեմուարները, այդ թվում՝ նաև աշխատություններ նրանց կյանքի մասին: Կարդացի Գայոս Սվետոնիս Տրանքվեղիոսի «12 կեսարների կյանքը» աշխարհահռչակ գործը, ուր ամենայն խորությամբ վերլուծության էին ենթարկված այդ կեսարների ապրած կյանքն ու կատարած գործերը, նրանց կենսափիլիսոփայությունը՝ Յուլիոս Կեսարի, Ավգուստոսի, Տիբերիոսի, Կալիգուլայի, Ներոնի, Ավրելիոսի, ... և մյուսների: Եվ հենց այստեղ էլ բանալին գտա, որ վերլուծումներ անելիս ճիշտ ճանապարհի վրա կանգնեմ: Բանալին գտա Մարկոս Ավրելիոսի մտորումների և գործունեության մեջ: Նա, իր կյանքի ելևէջներում լինելով շատ անբացատրելի իրավիճակներում, հանգել էր հետևյալ մտքին, որն էլ դարձրել էր սեփական գործունեության ուղեցույց. «Դուք պարտավոր եք սիրել, գուրգուրել այն մարդկանց, ովքեր ձեզ վիրավորել են»: Այս միտքը, ըստ պատմիչների, նա արտահայտել է 161 թվականին, երբ նոր դարձել էր հռչակավոր Հռոմի կայսրը: Ես էլ մտածեցի՝ եղ մարդը «հին վոժդ է», դրանից հետո 19 տարի կայսր է եղել, եթե հենց այդ է ասել, կնշանակի մի բան գիտի, չէ՞: Այ, հիմա հենց էլ տեսանկյունից փորձեմ իմ խոսքում սիրել, գուրգուրել, ճիշտ այն մարդկանց, ովքեր վիրավորել են «Ազգային Միաբանություն կուսակցությանը» և, մասնավորապես, ինձ, այն է՝ հին ու նոր իշխանություններին: Որովհետև բոլորս ենք հիշում, որ ստեղծման առաջին իսկ օրվանից «Ազգային Միաբանություն կուսակցությունը» անհարկի քննադատության է ենթարկվել, հալածվել է. լինի դա ՀՀԾ-ական վարչակազմը, լինի դա Ռոբերտ Քոչարյանի վարչակազմը:

Բայց կհետևեն Մարկոս Ավրելիոսի խորհրդին, չեն վիրավորի իրենց, ավելին՝ կգուգուրեն ու կսիրեն, հետն էլ կփորձեն վերլուծել Հայաստանի Հանրապետությունում և նրա շուրջ ստեղծված իրավիճակը: Իսկ իրավիճակը, ցավոք, շատ և շատ բարդ է, և բարդ է, և պայթյունավտանգ:

Մենք, այո, այսօր կանգնած ենք հայոց պետականության կորստի վտանգի առաջ: Եվ սա ամենևին չափազանցություն չէ: Ամառվա շոգ ամիսներին չզլացա և ամենայն ուշադրությամբ վերլուծեցի բազմաթիվ նյութեր, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թվականի հունվար-հունիս ամիսների ազգային վիճակագրական ծառայության տեղեկագիրքը: Եվ այդ վերլուծությունը, որ արեցի, բառիս իսկական առումով, իմ ամենածանր կանխագուշակությունների հաստատումը դարձան: Վաղը մյուս օրը, որ չասեն օդից վերցված թվեր են, չնայած մեծամասնությունը անգիր են հիշում, որոշ թվեր ես կընթերցեմ: Եվ, այսպես, մեր հարազատ իշխանություններն ասում են, որ կես տարվա ընթացքում ազգաբնակչության փաստացի եկամուտներն աճել են 117%-ով: Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական այս թիվն ընդունում են հալած յուզի պես, չնայած ճիշտ երեկ «Առավոտ» թերթում Հրանտ Բազրատյանի հեղինակած և շատ փաստարկված վերլուծականը կար: Ուրիշ հարցերում առիթ է եղել, քննադատել են պարոն Հ. Բազրատյանին, բայց վերլուծական այդ հոդվածը, ըստ իս, շատ հիմնավոր էր: Եվ դրանում, փաստորեն, ապացուցվում է այն, որ Հայաստանի Հանրապետության վիճակագրական ծառայության կողմից հրապարակված թվերի մեծի մասը հավատ չեն ներշնչում, վիճահարույց են, հանրապետության ներկան չի պատկերված: Անգամ իսկ նման հավելագրումների պարագայում ընդունենք եկամուտների, իբր, 117 % աճի արձանագրումը: Դրա հետ մեկտեղ, տեղեկագրքում նշում են հետևյալը. առաջին կիսամյակում նվազագույն պարենային զամբյուղը կազմել է 23702 դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 20436 դրամի դիմաց՝ գրանցելով 16%-

ի թանկացում: Նվազագույն սպառողական զամբյուղը 2007 թ. առաջին կիսամյակում կազմել է 36739 դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 31677-ի համեմատ, կրկին գրանցվել է թանկացում 15,9%-ով: Այսինքն՝ փաստացի 16%-ով թանկացել են նվազագույն պարենային և սպառողական զամբյուղները: Այս թանկացումների մասին իշխանությունները համեստորեն լռում են, սակայն անդադար կրկնում են, թե, իբր, 17%-ով մարդկանց փաստացի եկամուտներն աճել են: Հա, լավ, հասկացանք, բայց չէ՞ որ սրա հետ մեկտեղ կա մի ուրիշ տագնապահարույց թվաբանություն, վիճակագրություն ևս: Ո՞րն է դա: 2006 թ. առաջին կիսամյակում մեկ դոլարի փոխարժեքը 434 դրամ էր, 2007 թ. նույն ժամանակահատվածում դրամի միջին փոխարժեքը դոլարի նկատմամբ ճիշտ 19,6%-ով արժևորվել է: Ստացվում է, որ մի կողմից դրամն արժևորվում է, և դրամի արժևորման պայմաններում, եթե դա պայմանավորված լիներ զուտ տնտեսագիտական գործոններով, եթե դա շինծու չի, արհեստական չի, պետք է, որ նրա գնողունակությունը բարձրանար: Մինչդեռ տեղի է ունեցել հակառակը. դրամի գնողունակությունն ընկել է 16%-ով, ասել կուզի, որ այդ երկու գործոնների առկայության պայմաններում՝ դրամի արժևորումը 19,6%-ով և գնողունակության անկումը՝ 16 %-ով մեր կյանքը թանկացրել են նվազագույնը 30%ով: Ահա, դրա համար է, որ վիճակագրական ծառայության նկարած, կրակած թվերին ինչ աչքով էլ, որ նայում ես, դրանից ստամոքսդ ավելի կուշտ չի լինում, սառնարանում էլ պարենի քանակը չի ավելանում: Այս երևույթները մարտահրավե՞ր են, իհարկե, մարտահրավերներ են: Պե՞տք է սրանց մասին խոսել, պե՞տք է ահազանգել, այո, պետք է խոսել, պետք է ահազանգել: Ուշադրությամբ համադրեցի այլ ցուցանիշներ ևս, և զարմանքիս սահման չկար: Բանից պարզվում է, որ Հայաստանի Հանրապետությունում հռչակված ազատ շուկայական տնտեսության պայմաններում շահույթ չեն ունեցել կամ վնասով են աշխատել ձեռնարկություններ, որոնց տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ (արտադրության ծավալով) կազմել է 35,5%: Ստացվում է, որ, պատ-

կերավոր ասած, սեփականատերերը աշխատում են վնասով, ավելին՝ դեռ մի բան էլ իրենց տներից բերում են (ծնողների թռչակը) և հանուն պետության ու հանրության, առանց շահի են աշխատում: Անհեթեթություն է, անշուշտ, անհեթեթություն է և զավեշտ: Ըստ որում, ինչպես վկայում է վիճակագրությունը, հանքահումքային արդյունաբերությունում առանց շահույթի կամ վնասով են աշխատել ընդհանուրի 30%-ը, մշակող արդյունաբերությունում՝ 38,5%-ը, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ձեռնարկությունների 61,3%-ը, շինարարության՝ 33,8%-ը, ֆինանսական գործունեությանը զբաղվող կազմակերպությունների 50%-ը, անշարժ գույքի հետ կապված գործողություններ, վարձակալում և սպառողական ծառայություններ մատուցողների 35,7%-ը: Բա լավ, այս մարդիկ իրենց գրածները գոնե մեկ անգամ չէ՞ն վերլուծում: Անցած տարի ցույց են տվել, թե, իբր, շինարարության ծավալների աճի տեմպը կազմել է 137,2% և դրա հետ մեկտեղ արձանագրվել է, որ շինարարության 33,8%-ը շահույթ չի ունեցել կամ էլ վնասով է աշխատել: Բա տարեցտարի մեծ բարձր աճի տեմպ ունեցող ոլորտում, որն էլ աշխատում, բացառապես գործում է ազատ շուկայի պայմաններում, կարելի՞ է արդյոք ավելի անհեթեթ բան պատկերացնել: Կամ էլ ո՞ւմ են միամիտի տեղ դրել, երբ արձանագրում են, որ ֆինանսական շուկայում գործող հիմնարկների կեսը վնասով է աշխատում: Իսկ ֆինանսական շուկայում գործող այդ հիմնարկները որո՞նք են. դա առևտրային բանկերն են, գրավատներն են, զանազան վիճակախաղերով մասնագիտացած հիմնարկներն են, դա արժեթղթերի հետ գործ ունեցողներն են: Հավատաս պաշտոնական վիճակագրությանը՝ պարզվում է սրանք էլ են վնասով աշխատում: Լոմբարդը, ժողովուրդ ջան, սրանց պես, վնասով է աշխատում: Փողի կարիք ունենա՞ հարսանեկան 1000 դոլարանոց մատանին տանես գրավ դնելու, 100 դոլարից ավելի չեն գնահատի, իսկ փողն էլ ժանկետից ուշ վերադարձրիր՝ ապրանքիդ տերը չես: Էն 900 դոլարի իրենց բաժին հասած քյարը ցույց չեն էլ տա, դրա համար է, որ «վնա-

տով» են աշխատում: Որ բնագավառը ձեռք են տալիս, դա է, նույն աղավաղված պատկերն են իրականի տեղ սաղացնում:

Դրա հետ մեկտեղ՝ ծայրաստիճան վտանգավոր զարգացումներ են արձանագրվել մեր կյանքի ամենատարբեր ոլորտներում: Մասնավորապես, իրավախախտումների բնագավառում: Ես մեր Ապարանի ընկերոջ սիրտը (դիմում է դահլիճին- *խմբ.*), նախապես վատ փաստերի հրապարակում է գուշակում, չդիմացավ, դուրս է գալիս: Այսպես, 2007 թ. առաջին կիսամյակում անձի դեմ ուղղված և գրանցված հանցագործությունների քանակը կազմել է 434 դեպք, դրանցից բացահայտվել է ընդամենը 249-ը կամ 57,4%: Այդ թվում՝ սպանության 37 դեպք, բացահայտվել է ընդամենը 12-ը կամ 32,5%, սպանության փորձ՝ 18, բացահայտվել է 5-ը կամ 27,8%-ը: Անձնական գույքի հափշտակության 1696 դեպք, բացահայտվել է 925-ը կամ 54,5%-ը: Սա էլ այն պարագայում, երբ բնակարանային գողության հարյուրավոր դեպքեր ոստիկանության կողմից պարզապես չեն գրանցվում: Ցավոք, վերջին մի քանի ամսում մոտիկներիցիս մի 3-ի տունը կտրեցին, սակայն ոստիկանությունում ոչ մեկի բնակարանային գողությունն այդպես էլ չեն գրանցել: Ուրեմն, դեպքերի իրական թվերն անգամ իսկ այդքան թաքցնելու պայմաններում, դրանց բացահայտումը կազմել է ընդամենը 54,5%: Մեր փոքր հանրապետությունում ոստիկանության կողմից հետախուզման մեջ գտնվող և մինչ օրս չհայտնաբերված հանցագործություն կատարածների թիվը հասել է 12780 մարդու, անհայտ կորածների և չհայտնաբերվածների թիվը կազմել է 85 մարդ: Բերված թվերի հետևում թաքնված երևույթները մի՞թե մարտահրավերներ չեն: Մարտահրավերներ են, իհարկե, մարտահրավերներ են:

Հիմա մի քանի խոսք տնտեսության մասին: Իշխանությունները բարձրաձայնում են տնտեսության դինամիկ զարգացման մասին, ասում են՝ երկնիչ տնտեսական աճ կա: Նայում են պաշտոնական վիճակագրությունը՝ արդյունաբերության արտադարանքի ծավալն առանց էներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման կազմել

է 100,2%, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը 2006 թ. առաջին կիսամյակի նկատմամբ կազմել է 98,1%: Հուլիս եմ տվել շինարարության ու սպասարկման ոլորտներին, դրանց հաշվին էլ ասում են, որ, իբր, աճ կա: Էլեկտրաէներգիայի արտադրությունը կազմել է 98,1% նախորդ տարվա համեմատ: Մինչդեռ պարզից էլ պարզ է՝ եթե հանրապետությունում էներգետիկան չի զարգանում, կնշանակի, որ այդ երկրում արդյունաբերությունը չի զարգանում: Չէ՞ որ շինարարության ոլորտում 117,2% աճի տեմպ ցույց տալով, ծառայությունների ծավալների 118,5% աճի տեմպ ցույց տալով, երկրին մենք ապագա չենք երաշխավորում: Չէ՞ որ հայտնի է՝ շինարարության մեջ առյուծի բաժինը կազմում են, այսպես կոչված, էլիտար շենքերը, որոնք դարձել են անաշխատ եկամուտների լվացման, «օրինականացման» հիմնական յուրովի միջոց: Բա լավ, ո՞ւմ եք խաբում, մինչև ե՞րբ եք խաբելու:

Այս ամենի մասին չէի խոսի, եթե չլիներ շատ վտանգավոր, բառիս իսկական առումով՝ շատ վտանգավոր զարգացումներ, որոնք պայմանավորված են Ադրբեջանի տնտեսության մեջ արձանագրված այդ նույն գործոնները բնութագրող տվյալները: Ես այժմ այդ թվերը կընթերցեմ, որովհետև դրանք չափազանց խոսուն և պատասխանատու մոտեցում պահանջող թվեր են: Խնդրում եմ ուշադրություն դարձրեք. Հայաստանի Հանրապետությունում 2007 թ. հունվար-ապրիլին (խոսքը ծավալի մասին է) արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 580 մլն 200 հազ. դոլար, Ադրբեջանում՝ 6 մլրդ 748 հազ. դոլար, այսինքն՝ 11,7 անգամ պակաս է եղել, քան Ադրբեջանում, կրկնում եմ 11,7 անգամ: Ներդրումները հիմնական կապիտալի մեջ Հայաստանում կազմել են 153 մլն 550 հազար դոլար, Ադրբեջանում՝ 1 մլրդ 870 մլն դոլար ներդրումները Հայաստանում 12 անգամ պակաս են եղել, քան Ադրբեջանում: Սա նշանակում է, որ ամեն ներդրված 1 դոլարը, եթե անցնում է մեկ-երկու տարի, ապահովում է ներդրված գումարի կրկնակի չափով հավելած ՀՆԱ-ում: Դա էլ այն դեպքում, երբ համախառն ներքին արդյունքը

Ադրբեջանում այսօրվա դրությամբ ավելի քան 3 անգամ ավելի է, քան մեր երկրում: Դե պատկերացրեք 2-3 տարի հետո վիճակն ինչպիսին է լինելու: Մանրածախ առևտրի շրջանառությունն Ադրբեջանում 4 անգամ ավելի մեծ է, քան Հայաստանի Հանրապետությունում: Բեռների առաքումը, որն անուղղակիորեն բնութագրում է էկոնոմիկայի աշխուժությունը, Ադրբեջանում Հայաստանի համեմատ 16 անգամ ավելի է եղել: Համախառն ներքին արդյունքի աճի տեմպը Հայաստանում կազմել է 110,2%, իսկ Ադրբեջանում՝ 136%: Փաստացի գներով բնակչության եկամուտների աճը Հայաստանում կազմել է 124%, Ադրբեջանում՝ 136%: Բնակչության ծախսերի աճի տեմպը 120% Հայաստանում, 133%՝ Ադրբեջանում: Միջին աշխատավարձի աճի տեմպը 117% մեզ մոտ է, 126%՝ Ադրբեջանում: Գործազրկության մակարդակը. 96100 մարդ գործազուրկ է գրանցվել Հայաստանի Հանրապետությունում, որը կազմում է աշխատունակ բնակչության 7,2%, իսկ Ադրբեջանում՝ 94300, որը նրանց աշխատուժի ընդամենը 1,2%-ն է կազմում: Ինքնին պարզ է չէ՞, որ այս թվերի հետևում թաքնված են մեր երկրների համեմատական մարտունակությունը բնութագրող գործոններ, առկա վտանգներին դիմակայելու ներքին ռեսուրսների բնութագրիչներ, թե որիս մոտ դրանք ինչպիսին է: Երբ այս թվերին առաջին անգամ ծանոթացա, երբ վերլուծեցի, բնականաբար, տագնապեցի, վերստին հաշվարկներս ստուգեցի (ցուցանիշներն այնտեղ մանաթով են հաշվարկված, մեզ մոտ՝ դրամով. ևս մեկ անգամ ճշգրտեցի փոխարժեքները դոլարային արտահայտությամբ), ավա՞ղ, ազերիների առաջընթացն էկոնոմիկայում ակնհայտ էր: Եվ առաջին պահանջը, որ անհապաղ առաջացավ, դա այս ամենի մասին լուրջ քննարկումներ կազմակերպելու խնդիրն էր ընդդիմադիր դաշտի, քաղաքական բոլոր ուժերի մասնակցությամբ՝ դրանց հրավիրելով նաև իշխանություններին: Կազմակերպել քննարկումներ, որոնց արդյունքում էլ կորոշվեր, թե սրա առաջը ո՞նց ենք ամենելու: Մի՞թե այս հույժ կարևոր խնդիրների լուծումները մենք պետք է անտեսենք:

Ես էլ չեմ խոսում այն զարհուրելի կողոպուտի մասին, որը մինչ օրս շարունակվում է մեր երկրում: Կողոպուտ, որը պայմանավորված է, այսպես կոչված, թիթեռնիկ ձեռնարկությունների գործունեությամբ: Որո՞նք են այդ թիթեռնիկ ձեռնարկությունները: Տղերքը նոր հնարք են գտել. արհեստականորեն գրանցում են սահմանափակ պատասխանատվության կամ բաժնետիրական ընկերություններ, դրանց միջոցով մեծածավալ գործարքներ են կատարում, հետո մեկերկու ամսվա ընթացքում, ժողովրդական լեզվով ասած, թռնում են. համապատասխանաբար լուծարվում են դրանք կամ էլ ճանաչվում են սնանկ՝ պետության բյուջեին պարտք մնալով միլիարդների հասնող հսկայական գումարներ: Չեն ուզում ձեզ շատ ծանրաբեռնել թվերով, այս բոլոր վերլուծությունները կան. մասնավորապես, կատարողական բոլոր վարույթներով չվերականգնված մնացորդ գումարը 2007 թ. հունվար-հունիսին կազմել է 21 մլրդ 783,8 մլն դրամ: Անհրաժեշտության դեպքում մյուս փաստերն էլ պատրաստ են հրապարակել և տպագրել թերթում, որ հնարավորություն ունենաք կարդալու: Կրկնում են, պետությանը և իրավաբանական անձանց հասցված վնասները, կողոպուտը միլիարդավոր դրամների է հասնում: Բա սա կոռուպցիա չէ, ի՞նչ է: Ի՞նչ, չգիտե՞մ, որ շուկայում մենաշնորհ դիրքեր գրավող որ սեփականատերերն են այս ամենի հետևում կանգնած՝ անունները օլիգարխ կոչել, ազգի կեղեքիչ կոչել, բարեգործ կոչել, հայրենասեր կոչել, յուրաքանչյուրիդ խղճի գործն է: Բայց չէ՞ որ դրանից հարցի էությունը չի փոխվում: Չէ՞ որ միլիարդների հասնող գումարներ պետության բյուջե արդեն տարիներ շարունակ այդպես էլ չեն մտնում: Ես նման երևույթների մասին մանրամասն գրել էի մեր ծրագրում: Եվ ամենևին էլ պատահական չէր, որ նախընտրական քարոզարշավի ժամանակ, երբ բաժանում էինք «Ազգային Միաբանություն կուսակցության» հակաճգնաժամային ծրագիրը, հերթեր էին գոյանում: Այդ օրերին, երբ միացնում էիր հեռուստացույցի ցանկացած ալիք, մեղադրում էին մեզ՝ պոպուլիզմ ասելով, նշելով, որ անիրականաճալի են մեր ծրագրերը, չէին էլ

ասում, թե այնտեղ բերված մեխանիզմներից որն էր գիտության համար խորթ, ո՞րն էր պոպուլիզմը: Արդյունքում ի՞նչ ունենք այսօր, սիրելի ժողովուրդ. ունենք այն, որ ինչ ասում էինք, հիմա այս Կառավարությունը վարչապետ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ կատարում է: Ես ասում էի՝ մեկ տարվա ընթացքում հնարավոր է 100%-ով բարձրացնել կենսաթոշակները. այն ժամանակ միաբերան հակադարձում էին պոպուլիզմ է, անհրատեսական է՝ 10-15%-ից ավել հնարավոր չէ: Իսկ հիմա մարդիկ ասածներիս մեջ խորացան, տեսան՝ չէ, 60%-ը ռեալ է, կարող են, հիմա անգամ իսկ խոսում են մինչև 65-67%-ի շեմը բարձրացնելու մասին: Եղ չհասկացա, որ ես եմ ասում, հետն էլ հիմնավորում, իմ բերանից դուրս եկածը պոպուլիզմ է, ձեր բերանից դուրս եկածը՝ մարգարեական ճշմարտություն է: Ես, կրկնեմ, հիմնավորումներն էլ էի շեշտում ու բերում, գրավոր էլ այդ ամենը կար, թերթերում էլ տպագրվել էր: Հիմա չստացվի՝ լավ գործ են անում, ես էլ քննադատում եմ. ո՛չ, լավ եք անում, ճիշտ եք անում, հալալ է, մի քիչ էլ որ սեղմեք, մի քիչ էլ որ տղերքին ավտոբուսից քցեք, իմ ասած թվերի վրա դուրս կգաք:

Մեկ ուրիշ հարցի մասին էլ խոսենք: Հայաստանի Հանրապետության 2008 թ. բյուջեն՝ թե՛ վարչապետի, թե՛ նախագահի կողմից հայտարարվել է, որ դարձնելու են 2,5 մլրդ դոլար: Ի՞նչ, տխրե՞մ, հակառակը՝ ուրախանում են, բայց ես ի՞նչ էի ասում. քարոզարշավի ժամանակ ես նույնն էի ասում, հիմա իշխանությունները 70-75%-ով են բյուջեն ավելացնելու, նույնն էլ ես էի ասում (եթե Տիգրան Սարգսյանը քյանդրբագություն չանի, դոլարը չիջեցնի և 150 դրամ դարձնի ու միայն դրա արդյունքում դոլարային արտահայտությամբ բյուջեն ավելանա): 1 մլրդ 600 մլն դոլարից հանրապետության բյուջեն դարձնում եք 2 մլրդ 500 մլն դոլար: 800-900 մլն դոլարով ավելացնում եք (պայմանավորված դոլար-դրամ փոխարժեքի տատանումներով), լավ եք անում, շատ ուրախ եմ: Ասել կուզի, որ մենք մեր երկրի թշնամին չենք, որ Ձեզ նույն բանն էինք առաջարկում: Չստացվի հանկարծ, որ նտածեք, թե սուրճի բաժակ էինք նայել կամ քնել՝

երագ էինք տեսել և մյուս օրը զարթնել ու այդ հնարավորության մասին հայտարարել. ո՛չ, այդ ամենը վեր ենք լուծել, թուղթ ու մատիտը ձեռքներիս, գրքերը առաջներիս անքուն գիշերներ ենք անցկացրել:

Հիմա մեկ այլ հարց եմ տալիս. ինչո՞ւ եք նեղանում Լևոն Տեր-Պետրոսյանից, որ սեպտեմբերի 21-ի ելույթում ասել էր, որ Հայաստանում համատարած կոռուպցիա է: Հանկարծ չմտածեք, որ Լևոնին պետք է պաշտպանեն, ոչ, հետո պարզ կլինի՝ ինչ եմ ասելու: Այդ մարդն ընդամենը կրկնել է այն, ինչ «Ազգային Միաբանությունը» Ազգային ժողովի լիազումար նիստերի ժամանակ քանիցս հայտարարությունների ժամին հրապարակավ նշել է, հեռուստատեսությամբ էլ մեր ասածները եթեր է գնացել: Նույն Մանուկ Գասպարյանը քանիցս ավելի ծանր փաստերի մասին է խոսել, հեռուստատեսությամբ էլ հեռարձակվել է: Ասեմ ավելին. «Թրանսփարենսի ինթերնեյշնլ-Հայաստան» հավատ ներշնչող կազմակերպությունը 2006 թ. օգոստոս ամսին ուսումնասիրություններ է անցկացրել՝ խնդիր ունենալով պարզել կոռուպցիայի տարածվածության աստիճանը Հայաստանի Հանրապետությունում: Խնդրեմ՝ ահա այդ ուսումնասիրություններն ամփոփող գիրքը, շնորհանդեսն էլ եղել է: Դրանից հետո անցել է մեկ տարի, եթե իշխանությունների մոտ որևէ մի լուրջ հակափաստարկ կար, թող հրապարակեին, ո՞վ էր ձեռները բռնել, դատի տային զրպարտելու, ապատեղեկատվություն տարածելու համար: Իսկ ի՞նչ է գրված այս տեղեկագրքում. մասնավորապես, նշված է, որ Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմում 46,2%-ը շատ կոռումպացված են, 25,5%-ը կոռումպացված են, 13,1%-ը մասամբ են կոռումպացված: ՀՀ նախարարների 63,8%-ը շատ կոռումպացված են, 22,0%-ը կոռումպացված են, 7,9%-ը մասամբ են կոռումպացված: Նախարարությունների աշխատակիցների 45,4%-ը շատ են կոռումպացված, 29,1%-ը կոռումպացված են, 15,5%-ը մասամբ են կոռումպացված: Մարզպետարանների 47,3%-ը շատ են կոռումպացված, 29,1%-ը՝ կոռումպացված, 12,5%-ը մասամբ են կոռումպացված: Տեղական ինքնակառավարման մարմին-

ների 40,5%-ը՝ շատ, 26,3%-ը՝ կոռումպացված, 17,4%-ը մասամբ են կոռումպացված: Առաջին ատյանի դատարանների 44,9%-ը՝ շատ կոռումպացված, 24,5%-ը՝ կոռումպացված, 12,3%-ը մասամբ են կոռումպացված: ՀՀ դատախազության համակարգի 52%-ը շատ են կոռումպացված, 21,8%-ը կոռումպացված են, 10,6%-ը մասամբ են կոռումպացված: Կրկնում են, այսպիսին են «Թրանսփարենսի ինթերնեյշնլ-Հայաստան» կազմակերպության ուսումնասիրության արդյունքները: Է, հա, բնականաբար, որ «բ»-ն ասացի, «ա»-ն էլ ասեմ. կոռուպցիայի այսօրվա հորդառատ գետը, որ կա և հիմա էլ հոսում է, դրա ակունքները սկիզբ են առել նախորդների իշխանավարության տարիներին: Էն ժամանակ գետակ էր, հիմա է, որ գետ է դառել, կրկնում են, բայց ակունքը էնտեղից է գալիս: Այնպես որ, ասած ռուսի՝ «*чьа бы корова мычала, твоя бы молчала*»: Ես սրա մասին ասեմ, Պարույր Հայրիկյանը ասի, Մանուկ Գասպարյանը խոսի, Հայկ Բաբուխանյանը խոսի, մարդն իր խմբագրած թերթում քանիցս է գրել, Խորեն Թռչունիչը էդ բոլորի մասին ասելով՝ արդեն մաշվել է, մեր խոսքը հասկանալի կլինի, մեր վրա կոռումպացվածի այդ բիծը չկա, բա դուք ո՞ւր եք սրա մասին խոսում, բա ո՞նց եք կոռուպցիայից ու կաշառակերությունից ճառեր ասում, կամ ինչո՞ւ եք իրարից նեղանում: Բայց այստեղ արդարության առաջ չմեղանչելու համար նշեմ, այդ 800 մլն դոլարից ավելին, որ բյուջե են մտադիր բերել, արդեն վկայում է, որ պայքարը կոռուպցիայի դեմ ուզում են սկսել: Որովհետև մենք լավ գիտենք, որ այս տարի ոչ մի նոր խոշոր հզորություն չահագործման չի հանձնվելու, որի շահագործումից էլ հնարավոր լիներ առնվազն 35-ից 45% համախառն ներքին արդյունքի աճ ապահովել, ինչն էլ իր հերթին կերաշխավորներ 70-80% բյուջեի եկամուտների աճ: Չկան այդ նոր հզորությունները: Կնշանակի, ի՞նչ պետք է անեն, որ ապահովեն բյուջետային մուտքերի մնան աճ: Ծանապարհը մեկն է. կոռուպցիայի դեմ պայքար սկսել: Ու ի՞նչ, էլի՞ տխրենք. ո՛չ, ուրախանում ենք, շնորհավորում էլ ենք: Արդյունքում ստացվում է, որ իշխանություններն ասում են՝ բյուջեն 80%-ով ենք

ավելացնելու, ես էլ ասում ու հիմնավորում էի, որ հնարավոր է բյուջեն կրկնապատկել: Ինչ արեց-չարեց էն 20 %-ն է՞ր աչք ծակում: Դա էլ եմ հասկանում, տղերքը հարկադրված են, հլը մի «վճիտ» աղբյուր կոռուպցիոներների համար դեռ պահպանել են: Միգուցե՞ ճիշտ են արել, որովհետև եթե այդ մարդկանց միանգամից զրկեն կաշառք ստանալուց, կոռուպցիայից էլ զրկեն իրենց իսկ հոժար կամքով, լավ բան չի ստացվի: Վտանգ կա, որ ինչպես գորտի աչքերը չորացած գետակի պայմաններում, այնպես էլ չինովնիկների աչքերը կոռուպցիայի գետակի ցամաքելուց հաստատ դուրս կգան իրենց բներից: Ե հա, լավ, որ միանգամից հունից դուրս չգան, կաշառակերության, կոռուպցիայի աղբյուրը ամբողջությամբ չեն ցամաքացնում, չէ՞ որ իրենք իրենց կադրերի բնույթը լավ էլ գիտեն: Մարդասիրություն են դրսևորում, չինովնիկ են, պատվիրակություններ են ընդունում, բանակցություններ են վարում, մեր երկրի հյուրերն էլ հանկարծ չասեն, որ սրանց բոլոր պաշտոնյաները չռած աչքեր ունեն, էլ չասեն, որ կմտածեն, թե բոլորը շաշ են:

Ես ձեր դատին ներկայացրեցի ներքին մարտահրավերներից մի քանիսը: Բայց չէ՞ որ կան արտաքին բազմաթիվ մարտահրավերներ նույնպես: Չէ՞ որ դրանք շատ ու շատ ավելի վտանգավոր են: Գիշտ վերջերս «Դեյլի տելեգրաֆում», սեպտեմբերի 4-ին, հրապարակվեց մի նյութ՝ «Կռմբակոժի», արդյոք, նախագահ Բուշը Իրանը» վերտառությամբ: Այդ հողվածում նշվում էր, որ Բուշը, ելույթ ունենալով պատերազմների վետերանների առաջ, ասել էր. «... Իրանի ձգտումը տիրապետել միջուկային տեխնոլոգիաներին վտանգում է տարածաշրջանը, որը տեղից էլ հայտնի է իր անկայունությամբ և բռնությունների սանձարձակությամբ, և այժմ էլ վտանգված է միջուկային հողքոստի վտանգով»: Ըստ որում, արդեն ԱՄՆ-ի Սպիտակ տանը մոտ կանգնած «Heritage Fondation» անալիտիկ կենտրոնը մոդելավորել է Իրանի վրա հարձակման սցենար, որի շրջանակում 4 ամիս շարունակ անց են կացվել մարզումներ: Ավելին, ճիշտ այդ օրերին ամերիկյան «Ֆոքս» հայտնի հեռուստակայանով ելույթ է ունեցել

Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական գործակալության նախկին ռեզիդենտ Ռոբերտ Բայերը, որն էլ իր հերթին հայտարարել էր՝ Պենտագոնում արդեն իսկ մշակված է ծրագիր, համաձայն որի, օդային ուժգին հարվածների արդյունքում, 3 օրվա ընթացքում ոչնչացվելու են Իրանի ռազմական հզորությունը ապահովող 1200 օբյեկտներ: Ի՞նչ, պատահականությո՞ւն է նման ինֆորմացիայի արտահոսքը: Իհարկե, ոչ: Նշեն մաև, որ ճիշտ վերջերս, օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Մախմուդ Ախմադիմեջադը պաշտոնական այցով եղավ Ադրբեջանում: Իլհամ Ալիևի հետ հանդիպման ժամանակ մա ուղղակիորեն ասել էր, որ Ադրբեջանի հաջողությունն ու զարգացումը դա Իրանի հաջողությունն ու զարգացումն է: Ինչպես մաև Իրանի հաջողությունն ու զարգացումը, դա Ադրբեջանին է: Մեր հարևան, բարեկամ երկրի նախագահը Բաքվում հրապարակավ հայտարարել էր, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը կողմ է ԼՂ-ի հիմնահարցի խաղաղ կարգավորման սկզբունքին, սակայն Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքի պահպանմամբ: Ճիշտ այդ նույն ժամանակաշրջանում Թուրքիայի Էներգետիկայի նախարարը պաշտոնական այցով գտնվում էր Իրանի Իսլամական Հանրապետությունում: Այնտեղ պայմանագիր էր կնքվել, ըստ որի, տարեկան կտրվածքով 25-30 մլրդ խորանարդ մետր իրանական գազը պետք է Թուրքիայի վրայով մղվի Հարավային Եվրոպա: Երբ ամերիկացիները դժգոհություն հայտնեցին Թուրքիային՝ Իրանի հետ կնքված պայմանագրի համար, դա պայմանավորելով վերջինիս միջուկային ծրագրերի հետ կապված կիրառվող տնտեսական սանկցիաները չկատարելու փաստով, պաշտոնական Անկարան պատասխանեց, որ Թուրքիան ինքնիշխան պետություն է և վարվելու է այնպես, ինչպես որ գտնում է իր երկրի, պետության համար շահավետ: Ինչո՞ւ շեշտադրումն արեցի հենց Թուրքիայի, Իրանի և Ադրբեջանի վերջին շրջանում նշմարվող փոխհարաբերությունների հնարավոր զարգացման վրա: Վաղը, մյուս օրը, Աստված մի արասցե, եթե նրանց շահերն այն աստիճան շաղկապված լինեն, որ

ինչ-ինչ պատճառներով փակվի Իրան-Յայաստան ճանապարհը, ի՞նչ ենք անելու: Չէ՞ որ նույն Ռուսաստանի Դաշնության հետ մենք ռազմական դաշնակից ու սերտ բարեկամ ենք, բայց ինչ-ինչ հարաբերությունները Ռուսաստանի և Վրաստանի միջև այն հունով չգնացին, արդյունքում էլ Վերին Լարսի անցակետը արդեն երկրորդ տարին է Ռուսաստանի կողմից փակ է: Դրա հետևանքն այն է, որ Յայաստանից արտահանվող ապրանքների ինքնարժեքը 25-30%-ով թանկացել է՝ կապված տրանսպորտային ծախսերի աճի հետ: Ահա սա է նաև պատճառը, որ Յայաստանի Յանրապետությունից արտահանման աճի տեմպերը 2 անգամ և ավելին զիջում են ներմուծման աճի տեմպերին: Կես տարվա ընթացքում 850 մլն դոլարի չափով էր առևտրային հաշվեկշռի դիֆիցիտը, արդեն 8 ամիսների ընթացքում այդ ճեղքվածքը գերազանցեց 1 մլրդ դոլարը: Բա լավ, մի հատ մեզ հաշիվ չտա՞նք, թե ինչ վիճակում ենք հայտնվել: Այսպես, 2007 թ. 1-ին կիսամյակում Յայաստանի Յանրապետությունում առկա ցորենի ռեսուրսի (այսինքն՝ ներկրված և տեղում արտադրված) մեջ ներկրումը կազմել է շուրջ 99,7%, շաքարավազինը՝ 96,5%, բրնձինը՝ 100%, կարագինը՝ 80,6%, ձեթինը՝ 99%, հավի մսինը՝ 84,3%, անգամ իսկ տավարի մսինը՝ 22,3%: Բա եթե վաղը, մյուս օրը, կրկնում են, հանկարծ սահմանները փակվեն, ո՞ւմ հույսին ենք թողնելու ժողովրդին կերակրելու խնդիրը: Բա այս հարցերը նկատի ունենալով է, որ ասում են՝ եկեք, պարոն Քոչարյան, պարոն Սարգսյան, պարոն Լևոն Տեր-Պետրոսյան քաղաքական բոլոր ուժերով հավաքվենք, նստենք, խելք խելքի տանք: Չէ՞ որ ազգն է, պետությունն է վտանգված, ձեռներիցս կարող է գնալ: Դո այդ մարդկանցից կարոտ առնելու խնդիր չունե՞մ: Եվ ի՞նչ եք կարծում, արձագանքը ո՞րը եղավ: Արձագանքն այն էր, որ իշխանական ռուսալեզու թերթում գրեցին. Գեղամյանը դեռ էն գլխից Տեր-Պետրոսյանի հասցեին ոչ մի քննադատություն չի արել: Տղերքը, երևանյան բարբառով ասած, թերթի միջոցով շիրա են տալիս, կուտ են տալիս: Մյուս կողմից էլ լևոնական թերթերն էլ գրում են. Գեղամյանը սեպտեմբերի 21-ին ընդունել էր նախագահի

հրավերը, էնտեղ էլ Սերժ Սարգսյանի փեսայի հետ կանգնած խոսում էր: Ահա, սա է սրանց մակարդակը, էս է սրանց վերլուծություն անելու հունարը: Բա եթե ես կանգնում հրապարակայնորեն հայտարարում եմ՝ եկեք նույն սեղանի շուրջ հավաքվենք, միասին քննարկենք, թե ո՞նց ենք այս վտանգավոր զարգացումների տակից դուրս գալու, ո՞նց ենք ազգովի դիմակայելու, ի՞նչ, դրանից հետո հրավերը մերժե՞ի: Իսկ սրանք այդ ամենից նման անմակարդակ մեկնաբանություններ են անում: Բա լավ, մի հատ ուղեղներիդ զոռ տվեք՝ եթե ես Ռ.Քոչարյանին դիմում եմ՝ եկեք բոլորս բանակցենք, նա էլ իր կողմից առաջին քայլն է անում, նրան այդքան քննադատելուց հետո հրավիրում է ինձ, այն էլ Ազգային անկախության տոնին, ի՞նչ, չգնա՞մ, նեղացածի կեցվածք ընդունեմ, երեխա եմ, ինչ է: Կամ էլ էդ թշնամություն սերմանելը բացարձակ ինձ համար հասկանալի չէ: Ի՞նչ, ձեզ թվում է, Լևոն Տեր-Պետրոսյանն ինձ համար թշնամի՞ է կամ Ռոբերտ Քոչարյանը, կամ Սերժ Սարգսյանը, կամ բարձրաստիճան ցանկացած հին ու նոր պաշտոնյա: Չլինի՞ կարծում եմ՝ հետոներն անձնական հա՞րց ունեն: Իհարկե, ոչ: Վաղը, մյուս օրը Բաբկեն Արարքցյանի աղջկան էլ տեսնեմ, կհամբուրեմ, կրտսեր տղայիս հետ նույն դասարանում տաս տարի Նիկոլ Աղբալյանի անվան դպրոցում միասին եմ սովորել: Ի՞նչ, հիմա էլ իշխանական թերթերը գրեն, թե ես սապոնվում եմ Լևոնենց, Բաբկենց: Ե, Սերժ Սարգսյանի փեսան էլ հորս մոտիկ ընկերոջ թոռն է, իմ էլ լավ ընկերոջ տղան է, տեսնեմ, խռովեմ, շուռ գամ և գնա՞մ: Ես է սրանց մակարդակը: Հիմա բոլոր տեսակի դատարկ, բամբասկոտ լրագրողներին հիշեցնեմ մի շատ հետաքրքիր պատմություն: Գիշտ վերջերս, մի ամիս էլ չի անցել, Գերհարդ Շոյոդերը հրատարակել է իր հուշերի գիրքը, որի վերնագիրն է «Որոշումներ: Իմ կյանքը մեծ քաղաքականությունում» (հետաքրքրվողներին խորհուրդ եմ տալիս կարդալ): Այնտեղ նա նկարագրում է, թե ինչպես 2005 թ. մայիսին Մոսկվայի «Պրեզիդենտ» հյուրանոցում Հայրենական մեծ պատերազմի վետերանները Գերմանիայից և երբեմնի հորհրդային Միությունից նստել էին մի երկար սեղանի շուրջ,

դեն հանդիման: Մարդիկ, ովքեր ռազմի դաշտում 60 տարի առաջ իրար էին սպանում, իրար կոկորդ կրծում, մարդիկ, ովքեր պատերազմում կորցրել էին իրենց ընկերներին, հարազատներին, իսկ հիմա, գրում է Շրյոդերը, երբ նրանց նայում էի, տեսնում էի, թե փոխադարձ ինչքան ջերմություն ու հոգածություն կար նրանց մոտ: Բանից պարզվում է, որ մարդկային մեծագույն կորուստներն ու դժբախտություններն էլ կարող են տարիների ընթացքում ժողովուրդներին բարեկամացնել: Իսկ այստեղ երկու կողմերն էլ, հներն ու նորերը, կանգնել ու մի ազգի մեջ, կամա թե ակամա, թշնամական այնպիսի մթնոլորտ են սերմանում, կարծես մենք՝ հայերս, դրսում թշնամու պակաս այլևս չունենք, հիմա էլ ներսից ենք մենք մեզ քանդում: Օրու մեջ փորձում են աստվածապաշտ երևալ, բա մեկ-մեկ էլ Աստվածաշունչ կարդացեք, չէ՞ որ այնտեղ է գրված. «Կանգուն չի մնա այն տունը, որը ներսից է կազմալուծվում»: Բա մի անգամ չմտածե՞նք այս ուղղությամբ:

Ահա, այս ամենը գիտակցելով է, որ մենք արդեն քանի - անգամ է՝ հանդիպումներ ենք կազմակերպում՝ խնդիր ունենալով ձևավորել այլընտրանքային քաղաքական թիմ, որը կոչված է լինելու ժողովրդին միաբանել, որովհետև, ցավոք, ես տեսնում եմ, թե ինչ վտանգավոր են լինելու զարգացումները: Եթե մենք երկրում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը չփոխենք, ապա զարգացումները բերելու են նրան, որ էլ ավելի է պառակտվելու մեր ազգն ու ժողովուրդը: Մի՞թե պարզ չէ, որ այսօր ամեն ինչ անում են, որ քաղաքական ողջ ներկայակերպ դարձնեն կամ սև, կամ էլ սպիտակ: Այդպես չի լինում, մենք հո վայրենի ցեղ չենք, հինգհազարամյա պատմություն ունեցող ազգ ենք: Եվ թող բոլորը լավ հասկանան՝ կլինի դա վաղը կամ մյուս օրը՝ առիթի դեպքում անպայմանորեն կհանդիպեն և՛ Տեր-Պետրոսյանի հետ, և՛ Քոչարյանի հետ, և՛ Սերժ Սարգսյանի հետ: Նրանց հետ ես անձնական և ոչ մի խնդիր չունեմ լուծելու, պարզապես երկրիս առաջ պատասխանատվության մեծագույն զգացում ունեմ, որ տաս տարի անց, Աստված մի արասցե, Հայաստան աշխարհը փլատակ-

ների մեջ հանկարծ հայտնվի՝ հանդիպած մարդիկ չթքեն երեսներին: Ահա, այդ պատասխանատվության զգացումն է, որ ունենմ, դրանով էլ առաջնորդվելու են, ձեզ էլ խնդրելու են՝ այս հարցում սատարեք ինձ: Իսկ հարգանքս հանդեպ Լևոն Տեր-Պետրոսյանը կամ Ռոբերտ Քոչարյանը, պատկերավոր ասած, հետևյալ երանգն ունի: Մի հայտնի պատմությամբ փորձեն բացատրել: Ի դեպ, որ Մարկոս Ավրելիոսին հիշատակեցի, հենց իր կայսրության տարիներին էր, երբ 162-164 թթ. հռոմեա-պարթևաց պատերազմի արդյունքում Հայաստանը կրկին հայտնվեց հռոմեական կայսրության պրոտեկտորատի տակ: Պատերազմն ավարտվեց, և թագավոր հայոց մեծաց Բակուրին գերեցին ու տարան Հռոմ, որտեղ և նրան որդեգրեցին Ավրելիոսների տոհմում: Թագավոր հայոց մեծաց տիտղոսը ձևականորեն պահպանեցին, բայց իրականում Հայաստանը կառավարվում էր Հռոմի կողմից: Հիմա ասեն, թե ինչու այս պատմությունը ես հիշեցի: Փաստացի, Բակուրը առանց թագավորության թագավոր էր: Մի օր էլ, երբ գահագուրկ արքան Հռոմի փողոցներով զբոսնելիս է լինում, մի անծանոթ մարդ գլուխ է տալիս ու խոնարհվում նրա առջև՝ դիմելով նրան որպես «Թագավոր հայոց մեծաց» բառերով: Նա ասում է՝ ինչո՞ւ ես գլուխ տալիս ինձ, ես այլևս թագավոր չեմ: Անցորդը պատասխանում է՝ հայ են, խոնարհվելով քո առաջ, անձիդ առաջ չէ, որ խոնարհվում են, այլ իմ Հայաստան հայրենիքին են խոնարհվում, քեզ տեսնելով՝ իմ Հայաստանն են մտաբերում, որի թագավորն ես եղել, խոնարհվում են ազգիս պատմության առաջ, խոնարհվում ու կարոտս են փորձում առնել Հայոց պետականությունից: Հիմա, եթե զնում ենք նրանց դուռը կամ նրանք են գալիս մեր դուռը, խնդիրը մեկն է, որովհետև ես խոնարհվում են երկրիս, ձեր բոլորի առաջ:

Հիմա նորից անդրադառնանք էդ 800 մլն դոլարին, որի չափով բյուջեն պետք է ավելանա: Երբ կարդացի դրա մասին, ինչ խոսք, սկզբում շատ ուրախացա, հետո, բնականաբար, սկսեցի մտածել. լավ, այս իշխանավորներին ո՞վ էր խանգարում, ի՞նչն էր կաշկանդում, որ այդքան ռեզերվ ունենալու պայմաններում 2007-ի բյուջեն

գոնե դրա կիսով չափ չէին ավելացրել, ո՞վ էր խանգարում, ո՞ր սրիկան: Այստեղ էլ հիշեցի մեկ ուրիշ պատմություն: Ես պատմությունն էլ պատմեմ, որ չստացվի հասանք Յին Յոն ու տեղից չենք շարժվում, մի քիչ մոտենանք մեր ժամանակներին: Ես պատմությունն էլ Լյուդովիկոս 14-րդի հետ է կապված: Երբ իր առաջին նախարարը՝ կարդինալ Ջուլիո Մազարինին անկողնում մահամերձ պառկած է լինում, Լյուդովիկոսը հարգանքի տուրքը մատուցելու համար այցելում է նրան, ասում է՝ կարդինալ, ո՞ւմ կցանկանայիր, որ քեզնից հետո լիներ առաջին նախարարը: Դե, ծագումով իտալացի լինելով, անգամ մահանալիս էլ այդ մարդու հումորը իր հետ էր: Մազարինին պատասխանում է՝ ճիշտ կանես, որ առաջին նախարար ընդհանրապես չունենաս, որովհետև ինքը՝ մեռնողը լավ էլ գիտեր, որ մեռնելուց առաջ կտակել էր 100 մլն լիվր ոսկիով, դա էլ այն դեպքում, երբ մեր կարդինալ ախպոր աշխատավարձը, մեր ազգային ջոջերի պես, թագավորության բյուջեից էր: Յիմա սրանցն է. բա 800 միլիոն դոլարը եդ որտեղի՞ց եք վերցնելու, չլինի՞ Մազարինիի պատմության հայկական տարբերակի հետ գործ ունենք. ճիշտ նույն պատմությունն է: Այսինքն՝ իշխանավորները հանգամանքների ճնշման ազդեցության ներքո ստիպված են ախորժակները կրճատել: Յիմա ինչո՞ւ են երկրորդ անգամ շեշտում դա: Պարզաբանեմ. որովհետև իշխանությունների կողմից ձեռնարկված այս քայլերի նկատմամբ մեզ մոտ հավատ չի լինի այնքան ժամանակ, մենք չենք ընդունի, որ նրանց քայլերն անդամալի բնույթ են կրում, այլևս անշրջելի պրոցես են, մինչև որ հարկերը չարամտորեն չմոլճողներից մի երկուսին նույն Քոչարյանը, Սարգսյանը օրենքի ողջ խստությամբ չպատժեն: Այ, այդ ժամանակ մենք կասենք՝ այո, սրանց պատժեցին, ինչն էլ մնացածների համար դաս կլինի: Յակառակ դեպքում, մենք, ցավոք, հակված ենք լինելու մտածել, որ իշխանության կողմից ձեռնարկված այս քայլերն ընդամենը նախընտրական քարոզարշավի մեջ տեղավորվող հնարք են: Ուզում են հավատալ ու հուսալ, որ առաջիկայում հարկեր չմոլճող թալանչիներին կպատժեն: Եթե հասցեներ են ու-

զում, հիշեցնեմ: Ազգային ժողովի ամբիոնից ճիշտ մեկ տարի առաջ, երբ քննարկվում էին կոռուպցիայի, կաշառակերության հետ առնչվող հարցեր, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը նիստին էլ մասնակցում էր, առաջին շարքում էլ նստած էր, ամբիոնից նրան դիմեցի՝ ասելով, որ միայն բնակարանային շինարարության ոլորտում նվազագույնը 40 մլրդ դրամի չափով գումարներ շրջանցում են հարկվելուց: Միտքս շարունակեցի՝ բերելով Երևանում կառուցվող էլիտար կոչված շենքերի օրինակը, վերջում էլ ավելացրեցի՝ եթե ես սխալ թվեր եմ նշում, ապա զրպարտելու համար իմ դեմ քրեական գործ հարուցեք, ինձ դատի տվեք: Մինչ օրս պահպանվում է քար լռություն, ոմանք էլ շտապեցին և ասացին՝ հնարավոր չէ, որ նման չարաշահումներ լինեն: Ճիշտ մեկ ամիս առաջ էր՝ միացնում են հեռուստացույցը, տեսնեմ՝ պարոն Քոչարյանը հարկային, մաքսային ծառայությունների պետերին հրավիրել է խորհրդակցության: Ի՞նչ եք կարծում, ինչ արդյունք ունեցավ դա: Հրապարակվեց հետևյալ փաստը. շինարարական ինչ-որ շինծու մի կազմակերպություն 35 տարբեր ենթակապալառու կազմակերպությունների հետ 1 մլրդ դրամի հասնող գումարի պայմանագրեր է կնքել և կնքված գործարքներից պետական բյուջե մուտք է գործել ընդամենը 35000 դրամ, այնինչ պետք է հարկերի տեսքով բյուջե մուտքագրվեր 350 մլն դրամ: Բացահայտված ընդամենը մի դեպքի պարագայում, 1 մլրդ դրամ գործարքի արդյունքում՝ այդքան մեծ գումարներ պետք է բյուջե մտնեին: Բա ինչո՞ւ այն ժամանակ, երբ ես ասում էի, որ շինարարական ոլորտը մեծապես գործում է ստվերում, տեր չէիք կանգնում: Մի գործ էլ ընդդիմության, մեր ասածով անեիք: Նախագահի մոտ անցկացված խորհրդակցությանը նստած էին հարկայինի էլ, մաքսայինի էլ ղեկավարները, դե թող բացատրեին, թե ինչպես է ստացվում, որ, հանկարծ, մեկ էլ պարզվում է, որ 1 մլրդ դրամ գործարքից ընդամենը մեկ կազմակերպություն 350 մլն դրամի չափով հարկեր չի մուծել: Եթե իշխանավորներն իսկապես որոշել են պայքարել ստվերի, կոռուպցիայի դեմ, կրկին հուշեմ. Երևան քաղաքում

Էլիտար կոչված շենքերի շինարարությունն իրականացնող կազմակերպությունների զգալի մասը թաքցնում է իր շահույթները և խուսափում է հարկեր մուծելուց: Նշեն մաս, որ շինարարական աշխատանքների ծավալի շուրջ 60%-ը բաժին է ընկնում բնակարանային շինարարությանը, իսկ դրանց առյուծի մասն էլ՝ էլիտար շինարարությանը: Այժմ հետաքրքրաշարժ թվաբանություն ներկայացնեն ձեր ուշադրությանը: Այսպես, հանձնվող շենքերի մեկ քառակուսի մետր բնակմակերեսը կառուցողի վրա նստում է 250-300 դոլարից ոչ ավել: Բնակարանային շուկայում դրա գինը տատանվում է 750-ից 2000 դոլար, նշեն, որ առաջին հարկի մակերեսների գները շատ ավելի բարձր են. դրանք հարմար են խանութների, բանկերի մասնաճյուղերի տակ օգտագործելու համար: Դե հիմա հաշվարկեք, թե ինչ գումարների հասնող շահույթներ են այստեղ պտտվում: Եվ գիտեք՝ ինչի վրա ես զարմանում. սրանց անկշտության վրա: Ակամայից մեկ ուրիշ պատմական զուգահեռ անցկացնեն. 1941թ. սեպտեմբերի 17-ին Ուինսթոն Չերչիլը իր նստավայր Դաունինգ սթրիթ 10-ում նախարարների խորհրդակցություն է հրավիրում: Օրակարգում քննարկվող ընդամենը մեկ հարց է լինում՝ Սովետական Միությանը Մեծ Բրիտանիան երբ և ինչ ծավալով պետք է օգնություն ցույց տար (այն ժամանակ երկրորդ ռազմաճակատ բացելու մասին դեռ խոսք լինել չէր կարող): Եվ Չերչիլը զգուշացնում է նախարարներին, որ խորհրդակցությունը շարունակվելու է այնքան ժամանակ, մինչև որ որոշում ընդունվի: Որովհետև այն տարիներին հակակոմունիստական քարոզչությունն այնքան էր մթազնել նրանց ուղեղները, որ ծանրութեթև էին անում, թե ո՞րն է ավելի ճիշտ՝ հիտլերյան ֆաշիզմը կործանի՞ Սովետներին, թե՞ վերջիններիս օգնեն, որ հանկարծ տիրակալությունը չտարածվի, և Բրիտանական կղզիներն էլ չպաշարեն: Երկար քննարկումներից հետո, երբ հայտարարվում է ընդմիջում, սըր Ուինսթոնը հրավիրում է նախարարներին իր հանգստի սենյակ և հպարտությամբ ցույց է տալիս մի պահարան: Այդ պահարանում սիգարների ամենագնահատվող տեսականի էր զարդատուփերի մեջ

դասավորված: Սա Կուբայի իշխանություններն են ուղարկել, ասում է վարչապետը: Երեք ամիս մնացել էր մաքսատանը, շարունակում է նա, ըստ որում Կուբայի կառավարիչները սիգարները Լոնդոն էին հասցրել Կարմիր խաչի խողովակով: Ջարմացած նախարարները փորձում են ճշտել և հարցնում են՝ երեք ամիս ինչո՞ւ է մնացել մաքսատանը: Չերչիլը պարզաբանում է. մնացել էին, որովհետև ես պետք է դրանք վերցնելու համար 50 ֆունտ սթեռլինգ մաքսատուրք մուծեի: Կրկնում է, որ ինքը չի չսխալվել, 50 ֆունտ սթեռլինգ: Ինչպես կարող էի ինձ թույլ տալ 50 ֆունտ մաքսատուրք մուծել, երբ դա 6 անգամ ավելին է, քան բրիտանացիների միջին աշխատավարձը: Թվերը չեմ խառնում, 50 ֆունտ, միջին աշխատավարձից էլ 6 անգամ ավելի: Խորհեք, հզոր և հարուստ Մեծ Բրիտանիայի վարչապետը ինչպիսի գսպլածություն է դրսևորում, որ իրեն թույլ չի տալիս, որ միջին աշխատավարձից 6 անգամ ավել բարձր գումարի ծախսեր անի իր անձի համար, երբ երկիրը պատերազմի մեջ է: Դա էլ այն դեպքում, երբ սիգարների արժեքը հարյուրավոր, եթե ոչ հազար անգամ ավելի թանկ արժեին, քան վճարվելիք տուրքն էր: Արդյունքում ձևը գտնում են՝ հուշելով նվիրատվություն անողներին, գլխի գցելով նրանց. նվիրատվություն եք արել, մինչև վերջ արեք, էդ մաքսատուրքն էլ դուք մուծեք: Եվ կուբացիները հետևում են այդ առաջարկին, մուծում են: Բա հիմա էս մեր «խեղճ մաքսավորներին», էս մեր «խեղճ հարկայիններին» ո՞ւմ հետ համեմատեմ: Աստվածաշնչում հիշատակած և ռուսերենով իմաստն արտահայտող դիպուկ բառ կա՝ «мытарь», մաքուր սրանք են: Այ տմաշեններ, Ուիմսթոն Չերչիլը անհարմար էր զգում 50 ֆունտ սթեռլինգ ծախսի իր հաճույքի համար, որիդ տակը նայում ենք, ձեր նստած ավտոների գինը 200 հազար դոլարից պակաս չի, բայց չէ՞ որ մենք էլ պատերազմող երկիր ենք, չէ՞: Մեր ռազմաճակատն էլ Ղարաբաղի ռազմաճակատն է, Մեծ Բրիտանիայում հիտլերյանն էր, էստեղ՝ ադրբեջանա-թուրքականն է, ի՞նչ տարբերություն, ռազմաճակատը ռազմաճակատ է, պատերազմն էլ՝ պատերազմ: Բա Մեծն Չերչիլը 50 ֆունտ սթեռլինգ էր ամաչում

շռայլեր, դուք ո՞նց չեք ամաչում 100-200 հազարանոց մեքենաներով եք պարապ տեղը երևանով ֆռֆռում: Հարցեր են, շատ լուրջ հարցեր են, և սրա մասին էլ պե՞տք է մտածենք. իհարկե, պետք է մտածենք:

Հիմա, ինչ վերաբերում է այս օրերին բուրդին հուզող, ավելի ճիշտ կլինի ասել՝ թերթերի միջոցով աղմկահարույց դարձած թեմայի մասին՝ Ռոբերտ Քոչարյանի և Լևոն Տեր-Պետրոսյանի հեռակա բանավեճի: Գիտեք, շատ են մտածել, թե ինչպես տեղի ունեցածը մեկնաբանեն, բայց քանի որ խոստացել էի Մարկոս Ավրելիոսի խորհրդին հետևել և սիրով տրամադրվել ինձ վիրավորողներին, որոշեցի ստեղծված վիճակին համահունչ պատմական ինչ-որ գուգահեռ գտնել: Դա էլ այնքան հեշտ չէր: Ստքովս հայտնի պատմություն անցավ: Ո՞րն է այդ պատմությունը. 19-րդ դարում Վիկտորիա թագուհու իշխանավարության ժամանակ Բրիտանիայի կառավարությունում վարչապետի պաշտոնում իրար փոխարինում էին Բենջամին Դիզրայելին և Ուիլյամ Գլադստոնը: Սեկ Դիզրայելին էր դառնում վարչապետ, մեկ էլ՝ Գլադստոնը: Դիզրայելին պահպանողականների լիդերն էր, մյուսն էլ՝ լիբերալների: Եվ, բնականաբար, քաղաքական հակառակորդներ էին: Նրանց առնչվող այս պատմությունը տարբեր ձևով են ներկայացնում, սակայն դրա իմաստը մեկն է: Եվ, այսպես, գալիս են Դիզրայելիին ասում են՝ սըր Բենջամին, լուր ունենք ձեզ հայտնելու: Դիզրայելին պատասխանում է՝ խնդրեմ: Դուք գիտե՞ք արդյոք, ասում են, որ Գլադստոնը թեմզա գետն է ընկել: Դա դժբախտություն է, դա դժբախտություն է, բացականչում է Դիզրայելին: Բայց գիտեք, նա չի խեղդվել, փրկվել է: Դա արդեն ողբերգություն է, ասում է սըր Բենջամինը: Հիմա Լևոնի ու Ռոբերտի բանավեճի մոտիվներով արդեն կարելի է նմանատիպ անեկդոտ պատմել. Ռոբերտ Սեդրակիչին լուր են բերում. գիտե՞ք Լևոն Տեր-Պետրոսյանը նախագահական ընտրություններին իր թեկնածությունը չի դնելու: Դա դժբախտություն է, դա դժբախտություն է, պատասխանում է Քոչարյանը: Բայց ասում են, որ կարող է փոշմանի ու այ-

նուամենայնիվ առաջադրվի: Դա արդեն ողբերգություն կլինի, պատասխանում է Քոչարյանը: Հիմա մենք ուզում ենք մեր ժողովրդին ես հնարավոր ողբերգությունից փրկել: Իսկ ո՞րն է ճանապարհը. դրա ճանապարհը մեկն է. ընդդիմադիր ժողովրդավարական և ոչ ընդդիմադիր ուժերը պարտադրված են անպայման միավորվելու: Միավորվելու և այլընտրանքային թեկնածու իրենց միջից, իրենց շարքերից առաջադրելու, որ մեր ժողովուրդը հանկարծ կրկին ու կրկին չկանգնի մերժելի երկընտրանքի առաջ՝ կամ սևի, կամ սպիտակի ընտրության առաջ: Եվ, այստեղ, եկեք արդեն ամենայն լրջությամբ հասկանանք, թե ինչպիսին է պահը: Երբ սեպտեմբերի 7-ին «Ազգային Միաբանություն կուսակցությունը» հանդես եկավ հայտարարությամբ՝ դիմելով քաղաքական բոլոր ուժերին, թե դիմադիր և թե ընդդիմադիր, նաև դիմելով պարոններ Ռոբերտ Քոչարյանին, Սերժ Սարգսյանին, մենք հանդիպման անհրաժեշտության հետևյալ դրդապատճառներն էինք նշել: Ընթերցեմ մեր հայտարարության այդ հատվածը. «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը վերահաստատում է Արտաշես Գեղամյանի այս մոտեցումը (այսինքն՝ խորհրդակցության հրավիրել բոլոր ազդեցիկ քաղաքական ուժերի լիդերներին- խմբ.): Ավելին՝ նպատակահարմար ենք գտնում ընդլայնել նման հանդիպումների շրջանակը՝ ընդգրկելով թե իշխանական, թե ընդդիմադիր այլ կուսակցությունների առաջնորդներին: Մենք հույս ենք հայտնում, որ ՀՀ նախագահի բոլոր թեկնածուները, առաջնորդվելով հայրց պետականության ամրապնդման ապահովման հրատապ դարձած գերխնդրի լուծման առաջնահերթություններով, նախընտրական շրջանում հանդես կգան համատեղ հայտարարությամբ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման սկզբունքների շուրջ միասնական դիրքորոշման մասին»: Ահա, սա էր ստեղծված բարդ իրավիճակից դուրս գալու մեր առաջարկած բանալին: Եվ հիմա մեր նախածեռնած ամենալուրջ քննարկումներն անհարկի արժանացնում են անգամ իսկ վիրավորանքի հասնող գնահատականների ու քննադատության, մինչդեռ

մեր բանակցությունները հենց այս առանցքային հարցի շուրջն են եղել: Դեռ սեպտեմբերի 7-ին էինք ասել, որ նախագահական ընտրությունների քարոզարշավի ժամանակ շահարկումներից զերծ մնալու համար եկեք գոնե այս հարցում, գեթ մեկ անգամ ազգովի միասնական մոտեցում ունենանք: Թույլ չտանք, որ ադրբեջանական, քուրքական պրոպագանդան, քարոզչամեքենան չարախնդա և սկսի գովաբանել մեր մայր խնդրի լուծմանը ըստ մեզ ոչ հայանպաստ այլակարծություն հայտնողներին, մյուսներին՝ պախարակելով: Թուրքը և ազերին մեր լավը չեն ուզում, անգամ իսկ որևէ մեկին գովելով, ինացեք, նրա տունն էլ հետն են քանդում: Իսկ առավել վտանգավորն այն է, որ փորձ է արվում ժողովրդին մոլորության մեջ գցել, ժողովրդին տարակուսանքի գիրկը նետել: Դրանց հաշվարկը պարզ է՝ շփոթված, մոլորված ժողովուրդը ի զորու չի լինելու համախմբվել, ի զորու չի լինի միաբանվել, ի զորու չի լինի դիմակայել մեր երկրի առաջ ծառացած մարտահրավերներին, որոնք գնալով ահագնանում են:

Ահա, այսպիսին են մեր գնահատականները և մոտեցումները, ահա այսպիսին են այն հարցերն ու խնդիրները, ինչի մասին ես պարտքս համարեցի զեկուցել ձեզ, հարկ համարեցի ձեզ հետ միասին խորհրդի նստել: Անկասկած, առաջիկայում էլ ամենատարբեր մեկնաբանությունները կլինեն մեր նախաձեռնությունների նկատմամբ, և այդ տարաբնույթ գնահատականները պայմանավորված կլինեն ամենևին էլ ոչ մեր նկատմամբ ունեցած թշնամական վերաբերմունքով, այլ՝ մեր վարած քաղաքականության թուրըմբռնման արդյունք, լիարժեք ինֆորմացիայի բացակայության արդյունք: Այն, ինչ ես հիմա Ձեզ ասում եմ, կրկնում եմ, չկարծեք թե քնեցի՝ արթնացա, և երազում տեսածս եմ պատմում: Ոչ, հազարավոր էջ ամենատարբեր վերլուծություններ են կարդում ու մշակում, դրանցում գտնում են ընդհանրականը, զրի առնում այն ամենը, ինչն իմ տեսակետից հրատապ է, և անհրաժեշտ են համարում ներկայացնել նախևառաջ իմ կուսակից գործընկերների ուշադրությանը: Ինչու չէ,

ճան վարչակարգին ընդդիմադիր բոլոր կուսակցությունների ուշադրությանը, ինչու չէ՝ ճան իշխանությունների ուշադրությանը, քանզի բոլորիս համար Հայրենիքը մեկն է: Եվ թող որևէ մեկի մտքով հանկարծ չանցնի, թե անձնավորված, անվանական քննադատությունը Արտաշես Գեղամյանի ելույթներում կարծես թե փոքր պակասել է, խեղճ լինի: Այո, պակասել է, սակայն այսօր Հայաստանի թե՛ ներսում, թե՛ երկրի շուրջ ստեղծված վիճակն է պարտադրում ու ստիպում վարվել այսպես: Հանրապետությունում առկա վիճակը, որը, ցավոք, մայիսի 12-ի Ազգային ժողովի ընտրություններից հետո էլ ավելի վատթարացավ: Մի դեպք էլ հիշեցի, կարծեմ, Հայկ Բորիսովիչի հետ միասին էինք: Այո, 1999 թ. ամռանը «Իրավունք և Միաբանություն» պատգամավորական խմբակցությունը Կառավարության նախաձեռնությամբ հանդիպեց երջանկահիշատակ Վազգեն Սարգսյանին: Ես էի, Ալիկն էր, Հայկն էր, Համլետն էր՝ Հարությունյան, մի խոսքով, մեր խմբակցության ողջ կազմով էինք: Սպարապետը մեզ շատ ջերմ ընդունեց, արտակարգ ջերմ: Ասես թե հանդիպման ընթացքը կանխորոշելու նպատակով ասաց, որ ուզում է այն գործնական մթնոլորտում անցնի և որ նա նորմալ է վերաբերվում այն հանգամանքին, երբ մենք ընդդիմադիր դիրքերում ենք, իսկ ինքն էլ իշխանությունն է ներկայացնում: Խնդրեց, որ իրեն գործնականորեն հուշենք, թե որ հարցերն են այսօր հրատապ լուծում պահանջում, ըստ ձեզ՝ կարևոր: Մի շարք հարցերի վրա կանգ առնելուց առաջ, ես ընդամենը մի հարց ուղղեցի Վազգենին: Ըստ որում, հանդիպումն անմիջական էր, «դու»-ով էինք իրար դիմում, անուններով, առավել ևս՝ Վազգենին ես դեռ «Հայֆիլմ» կինոստուդիայում աշխատած ժամանակներից էի ճանաչում, Մաշտոցի շրջանում իմ աշխատած տարիներից: Ասացի՝ Վազգեն, ինձ ընդամենը մի հարցի պատասխան տուր: Խնդրեմ, ասա հարցդ: Քո Կառավարության կազմում, շարունակեցի ես, ցույց տուր որևէ մի նախարարի, որը եթե դու մի բան ասես, նա էլ հոգու խորքում կամ իր գիտելիքների, իր իմացության շրջանակում գտնի, որ առաջարկդ սխալ է, քեզ

կհակաճառի՞, կպնդի՞, որ դա այդպես չէ, այլ՝ այսպես է: Որ չհամաձայնվի քեզ հետ, մինչև վերջնական որոշում կայացնելը: Խնդրում եմ, Կառավարությունում ցույց տուր այդպիսի մեկին, որը քեզ առարկի: Ի՞նչ եք կարծում, Վազգենն ի՞նչ արեց. նախ նա շատ ջերմ ընդունեց հարցս: Ասեմ նաև, որ մենք երկար սեղանի շուրջ էինք նստած, ես ու Վազգենը՝ կողք կողքի, ընկերներս՝ մեզ դեմ հանդիման: Վազգենը մոտեցավ գրասեղանին, վրայից վերցրեց ինչ-որ մի բան ու վերադարձավ: Ի՞նչ եք կարծում, ձեռքին ի՞նչ էր. պարզվեց՝ թութակի արծանիկ է: Ասաց, որ նվեր է ստացել: Եվ այս նվերը, որ ստացել է, շատ է օգնում իրեն աշխատանքում, երբ խորհրդակցությունների ժամանակ ինչ ինքն ասում է, մյուսները գլուխները որպես համաձայնության նշան սկսում են տմբտմբացնել, կանխում է նրանց՝ ասելով, որ դրա կարիքը չկա, քանի որ թութակի արծանիկ արդեն ունի: Հանդիմանում էր գործընկերների՝ պահանջելով, որ իրեն ասեն այն, ինչը գտնում են ճիշտ: Հիմա ես դիմում եմ հարգարժան Սերժ Սարգսյանին՝ ո՞վ կա ձեր գլխավորած Կառավարությունում, ցույց տվեք գեթ մեկին, որը, եթե դուք որևէ վիճահարույց բան ասեք, հանդգնի հակառակ տեսակետ հայտնել, պնդի, որ ձեր ասածը ճիշտ չէ, չկա այդ մարդը: Ազգային ժողովում ո՞վ ձեզ այլակարծություն կհայտնի, փաստարկված այլ տեսակետ կհայտնի, առավել ևս լուրջ հարցերի շուրջ. չկա այդ պատգամավորը կամ խմբակցությունը: Ի՞նչ, որ քննադատում, կպնուն էինք ձեզ, թշնամի՞ էիք մեզ, հակառակը, գութ էինք ուզում ձեզանում շարժել: Ուզում էինք այնքան ցցուն դարձնել խնդիրը, որ մտածեիք. եթե այս մարդիկ լուրջ մարդ են ու նման գնահատականներ են տալիս, կնշանակի՝ վիճակն իսկապես բարդ է: Ահա, դրա համար ենք անընդհատ ասում, որ հանրապետությունում ստեղծված ճահճային իրավիճակը խիստ մտահոգիչ և պայթյունավտանգ է:

Մեր հայրենիքի համար այս պատասխանատու ժամանակաշրջանում «Ազգային Միաբանություն կուսակցությունը», ինչպես վկայում է մեր այսօրվա կոնֆերանսը, ինչպես վկայում են մեր կուռ շարքերը,

եղել է, կա ու կլինի հույսի, լույսի, հաղթանակի կուսակցություն: Ընդհակառակը Ձեզ բոլորիդ: *(Բուռն ծափահարություններ):*

Հարգելի գործընկերներ: Մեծ խնդրանք ունեմ ձեզ, ուզում եմ այն անպայման հասցնեք հասցեատերերին: Ցանկանում եմ խոնարհաբար շնորհակալություն հայտնել 50 հազար այն մարդկանց, այն ընտրողներին, ովքեր քաղցած լինելով՝ հաց չմուրացին, փող չառան, ձայնը տվեցին մեզ, ովքեր ծարավի լինելով՝ ջուր չմուրացին, ձայնը տվեցին մեզ: Որովհետև թե՛ առաջինները, թե՛ երկրորդները ծարավի էին ոչ թե նյութականի, փողի, ծարավի էին արդարության, և մենք կիրականացնենք արդարության ու ճշմարտության նրանց բաղձալի երազանքը:

Հարգելի գործընկերներ: Մեր կուսակցության նախագահությունը պետք է անդրադառնա ՀՀ նախագահի թեկնածուի առաջադրման հարցին: Ձեզ պարզ ասեմ, երբեք ու երբեք չեմ ցանկանա մնանվել այն վազորդին, որն ասում է՝ “До финиша не дойду, зато согреюсь” («Վերջնագծին չեմ հասնի, փոխարենը՝ կտաքանամ»): Առաջին, նման խնդիրը ես չունեմ լուծելու, երկրորդ՝ ինքնակայանելու խնդիր ևս չունեմ: Միակ խնդիրն այն է, որ մենք ձեզ հետ գիտակցենք, որ երկրի առաջ ծառացած մարտահրավերները, ցավոք, բազմաթիվ են՝ տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական, արտաքին քաղաքական ոլորտներում: Դրանց լուծումները հրատապ են և պետք է լինեն բոլորիս ուշադրության կենտրոնում՝ հրապարակում: Բնականաբար, մեկ ժամվա ելույթում, այն էլ նման լուրջ թեմաների շուրջ համակողմանի վերլուծություն կատարելը, իհարկե, դժվար է: Դժվար է ոչ թե գիտելիքներ չունենալու պատճառով, ասելիք չլինելու հետևանքով, այլ դժվար է, որովհետև դա պահանջում է փաստաթղթային ձևակերպումներ, լուրջ, համակարգված և հիմնավորված ամփոփումներ: Կրկնում եմ, փաստաթղթային ամփոփումներ: Ուստի, անհրաժեշտ է, որ մենք այդ բոլորը փաստաթղթային տեսքի բերենք, հրապարակենք, որից հետո կխորհրդակցենք մեր գործընկերների հետ: Արդյունքում, եթե կտեսնենք, որ կա այն գործիչը, որը

կատարյալ տիրապետում է այդ բոլոր հարցերի լուծման մեխանիզմներին և դրանք կյանքի կոչելու իր պատրաստակամությունն է հայտնում և, որ ամենակարևորն է, համոզում է մեզ, որ կարող է, այո, նվազագույն կորուստներով երկիրը դուրս բերել ստեղծված ծանր վիճակից, բնականաբար, նման դեպքում հանրապետությունում ստեղծվում է բոլորովին մի նոր իրավիճակ: Ահա հենց այդ ժամանակ մենք կատարենք նրան առանց որևէ անձնական ակնկալիքի: Ցավոք, այսօրվա Ազգային ժողովը ի զրու չէ մշակել այս բարդ իրավիճակում խիստ պահանջված ծրագրային այնպիսի փաստաթուղթ, ուր արտացոլված կլինեն երկիրը վտանգավոր գործառույթներից զերծ պահելու և առաջընթացի ուղիները: Ակնհայտ է, որ այնտեղ չկան այլևս «Արդարություն» դաշինքի լուսավոր տղաները, «Ազգային Միաբանության» մտածող տղաները: Փոխարենը բազում են այն պատգամավորները, ովքեր (բացառությամբ առանձին անհաշտ, բանհմաց և սկզբունքային պատգամավորների) պարզապես նրա համար են, որ վերը հիշատակած թութակի դերակատարությունն ստանձնեն, ինչ ասեն՝ ի պաշտպանություն վերադասի գլուխները տմտմբացնեն: Էլ չեն ասում, որ կան շուրջ 80 պատգամավորներ, ովքեր լռության ուխտ են արել, բերանները չեն բացել: Եթե ասեն՝ ընդհանրապես չեն բացել, դա էլ սուտ կլինի. ամեն նիստին, եթե նրանք մասնակցել են, ապա մի երկու անգամ բերանները, անշուշտ, բացել են՝ կամ հորանջելիս, կամ էլ գկռտալիս: Դա է եղել սրանց գործը:

Սիրելի ժողովուրդ, խորին շնորհակալություն են հայտնում ձեր այս հպարտ կեցվածքի համար: Չթաքցնեն, որ առանձին թերահավատներ կարծում էին, որ մեր կուսակցության ընտրանին, համախոհներն ընկճվել են, հուսահատվել են, թևաթափ են եղել: Սակայն ես այսօր վերստին համոզվեցի, որ դա բացարձակապես այդպես չէ, ընդհակառակը, էլ ավելի կուռ դարձան մեր շարքերը, պատահական ուղեկիցները, պապուտչիկները դուրս թռան: Արդյունքում մաքրվեցինք, փոխարենը եկան այն մարդիկ, ովքեր մինչև վերջերս հեռու

էին քաղաքականությունից: Այս հանդիպումը, մեր այս կոնֆերանսը վերստին հաստատում է, որ, այո, Հայոց պետականությունը՝ ի դեմս «Ազգային Միաբանություն կուսակցության» և նրա ակտիվի, ունի հզորագույն հենարան, ու դա խարխուլ էլ չի կարող և ոչ մի ընտրություն: Խորին շնորհակալություն Ձեզ՝ բոլորիդ: *(Բուռն ծափահարություններ):*

ՇԱՅՈՂԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐՆ ԵՆ

«**Ա**զգային Միաբանություն կուսակցության» (ԱՄԿ) նախագահ Արտաշես Գեղամյանն «Առավոտ»-ի հետ զրույցում կարծիք հայտնեց, որ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին գործերի Կոմիտեի անդամների որոշումից՝ հավանություն տալ հայերի ցեղասպանության ճանաչման 106 բանաձևին, շահել են առաջին հերթին ԱՄՆ-ն և Ամերիկայի ժողովուրդը:

ԱՄԿ նախագահին խնդրեցինք մեկնաբանել ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին գործերի Կոմիտեի կողմից 106 բանաձևին հավանություն տալուց հետո հայաստանյան արձագանքները: Արտաշես Գեղամյանը նկատեց, որ հայաստանյան արձագանքներն ամենևին էլ համարժեք չէին կատարվածին, և ահա թե ինչու. «Կարծես թե մի չար ճակատագիր է հետապնդում մեր ժողովրդին: Մարտավարական կամ բարոյական հաղթանակներ կրելով, ավա՛ղ, մենք միաժամանակ մեր արձագանքներով ռազմավարական լուրջ սխալների հիմքեր ենք դնում: Համոզված եմ, որ բանաձևի ընդունման փաստով այս օրերին ողջ ազգս ներքին գոհունակության զգացում է ապրում, որ բոլորիս համար այս ցավոտ և պատվախնդիր հարցում վերջապես արդարություն հաստատվեց նաև ԱՄՆ Կոնգրեսի համապատասխան Կոմիտեում: Եվ հիմա միայն ծուլներն են, որ չեն խոսում տարած բարոյական հաղթանակի մասին: Մինչդեռ շատ ավելի ճիշտ կլիներ խորհել, թե Հայոց պետականության գերակա խնդիրները կատարվածից ինչպիսի՞ վարքագիծ որդեգրել են մեզ թելադրում: Արդյո՞ք արդարացված է, որ ոմանք ոգևորվում են այն աստիճանի, որ փորձում են հավանության արժա-

նացած բանաձևը ներկայացնել իբրև 75 միլիոնանոց թուրքական պետության պարտություն: Ի՞նչ, դրանով մենք մեր Հայ դատի սրբազան գործի՞ն ենք օգնում: Իհարկե, ոչ: Իսկ ինչո՞ւ չենք մտածում, որ զգացմունքային, չկշռադատված գնահատականներով Թուրքիայի իշխանությունների համար ստեղծում ենք նպաստավոր պայմաններ՝ ապավինելու ԱՄՆ-ի ներողամտությանը և ծավալելու սանձարձակ գործողություններ այլ ոլորտներում, այլ երկրների նկատմամբ: Կարծում են, ճիշտ կլինի, որ մերօրյա մտքի ինքնահավան տիտաններն ավելի շատ կենտրոնանան այլ ուղղություններով. դիցուք, շահագրգիռ քննարկումներ սկսել, թե ի՞նչ տվեց բանաձևի ընդունումը ԱՄՆ-ին, նրա ժողովրդին: Հանդգլած կարող են ասել, որ միջազգային հանրության կողմից առավել բարձր գնահատականների կարժանանան հենց ամերիկացիները, ի դեմս նրանց ներկայացուցչական մարմնի՝ Կոնգրեսի: Բանաձևին հավանություն տալը աշխարհին վերստին համոզեց, որ, ԱՄՆ-ը, նախ, իրապես, ժողովրդավարական երկրների շարքում այսօր էլ փարոս է, որտեղ գործնականում ապահովված է երկրի Սահմանադրությամբ նախատեսված իշխանության տարբեր թևերի ազատ և անկախ գործելու իրավունքը: Երկրորդ, քննարկումները և ընդունված որոշումը կրկին աշխարհին հանոզեցին, որ կոնգրեսականները գիտակցում են սեփական երկրի հզորությունը, ինչն էլ հնարավորություն է ընձեռում գործել խղճի մտքք, անգամ իսկ հակառակ տվյալ պահին երկրի համար ավելի կարևոր թվացող շահերի: Երրորդ, ակնհայտ դարձավ, որ անպտուղ է ԱՄՆ-ի նման երկրի հետ խոսել շանտաժի լեզվով: Պակաս կարևոր չեն համարում նաև այն, որ ընդունված որոշումը ամերիկյան վարչակազմին հնարավորություն կտա ավելի համոզիչ պնդելու, որ Իրաքում, իսկապես, նրանք առաջնորդվել են ժողովրդավարություն հաստատելու վեհ գաղափարով: Ըստ որում, նրանք մերժում են ժողովրդավարության հաստատումը ամեն գնով: Անգամ իսկ, եթե այդ քայլով նրանք ստիպված են «նեղացնել» Իրաքում իրենց ամենասերտ դաշնակից Թուրքիային՝ մերժելով Հայոց ցեղասպանության

ճանաչման գործում նրանց կողմից պարտադրվող ոչ ժողովրդավարական մոտեցումների կիրառումը: Չորրորդ, ընդունված որոշմամբ, ասես թե, հիմնավորեցին դեռ երկու-երեք տարի առաջ Ջորջ Բուշի կողմից հայտարարված ժողովրդավարական Մեծ Մերձավոր Արևելք ձևավորելու գաղափարին հավատարիմ լինելու վճռակա-նությունը: Հինգերորդ, որքան էլ տարօրինակ հնչի, ընդունված բա-նաձևը վերահաստատեց ԱՄՆ Հանրապետական կուսակցության նորագույն պատմության մեջ, թերևս, ամենահեղինակավոր նախա-գահ Ռոնալդ Ռեյգանի կառավարման փիլիսոփայության հիմնարար թեզը, որով նա հանդես էր ելել ԱՄՆ նախագահ դառնալու առիթով ունեցած ինաուգուրացիոն հանդիսությունների ժամանակ: Ռոնալդ Ռեյգանն ասել էր, որ Հանրապետական կուսակցության հաղթանա-կի արդյունքում ԱՄՆ-ում տեղի է ունեցել արժեքների նոր վերաի-մաստավորում, երբ առանձին մարդու ազատությունն ու արժանա-պատվությունը վեր են դասվում պետության շահից: Ահա այս հարցն էր Ռեյգանի որդեգրած կառավարման փիլիսոփայության հիմնաքա-րը և դրա պատասխանում էր նա տեսնում հանրապետականների ու այլոց միջև եղած սկզբունքային տարբերությունը: Փիլիսոփայական հենց այս տեսակետն էր, որ Կոնգրեսում քննություն բռնեց: Իսկ հե-տաքրքրականն էլ այն էր, որ դրա կենսունակությունը քննության են-թարկեց Բուշի Հանրապետական վարչակազմը: Եվ, վերջապես, ըն-դունված որոշումը թե՛ ԱՄՆ-ի և թե՛ Եվրամիության անդամ երկրների համար ավելի պարզ կդարձնի, թե որքանով է այսօրվա Թուրքիան ժողովրդավար և արդյո՞ք պատրաստ է անդամակցելու Եվրամիու-թյանը:

Ահա այս ամենի գիտակցումով մենք, այո, պետք է մեր շնորհա-կալական խոսքն ուղղենք ԱՄՆ-ի Կոնգրեսի արտաքին գործերի Կո-միտեի անդամներին, հայտնենք մեր գոհունակությունը, նշենք, որ կոնգրեսականները նախևառաջ բարձր պահեցին սեփական երկրի պատիվը՝ դատապարտելով Օսմանյան կայսրությունում 20-րդ դա-րի սկզբին տեղի ունեցած հայերի ցեղասպանության փաստը:

Կարծում եմ, այսպիսի ուղղվածություն պետք է ունենան մեր արձագանքները, առավել ևս ԱՄՆ-ի Կոնգրեսի լիազույնար նիստից առաջ»: Ահա նման տեսակետների հայտնեց «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը:

Մարգարիտ Եսայան

ՉԿԱ ԹՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԱՊԱՇԽԱՐԱՆՔԻ

Հարցազրույց «Ազգային Միաբանություն կուսակցության» (ԱՄԿ) նախագահ Արտաշես Գեղամյանի հետ

- **Ընդդիմադիր քաղաքական գործիչներից շատերը «ռոմանտիզմ» էին որակել ձեր առաջարկը, թե՛ երկրի առջև ծառայած ներքին ու արտաքին մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է քննարկումներ կազմակերպել ոչ միայն ընդդիմադիր ուժերի հետ, այլև իշխանությունների: Սակայն վերջերս ՀՀՇ վարչության նախագահ Արարատ Զուրաբյանը չբացառեց, թե առաջիկայում Լևոն Տեր-Պետրոսյանը կհանդիպի ՀՀԿ-ի և «Բարգավաճ Հայաստանի» ղեկավարների հետ: Ի՞նչ է սա նշանակում:**

- Արդեն ավանդույթ է դարձել, երբ ԱՄԿ-ն այս կամ այն հարցի շուրջ իր տեսակետն է արտահայտում (որն արմատապես տարբերվում է գերիշխող մտայնություններից), բոլորը տարակուսանքով, թերահավատությամբ են մոտենում դրանց: Բարիդրացիական դրսևորումն էլ այն է, որ մեղադրում են մեզ, մասնավորապես՝ ինձ, քաղաքական ռոմանտիզմի մեջ: Այո, դեռ 2 ամիս առաջ «Մետելիցայում» ես բարձրաձայնեցի մեր կուսակցության դիրքորոշումը, որ այսօրվա գնալով ահագնացող մարտահրավերները, որոնք արդեն իսկ վտանգում են մեր պետականությունը, ստիպում և պարտադրում են քաղաքական ու պատասխանատու ողջամիտ ուժերին համախմբվել, իշխանությունների հետ կլոր սեղանի շուրջ մտքեր փոխանակել՝ դրանց առաջն առնելու համար: Ես այն ժամանակ իմ գործընկերների կողմից «մեղադրվեցի» քաղաքական ռոմանտիզմի մեջ:

Ինչ խոսք, տեղում հակադարձեցի՝ ռոմանտիզմի և պրագմատիզմի համադրումը քաղաքական գործչին մեծ է դարձնում: Իսկ այն իրողությունը, որ ես արդեն 17 տարի է ինչ պետական պաշտոնյա չեմ, ԱՄԿ-ն էլ 10 տարեկան է՝ իր ստեղծման օրից լինելով ընդդիմադիր, այսօր էլ շարունակում է մնալ հանրապետության ամենագղեցիկ քաղաքական ուժերից մեկը, ինքնին վկայում է, որ մենք նաև պրագմատիկ ենք: Սա է փաստը: Չի կարելի լինել Հայաստանի նման յուրահատուկ երկրում քաղաքական գործիչ և ապավինել միայն ու միայն կարծրացած մոտեցումների: Արտասովոր իրավիճակը, որում հայտնվել ենք մենք, պարտադրում է մեզ ազգովի փնտրել ոչ ստանդարտ լուծումներ: Լուծումներ, որոնք մեր դարավոր «բարեկամների» համար անակնկալ կդառնան: Իսկ նրանք, համոզված եմ, այս օրերին ջանք ու եռանդ չեն խնայում, որ երկրի քաղաքական ընտրանին բաժան-բաժան եղած լինի՝ չկարողանալով դիմակայել պետության առաջ ծառայած վտանգներին ու փորձություններին: Եվ նրանք դա անում են՝ փորձելով քաղաքական այս կամ այն գործչին հակադրել իշխանությանը, գովաբանելով՝ մեկին, փնովելով՝ մյուսին: Հիշում եք, թե վերջերս ադրբեջանաթուրքական մամուլն ինչ գովեստի խոսքեր էր շռայլում մեր քաղաքական գործիչներից մեկի հասցեին՝ կապված ԼՂՀ հիմնահարցին վերջինիս տված գնահատականների հետ: Ուստի, ստեղծված իրավիճակում, այո, ես դրական եմ համարել Լ. Տեր-Պետրոսյան-ՀՀԴ ներկայացուցիչների հանդիպումը և վերջերս ՀՀԾ առաջնորդի հայտարարությունը, որ չի բացառվում Լ.Տեր-Պետրոսյանի հանդիպումները ԲՀԿ-ի և ՀՀԿ-ի ղեկավարների հետ: Բայց նման հանդիպումներն ինքնանպատակ չպետք է լինեն, դրանք հասարակությանը չպետք է զուտ ապատեղեկատվության, մոլորության մեջ գցելու միջոց դառնան, որ՝ տեսեք, լայնախոհություն է դրսևորվում, հինը մոռացվել է, նոր էլ է բացվում կուսակցությունների փոխհարաբերությունների մեջ... Այդ հանդիպումները ժողովրդի կողմից ընդունելի կլինեն այն պարագայում, երբ բարձրաձայնվեն հանրապետության առջև ծառայած խնդիրներ:

րը. մասնավորապես այն, որ Հայաստանի Հանրապետությունը տնտեսական մրցակցությունում խիստ տանուլ է տալիս Ադրբեջանին, որ վերջինս ռազմաքաղաքական դաշինք է ձևավորել Թուրքիայի և Վրաստանի հետ, որ գնալով ավելի սերտ են դառնում Ադրբեջան-Իրան և Թուրքիա-Իրան հարաբերությունները՝ մեզ համար դրանից բխող անցանկալի զարգացումներով: Ցավոք, մարտահրավերների այս շարքը թվարկվածներով չի ավարտվում: Եվ երբ համադրում ես այս ամենը ու հետո անդրադառնում ես հայաստանյան ներքաղաքական զարգացումներին, կուսակցությունների որդեգրած գործառույթներին՝ չգիտես՝ խնդա՞ս, թե՞ լաս: Մի պահ պատկերացրեք, թե 2020 թ. հեռավորությունից փորձում ենք վերլուծել այն, ինչ տեղի է ունենում այսօր: Կտեսնենք, որ առկա վտանգների առաջն առնելու գերխնդիրը շրջանցվում է կուսակցությունների և նրանց լիդերների կողմից, համակողմանի քննարկումների առանցք չի դառնում: Տպավորություն է ստեղծվում, որ միայն մեկ խնդիր է այսօր դրված՝ սևացնել կամ սպիտակացնել, արդյունքում է՛լ ավելի բաժանել ազգը. ով Տեր-Պետրոսյանի հետ չի՝ ազգի դավաճան է, ով Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան զույգի հետ չի՝ նա ուզում է երկիրը տանել ապակայունացման և ցնցումների ճանապարհով: Այդպես չի կարելի: Այսօր առավել, քան երբևէ, պետք է, որ մարդիկ գիտակցեն՝ հազարամյակների պատմություն ունեցող հայ ժողովրդի գալիք սերունդների համար հայաստանյան մերօրյա քաղաքական այրերը կարող է հիշվեն որպես անհեռատես, ազգը վտանգների հորձանուտը նետող անձինք: Մենք չենք ուզում այդպիսին լինել պատմության համար և գիտակցաբար հարվածը վերցնում ենք մեզ վրա՝ ասելով, որ, այո, անպայման պետք է Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան իշխանական թիմը նստի կլոր սեղանի շուրջ նույն Լ.Տեր-Պետրոսյանի, Ա. Գեղամյանի, Պարույր Հայրիկյանի, Մանուկ Գասպարյանի, Արթուր Բաղդասարյանի, Շավարշ Քոչարյանի և այլոց հետ: Նստեն ու որոշեն՝ որիս դերակատարությունն ինչպիսին է՝ երկրի ճակատագրի համար պատասխանատվության բեռը վերցնելու առումով և ոչ թե

այս կամ այն պաշտոնը ստանձնելու նպատակով: Խնդիրը պետք է լինի մեկը՝ կոնսուլիդացնել ազգը: Նման դեպքում միայն մենք իրավունք կունենանք կոչվելու ժամանակի պահանջներին համահունչ գործող քաղաքական գործիչներ: Թե չէ, երբ նայում ես թերթերը, բառիս բուն իմաստով, կարող ես խորը հիասթափություն ապրել. մի՞թե ՀՀ այսօրվա ներկա վիճակը, մեր առջև ծառայած խնդիրները պետք է արհեստականորեն ճղճիմացնել, վերածել 2 ձևավորվող բևեռի հնարավոր հակամարտության, որի նպատակը մի կողմից՝ կազմաքանդելն է, մյուս կողմից էլ՝ այլակարծությունը վերջնականապես ճնշելն է ու ապացուցելը, որ ուժը և գոռբայությունը մեր երկրում ծնուն են իրավունք: Այդպես չի լինում: Թող 2 կողմերն էլ՝ ներկա և նախորդ իշխանությունները, հստակ հասկանան ու գիտակցեն, որ եթե նրանք, իսկապես, ուզում են հայ ժողովրդի պատմության մեջ դրական հիշվեն, ապա, թերևս, կստեղծվեն դրա նախադրյալները. միայն պետք է գիտակցեն, որ չկա թողություն՝ առանց ապաշխարանքի: Երկու կողմերն էլ ապաշխարության կարիք ունեն, կատարած բազում սխալների համար ժողովրդից թողության արժանանալու պահանջ ունեն: Եվ երբ դա գիտակցեն ու սեփական գործունեությունը ծավալեն բարոյականության նման հարթությունում, ապա, հավատացնում են, երկրում բարոյաքաղաքական իրավիճակն արմատապես կփոխվի: Մեր ժողովուրդը ներելու անսահման ներքին պահանջ ունի: Միգուցե դա դարերից է գալիս, որ մեզ երբեք չեն ներել անգամ իսկ չգործած մեղքերի համար: Սակայն մենք մեր ուղնուծուծով ենք քրիստոնյա, և ներողամիտ լինելու ի վերուստ տրված պատգամ ունենք: Մի՛ գնացեք այս կամ այն կուսակցության դուռը, գնացեք Վարդենիսի շրջանի ամենահեռավոր սահմանամերձ գյուղում մենակ մնացած տատիկի կամ կնոջ դուռը, որի զավակը կամ ամուսինը հարկադրված է եղել գնալ արտագնա աշխատանքի: Գնացեք, ներողություն խնդրեք նրանցից, ասեք, որ պատճառն ու մեղավորը դուք եք, որ իրենց հարազատները ստիպված պանդխտության ցուպը ձեռքներին օտարության մեջ հանապազօրյա հաց

են վաստակում:

- *Ո՞վ գնա՝ Տեր-Պետրոսյա՞նը:*

- Այո, Տեր-Պետրոսյանը, Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, այո, եթե ուզում եք իմանալ՝ նաև Արտաշես Գեղամյանը, ընդդիմադիր մեր մյուս գործընկերները, որովհետև մենք էլ չենք կարողացել երկրում իրավիճակն այնպես փոխել, որ պրեզիդենտի հավակնությունն ունեցող ցանկացած մեկը՝ լինի ընդդիմադիր, թե իշխանական ճամբարից, առաջնորդվի մեկ գաղափարով, այն է, որ՝ դա նրան հնարավորություն է տալիս դառնալու ազգի բարոյական լիդերը, այլ ոչ թե նախագահ ընտրվելով թյուր պատկերացում ունենա, թե ստանձնել է ազգիս տերնուտիրականը լինելու դերակատարությունը: Ոչ մեկը չի ուզում ճանապարհ ցույց տալ: Կազմաքանդելով կամ կազմաքանդելուն ավելի բիրտ կերպով ճնշում գործադրելով՝ ժողովրդին հույս չես տա: Հայաստանը կգոյատևի, պատմության մեջ իր փրկարար քայլը կանի միայն այն պարագայում, երբ յուրաքանչյուր հայ մարդ հասկանա, որ ինքը պահանջված է նախևառաջ իր երկրի ներսում: Գալով գիտակցության այս հարթության վրա՝ մենք կկարողանանք անցում կատարել սեփական ճակատագրի տառապալից, անկանխատեսելի սպասումներից դեպի սեփական ճակատագիրը տնօրինելուն ուղղված մոլեգին գործողությունների: Եթե չկա դրա գիտակցումը, չկա նոր մոտեցում, որի առանցքը կկազմի մի պարզ ճշմարտության գիտակցումը՝ միաբանված մենք չենք կարող պարտվել, ապա մեր գործադրած ջանքերն ապարդյուն են: Եթե չկան այս խնդիրների ձևակերպումն անող ճարտարապետները կամ էլ քաղաքական դաշտից օտարված են նորի և հեռանկարայինի զգացում ունեցող գործիչները, դրանք կյանքի կոչելու մտավոր կարողություն ունեցող անհատները, փոխարենը կա միայն և միայն բամբասանքի վրա խարսխված քաղաքական գործիչների հանրություն, որը գերնպատակ է դրել լավ երևալ ժողովրդի աչքին այս վայրկյանին՝ թքած ունենալով հեռանկարի վրա, ապա երկիրը դատապարտ-

ված է: Այդպես չպետք է լինի:

- *Քանի որ առաջարկը Ձերն է՝ հնարավոր համարում եք իշխանության և ընդդիմության համագործակցությունը՝ «Հանուն Հայաստանի Հանրապետության» կարգախոսով:*

- Նման հնարավորության արգասիքը պայմանավորված է այսօր քաղաքական բեմահարթակում գործող քաղաքական ուժերի ղեկավարների իմաստությամբ, հեռատեսությամբ: Եթե դա կա՝ նշանակում է դեռ ամենը չէ, որ կորսված է: Եթե չկա, ուրեմն՝ պետք է բոլորը, այո, բոլորը հեռանան քաղաքական բեմահարթակից՝ այն թողնելով մարդկանց, ովքեր տոգորված են սեփական պատասխանատվության մեծագույն զգացումով, անկախ նրանից՝ իշխանության մաս են կազմում, թե՞ ընդդիմության: Եվ, վերջապես, թող գիտակցեն մի բան. երբ վտանգված են պետականությունն ու ազգը, արդեն սև ու սպիտակ լինել չի կարող: Հայրենիքը մեկն է, և վտանգի դեպքում բոլորս պետք է համախմբվենք: Ես ասում էի՝ նախագահի հավակնորդներն անպայմանորեն հանդիպեն և գեթ մեկ՝ ԼՂՀ հարցում զան պարտադիր համաձայնության. ոմանք թերահավատորեն մոտեցան, ոմանք՝ թշնամաբար, իսկ մեր նպատակը մեկն էր՝ հարցը չշահարկել նախընտրական պայքարում: Կարելի՞ էր այդ հարցի շուրջ համախմբվել: Ոչ միայն կարելի էր, այլև անհրաժեշտ էր, բայց ոչ ոք մեր այս նախաձեռնությանը չի միանում: Մինչդեռ այս հարցը շրջահայացություն է պահանջում:

- *Այդուհանդերձ, կարծես, Տեր-Պետրոսյանի շուրջ արդեն ձևավորվում է նոր դաշինքը: Դուք այդտեղ Ձեզ տեսնո՞ւմ եք:*

- Ինքնին հարցադրումն արդեն վիրավորական է մեզ համար, որովհետև ես խոսում եմ ազգիս համար պահանջված գաղափարների հրապարակ բերելու համազգային խնդիրների մասին: Իսկ դա, ի սկզբանե, բացառում է հակադիր դաշինքների ձևավորումը: Ես առաջնություն եմ տալիս ընդհանուր գաղափարների հրապարակ բերմանը և դրանց շուրջ քաղաքական ցանկացած ուժի դերակատարության որոշակիությանը: Թե չէ, երբ հրապարակում նոր գաղա-

փարներ չկան, մարտահրավերները ձևակերպված չեն և դրանց լուծման ճանապարհներն էլ ուրվագծված չեն, ի՞նչ, ասենք, որ գալիս ենք համակարգը քանդենք, որից հետո միայն կերևա մեր անելիքը: Ես չեմ կիսում այդ մոտեցումը: Կրկնում եմ, առաջնահերթ է ժողովրդին մատչելի կերպով ներկայացնել մեր երկրի հեռանկարային տեսլականը, պարզորոշ կերպով նշել յուրաքանչյուր քաղաքացու դերակատարությունը դրան հասնելու ճանապարհին, որից հետո միայն ընտրել նվազագույն վտանգներով ու կորուստներով մեր զարգացման ուղին: Այսինքն, ես հակված եմ նախ խնդիրը ձևակերպել, առաջարկել դրա լուծման իմ տեսակետը, ապա դիմել հանրությանը՝ աջակցություն ստանալու խնդրանքով:

- Դուք այն մարդկանցից եք, ով հանդիպել է Լ.Տեր-Պետրոսյանին, և պետք է որ տեղյակ լինեք, թե կազմաքանդելուց հետո ի՞նչ է անելու: Գոնե այդ մասին չե՞ք խոսել: Նաև հայտարարել էիք, թե հոկտեմբերի 26-ին կայանալիք հանրահավաքին մասնակցելու նպատակահարմարության հարցին կանդիդատներ, երբ դրա նախաձեռնողները կհայտարարեն այդ միջոցառման անցկացման ծրագրերի և նպատակների մասին: Ձեզ համար պարզ չէ՞, որ նրանց նպատակը այս վարչախմբին հեռացնելն է:

- Նպատակը, ըստ իս, կարող է լինել մեկը՝ Հայաստանի կայուն զարգացումը: Հնարավո՞ր է դա երաշխավորել այս իշխանական կազմով, ավա՞ղ, ոչ: Դրա համար ամենագորեղ գործոններից մեկն ազգի կոնսուլիդացիան է: Հնարավո՞ր է ձևավորված միայն այս իշխանությամբ հասնել դրան, անշուշտ, ոչ: Ոչ թե նրա համար, որ ԱՄԿ-ն մաս չի կազմում իշխանությանը, այլ, պարզապես, որ շուրջ 400.000 ընտրող ձայնը տվել է ընդդիմությանը, մի այդքանն էլ չի մասնակցել ընտրությանը: Այսինքն՝ նվազագույնը 700.000 մարդ այս իշխանության մեջ կոնսուլիդացնող ուժ չի տեսնում: Ստեղծված իրավիճակը փոխելու 2 ճանապարհ կա: Մեկը՝ լուծարել ԱԺ-ն, նոր, իրավամբ ազատ, առանց ճնշումների ու համատարած կաշառատվության, ընտրություններ անցկացնել: Երկրորդը՝ երաշխավորել նախագա-

հական բացառիկ ազնիվ ընտրությունների անցկացում: Դրա արդյունքից ելնելով, այո, թեկուզև, քաղաքական կոմպրոմիսի ձեռքբերմամբ ապահովել, որ հիշատակածս 700.000 մեր քաղաքացիները իշխանության մեջ տեսնեն քաղաքական այն այրերին, որոնց նրանք վստահում ու հավատում են: Եվ երբ ժողովրդի ամենալայն զանգվածներն արդեն իրենց պաշտպանված կզգան, կտեսնեն, որ վստահություն ներշնչող մարդիկ ներկայացված են իշխանությունում, ապա այդ դեպքում միայն հնարավոր կլինի մարդկանց գիտակցության մեջ որոշակի շերտեր շարժել: Այն է՝ մեր քաղաքական ընտրանին խելքի է եկել, հասկացել է, որ հայրենիքը բոլորինս է, և որ իրար բզկտելով ոչ մեկն էլ դրական արդյունքի չի հասնի, կտուժենք ազգովի: Սա է ամենաաշխատող և պահանջված բանաձևը: Եկեք ստեղծված իրողությունների վրա աչք չկոծկենք, այսօր Ռ. Քոչարյան-Ս. Սարգսյան տանդեմն Աժ-ում ունի բացարձակ մեծամասնություն: Ընդունենք, նախագահ է ընտրվում մարդ, որը չի ասում՝ ես գալիս եմ կազմաքանդելու, այլ հակառակը, հայտարարում է՝ գալիս եմ կամրջելու այսօրվա իշխանություններին ու իշխանությունից դուրս մնացած քաղաքական ընտրանուն, դիտարկելով նրանց ոչ թե որպես առանձին անհատների, այլ որպես մեր ժողովրդի ճնշող մեծամասնության հույսերը, իղձերը, նպատակները մարմնավորողների և իրագործողների: Իսկ կամրջման նպատակն էլ արդեն իսկ ակնհայտ կդառնա՝ կոնսոլիդացնել ազգը մի կողմից, և իշխանության մեջ քաղաքական առողջ մրցակցության մթնոլորտ ձևավորել՝ մյուս կողմից: Թե չէ այսօր քաղաքական մրցակցության համար ոչ մի նախապայման ստեղծված չէ: Հին իշխանության տեսակետներն արտահայտող որ թերթը նայում ես, գրում են՝ ՀՀԿ-ն պառակտման եզրին է, ահա առնետավազք կսկսվի, ՀՀԴ-ում էլ ամեն ինչ այնպես չէ... և դրանից էլ ընթերցողի մոտ տպավորություն է ստեղծվում, թե դրանից ուրախանում են: Իսկ ես տխրում եմ, որովհետև այսօր կա՞ որևէ մեկը, ով կարող է ուրախանալ, որ իշխանությունը ոչ թե գաղափարական հենքի վրա, այլ դավաճանության արդյունքում պառակտվում է

ներսից: Եթե որևէ մեկը կարծում է, թե ուրիշների շարքում կատարված դավաճանության հետևանքով ինքը կարող է երջանկանալ, ապա չարաչար սխալվում է: Հրճվանք ապրողները թող հիշեն՝ ինչպե՞ս էր իրենց համար, երբ ԱԺ-ում մեկ գիշերվա մեջ նախկին ՀՀԵ-ականների մի ստվար մասը և նրանց դաշնակիցները դարձան երկրապահ: Ու հիմա նրանք հրճվանք են ապրում, որ այսօր էլ հնարավոր է ՀՀԿ-ն կանգնի նման իրավիճակի առաջ: Երկուսդ էլ իրար արժեք: Նշանակում է՝ դուք սեփական պատմությունից ոչ մի դաս չեք քաղել, չեք հասկացել, որ եթե վաղը միայն ՀՀԿ-ի պառակտման շնորհիվ գաք իշխանության, նույնն էլ ձեզ հետ է լինելու. դավաճանության արդյունքում իշխանություն ստանձնածը նույն դավաճանությանն էլ զոհ կդառնա: Թող, ի վերջո, պատմությունից դասեր քաղեն, հասկանան, որ 24 ժամում իրավիճակը կարող է այնպես փոխվել, որ մնան զարմացած ու ապշած: Օլիվեր Կրոմվելի օրինակը թող հիշեն: Նրան՝ Անգլիայի լորդ պրոտեկտորին, թագավոր էին առաջարկում կարգել, հրաժարվեց, կարճ ժամանակ անց՝ հիվանդությունից մահացավ: Կրոմվելին մեծ պատիվներով Վեստմինստերի աբբայությունում հողին հանձնեցին: Դրանից 2 տարի անց իր բանակի գեներալներն իշխանության բերեցին Կարլ 2-րդ թագավորին (Կրոմվելի օրոք սպանված Կարլ 1-ին թագավորի որդուն): Հանգուցյալի դին հանեցին հողի տակից և կախաղան բարձրացրին: Այդ պատմությունը թող բոլորի աչքի առաջ լինի և ոչ ոք ու երբեք չուրախանա, երբ որևէ կուսակցությունում հանկարծ առնետավազք սկսվի:

- *Ձեր ասելով՝ նրանք դատապարտված են պարտության:*

- Այո, ցավոք, պատմականորեն նրանք դատապարտված են: Ասում են՝ ցավոք, քանզի մարդկայնորեն նրանց վատը ես չեմ ցանկանում: Եթե հաղթանակ էլ ունենան՝ այլուրոսյան հաղթանակ է լինելու: Մեկ էլ տեսնելու են, որ երկուստեք ավերածություններից զատ ազգանվեր և ոչ մի գործ չեն կատարել: Այդ ամենը գիտակցելով՝ ԱՄԿ-ն իր այս մոտեցումները կփորձի դարձնել ժողովրդի, քաղաքական ուժերի քննարկման առարկա և, անհրաժեշտությունից ելնելով,

կարող է և որոշում կայացնել՝ առաջադրելու նախագահի իր թեկնածուին: Մենք խնդիր ունենք մեր ժողովրդի համար մատնանշել ներկա և նախորդ իշխանություններին այլընտրանքային ուղի: Ներկայումս գերիշխող քարոզչությամբ ուռճացվող վերջիններիս (հների ու նորերի) որդեգրած քաղաքականությունը, եթե չվերաիմաստավորվի, մեր երկրին անվտանգ ապագա չի խոստանում: Այնպես որ՝ այս կամ այն դաշինքում լինել-չլինելու խնդիր, ի սկզբանե, դրված չէ ԱՄԿ-ում: Մեր մոտեցումները, համոզված եմ, բավականին լուրջ զարգացում, հեռանկար և հետևից բազմաթիվ եկողներ էլ կունենան: Եթե գիտակցվի այս ամենը, ապա Հայաստանի նորագույն պատմության մեջ կկարողանանք նվազագույն կորուստներով հաղթահարել ներկայիս վտանգավոր շրջանը: Իսկ եթե չգիտակցվի, ապա պատասխանատվության ողջ բեռը կծանրանա երկու կողմերի՝ թե՛ գործող, թե՛ նախկին իշխանությունների վրա: Հանգամանք, որը մեզ ամենևին բավարարվածություն չի պատճառի: Եթե մեր երկրում ղողանջում են զանգերը, մենք հակված չենք հարցնելու, թե դրանք ո՞ւմ համար են ղողանջում: Դրանք ղողանջում են բոլորիս համար...

Լիլիթ Սեյրանյան

ԿԳՈՐԾԻ՞ ՉԱՅԻ ՎԵՐՁԻՆ ԽԵԼԲԸ

Անդրադառնալով ԱՄՆ Կոնգրեսի Միջազգային գործերի Կոմիտեի կողմից ընդունված 106 բանաձևին՝ ԱՄԿ նախագահ Արտաշես Գեղամյանն ասաց. «Բարոյական տեսակետից, այո, լավ է, որ այն ընդունվեց, բայց պետք չէ, որ հայկական քաղաքական գործիչներն դա ներկայացնեն իբրև դիվանագիտական մեծ հաղթանակ, ողջ հայության նվաճում: Միջազգային հանրությանը այն պետք է մատուցվի նախևառաջ որպես ամերիկյան ժողովրդավարության հաղթանակ, ԱՄՆ-ի ժողովրդի ու իշխանությունների հաղթանակ: Եվ ասվածը միայն խոսքեր չեն, այո, բանաձևի ընդունումը Կոմիտեի կողմից վկայությունն է նրա, որ ԱՄՆ-ն իրապես ժողովրդավարական երկիր է: Որ, այո, երբ նրանք զորքով մտան Իրաք՝ դրոշի վրա գրելով՝ ժողովրդավարության հաստատում, նրանք գործում էին՝ հավատարիմ լինելով այդ խնդրի լուծմանը, քանզի չի կարելի ժողովրդավարություն հաստատել դրսում՝ երկակի ստանդարտներ կիրառելով սեփական երկրում»: Ավելին, ըստ Ա. Գեղամյանի՝ այս բանաձևի ընդունումը նաև ցույց տվեց, որ ԱՄՆ Սահմանադրությունը կենսունակ է: Այսինքն՝ օրենսդիր իշխանությունը գործում է ինքնուրույն և չի ենթարկվում գործադիրի ճնշումներին, և ԱՄՆ Կոնգրեսի Կոմիտեն կարողանում է Սպիտակ տան կամքին հակառակ խղճի մտքը ընդունել որոշում: Չաստատվեց նաև ԱՄՆ Չանրապետական կուսակցության նորագույն պատմության մեջ, թերևս, ամենահեղինակավոր նախագահ Ռոնալդ Ռեյգանի կառավարման փիլիսոփայության հիմնարար այն թեզին հավատարիմ մնալը, որով նա հանդես էր եկել ԱՄՆ նախագահ դառնալու առիթով: Նա ասել էր, որ Չանրապետական կուսակցության հաղթանակի արդյունքում տեղի է ունեցել հեղաշրջում,

երբ առանձին մարդու ազատությունն ու արժանապատվությունը վեր են դասվում պետության շահից: «Տվյալ պահին էլ՝ հայ մարդկանց, զոհված մարդկանց իրավահաջորդների իրավունքները գերադասվեցին ԱՄՆ-ին, կարծում եմ, թվացյալ շահերից: Հանրությանը ահա հենց այս պետք է մատուցել: Նաև հաշվի առնելով թուրքական իշխանությունների սանձազերծած բիրտ գործողությունները խնդրո առարկայի շուրջ, Եվրամիության անդամ երկրներին դիմել հարցով. նման պարագայում արդյոք արժե՞, որ Թուրքիան դառնա ԵՄ անդամ: Կռվաններից մեկն էլ սա է: ԵՄ-ին անդամակցել ցանկացող Թուրքիան դրսևորում է ժողովրդավարությանը ոչ հարիր, ճիշտ հակառակը՝ հակասող մոտեցումներ, փորձում է միջամտել մեկ այլ երկրի ներքին քաղաքականությանը, իրողություն, որը, ավա՞ղ, ժողովրդավարություն քարոզող երկրների կողմից մնում է անարձագանք: Չէ՞ որ բանաձևի ընդունումը դա ԱՄՆ-ի ներքին խնդիրն է: Թող ամերիկացիները, ռուսները կամ ԵՄ-ն մի հատ փորձեն Թուրքիայի Ազգային Մեծ ժողովին պարտադրեն այս կամ այն բանաձևի ընդունումը, տեսեք, թե տիեզերական ինչ հիստերիա կբարձրացնեն թուրքական իշխանությունները: Կասեն՝ քրիստոնեական աշխարհը խաչակրած արշավանք է սկսել մահմեդականության դեմ, փորձում է ստվեր զցել ազգային զարթոնք ապրող երկրի վրա... Ամեն ինչի կդիմեն՝ շանտաժի, սպառնալիքների, անգամ իսկ ահաբեկչության...: Մինչդեռ թուրքերն իրենց իրավունք են վերապահում նույնիսկ բանակի գլխավոր շտաբի պետի շուրթերով անթաքույց սպառնալիքներ հղեն ԱՄՆ-ի հասցեին: Թվում է, թե այս հարցադրումները պետք է հնչեցվեն մեր պետական և քաղաքական գործիչների կողմից, մերոնք պետք է կանխավ նախագուշացնեն աշխարհասփյուռ քուրդ ժողովրդին, որ Թուրքիան, Հյուսիսային Իրաքում արյունալի պատերազմական գործողություններ սկսելով, փորձելու է ճնշել Հյուսիսային Իրաքը, հետո իր ողջ քարոզչամեքենան, կաշառատվության բացառիկ հմտությունները կծառայեցնի պատրանք ստեղծելու համար, որ բանաձևի ընդունումն այն աստիճան վրդովեցրեց խաղաղասեր

թուրք ժողովրդին, որ անհնարին դարձրին հակաքրդական պատերազմական գործողությունների կանխուճ: Ավելին, թրքամետ լրատվամիջոցներն էլ աշխարհով մեկ (բա միլիոնավոր դուլարներ լուբինգի համար հո իզուր չեն ծախսում) կտարածեն այն տեսակետը, որ թուրքերը այդ աստիճան սանձարձակ չէին գործի, եթե չգիտակցեին, որ ԱՄՆ-ն արդեն հարկադրված էր աչքերը՝ կոծկել որոշակի բաների վրա: Չնարավոր այս բոլոր զարգացումներին ու հարցերին պետք է շրջահայաց մոտենալ, և երբեք ու երբեք պետք չէ ԱՄՆ Կոնգրեսում կատարվածը տեղափոխել այն հարթակ, թե մենք ազգովի ցնծության մեջ ենք, որ ծնկի ենք բերել 75 մլն թուրքական պետությանը, առավել ևս՝ թուրք ժողովրդին: Այսօրվա որոշ հրապարակումներից այդ անհեռանկար գնահատականներն են դիտարկվում»,- ասում է ԱՄԿ նախագահը: Նրա հավաստմամբ՝ ամենևին էլ պատահական չէ ներկայումս Թուրքիայում բարձրացված աղմուկը: Դրանով Թուրքիայի իշխանությունները, ըստ Ա. Գեղամյանի, փորձում են ամերիկացիներին «բարոյական պարտքի մեջ գցել», որպեսզի հետո կարողանան սեփական գաղութատիրական, զավթողական գործողություններն իրականացնել Չյուսիսային Իրաքում: «Այսինքն՝ պետք չէ, որ մենք թուրքական կառավարության համար լայնածավալ քաղաքական շանտաժ իրականացնելու պարարտ հող ստեղծենք»,- գտնում է նա:

Լիլիթ Սեյրանյան

ԳԵՂԱՄՅԱՆԸ ՇՆՈՐՀԱԿՎԱԼՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ

Հոկտեմբերի 26-ի հանրահավաքից հետո երկրում տիրող իրավիճակի մասին «Ա1+»-ի հետ զրույցում «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը շնորհակալություն հայտնեց ՀՀ առաջին նախագահին.

«Շնորհակալություն եմ հայտնում Լևոն Տեր-Պետրոսյանից, որ նա հոկտեմբերի 26-ի հանրահավաքում վերստին կրկնեց այն բոլոր գնահատականները, որոնք «Ազգային Միաբանություն» խմբակցության պատգամավորները քանիցս կրկնել են Ազգային ժողովի ամբիոնից՝ լինի ՀՀ ներքին վիճակի, կոռուպցիային վերաբերող հարցերի, տնտեսական քաղաքականության ոլորտի, դատաիրավական համակարգի՝ իշխանություններից բացարձակ կախվածության, Կենտրոնական բանկի կողմից վարվող արատավոր դրամավարկային քաղաքականության խնդիրների մասին. այդ բոլորը ի մի բերվեց, ըստ որում՝ ոչ այնքան փաստարկված, որքան այդ հարցերի մեր պարզաբանումներն են եղել ԱԺ ամբիոնից, ԱՄԿ համագումարների ամբիոնից, և վերջերս անցկացրած կոնֆերանսի ամբիոնից»:

Արտաշես Գեղամյանը դրական է գնահատում Տեր-Պետրոսյանի ելույթը, «Մինչդեռ տարակուսում եմ, որ, ցավոք սրտի, մեր կողմից հնչեցված այդ բոլոր հարցադրումները եթե ժամանակին արժարժվեին, և եթե ժամանակին դրա շուրջ փորձեին քարոզչական այն մթնոլորտը ստեղծել, ինչ հիմա են անում, այդ բոլոր արատները կհստվ չափ պակասած կլինեին, և դա կլիներ գործնական ներդրում երկրում վիճակը առողջացնելու գործում»:

Ի դեպ, Արտաշես Գեղամյանը կարծում է, որ նախորդ օրը տված իր հեռուստահարցազրույցից Տեր-Պետրոսյանը եզրակացություններ է արել.

«Գոհունակություն եմ հայտնում, որ հոկտեմբերի 26-ի հանրահավաքի ժամանակ Տեր-Պետրոսյանը ուշադրության էր արժանացրել դրա նախորդ օրը Չ1-ով իմ տված հարցազրույցի դրույթներին. ներկա և նախկին նախագահները պարտավոր են որակական բանավեճի այն չափանիշը պահել, ինչը հարիր է ՀՀ նախագահի բարձր կոչմանը, անկախ այն հանգամանքից, թե ով ինչ ճանապարհով է հասել 1996 թ. կամ 2003 թվականին: Եվ Տեր-Պետրոսյանը մարդկայնորեն դրական արտահայտվեց իր ախտյանների հասցեին»: Մինչդեռ Ռոբերտ Քոչարյանը չհետևեց պարոն Գեղամյանի հորդորին: Ըստ Գեղամյանի, «Պարոն Քոչարյանն այդ օրերին զբաղված էր Ահմեդինեջադի ընդունելությամբ և հավանաբար, չէր նայել «Եվրոպոլիս» հաղորդումը, թե չէ, համոզված եմ, որ նա նույնպես, եթե 10 տարի ոչ մի դառը խոսք չէր ասել Լևոն Տեր-Պետրոսյանի հասցեին, հիմա նույնպես կշարունակեր ավանդույթը: Եթե դրական բան կար այս ամենում, ապա դա էր»:

Ինչ վերաբերում է հանրահավաքից հետո երկրում իրավիճակի որոշակի փոփոխությանը, ապա, ըստ Գեղամյանի, փոփոխություն կլինի միայն այն ժամանակ, «Երբ քաղաքական այրերը, ովքեր հավակնություն ունեն ընտրվելու և ղեկավարելու ՀՀ-ն, մեր ժողովրդին համոզիչ կերպով ցույց տան այն ճանապարհներն ու ուղիները, որով եթե ազգն ընթացավ, կհասնի դրական արդյունքների: Ինչպես և սպասվում էր, այդ ելույթում դա չարվեց: Այս ամենը իմի բերելով, ԱՄԿ-ն առանց ավելորդ համեստության նշում է սեփական որդեգրած քաղաքականության ճշմարտացիությունը, ազնիվ լինելը, այն է՝ ստեղծված իրավիճակում փոխանակ իրար ոչնչացնող դաժան քննադատության ճանապարհը բռնեն, ինչը էլ ավելի կխորացնի ազգային հուսահատությունը, պառակտումը, ճիշտ կլիներ մարդկանց այս ամենը հաղթահարելու ելքերը ցույց տան, և յուրաքանչյուր մարդու ասեն այդ ելքերի մեջ որն է իր քաղաքացիական պարտքը, իր անելիքները»:

«Ա1+», 31. X. 2007:

ՍՑԵՆԱՐԻՍՏԸ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

Ի վերջո, «Ազգային Միաբանություն կուսակցությունը» նախագահական ընտրություններին կմասնակցի սեփական¹ թեկնածուով, թե կպաշտպանի մեկ ուրիշին՝ հարցին, Արտաշես Գեղամյանը պատասխանեց. ««Ազգային Միաբանություն կուսակցությունը» սեփական թեկնածուով հանդես գալ- չգալը ընդամենը կարող է միջոց հանդիսանալ երկրի առջև ծառայած խնդիրների լուծման ամենադյուրին ճանապարհի ընտրության գործում: ԱՄԿ-ն այսօր, ավելի քան երբևէ կարևորում է ազգը միաբանելու գաղափարը, հաղթահարելու պառակտվածությունը, որ առկա է: Դրա ճանապարհը մեկն է, ոչ թե հրապարակ իջեցնել արժանիքներ և սխալներ ունեցող այս կամ այն քաղաքական գործչին, այլ ազգը միաբանող գաղափարներ, որոնք պատասխան են տալիս մարդկանց հուզող հրատապ հարցերի, լուծման ճանապարհներն են մատնանշում»:

Իսկ որևէ թեկնածուի պաշտպանելու կապակցությամբ նշեց. «Եթե «Հակաճգնաժամային ծրագիրն» ընդունվի իր էությամբ և ոչ թե մարտավարական այս կամ այն խնդիրը լուծելու դրդապատճառից ելնելով, ապա վստահեցնում են, քաղաքական այն ուժը, որ դա ընդունի, կարիք չի ունենա մեկ այլ քաղաքական ուժի, թեկուզև ծրագիրը հեղինակած քաղաքական ուժի սատարման, որովհետև այդ ծրագիրը իր մեջ ներառում է ժողովրդի մոտ հավատը արթնացնելու գաղափարը, ազգի միաբանվելու պահանջը և Արտաշես Գեղամյանը պատրաստ է իր ծրագիրը տրամադրել որևէ ուժի՝ այն իրագործելու համար. «Դասականները սցենար են գրում, բայց ֆիլմի են դա վերածում ռեժիսորները. այստեղ, թերևս, կա լավագույն սցենարի մրցանակ, և լավագույն ռեժիսորական մրցանակ»:

¹«Ա1+», 31.X.2007:

ԲԱԳՐԱՏՅԱՆԸ ՎԻՐԱՎՈՐԵՆ Է ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը իր վերջին ասուլիսներից մեկում գովեստի արժանացրեց ՀՀԿ-ի նախընտրական ծրագիրը, և պատասխանելով «Ա1+»-ի լրագրողի հարցին, թե եթե Լևոն Տեր-Պետրոսյանը չառաջադրվի, ինքն արդյո՞ք կպաշտպանի ՀՀԿ-ին և հետևաբար, ՀՀԿ-ի թեկնածուին՝ հաշվի առնելով նախընտրական ծրագիրը, Բագրատյանը դրական էր արձագանքել:

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը այս կապակցությամբ նկատեց. «Հրանտ Բագրատյանի գնահատականները վկայությունն են վերջինիս կողմից քաղաքական ճկունության դրսևորման, ոչ թե անկեղծության: Ըստ էության, Կառավարության ներկայացրած ծրագիրը, ինչպես քանիցս նշել էին իշխանությունները, ոչ այլ ինչ է, քան Կառավարության կողմից մինչ օրս իրականացված ծրագրերի տրամաբանական շարունակությունը:

Ուստիև, երբ պարոն Բագրատյանը պաշտպանում է Կառավարության ներկայացրած ծրագիրը, նա վիրավորանք է հասցնում իր վաղեմի բարեկամ Լևոն Տեր-Պետրոսյանին, որի գնահատմամբ՝ հենց այդ ծրագրերի արդյունքում է երկրում ստեղծվել այնպիսի համակարգ, որն անհրաժեշտ է «արմատապես կազմաքանդել»:

Երբ ասված հայտարարությունները փորձում ես անշահախնդիր վերլուծության ենթարկել, ապա ականալից գալիս ես այն եզրահանգման, որ Տեր-Պետրոսյանի նախկին վարչապետը հայտնվել է տրամաբանական փակուղում: Դրա հետ մեկտեղ, կարծում եմ, թե ՀՀԿ-ն, թե Լևոն Տեր-Պետրոսյանը ընթրնումով կմոտենան պարոն Բագրատյանի մոտեցումներին՝ այդ ամենը դիտարկելով իբրև պատրաստակամություն կամրջելու հին ու նոր իշխանություններին»:

«Ա1+», 1.XI.2007:

ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ԵՐՐՈՐԴ ՈՒԺ, ՈՐԸ ՄԵՐԺՈՒՄ Է ԵՐԿՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅՈՈՒ ԲԱՐՔԵՐԸ

Արտաշես Գեղամյանի բացառիկ հարցազրույցը

Ս/թ հոկտեմբերի 24-ին Հանրային հեռուստատեսության՝ Արթուր Սահակյանի «Եվրապոլիս» հեղինակային հաղորդման հյուրն էր «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը: Ա.Գեղամյանի հարցազրույցն առաջացրել է ազգաբնակչության աննախադեպ հետաքրքրությունը: Սակայն գտնվեցին նաև մարդիկ, ովքեր անգամ իսկ այս դեպքում փորձեցին աղավաղել արտահայտված տեսակետները: Կարևորելով հաղորդման ընթացքում բարձրացված հարցերն ու դրանց տված պատասխանները, որոնց հնչեղությունն օրըստօրե երկրի համար ավելի արդիական են դառնում, Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Ա.Գեղամյանի պատասխանների շարադրանքն ամբողջությամբ:

Արթուր Սահակյան - Բարի երեկո, հարգարժան հայրենակիցներ, առաջին ալիքի ուղիղ եթերում «Եվրապոլիս»-ն է և «Եվրապոլիս»-ում մենք այսօր զրուցում ենք Արտաշես Գեղամյանի հետ, «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ: Բարի երեկո, պարոն Գեղամյան:

Արտաշես Գեղամյան - Բարև Ձեզ:

Ա.Սահակյան – Շնորհակալություն, որ ընդունեցիք մեր հրավերը, և մենք մեր հեռուստադիտողներին տեղեկացնենք, որ զրուցելու ենք ներքին ու արտաքին քաղաքական խնդիրների մասին: Նախ սկ-

սենք, ինչպես հիմա ավելի շատ սիրում են խոսել, ներքաղաքական խնդիրներից: Պարոն Գեղամյան, ընդամենը չորս ամսից պակաս ժամանակ է մնացել նախագահական ընտրություններին և, բնականաբար, այսօր բոլոր իրադարձությունները պտտվում են այդ ընտրությունների շուրջ, բոլորը պայմանավորված են դրանով, արդեն մարդիկ հայտարարել են, որ պատրաստվում են առաջադրել իրենց թեկնածությունը, իսկ մեզանում երբևէ թեկնածուների պակաս չի զգացվել: Մի ժամանակ նույնիսկ կատակում էին, որ Հայաստանում ամեն առավոտ արթնանում է 3 միլիոն նախագահ, 3 միլիոն պատգամավոր, նախարարներ և այդպես շարունակ: Թերևս քաղաքական դաշտի բացառիկ անհատներից մեկը Դուք եք, որ, ի դեպ, հայտարարեցիք, որ չեք առաջադրվելու, բայց ամեն դեպքում, պարոն Գեղամյան, Դուք ունեք հեղինակություն, ունեք բավականին պատկառելի թվով մեծ ընտրազանգված, և, բնականաբար, և նրանց, ու նաև մեզ՝ լրագրողներիս համար հետաքրքիր է Ձեր կարծիքը այսօր ընթացող զարգացումների մասին: Կցանկանայի Ձեր գնահատականը լսել ընտրություններից չորս ամիս առաջ, այսօր Հայաստանի ներքաղաքական դաշտում ընթացող այդ իրադարձությունների մասին:

Ա.Գեղամյան – Նախ, շնորհակալություն իրավերի համար: Դիմելով հեռուստադիտողներին, ասեմ՝ սիրելի ժողովուրդ, հայտարարված էր, որ 21.40-ին պետք է ելույթ ունենա Արտաշես Գեղամյանը: Սակայն ելույթ ունեցավ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեջադը, ես, կարծում եմ, դա շատ հետաքրքիր, լավ նշան է: Հիմա, ըստ էության:

Այսօրվա վիճակը բնութագրելու համար մենք պետք է ձեզ հետ հետադարձ հայացք զցենք անցած 10 տարիների վրա: 10 տարի շարունակ հին ու նոր իշխանությունները քննադատել են, դատափետել են ընդդիմությանը, հատկապես խորհրդարանական ընդդիմությանը: Երկուստեք, ոչ ոք մեկը մյուսին այդ հարցում չի զիջել: 2004թ. ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը, ինչպես նաև ապրիլի 5-ին, երբ տե-

դի ունեցան հայտնի իրադարձությունները, ապա հին իշխանություններին սպասարկող ընդդիմադիր մամուլը պակաս չէր քննադատում ընդդիմությանը, քան իշխանականը. ասում և գրում էին՝ ապիկար ընդդիմություն եք, այս մարդիկ ժողովրդին միայն տանում, ծեծել են տալիս, ոչ մի բանի ընդունակ չեն: Երբ փորձում ես հասկանալ, թե ի՞նչն էր դրա պատճառը, ապա այս օրերին ես միայն պատասխանը գտնում: Իսկ հարցն այն է, որ քաղաքական դաշտն էր մաքրվում: Այդ ժամանակ գործող ընդդիմությունը, որ տեղով մեկ ոսկի էլ դառնար, բացարձակապես դեր չխաղար, միևնույն է, ասելու էին՝ ապիկար են, անընդունակ են: Խնդիրը մեկն էր, վարկաբեկել գործող ընդդիմությանը, ասպարեզ բացել, որ հրապարակ գային հին իշխանությունները: Այդ ամենին մեծապես օգնել են գործող իշխանությունները: Արդյունքում ձևավորվում է երկու բևեռ, իրարամերժ երկու բևեռ, խոսքս՝ թե՛ ներկա իշխանությունների և թե՛ նախորդ իշխանությունների մասին է, որոնք, եթե չսթափվեն, ապա նրանց առճակատումն արդեն իսկ ակնհայտ է դառնում մեզ համար:

Ա.Սահակյան – Այսինքն, Դուք կարծում եք դա պայմանավորված էր:

Ա.Գեղամյան – Դա պայմանավորված չէր, դա անհեռատես քաղաքականության արդյունք էր, երկուստեք, թե՛ հին իշխանությունների, թե՛ նոր իշխանությունների: Եվ արդյունքում, այսօր, ժողովրդին, ասես թե, կամա թե ակամա, դրել են երկընտրանքի առաջ. եթե նախորդ իշխանությունների հետ չես, դավաճան ես, եթե ներկա իշխանությունների հետ չես, դու կողմնակից ես, որ ռևանշ տեղի ունենա, երկիրը ապակայունանա: Այսինքն՝ փորձ է կատարվում քաղաքական ողջ դաշտը սևի ու սպիտակի բաժանել, ինչը Հայաստանի Հանրապետության նման երկրի համար անթույլատրելի է: Անթույլատրելի է այն պատճառով, որովհետև մենք ունենք թե՛ ներքին և թե՛ արտաքին բազում մարտահրավերներ, որոնց հնարավոր է դիմակայել, հնարավոր է դրանց առաջն առնել միայն մի պայմանում, եթե մեր ժողովուրդը միաբանվի, եթե չբաժանվի սևի-սպիտակի, թշնամի-բարե-

կամի, այլ, կրկնում են, միաբանվի ընդհանուր մարտահրավերների առաջն առնելու, դիմակայելու համար: Ահա մենք այսպիսի վիճակում ենք հայտնվել: Ներքին մարտահրավերները բավականին զգացնել են իրենց տալիս այն պարզ պատճառով, որ այսօր, ցավոք, անգամ իսկ թվացյալ երկնիչ տնտեսական աճի պայմաններում, գնալով կյանքը թանկանում է: Ես չծանրաբեռնեն հեռուստադիտողներին թվերով, միայն և միայն ասեմ. 2007թ. առաջին կիսամյակում նվազագույն սպառողական զանբյուղը, նվազագույն պարենային զանբյուղը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 16%-ով թանկացել է: Այդ թանկացումն էլ տեղի է ունեցել այն դեպքում, երբ 19,6%-ով արժևորվել է դրամը: Այսինքն՝ դրամը արժևորվում է դոլարի, եվրոյի հանդեպ, բայց գնողունակությունը, ցավոք, ավա՞ղ, ընկնում է: Սա լուրջ մարտահրավեր է, որովհետև մարդիկ իրենց աշխատավարձով չեն կարողանում գլուխները պահել: Երբ իշխանություններն ասում են՝ 17% փաստացի աշխատավարձի աճ է եղել, անգամ իսկ այդ պայմաններում, եթե աշխատողի միջին աշխատավարձը բաժանում են երեքի (որովհետև մի աշխատողի վրա բաժին է ընկնում պահել երկու չափաատողի, լինի դա թոշակառու, թե անչափահաս), ապա յուրաքանչյուր մարդու բաժին է հասնում նվազագույն պարենային զանբյուղից էլ փոքր գումար: Ահա մի ցայտուն մարտահրավեր:

Ա.Սահակյան – Պարոն Գեղամյան, մարտահրավեր է նաև, կարծում են, այդ սևը-սպիտակը, որ Դուք ասացիք, դա էլ շահարկման թեննա կարող է լինել, կարող է օգտագործվել: Վերադառնանք Ձեր ասած այդ սև-սպիտակին: Ի՞նչ եք կարծում, եթե այդպիսի ջրբաժան է ստեղծվել և Ձեր հիշատակած ընդդիմությունը, որի ներկայացուցիչն եք նաև Դուք, այսօր, կարծես թե, մի տեսակ դուրս է մղված, Ձեր խոսքերն են ասում, չեք կարծում, որ նաև այդտեղ Ձեր սխալը կա, ոչ միայն Ձեր, այլ նաև մյուս ընդդիմադիր ուժերի, որոնք այսօր, կարծես թե, իրենք իրենց դուրս են դրել կամ չեն ուզում գործոն դառնալ:

Ա.Գեղամյան – Ոչ թե իրենք իրենց դուրս են դրել կամ չեն ուզում գործոն դառնալ, այլ փորձ է կատարվում մեզ դուրս մղել քաղաքական դաշտից, և այդ փորձի առաջը մենք առնում ենք: Առնում ենք, որովհետև արդեն իսկ պարբերաբար հանդիպումներ ենք ունենում ընդդիմադիր քաղաքական ուժերի լիդերների հետ, մասնավորապես, նկատի ունեն Պարույր Հայրիկյանի նախաձեռնած հանդիպումները, ինչի արդյունքում ձևավորում է այլընտրանքային երրորդ ուժ, որը հավասարապես մերժում է այն բոլոր հոռի բարքերը, բացասական դրսևորումները, որոնք եղել են հին ու նոր իշխանությունների պարագայում: Տեսե՛ք՝ ինչ վտանգավոր փաստեր են արձանագրվել սեպտեմբերի 21-ից այս կողմ: Սեպտեմբերի 21-ի իր հայտնի ելույթում հանրապետության առաջին նախագահն ուղղակի ասաց, որ մենք ունենք վերից վար կոռումպացված, հանցագործ մի վարչակազմ, որի հարաբերությունները կարգավորվում են ոչ թե օրենքներով, այլ մաֆիոզ աշխարհի կանոններով: Դրան հաջորդեց գործող նախագահի կոշտ պատասխանը, որը իշխանական քարոզչամեթոդան համեմեց բազմաթիվ փաստերով: Այն է՝ առաջին նախագահի իշխանության օրոք նույնպես եղել են իր իսկ կողմից հիշատակված բարքերը և միգուցե որոշ հարցերում մրցակցում են իրար հետ, թե որի օրոք ինչը ոնց է եղել: Արդյունքում ստացվում է, որ անկախության 16 տարիների ընթացքում երկու նախագահ ենք ունեցել, երկուսն էլ իշխանավարության իրենց նախորդի կամ հաջորդողի տարիներին ջախջախիչ այնպիսի գնահատական են տալիս, որ ադրբեջանաթուրքական քարոզչամեթոդայի համար ավելի մեծ նվեր պատկերացնել հնարավոր չէ: Չէ՞ որ այդ տարիներին հնարավոր է դարձել ազատագրական պայքարը հաղթանակով ավարտել, հնարավոր է դարձել Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված ստատուս քվոն պահպանել: Հիմա, եթե ադրբեջանական քարոզչամեթոդան պնդում է՝ «դա մենք չենք ասում, այլ ասում է Լևոն Տեր-Պետրոսյանը», թե ինչպիսին են եղել անցած տաս տարիները, մյուս կողմից էլ հայտարարում են՝ «դա մենք չենք ասում, դա ասում է Ռոբերտ Քոչարյանը»,

թե ինչպիսին են եղել անկախության առաջին յոթուկես տարիները: Եվ այստեղ փոխադարձ նման մեղադրանքներից հետո ազատագրական պայքարի հոտ բացարձակապես չի գալիս: Այսինքն՝ այս ամենի գիտակցումից ելնելով էր, որ ես հայտարարեցի, թե պարտադիր կարգով պետք է հիմնում ու նոր իշխանությունները, ընդդիմության պատասխանատու ուժերը նստեն կլոր սեղանի շուրջ, որովհետև դա ժամանակի պահանջն է:

Ա.Սահակյան – Համախմբման կո՞չ եք անում, պարոն Գեղամյան:

Ա.Գեղամյան – Միանգամայն ճիշտ եք:

Ա.Սահակյան – Ո՞ւմ նկատի ունեք, Դուք ո՞ւմ եք պատկերացնում կլոր սեղանի շուրջ:

Ա.Գեղամյան – Ես նկատի ունեմ նախևառաջ նույն Լևոն Տեր-Պետրոսյանին, Ռոբերտ Քոչարյանին, Սերժ Սարգսյանին, Արտաշես Գեղամյանին, բոլորին չթվարկեմ, Պարույր Հայրիկյանին, որը մեր երկրի անկախության ռահվիրանն է եղել, և նա այժմ էլ առաջնորդվում է բոլորի գաղափարից բացարձակապես տարբեր գաղափարներով, նրա համար գերխնդիրը Հայաստան աշխարհում ժողովրդավարական հայրենիք կերտելն է, թեկուզև իր՝ ստվերում մնալու պայմաններում: Ահա սա էր, որ մենք կարևորեցինք, երբ կոչ արեցինք՝ եկեք իրար գլխի հավաքվենք:

Ա.Սահակյան – Իսկ ինչպե՞ս արձագանքեցին:

Ա.Գեղամյան – Գիտեք, կարելի է ասել՝ երկակի արձագանքեցին: Հրապարակավ չասացին, որ չհանդիպեց: Գիշտ է, ոմանք ինձ մեղադրեցին ռոմանտիզմի մեջ, մինչդեռ, թող անհամեստություն չլինի, ինձանից ավելի պրագմատիկ մարդ քիչ եմ տեսնում: 17 տարի է ես ոչ մի պետական պաշտոն չեմ զբաղեցնում, բայց էլի Հայաստանում իմ տեղն ու հեղինակությունն ունեմ: Այսինքն՝ պրագմատիկ եմ, չէ՞: Մեր կուսակցությունն այսօր արտախորհրդարանական է, բայց անգամ իսկ իշխանությունների պատվերով անցկացված սոցիոլոգիական հարցումներով, կրկնում եմ, որն իրենք են պատվիրել, նայում ես՝ բավականին բարձր վարկանիշ է արձանագրված թե՛ կուսակցու-

թյան և թե՛ անձիս համար: Է, հա, ռոմանտիզմն ու պրագմատիզմը, երբ զուգորդվում են, ապա տալիս են որակական մեծ արդյունք: Ասացին՝ ռոմանտիկ եմ, մինչդեռ հետևեցին իմ խորհրդին: Լևոն Տեր-Պետրոսյան-Յայ Յեղափոխական Դաշնակցություն հանդիպում եղավ, փաստորեն, ընդդիմություն-իշխանություն: Յանդիպում, որից հետո Արարատ Ջուրաբյանը հայտարարեց՝ չի բացառվում, որ Լևոն Տեր-Պետրոսյանը հանդիպի «Բարգավաճ Յայաստան» կուսակցության հետ, Յայաստանի Յանրապետական կուսակցության հետ: Շատ էլ լավ կանի, շատ էլ ճիշտ:

Ա.Սահակյան – Պարոն Գեղամյան, ո՞ր գաղափարը կարող է լինել այն առանցքը, որի շուրջ պետք է տեղի ունենա այդ համախմբումը:

Ա.Գեղամյան – Միասնական վտանգի գիտակցումը մի կողմից և մյուս կողմից՝ Յայաստանի միասնական տեսլականի ընկալման անհրաժեշտությունը, դրա մատնանշումը և այդ տեսլականը, զարգացումների իմաստով եմ ասում, ժողովրդի սեփականությունը դարձնելը: Ահա այս երկու գաղափարի շուրջ պետք է տեղի ունենա այդ համախմբումը:

Ա.Սահակյան – Դուք կարծում եք քաղաքական այն ուժերը, որ այսօր կան, դա իրենց համար էլ է առաջնահերթ խնդիր, այսպես ասած, միասնականությամբ:

Ա.Գեղամյան – Ես ուզում եմ լավը մտածել մեր քաղաքական ուժերի մասին, լինի դա ընդդիմություն, լինի դա իշխանություն: Ես ուզում եմ, որ իրենք էլ հասկանան, որ հատկապես վերջին երեք տարիների ընթացքում մենք տանուլ ենք տալիս տնտեսական մրցակցությունը Ադրբեջանի հետ: Երեք տարվա ընթացքում Ադրբեջանում արձանագրվել է ՅՆԱ-ի 96%-ով աճ: 2007թ. առաջի կիսամյակի արդյունքում, եթե մեզ մոտ ՅՆԱ-ի 112% աճի տեմպ է եղել, ապա 136% նրանց մոտ է եղել, ինվեստիցիաները հիմնական կապիտալի մեջ Ադրբեջանում 12 անգամ ավելի շատ են եղել, քան Յայաստանում, 12 անգամ ավելին է եղել արդյունաբերական արտադրանքի ծավալը, 16 անգամ էլ բեռնափոխադրումներն են շատ եղել:

Ա.Սահակյան – Դուք էլ շատ լավ գիտեք, որ քաղաքական դաշտում կան մարդիկ, որոնք առաջնորդվում են «Որքան վատ, այնքան լավ» սկզբունքով: Գուցե դրա համա՞ր են Ձեզ ռոմանտիկ ասել, պարոն Գեղամյան:

Ա.Գեղամյան – Այդ մարդիկ պետք է փորձեն վերստին պատկերացնել, թե ինչպես է գնահատվելու իրենց գործունեությունը 10 տարի անց, 15 տարի անց: Նրանք պետք է հասկանան, որ վաղ թե ուշ կգրվի մեր օրերի պատմությունը և դա գրելիս, հավատացնում են ձեզ, քաղաքական այն բոլոր ուժերը, ովքեր ասածիս մեջ ռոմանտիզմ են տեսնում, այլ ոչ թե եզակի հնարավորություն երկիրը փրկել վտանգավոր զարգացումների հորձանուտից, այդ մարդիկ դատապարտված են լինելու պարտության: Բայց մեր խնդիրը դա չէ, որ մենք հետո ասենք՝ այ, մենք ճիշտ էինք, բայց երկիրը կորցրեցինք, որովհետև մեզ չլսեցին: Չավեշտի է հասնում, երբ պետության ներկա և նախորդ առաջին դեմքերն իրար այնպես են վերաբերում, ինչպես Իլֆի ու Պետրովի «12 աթոռ»-ի հայտնի հերոսներն են իրար ասում: Հիշո՞ւմ եք այն դրվագը, ուր գրված է. «Հայր Ֆյոդորը ախորժակով թքեց Իպոլիտ Մատվեիչի երեսին, Իպոլիտ Մատվեիչն էլ իր հերթին նույն ախորժակով թուքը վերադարձրեց հայր Ֆյոդորին»: Ի՞նչ, մենք ուզում ենք էդ կերպարներին նմանվե՞նք: Դա ինձ համար վիրավորական է: Ես, կարծում եմ, որ պետք է, այո, գնալ մարդկանց մոտ, գնալ աղերսել, քավություն խնդրել՝ լինեն դա նախկին իշխանությունները, լինեն դա ներկայիս, լինի դա գործող ընդդիմությունը: Այն, ինչ այսօր կատարվում է Հայաստանում, ես հիմա հեռու եմ դա բարդել միայն հին ու նոր իշխանությունների վրա, ընդդիմությունն էլ իր մեղքի բաժինն ունի և հարկ կա, որ նա էլ ներողություն խնդրի սեփական ժողովրդից: Լավ, էդ մարդիկ գրականություն հաստատ կարդում են: Մասնավորապես, ի՞նչ օրինակ բերեմ, որ տեղին լինի: Հիշենք, խաչակիրների չորրորդ արշավանքը, Լևոն Հակոբիչին թեման մոտիկ է, որովհետև գրել է «Հայերը և խաչակիրները» շատ լուրջ աշխատություն: Ըստ որում, օգտվելով առիթից ասեմ՝ Լևոն

Հակոբիչ, խոստացել էիք այդ գիրքն ուղարկել, դեռ չեմ ստացել: Եվ, այսպես, չորրորդ արշավանքը 1204 թ. է եղել, խաչակիրներն ավերածություններ են արել Կոստանդնուպոլսում: Դրանից 800 տարի անց Յոննիս պապ Յովհաննես Պողոս II ներողություն խնդրեց հույն ծայրագույն պատրիարքից այդ ավերածությունների համար: Բա, լավ, էս 16 տարվա ավերածությունների համար ինչի՞ երկուստեք ներողություն չեք խնդրում մեր ժողովրդից: Մի քիչ Յովհաննես Պողոս II եղեք, պատմության մեջ ձեր անունները ոսկի տառերով կգրվի: Դուք դա արեք, տեսեք ժողովուրդը ձեր տարիներին արված լավ գործը չի՞ գնահատի: Բա, լավ, ինչպես կարելի է իրար նկատմամբ նման վերաբերմունք դրսևորել, երբ երկուսդ էլ առանցքային դերակատարություն եք ունեցել Հայաստանի նորագույն պատմության մեջ: Երբ առաջին նախագահը նախագահ է եղել, գործող նախագահը եղել է ԼԴՀ պաշտպանության կոմիտեի ղեկավարը, հետո էլ նախագահը և այդ տարիներին հաղթանակ են տարել: Բա, լավ, էդ բանը թողած, ձեր արածը ձև է, ժողովրդին ի՞նչ եք բզկտում, ի՞նչ եք ամեն մեկդ արդարությունը ձեր կողմը քաշում: Բա մի հատ չհասկանա՞նք, որ երկրի գլխին վտանգ է կախված: Երբ մեր ակնկալած այդ հանդիպումը տեղի ունենա, և այդ հանդիպման ժամանակ յուրաքանչյուրը գա մասնակցելու ոչ թե առաջին կամ գործող նախագահից կարոտն առնելու համար, այլ ժողովրդի հույսերը, ժողովրդի իղծերը, նպատակները գործնական հունի մեջ դնելու նպատակով, ամեն ինչ կընկնի իր տեղը: Իսկ եթե շարունակվի ինչպես հիմա է, շատ վտանգավոր զարգացումներ են սպասվում:

Ա.Սահակյան – Այսինքն՝ Դուք դեռ շարունակում եք այդ միտքը պնդե՞լ, իսկ ինչո՞ւ հանդիպումը չեք կազմակերպում: Օրինակ, ասենք, հրավերք ուղարկել բոլորին, գուցե ստացվում է:

Ա.Գեղամյան – Ուրեմն, խոսքը գիտե՞ք ինչի մասին է...

Ա.Սահակյան – Մի ժամանակ «Մետելիցա» սրճարանում...

Ա.Գեղամյան – Չէ, մի անգամ «Մետելիցա»-ում արեցինք, բա հո գաղտագողի չէի՞նք հանդիպելու, ի՞նչ ունեինք թաքցնելու մեր ժո-

ղովորդից, ի՞նչ ունեինք թաքնվելու համար: Յետո գործնական շատ հանդիպումներ են եղել: Իսկ հիմա կակնկալե՞մ մեր ասածի լրջությունը, կկազմակերպե՞մ հանդիպում, փառք ու պատիվ իրենց, չեն անի, մենք կինքնակազմակերպվենք, մենք կդառնանք քաղաքական այլընտրանքային ուժ և մեր միջից հրապարակ կիջնի նախագահի թեկնածուն, որովհետև չի կարելի մարդկանց դնել երկընտրանքի առաջ՝ կամ սա է, կամ նա: Այդպես չի լինում կյանքում: Եվ հետո գիտակցենք մի պարզ ճշմարտություն. Լեռնային Ղարաբաղի գործոնը երբեք ու երբեք չի կարելի հրապարակից մի կողմ դնել: Թող առաջին նախագահը հիշի, թե իր օրոք, 1996 թ. նախագահական ընտրությունների ժամանակ Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը և ինքնապաշտպանության բանակը ինչ կոշտ հայտարարությամբ հանդես եկան ի պաշտպանություն հայոց պետականության կայունության պահպանման, հետև էլ պաշտպանեցին Լևոն Տեր-Պետրոսյանին: Նույնն էլ, կարծում եմ, հիմա է լինելու: Բա, լավ, ինչպե՞ս կարելի է գնալ նույն սխալ ճանապարհով և հաշվի չառնել դրան գումարած ահագնացող սոցիալական լարվածությունը:

Ա.Սահակյան – Ի դեպ, սոցիալական վիճակի մասին խոսենք պարոն Գեղամյան: Այս օրերին մի քանի թեմաներ կան, որոնք լայնորեն քննարկվում են և՛ մամուլում, և՛ քաղաքական գործիչների կողմից: Դրանց հերթով անդրադառնանք: Նախ, թանկացումների մասին խոսենք: Ըստ որում, մամուլում հարցազրույց էիք տվել և դեռևս այս հարցի լուծմանն ուղղված պետական համապատասխան պաշտոնյաների կողմից քայլեր չեն արվել, Դուք դրա մասին հարց եք բարձրացրել թանկացումների հետ կապված, և դրան հետևեց տնտեսական նրջակցության հանձնաժողովի միստր: Այս օրերին ասում են, որ գները նորից իջան, ինչպե՞ս եք գնահատում դա: Արդյոք Դուք, որ նախանշել էիք որոշակի ուղղություններ, այդպիսի ընթացքը նորմալ էք տեսնում, թե՞ նորից արհեստականություն կա այդտեղ:

Ա.Գեղամյան – Գիտեք, հիմա շատ հետաքրքիր գործընթացներ են տեղի ունենում մեր երկրում: Մասնավորապես, Ազգային ժողովի

նախընտրական մեր քարոզարշավի ժամանակ, ինչ ասել էինք, հիմնավորել էինք, գործող իշխանությունն այժմ մասամբ կատարում է: Լինի դա թեկուզև կենսաթոշակների բարձրացումը: Մենք պնդում էինք՝ կարելի է դա բարձրացնել 100%-ով, հիմա իշխանությունները բյուջեում նախատեսում են այն բարձրացնել 60%-ով և այն էլ մեր հակաճգնաժամային ծրագրում մատնանշած ճանապարհով պետք է դրան հասնեն: Մենք ասում էինք՝ հնարավոր է բյուջեն կրկնապատկել, հիմնավորում ենք՝ ինչպես, հիմա 2 մլրդ 500 մլն դոլարանոց բյուջե են նախատեսել: Իսկ ինչ վերաբերում է թանկացումներին, ապա դուք միանգամայն ճիշտ եք նկատել: Այո, հոկտեմբերի 6-ին «Իսկական Իրավունք» թերթի ուղիղ կապի հյուրն էի ես և այդ հարցը հեռախոսով հնչեց: Տազնապալից ձայնով մի կին, այն էլ մանկավարժ, որը հիմա թոշակի է անցել, ասաց, որ թանկացումներից սովամահ է լինում: Դրա առաջն առնելու ճանապարհները մատնանշվեցին և հետո էլ տպագրվեցին նույն «Իսկական Իրավունք» թերթի հոկտեմբերի 9-11 համարում: Ասացի՝ իշխանություններ ստուգեք, նորգելանդական կարագը ե՞րբ են Հայաստան բերել, յուղը ե՞րբ են բերել, ձեթը, ցորենը ե՞րբ են ներկրել: Եվ ստուգեցին: Տնտեսական մրցակցության հանձնաժողովը, ի պատիվ իրենց, այո, գտավ, որ թանկացումների հետևում ոչ այլ ինչ է, քան ներկրողների կողմից մենաշնորհային դիրքից ելնելով չարաշահում: Այս ոլորտում չկա տնտեսական մրցակցություն, ուստի և չկա ազատ գնագոյացում, այլ առկա է գների կամայական բարձրացում: Այստեղ ինձ մտահոգեց, գիտեք ինչ, մտահոգեց այն, որ նույն հանձնաժողովի նախագահը, որը, ի դեպ, ազնիվ մարդ է, Աշոտ Շահնազարյանը (հիմա էդ մարդուն էլ կրակը չզցեն, ասելով, որ ազնիվ մարդ է, կասեն Գեղամյանի հետ կապ կա. կապ չկա, ուղղակի ազնիվ մարդ է, նրա խոսելուց են դա զգում), միստի ընթացքում, երբ սաստեց խնդրո առարկայի շուրջ պատասխանող կողմին, հանդիմանեց՝ մենք դեռ շատ բան ունենք ասելու, մի խոսեցրեք, որ չասենք: Ինչի՞ չասեք՝ պարոն Շահնազարյան, ո՞վ է ձեռքների բռնում, ո՞վ է խոչընդոտում ձեզ՝

գործել ավելի համարձակ, չէ՞ որ դա այսօր օդուչրի պես պահանջվում է: Ակամայից հիշեցի ուշագրավ մի պատմություն. 2002 թ. Ֆրանսուազա Սագանին՝ Ֆրանսիայի ժամանակակից գրականության ամենաերևելի դեմքերից մեկին, դատում են, որ նա հարկային մարմիններին ցույց չի տվել 830 հազար եվրո եկամուտ: Այդ նշանավոր կինն էլ ընդհանրապես իր ֆինանսներով չի զբաղվել: Դատում են, 50 հազար եվրո տուգանք են որոշում և պայմանականորեն 2 տարի ազատազրկում: Ֆրանսուազա Սագանին, որը դեռ 19 տարեկան հասակում դարձավ աշխարհահռչակ, «Բարև տխրություն» բեստսելեր էր գրել: Գիրք, որն ամբողջ Ֆրանսիայում, աշխարհով մեկ խլխլում էին: Յետո, ցավոք, մի 2 տարի անց նա մահացավ: Այդ օրերին նրա հիշատակին Ֆրանսիայի պրեզիդենտ ժակ Շիրակը և վարչապետ ժան Պիեռ Ռաֆարենը մեծարման այնպիսի խոսքեր ասացին, որ մնում ես զարմացած: Տեսեք, նրանք Սագանի մեծությունը գնահատում են, բայց նաև օրենքն ավելի բարձր են դատում, որ Ֆրանսուազա Սագանի նման մեծությամբ, որը պատիվ կբերեր ցանկացած երկրին, եթե օրենքը խախտել է, դատի են տալիս: Բա լավ, էս մեր, շատ ներողություն, մենաշնորհային դիրք ունեցող ներկրողները, ի՞նչ հայկական Ֆրանսուազա Սագան են, թե՞ ժան-Պոլ Սարտր: Ի դեպ, ասեն, վերջինիս պատահական չհիշեցի, շատ հետաքրքիր զուգահեռ կա նրա անվան հետ կապված. 1960-ական թվականներին Շառլ դը Գոլին, երբ ասում են, որ Փարիզում և երկրով մեկ սկսված ուսանողական ընդվզումների հոգևոր հայրերից մեկը ժան-Պոլ Սարտրն է և նրան պետք է մեկուսացնել, նա պատասխանում է՝ «Вольтеров не сажают» («Վոլտերներին չեն բանտարկում»): Լավ, եթե ապրանք ներկրողները լինեին մերօրյա Վոլտերը, ժան-Պոլ Սարտրը կամ Սագանը, կհասկանայինք: Սրանց արածներն ի՞նչ է: Սադիմ հարկային դաշտից հանել են. մեկը շաքար է բերում, մյուսը ցորեն է ներկրում, երրորդը բենզին է ներմուծում...

Ա.Սահակյան – Բայց առաջին անգամ նախադեպ եղավ, երբ որ լսեցին Ձեր հորդորները...

Ա.Գեղամյան –Նախադեպը դրական են համարում: Քաղաքական կամք կդրսևորի՞ այսօրվա իշխանությունը, ի դեմս Քոչարյան-Սերժ Սարգսյան տանդեմի, համոզված կարող են ասել, թեպետ գների թանկացում կլինի, ավա՛ղ, բայց ոչ այս աստիճանի, որովհետև համաշխարհային գների թանկացում է արձանագրվել: Մեզ մոտ էլ գները կաճեն, բայց այդ թանկացումներին համաչափ և ոչ ավելի, ինչ մեզանում վեջերս եղավ:

Ա.Սահակյան – Արհեստականորեն:

Ա.Գեղամյան – Խնդիրն ուրիշ է, իսկ ինչո՞ւ չեն մտածում, թեկուզ այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունն իր հացահատիկի ռեսուրսի 50%-ը ապահովում է ներմուծումով: Դա էլ այն դեպքում և այն պայագայում, երբ մեր սակավահող երկրի վարելահողերի շուրջ կեսը չի մշակվում: Դե ծրագիր մշակեք, պարենային անվտանգությունն ապահովող ազգային ծրագրեր՝ հացահատիկը կլինի, անասնապահության զարգացումը կլինի, անասնապահությունը զարգացավ, կարագը կլինի... Չէ՞ որ այդ բոլոր հարցերը պետականորեն պետք է լուծումներ գտնեն:

Ա.Սահակյան – Հոսանք, որ այս ելույթից հետո ևս այդպիսի արձագանքներ կլինեն, պարոն Գեղամյան:

Ա.Գեղամյան – Թատրոնում սուֆլյոր կա չէ՞, որ փոսից դերասաններին ինչ որ բաներ է հուշում...

Ա.Սահակյան – Դուք հուշո՞ւմ եք:

Ա.Գեղամյան – Փոսից չեն հուշում, ես իրենց, մեր ժողովրդին ծրագիր են ներկայացրել, քավ լիցի, թող իրենք կատարեն, դուք կատարեք: 60%-ով թոշակը բարձրացնում եք՝ սրտիս յուղ է նստում, որովհետև գիտեմ՝ դրա արդյունքում 500 հազարից ավել թոշակառու փոքր-ինչ թեթև կշնչի: Չուրախանա՞մ, ուրախանում են: Երբ ուրախանում են, ոմանք չարախնդում են, թե ինչի՞ են չարախնդում, չեն հասկանում:

Ա.Սահակյան – Պարոն Գեղամյան, հաջորդ թեման, որ այս երկու օրերին ավելի շատ, երբեմն էլ շահարկումների է հասնում, դա, ի

դեպ, պատահական չէր, որ մեր հաղորդմանը նախորդեց Ահմադինե-ջադի ելույթը, իր այցն էր և անակնկալ, այսպես են մեկնաբանում, մեկնումը Հայաստանից: Տարբեր վարկածներ էին քննարկում, թե ինչո՞ւ գնաց, տարբեր վարկածների հետ էին կապում: Կուզե՞նայի Ձեր կարծիքն իմանալ:

Ա.Գեղամյան – Նախ, այստեղ, ի սկզբանե ասեմ, մի բանը դուրս չեկավ, որ անգամ իսկ, եթե նա նախատեսվածից շուտ է մեկնել՝ ինչի՞ վրա ենք ուրախանում:

Ա.Սահակյան – Չենք ուրախանում, կարծես:

Ա.Գեղամյան – Չէ, ուրախացողներ կային, կարդացեք այսօրվա թերթերի հրապարակումները, որ նրա մեկնումը ժամանակից շուտ ապտակ էր չգիտեմ ինչու, վարչապետին, որ արհամարհեց Հայաստանի Հանրապետական կուսակցությանը, չգնաց Ազգային ժողով: Եթե դա է պատճառը, որ հարևան երկրի նախագահը ապտակ էր ուզում տալ Ազգային ժողովին, ուրեմն արհամարհեց իմ ազգիս ամբողջությամբ: Բայց այս դեպքում խնդիրը շատ ավելի խորն է: Բամբասանքի մակարդակի իջեցնելու խնդիր չէ դա: Սրանից ճիշտ երկու ամիս առաջ՝ օգոստոս ամսին, պաշտոնական այցով Իրանի Իսլամական Հանրապետությունում էր գտնվում Թուրքիայի Էներգետիկայի նախարարը: Վերջինս Իրանի կառավարության հետ կնքեց պայմանագիր, համաձայն որի խոշորածավալ գազատար է կառուցվելու Իրանից Թուրքիայի վրայով դեպի Հարավային Եվրոպա՝ տարեկան թողունակությունը, հզորությունը կազմելու է 25-30 մլրդ մ³ գազ: «Голубой поток»-ը, որը գցված է Սև ծովի հատակով, ունի հզորություն 16 մլրդ մ³ գազի տեղափոխում տարեկան կտրվածքով, իսկ սա 25-30 մլրդ է: Կնքված գործարքին Ամերիկայի պետքարտուղարությունը շատ կոշտ արձագանքեց, ասելով, որ երբ Ամերիկան կոչ է անում քաղաքակիրթ աշխարհին պատժամիջոցներ կիրառել Իրանի նկատմամբ՝ պայմանավորված վերջինիս միջուկային ծրագրերի հետ, դուք այդ ի՞նչ պայմանագիր եք կնքել: Դրան թուրքական կառավարությունը խստորեն արձագանքեց,

պատասխանելով՝ մենք ինքնիշխան պետություն ենք և վարվում ենք այնպես, ինչպես մեր ազգային շահն է մեզ թելադրում: Հիմա էդ պարագայում, փաստորեն, խոշորածավալ համատեղ ծրագրի արդյունքում (իսկ սա միայն տնտեսական ծրագիր չէ), ըստ էության, դիվերսիֆիկացվում է Արևմտյան Եվրոպայի, Եվրամիության անդամ երկրների գազամատակարարումը, իջեցվում է կախվածությունը ռուսական գազից ու դրանով իսկ առանձնահատուկ կարևորություն է հաղորդվում Իրան-Թուրքիա-Եվրոպա գազատարի կառուցմանը: Եվ այս պայմաններում Իրանը խիստ և խիստ շահագրգռված է, որ հաջողությամբ պսակվի այդ նախագիծը, քանի որ դրա հետ արդեն իսկ հույս կկապի Եվրամիությունը և որպես հետևանք կմեղմի ճնշումներն Իրանի վրա: Այս օրերին, երբ ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի միջազգային գործերի կոմիտեն ընդունեց 106-րդ բանաձևը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, ի դեմս նրա նախագահի, փաստորեն, քաղաքական ժեստ արեց, դիվանագիտական քայլ արեց Թուրքիային ընդառաջ, բայց դա չի կարելի և ոչ մի դեպքում էլ պետք չէ դիտարկել որպես հակահայկական դրսևորում: Նա պարզապես առաջնորդվեց 19-րդ դարի բրիտանացի հայտնի վարչապետ Պալմերսթոնի թևավոր հայտնի խոսքով. «Չկան հավերժական դաշնակիցներ, չկան հավերժական հակառակորդներ, կան հավերժական բրիտանական շահեր»: Պարսկաստանը, մի հատ հլը մտածենք, պատահական չէ, որ 5 հազար տարի է՝ պետականություն ունի, որովհետև ցանկացած իրավիճակում միշտ բանալին գտել է, և հիմա էլ հերթական անգամ այն գտավ. «Հայլուր»-ից հետո հեռարձակված հարցազրույցում Ահմադիյենջադը, կարծում են, շատ լավ պատասխաններ տվեց: Ահա սա է իրողությունը:

Ա.Սահակյան – Շատ լավ, պարոն Գեղամյան, ևս մեկ թեմա կա, ավելի ճիշտ երկու, որի մասին ուզում են անպայման խոսենք, բայց ունենք հինգ րոպե ժամանակ: Եվ, այսպես, 106-րդ բանաձևը Դուք հիշատակեցիք, փաստորեն, նոյեմբերի 16-ին, եթե ասենք մեկ ամիս

առաջ ոչ մեկի մոտ կասկած չէր առաջանում, որ կորվի քվեարկութեան, քննարկման ԱՄՆ-ի օրենսդիր մարմնում, ապա այսօր, կարծես թե, կասկածի տակ է հայտնվել, թեև արտաքին հարաբերությունների հանձնաժողովում արդեն քվեարկվել ու անցել է: Ձեր կարծիքով, ի դեպ, այս ընթացքում հնչում են տարբեր գնահատականներ, մասնավորապես ռուս փորձագետ Ջատուլիցի կողմից, քաղաքագետ, օրերս հնչեց, որ Թուրքիան և ԱՄՆ-ն...

Ա.Գեղամյան – ԱՊՀ երկրների ինստիտուտի տնօրեն, Պետդումայի պատգամավոր:

Ա.Սահակյան – ... առևտուր են անում՝ օգտագործելով, փաստորեն, ցեղասպանության ճանաչել-չճանաչելու հարցը: Ձեր գնահատականները նաև այս խնդրին, և ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ ճակատագիր է դրան սպասվում:

Ա.Գեղամյան – Ուրեմն, Ջատուլիցը փորձագետների համար հայտնի թեզ է առաջ քաշել, իսկ ո՞րն է դա. փորձագետների մի մասը հակված է կարծել, որ այս հարցում այն, ինչ տեղի է ունենում, ամենևին էլ պատահականություն չէ, որովհետև Բուշի վարչակազմը խնդիր էր դրել, որ այսօրվա Իրաքը կոնֆեդերացիայի վերածվի, ուր կլինեն սուևիների պետություն, շիաների պետություն և քրդերի պետություն: Դա խիստ անընդունելի էր թե՛ Թուրքիայի, թե՛ Սիրիայի և թե՛ Իրանի համար, քանզի Իրաքին սահմանամերձ այդ երկրներն ունեն կոմպակտ բնակվող քրդական բավականին հոծ զանգվածներ, ընդհանուր առմամբ, տարբեր գնահատականներով, 25-30 մլն քրդեր են այդտեղ բնակվում: Այստեղ թուրքերը կրակի հետ են խաղում: Ես բոլորին կոչ եմ անում ուշադրությամբ կարդալ Աստվածաշնչի Յին կտակարանը, Եսայա մարգարեի հայտնի խոսքերը, երբ քաղդեացիներին, խալդեերին սպառնում էր. «Ահա անոնց դեմ Մարերու ազգը ոտքի պիտի հանեն, որոնք արծաթը բանի տեղ չեն դներ ու ոսկիեն չեն փխորժիր»: Այդտեղ շատ ծանր այլ գնահատականներ էլ է տալիս. «Անոնց աղեղները երիտասարդները պիտի խոցեն ու անոնք որովայնի պտուղին գթություն պիտի չընեն: Անոնց աչքը պիտի չգթա

տղաքներուն...» («Աստվածաշունչ», Եսայի, 13, 17-18): Այնպես որ, նրանք կրակի հետ են խաղում: Իսկ ինչ վերաբերում է 106-րդ բանաձևի առնչությամբ հնչող նման գնահատականներին և հնարավոր զարգացումներին, ապա այստեղ, թերևս, մենք պետք է շեշտը դնենք լրիվ այլ հարցադրումների վրա: Բանաձևի ընդունումը պետք է մատուցվի ոչ թե որպես հայերիս հաղթանակ, այլ պարզորոշ կերպով ասվի՝ դա Ամերիկայի ժողովրդի, ամերիկյան ժողովրդավարության հաղթանակն էր: Եթե բանաձևը Կոնգրեսի կողմից չընդունվի, ապա առաջադեմ ողջ աշխարհը կմեղադրի նույն Միացյալ Նահանգներին երկակի ստանդարտներով առաջնորդվելու մեջ: Երբ Բուշի վարչակազմը ասում էր, որ ժողովրդավարացմելու է Մերձավոր և Միջին Արևելքը, Մեծ Միջին Արևելքը, ինքնին հասկանալի էր, որ չի կարելի ժողովրդավարություն հաստատել Մեծ Միջին Արևելքում, եթե երկրիդ ներսում երկակի ստանդարտներով ես առաջնորդվում: Չի կարելի լինել ԱՄՆ Հանրապետական կուսակցության կողմից առաջադրված և ընտրված Ամերիկայի պրեզիդենտ ու չառաջնորդվել Ռոնալդ Ռեյգանի (որը, ի դեպ, ԱՄՆ-ի Հանրապետական կուսակցության անդամ ամենահեղինակավոր պրեզիդենտն էր զոնե վերջին 30-40 տարիների ընթացքում) փիլիսոփայության առանցքային մոտեցումներով: Հիշենք, որ նախագահական իր ինաուգուրացիոն ճառում նա ասել էր. ԱՄՆ-ում ընտրությունների արդյունքում տեղի է ունեցել հեղափոխություն, երբ անձի ազատությունը և շահը գերադասվել է պետության շահից: Ահա, եթե հիմա ԱՄՆ պետության թվացյալ շահը գերադասեն անձի ազատությունից և շահից, իսկ 106-րդ բանաձևը կոչված է պաշտպանել մեկուկես միլիոն անմեղ զոհերի խոշտանգված ազատությունը, ապա աշխարհը կասի. դուք մի բան ասում եք, սիրելի ամերիկացիներ, իսկ իրականում մեկ ուրիշ բան եք անում: Կրկնում են, դա Ամերիկայի ժողովրդավարության հաղթանակն էր, և, եթե Նենսի Փելոսին հանկարծ իր խոսքի տերը չեղավ ու չդրեց բանաձևը քննարկման և եթե Ներկայացուցիչների պալատի էր 226 պատգամավորներն իրենց խոսքի տերը չեղան և,

ուրեմն, հետ կանչեցին իրենց ստորագրությունները, կնշանակի այն ամենը, ինչ այսքան ժամանակ քարոզվել է՝ ներկայացնելով ԱՄՆ-ն որպես ժողովրդավարության փարոս, որպես ժողովրդավարություն հաստատող երկիր, լուրջ կասկածանք կհարուցի: Ահա, սա պետք է լինի հայ դիվանագիտության մարտավարությունը և ռազմավարությունը: Ինչ խոսք, մենք բոլորս շնորհակալություն ենք հայտնում կողմ քվեարկած այն 27 կոնգրեսականներին, ինչու չէ, նաև այն 21 կոնգրեսականներին, որոնք այս պահին դեմ էին բանաձևի ընդունմանը: Որովհետև փաստ է, որ թե՛ կողմ և թե՛ դեմ քվեարկած 48 կոնգրեսականներից և ոչ ոք կասկածի տակ չդրեց ցեղասպանության պատմական իրողությունը: Դեմ քվեարկողներն իրենց ելույթներում պարզապես նշում էին՝ բանաձևի ընդունումն այս պահին նպատակահարմար չէ: Իսկ 106-րդ բանաձևի առանցքում դրվել են նաև 1913-1916 թթ. եղեռնագործության ակնատես ու այդ տարիներին Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Զենրի Մորգենթաուի հայտնի գեկույցները: Այդ փաստաթուղթը, 106-րդ բանաձևի տեքստը, ի դեպ, «Գոլոս Արմենիան» տպագրել էր, ընդ որում Մարինա Գրիգորյանի բարեխիղճ թարգմանությամբ: Այդ բանաձևի ընդունումը, անշուշտ, շատ հետաքրքիր հեռանկարներ կբացի մեր առաջ:

Մի բան էլ ավելացնենք. եղ որ ասացիք, թե հաղորդման ավարտին 5 րոպե է մնացել: Այդ առումով մի ուշագրավ պատմություն հիշենք: Համալսարանում կար Աշոտ Մայիսենկիչ անունով շատ սիրված դասախոս, ազգանունն էլ Տեր-Սկրտչյան էր: Նա սովորություն ուներ միշտ 5 րոպե ուշացումով մտնել լսարան: Ռեկտորատից հանդիմանում էին՝ ախր, Աշոտ Մայիսենկիչ, չեղավ, 5 րոպե ուշ ես միշտ լսարան մտնում: Նա էլ թե՛ զատո 5 րոպե շուտ են վերջացնում դասը: Հիմա չստացվի՝ էսքան ուշ սկսեցինք, շուտ էլ ավարտենք, թողեք մի քիչ էլ երկար խոսենք:

Ա.Սահակյան – Եվ վերջին հարցը, պարոն Գեղամյան: Փաստորեն, դա Ղարաբաղի խնդիրն է, որը մենք միշտ ուշադրության կենտրոնում ենք պահում: 2008 թ. նախընտրական տարի է և՛ Հայաստան-

նի համար, և՛ Ադրբեջանի համար: Դատելով նաև Ղարաբաղյան խնդրի կարգավորման հետ կապված վերջին զարգացումներից, կարելի է եզրակացնել, որ մի տեսակ սառը վիճակ է բանակցությունների առումով և դա, կարծես թե, կշարունակվի 2008 թ.: Ի դեպ, այսօր ԵԱՀԿ Մինսկի խումբն էր եկել Երևան, տարածաշրջան: Այսպես ասենք, Ձեր կանխատեսմամբ ի՞նչ հեռանկար է սպասվում Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը՝ նկատի ունենալով այս ընտրական շրջանը:

Ա.Գեղամյան – Արձանագրենք հետևյալ փաստը. այն, որ Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանը միաժամանակ դարձան Եվրախորհրդի անդամ երկրներ, կամա թե ակամա նշանակում է, որ Եվրախորհուրդն ընդունել է Ղարաբաղի շուրջ ստեղծված ստատուս քվո: Այն, որ արդեն 12-13 տարի է Մինսկի խմբի համանախագահները բանակցային գործընթացի արդյունքում կարողացել են հասնել նրան, որ խաղաղությունը հաստատուն մնա, կնշանակի Մինսկի խմբի անդամ երկրները, այսպես թե այնպես, ստատուս քվոն նույնպես ընդունել են: Հիմա սա պետք է մեզ հուշի երկու բան. եթե այս մտածելակերպով ընթանան զարգացումները, ապա վտանգը դարանակաված է մեկ այլ տեղ. Հայաստանի տնտեսության մասին է խոսքը: Այստեղ մենք, եթե վիճակը կտրուկ չշրջենք, Ադրբեջանի հետ տնտեսական մրցակցությունում ժամանակի ընթացքում տանուլ կտանք: Նոր մտածելակերպ, նոր մոտեցումներ են անհրաժեշտ, որ մենք կարողանանք մեր տնտեսական քաղաքականությունը համարժեք դարձնել Ադրբեջանի տնտեսական քաղաքականությանը: Դրա համար, որպես նախապայման, հարկ է, կրկնում են, ժողովրդի կոնսոլիդացիան, միասնականությունը: Ժամանակն է հիշենք ու հասկանանք, ականջներիս էլ օղ անենք. եթե հայ ժողովուրդը միասնական է, ապա նրան հնարավոր չէ հաղթել: Ուստի, այս հարցում մենք պարտադիր պետք է հասնենք նրան, որ նախագահի առաջադրվող բոլոր թեկնածուներն անխտիր Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման մոտեցումներն անվերապահորեն դարձնեն կոնսենսու-

սային, որ դրանք բոլորի համար նույնը լինեն, որ դրա վրա չարաշահում չանեն, որ ադրբեջանաթուրքական պրոպագանդան և լուրբինգն այս գործում դեր չխաղա: Կարևոր է, որ Ադրբեջանի, Թուրքիայի ու նրանց հովանավորների համար նախընտրելի չլինի այս կամ այն թեկնածուի նախագահ դառնալու փաստը: Եթե նախընտրելի եղավ, ապա, հավատացնում են ձեզ, նրանց համար բացարձակապես նշանակություն չի ունենա 100-200 մլն դոլար շարտել Չայաստան: 100-200 մլն-ով նրանք Չայաստանում իրենց ուզած նախագահին «կընտրեն»: Ցավոք, նման զարգացումներին մենք երկրում ընթացող գործառույթներով ոչ թե դիմակայում ենք, այլ ընդհակառակը. մենք դրան, կարելի է ասել, նպաստում ենք, ավելին ժողովրդին վարժեցրեցինք մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Եվ հնարավոր նման վտանգավոր զարգացումների առաջն առնելը նույնպես ընդդիմություն-իշխանություն կլոր սեղանի մասնակիցների քննարկման առարկա պետք է դառնա:

Ա.Սահակյան – Շնորհակալություն, պարոն Գեղամյան: Հուսով եմ, որ Ձեզ մոտ կստացվի այդ կլոր սեղանի կազմակերպումը, և մենք էլ առիթ կունենանք մեկ անգամ ևս այս տաղավարում Ձեզ հետ զրուցելու: Շնորհակալություն: Սիրելի բարեկամներ, հիշեցնեմ՝ իմ այսօրվա հյուրը Արտաշես Գեղամյանն էր, «Ազգային Միաբանություն կուսակցության» առաջնորդը, իսկ մենք կհանդիպենք հաջորդ շաբաթ:

Ա.Գեղամյան – Շնորհակալություն հրավերի համար:

«ԵԹԵ ՄԱՐԴՈՒՆ ԱՆԸՆԴՅԱՏ ԱՍՈՒՄ ԵՍ, ՈՐ ՆԱ ԽՈՋ Է, Ի ՎԵՐՋՈՒ, ՍԿՍՈՒՄ Է ԽՈՋԻ ՆՄԱՆ ԽՈՒՆՈՒԱԼ»

ԱԺ-ում քննարկվում է 2008 թ. բյուջեի նախագիծը: Դրա առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ, ներկայացված լինելով մի Կառավարության կողմից, ամենայն հավանականությամբ, կկատարվի նոր կազմով ձևավորվելիք Կառավարության ջանքերով՝ հաշվի առնելով գալիք տարվա նախագահական ընտրությունները: Դա, անկախ այն բանից, թե սպասվող ընտրություններում կհաղթի գործող վարչապետ Սերժ Սարգսյանը, թե՞ մեկ այլ թեկնածու: Իհարկե, շրջանառվում են նախագահի տարբեր թեկնածուների անուններ ու, բնականաբար, հետաքրքիր է, թե նրանք ինչպես են վերաբերվում 2008թ. բյուջեի նախագծին: Որպես նախագահի հավանական թեկնածու, հայտնի է, որ, մասնավորապես, շրջանառվում է նաև Արտաշես Գեղամյանի անունը և հիշյալ հարցի պատասխանը փորձեցինք ստանալ նրանից:

- Պարոն Գեղամյան, բյուջեն կազմողները որպես դրա հիմնական առավելություններից մեկը համարում են, եթե կարելի է ասել, դրա աննախադեպ ծավալները. հավանաբար, 2008-ին կունենանք շուրջ 2,5 միլիարդ դոլարանոց բյուջե: Այդ հանգամանքի հետ կապված ի՞նչ կարծիք ունեք:

- Ձեր հարցադրումը միանգամայն տեղին է: Երբ վերլուծության ենք ենթարկում 2008 թ. բյուջեի նախագիծը, ականայից հայտնվում ենք յուրահատուկ մի իրավիճակում: Մի կողմից ակնհայտ է առաջընթացը: Եթե դիտարկում ենք 2008 թ. բյուջետային ծախսերի ծա-

վալների աճը 2007-ի համեմատ, այն է՝ 820,8 մլրդ դրամ, որը 188,3 մլրդ դրամով գերազանցում է 2007 թ. համանման ցուցանիշը, ապա արձանագրենք, որ աճի տեմպը կազմում է 129,7%: Գրանցված է նաև սոցիալական ծախսերի շոշափելի աճ, որը 2008 թ. բյուջեի ծախսերի 46%-ն է կազմելու, բազային կենսաթոշակների բարձրացումը հասնում է շուրջ 60%-ի՝ դառնալով 21842 դրամ (2007 թ. 13242 դրամի դիմաց): Նախատեսված է նաև մանկավարժների, պետական ծառայողների, գիտաշխատողների աշխատավարձերի որոշակի բարձրացում:

Այս ամենը տպավորիչ է, եթե գնահատման հիմքում դրված է եղած բյուջետային ծախսերի մակարդակի համեմատ աճի տեմպի արձանագրումը: Ընդունելի է բյուջեի գնահատման համար կիրառել նման մոտեցում: Իհարկե, ոչ: Դա խիստ մերժելի է, անգամ իսկ վտանգավոր, որովհետև կարող է վնասակար, հանգստացնող մտայնություն ստեղծել երկրում ձևավորված սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ, որը, ավա՛ղ, տագնապահարույց է: Դատեք ինքներդ: 2008 թ. բյուջեում նախատեսված է հարկային մուտքերը հասցնել ծրագրված ՀՆԱ-ի ընդամենը 16,9%-ի: Ցուցանիշ, որը ՀՀ-ում գործող հարկման տոկոսադրույքների համեմատ, անկասկած, փոքր ցուցանիշ է: Նշենք, որ Եվրամիության անդամ երկրներում հարկային եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի ծավալի համեմատ տատանվում է 30-ից 50%-ի սահմանում, դա էլ այն պայմաններում, երբ այդ երկրներում հարկային դրույքաչափերը համադրելի են կամ էլ չեն գերազանցում մեզ մոտ սահմանվածին: Հարկերի հավաքագրման գործում առկա միայն այս հսկայական տարբերությունը խոսում է այն մասին, որ Հայաստանի Հանրապետության տնտեսության զգալի մասը շարունակում է մնալ ստվերում: Անշուշտ, այստեղ խոսքը չի գնում ստվերում գործող մանր ու միջին բիզնեսի մասին, խնդիրը շատ ավելի խորը և խորքային է: Մենք գործ ունենք խոշոր հարկատուների, օլիգարխների և առհասարակ նրանց հետ, ովքեր ունեցել են իշխանության վրա ազդելու այնպիսի լծակներ, որ

վերջիններիս կողմից չտեսնելու է տրվել նրանց ստվերում գործելու հանգամանքը: Այլ կերպ ասած՝ մենք գործ ունենք անբարեխղճության, հարկերից խուսափելու զանգվածային դրսևորումների հետ: Եզրահանգումս մերկապարանոց չթվալու համար բերեմ մեկ-երկու օրինակ: Այս անգամ էլ, ավանդույթի համաձայն, բնականաբար, թվերը և օրինակները վերցրել են պետական պաշտոնական աղբյուրներից, տվյալ դեպքում հարկային ծառայության 2007թ. 9 ամիսների կտրվածքով խոշոր հարկատուների վճարումների վերաբերյալ տեղեկատվությունից: Այսպես, պարեն ներկրող «Սալեքս գրուպը» անցած 9 ամիսների ընթացքում ուղղակի հարկերի տեսքով բյուջե է մուծել 17 մլն դրամ, ճիշտ այնքան, ինչքան մուծել է նույնաման բիզնեսով (պարենի ներկրմամբ) մասնագիտացած «Քեթրին» կոմպանիան: Նկատենք, որ վերջինիս բիզնեսի ծավալները «Սալեքս գրուպի» ծավալներից ավելի քան տասն անգամ պակաս են: Ասել կուզի, որ վերջինս և նրա աշխատողները «Քեթրին»-ից տասն անգամ ավելի քիչ շահույթներ ու եկամուտներ են ունեցել, դա էլ այն դեպքում, երբ տասն անգամ ավելի շատ են «չարչարվել»: Բա եղավ, ո՞ւմ եք միամիտի տեղ դրել... Հարկերի հավաքման ոլորտում աչքի զարնող նույնաբովանդակ բազմաթիվ այլ անհամաչափություններ ևս արձանագրված են կոնյակի արտադրությամբ մասնագիտացած երևանյան երկու գործարանների կողմից: Ըստ որում, երևանի կոնյակի գործարանի ֆրանսիացի սեփականատերերը ցուցաբերել են ոչ միայն բացառիկ պարտաճանաչություն, բյուջե վճարելով ավելի քան 2-3 անգամ ավելի հարկեր, այլ նաև դրսևորել են պարկեշտություն իրենց գործընկերոջ և մրցակցի հանդեպ: Չէ՞ որ նրանք կարող էին Տնտեսական մրցակցության հանձնաժողովին բողոքարկել ստեղծված իրավիճակը՝ մատնանշելով առկա անհավասար մրցակցության փաստը, այն է՝ սակավ հարկեր մուծողի արտադրանքի ինքնարժեքն ավելի ցածր է, ինչն էլ իր հերթին գնագոյացման հարցում ապահովում է առավելություն և սպառման շուկաներում ստեղծում մեկնարկային արտոնյալ պայմաններ: Այստեղ դի-

տարկվում է նաև մեր ազգային արժանապատվության նսեմացման դրսևորում: Չէ՞ որ նույն ֆրանսիացիները կարող են մտածել, որ հայերս անընդունակ ենք իրականացնել ժամանակակից կառավարում և մենեջմենթ, ապահովել բարձր շահույթ անգամ իսկ Հայաստանի համար ավանդական այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են կոնյակագործությունը և գինեգործությունը: Մի՞թե դրա արդյունքում է, որ մերոնց կառավարման ներքո գործող, տեխնոլոգիապես նույն գործարանները կարող են անգամներ պակաս շահույթներ ունենալ, առավել ևս, երբ օգտագործվող հումքն էլ ունի նույն ծագումը: Իհարկե, դա այդպես չէ: Ինքնին հասկանալի է, որ այս ամենը պատահականություն չէ, այլ տեղավորվում է ԱՄՆ պրեզիդենտ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի դեռ 1932 թ. արած հայտնի նախազգուշացման շրջանակում. մի կառավարություն, որը ղեկավարվում է խոշոր բիզնեսի կողմից, նույնքան վտանգավոր է, որքան այն կառավարությունը, որը ղեկավարվում է հանցագործների կողմից: Իմաստուն մարդ էր Ֆ.Դ. Ռուզվելտը: Տվյալ նախազգուշացումը, թերևս, մեկ նպատակ է հետապնդում. հավակնոտ ծրագրերի իրականացման մասին պատրաստակամություն հայտնած կառավարությունն իր ամենօրյա գործունեությամբ պետք է տեղ չթողնի նման կասկածանքների համար:

Ես այս օրինակները հիշատակեցի, որ 2008 թ. բյուջեն ներկայացնելիս մեր իշխանավորները փոքր-ինչ զսպեն սեփական հրճվանքն ու գիտակցեն, որ այն, ինչ սկսել են կենսագործել ստվերից տնտեսությունը հանելու ճանապարհին, դա ընդամենն առաջին երկչոտ քայլերն են: Ինչպես հետևում է հարկային ծառայության վիճակագրական տեղեկատվությունից, մեր երկրում առ այսօր չի ձևավորվել մթնոլորտ, երբ հարկային օրենսդրության առաջ բոլորն են հավասար: Ավելին, չկա այն գիտակցումը, որ ցանկացած ձեռներեցի քաղաքացիական բարեմասնությունները պայմանավորված են նախևառաջ օրինապաշտությամբ, հատկապես պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների՝ ժամանակին և բարեխիղճ կատարման հանգամանքով:

Կառավարությանը պետք է խիստ մտահոգի այն, որ 2008 թ. պետական բյուջեում հարկային եկամուտներում անուղղակի հարկերի տեսակարար կշիռը կազմելով 41,65%, շարունակում է զգալիորեն գերազանցել ուղղակի հարկերի տեսակարար կշիռին, որը համապատասխանորեն կազմում է՝ շահութահարկի մասով 14,9%, եկամտահարկի մասով՝ 8,98%: Երբ այս թվերը համադրում ես հարկատուների կողմից իրականացվող ներդրումների ծավալների հետ, ապա հետևությունը մեկն է. մեր տնտեսության որոշակի հատվածը շարունակում է գործել ստվերում, հարկային դաշտից դուրս: Կարծում եմ, տեղին է ստվերում գործելու սիրահարներին նախազգուշացնել. երկակի հաշվապահություն անողները պարտվում են երկու անգամ:

Սա բյուջեին վերաբերող հարցերից ընդամենը մակերեսին գտնվող խնդիրների մասին: Բայց չէ՞ որ կան ավելի խորքային խնդիրներ: Մինչ դրանց անդրադառնալը, վերստին նշենք, որ բյուջետային քաղաքականությունը պետք է հանդիսանա պետության տնտեսական քաղաքականության առանցքը: Ուստի, տրամաբանական կլիներ, որ մենք կարողանայինք գնահատել բյուջետային ծախսերի կառուցվածքի համապատասխանությունը երկրի տնտեսական զարգացման գերակայություններին: Ավելին, պարզեինք, թե որքանով է առաջարկվող բյուջեն, բյուջետային քաղաքականությունն ապահովում երկրի կայուն ու անվտանգ զարգացումը, նպաստում ձեռներեցության զարգացմանը, հայրենական ապրանքարտադրողների շահերի պաշտպանությանը, և այս ամենը գնահատեինք երկրի անվտանգությունն ապահովելու տեսակետից: Եթե բյուջեի գնահատմանը մոտենանք՝ առաջնորդվելով այս չափանիշներով, ապա վիճակը մտահոգիչ է: Ինչո՞ւ: Մինչ բուն հարցին պատասխանելը, նշենք, որ ս/թ նոյեմբերի 1-ին Մոսկվայում Կրեմլում, Վ.Պուտինի նախագահությամբ տեղի էր ունեցել տնտեսական հարցերին վերաբերող խորհրդակցություն, ուր քննարկվել էին մինչև 2020 թ. ՌԴ սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգի մշակման հետ առնչվող հարցեր: Այդ հայեցակարգը կոչված է տալ հստակ պատաս-

խաններ՝ ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով ու մեթոդներով, ի՞նչ գործառույթներ իրականացնելով հնարավոր կլինի հասնել մատնանշված խնդիրների լուծմանը: Ինչո՞ւ այս հանգամանքը հիշատակեցի, որովհետև ՌԴ-ի հեռանկարային զարգացման խնդիրների լուծման զինանոցում մեծ տեղ է հատկացվում բյուջետային քաղաքականությանը, դրա հաջորդայնության ապահովմանը: Հենց նման մոտեցումը նկատի ունենալով ուզում եմ հարցեր ուղղել 2008 թ. բյուջեի նախագծի հեղինակներին: Արդյոք 2008 թ. ՀՀ պետական բյուջեի նախագծում հաշվի՞ են առնված հնարավոր այնպիսի անցանկալի զարգացումները, ինչպիսիք են.

առաջին. կենսական առաջին անհրաժեշտության սննդամթերքի գների վերջին թանկացումները մեկ անգամ ևս փաստեցին մեր հանրապետության պարենային կախվածությունը ներմուծումից: Նշենք, որ 2006 թ. մեր երկրում օգտագործվող ցորենի ռեսուրսի 67,6%-ը, շաքարավազի 96,3%-ը, ձեթի 87,8%-ը, կարագի 80,5%-ը, հավի մսի 66,5%-ը, բրնձի 100%-ը ապահովվել է ներմուծմամբ: Արդյո՞ք առաջարկվող բյուջեն մեղմում է այդ կախվածությունը, արդյո՞ք տեղական գյուղմթերքներ արտադրողներին խթանում է, որ կարողանան շեշտակի ավելացնել պահանջարկ ունեցող մթերքների արտադրանքը: Ոչ, նախագծից դա չի նշմարվում:

երկրորդ. բնական գազի գները 2009 թ. հունվարի 1-ից թանկանալու են նվազագույնը երկու անգամ: Հաշվարկվա՞ծ է, թե այդ թանկացումները ինչպիսի անդրադարձ կունենան տեղական արտադրանքի ինքնարժեքի և դրանց մրցունակության վրա: Հաշվարկվա՞ծ է արդյոք, թե գազի թանկացումները ինչպե՞ս կանդրադառնան բյուջետային մուտքերի վրա, որքանո՞վ կհանգեցնեն ներմուծման ծավալների աճին՝ շուկայից դուրս մղելով մեր տեղական «թանկացած» արտադրանքը: Դա էլ այն դեպքում, երբ մեզ մոտ արդեն իսկ ներմուծման աճի տեմպերն ավելի քան 2 անգամ գերազանցում են արտահանման աճի տեմպերին: Այս հարցերի առաջն առնելու համար 2008 թ. բյուջեի նախագծում կա՞ նախատեսված որևէ միջոց: Կրկին, ոչ:

Երրորդ. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման վիճակը 2007 թ. առաջին կիսամյակում բնութագրող մի շարք կարևոր ցուցանիշների համադրումը ցույց է տալիս, որ մեր երկիրը տնտեսական մրցակցության մեջ տանուլ է տալիս Ադրբեջանին: Այսպես. ՀՆԱ-ի աճի տեմպերը մեզ մոտ շուրջ 3 անգամ ավելի պակաս են, քան Ադրբեջանում, արդյունաբերության արտադրանքի ծավալներն ավելի քան 12 անգամ են պակաս: Հիմնական ֆոնդերում ինվեստիցիաները Ադրբեջանում 12 անգամ ավելի են, քան Հայաստանում, ըստ որում, սա նշանակում է, որ երկու-երեք տարի անց այդ ներդրումների շնորհիվ Ադրբեջանի ՀՆԱ-ի հավելաճի տեմպերն ավելի քան 20-25 անգամ գերազանցելու են համանման ցուցանիշը Հայաստանում (եթե անգամ իսկ ընդունենք, որ ինվեստիցիաների արդյունքում թե՛ մեզ մոտ, թե՛ ազերիների՝ տնտեսական բազմապատկիչը լինելու է համադրելի և ոչ շատ բարձր): Բեռների փոխադրումը, որն ուղղակիորեն խոսում է տնտեսության զարգացման դինամիկայի մասին, իր ծավալով Ադրբեջանում 16 անգամ ավելին է եղել, քան Հայաստանում: Այստեղ հարկ է նշել, որ գործազուրկների տեսակարար կշիռը նրանց մոտ ավելի քան 5 անգամ պակաս է: Արդյո՞ք այս մարտահրավերներին դիմակայելու համար 2008 թ. բյուջեում նախատեսված են որևէ միջոցառումներ: Ոչ, նախատեսված չեն:

Չորրորդ. Հայաստանի Հանրապետության ամենախոշոր հարկատուներից գոնե երկուսի՝ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակը մեծապես պայմանավորված է համաշխարհային շուկայում ձևավորվող գներից՝ մի դեպքում պղնձի և մոլիբդենի խտանյութի, մյուս դեպքում՝ էներգակիրների (բնական գազի և միջուկային վառելիքի) գներով: Աստված մի արասցե, եթե պղնձի և մոլիբդենի գներն ընկնեն, գազի ու միջուկային վառելիքի գներն էլ բարձրանան, այդ դեպքում ի՞նչ է լինելու մեր բյուջեի վիճակը: Եթե բենզինի և դիզելային վառելիքի գներն էլ շարունակեն այսօր արձանագրվող աճի միտումները, ինչպիսի՞ն են լինելու դրանցից բխող հետևանք-

ները: Կա՞ն այս հարցերի պատասխանները: Երբ ուշադիր ուսումնասիրում ես բյուջեն, ապա տեսնում ես, որ այս հնարավոր մարտահրավերների պատասխանները 2008 թ. բյուջեի նախագծում նույնպես նախատեսված չեն:

Չինգերորդ. արդյո՞ք 2008 թ. բյուջեն, առաջարկվող բյուջետային քաղաքականությունը նպատակուղղված են երկարաժամկետ ներդրումային, իննուվացիոն, կառուցվածքային բնույթի միջոցառումային նախագծերի կենսագործմանը: Առաջարկվա՞ծ են արդյոք գործադիր իշխանությունների բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման մեխանիզմներ, կա՞ն այն չափորոշիչները, որոնք կընթանան բյուջետային հիմնարկություններին առավել արդյունավետ օգտագործել բյուջեով նախատեսված միջոցները՝ մատուցելով որակյալ ծառայություններ: Ցավոք, այստեղ էլ բացթողումները շատ են: Կրկնեն, բյուջետային ծախսերի հիմքում, որպես կանոն, դրված է նախորդ տարիներին հատկացված գումարներին համաչափ լինելու սկզբունքը՝ առանց շաղկապելու դրանք պետական ծախսերի արդյունավետության հետ: Խոսքը երկրի համար առաջնահերթ նշանակություն ունեցող խնդիրների լուծմանն ուղղված ծախսերի մասին է, այլ ոչ բյուջեի կատարողական կարգապահության գնահատման մասին, ինչը նույնպես մենք կարևորում ենք:

Արված հարցադրումները կարելի է շարունակել ու շարունակել: Սակայն, կարծում եմ, ասվածն էլ բավական է եզրակացություն անելու համար. 2008 թ. բյուջեի նախագիծը համարժեք չէ այն մարտահրավերներին, որոնք ծառայած են հայոց պետականության առջև: Պատճառը, թերևս, մեկն է. հնարավոր չէ մտածողության այն հարթության վրա, որն երկիրը զարգացումների նման վիճակի է հասցրել, փորձել գտնել ճանապարհներ, որոնք դուրս կբերեն դանդաղ ընթացող այս ճահճացումից: Ճահճացում, որը, Ադրբեյջանի ու Թուրքիայի նման «բարեկամների» առկայության պայմաններում, հղի է պետականության կորստի վտանգով: Եվ ասվածը չափազանցություն չէ:

- Թեև ստվերի մի մասը, ինչպես երևում է, 2008 թ. բյուջե չի մտ-

նելու, սակայն Ձեր գնահատմամբ, այնուամենայնիվ, դրա մի զգալի մասը մտնելու է: Այսինքն՝ առաջ է գալիս նույն վերևների կողմից հովանավորվող գործարարների եկամուտները կրճատելու հավանականությունը: Դա իշխանությունների մոտ ներքին հակասությունների հնարավորություն չի՞ առաջացնում: Օրինակ, ինչպե՞ս եք պատկերացնում, որ այսօր ԱԺ-ում գտնվող նույն մոնոպոլիստը կողմ քվեարկի մի բյուջեի, որը սահմանափակում է իր եկամուտները:

- Ես այդ հարցի մասին շատ եմ մտածել: Հավանաբար, գալիս է գիտակցման այն պահը, որ մենաշնորհային դիրք ունեցող նույն օլիգարխը, որն արդեն ծայրաստիճան հարստացել է, սկսում է գիտակցել, որ եթե չմտնի հարկային դաշտ, կարող է երկրում իրավիճակն այն աստիճան սրվել, որ ամեն ինչ կորցնի: Մենք էլ մեր հերթին այդ ձեռներեցներին պետք է խրախուսենք, որ նրանց օրինապաշտ հարկատու լինելու գործընթացը դառնա անշրջելի: Վերջին հաշվով, եթե մարդուն անընդհատ ասում ես, որ նա խոզ է, ի վերջո, սկսում է խոզի նման խոխոալ: Իսկ երբ լավ բաներն ես խրախուսում, ապա կարող է և ոգևորվել, շարունակել լավը: Եվ չմոռանանք, որ արդեն իսկ Հայաստանը կարող է շնչահեղձ լինել կոռուպցիայի և կաշառակերության ճիրաններում, եթե դրանց առաջը չառնվի: Փրկության եզակի ճանապարհը այդ ամենի դեմ իրական պայքարի ծավալումն է, ընդ որում՝ դրանում ներգրավելով հասարակության ամենալայն շերտերին, այդ թվում՝ ընդդիմադիր դաշտի հեղինակավոր ուժերին, որպեսզի այդ պայքարը մարդկանց մոտ հավատ ներշնչի:

Ք.Սարգսյան

ԳԵՂԱՄՅԱԼՆԸ ԴԵՄ Է ՍԵՎ ՈՒ ՍՊԻՏԱԿԻՆ

«Ազգային Միաբանությունն կուսակցության» նախագահությունը դրականորեն է բնութագրում Տեր-Պետրոսյանի պատրաստակամությունը՝ ծառայելու որպես գործիք՝ ցանկացած ընդդիմադիր ուժի համար, խնդիր ունենալով ձերբազատվել այս իշխանություններից», - «Ա1+»-ին ասաց կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանը: Նա տեղեկացրեց, որ ԱՄԿ-ի նախագահությունը առաջիկայում քննության կառնի, թե «ինչ ճանապարհով, ինչ եղանակով օգտագործել Լևոն Տեր-Պետրոսյանի կարողությունները՝ իրենց պայքարի գիմանոցը հարստացնելու նպատակով»:

Սակայն պարոն Գեղամյանին մտահոգել էին այլ խնդիրներ. մասնավորապես՝ «այն, որ կրկին փորձ է կատարվում երկիրը բաժանել սևի և սպիտակի, ինչը ներկա վիճակում մեր կողմից մերժելի ու անընդունելի է և արդեն իսկ պատմության կողմից դատապարտված»:

Են իՎ հայաստանյան պատվիրակության նախկին անդամ Արտաշես Գեղամյանի համար մերժելի է նաև եվրոկառույցներին դիմելու Տեր-Պետրոսյանի մտադրությունը: «Նամակով դիմել էին գլխավոր քարտուղար Թերի Դևիսին, ԵԱՀԿ ղեկավարներին, ԵՄ-ին, նշանակում է փաստացի ցույց տալ սեփական մտքի տկարությունը, սեփական կամք դրսևորելու անվճռականությունը, քանի որ նույն մարմինները և մարդիկ մայիսի 12-ի Աժ-ի խայտառակ ընտրությունները ամենաբարձր ամբիոնից բնութագրել էին որպես լուրջ առաջընթաց քայլ: Եվ, վերջին հաշվով, մեր ազգային արժանապատվությանը հարիր չէ դրսից արբիտր բերել մեր գործերին գնահատական տալու նկրտումով: Ինչպես 19-րդ դարավերջին 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո (որը վավերացրեց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքները), ասել էր Գարեգին

Սրվանձտյանը, «Չայկական հարցը Չայաստանում է, ոչ թե Բեռլինում» կամ էլ մեր օրերում՝ Բրյուսելում, Ստրասբուրգում, Վիեննայում և ուժի միջազգային այլ կենտրոններում», - նկատեց Արտաշես Գեղամյանը:

ԱՄԿ առաջնորդի համար անընդունելի և մերժելի է նաև այն, որ Տեր-Պետրոսյանն արդեն իսկ ինքնահռչակվում է որպես առանցքային ուժ և կենտրոն, ու ով չի հարում առանցքային այդ ուժին՝ համարվում է որպես այս վարչակազմին նպաստող, աջակցող, ինչն անթույլատրելի է, որովհետև տասնյակ հազարավոր ունակ ուժեր կարող են չհարել Լևոն Տեր-Պետրոսյանի կազմակերպած շարժմանը, բայց լինեն ոչ պակաս, եթե ոչ ավելի հայրենասերներ»:

Արտաշես Գեղամյանը վիճարկելի և խիստ անընդունելի է համարում նաև այն մոտեցումը, թե պայքարի ընթացքում յուրաքանչյուր մարդ կգտնի իր տեղը ապագա իշխանությունում: «Իսկ ի՞նչ անեն այն պրոֆեսիոնալները, ակադեմիկոսները, բժիշկները, մտավորականները, արհեստավարժ ինժեներները, որոնք չեն անդամագրվելու այդ պայքարին: Կնշանակի՞ պահանջված չե՞ն: Այստեղ մեզ համար հայեցակարգային առումով անընդունելի մոտեցում է հնչեցվել. ստացվում է, որ անտեսվում է երկրի համար միակ ճշմարիտ գաղափարի ըմբռնումը, այն է՝ եթե ազգային ամենալայն շրջանակների շահերը չեն համընկնում պետության շահերի հետ, ի սկզբանե, այդ շարժումը դատապարտված է», - «Ա1+»-ին ասաց Արտաշես Գեղամյանը և խոստացավ քաղաքագիտության վերջին խոսքով, փորձագիտական վերլուծության ենթարկելուց հետո, ավելի հիմնավորված ներկայացնել «Ազգային Միաբանություն կուսակցության» մոտեցումը ստեղծված իրավիճակին՝ համոզված լինելով, որ ելքը քաղաքական երրորդ բևեռի ձևավորումն է, որը կլինի այլընտրանք թե գործող, թե նախկին իշխանություններին:

**«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ՀԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՎԱԽԹԱՆԳ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱՎՅԻՆ
«ԵՐԿՐԻ ԹԵՄԱՆ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ
ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է***

- **Ե**թերում «Երկրի թեման» է, բարի երեկո: Այսօր հյուրընկալում ենք «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանին: Պարոն Գեղամյան, այսօր Դուք նշում եք, որ նախագահական ընտրությունների Ձեր մասնակցության հարցը պայմանավորվելու է առանցքային հարցերի շուրջ որպես նախագահի թեկնածու հանդես գալու նպատակահարմարությամբ: Իսկ ո՞ր դեպքում նպատակահարմար չի լինի այդ հարցերի շուրջ խոսել ոչ որպես նախագահի թեկնածու:

- Երբ խորությամբ վերլուծել ես Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավիճակը, թե՛ ներքին սոցիալ-տնտեսական, և թե՛ արտաքին մարտահրավերները, պարտավոր ես բարձրաձայնել այդ ամենի մասին: Ավելի, մատնանշել այն հնարավոր վտանգները, որոնք դարանակալել են մեր պետականության գլխին: Այնուհետև առաջարկես քո մոտեցումները, թե ինչպես պետք է դիմագրավել, ինչպես պետք է դիմակայել դրանց, և այդ ամենը, եթե գտնում է համապատասխան ընկալում թե՛ իշխանությունների, թե՛ ընդդիմության կողմից, ապա անում ես երկրորդ քայլը. նշում ես այն ծրագրերը, որոնք հնարավորություն կտան նվազագույնի հասցնել մեր երկրի կորուստները՝ առկա մարտահրավերների առաջն առնելու համար: Եվ քաղաքական այն ուժը, նախագահի այն թեկնածուն, որը կներ-

* 3 հոկտեմբերի 2007թ.:

կայացմի այդ մարտահրավերները հաղթահարելու ոչ հիվանդագին, ոչ ցավագին ճանապարհը, ինչն^օւ չէ, կսատարենք այդ թեկնածուին: Խնդիրը մեկն է. ունենք հայոց պետականություն, Հայաստանի Հանրապետություն, որն ապրում է իր պատմության, բառիս իսկական առումով, շրջադարձային փուլը, և այդ փուլում մենք դատապարտված ենք մի կողմ դնել գաղափարական տարածայնությունները, անձնական նկրտումներն ու ամբիցիաները և համախմբվել հանուն մեր երկրի անվտանգության: Ահա սա է հարցը:

- Դուք նշեցիք, որ չառաջադրվելու դեպքում կսատարեք այն թեկնածուին, որն առավելագույնս կընդունի ու կպաշտպանի Ձեր «Հակաճգնաժամային ծրագիրը», և չեք բացառում, որ դա կարող է լինել իշխանության թեկնածուն: Հարց եմ ուզում տալ. Ձեր առաջարկությունը, փաստորեն, նոր ձև է, նոր քայլ է քաղաքական դաշտում որակապես նոր հարաբերություններ հաստատելու համար, որքանով է դա իրատեսական:

- Խոսքը այն մասին է, որ այսօր առավել քան կարևոր է, որ առաջարկությունս ընկալվի նախևառաջ քաղաքական նկրտումներ ունեցող, ամբիցիաներ ունեցող քաղաքական այրերի կողմից, մատչելի ու հասկանալի դառնա մեր ժողովրդի ամենալայն զանգվածների համար: Այո, կարևոր է, որ ժողովուրդն ընտրության գնա գիտակցելով, թե ի՞նչ ընտրություն է կատարում և հանուն ինչի՞ է այդ ընտրությունն անում: Եթե, կրկնում եմ, նախագահական հավակնություններ ունեցող ցանկացած թեկնածուի կողմից այսօր ես պատրաստակամություն տեսա՝ ձեռնամուխ լինել հիշատակածս մարտահրավերների առաջն առնելուն, բնականաբար, կուսակցության նախագահությունում (ըստ որում, այնտեղ բավականին լուրջ մարդիկ են հավաքված, կյանքի մեծ փորձ ունեցող և, որն ամենակարևորն է, անդավաճան մարդիկ) մենք կքննարկենք խնդրո առարկա հարցը: Այնուհետև հրապարակավ, ոչ թե վարագույրի ետևում, որոշում կկայացնենք, և այն կհիմնավորենք, ու որոշման առանցքը կլինի Հայաստանի Հանրապետության անվտանգությունը:

- Պարոն Գեղամյան, իսկ որքանո՞վ է իրատեսական, որ մեր քաղաքական ուժերը, իսկապես, իրենց հավակնությունները, իրենց ամբիջիաները մի կողմ կդնեն, նաև անհանդուրժողականության մթնոլորտը կհաղթահարեն և, ի վերջո, թող դա լինի «Հակաճգնաժամային ծրագիր» կամ մեկ այլ ծրագիր, դրա շուրջ կհամախմբվեն: Դա իրատեսակա՞ն է:

- Անշուշտ, իրատեսական է: Եվ այն, որ վերջերս՝ սեպտեմբերի 29-ին, երբ Լևոն Տեր-Պետրոսյանը հանդիպեց Հայ Հեղափոխական Դաշնակցության բյուրոյի ներկայացուցչի, Գերագույն մարմնի ներկայացուցչի հետ, խոսում է իմ կողմից առաջարկված մոտեցման օգտին: Եթե սրանից անգամ իսկ մի քանի ամիս առաջ որևէ մեկը նման զարգացումների սցենար գծեր, կասեին՝ այս մարդը խենթ է: Երկուստեք վարվեցին ճիշտ, որ հանդիպեցին. թե՛ Դաշնակցությունը, որ ընդունեց Տեր-Պետրոսյանին և ասաց՝ իրենք ռիսկալուծությամբ չեն տառապում, և թե՛ Լևոն Տեր-Պետրոսյանը: Ուզում եմ հավատալ, որ վերջինիս կողմից դա ոչ թե քաղաքական PR ակցիա էր, այլ պահի լրջության գիտակցում, լայնախոհության դրսևորում:

Սեպտեմբերի 7-ին, երբ մեր հայտարարության մեջ, խոսքս «Ազգային Միաբանություն կուսակցության» հայտարարության մասին է, մենք կուսակցություններին դիմեցինք նման առաջարկով, այո, այն ժամանակ էլ ասացին, որ դա ռոմանտիզմ է: Ընդդիմախոսներս մոռացել էին, որ եթե քաղաքական գործիչը կարողանում է զուգակցել ռոմանտիզմը պրագմատիզմի հետ, նշանակում է նա քաղաքական մեծ գործիչ է: Սա որպես հայտնի տեսակետ եմ ասում: Իսկ քաղաքականության մեջ անհավանական բան չի լինում: Առիթ է եղել, ես հիշեցրել եմ. 1945 թ. օգոստոսին Ամերիկայի Միացյալ Նահանգների ռազմաօդային ուժի կողմից Նազասակի, Հիրոսիմայի վրա ատոմային ռումբեր նետվեցին, որի հետևանքով եղան հարյուր հազարավոր մարդկային զոհեր ու ավերածություններ: Ո՞ւմ մտքով կանցներ, որ դրանից երկու տարի անց, նույն ԱՄՆ-ն ճապոնիայի պետության անվտանգության երաշխավորը կդառնա կամ էլ՝ ո՞ւմ մտքով կարող

էր անցնել, որ ճապոնիայում ներկայումս էլ գործող Սահմանադրութիւնն այդ դժնդակ տարիներին գրելու է Ամերիկայի Միացյալ Նահանգների ռազմական գեներալը՝ Մակարթուրը: Ո՞ւմ մտքով կարող էր անցնել, որ Հայրենական մեծ պատերազմից 60 տարի անց՝ 2005 թ., Մոսկվայի «Պրեզիդենտ օթելում» դեմ հանդիման կնստեն պատերազմող կողմերը, այն է՝ գերմանական վերմախտի երբեմնի զինվորները և սովետական բանակի վետերանները, որոնք Հայրենականի ահեղ տարիներին իրար սպանել են, օջախներ քանդել: Եվ, ահա, 60 տարի անց պատկառելի տարիքի մարդիկ նստել ու խաղաղ զրույցի էին բռնվել: Դուք ձեր աչքերով պետք է տեսնեիք այդ հեռուստակադրերը, որոնք եթեր արձակվեցին: Գերմանիայի նախկին կանցլեր Յերիհարդ Շրյոդերն իր հուշերի՝ «Որոշումներ: Իմ կյանքը՝ քաղաքականությունում» գրքում (մեկ-երկու ամիս առաջ է լույս տեսել) այդ հանդիպման մասին գրել է. ես զարմացել էի մասն ջերմությունից, մթնոլորտի ջերմությունից: Այսինքն՝ եթե մենք կարողանում ենք մարդկանց գիտակցության մեջ դնել այն պարզ ճշմարտությունը, որ թշնամանքը, պատերազմական ռազմատենչ կոչերը երբեք ու երբեք լավ բանի չեն հանգեցնի, ուստի, ի սկզբանե, մենք պետք է անենք ամենը, որ բացառենք թշնամանքը. պատմությամբ է ապացուցված, որ վաղ թե ուշ երբեմնի թշնամիները դատապարտված են բարեկամանալ: Այսօր մենք այդ դասերից պետք է եզրակացություններ անենք և սկսենք մեզանից: Վերջապես պետք է գիտակցենք, որ մեր մի բուռ երկրում՝ Հայաստանի Հանրապետությունում, պետք է բացառվեն թշնամանքը, ներկայանակի միայն սև ու սպիտակ գույները: Այդ ուղղությամբ առաջին քայլն արդեն արվեց, արվեց հենց նույն Լևոն Տեր-Պետրոսյան - Ալեքսանդր Արզումանյան - Հրանտ Մարգարյան - Արմեն Ռուստամյան հանդիպման ժամանակ:

- Պարոն Գեղամյան, մյուս կողմից, Դուք նշում եք, որ քաղաքական ընտրանին դատապարտված է համախմբվելու, որովհետև երկրում շրջադարձային պահ է: Եթե միավորվելու է դատապարտված քաղաքական ընտրանին, դրան առավել ևս դատապարտված է ընդ-

դիմությունը: Սակայն չի ստացվում, նրանց չի հաջողվում միավորվել և դժվար էլ հաջողվի, ինչպես մայիսի 12-ին չստացվեց:

- Գիտեք, երբեմն լինում են անելանելի պահեր և որոշում է կայացվում ամենավերջին վայրկյանին: Ես մի խոսու՞ն օրինակ բերեմ. երբ 1967 և 1973 թվականների պատերազմներից հետո Իսրայելի ու արաբական երկրների միջև, մասնավորապես Եգիպտոսում, անասելի թշնամանք էր սերմանվել, ոչ մեկի մտքով բացարձակապես չէր անցնում, թե հնարավոր է առաջիկա տասնամյակներում խաղաղության պայմանագիր կնքել Իսրայելի վարչակազմի հետ: Անվար Սադաթը, որն այն ժամանակ Եգիպտոսի պրեզիդենտն էր, երբ գնում էր իր իսրայելցի գործընկերոջ՝ Մենախեմ Բեգինի հետ բանակցելու, կարծում էմ, ճիշտ են հիշում՝ 1978-79,թթ., այդ օրերին Եգիպտական մամուլը գրում էր. եթե հանկարծ խաղաղության պայմանագիր ստորագրվի, ապա ժողովուրդը Անվար Սադաթին կախաղան է բարձրացնելու: Եվ, ի՞նչ եք կարծում, երկրները համաձայնության եկան ու հետագայում էլ կնքվեց խաղաղության պայմանագիրը, որը մինչև օրս գործում է: Իսրայելա-եգիպտական բանակցություններից հետո, երբ Անվար Սադաթի ինքնաթիռը վայրէջք է կատարել Կահիրեի օդանավակայանում, օդանավակայանից նախագահական պալատ ձգվող 25-30 բոպեանոց ճանապարհը նրա մեքենան հաղթահարել է 3 ժամ 40 բոպեում: Կահիրեցիները ոգևորված, գրեթե ձեռքերի վրա են Անվար Սադաթին տարել նախագահական պալատ (այդ մասին իր հուշերում գրել է Սադաթի կինը): Կրկնում են, ձեռքերի վրա: Եվ, ի դեպ, մեծարողներն էլ ճիշտ այն եգիպտացիներն էին, ովքեր դրանից 3 օր առաջ խոստանում էին կախաղան բարձրացնել ցանկացածին, ով հաշտության կզնա իսրայելցիների հետ: Արդյունքում՝ թե՛ Բեգինը, թե՛ Սադաթն արժանացան խաղաղության Նոբելյան մրցանակի:

Այնպես որ, քաղաքական ուժերի միավորվել- չմիավորվելու խնդրին պետք է ավելի լայն տեսանկյունից նայել: Հարցը պետք է դիտարկել ոչ թե ընդդիմադիր այս կամ այն քաղաքական գործիչների՝

իրար հետ լեզու գտնելու տեսակետից, այլ խնդիր դնել, որ քաղաքական ողջ ընտրանին փորձի, այո, առանցքային հարցերի շուրջ փոխհամաձայնության, կոնսենսուսի գալ: Եվ, բարեբախտաբար, երկիրն ունի այն մայր խնդիրը, որի շուրջ հնարավոր է նման կոնսենսուսը. դա Լեռնային Ղարաբաղի խաղաղ կարգավորման հիմնահարցն է: Որ հանկարծ չստեղծվի մի այնպիսի իրավիճակ, երբ քաղաքական այս կամ այն գործիչը խնդրո առարկայի շուրջ տեսակետ է հայտնում, մեկ էլ հանկարծ տեսնում ես թուրք-ազերիական մամուլում իրենց համար նպաստավոր մեջբերումներ են անում նրանից. մի դեպքում գովաբանում են, հակառակ մոտեցում արտահայտողին՝ անարգանքի սյունին գամում: Միջազգային հանրությունը, հատկապես Մինսկի խմբի համանախագահ երկրները, Եվրախորհուրդը, ԵԱՀԿ-ն, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ երկրները պետք է հասկանան մի պարզ ճշմարտություն: Ո՞րն է դա. Գեղամյան Արտաշեսը այս կամ այն հարցերում կարող է տարածայնություն ունենալ Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի կամ էլ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ, բայց մայր խնդրում՝ Արցախի հիմնահարցի խաղաղ կարգավորման լուծման ճանապարհներին, մենք դատապարտված ենք նույն տեսակետը որդեգրել, եթե առաջնորդվում ենք հայոց պետականության նվիրական շահերով: Այո՛, նույն տեսակետը, որ վաղը, մյուս օրը արտաքին ուժերի ազդեցությունն այդ հարցում բացառվի: Թերևս, այդ պարագայում նույն նախագահական ընտրությունների ժամանակ դրսի ուժերը զրկված կլինեն հնարավորությունից աջակցելու այս կամ այն գործչին, որն իրենց համար և ոչ թե Հայաստանի համար, ընդունելի առաջարկներ է անում ԼՂՀ-ի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործում:

Ահա, երբ ունես, զգում ես նման տազնապներ, ապա պարտավոր ես դրանց մասին բարձրաձայնել: Որդեգրելով նման մոտեցում՝ ստացվում է այնպես, որ երկուստեք՝ թե՛ իշխանությունները, և թե՛ ընդդիմության այն հատվածը, որը փորձում է քաղաքական մեր հարուստ ներկապատկերը սև կամ սպիտակ գույներով ներկայացնել,

քարկոծում են քեզ: Վերջիններս մոռանում են, որ ժողովրդին պարտադրելով ընտրություն կատարել սևի ու սպիտակի միջև՝ բացառելով մյուս գույների գոյությունը, ստեղծում են մի իրավիճակ, որը հղի է ազգային պառակտմամբ, հղի է ժողովրդի և իշխանության միջև եղած վիհի, անջրպետի խորացմամբ: Իրավիճակ, որը խիստ անթույլատրելի է, քանզի չորս կողմից հարևանները, մեղմ ասած, այնքան էլ բարեկամաբար տրամադրված պետություններ չեն, միգուցե, բացառությամբ, Իրանի Իսլամական Հանրապետությունը:

- *Ղարաբաղի մասով: Դուք, իրավամբ, նշում եք, որ Ղարաբաղի հարցում այլընտրանքային մոտեցումները պետք է բացառվեն: Մյուս կողմից կարևորում եք Լևոն Տեր-Պետրոսյանի մասնակցությունն ընտրություններին: Այստեղ հակասություն չկա՞: Քանի որ մենք գիտենք, որ Լևոն Տեր-Պետրոսյանը հենց Ղարաբաղի հարցում է այլընտրանքային մոտեցմամբ ներկայանում:*

- Գիտեք, այդ հարցին ես պատասխանել եմ մեր կուսակցության կոնֆերանսում: Կրկնեմ այն: Մամուլում և հեռուստատեսությամբ հետևյալ պատմությունն են հիշատակում, ըստ որում՝ տարբեր մեկնաբանություններով: Բրիտանիայի վարչապետ Բենջամին Դիզրայելին ասում են, որ իր քաղաքական ախտյանը, այն է՝ լիբերալների առաջնորդը՝ Ուիլյամ Գլադսթոնը, Թենզա գետն է ընկել: Դիզրայելին, նույն ինքը՝ լորդ Բիկոնսֆիլդը, արծագանքում է՝ ինչպիսի՞ դժբախտություն, ինչպիսի՞ դժբախտություն: Լրաբերը շարունակում է. սըր, բայց նա, բարեբախտաբար, չի խեղդվել, փրկվել է: Լսելով այդ նոր լուրը՝ Դիզրայելին պատասխանում է. օ՛հ, դա արդեն ողբերգություն է: Հիմա, վերոգրյալի երանգավորումներով քաղաքական աննկղոտ են պատմում. Ռոբերտ Սեդրակովիչին ասում են՝ Լևոն Հակոբիչը նախագահական առաջիկա ընտրություններին իր թեկնածությունը չի դնելու: Պատասխանում է. ինչպիսի՞ դժբախտություն, ինչպիսի՞ դժբախտություն: Հետո լրացնում են. բայց լուրեր կան, որ կարող է փոշմանի: Ռոբերտ Քոչարյանն էլ, թե՛ դա արդեն ողբերգություն է:

Ստեղծված իրավիճակում ես ամենևին էլ կողմ չեմ, որ երկրի առաջին և գործող նախագահի հարաբերությունները լինեն այդ աստիճան սրված: Ես կողմ չեմ դրան: Ես ուզում եմ, որ ինչպես Սիացյալ Նահանգներում նորընտիր նախագահի ինաուզուրացիայից հետո զարգացան դեպքերը, այնպես էլ լինի Հայաստանում: Հիշում եք, երբ պրեզիդենտ Ուիլյամ Քլինթոնը հանձնում էր իշխանությունը Ջորջ Բուշին, դրան հաջորդեց պարահանդես. Հիլարի Քլինթոն — Ուիլյամ Ջեֆերսոն Քլինթոն և Լորա Բուշ — Ջորջ Բուշ զույգերը միաժամանակ վալս էին պարում՝ զույգերով փոխվելով: Ա՛յ երկիր է, ա՛յ մակարդակ է, ա՛յ ուսանելի է: Ես կողմնակիցն եմ նման հարաբերությունների: Հիմա կարող է հարց տաք. իսկ ի՞նչ, էդ գաղափարը նոր առաջացավ Ձեր մեջ, չէ՞ որ ամենաարմատական ընդդիմադիր դիրքերից էիք խոսում: Եվ հարցադրումը կլինի տեղին: Պատկերացրեք, մայիսի 12-ի ԱԺ ընտրություններից հետո մինչ օրս ես շարունակում եմ լրջորեն ուսումնասիրել, թե վերջին շրջանում ի՞նչ զարգացումներ են տեղի ունենում Հայաստանում ու մեր տարածաշրջանում: Եվ ակամայից ամեն անգամ հիշում էի Ղրիմի պատերազմը, որի արդյունքում Ռուսաստանը ծանր պարտություն էր կրել Օսմանյան թուրքիայից: Վերջինիս թիկունքին այն տարիներին կանգնած էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և ուրիշ երկրներ, ինչն էլ նպաստեց, որ օսմանները հաղթեն: Պատերազմի ավարտից հետո իշխան Սիխայիլ Գորչակովին, որն այն ժամանակ դեռ արտաքին գործերի նախարարն էր (հետագայում դարձավ կանցլեր), հարցնում են՝ ի՞նչ է կատարվում Ձեր երկրի հետ: Նա էլ պատասխանում է . ասում են՝ Ռուսաստանը բարկանում է, Ռուսաստանը չի բարկանում, Ռուսաստանը կենտրոնանում է: ԱԺ ընտրություններից հետո, երբ կենտրոնանում և փորձում ես քո վարվելակերպը գոնե փոքր-ինչ մոտեցնել աշխարհիս մեծերի (մարդկանց, ուն անունները պատմության մեջ ոսկե տառերով են գրել) մոտեցումների հետ, ապա անկախ քեզանից ողջ աշխարհը նկատում է նորովի: Եվ հիմա ես արդեն պարզապես նտածում եմ ուրիշ կատեգորիաներով: Խորհում եմ. եթե

հանկարծ 2015-2020 թվականներին ուսումնասիրողները վերլուծելու լինեն մերօրյա քաղաքական գործիչների հայտարարությունները, վարած քաղաքականությունը, ապա, հավատացնում եմ ձեզ, նրանք խստագույնս կդատապարտեն մեզ: Եվ մենք, փոխաբերական իմաստով, կարժանանանք ճիշտ այն նույն ճակատագին, որին արժանացավ Օլիվեր Կրոմվելը: 1658 թվականին, երբ նա՝ այն ժամանակվա Անգլիայի լորդ պռոտեկտորը (հիշենք, որ նրան առաջարկել էին Անգլիայի թագավորի թագը, որից նա հրաժարվել էր), մահացավ դողերոցքից, մեծ շուքով թաղվեց Վեստմինստերյան աբբայությունում: Երկու-երկուսուկես տարի անց նույն Կրոմվելի բանակի գեներալները Անգլիայի թագին նստեցրին Կառլ 2-րդին՝ Կրոմվելի և նրա զինակիցների իշխանավարության օրոք սպանված Կառլ 1-ին թագավորի որդուն: Իսկ ի՞նչ արեց վերջինս. Կրոմվելի դին հանեցին գերեզմանից և կախաղան բարձրացրին: Այս պատմությունից մենք պետք է դասեր քաղենք, հարկ է, որ հասկանանք. եթե իշխանությունը այսօր մեր ձեռքում է, ապա այն պետք է ծառայեցնենք ազգօգուտ նպատակների համար, որպեսզի հանկարծ վաղը Կրոմվելի ճակատագրին չարժանանք: Ըստ որում, նկատեմ, որ նույն բրիտանացիներից շատերը ոգևորությամբ չեն հիշում թե՛ Կրոմվելի գործողությունները, առավել ևս ոգևորությամբ չեն հիշում Կառլ 2-ի ընդունած վճիռը:

- *Լավ, այս դեպքում երկու հարց: Փաստորեն, Դուք, քննադատելով իշխանությանը և լինելով առանցքային ընդդիմադիր ուժի ղեկավար, այնուհանդերձ, տեսնո՞ւմ եք այն դրականը, թող և փոքր, որ իշխանություններն անում են: Եվ, երկրորդը, ես կուզենայի, անպայման կրկին անդրադառնայինք Ղարաբաղի հարցին, պարոն Գեղամյան: Լևոն Տեր-Պետրոսյանը և նրան սատարող թիմը մասնակցում է նախագահական ընտրություններին՝ ունենալով այլընտրանքային մոտեցում հենց այդ առանցքային հարցին: Ծիշտ է դա, թե՞ ոչ :*

- Պարոն Տեր-Պետրոսյանի սեպտեմբերի 21-ի ելույթում, համեմայնդեպս, ես այլընտրանքային մոտեցում չեմ նշմարել: Ցավոք,

նրա ելույթում վտանգավոր անզգուշություն են դիտարկել այն, որ նա ասաց, թե Ադրբեջանը չի գնալու զիջումների: Այսինքն՝ վաղը, մյուս օրը, եթե Լևոն Տեր-Պետրոսյանը ընտրությունների արդյունքում որոշակի ձայն է ստանում, դա մեծ կռվան է լինելու ադրբեջանական քարոզչության համար: Կրկնում են, մեծ կռվան: Կստացվի, որ, այո, քաղաքական վերնախավում կան բազեներ և կան աղավնիներ: Դա անընդունելի է մեզ համար, քանի որ արդեն 14-րդ տարին է, ինչ բանակցային գործընթաց է տեղի ունենում, և այդ բանակցությունները վկայում են հետևյալի մասին. մասնավորապես, Մինսկի խմբի համանախագահները, ըստ էության, ընդունել են Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված ստատուս քվոն: Երբ 2001 թ. թե՛ Յապստանը, թե՛ Ադրբեջանը միաժամանակ անդամակցեցին Եվրախորհրդին, դա էլ մշանակում էր, որ Եվրախորհուրդն էլ է ընդունել ԼՂՀ-ի շուրջ ստեղծված ստատուս քվոն: Այսինքն, եթե ստեղծված ստատուս քվոն ընդունվել է, ապա ազատագրված տարածքների շուրջ պետք է լինեն բանակցությունները և ոչ թե Ադրբեջանին հնարավոր զիջումներ անելու կամ չանելու պատրաստականության շուրջ: Իսկ ...

- Իշխանությունների պարագայում:

- Իշխանությունների պարագայում. կարծում են, գիտեք, որ երբ այսօր արդեն պաշտոնապես հայտարարվում է, որ բյուջեն ծախսային մասով լինելու է 840 մլրդ դրամ, այս տարվա 550 մլրդի փոխարեն, այն է՝ 2.5 մլրդ դոլարին համարժեք, շուրջ 750-800 մլն դոլարով ավել (տատանումը պայմանավորված է դոլար-դրամ հնարավոր փոխարժեքի տատանմամբ), բնականաբար, դու դա դրական ես ընդունում: Նշանակում է, որ առաջին հերթին տնտեսության մեջ ստվերն է պակասելու, որովհետև բյուջեի ծախսային մասում նման հավելած, այն էլ ոչ ստվերի հաշվին, հնարավոր կլինեք, եթե գրանցվեր համախառն ներքին արդյունքի նվազագույնը 140-150 տոկոս աճի տեմպ, ինչը, ցավոք, անհնարին է, որովհետև համարժեք ներդրումներ տնտեսության մեջ չեն լինելու և անհրաժեշտ հզորություններ չեն շա-

հագործվելու 2008 թվականին: Կնշանակի՝ բյուջեի աճը ստվերից են համալրելու: Իսկ եթե ստվերից են բերում, դա պետք է ողջունել և միարժեքորեն զարգացնել, որ հանկարծ չստացվի՝ կուժն ու կուլան կտորվի մանր և միջին ձեռներեցների գլխին: Հանկարծ չստացվի նաև, որ ժողովրդի մոտ կասկածանքներ առաջանան, որ սա զուտ միանգամյա ակցիա է: Այ, եթե վաղը, մյուս օրը այդ 750-800 մլն դոլարի չափով հարկերից խուսափողներից մի քանիսին կբերեն, համաժողովրդական դատի առաջ կկանգնեցնեն, ապա միայն այդ պարագայում հանրությունը կհանդգնի տնտեսությունում կարգուկանոն հաստատելու իշխանությունների մտադրությունների մեջ: Մենք խնդիր չունենք, որ հարկերից խուսափողների «արյունը» թափվի, այլ խնդիր ունենք դաս տալ ցանկացած օլիգարխի, որ նրանք վերջապես գիտակցեն, որ յուրաքանչյուրի ճակատագիրը վարունգի պես մի բան է, այսօր ձեռքբերում է, վաղը կարող է մարմնի մեկ այլ հատվածում հայտնվել: Նման քաղաքականություն որդեգրելու դեպքում ես կհասկանամ, որ իշխանությունները, այո, որոշակիորեն գիտակցում են պետականության առջև ծառայած այն մահացու վտանգները, որոնք թաքնված են կոռուպցիայի մեջ: Եվ, փաստորեն, մեծ հաշվով՝ ի՞նչ է նշանակում կոռուպցիա: Նշանակում է գործընթաց, երբ մարդու սահմանադրական իրավունքի պաշտպանությունը դարձնում են աճուրդի առարկա, շուկայական ապրանք:

- Մենք խոսեցինք նախընտրական ծրագրերից, խոսեցինք «Հակաճգնաժամային ծրագրի» մասին: Դրանով էլ ավարտենք: Ի՞նչ եք կարծում, կհաջողվի, ի վերջո, ծրագրային պայքար ունենալ, գաղափարական պայքար, թե պայքար է լինելու անհատների, անձերի միջև:

- Եթե չհաջողվի գաղափարական պայքարը, ապա դա ցույց կտա հանրապետության նախագահի թեկնածու առաջադրվողների անհամապատասխանությունն այդ բարձր պաշտոնին: Պատահական չէր, որ դեռ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ «Ազգային Միաբանություն կուսակցության» քարոզարշավի մեխը մեր «Հա-

կաճգնաժամային ծրագիրն» էր: Եվ հիմա էլ մենք, եթե ես առաջադրվեմ իմ կուսակից ընկերների կողմից, որոնք պնդում են, որ առաջադրվեմ, ապա ընտրարշավի առանցքում լինելու է ոչ թե քաղաքական այս կամ այն ուժին սևացնելը, այլ մեր ծրագրային դրույթների առավելությունը ժողովրդին մատուցելը: Սևացնելը, հատկապես նախագահական ընտրությունների ժամանակ, կարծում եմ, անօգուտ, պարասպ զբաղմունք է:

- Եվ, փաստորեն, Դուք կանխատեսում եք, որ հնարավոր է իրականում նման պայքար ունենանք ...

- Եվ կանխատեսում եմ, և ասում եմ, որ մեզանից կախված ամենը կանենք: Սակայն նշեմ, որ արդեն իսկ ամեն ինչ արվում է, որ Արտաշես Գեղամյանին կոռեկտությունից դուրս բերեն, որ ես ստիպված լինեմ ավերածություններ կատարել թե՛ ընդդիմադիր դաշտի որոշակի հատվածում, և թե՛ իշխանական: Սեպտեմբերի 21-ին՝ Անկախության տոնի միջոցառմանը, գնում ես նախագահական նստավայր, դրա հաջորդ օրը ՀՀԾ-ական մամուլը գրում է. վերջ, Գեղամյանը գնաց Քոչարյանենց մոտ: Հանդիպում ես Լևոն Տեր-Պետրոսյանի հետ, իշխանական մամուլը գրում է. ես գլխից Գեղամյանն իրեն տաք տեղ է ման գալիս: Ուրեմն, երկու կողմերին էլ ասեմ. Գեղամյանն ինքը կարող է ջերմացնել ժողովրդի որոշակի հատվածի կողմից սառնություն զգացող թե՛ նախագահական համակարգին, թե՛ ընդդիմադիր ուժերին: Օգտվելով առիթից՝ պարզապես կոչ եմ անում. թարգեք «Ազգային Միաբանություն կուսակցության», իմ գործընկերների ոսկորները լվանալու անպտուղ զբաղմունքը: Ասեմ ավելի՛ն՝ կոռեկտության շրջանակը մի անցեք: Կպատժենք:

**«ԿԵՆՏՐՈՆ» ՀԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏՐՈՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
«ՈՒՐՎԱԳԻԾ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ
ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է***

Պետրոս Ղազարյան – Բարի երեկո, եթերում «Ուրվագիծն» է և ես՝ Պետրոս Ղազարյանս: Սիրելի հեռուստադիտողներ, մենք շարունակում ենք հետևել քաղաքական զարգացումներին: Ընտրություններին 97-98 օր է մնացել, բավական քիչ ժամանակ, ինչպես ասում են, քարոզը սկսվել է, և մենք կլսենք «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի տեսակետները քաղաքական խնդիրների շուրջ: Բարի երեկո, պարոն Գեղամյան:

Արտաշես Գեղամյան – Բարև Ձեզ:

Պ. Ղազարյան – Պարոն Գեղամյան, սկսենք Վրաստանի դեպքերից: Վրաստանում, ես հիշում եմ, երբ որ Շևարդնաձեի ժամանակ ընդդիմությունը վեր կացավ ոտքի, գունավոր հեղափոխություն եղավ, մեր ընդդիմությունն էլ բավական ոգևորված էր: Հիմա կրկին Վրաստանում ընդդիմությունը ոտքի է կանգնել, ցնցում է երկիրը, հարյուր հազարավոր մարդկանց մասնակցությամբ միտինգներ է արվում, բայց մեր ընդդիմության մոտ մի տեսակ այդ ոգևորվածությունը ոնց որ թե չկա: Այ, Դուք ոգևորված եք Վրաստանի դեպքերով, թե ոչ:

Ա. Գեղամյան – Նախ, շնորհակալություն հրավերի համար: Ձեր բարձրացրած հարցը շատ կարևոր եմ համարում: Փորձենք ձեզ հետ վերլուծել վրաստանյան վերջին զարգացումները, որի ականատեսն ենք մենք: Սեպտեմբերի 29-ին էր, որ, եթե չեմ սխալվում, Վրաստա-

*14 նոյեմբերի 2007թ.:

նի պաշտպանության նախկին նախարար Իրակլի Օքրուաշվիլին հանդես եկավ «Իմեդի» հեռուստակայանով և զարհուրելի մեղադրանքներ ուղղեց երկրի նախագահ Միխայիլ Սահակաշվիլիի հասցեին: Դրան հաջորդեցին Իրակլի Օքրուաշվիլիի ձեռքակալությունը և հանրահավաքների շարք, որոնք հանգեցրին հայտնի որոշման, այն է՝ նախագահական արտահերթ ընտրությունների անցկացմանը:

Պ. Ղազարյան – Յունվարի 5-ին:

Ա. Գեղամյան – Միանգամայն ճիշտ եք: Իրակլի Օքրուաշվիլին և Միխայիլ Սահակաշվիլին երկուսն էլ ընդգծված արևմտամետ քաղաքական գործիչներ են, երկուսն էլ ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցելու եռանդուն ջատագովներ են, Եվրամիությանն անդամակցելու կողմնակիցներ են: Տարբերությունն այն է, եթե հիշում եք, դեմնեկուկես տարի առաջ Իրակլի Օքրուաշվիլին հայտարարել էր, որ 2007թ. հունվարի 1-ին Նոր տարին կնշի Ցխինվալիում և Սուխումիում, այսինքն, ըստ էության, նա պատերազմական գործողությունների կողմնակից էր: Յետո ինչ-ինչ հանգամանքներից ելնելով՝ շատ կարճ ժամանակ դարձավ Վրաստանի էկոնոմիկայի նախարարը, այնուհետև ընդհանրապես դուրս եկավ պետական ծառայությունից: Այլ կերպ ասած՝ հիմնական հարցերում երկուսն էլ աշխարհաքաղաքական նույն ուղղվածության կողմնակիցներ են: Հիմա մտովի տեղափոխվենք այլ հարթություն. իսկ մոտ ժամանակներս ի՞նչ զարգացումներ են մշմարվում: Առաջիկայում սպասվում է այն, որ Կոսովոն, ի դեմս ներկայիս ալբանական ծագում ունեցող իշխանությունների, խոստացել էր, որ եթե մինչև դեկտեմբերի 10-ը Միացյալ Նահանգները, Եվրամիությունը, Ռուսաստանը և ՄԱԿ-ը չհայտարարեն ու չճանաչեն իրենց անկախությունը, ապա իրենք կհռչակեն Կոսովոյի անկախությունը: Թվում է՝ ի՞նչ կապ կարող է լինել Կոսովոյի և վրաստանյան դեպքերի միջև: Նկատենք, որ ուղղակի կապ կա: Չմոռանանք ասել, որ Ջորջ Բուշն իր հերթին հայտարարել էր, որ եթե անգամ իսկ Ռուսաստանը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում օգտվի վետոյի իրավունքից, ԱՄՆ միակողմանի ճանաչելու է Կոսովոյի ան-

կախությունը: Դրան իսկույն ևեթ Վլադիմիր Պուտինը պատասխանել էր, որ Ռուսաստանը կողմնակից է ունիվերսալ սկզբունքների որդեգրման, որոնք կկիրառվեն թե՛ Կոսովոյի, թե՛ աբխազական, թե՛ հարավ-օսական, թե՛ մերձդնեստրյան, թե՛ դարաբաղյան հիմնահարցերը լուծելիս: Այդ օրերին Կրեմլից ակնարկել էին, որ Կոսովոյի անկախությունը ճանաչելու պարագայում Ռուսաստանն էլ միակողմանի կճանաչի Աբխազիայի, Չարավային Օսիայի և Մերձդնեստրի անկախությունը: Ցավոք, այս շարքում Ղարաբաղը չէր հիշատակվել: Ահա այս իրավիճակում, մեկ էլ հանկարծ, վրացական ընտրություններից 10 ամիս առաջ նման ալիք է բարձրանում: Այսինքն՝ տպավորություն է ստեղծվում, որ Արևմուտքն անուղղակիորեն նախապատրասվում է Կոսովոյի անկախության հռչակումից հետո Ռուսաստանի հնարավոր ադվեկատ քայլին, այն է՝ Օսիայի, Աբխազիայի և Մերձդնեստրի անկախության միակողմանի ճանաչման: Եվ Վրաստանում հանկարծ սկսվում է այս խժոժությունը և հետաքրքրականն այն է, որ Օքրուաշվիլին նախ բանտարկվում է, հետո, կարելի է ենթադրել, դրսի ուժգին ճնշումներից հետո, ազատ է արձակվում...

Պ. Ղազարյան – Գնում է Գերմանիա...

Ա.Գեղամյան – Միանգամայն ճիշտ էք: Մյունխենում ուղիղ հեռուստականուրջի միջոցով Օքրուաշվիլուն հնարավորություն է ընձեռվում նույն սաստկությամբ մեղանդրանքներ հնչեցնել: Նրա բացահայտումները լսում և դիտում էին տասնյակ հազարավոր մարդիկ, ովքեր հավաքված էին վրացական պառլամենտին մերձակա հրապարակում, ինչպես նաև ողջ Վրաստանում ու Եվրանյուսի միլիոնավոր հեռուստադիտողներ: Այս ամենը նշանակում է, որ ընթացող զարգացումները շատ ավելի լուրջ ու հեռահար խնդիրներ են հետապնդում, քան կարող է թվալ առաջին հայացքից, քանզի նախապայմաններ են ստեղծվում վերը հիշատակած աշխարհաքաղաքական հետևանքներով հղի լրջագույն հարցի լուծման համար: Ահա դա է պատճառը, որ վրացական դեպքերը երբեք ու երբեք մակերեսային վերլուծության չպետք է ենթարկել: Հիմա զուգահեռ անցկաց-

նենք Հայաստանի Հանրապետությունում խնորվող գործընթացների հետ:

Պ.Ղազարյան – Պարոն Գեղամյան, կներեք, Սահակաշվիլու դիրքերի թուլացումը ինչո՞վ է նպաստելու, որպեսզի այդ տարածքները մնան Վրաստանի կազմում, ինչո՞վ է օգնելու, այդ սցենարը...

Ա.Գեղամյան – Շատ տեղին, շատ խորը հարց եք տալիս: Խնդիրն այլ տեղ է թաքնված: Եթե Սահակաշվիլին պարտություն է կրում, Օքրուաշվիլին էլ իր բազեական նկրտումներով է հայտնի, այսինքն՝ վրաց-աբխազական ու վրաց-հարավօսական սահմանների վրա պատերազմական գործողությունների իմիտացիա կանեն՝ հեռու գնացող նպատակներ ունենալով: Դա էլ կարող է հանգեցնել նրան, որ ՆԱՏՕ-ն կկատարի խաղաղարարի իր առաքելությունը՝ խաղաղարարական ուժերի տեսքով կմտնի հակամարտության գոտի և անգամ...

Պ.Ղազարյան – Օքրուաշվիլին բոլոր դեպքերում նախագահ չի կարող դառնալ:

Ա.Գեղամյան – Բացարձակ պետք չէ, որ Օքրուաշվիլին նախագահ դառնա, խնդիրն այն է, որ կհաղթանակի նրա «բազեների» գիծը: Որովհետև, ըստ էության, բազեների բարձրացրած աղմուկի արդյունքում է լինելու Վրաստանում իշխանափոխություն: Եթե, իհարկե, լինի:

Պ.Ղազարյան – Իսկ եթե հաղթի Սահակաշվիլի՞ն:

Ա.Գեղամյան – Եթե հաղթի Սահակաշվիլին, ապա նա այդ պարագայում առավել հետևողականորեն կանի ամենը, որ Վրաստանն օր առաջ անդամակցի ՆԱՏՕ-ին: Եվ պատահական չէ, որ Սահակաշվիլին այսօր իսկ հայտարարում է, որ այդ խժոժությունների, այդ անհնազանդության հետևում տեսեք Կրեմլը, տեսեք Մոսկվան, ինչն անգամ իսկ Ռուսաստանի Ղաշնության ոչ բարեկամների կողմից բնութագրվեց որպես արքունի: Այլ կերպ ասած՝ արդեն իսկ հող է նախապատրաստվում Արևմուտքի համար, քանի որ առաջիկա ընտրություններում ով էլ հաղթի՝ նրա համար «безпроектный» տարբե-

րակ է: Որովհետև Սահակաշվիլու դեմ դուրս եկածներն ավելի ՆԱՏՕյանով են, ավելի արևմտամետ են, ահա սա է խնդիրը: Հիմա, եթե մենք...

Պ.Ղազարյան – Ես մտածում էի՝ Սահակաշվիլուց այն կողմ չի լինում էլ ավելի արևմտամետ ... Հիմա զուգահեռներ անցկացրեք մեր հետ:

Ա.Գեղամյան – Միանգամայն ճիշտ էք, հիմա զուգահեռներ անցկացնենք մեր հետ: ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ռենիել Ֆրիդի օգնական Սեթյու Բրայզան, մոտ մի երկու շաբաթ առաջ, Վրաստանում եղած ժամանակ հայտարարել էր, որ ինքը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի հնարավոր լուծումը տեսնում է մինչև Հայաստանում նախագահական ընտրությունների անցկացումը...

Պ.Ղազարյան – Հետո էլ ասել էր, որ շփոթվել է, իրեն սխալ են թարգմանել, սխալ են հասկացել:

Ա.Գեղամյան – Հանկարծ որևէ մեկիս մտքով չանցնի, որ նման մակարդակի պաշտոնյաները այդօրինակ հաճախակաճանությամբ լեզվի սայթաքումներ են թույլ տալիս, որովհետև առաջին դեպքը չէ, որ նա խնդրո առարկայի շուրջ լավատեսություն էր դրսևորել: Հայաստանյան ներկա իրավիճակում, փաստորեն, կա երկու մոտեցում. մեկն այն է, որը որդեգրել են իշխանությունները և ինչի արդյունքում անցած տաս տարիների ընթացքում պահպանվել է ստատուս քվոն: Կրկնում են, այն, ինչ ԼՂՀ-ի հարցում պատերազմի արդյունքում գրանցվել էր տասից ավելի տարի առաջ, նույնը պահպանվել է ցայսօր: Եվ հիմա էլ ընթանում է բանակցային գործընթաց, որը, թերևս, կարևորում են խաղաղության հաստատման փաստով: Ինչքան էլ սահմանային գոտում լինեն կրակոցներ, ընդհանուր առմամբ, խաղաղություն է տիրում: Եվ իշխանությունների կողմից հստակ ձևակերպվում են այն սկզբունքները, որոնցից պաշտոնական Երևանը չի հրաժարվելու: Դրանք երեքն են. Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ընդունումը, Լեռնային Ղարաբաղի ցամաքային կապի դե-յուրե վավերացումը Հայաստանի հետ

և, վերջապես, ԼՂՀ-ի անվտանգության երաշխավորումը: Այդ սկզբունքները արտահայտող փաստաթղթի տակ դեռ 1999 թ. ստորագրել էին Ազգային ժողովում ներգրավված քաղաքական բոլոր խմբակցությունները՝ լինի դա դիմություն, թե ընդդիմություն: Դրան զուգահեռ, վերջին շրջանում, հատկապես սեպտեմբերի 21-ին՝ Անկախության օրը Լ.Տեր-Պետրոսյանի հայտնի ելույթից, ինչպես նաև հոկտեմբերի 26-ի հանրահավաքում հնչած ելույթից հետո ԼՂՀ-ի հիմնահարցի խաղաղ կարգավորման գործում ի հայտ եկավ նոր մոտեցում: Մոտեցում, որը, ըստ էության, հերքում է այն սկզբունքները, որոնք որդեգրել են թե՛ իշխանությունները և թե՛ նախկին Աժ-ում ներկայացված ընդդիմադիր քաղաքական ուժերը: Այդ ֆոնի վրա, երբ հնչել են Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթներում առկա մոտեցումները, մեկ էլ հանկարծ Մեթյու Բրայդան լավատեսական մնան կարծիք է հայտնում, ինչն էլ հերքում է Քոչարյանը: Հավանաբար, մտքներում այլընտրանքային ինչ-որ զարգացումների ակնկալիքներ կան: Իսկ թե դրանք ինչպիսին են, դա հարցի մյուս կողմն է: Նշեն նաև, ամենևին էլ պատահական չէր, որ հենց այդ հնարավոր զարգացումները հաշվի առնելով էր, որ սեպտեմբերի 7-ին «Ազգային Միաբանություն կուսակցություն»-ը հանդես եկավ համապատասխան հայտարարությամբ: Հայտարարության մեխն այն էր, որ ցանկացած հարցում քաղաքական յուրաքանչյուր գործիչ կարող է ունենալ իր ուրույն կարծիքը, և այդպես էլ պետք է լինի, եթե մենք ժողովրդավարական երկիր ենք, սակայն գեթ մեկ հարցում պարտավոր ենք համազգային մոտեցում որդեգրել: Խոսքս Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման սկզբունքների մասին է: Ահա հենց այս հարցն էր, որ չափազանց կարևորել էինք մեր հայտարարության մեջ: Որովհետև գտնում ենք, որ հանրապետության նախագահի թեկնածուներն այս հարցում պետք է գան փոխհամաձայնության, կոնսենսուսի, որպեսզի դրսի ուժերը հանկարծ ու հանկարծ զուր պատրանքներ չունենան և չստացվի այնպես, որ նախագահի այս կամ այն թեկնածուն նրանց համար ավելի նախընտրելի լինի իր

պատրաստակամությամբ՝ առաջարկի որոշումներ և լուծումներ, որոնք կգոհացնեն բնավ ոչ հայկական կողմին: Ու հանկարծ չստացվի, որ կրկին ականատեսը դառնանք, երբ թուրքական, ադրբեջանական մամուլը գովերգի մեկին և պախարակի մյուսին: Նման զարգացումները մեզ համար անընդունելի են:

Պ.Ղազարյան – Պարոն Գեղամյան, ինչպե՞ս կարելի է այդտեղ սկզբունքային հասնածայնության գալ, եթե մարդիկ ունեն լրիվ տարբեր դիրքորոշումներ, տարբեր պատկերացումներ Ղարաբաղի հարցի լուծման կապակցությամբ: Եվ, երկրորդ, ես կխնդրեի հայտնել Ձեր տեսակետը. Դուք նշեցիք, որ կա երկու՝ գործող իշխանության և Լևոն Տեր-Պետրոսյանի ավտերմատիվ մոտեցում: Ձեր տեսակետը այդ երկու մոտեցումներից, որի՞ն է ավելի մոտիկ, խնդրեմ:

Ա.Գեղամյան – Գիտեք, չթաքցնեմ, ես ենթադրում էի, որ այս հարցը պետք է հնչի: Դեռ 1997թ. հոկտեմբերի 17-ին «Ազգային Միաբանություն կուսակցության» նախաձեռնությամբ ընդունվեց կոչ, կրկնում եմ, դեռ 1997թ. հոկտեմբերի 17-ին: Այդ կոչը ստորագրել էին, իմ կարծիքով, մեր ազգի ամենապատկառելի մարդիկ, ստորագրել էին՝ ակադեմիկոս Սիլվա Կապուտիկյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանը, ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանը, ժողովրդական նկարիչ Սարգիս Մուրադյանը, ակադեմիկոս Դավիթ Սեդրակյանը, հրապարակախոս Անահիտ Սահինյանը, ակադեմիկոսներ Լենդրուշ Խուրշուդյանը, Վլադիմիր Խոջաբեկյանը, Լենսեր Աղալովյանը, չթվարկեմ բոլորին: Կոչի տակ առաջինը դրված էր իմ ստորագրությունը, և ոչ այն պատճառով, որ առավել կարկառունը ես էի, ո՛չ, պարզապես դրա նախաձեռնողը ես եմ եղել...

Պ.Ղազարյան – Եվ...

Ա.Գեղամյան – Եվ վերջում դրված էր Ալեքսան Կարապետյանի ստորագրությունը: Դրանով ասել կուզեինք, որ «Ազգային Միաբանություն կուսակցություն» է դրա նախաձեռնողը և որ մենք տեր ենք մեր գրածին: Այդտեղ մենք կոչ էինք անում, որ իր պարտվողական դիրքորոշման համար Լևոն Տեր-Պետրոսյանն անհապաղ

պետք է հրաժարական տա: 1998 թ. իշխանավորությունից հետո՝ 9 տարի անընդմեջ, Ազգային ժողովի ամբիոնից «Ազգային Միաբանություն կուսակցության» պատգամավորները և, հատկապես, ես անխնա քննադատել ենք գործող իշխանություններին թույլ տված բազմաթիվ սխալների համար: Իրավիճակի մեր վերլուծության արդյունքում ծնվեց «Չակաճգնաժամային ծրագիրը»: Նշեմ, որ մենք շատ ավելի ծանր քննադատություն ենք հղել վարչախմբին, քան Անկախության օրը և հոկտեմբերի 26-ին հնչել էր Լևոն Տեր-Պետրոսյանի շուրթերից: Եթե համենատեղու լինեմք մեր կողմից տրված որակումները և զնահատականները Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթներում բերված մեղադրանքների հետ, ապա վերջիններս ոչ այլ ինչ են, քան զգացմունքային, բացարձակապես երեխայական մեղադրանքներ: Ուրիշ բան, որ 9 տարի մեր քննադատությունը շատ անգամ հասու չի եղել ժողովրդական լայն զանգվածներին, որովհետև երկու կողմի համար էլ, խոսքը հին ու նոր իշխանությունների մասին է, թիրախ ենք եղել:

Պ. Ղազարյան – Պարոն Գեղամյան, հիմա հարցը՝ Ձեր տեսակետը ո՞ւմ է ավելի մոտ՝ Տեր-Պետրոսյանին, թե՞ Քոչարյանին:

Ա.Գեղամյան – Հիմա, Պետրոս ջան, ես ասեմ, գալիս եմ ձեր հարցի պատասխանին, զինվեք համբերությամբ:

Պ. Ղազարյան – Ժամանակը քիչ է:

Ա.Գեղամյան – Ոչինչ: Ուրեմն, ինչպես ասացի, երկու կողմի՝ և՛ գործող իշխանության, և՛ նախկին իշխանություններին սպասարկող լրատվամիջոցների համար թիրախ ենք դարձել: Եթե թիրախ դարձած չլինեինք, ապա այն աղմուկը, որը բարձրացվեց Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթներից հետո, բացարձակապես չէր լինի, քանի որ բոլորը կասեին, որ այդ ամենը վաղուց արդեն լսել ենք «Ազգային Միաբանության», ինչու չէ, նաև «Արդարություն» դաշինքի պատգամավորների կողմից: Բայց մեր ասածը ընդդիմադիր լրատվամիջոցների կողմից տարիներ շարունակ չէր լուսաբանվում: Տրամաբանական հարց է ծագում. ԼՂԴ հիմնահարցի կարգավորման գործում,

վերն ասվածը հաշվի առնելով, այնուամենայնիվ, ո՞ւմ մոտեցումն է ավելի հոգեհարազատ մեզ: Ստեղծված իրավիճակում, երբ նախկին իշխանություններն իրենց լրատվամիջոցների էջերից հայտարարում են, որ ով իրենց հետ չէ՝ նա դավաճան է...

Պ. Ղազարյան – Չէ, պարոն Գեղամյան, նրանք ասում են այսպես, ես ձևակերպեմ. կա երկու բևեռ՝ Տեր-Պետրոսյան և Սերժ Սարգսյան, և եթե Դուք Տեր-Պետրոսյանի հետ չեք, կամա թե ակամա, Դուք բաժանում եք ընդդիմությունը և ուժեղացնում եք իշխանությունը: Եվ ստացվում է, եթե Դուք Տեր-Պետրոսյանի հետ չեք, ապա Դուք իշխանության հետ եք, և բերում են երկու հիմնական փաստարկ: Առաջին, որ Ձեր հանդեպ չկա ճնշում, իսկ Տեր-Պետրոսյանի թիմի հանդեպ կա ճնշում. ահա, եզրակացնում են նրանք, թե իսկական ընդդիմությունն ով է: Եվ երկրորդ. եթերը ձեր առջև բաց է, Բաղդասարյանի և այլոց առջև բաց է, իսկ Տեր-Պետրոսյանի թիմի առջև եթերը բաց չէ: Չնայած ես նրանց մի քանի անգամ եթեր են հրավիրել, մերժել են: Խնդրեմ:

Ա. Գեղամյան – Եվ, այսպես, այն ամենը, ինչ ասվում է նախկինների կողմից՝ ծայր աստիճան վտանգավոր է երկրի համար: Երկու կողմերն են մոգոնել, որ կա երկու բևեռ՝ և՛ գործող իշխանությունը, և՛ նախկին իշխանությունը: Երկուսի հնարքն է դա, որ, իբր, կա երկու բևեռ, որովհետև գործող իշխանությունը գիտի այն բոլոր խոցելի տեղերը, որոնք կան նախորդ իշխանությունների հետ կապված, ուստի և վերջիններս նրանց համար այնքան էլ վտանգավոր չեն, ու իրենց բացարձակապես պետք չէ, որ ձևավորվի երրորդ բևեռը: Նրանք՝ գործող իշխանությունները, խոչընդոտում են դրան: Դրան խոչընդոտում են նաև Լևոն Տեր-Պետրոսյանի թիմը. պատահական չէ, որ նրանք անգամ իսկ մեզ ասում են՝ դուք ընդդիմությանը ընդդիմություն եք: Այո, նման տիպի ընդդիմությանը մենք ընդդիմություն ենք, ինչպես նաև լուրջ ընդդիմություն ենք գործող իշխանություններին: Եթե վերջիններիս սրտերը տաք լինեին «Ազգային Միաբանության» նկատմամբ, ապա Ազգային ժողովում այսօր պատգամավորների թվով առաջին ընդդիմադիր ուժը

մենք կլինեինք: Անգամ իսկ նրանց պատվիրած սոցիոլոգիական բուլոր հարցումներով «Ազգային Միաբանությունը» Աժ-ում պետք է ներկայացված լիներ առնվազն 20 պատգամավորով: Ընտրությունների նախաշեմին անցկացված հարցումների մեթոդաբանությունը թույլատրում էր 2-3 տոկոսի տատանում...

Պ.Ղազարյան – Այսինքն՝ իշխանությունների սիրտը տա՞ք էր Արթուր Բաղդասարյանի վրա, պարոն Գեղամյան:

Ա.Գեղամյան – Իշխանությունների սրտի տաք ու սառը լինելու մասին եզրակացություններ թող հեռուստադիտողն անի, ես ասացի մեր մասով, որ ամենն արեցին, որպեսզի հանկարծ մենք չհայտնվենք Ազգային ժողովում: Որովհետև նրանք լավ էլ գիտակցում էին, մի բան է, երբ ես գնահատականներ եմ տալիս վրաստանյան դեպքերին, հայաստանյան զարգացումներին որպես կուսակցության նախագահ և մի այլ բան է, եթե ես նաև որպես Ազգային ժողովի խմբակցության ղեկավար խոսեի այդ հարցերի շուրջ: Հասկանալի է, որ այդ պարագայում արդեն իսկ իմ ասածներն ուրիշ կշիռ կունենային:

Պ.Ղազարյան – Պարոն Գեղամյան, ժամանակը կարճ է, այնուամենայնիվ, կխնդրեմ մեկ բառով պատասխանեք և գնանք առաջ. Ղարաբաղի հարցում Ձեր մոտեցումը Տեր-Պետրոսյանի գաղափարներին է մոտ, թե՞ իշխանությունների:

Ա.Գեղամյան – Ղարաբաղի հարցում մեր մոտեցումն այն է, որ պետք է համաժողովրդական ընդհանուր դիրքորոշում ձևավորվի, և դա պետք է կյանքի կոչի երրորդ ուժը: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ և ոչ ոք չմեղադրվի մի կողմից Ղարաբաղը ծախելու մեջ, մյուս կողմից Ղարաբաղը միտումնավոր վահան դարձնելու մեջ, որ սեփական իշխանությունը երկարաձգվի: Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը արդարացիորեն կարող է լուծել միայն քաղաքական երրորդ ուժը, որին այդ հարցում պարտավոր են սատարել թե՛ գործող իշխանությունները և թե՛ նախկին իշխանությունները: Ու սա կլինի այն, ինչը միակ ճշմարիտ ու պահանջված մոտեցում է:

Պ.Ղազարյան – Գիտաֆանտաստիկ բան կլինի դա:

Ա.Գեղամյան – Բացարձակապես գիտաֆանտաստիկ բան չի լինի: Գիտաֆանտաստիկ, որ ասում են, կներեք, հավանաբար, պատմական բազմաթիվ իրողություններ չեն ուզում հիշած լինել: Հատկանշական է, Անվար Սադաթի օրինակը: Մի առիթով հնչեցրել եմ, այժմ էլ կրկնեմ այն: Անվար Սադաթի նման մարդը, որը իր ողջ կյանքում, անգամ իսկ Ֆառուկ թագավորի դեմ դավադրություն անելու համար բանտում նստած ժամանակ, ասել է՝ արաբական մի թիզ հող Իսրայելին չպետք է գիջել, երբ իշխանության եկավ, գնաց Իսրայել և այնտեղ՝ Քնեսետում, Իսրայելի պառլամենտում, ելույթ ունեցավ: Ավելին ասեմ. ելույթ ունենալուց հետո 1979 թ. պայմաններ ստեղծեց Դեյտոնյան խաղաղ պայմանագիր ստորագրելու համար, որը վերջ դրեց եգիպտա-իսրայելական հակամարտությանը: Դրա նշանակությունն այն աստիճան բացառիկ էր, որ թե՛ Անվար Սադաթը և թե՛ Իսրայելի վարչապետ Մենախեմ Բեգինը արժանացան Խաղաղության Նոբելյան մրցանակի: Ի՞նչ գիտաֆանտաստիկայի մասին է խոսքը: Մեկ այլ օրինակ էլ հիշեցնեմ: Հորդանանի թագավոր Հուսեյն երկրորդը, երբ Հորդանանը և արաբական ողջ աշխարհը Իսրայելի հետ գրեթե պատերազմական վիճակի մեջ էր, քաղաքացիական սխրանք գործեց: Տեղի էր ունեցել ողբերգություն. հորդանանցի մի զինվոր սպանել էր Իսրայելցի անմեղ երեխաների, և Հորդանանի թագավորը մեկնեց Իսրայել մասնակցելու նրանց թաղմանը: Հուսեյն թագավորը ծնկաչոք ներողություն խնդրեց զոհվածների հարազատներից... Ալլահին աղոթելով՝ ներողամտություն հայցեց: Քաղաքականությունն ահա այսպիսի լուրջ բան է:

Ամփոփելով թեման ասեմ: Ստեղծված իրավիճակում պատմության մեջ մտնելու երկու ճանապարհ կա. խոսքս և՛ Ռոբերտ Քոչարյանի, և՛ Լևոն Տեր-Պետրոսյանի, ինչու չէ, նաև յուրաքանչյուրիս մասին է: Մենք կարող ենք պատմության մեջ մտնել որպես ԲենԳուրիոն և որպես Գուլդա Մեյիր: Խոսքս Դավիթ ԲենԳուրիոնի մասին է, որը 1948 թ. հաղթեց պատերազմում, հիմնեց Իսրայել պետությունը,

դարձավ երկրի առաջին վարչապետը, և Գոլդա Մեյրիի մասին է, որը հաղթանակել էր պատմության մեջ հայտնի «война судного дня» պատերազմում: Երկուսի անուններն էլ նշված են աշխարհի հարյուր մեծ քաղաքական գործիչների շարքում: Պատմության մեջ կարելի է մտնել նաև այլ կերպ, որպես Չերոստրատ: Մարդ, որը մ. թ. ա. 350-ական թվականներին (էֆեսցի Չերոստրատի մասին է խոսքը) աշխարհի յոթ հրաշալիքներից մեկի՝ Արտեմիսի տաճարն էր հրդեհել, մտածելով, որ ինքն իր նման արարքով կմտնի պատմության մեջ:

Այ, հիմա, հայտնեմ տեսակետս, որը փորձաքար է: Գիտեմ, թե հիմա իմ դեմ ինչ վայրահաչոց կսկսվի: Այդ փորձաքար հանդիսացող խնդրում՝ Ղարաբաղի հարցում, Քոչարյան-Սերժ Սարգսյանի դիրքը, որպես հայ մարդու, ինձ ավելի հոգեհարազատ է: Կարծում եմ, Եռաբլուրում հանգչողների շիրիմները տեղից կշարժվեն, եթե, Աստված մի արասցե, այս հիմնահարցը լուծելիս պարտվողական որոշում որդեգրվի:

Պ. Ղազարյան – Դուք գտնում եք, որ Լևոն Տեր-Պետրոսյանի կոնցեպցիան այդպիսի՞նն է, պարտվողական՞:

Ա.Գեղամյան – Ես գտնում եմ, որ այն, ինչ այսօր մեծ ոգևորությամբ են ընդունում Թուրքիայում, Ադրբեջանում, այն, ինչ կարևորվում ու սատարվում է թերութուններով լեցուն Թերի Դևիսի կողմից, որն անպարկեշտ զուգահեռներ է անցկացնում գեյերի շքերթի և ԼՂՀ-ում կայացած ընտրությունների հետ, ապա կնշանակի նման կոնցեպցիան անընդունելի է: Իհարկե, խնդրո առարկայի շուրջ ես իմ տեսակետն ունեմ. ըստ էության, այն նվազագույնը, ինչ պաշտոնական Երևանն այդ հարցում որդեգրել է, պետք է պաշտպանություն գտնի: Ուրիշ բան, որ մեծագույն բացթողումն այն է, որ Լեռնային Ղարաբաղի Չանրապետությունը բանակցային գործընթացի լիիրավ սուբյեկտ չէ: Այսօր բանակցային գործընթացում ԼՂՀ-ն հանդես է գալիս որպես բանակցությունների օբյեկտ, հանգամանք, որը մերժելի է մեզ համար:

Պ. Ղազարյան – Բարի, հիմա տեսեք, պարոն Գեղամյան, շատ հա-

ճախ ի՞նչ են ասում մարդիկ, շատ հաճախ նաև Ձեր շատ մտերիմ մարդիկ, Ձեր այդ դիրքորոշման մասին: Ընդ որում, նշեն, ասում են, ոչ թե հրապարակավ, այլ գալիս ականջիս շշմջում են: Թե ի՞նչ են ասում, ես նրանց փսփսոցը բարձրաձայնեմ:

Ա.Գեղամյան – Կարող է Ձե՞զ են ստուգում:

Պ.Ղազարյան – Դե թող ստուգեն, ես հրապարակավ կասեմ. նրանք ասում են, որ, այ, որոշ ժամանակ առաջ Արտաշես Գեղամյանն ասում էր, որ երկիրը ճգնաժամի մեջ է և, ահա, կոնկրետ այս մարդիկ պետք է օր առաջ հեռանան, նրանք սխալ ճանապարհով են երկիրը տանում: Եթե հիշում եք, ասում էիք, որ հայ ժողովուրդը մեծահոգի է, կների, եթե նրանք հեռանան: Հիմա ԼԼոն Տեր-Պետրոսյանն էլ է Ձեր ասածը օգտագործում: Հիմա Արտաշես Գեղամյանն ասում է, որ էլի ճգնաժամ է, Դուք նկարագրեցիք, թե ինչի է ճգնաժամ, բայց ասում եք՝ եկեք գանք համաձայնության, եկեք նստենք, խոսենք: Ավելի՞ն՝ պարզվում է Ղարաբաղի հարցում Ձեր դիրքորոշումն ավելի մոտ է այն մարդկանց, ում Դուք ասում էիք գնացեք...

Ա.Գեղամյան – Սարդկանց չէ, որ մոտիկ է իմ դիրքորոշումը ԼՂՀ հարցում, այլ Հայաստանի պետական շահին:

Պ.Ղազարյան – Դե իշխանություններին... Եվ շատերը փսփսում են, որ Արտաշես Գեղամյանն ինչ-ինչ պայմանավորվածություններ ունի իշխանությունների հետ, որովհետև գնալու է ռեալ քաղաքական պայքար իշխանության համար և եթե մույնիսկ չունի էլ, ապա ակնկալում է, որ իր այս դիրքորոշման դիմաց իշխանությունները նրան ինչ-որ մի բան, ինչ-որ մի ձև կգտնեն քաղաքական ասպարեզում տեղ տալու համար: Դուք գիտե՞ք՝ ո՞նց է արվում: Շատերն են այս մասին խոսում կամ մտածում, խնդրեմ:

Ա.Գեղամյան – Խնդիրը մեկն է. ստեղծված իրավիճակում ամեն գնով ինձ ներքաշել նախկին իշխանությունների թիմի մեջ: Սրանց նպատակը դա է: Արտաշես Գեղամյանը, երբ տեսնում է, որ երկիրը վտանգված է, երբ տեսնում է, որ ապակայունացումը, ավա՞ղ, կարող է կործանարար հետևանքներ ունենալ պետության համար, երբ գի-

տակցում է իր խոսքի ուժը և արժեքը, չի կարող ստեղծված իրավիճակում հանրապետությունը տանել փորձության: Ես հասկանում եմ, որ իշխանությունները կգան ու կգնան, բայց վաղը, մյուս օրը, 10 տարի անց, մարդիկ կմտածեն, թե ստեղծված այս իրավիճակում ով ինչպես է իրեն դրսևորել: Եվ այս հարցում ամենավտանգավորը, իմ կարծիքով, անշնորհակալն ամբոխահաճո լինելու տեսանկյունից այն դիրքորոշումն է, որը միանգամայն գիտակցաբար որդեգրել են: Կրկնում եմ, հիմքում ես դնում եմ միմիայն պետության շահը: Պատմական այս ժամանակահատվածում պետության շահը կատեգորիկ արգելում է անել գործողություններ, որոնք կարող են ապակայունացնել իրավիճակը: Առավել ևս, երբ ես գիտեմ, թե զարգացումներն ինչ հունով են ընթանալու, երբ ես գիտակցում եմ, որ այն, ինչ ունանց կողմից արվում է, պարզապես խաբեություն է: Նախկինները մեր ժողովրդին ասում են. կզանք իշխանության, այո, կհամագործակցենք Յանրապետական կուսակցության հետ, բայց Սերժ Սարգսյանը վարչապետ չի լինի: Է, հարց եմ տալիս. բարեփոխված Սահմանադրության առկայության պայմաններում ո՞նց եք դա անելու: Չէ՞ որ Սահմանադրությամբ Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժն է առաջադրում վարչապետ: Չէ՞ որ այսօր նրանք բացարձակ մեծամասնություն ունեն: Կնշանակի՞ կամ դու հույսդ դրել ես, որ Սերժ Սարգսյանի թիմակիցները նրան կդավաճանեն, այսինքն՝ դու իշխանության ես գալու և քո հենարանը լինելու են դավաճանները, կամ էլ պարզապես խաբում ես ժողովրդիդ: Կամ էլ՝ այնպիսի ցնցումներ ես անելու, որ կարողանաս երկիրը տանել ապակայունացման, Ազգային ժողովի լուծարման և ԱԺ նոր ընտրությունների անցկացման: Դա մաքուր ջրի ավանտյուրիզմ է: Ես սրա վտանգավորությունը գիտակցում եմ. գիտակցեմ ու ինձ էլի տեղ դնեմ, թե, իբր, չեմ հասկանո՞ւմ: Ժողովրդին դուր գալու համար ասե՞մ՝ ժողովուրդ ջան, գիտեք ինչ, էս տաս տարի է գործող իշխանությունները ձեզ ալան-թալան են անում, բայց, գիտեք ինչ, մի փոքր էլ դիմացեք, կգան նախկինները, որ նույնը շարունակեն: Ես էդքան

խելք ունեն, հասկանում եմ, բայց նաև հասկանում եմ նման դիրքորոշման վնասակարությունը երկրի համար:

Պ.Ղազարյան – Պարոն Գեղամյան, 2003 թ., երբ գնում էիք ընտրությունների, Դուք դա չէ՞իք հասկանում:

Ա.Գեղամյան – Եթե 2003 թ. լսեին իմ հորդորներն ու չգնային երկրորդ փուլ, երկիրն այսօր լրիվ ուրիշ զարգացումներ կունենար: 2003 թ. արդեն իսկ ակնհայտ էր, թե իրականում ով էր կանգնած որոշակի ուժերի թիկունքում: Տաս տարի շարունակ նախկինները ամայացրել են Հայաստանի քաղաքական դաշտը, հատկապես ընդդիմադիր դաշտը, որ ամայության վիճակում իրենք հրապարակ գան: Հիմա արդեն տղերքի խիղճը տանջում է, արդեն թերթերով լրահոս են անում՝ ասելով, որ 2003 թ. նախագահական ընտրություններում երկրորդ փուլ Գեղամյանն էր անցել: Ես սա դնում եմ մի կողմ և գիտակցում մի բան. եթե ընտրությունների առաջին փուլից հետո, երբ դեռևս պաշտոնական հայտարարություն չի եղել դրանց արդյունքների մասին, լրահոս է գնում, որ մեր ռազմավարական դաշնակիցն իր առաջին դեմքի մակարդակով շնորհավորել է պարոն Քոչարյանին պրեզիդենտ դառնալու կապակցությամբ, ես նման իրավիճակում հանուն որևէ պաշտոնի երբեք ու երբեք ժողովրդիս արյան բերան չեմ տանի: Դա խորթ է ինձ, դա իմ ինտելեկտին է խորթ:

Պ.Ղազարյան – Դա գովելի է, բայց հիմա նայենք շարքային քաղաքացիների ընտրության գնալու պահի առումով: Քաղաքացին տեսնում է, որ կա ներկա իշխանություն և կա նախկին իշխանություն, ու նրանց միջև գնում է բավականին կոշտ պայքար: Եվ, ահա, գալիս է պարոն Գեղամյանը և խորը, բուռն քննադատության է ենթարկում ընդդիմության մյուս հատվածին...

Ա.Գեղամյան – Իսկ ինչո՞ւ չէք ասում, որ նաև իշխանությանը ...

Պ.Ղազարյան – Կլինի՞ ավարտեն, պարոն Գեղամյան...

Ա.Գեղամյան – Այսօր էլ հավասարակշռությունը ես եմ պահպանել:

Պ.Ղազարյան – Հա, բայց, ըստ Ձեզ, իշխանությունը Ղարաբաղի

հարցում գործը նորմալ է տանում, որ Ձեզ ավելի մոտ է: Իսկ նախկինները, ինչպես հասկացա Ձեր խոսքի ենթատեքստից, Ղարաբաղը ծախելու են, ապակայունացնելու են էս երկիրը:

Ա.Գեղամյան – Դա Ձեր գնահատականն է:

Պ.Ղազարյան – Դա Ձեր խոսքի ենթատեքստն է.

Ա.Գեղամյան – Ահա, տեսնում եք, դո՛ւք այդ գնահատականը տվեցիք: Հեռուստադիտողներից էլ ոմանք կարող են ասել. վերջապես լսեցինք ուրիշ գնահատական, վերջապես լուրջ բան լսեցինք: Որ այս առճակատումը կործանարար է լինելու երկրի համար, դա ակնհայտ է: Իսկ ո՞րն է բանալին. քաղաքական երրորդ ուժի ձևավորումը: Եվ, հավանաբար, սրա գիտակցումն է, որ ...

Պ.Ղազարյան – Երրորդ քաղաքական ուժը գալու է առանց առճակատման:

Ա.Գեղամյան – Երրորդ քաղաքական ուժը հրապարակ է գալու առճակատող կողմերին երկրի զարգացման համար հնարավորինս անվտանգ ճանապարհ ցույց տալու առաքելությամբ: Մեզանում ընթացող միտումները պատիվ չեն բերում և ոչ մի քաղաքական ուժի: Ստեղծվել է մի իրավիճակ, երբ Անկախության 16 տարվա երկրի առաջին և երկրորդ նախագահները միմյանց բնութագրում են այն գնահատականներով, որը հարիր չէ պետության ղեկավարներին: Չէ՞ որ դրանով նրանք մեծագույն նվեր են մատուցում ադրբեջանական, թուրքական պրոպագանդային:

Պ.Ղազարյան – Հիմա թող իրենք իրենց պրորլենով տառապեն, պարոն Գեղամյան...

Ա.Գեղամյան – Այդ ամենն ուղղակի շաղկապված է մեզ հետ: Տեսե՛ք՝ ի՞նչ խնդիր կա. պարտված երկրի՝ Ադրբեջանի նախկին նախագահ Չեյդար Ալիևի արձաններն են դնում, պուրակներ են նրա անունով անվանակոչում՝ լինի դա Թբիլիսիս, լինի դա Կիևը, լինի դա Ստամբուլը, լինի դա Մոսկվան: Իսկ հաղթանակած երկրի՝ Հայաստանի երկու նախագահներն իրար հոշոտում են: Ավելի մեծ արսուրդ կարելի՞ է պատկերցնել: Ահա ես սրան են դեմ, ահա սա է, որ ուզում

եմ հաղթահարած լինել, ահա սրա համար է, որ ասում եմ՝ եկեք նույն սեղանի շուրջ նստենք: Իմ գիծն ամենաճշմարիտն է: Ասացվածք կա. «Հաղթանակը նրա հետևից չի գնում, ով ուժին է ապավինում, այլ նրա հետևից է գնում, ով ճշմարտությունն ունի իր թիկունքում»: Ահա սրա գիտակցումն է, որ հավասարակշռություն եմ պահպանում հին ու նոր իշխանություններին գնահատականներ տալիս:

Պ.Ղազարյան – Հիմա ինչպե՞ս եք պատկերացնում այդ ճշմարտության պրակտիկ կիրառումը:

Ա.Գեղամյան – Պրակտիկ կիրառումը պատկերացնում եմ հետևյալ կերպ. Հայաստանի եզակի փրկությունը քաղաքական երրորդ բևեռի ստեղծումն է: Բևեռ, որը կատաղի հակամարտող երկու կողմերից կաշխատի վերցնել միայն այն, ինչը ծառայում է ժողովրդի շահերին, իսկ որը ամենակարևորն է՝ պայքարի իր դրոշին կգրի՝ «Հանուն ազգային միաբանության»: Ես մեր կուսակցությունը չէ, որ նկատի ունեմ, այլ՝ գաղափարը: Դրան այլընտրանք չկա: Ասել եմ, հիմա էլ համոզված կրկնեմ. Հայաստանի փրկությունը մեր միասնության, հավաքական ուժի մեջ է: Հատկապես այսօր, երբ մենք, ավա՛ղ, տանուլ ենք տվել տնտեսական մրցակցությունը Ադրբեջանի հետ: Ավա՛ղ, երբ դաշնակիցների առումով էլ մենք ավելի խեղճ վիճակում ենք, քան Ադրբեջանը: Մենք միայն կարող ենք նրանց հակադրել մեր միասնականությունը, առավել ևս մեր միասնականությունը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման հարցում: Եթե Արտեմիսի տաճարը հին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկն էր, որը հրդեհվեց Չերոստրատի կողմից, ապա Լեռնային Ղարաբաղն այսօրվա Հայաստանի և աշխարհի հրաշալիքն է, որը պարտավոր ենք աչքի լույսի պես պահել ու պահպանել, որ չհրդեհեն: Ի դեպ, առիթից օգտվելով ուզում եմ մի քիչ շեղել մեր խոսակցությունը...

Պ.Ղազարյան – Շատ կարճ, ժամանակը սպառվեց:

Ա.Գեղամյան – Ես ուզում եմ խորին շնորհակալություն հայտնել Կիմ Նաունովիչ Բակչիին՝ հայերիս մեծ բարեկամին, որն այս օրերին գտնվում է Հայաստանում և ձեռնամուխ է եղել Արցախի քաղաքակր-

թական պատմության մասին մի հոյակապ գրքի ստեղծմանը: Հանդգված եմ, նրա գիրքն աշխարհին ցույց կտա, որ պատահական չէ, որ մենք ասում ենք՝ Հայաստանի յոթերորդ հրաշալիքը, միակ հրաշալիքը, թերևս, ստեղծված իրավիճակում Լեռնային Ղարաբաղն է:

Իսկ ինչ վերաբերում է ԼՂՀ-ի կարգավորման հարցում այն մտայնությանը, որ ես ավելի կողմնակից եմ գործող, քան նախորդ իշխանություններին, ասեմ հետևյալը. գիտեք ի՞նչ, ես միգուցե այն եզակի մարդկանցից եմ, ով պետությանն ու պետականությանը վերաբերող հարցերին խաղեր չի սիրում տալ: Այո, այդ հարցում կողմ եմ, բայց մնացած բոլոր հարցերում նրանց իմ ելույթներում, հողվածներում ու գրքերում ջախջախիչ քննադատել եմ: Չգիտես ինչու՝ ես բոլոր քննադատությունը, որը, բարեբախտաբար, կրկնում եմ, նաև գրքերումս, «Հակաճգնաժամային ծրագրում» է տպագրված, անտեսում եմ, ասում եմ՝ ես հարցում կողմ ես: Եվ մի բան էլ ավելացնեմ. ես օրերն անցնելու եմ, մի տաս տարի, տասնհինգ տարի հետո բոլորն ասելու եմ՝ Գեղամյանը, ճիշտ է, ամբոխահաճո ելույթներ չէր ունենում, ինքը թիրախ դարձավ, բայց նրա մատնանշած ճանապարհը ժողովրդին ու երկիրը տանում էր դեպի տաճար:

Պ.Ղազարյան – Պարոն Գեղամյան, կարելի է ասել, որ Ձեր խոսքը, եթե ամփոփենք, որպես մեսիջ մի տեսակ դաշնակցական ոգով էր՝ ուղղված իշխանություններին. ես ձեզ դեմ ըլալով, կողմ եմ:

Ա.Գեղամյան – Դաշնակցականներին հանգիստ թողնենք, Դաշնակցությունը 117 տարվա պատմություն ունի: Չստացվի, որ մեր զրույցը կրքոտ ենք ավարտում, ես մի պատմություն հիշեմ. մի իմաստուն հայրիկ՝ թախտին նստած, բութ մատները ոլորում, պտտեցնում է: Երիտասարդները հարցնում են՝ հայրիկ, էս մենակ էդ գիտե՞ս: Չէ, ասում է, տղաներ ջան, մատներս հակառակ ուղղությամբ էլ կարող եմ պտտացնել: Ե, շարունակում է հայրիկը, էս իմ բռնած դիրքից ոչ ձեր պապերը բան հասկացան, ոչ ձեր ծնողները, ոչ էլ դուք կհասկանաք, բայց ես իմ մատները դեռ պտտացնելու եմ: Հիմա էդ մարդիկ՝ դաշնակցականները, հայրիկի նման կյանքի մեծ փորձ ունեն: Ով

նրանց դիրքորոշումն ընդունում է, ընտրությունների ժամանակ գնում նրանց է ձայն տալիս, ով չի ընդունում՝ ձայն չի տալիս: Հիմա իմ մասով. եթե այդ հարցում դիրքորոշումներս Դաշնակցության հետ են համընկնում, կնշանակի ձեր դեմ ունիվերսալ քաղաքական գործիչ է նստած:

Պ. Ղազարյան – Սիրելի հեռուստադիտողներ, այսպես, համեստորեն ավարտում ենք: Ես հույս ունեմ, որ պարոն Գեղամյանի մեսիջները, որտեղ որ պետք էր հասան: Շնորհակալություն, պարոն Գեղամյան:

Ա. Գեղամյան – Պետրոս ջան, քեզ հիասթափեցնեմ. սեպտեմբերի 7-ին մեր ընդունած հայտարարությունից հետո մեսիջներս բոլոր հասցեներով էլ հասել են: Էնպես որ այդ հարցում հանգիստ եղեք: Հասել են, ոչ միայն հասել են, այլև բոլորը հասկացել են, որ ...

Պ. Ղազարյան – Այսօր մի քիչ հստակ հասան:

Ա. Գեղամյան – ... այս մարդը ճշմարիտ է և, ով խղճի դեմ չի գործում, կասի՝ էս մարդու քյարը ճշմարտության հաղթանակն է:

**«ԱՐ» ՀԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀՈՒՓՍԻՄԵ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ «ԱՄՊԱՐԵՁ» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
ԾՐԱԳՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է ***

Հռիփսիմե Առաքելյան – Բարի երեկո, սիրելի հեռուստադիտողներ, «Ար» հեռուստաընկերության եթերում «Ասպարեզ» ծրագիրն է և Ձեզ սիրով ուզում եմ ներկայացնել իմ այսօրվա հյուրին: Տաղավառում հյուրընկալել ենք «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանին: Բարև Ձեզ, պարոն Գեղամյան:

Արտաժես Գեղամյան – Բարև Ձեզ:

Հ.Առաքելյան – Ողջունում եմ Ձեզ և շնորհակալ եմ, որ ընդունեցիք հրավերս ու այսօր հյուրընկալվել եք մեզ: Իսկապես, կուսակված շատ հարցեր ունեմ, որ այսօրվա իմ 30 րոպեանոց հաղորդման ընթացքում փորձելու եմ ուղղել Ձեզ: Առաջինը, թերևս, այն է, որ Ազգային ժողովի 2007թ. մայիսի 12-ի ընտրություններից հետո, կարծես թե, Արտաշես Գեղամյան քաղաքական գործիչը, ով շատ հաճախ իր կրակոտ ելույթներով բոլորին զարմացնում էր և ոմանց նաև չարացնում էր իր դեմ, հանկարծ ասպարեզից ինչ-որ մի ժամանակ անհայտացավ: Ի՞նչն էր պատճառը և ի՞նչով եք բացատրում նաև այս փուլում Ձեր ակտիվանալը, խնդրեմ:

Ա.Գեղամյան – Դուք հաստատում եք այն փաստը, որ իմ բացակայությունը քաղաքական բեմահարթակում խիստ նկատելի էր ...

Հ.Առաքելյան – Որովհետև քաղաքական բեմահարթակում Դուք պարբերաբար ելույթներ եք ունենում, Ձեր գործունեությունը շատ հաճախ ակտիվ է լինում, այդ պատճառով, ինձ թվում է, որ դա միանշանակ նկատելի էր, մանավանդ Ձեր պարտությունը պառլամենտա-

*15 հոկտեմբերի 2007թ.:

կան ընտրություններում:

Ա.Գեղամյան – Պարտվեց ընտրողը, պարտվեցին այն մարդիկ, ովքեր խոչընդոտեցին «Ազգային Միաբանության» մուտքը Ազգային ժողով: Ինչ վերաբերում է նրան, որ շուրջ 4 ամիս լռում էինք, այո, դա արել ենք միտումնավոր, քանզի փորձում էինք հասկանալ՝ ի՞նչ է տեղի ունեցել, վերաիմաստավորել կատարվածը և, որն ամենակարևորն է, սեփական սխալները վերլուծել ու հետևություններ անել: Ճիշտ համանման իրավիճակ պատմական ուրիշ պայմաններում եղել է 1856թ., երբ Ղրիմի պատերազմում Ռուսաստանը ծանր պարտություն կրեց թուրքերից: Այն օրերին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարին՝ իշխան Գորչակովին, երբ հարցրել են, թե ո՞րն է լինելու Ռուսաստանի հետագա քայլերը, նա պատասխանել է. «Դուք ասում եք Ռուսաստանը բարկանում է, ո՛չ, Ռուսաստանը չի բարկանում, Ռուսաստանը կենտրոնանում է»:

Ֆ.Առաքելյան – Դուք կենտրոնացման փուլը՞ն էիք:

Ա.Գեղամյան – Միանգամայն ճիշտ եք: Ավարտեմ միտքս. Ղրիմի պատերազմի ավարտից անցավ շուրջ երկու տասնամյակ, և ռուսները թուրքերին ջախջախիչ պարտության մատնեցին: Այդպես էլ մենք հետընտրական ժամանակաշրջանում կենտրոնանում էինք, իմաստավորում մեր անցած ճանապարհը: Ընդ որում, նշեմ, որ կուսակցությունը 10 տարվա ճանապարհ է անցել և խնդիր ուներ հասկանալու, թե ո՞րն է լինելու սեփական դերակատարությունը Հայաստանի առաջիկա զարգացումներում: Եվ մենք իմաստավորեցինք մեր անելիքներն ու այդ ամենն ամփոփեցինք սեպտեմբերի 29-ին կայացած կուսակցության կոնֆերանսի ժամանակ:

Ֆ.Առաքելյան – Ես անպայման կոնֆերանսին կանդրադառնամ, պարոն Գեղամյան, բայց ուզում եմ նախ անդրադառնալ Ազգային ժողովի ընտրություններից հետո Ձեր լռությանը: Չե՞ք կարծում, որ դա, թերևս, վերագնահատման մի փուլ էր, երբ Դուք հասկացաք, որ, միզուցե, գերագնահատել եք Ձեր հնարավորությունները և հարկա-

վոր էր մի պահ մտածել՝ ի՞նչ անել հետո:

Ա.Գեղամյան – Յետին թվով բոլորը փորձում են խելացի երևալ: Իսկ ի՞նչն ենք մենք գերագնահատել. ա՞յն, որ այսօր ավելի քան երբևէ պահանջված է մեր «Հակաճգնաժամային ծրագիրը», գերագնահատե՞լ էինք այն, որ այսօր ավելի քան երբևէ պահանջված է, որ ազգը միաբանվի: Չե՞ որ ընտրությունների ժամանակ մենք բացի մեր ծրագրային արարիչ հիմնադրույթներից ժողովրդին ծանոթացնելուց, և ոչ մի այլ խնդիր բացարձակապես չենք հետապնդել: Քարոզարշավի ընթացքում մենք դադար տվեցինք 4 տարի անընդմեջ քննադատական-վերլուծական այն սուր ելույթներին, որոնցով հագեցված էր ԱԺ «Ազգային Միաբանություն» խմբակցության գործունեությունը խորհրդարանում: Այո, ասացինք, որ երկրում առկա թերություններն արդեն վեր ենք հանել, հիմա ժամանակն է մեր ժողովրդին դրանք վերացնելու ճանապարհը ցույց տալ, ժամանակն է ուղիները մատնանշել: Եվ երբ մենք դեղամիջոցն էինք հրամցնում, մեր «Հակաճգնաժամային ծրագիրը» ձեռք բերելու համար բազմամարդ հերթեր էին գոյանում (այդ ամենը տեսաժապավենի վրա վավերացված կա): Մեզ համար Ազգային ժողովի կազմում չընդգրկվելը, այո, անակնկալ էր: Անակնկալ էր, որովհետև այն ջերմությունը, մարդաշատությունը, ինչ ժողովրդի հետ հանդիպումների ժամանակ մենք մեր աչքով տեսանք և հետո այն թվերը, որոնք հրապարակվեցին ընտրություններից հետո, ասես թե, գրանցել էին տարբեր մոլորակներում տեղի ունեցած գործողություններ: Ես մի հատկանշական պատմություն պատմեմ. Արթիկի շրջանի գյուղերից մեկում (գյուղում գրեթե մարդ չէր մնացել, որ չգար մեր հանդիպմանը) անասելի ջերմ ընդունելության, անասելի ոգևորության արժանացանք: Աժ ընտրություններից հետո հետաքրքրության համար ես խնդրեցի պարզել՝ այդ գյուղում մեր արդյունքներն ինչպիսի՞ն են: Հավաքած ձայներով առաջին տեղում, ո՛չ, Հանրապետական կուսակցությունը չէր, մեկ այլ կուսակցություն էր, հետո գալիս էր Հանրապետականը, երրորդ տեղում էլ մենք էինք: Մտածեցի, հավանաբար, առաջին և

երկրորդ տեղերը գրաված կուսակցությունների ներկայացուցիչները գյուղի բնակչության հետ բազմաթիվ հանդիպումներ են ունեցել: Պարզվեց, որ վերջիններս միայն ընտրությունների նախորդ օրն են եղել ընտրողների հետ հանդիպման: Ահա այստեղ ես վիրավորվեցի որպես անձ, հետն էլ այլ վտանգ զգացի, որը կարող է ծառանալ պետության, երկրի առաջ: Եթե հնարավոր է մեկ օրվա, մեկ գիշերվա ընթացքում նման «հեղաշրջում» անել մարդկանց գիտակցության մեջ, կնշանակի մենք ենթակա ենք լուրջ փորձությունների, կնշանակի, եթե այդ «հեղաշրջումը» այսօր մեր գործընկերներն են արել, ապա վաղը կարող է դա մեր թշնամին անել, երկրից դուրս գտնվող թշնամին: Եվ, թերևս, դա մեզ համոզեց, որ մենք ճշմարիտ ու ճիշտ ենք և, պատահական չէ, որ հետընտրական ողջ ժամանակահատվածում մենք մեր դիրքորոշումը չփոխեցինք: Մենք էլի շեշտում ենք, որ ազգին անհրաժեշտ է միաբանվել, ազգին անհրաժեշտ է մատնանշել այն ուղիները, որոնք կբերեն լուսավոր, անվտանգ ափ: Ահա սա է այսօր մեր որդեգրած քաղաքականությունը, և ես համոզված եմ՝ այն հաջողությամբ կպսակվի:

Յ.Առաքելյան – Բարի, Դուր նշեցիք, որ սեպտեմբերի 29-ին տեղի ունեցավ «Ազգային Միաբանություն կուսակցության» համաժողովը և հենց այն տեսակետը, որը քիչ առաջ հնչեցրեցիք, Ձեր համաժողովի հիմնական թեման էր, որ պետք է համախմբվել: Այսուհետ Գեղամյանը չի՞ չարախոսելու և չի՞ պատասխանելու այն մարդկանց, ովքեր վիրավորել են իր կուսակցությանը և անձամբ իր անձը: Շատերի սոստ մի այսպիսի կարծիք առաջ եկավ, որ ի՞նչ է պատահել Արտաշես Գեղամյանին, քաղաքական այն գործչին, ով շատ հաճախ տեղատարափ մեղադրանքներ էր ուղղում իշխանության ներկայացուցիչներին, դեկավարներին: Ի՞նչ պատահեց Արտաշես Գեղամյանին, որ այսքան բարիացավ, որոշեց, որ պետք է այս փուլում միանշանակ համախմբել ազգը, քանի որ մենք կանգնած ենք մի շարք մարտահրավերների առաջ: Այդ ի՞նչ պատահեց, պարոն Գեղամյան:

Ա.Գեղամյան – Նախ, չարախոսել երբեք չի եղել, եղել է փաս-

տարկված, այո, ջախջախիչ քննադատություն: Հիմա էլ բոլոր ասածներիս տերն եմ:

ՀԱռաքելյան – Այ, հիմա, Դուք որոշել եք, որ պետք է այդ քննադատությունը...

Ա.Գեղամյան – Ձինվեք համբերությամբ, դուք այնքան երկար հարց տվեցիք, որ գոնե կարճ պատասխան տալու հնարավորություն ես ակնկալում եմ:

ՀԱռաքելյան – Ես էլ Ձեզանից ակնկալում եմ երկար պատասխան, խնդրեմ:

Ա.Գեղամյան – Չարախոսել, ինչպես ասացի, երբեք չի եղել, դաժան, փաստարկված քննադատություն, այո, եղել է: Դրան հաջորդել է հետևյալ մոտեցումը. եթե դու քննադատել ես և հիմա տեսնում ես, որ անգամ իսկ չընդունելով քննադատությունը, քո մատնանշած ճանապարհը որպես ուղեցույց վերցրել, որդեգրել եմ, ի՞նչ, դրա համար չարախնդա՞մ: Մենք ասում և հիմնավորում էինք՝ բյուջեն հնարավոր է 100%-ով ավելացնել: Խնդրեմ, այսօր, բյուջեն նվազագույնը 30%-ով ավելացնելու եմ, այն է՝ դարձնելու եմ 2 մլրդ 500 մլն դոլար, մինչդեռ իրենք պնդում էին՝ 10-12%-ից ավելի հնարավոր չէ: Մենք հիմնավորում էինք՝ թոշակները հնարավոր է կրկնապատկել: Խնդրեմ, այսօր, համաձայնվում եմ՝ 60-65%-ով հնարավոր է, և շեշտը դնում եմ ճիշտ այն լծակների վրա, որոնք մատնանշված էին մեր «Հակաճգնաժամային ծրագրում»: Հիմա ի՞նչ, տխրեմք, որ մենք չենք անում: Չէ՞ որ ես հասկանում եմ՝ 60% թոշակ ավելացնելով, նվազագույնը 300 հազար թոշակառուների փոքր-ինչ ավելի թեթև կշնչեն: Որ ասում եմ՝ բյուջեն զգալիորեն ավելանում է, ես հասկանում եմ, որ 2008 թ. սոցիալական բյուր խնդիրներ ավելի դյուրին կդառնա լուծել: Իսկ ինչ վերաբերում է աշխարհայացքային փոփոխություններին, ապա այդպիսին չի եղել. իմ քննադատության առանցքը կազմող հարցադրումները մենք օրակարգից երբեք չենք հանել, մենք երբեք չենք ասել, որ դրանք անհիմն էին: Պարզապես հիմա մենք շեշտը դնում ենք ազգը այս վիճակից դուրս բերելու մայր խնդրի

լուծմամբ: Դրա հետ մեկտեղ, եթե ես շարունակաբար նույն բաներն ասեմ, կնշանակի իմ մոտեցումները համահունչ չեն նորանոր մարտահրավերներին և այդ պարագայում որպես քաղաքական գործիչ դադարում ես արդիական լինելուց: Կարծում եմ, ինքնին պարզ է, որ եթե քաղաքական գործիչը, ի սկզբանե, իր պարզունակությամբ բուլղորի համար հասկանալի, մատչելի, հասանելի է, կնշանակի նա արդեն իրեն սպառած քաղաքական գործիչ է: Եվ նման ձևափոխումները քաղաքական գործչի գիտակցության մեջ ոչ թե պետք է բացառել, այլ, ընդհակառակը, խրախուսել և եթե դա բացառվում է, կնշանակի նա իր վրա չի աշխատում: Վերցրեք Աստվածաշնչյան հայտնի պատմությունը. Պողոս առաքյալը փարիսեցի է եղել, հետամուտ է եղել առաջին քրիստոնյաների հալածանքներին: Դամասկոսի ճանապարհին, ուր նա գնում էր քրիստոնյաներին ճնշելու նպատակով, կուրանում է և տեսլական ունենում: Կուրացած Սավլը Տարսից, նույն ինքը Պողոսը, հասնում է Դամասկոս: Եվ ի՞նչ եք կարծում՝ ո՞վ է նրա տեսողությունը վերականգնում. իր կողմից հետապնդվող քրիստոնյա Անանիա անունով մի մարդ: Կատարվածից հետո նա դառնում է մոլեռանդ քրիստոնյա և պատմության մեջ նրա անունը գրվում է որպես Պողոս առաքյալ: Եվ նա այն առաքյալն է, որի ուղերձները, քարոզները Նոր Կտակարանի հիմքն ու առանցքն են կազմում: Հիմա նույնը քաղաքականության մեջ է. քաղաքական գործիչը պետք է փորձի իմաստավորել իր ով լինելը, իր անելիքը: Եվ երբ 2020-2025 թվականների հեռավորությունից փորձում ես վերլուծել քո արածը, ապա գիտակցում ես, որ մարտավարությանդ մեջ պետք է արմատական փոփոխություններ կատարես: Կրկնում եմ, մարտավարությանդ մեջ և ոչ նպատակների: Ռազմավարական խնդիրը Հայաստանի զարգացումն է, իսկ մարտավարության մեջ փոփոխություններ պետք է լինեն, որ գործողություններդ համահունչ լինեն այն մարտահրավերներին, որոնք ծառացած են երկրիդ, ժողովրդիդ առաջ: Եթե այս տեսանկյունից ես վերագնահատում գործունեությունդ, ապա տեսնում ես, որ ստեղծված իրավիճակում ազգը կոն-

սովորացնելուց զատ, ավելի գերխնդիր չկա: Եվ եթե դու ընտրում ես ազգո՞ւ միաբանելու ճանապարհը, ուրեմն, նախ, ինքդ պետք է օրինակ ծառայես: Այո, չվիրավորես այն մարդկանց, ովքեր քեզ վիրավորել են, չմեղադրես այն մարդկաց, ովքեր անարդար կամ անազնիվ են գտնվել քո հանդեպ՝ լինի դա նոր իշխանությունը, լինի դա հին իշխանությունը: Ահա հենց այս ճանապարհն ենք մենք ընտրել: Եվ եթե այս օրերին դա ոմանց համար անհասկանալի է, ապա, համոզված եմ, շատ կարճ ժամանակ կանցնի և, Աստված մի արասցե, եթե երկրի առաջ ծառայած ու մեր կողմից մատնանշված մարտահրավերները գերիշխող դառնան, կասեն՝ ախր, չէ՞ որ Գեղամյանը դեռ էն գլխից ասում էր, թե որն է ճիշտ ճանապարհը:

Յ.Առաքելյան – Յասկանալի է, այսինքն՝ Դուք հիմա որոշել եք, որ միանշանակ Ձեր նշած Աստվածաշնչյան պատվիրաններին պետք է հավատարիմ լինել և հիմա համախմբման շրջանն է. պետք է հավաքվել ու դիմակայել բոլոր կարգի մարտահրավերներին: Մեկ տարի առաջ չկայի՞ն այդ մարտահրավերները, պարոն Գեղամյան:

Ա.Գեղամյան – Աստվածաշնչյան պատվիրաններից ես չխոսեցի, ես ընդամենը հիշատակեցի Պողոս առաքյալի գիտակցության մեջ կատարված փոփոխությունները: Մեկ տարի առաջ մարտահրավերներն այս աստիճանի սուր չէին, մեկ տարի առաջ մենք փորձում էինք հավատալ իշխանությունների ողջամտությանը, որ նրանք, ելնելով վերահաս վտանգները դիմակայելու անհրաժեշտությունից, կանեն ամենը, որ Ազգային ժողովում ներկայացված լինեն քաղաքական այն ուժերը, ովքեր իրական հեղինակություն, հարգանք են վայելում մեր ժողովրդի ամենալայն շրջանում: Ավա՛ղ, դա տեղի չունեցավ: Անցյալին քար շարտողը թող աչքի առաջ ունենա, որ ապագան թե՛ դանդիկ կգնդակահարի իրեն: Սակայն սա ամենևին չի նշանակում, որ մենք չպետք է դասեր քաղենք անցյալում թույլ տված սխալներից: Ուստի, ստեղծված նուրբ իրավիճակում, երբ ակնհայտորեն տեսնում ես, թե զարգացումներն ինչ ուղով են ընթանում և որ դա բացարձակապես ոչ մի լավ բան չի խոստանում մեր ժողովրդին, մեր

պետականությանը, ահա, ստիպված ես լինում վարել այն քաղաքականությունը, որը մենք հիմա տանում ենք: Ոչ թե մեղքերի թողություն ենք անում հին ու նոր իշխանություններին, քավ լիցի, դրա իրավունքը չունենք, մենք էլ մեղքեր շատ ունենք, պարզապես ուզում ենք ասել՝ եկեք մեր մոտեցումներում նոր էջ բացենք: Եվ թող հանկարծ մեկը չմտածի, որ գալու է կազմաքանդելու, մյուսն էլ չմտածի, որ բիրտ ուժով, զոռբայությամբ ճզմելու է այդ կազմաքանդողներին, այլ բոլորս խորհենք, որ վտանգը հավասարաչափ ծառացած է թե՛ կազմաքանդողների, թե՛ բիրտ ուժ գործադրողների և թե՛ ժողովրդի գլխին: Ահա այս գիտակցումը եթե լինի, հավատացնում եմ ձեզ, Հայաստանի Հանրապետությունում բարոյահոգեբանական բացարձակապես նոր իրավիճակ կստեղծվի, ըստ որում՝ օբյեկտիվորեն պահանջված բարոյահոգեբանական մթնոլորտ: Մեր ժողովուրդը, հավատացնում եմ ձեզ, հոգնել է բազմաթիվ և բազմաբնույթ մեղադրական ճառերից, մեր ժողովուրդը ստեղծված վիճակից ելքն է ուզում տեսնել, մեր ժողովուրդն ապագային տանող ճանապարհ է ուզում տեսնել: Այ, հիմա, երբ ընդդիմադիր մեր գործընկերներին ելքն ու ճանապարհն ես ուզում ցույց տալ, առավել արմատական դիրքերից այսօր հանդես եկողներն ասում են՝ ըի՛ր, Գեղամյանը փոխվել է, էս ի՞նչ եղավ: Իշխանություններն էլ իրենց կողմից վերահսկվող լրատվամիջոցներով մեր ընդդիմախոս գործընկերների ջրաղացին ջուր են լցնում, տիրաժավորելով նրանց ասածը՝ Գեղամյանն ակնկալիքներ ունի այս իշխանությունից: Օգտվելով առիթից հատուկ նշեմ՝ Գեղամյանն ակնկալիքներ ունի միայն ու միայն սեփական ժողովրդից. թող ոչ մի պետական պաշտոնի չլինեն, բայց տնից դուրս գալիս ինձ հանդիպած մարդկանց դեմքին ժպիտ տեսնեմ: Իսկ ես հիմա էլ այդ ժպիտը տեսնում եմ: Ասեմ ավելին, թող մեծամտություն հանկարծ չհամարվի. երբ կնոջս հետ այս կամ այն հրավերն ընդունում և գնում եմ, մարդիկ մոտենում են հետս լուսանկարվելու համար: Դրդապատճառն էլ այն չէ, որ ես Ալեն Դելլոնի արտաքինն ունեմ, այլ այն, որ մարդիկ, հավանաբար, մտածում են՝ էս

մարդը ճիշտ մարդ է, իսկ ճիշտը քարկոծվում է, ճշմարիտը չի հասկացվում: Հանկարծ չստացվի, որ նպատակ ունեն տպավորություն ստեղծելու, թե ասածներս լսելով մտածեք ու համենմատեք Աստվածաշնչյան հայտնի թևավոր խոսքերի հետ՝ մարգարեները խելոք մարդիկ են, բայց ընդունված չեն իրենց հայրենիքում: Եդ դեպքը չէ: Այն դեպքն է, սակայն, որ եթե ճշմարտությունը, ճշմարտացիությունը դու այս պահին չես հասկանում, հասու չես դա ըմբռնելուն, որովհետև դու չես տիրապետում այն ինֆորմացիային, որին ես եմ տիրապետում, որովհետև չունես գիտելիքների այն պաշարը, որը ես ունեմ, ի սկզբանե, ասածներս քեզնից մի վանիր: Ի սկզբանե, մի շտապիր ասել՝ էս ի՞նչ եղավ, ո՞նց եղավ, այլ փորձիր ինքդ քո մեջ գտնել, թե քո ընկալումներում ո՞րն է սխալը: Ինչպես ես եմ փորձում սեփական սխալներս, որոնք, ցավոք, շատ են, ամեն օր հասկանալ: Փորձում եմ դրանք իմաստավորել, շտկել, առանց որևէ մեկի վրա նեղանալու, առանց քեմ քշելու:

Հ.Առաքելյան – Շատ լավ, պարոն Գեղամյան, ես ուզում եմ մի փոքր խոսեք նախազահական առաջիկա ընտրությունների մասին, քանի որ մեր ներքաղաքական ողջ տրամադրությունները, կարծես թե, հենց խմորվում են այդ ուղղությամբ: Նախազահական ընտրություններին են, այսպես ասած, միտված բոլորի ելույթները: Կարծես թե, արդեն քիչ-քիչ հասկանում ենք, թե ով ո՞ր ուղղությամբ է գնալու: Այ, ինչ կասեք, փաստորեն, սեպտեմբերի 29-ի Ձեր համաժողովից, կարծես թե, մենք չկարողացանք հստակ պատկերացում կազմել՝ արդյո՞ք Արտաշես Գեղամյանը նախազահի թեկնածու առաջադրվելու է, թե՞ ոչ: Կամ, ասենք, միասնական թեկնածուի փնտրտուքին մասնակցելո՞ւ է: Ի՞նչ կասեք, այս պահին, ո՞ր փուլում եք գտնվում:

Ա.Գեղամյան – Այս պահին ես անչափ կարևորում եմ, որ մենք ազգովի հասկանանք՝ որտե՞ղ ենք հասել: Գիտակցենք, որ, ցավոք, Ադրբեջանի հետ տնտեսական մրցակցությունը տանուլ ենք տալիս: Այնտեղ կան շատ մտահոգիչ համեմատական թվեր, մասնավորապես, վերջին 3 տարում նրանց ՀՆԱ-ն 96%-ով աճել է, հիմնական կա-

պիտալի մեջ կատարված ներդրումները 12 անգամ գերազանցում են նույն ցուցանիշը Հայաստանում, բեռնափոխադրումների ծավալներն էլ գերազանցում են 16 անգամ, չխորանամ...

Յ.Առաքելյան – Նավթամուղի բացելուց հետո պելի...

Ա.ԳԵՂԱՄՅԱՆ – Անշուշտ, բայց չէ՞ որ այդ նավթամուղի գործոնը դեռ նվազագույնը 25-30 տարի լինելու է: Կնշանակի, տնտեսական մրցակցությունում խնդիրներ ունենք: Խնդիրներ ունենք մեր հարևանների հետ, որովհետև Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա տնտեսական համագործակցությունն արդեն վերաճել է ռազմաքաղաքականի: Մերձեցում է նկատվում Իրանի և Ադրբեջանի միջև՝ պայմանավորված վերջերս Իրանի նախագահ Ահմադինեջադի այցով Բաքու: Այնտեղ նա հայտարարություն արեց, ըստ որի Ադրբեջանի զարգացումը դա Իրանի զարգացումն է, Իրանի զարգացումը և հաջողությունն էլ՝ Ադրբեջանինն է: Ակնհայտորեն մերձեցում է ուրվագծվում նաև Թուրքիա-Իրան հարաբերությունների մեջ: Ծրագրված է Իրանից Թուրքիայի վրայով Հարավային Եվրոպա օգել 25-30 մլրդ խորանարդ մետր տարողությամբ գազատար: Հիմա այդ բոլոր հարցերը մենք պետք է մեկտեղենք, մարտահրավերները որոշենք, երկրի առաջ էլ խնդիր դնենք: Երկրի առաջ խնդիր դնելուց հետո էլ մատնանշենք, թե այդ խնդիրների լուծման ճանապարհները որոնք են: Ահա միայն դրանից հետո նախագահական առաջիկա ընտրությունը դարձնենք միջոց, որպեսզի ամենագիտակ և կարող քաղաքական ուժը ստանձնի մարտահրավերներին դիմակայելու առաքելությունը: Մինչդեռ, եթե այս բոլորը համատեղ ենք անում, կամա թե ակամա, դառնում ենք ոչ թե մրցակից, այլ՝ դաշնակից: Ստեփան Կռամերը 1960-ականներին շատ հոյակապ ֆիլմ էր նկարահանել՝ «Մի շղթայով շղթայվածները»: Ֆիլմում բանտից միասին փախուստի դիմած և իրար ատող ռասիստ սպիտակն ու սևամորթը մի շղթայով շղթայված լինելով են դառնում ոչ միայն բախտակից ընկերներ, այլև իրապես են բարեկամանում: Ես չեմ ուզում, որ Հանրապետականի կամ «Բարգավաճ Հայաստանի», Դաշնակցության կամ ընդդիմադիր

դաշտի որևէ մի ուժի հետ դառնամ բախտակից ընկեր այդ իմաստով: Ընդհակառակը, ես ուզում եմ ոչ թե համատեղ փախուստի դիմենք, այլ այդ հնարավոր վերահաս վտանգներից, դժբախտություն խոստացող վտանգներին միասին դիմակայենք: Եվ ահա այդ պարագայում, եթե խնդիրները մատնանշված են, ճանապարհներն էլ՝ հստակեցված, իշխանություններն ընդդիմադիր ուժերի հետ դատապարտված են ազգը կոնսոլիդացնել: Ու բոլորս պետք է գիտակցենք, որ հաջողությունը կուղեկցի ընտրված այն նախագահին, որը կառաջնորդվի ազգը միաբանելու գաղափարով: Չմոռանամ նշել, որ ընդդիմության թիկունքում կանգնած է նվազագույնը 700 հազար մարդ, որից 400 հազարը ձայն տվեցին նրան: Ուրիշ բան, որ այդ ձայները փոշիացան: Մայիսի 12-ին շուրջ 300 հազար մարդ էլ ընտրության չգնաց, այսինքն՝ դրանով նրանք յուրովի հաստատեցին, որ չեն վստահում իշխանություններին և նրանց կազմակերպած ընտրություններին: Մենք շատ ենք կարևորում, որ հանրապետության նորընտիր նախագահն իր պաշտոնը դիտարկի որպես եզակի հնարավորություն՝ դառնալու ազգի բարոյական լիդերը:

Յ.Առաքելյան – Բարի, պարոն Գեղամյան, ի՞նչ աշխատանքներ եք տանում, որպեսզի Ձեր վերը նշվածները կարողանաք իմի բերել, հասկանաք և պատկերացնեք՝ Դուք եք Ձեզ առաջադրելո՞ւ, թե ինչ որ մեկին սատարելու եք:

Ա.Գեղամյան – Այսօր ես տեսակետս հայտնում եմ, կարծում եմ, որ հազարավոր հեռուստադիտողներ կնայեն ու կմտածեն՝ լավ, ես մարդու ուզածն ի՞նչ է: Հանրապետության նախագահ դառնալն ինքնանպատակ լինել չի կարող, նախագահի պաշտոնում աշխատելը, այն էլ՝ Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության ամենապատասխանատու շրջանում, մեծագույն պատասխանատվություն է, մեծագույն տառապանք: Նա գալու է ոչ թե ազգին տեր ու տիրական կարգվելու, այլ գալու է ազգի հոգսը իր վրա վերցնելու, բեռ կրելու իր ուսերին, գալու է մարդկանց կարոտով լեցուն, արտասված աչքերի արցունքը սրբելու: Կլինի՞ այդ գիտակցումը, ուրեմն՝

հաջողություն կլինի, չի լինի այդ գիտակցումը՝ հաջողություն չի լինի: Արդյունքի կարելի է հասնել միայն ու միայն մի պարագայում, եթե դու կարողանաս ազգը միաբանել: Թեկուզև կեղծված ընտրությունների արդյունքում, այնուամենայնիվ, իմ թիկունքում ոչ թե 50 հազար մարդ է կանգնած (այդքան ծայն է գրանցվել), այլ շատ ավելի: Եվ այդ բոլոր մարդիկ պետք է հուսախաբ չլինեն նախագահական ընտրություններից հետո, նրանք պետք է իմանան, որ հետևախագահական ձևավորվելիք իշխանություններում (լինի դա նախագահական աշխատակազմը, լինի դա գործադիր համակարգը) նաև իրենց շահերը պաշտպանող մարդիկ են ներգրավվելու, իրենց իղծերը կյանքի կոչողներ կլինեն: Ու միայն այդ դեպքում, երբ մարդիկ իշխանությունների հանդեպ վստահություն կտածեն, սխրանքներ կգործեն: Մինչև մենք չհասնենք մեր մտածելակերպի փոփոխությանը, բնականաբար, հին մտածելակերպով նոր գործեր չենք կարող անել:

Յ.Առաքելյան – Բարի, պարոն Գեղամյան, ես Ձեզ մոտ արդեն նկատում եմ մտածելակերպի փոփոխություն, այ, ինչպես Դուք նշեցիք մեր զրույցի սկզբում:

Ա.Գեղամյան – Այո, Դուք իրավացի եք: Փոփոխությունը, սակայն, մտածելակերպի մեջ չէ, այլ մեկ ուրիշ հարթության վրա է:

Յ.Առաքելյան – Ձեզ մոտ մտածելակերպի փոփոխություն է տեղի ունեցել և, կարծես թե, միշտ ընդդիմադիր կեցվածքը հիմա ավելի գլորբալ մարտահրավերների առջև դիմակայելու, համախմբվելուն են միտված: Կարո՞ղ ենք պատկերացնել, որ ընդդիմադիր գործիչ Արտաշես Գեղամյանը վաղը, նախագահական ընտրություններին, ինչու չէ, կսատարի նաև իշխանական Հանրապետական կուսակցության լիդերին, այս դեպքում՝ Սերժ Սարգսյանին:

Ա.Գեղամյան – Լավ սկսեցիք, ափսոս, վերջում խարաբ արեցիք:

Յ.Առաքելյան – Ի՞նչը դուր չեկավ Ձեզ:

Ա.Գեղամյան – Խնդիրը դուր գալու-չգալու մեջ չէ: Ես մեխանիզմը նկարագրեցի, ճի՞շտ է: Ես ասացի՝ զարգացումների ինչպիսի տար-

բերակ է ինձ համար ընդունելի: Եթե այսօր Հանրապետական կուսակցությունը, նույն Սերժ Սարգսյանը հրապարակավ կանգնեն և հայտարարեն, որ մեր «Հակաճգնաժամային ծրագրում» որդեգրված մոտեցումներն իրենց հոգեհարազատ են և պարտավորվում են ջանք ու եռանդ չխնայելով դրանք կյանքի կոչել, այդ պարագայում նրանց արդեն իսկ պետք չի լինի Գեղամյանի սատարելը կամ չսատարելը: Նման դեպքում նրանք գեթ մեկ խնդիր պետք է հետապնդեն, եթե, իրոք, անկեղծ են. պետք է ձգտեն, որ նախագահական առաջիկա ընտրություններն ազատ, անկախ, ժողովրդավարական հունով ընթանան: Այդ պայմաններում անցկացված ընտրություններում, եթե հաղթի ընդդիմադիր քաղաքական գործիչը, իշխանությունները, անկախ նրանից, թե որ ընդդիմադիր գործիչն է հաղթել, առաջինը պետք է շնորհավորեն հաղթողին, ինչպես նաև ես առաջինը կշնորհավորեմ, եթե ազատ, արդար ընտրություններում հաղթի իշխանության ներկայացուցիչը: Կրկնում եմ, ես ինքս առաջինը կշնորհավորեմ և կասեմ՝ ուժերիս ներածի չափով պատրաստ եմ ծառայել ոչ թե Ձեզ, այլ իմ ժողովրդին: Այստեղ էլ հիշեմ մեկ ուրիշ պատմություն: Չնայած հիմա, երբ պատմական զուգահեռներ եմ անցկացնում, դա էլ արդեն որպես իմ աիբն են համարում: Այո, ինչքան անգրագետ ու տգետ ես ներկայանում, այնքան ընդունելի ես, իսկ ասվածից էլ, եթե չեն հասկանում, ասում են՝ արա, դե լավ էլի, հոգնեցրեց մեջբերումներով:

Յ.Առաքելյան – Պատմեք, պարոն Գեղամյան, ինձ թվում է, ես կհասկանամ, ես սիրով կլսեմ:

Ա.Գեղամյան – Ենթադրում եմ՝ հեռուստադիտողներն էլ կհասկանան: Պատմությունը սա է. 1920, թե 1921 թվականին ցարական Ռուսաստանի բանակի զեներալ-լեյտենանտ Ղենիկինը հարկադրված փախուստի դիմեց բոլշևիկյան Ռուսաստանից, գնաց Փարիզ: Երբ սկսվեց երկրորդ աշխարհամարտը, ապա Հայրենական մեծ պատերազմը, պատերազմի առաջին իսկ օրերից նա իրեն վտարանդի դարձնողներին դիմեց աղերսական նամակով՝ գրելով, որ իր ռազմա-

կան գիտելիքները պատրաստ է շարքային սպայի կարգավիճակով ծառայեցնել Սովետական Միությանը, հայրենիքին: Ահա սա է հայրենիքի այն ընկալումը, որն ընդունելի է ինձ համար: Հայրենիքիդ ծառայելը ամոթ չէ, իշխանավորին նոքյար դառնալն է ամոթ: Ահա էս գլխից ուզում եմ ասել. հայրենիքին ծառայել՝ թե՛ ես, թե՛ «Ազգային Միաբանությունը» պատրաստ ենք, իսկ իշխանություններին, էլ չենք ասում՝ անձերին, նոքյար դառնալ՝ ոչ:

Յ.Առաքելյան – Հասկանալի է, այսինքն՝ հայրենիքին ծառայող յուրաքանչյուր ուժի, կուսակցության հետ, եթե դա միտված է պետության բարօրությանը, ժողովրդի բարօրությանը, ապա Արտաշես Գեղամյանը պատրաստ է համագործակցել...

Ա.Գեղամյան – Կամ ծառայել:

Յ.Առաքելյան – Այ, Դուք ի՞նչ կարծիք կհայտնեք, այ նախկին, առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն այս շրջանում բավականին ակտիվ գործունեություն է ծավալել և, համեմայնդեպս, շատերը կարծում են, որ նախագահական ընտրություններին կառաջադրի իր թեկնածությունը: Ինչպիսի՞ն է Ձեր տեսակետը:

Ա.Գեղամյան – Մինչև հանրապետության նախագահի թեկնածու առաջադրվելը, ես խորհուրդ կտայի գործող և նախորդ իշխանությունների հավակնողներին, գյուղեգյուղ գնալ և ժողովրդից ներողամտություն հայցել: Ասեմ, որ ես էլ հետները կգնամ: Բոլորիս մեղքը մեծ է, այո, լինի դա նախորդ իշխանությունը, լինի դա գործող իշխանությունը, լինի դա ընդդիմությունը: Մեծ է, որովհետև երկիրը բոլորիս «համատեղ ջանքերով» հասել է մի այնպիսի վիճակի, որը գոհացնել չի կարող և ոչ մեկին: Այս պարագայում եզակի ճանապարհն այն է, որ յուրաքանչյուրս մեր մեղքի, մեղավորության բաժինը գիտակցենք, քավություն աղերսենք մարդկանցից: Եվ ոչ թե այս կուսակցապետից, այն կուսակցապետի դուռը գնալ կամ սեփական օթևանի տակ ընդունել, կամ գնալ այս կամ այն մարզում խնջույքի մասնակցել: Պետք է գնալ ժողովրդի մեջ և քավություն աղերսել, դա բոլորիս է վերաբերում: Անհրաժեշտ է, որ

ժողովուրդը հասկանա ու համոզվի, որ սրանք էլի հնի պես ամեն մեկը, շատ ներողություն, իրա էշը չի քշում, այլ հիմնովին վերանայել են իրենց մտածելակերպը: Ծառացած խնդիրները, որոնք արդյունք են մեր բոլորիս մտածելակերպի, այդ նույն մտածելակերպի մակարդակում հնարավոր չէ լուծել, պետք է փոխվի մեր գիտակցականությունը: Մեր մտածելակերպը արմատական փոփոխություններ պետք է կրի՝ համահունչ դառնալով անսպասելի հրապարակ եկող մարտահրավերներին: Քանի դրա անհրաժեշտությունը մենք չգիտակցենք, ոչ մի լավ բան ակնկալել չի կարելի: Բացարձակապես և ոչ մի առաջընթաց չենք ունենա, եթե մեր ներքաղաքական զարգացումները հասկանալի լինեն մեր դարավոր «բարեկամների», հարևանների համար: Եթե նրանք այս գլխից, ի սկզբանե, գիտեն՝ նախագահական ընտրություններն ի՞նչ հուճուկ են ընթանալու և հանգուցալուծումը ինչպիսի՞նք է լինելու, ապա այսօրվանից դրանց հնարավոր դրական ազդեցությունը պետականության ամրապնդման գործին փորձելու են չեզոքացնել: Նրանց համար մահացու հարված կլինի այն, որ ընտրություններից հետո մեր մարդիկ զարթնեն ու գիտակցեն, որ բարոյապես նոր երկրում են իրենք ապրելու: Երկիր, որտեղ թշնամանք չկա, այլ կա նույն գաղափարով առաջնորդվող քաղաքական ընտրանի: Ազգովի մենք այսօր կարիքն ունենք բարոյական ճիշտ այն հեղաշրջման, որը տեղի ունեցավ 1932 թ. Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Երբ այդ հսկա երկիրը փլուզման, պառակտման, մասնատման շեմին էր կանգնած, հրապարակ եկավ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտը: Եթե չեմ սխալվում, նա ընտրություններում հաղթեց գործող նախագահ Գուվերնին: Ընտրություններից հետո՝ 1933 թ., երբ Ամերիկայի ժողովուրդը լսեց Ռուզվելտի ինաուգուրացիայի ժամանակ արտասանած ճառը, հասկացավ, որ արդեն նոր երկրում է ապրում:

Յ.Առաքելյան – Բարի, Դուք իմ հարցին չպատասխանեցիք իրականում: Արդյոք, եթե այդ փոփոխությունները լինի առաջին նախագահի կեցվածքում և մտածողության մեջ, Դուք պատրաստ կլինե՞ք

համագործակցել նրա հետ:

Ա.Գեղամյան – Հանուն Հայաստանի Հանրապետության ես պատրաստ եմ անգամ իսկ Լուցիֆերի հետ համագործակցել, կրկնում եմ, հանուն Հայաստանի Հանրապետության: Եթե երկրիս շահը պահանջում է, որ համագործակցեմ այս կամ այն քաղաքական ուժի հետ, հանուն պետության շահի, այո, ես կզնամ նման համագործակցության և դրանում ոչ մի վատ բան չեմ տեսնում: Մի առիթով ասել եմ, կրկնեմ. Հիրոսիմայի և Նագասակիի վրա ատոմային ռումբերի պայթյուններից հետո, չանցած 2 տարի, ճապոնիայի անվտանգության երաշխավորը դարձավ Ամերիկայի Միացյալ Նահանգները: Երկիր, որի օդաչուները ռմբակոծել էին ճապոնիայի հիշյալ քաղաքները: Պատերազմից 1-2 տարի անց գեներալ Դուգլաս Մակարտուրը (որը Հեռավոր Արևելքում ԱՄՆ զինված ուժերի հրամանատարներից էր) գրեց ճապոնիայի Սահմանադրությունը, որը մինչ օրս գործում է: Աշխարհը փոփոխական է, և շահում է այն ազգը, որը կարծրացած դոգմաների չի հետևում, այլ որը արագորեն կարողանում է շահել տվյալ պահին հրատապ լուծում պահանջող խնդիրներից: Խոսքն այն մասին է, որ, ելնելով ստեղծված իրավիճակից, կարողանա վարվող քաղաքականությունը փոփոխության ենթարկել՝ դա ծառայեցնելով ազգային շահին, մայր խնդիրը թողնելով անփոփոխ: Մենք ունենք մի ազգ, ունենք մի երկիր, որը Հայաստանի Հանրապետությունն է և այն պարտավոր ենք աչքի լուսի պես պահել:

Հ.Առաքելյան – Բարի, պարոն Գեղամյան, ուզում եմ Ձեզ ևս մեկ հարց ուղղել: Ձեր կուսակցության համաժողովից հետո, փաստորեն, հստակ չդարձավ, թե արդյոք Արտաշես Գեղամյանը կներկայացնի՞ իր թեկնածությունը նախագահական ընտրություններում, թե ոչ: Կամ՝ որևէ այլ ուժի կսատարե՞ք, կամ որևէ թիմի հետ կփորձե՞ք իրականացնել աշխատանքներ: Դուք նշել էիք, որ նոյեմբերին դրա մասին անպայման կբարձրաձայնեք: Այ, ի՞նչ աշխատանքներ եք հիմա տանում և ի՞նչ ակնկալիքներ ունեք սեպտեմբերին հնչեցրած

Ձեր հայտարարությունից:

Ա.Գեղամյան – Մայր խնդիրը, որը մեր առաջ դրել ենք, այն է, որ իմ կողմից այսօր էլ հնչեցված մոտեցումները հնարավորինս դարձնենք մեր հասարակության սեփականությունը: Մենք մեծ կարևորություն ենք տալիս այս ամենին և փորձելու ենք, բառիս իսկական առումով, որսալ դրանց արձագանքը թե՛ իշխանությունների, թե՛ ընդդիմադիր մեր մյուս գործընկերների կողմից: Խնդիրն այն է, որ մարդիկ պարտադրված չլինեն ընտրել կամ սևը, կամ սպիտակը: Մարդիկ պետք է իրենց առաջ նաև այլընտրանքային ճանապարհ ունենան, և այդ ուղին փորձում ենք մենք հրապարակ հանել, հրապարակ իջեցնել մեր այլընտրանքային մոտեցումներով: Թե որքանով դա մեզ կհաջողվի, ցույց կտա ժամանակը: Համենայնդեպս, ես շատ վտանգավոր զարգացումներ եմ տեսնում, եթե իրավիճակը չփոխվի: Ակնհայտ է, որ անհաշտությունը, թշնամանքի սերմանումը, երբ մի կողմից գործող իշխանություն, մյուս կողմից նախկին իշխանություն առճակատումը գնալով խորանում է, մեր երկրին լավ բան չի խոստանում: Կրկնում եմ, լավ բան բացարձակապես չի խոստանում:

Հ.Առաքելյան – Պարոն Գեղամյան, ևս մեկ հարց. արդյո՞ք չկա մտավախություն, որ այդ 50 հազար ընտրողները, ինչպես Դուք նշեցիք, ովքեր կանգնած են Ձեր թիկունքում և Ձեր կուսակցությանը ձայն են տվել, Ձեր մտածողության փոփոխությունից հետո կարող են այլևս Ձեր ընտրողը չլինել, համարելով, որ իրենց այլևս հետաքրքիր չէ Արտաշես Գեղամյան քաղաքական գործիչը, ով նման տեսակետի կրող է դարձել:

Ա.Գեղամյան – 50 հազար ընտրողների մասին, որ ես ասացի, դա այն թիվն է, ինչ ընտրական հանձնաժողովները տակը թողել են, իրականում նրանք շատ ու շատ ավելին են: Ինչ վերաբերում է նրան, որ Արտաշես Գեղամյանը պետք է ինքը հարմարվի մի գաղափարի, որը ինքը գիտի՝ պետության շահերի տեսակետից ընդունելի չէ, բայց այսօր, ավա՛ղ, թյուրըմբռման պատճառով շատերի կողմից պահանջված է, ապա ես դրան տուրք չեմ տա, ես խնդիր չունեմ դառնալ

ամբոխահաճո: Ես խնդիր ունեմ 2020-2025 թթ., երբ կգրվի այս օրերի պատմությունը, գալիք սերունդը ասի՝ 2007-2008 թթ. Հայաստանում գեթ մեկ մարդ կար, ով խղճի մտոք գործեց՝ անգամ իսկ ընտրողների ձայները կորցնելու գնով: Սակայն կորուստներ, որոնք մեծ հաշվով միայն թվացյալ են: Ինչո՞ւ են ասում թվացյալ. քանի որ հանոզված են՝ իմ դավանած սկզբունքները հաղթանակելու են, որովհետև դրանք այլընտրանք չունեն, որովհետև դրանք ուղղված չեն ոչ հների, ոչ էլ ներկաների դեմ, այլ ուղղված և միտված են ապագային: Ապագայի հետ մերոնք՝ հին ու գործող իշխանությունները, կռիվ տալ չեն կարող, ապագայի հետ կռիվ տալու համար իրենք առնվազն պետք է գալիքի սեփական տեսլականն ունենան: Իսկ ապագայի սեփական տեսլականը, բոլորիս համար նույնն է, եթե հիվանդ մարդիկ չենք. դա բարեկեցիկ, զարգացող, անվտանգ Հայաստանի Հանրապետության տեսլականն է:

**«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ»
ՆԱԽԱԳԱՋ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ***

Արտաշես Գեղամյան - Յարգելի լրագրողներ, շնորհակալություն եմ հայտնում, որ ժամանակ գտաք և եկաք մասնակցելու ասուլիսին: 10-15 րոպե առաջ ավարտվեց «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահության նիստը, որի օրակարգում կար քննարկվող մեկ հարց, այն է՝ նախագահական առաջիկա ընտրություններին «Ազգային Միաբանություն» թեկնածության հաստատման մասին: Ես համառոտ նշեցի այն բոլոր հանգամանքները, դրդապատճառները, որոնք նախագահության անդամ իմ տեղակալներին թելադրել են այդ հարցը դարձնել ընդլայնված նիստի քննարկման առարկա: Նիստին, բացի նախագահության անդամներից, մասնակցում էին նաև մեր խոշոր տարածքային կազմակերպությունների ղեկավարները բոլոր մարզերից և Երևան քաղաքից: Զթաքցնեմ, մինչև այդ հարցը օրակարգային դարձնելը, ես իմ գործընկերներին, մասնավորապես պարոններ Գ. Թադևոսյանին, Ա. Կարապետյանին, Կ. Առաքելյանին, Ս. Մուրադխանյանին, նախագահության անդամներ Վ. Արևշատյանին, Ա. Սիմոնյանին խնդրել էի, որ նրանք իրենց եզրակացությունները տան, թե ինչո՞ւ են պնդում, այս էլ 3 ամիս շարունակ, որ այս հարցն անպայման դառնա քննարկման առարկա և ես էլ իմ համաձայնությունը տամ նախագահական առաջիկա ընտրություններին ներկայացնել «Ազգային Միաբանություն կուսակցությանը»: Նախագահության հիշատակած աղաններից բացի, ես նմանատիպ խնդրանքով դիմել էի նաև մեր կուսակցության՝ փորձությունների բովո՞վ

*27 նոյեմբերի 2007թ.: Տպագրվում է կրճատումներով:

անցած անհատների, մասնավորապես Գագիկ Կոստանդյանին, Տիգրան Պոշնակյանին ու տասնյակ ուրիշ մեր գործընկերներին: Ավելին էի ասել. որպեսզի վաղը, մյուս օրը այնպես չստացվի, որ այս կամ այն լրատվամիջոցը խեղաթյուրի Ձեր հիմնավորումները, ապատեղեկատվություն տարածի լրատվամիջոցներում, նպատակահարմար կլինի այդ խոսքը գրավոր լինի: Ինչո՞ւ չէ, մեր կուսակցության, կարծում եմ, նաև հայ ժողովրդի համար պահը պատմական է, հետագայում այդ հիմնավորումները հասու և մատչելի կլինեն մեր ազգաբնակչությանը: Ուստի, գտնում եմ, ճիշտ կլինի փոքր-ինչ զինվեք համբերությամբ, լսենք այդ հիմնավորումները, որից հետո ես սիրով կպատասխանեմ Ձեր հարցերին՝ ներկայացնելով նաև իմ տեսակետներն խնդրո առարկայի շուրջ: Համեցեք: (Նախագահության վերը հիշատակված անդամներն ընթերցում են իրենց հիմնավորումները.- *խմբ.*):

Հիմա, եթե կան ինձ ուղղված հարցեր, խնդրեմ, տվեք:

Հարց – Պարոն Գեղամյան, լսելով ելույթները, ես այնպիսի տպավորություն ստացա, որ Լևոն Տեր-Պետրոսյանի ինտրու եք առաջադրվել:

Ա.Գեղամյան – Շատ հետաքրքիր հարցադրում է, ցավում եմ, որ ելույթներից բացարձակապես բան չեք հասկացել: Համեցեք:

Հարց – Ես ստիպված եմ ինչ-որ տեղ կրկնել իմ գործընկերոջ հարցը: Բոլոր հիմնավորումների առյուծի բաժինը նվիրված էր Լ. Տեր-Պետրոսյանի, նրա թիմի քննադատությանը: Ականա այնպիսի տպավորություն է ստեղծվում, արդյո՞ք Ձեր գալու նպատակն այն չէ, որ հենց Լևոն Տեր-Պետրոսյանը չգա:

Ա.Գեղամյան – Ցավ եմ ապրում, որ դուք այդ տպավորությունը ստացաք: «Ազգային Միաբանություն կուսակցությունը» հավասարապես մերժում է թե՛ նախորդ և թե՛ գործող իշխանություններին: Այն, որ մենք մերժում ենք գործող իշխանություններին, վերջիններիս համար դա ամենևին գաղտնիք չէ նաև այն պարզ պատճառով, որ անգամ իսկ Ազգային ժողովի ընտրությունների նախաշեմին հազա-

րավոր տպաքանակով հրատարակել էինք Հայաստանի Հանրապետությունում խոր ճգնաժամը հաղթահարելու մեր «Հակաճգնաժամային ծրագիրը»: Ծրագրում սևը սպիտակի վրա տրված են մեր սպառիչ գնահատականները իշխանությունների կողմից վարվող թե՛ տնտեսական, թե՛ դրամավարկային, թե՛ ընդհանուր առմամբ ներքին քաղաքականությամբ: Դա և ոչ մեկի մոտ կասկած չի հարուցել: Սակայն Լևոն Տեր-Պետրոսյանի ջատագովները, չգիտես ինչու, կարծեցին, որ, մերժելով գործող իշխանություններին, մենք կուսակցությունով հանկարծ կարող է ամենեզիա, այն է՝ հիշողության կորուստ ապրենք: Նրանց սթափեցնելու համար մենք հարկ համարեցինք հիմնավորել, թե ինչո՞ւ ենք բացառում դա, քանզի իշխանությունները շատ լավ գիտակցում են, որ իրենց սատարելու խնդիր, անգամ իսկ բարձրաձայնել, հնարավոր չէ, իսկ տեր-պետրոսյանական թիմը կարծում էր, որ դա իրենց պարագայում հնարավոր է: Ասեմ նաև, որ նրանք սկզբից համբերատար «խնայում էին» «Ազգային Միաբանություն կուսակցությանը», այն է՝ և ոչ մի թթու խոսք իրենց լրատվամիջոցներում չէր ասվում մեր կուսակցության հասցեին: Մարդիկ, հավանաբար, պատրանք ունեին, որ մենք էլ դրանից կոզևորվենք և կսկսենք պաշտպանել Տեր-Պետրոսյանին: Հիշողության կորստով տառապող այդ մարդկանց ասեմ. 1997թ. հոկտեմբերի 17-ին «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը պատրաստեց կոչ՝ ուղղված համայն հայությանը: Կոչի տեքստը մենք ծանոթացրեցինք հայ ժողովրդի, բառիս իսկական առումով, ամենապատկառելի մարդկանց, որոնք և, բնականաբար, իրենց որոշակի դիտողություններով, առաջարկներով, ստորագրեցին այն: Եվ կոչը հոկտեմբերի 18-ին տպագրվեց “Голос Армении” թերթում ամբողջությամբ, «Իրավունք» թերթում՝ շարադրանքով: Ես ընդամենը այդ կոչի վերջին պարբերությունը ընթերցեմ, որ բոլորիդ համար հասկանալի լինի՝ ինչո՞ւ ենք մենք հարկադրված այսօր էլ հիշեցնել, թե ինչով է պայմանավորված մեր դիրքորոշումը, որ բացառում ենք նախկին իշխանությունների հավակնությունները, այն է՝ ձևավորել միաս-

նական ընդդիմադիր բևեռ: Կոչը վերնագրված է եղել՝ «Необходима власть национального доверия»: Վերջին փարբերությունն են կարդում. «пораженческие призывы президента (L.Տեր-Պետրոսյանն այն ժամանակ նախագահ էր.- Ա.Գ.) еще более деморализуют населения, сеют в нем отчаяние и лишают народ оптимизма и национальной перспективы. Отныне очевидно, что власти превратились в антинациональную силу и каждый день существования администрации это угроза безопасности страны и может оказаться губительным для будущего нашей независимой государственности»: Խնդրում են հիմա լսեք՝ ի՞նչ գնահատական է տրված եղել. «В Армении мы имеем парализованную исполнительную власть, марионеточное Национальное Собрание и показатель Конституционный суд, которые не в состоянии руководить национальной жизнью». Ստորագրել են՝ Արտաշես Գեղամյան, Սոս Սարգսյան՝ ժողովրդական դերասան, ակադեմիկոս Սիլվա Կապուտիկյան, ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյան, ակադեմիկոս Դավիթ Սեդրակյան, ժողովրդական նկարիչ Սարգիս Մուրադյան, ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյան, ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյան, ակադեմիկոս Լենսեր Աղալովյան, ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյան, բանաստեղծ Ռազմիկ Դավոյան, արձակագիր Ռուբեն Յովսեփյան, արձակագիր Պերճ Ջեթունցյան, քաղաքագետ Յմայակ Յովհաննիսյան, արձակագիր, հրապարակախոս Արմեն Յովհաննիսյան, և էլի ստորագրություններ կան, վերջում՝ Ալեքսան Կարապետյան: Ի՞նչ, եթե 1998 թ. առնետավազքի մասնակիցները այժմ էլ հետ են էլի պտտվել, կարծում են, «Ազգային Միաբանությունը» հետ կկանգնի՞ իր տված գնահատականներից: Մենք երբեք ու երբեք հետ չենք կանգնել ու չենք կանգնի: Բայց հիմա, որ ՀՀԾ-ական թերթը բացում ես, խոսում են ինչ-որ ականներից, խոսում են ծախվածությունից: Ես այժմ ուղղակի հայտարարում եմ. 5 տարի շարունակ Ազգային ժողովի ամբիոնից ինչ ես ասել եմ իմ ելույթներում գործող վարչախմբի հասցեին, ինչ ասել եմ գործընկերներս

իրենց ելույթներում, հայտարարությունների ժամանակ, նույնը պլագիատ արեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Ուրեմն՝ ինչքան մեր ելույթների համար մեզ փող էին տվել, էդքան էլ հիմա իրեն են տվել, որ մեր ելույթները մասսայականացնում է: Ընդամենը երկու նոր տերմին է հրապարակ իջեցրել՝ «կազմաքանդել» և «ավազակապետություն»: Այ, օգտվելով առիթից, որ այսքան լրատվամիջոցներ կան, խոսքս ուղղում եմ Հայաստանի Հանրապետական կուսակցությանը, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, Հայ Հեղափոխական Դաշնակցությանը. արդյո՞ք ընդունում եք, որ ստանձնել եք ավազակապետության Ազգային ժողովի ղեկավարությունը, խոսքս ուղղում եմ ԱԺ ընդդիմադիր քաղաքական ուժերին՝ «Ժառանգությանը» և «Օրինաց երկրին», արդյո՞ք ընդունում եք, որ հանդիսանում եք ավազակապետության Ազգային ժողովի ընդդիմադիր քաղաքական խմբակցություններ: Խոսքս ուղղում եմ Ադվան Հովսեփյանին, արդյոք ինքն ընդունո՞ւմ է, որ ավազակապետության գլխավոր դատախազ է, արդարադատության նախարարին եմ խոսքս ուղղում, ինքն ընդունում է, որ ավազակապետության արդարադատության նախարար է և, վերջապես, Սահմանադրական դատարանի նախագահին էլ հարց եմ տալիս՝ ավազակապետության Սահմանադրական դատարանի առաքելությունը ո՞րն է:

Անցած չորս տարիների ընթացքում ես 21 ելույթ եմ ունեցել Ստրասբուրգում, Վիեննայում, ինչու չէ, մաև Ռոտերդամում, Վաշինգտոնում: Ես Հայաստանի Հանրապետության շահն եմ պաշտպանել և ոչ թե ավազակապետության: 2004 թ. ապրիլի 12-ի ջարդից հետո, ամիսներ անց, հանուն Հայաստանի Հանրապետության ես ու Շավարշ Քոչարյանը ամենակատաղի կռիվն ենք տվել Ստրասբուրգում, փառք Աստծո, ելույթները տպագրված կան: Հիշեցնեմ, որ այդ օրը նա ծեծված ԿՊԶ-ում էր, ես էլ էլեկտրաշոկի ենթարկված՝ հարկադրված էի լինել տանը, ուր խուզարկություն էր արվում հենց նույն Հայաստանի Հանրապետության վարչախմբի կողմից: Բայց, կրկնում եմ, միջազգային կառույցներում մշտապես պետության շահն եմ պահել

և ոչ թե Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի վարչակազմի: Բնականաբար, շատ ենք մտածել՝ ասե՞նք ամենը, թե ոչ, և եկել ենք այն համոզման, որ, այո, պետք է ասենք: Մի օրինակ բերեմ պատմության բազում փաստերից: Գեներալ-լեյտենանտ Անդրեյ Անդրեևիչ Վլասով. 1920 թ. Կարմիր բանակի սպա է եղել, հետո՝ գեներալ-լեյտենանտ: Հայրենական մեծ պատերազմի սկզբին Վոլխովի ռազմաճակատի հրամանատարն է եղել, 1942 թ. գերվել է, որից հետո ֆաշիստական Վերմախտի հետ համագործակցել է. մասնավորապես, սովետական ռազմագերիներից կազմավորել է բանակ, որ պայքարի Սովետական Միության դեմ: Մինչ ռազմաճակատ մեկնելը՝ Վլասովը գնացել է Փարիզ՝ Ռոմանովների թագավորական ընտանիքի վերջին շառավիղներից մեկի հետ հանդիպման, որ ստանա նրա օրհնանքը: Այն Ռոմանովների ժառանգի մոտ, որի ողջ տոհմին սովետական իշխանությունների հրամանով գնդակահարել էին: Ի՞նչ էք կարծում, անգամ նման ողբերգությունն ապրած, դառնություն տեսած մարդը՝ ի՞նչ է պատասխանել: Ասել է. «С предателями Родины я не общаюсь». Կրկնում են, նրա ողջ տոհմին են գնդակահարել: Պարոն Տեր-Պետրոսյան, եթե բան ունես ասելու՝ ասա Ռոբերտ Քոչարյանին, ասա Սերժ Սարգսյանին, գործող վարչախմբին, իրենց վարած արատավոր քաղաքականությանը, հայոց պետությունը հանգիստ թողեք: Հիմա որ թուրքն ու ազերին կանգնեն, ասեն՝ էս Գեղամյանը մեծ-մեծ խոսում էր Ստրասբուրգի ամբիոնից, նաև Ռոտերդամի ամբիոնից, պաշտպանածը ավազակապետություն չի՞, ի՞նչ են պատասխանելու: Ահա այս մտահոգությամբ է պայմանավորված, որ դիմում են խորհրդարանական իմ գործընկերների. գնահատական տվեք, հասկանանք, վերջը ո՞ւմ կողքին էք դուք, խոսքս ոչ թե այն մասին է՝ Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյանի տանդեմի կողմն են, թե չէ, այլ Հայաստանի Հանրապետության, մեր պետության կողմն են, թե հանուն անձնական վրեժխնդրության՝ պատրաստ են լռել կամ էլ հայեցողական դիրք ընդունել և հետևել, թե ինչպես են պետության հերը անիծում: Սրանով է պայմանավորված մեր ցասումն ու ջղայնությունը:

Չարք – Ի՞նչ եք քննարկել Սերժ Սարգսյանի հետ և որտե՞ղ է տեղի ունեցել հանդիպումը:

Ա.ԳԵՂԱՄՅԱՆ – Ասեմ, ոչ միայն Սերժ Սարգսյանի հետ եմ հանդիպել, այլ նաև Ռոբերտ Քոչարյանի, Վահան Յովհաննիսյանի, Արմեն Ռուստամյանի, քանիցս հանդիպել եմ Պարույր Չայրիկյանի, մեկ հանդիպում էր եղել է խմբակային՝ Արթուր Բաղդասարյանի, Ստեփան Դեմիրճյանի հետ, իսկ առաջին հանդիպումը եղել է Լևոն Տեր-Պետրոսյանի հետ՝ վերջինիս և Բաբկեն Արարքցյանի առաջարկով: Ես չեմ մերժել այդ առաջարկը, հանդիպել եմք Բաբկեն Արարքցյանենց տանը, նրա օջախում: Սակայն դրանից հետո ՀՀԾ-ական մամուլը չգրեց՝ եղ ինչի՞ օջախում և ոչ թե «Արմատում» կամ «Ազգային Միաբանության» գրասենյակում: Կնշանակի՝ օջախում հանդիպելուց, ՀՀԾ-ական մամուլի տրամաբանությամբ, փող տալ-առնելու խնդիրներ են լուծվում: Ռոբերտ Քոչարյանի հետ հանդիպել եմ նախագահի նստավայրում: Սերժ Սարգսյանի հետ էլ հանդիպել եմ, ճիշտ եք, Արա Միխայիլիչենց օջախում: Ըստ որում, դա ձեզ համար է գաղտնիք. հանդիպումից մեկ օր առաջ ես իմ բոլոր գործընկերներին իրազեկել եմ այդ մասին: Իսկ ի՞նչու օջախում, որովհետև Կառավարություն ես չէի գնա: Իսկ օջախում հանդիպելու համար պարզապես դեր է խաղացել այն, որ, այո, Արա Մինասյանը իմ վաղեմի բարեկամն է դեռ ուսանողական տարիներից. լինելով փայլուն ուսանող և գերազանցիկ, բժշկական ինստիտուտի ուսանողական գիտական ընկերության նախագահն էր ճիշտ այն ժամանակ, երբ ես կոմսոմոլի կենտկոմի ուսանողական բաժնի վարիչն էի: Ահա սա է գաղտնիքն ու բանալին: Հանդիպման ժամանակ քննարկել ենք նախևառաջ երկրում ստեղծված ծայր աստիճան մտահոգիչ վիճակը. ես դա ի նկատի ունեմ պառակտվածության առումով, ես ի նկատի ունեմ հակամարտություններով հղի զարգացումների առումով: Բնականաբար, ես իմ տեսակետներն եմ հայտնել, պարոն Սարգսյանը՝ իր: Կայացված առանցքային որոշումն այն է, որ ամենը պետք է անել, որ երկրում վիճակը հանկարծ չապակայունանա, և որ հան-

կարծ դրանից չօգտվեն մեր դարավոր թշնամիները, մեր հարևանները: Ահա սա է եղել մեր զրույցի առանցքը: Իրողությունն այն է, որ առաջիկայում էլ, այո, անհրաժեշտության դեպքում ես պարտավորված եմ կրկին հանդիպել նույն Լևոն Տեր-Պետրոսյանի, նույն Ռոբերտ Քոչարյանի, նույն Սերժ Սարգսյանի և քաղաքական ցանկացած լիդերի հետ: Սա այն դեպքն է, որի մասին վերևում պատմեցի. եթե Ռոմանովների ժառանգորդը իր Հայրենիքի համար վտանգավոր ժամանակներում, անգամ իսկ իր հարազատների սպանողներին՝ չի ուզում վնասել, եթե դրա գինը պետության կորուստն է, ապա ես ես գլխից խնդիր չունեմ հանկարծ այնպիսի գործողություն անել, որ երկրիս պետականությունը վտանգվի:

Հարգելի լրագրողներ, բոլորիդ հարցերին կպատասխանեմ, բայց քանի որ Տաթևիկը (խոսքը «Հայլուրի» լրագրող Տաթևիկ Նալբանդյանի մասին է.- *խմբ.*) ոտքի վրա է, տղամարդիկ նստած են, չստացվի, որ երկար ոտքի վրա կանգնած մնա, խոսքը տանք նրան:

Հարց – Պարոն Գեղամյան, Դուք դեռ մի քանի ամիս առաջ մի կանխատեսում արեցիք, որ շատ արագ իրականացավ. դեռ նույնիսկ Լևոն Տեր-Պետրոսյանի տեսակետի մասին հայտնի չէր դարձել, բայց ասացիք, որ եթե նախագահի որևէ թեկնածուի տեսակետները Ղարաբաղի հարցում նախընտրելի լինեն թուրք-ազերիների համար, մի քանի միլիոն դոլար կնետեն՝ նրան նախագահ դարձնելու համար: Եվ շատ չանցած՝ թուրքական մամուլը հենց այդ փաստն էր քննարկում, և իսկապես ինչ-որ միլիոններ էր առաջարկում ՀՀ նախագահի թեկնածուներից մեկին: Այսինքն՝ սա իրատեսություն^օն էր, կանխատեսում էր Ձեր կողմից, ինչքանո՞վ արդարացան Ձեր կանխատեսումները և մի հետաքրքիր բան. ի՞նչ եք կարծում, իրենք համաձայնեցրել են իրենց պատրաստակամությունը պաշտպանելու Լևոն Տեր-Պետրոսյանին:

Ա.Գեղամյան – Նախ, ասեմ, որ այդ հարցում թուրքական քաղաքականության մեջ, կրկնում եմ, քաղաքականության մեջ, և ոչ մի նոր բան ես չեմ տեսնում, որովհետև իմ առաջին երկու, ամենա-

ծանր ելույթներից հետո, խոսքս Ստրասբուրգում և Վիեննայում հնչեցրած ելույթներին մասին է, կողքից կային մարդիկ, ովքեր փորձում էին հեռվից գալով ինձ գլխի գցել, որ պատրաստ եմ ինձ շահագրգռել, միայն թե ելույթ չունենամ թուրք-ազերիների քաղաքականության դեմ: Այո, փորձում էին շահագրգռել, քանզի հայտնի է, որ թուրքական դիվանագիտության գինանոցի գործուն ձևերից է քաղաքական հակառակորդին կաշառել: Ահա սա է խնդիրը: Եվ, այսօր, բանակցային սեղանին դրված եմ շատ լուրջ հարցեր, ոչ միայն Յայաստան-Թուրքիա սահմանի բացման հարցը, այլև Յայաստանի Յանրապետության ռազմաքաղաքական ուղղվածության աշխարհաքաղաքական փոփոխության հարցը: Չմոռանամ ասել, որ մեր տարածաշրջանում էլ փափագում են Թուրքիային տեսնել, իրենց տերմինաբանությամբ ասած, որպես կուրատոր: Եվ պատահական չէ, որ Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը, իր ընտրությունից մեկ ամիս չանցած, մեծ շուքով գնաց Թբիլիսի՝ Իլիամ Ալիևի և Միխայիլ Սահակաշվիլու հետ մասնակցելու Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթգծի շինարարության բացման արարողությանը:

Ինչ վերաբերում է ձեր այդ դիտարկմանը, ապա այն խիստ մտահոգիչ է, Տաթևիկ, և մենք բոլորս պարտավոր ենք այս հարցում անել այն ամենը, որ այդ բիծը չկպնի Լևոն Տեր-Պետրոսյանին: Այո, մենք բոլորս ենք պարտավոր՝ այն պարզ պատճառով, որ վաղը, մյուս օրը 1992-1994 թթ. Արցախի ազատամարտը չպայմանավորվի այս կամ այն ղեկավարի անձով: Առավել ևս չմեկնաբանվի այնպես, որ երկրի նախագահը, իբր, հարկադրված է եղել պատերազմել Ադրբեջանի հետ: Ցավոք, հիմա նման մեկնաբանությունների համար պարարտ հող կա: Մենք այդ հարցում պետք է, այո, կարողանանք պահպանել Տեր-Պետրոսյանին և փորձենք նրան զերծ պահել այնպիսի գործողություններից, որոնք կհիմնավորեն թուրքերի և ազերիների հետ պայմանավորվածությունների մասին շրջող լուրերը: Եվ, վերջապես, չի կարելի քաղաքական դաշտ մտնել ու բոլոր այն մարդկանց, ով-

քեր չեն բաժանում, չեն կիսում քո տեսակետները «դավաճան» բառով պիտակավորել: Չի կարելի այդպիսի բան անել: Ու հարկ է նաև հասկանանք ու գիտակցենք մի բան. «Ազգային Միաբանությունը» հավատարիմ է իր անվանմանը: Բովանդակային առումով հավատարիմ է, մենք խնդիր չունենք այսօր ավերածություններ անել իշխանական կամ նախկին իշխանությունների դաշտում: Քանիցս խնդրել, անգամ «Երկիր Մեդիայի» եթերից: Եթե այստեղ կան լրագրողներ, ովքեր թերահավատորեն են ընդունում ասածներս, ապա թող իմ վերջին հարցազրույցը Վախթանգի հետ նայեն: «Երկիր Մեդիայի» եթերից դիմեցի նրանց, ասացի՝ խնդրում եմ ձեզ, կոռեկտության սահմանները մի խախտեք: Մի խախտեք, որ հարկադրված չլինենք ավերածություններ անել ձեր դաշտում: Այն, ինչ քիչ առաջ ասվեց նախկին իշխանությունների հասցեին, պարզապես շատ և շատ մեղմ գնահատականներ են: Այո, մեղմ գնահատականներ են և, Աստված մի արասցե, որ մեր այս բարեկամական նախազգուշացումից հետո էլի շարունակեն իրենց այդ վարքագիծը դրսևորել: Եթե շարունակեն, ուրեմն, հարկադրված կլինենք եզրակացնել, որ խնդիր է դրված ոչ թե մասնակցելու նախագահական ընտրություններին, այլ դրված է երկիրն ապակայունացնելու խնդիր: Խնդիր է դրված պայմաններ ստեղծել, որոնք միջազգային հանրությանը՝ ի դեմս եվրոպական և եվրո-ամերիկյան համապատասխան կառույցների, հնարավորություն կընձեռեն միջամտել Հայաստանի Հանրապետության ներքին գործերին: Եվ պատահական չէ, որ նամակով, ուղերձով դիմում են Թերի Դևիսին, դիմում են Ռենե վան դեր Լինդենին, ԵԱՀԿ դեկավարությանը՝ փորձելով նրանց նախագահական առաջիկա ընտրությունների անմիջական մասնակիցը դարձնել: Դիմում են Ճիշտ այն նույն մարդկանց, որոնց պետք էր մայիսի 12-ի ԱԺ-ի ընտրությունները համարել մի քայլ առաջ և գովաբանել իշխանություններին, որը և արեցին: Դիմում են Ճիշտ այն նույն մարդկանց, մասնավորապես նույն Թերի Դևիսին, Ռենե վան դեր Լինդենին, ովքեր իրենց հրապարակային բոլոր ելույթներում հայտարարել են, որ ճա-

նաչում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Ես գլխից նրանց դիմելով, նրանց արբիտր նշանակելով, հնարավորություն են ընձեռում, որ վաղը, մյուս օրը այդ նույն մարդիկ Ղարաբաղի հարցում առաջ տանեն այն գիծը, որը միանգամայն կործանարար կլինի Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի հայամասու կարգավորման ճանապարհին:

Հարց – Բայց վերջին հանդիպման ընթացքում նշեցիք, որ պատրաստ եք համագործակցել իշխանության հետ: Այդ կարծիքը ինչն^օվ եք հիմնավորում:

Ա.Գեղամյան – Միանգամայն ճիշտ եք, ես ոչ թե նրանց ներում են, այլ ուզում եմ զերծ պահել մեծագույն փորձանքներից, բարեկամական քայլ են անում, ընդառաջ են գնում: Չէ՞ որ կործանարար այն ճանապարհը, որն ընտրել են այդ մարդիկ, եթե մենք էլ հանկարծ դրան ծափ տանք, ավելի մեծ փորձանքների կբերի նրանց: Ես բարեկամական քայլ են անում և զարմանում եմ, որ բարեկամական այդ ակնհայտ ժեստը, որ դրսևորվում է «Ազգային Միաբանություն կուսակցության» կողմից, այլ մեկնաբանություն է ստանում: Այո, հիմա էլ կրկնում եմ. ես պատրաստ եմ հանուն Հայաստանի Հանրապետության, հանուն ազգային միաբանության շարունակել աշխատել թե՛ նախորդ, թե՛ գործող իշխանությունների հետ, միայն թե հասարակությանը, հանրապետության ժողովրդին զերծ պահենք էլ ավելի պառակտվածությունից, զերծ պահենք երկիրը հնարավոր ապակայունությունից:

Հարց – Պարոն Գեղամյան, ինչպիսի^օն են Ձեր հնարավորությունները նախազահական առաջիկա ընտրություններում:

Ա.Գեղամյան – Կլինեն ճիշտ այնպիսին, ինչպիսին կլինեն մեր ժողովրդի հնարավորություններն ազատ կամարտահայտվելիս:

Հարց – Հանրապետության նախազահի հետ հանդիպումը Ձեր նախաձեռնությունն էր, թե՞ նախազահի նստավայրի:

Ա.Գեղամյան – Հանրապետության նախազահի հետ հանդիպումը պայմանավորված էր սեպտեմբերի 7-ին «Ազգային Միաբանություն

կուսակցության» հնչեցրած առաջարկով, որ անհրաժեշտ է, որ քաղաքական բոլոր ուժերը, լինի իշխանություն, թե ընդդիմություն, հանդիպեն և քննարկեն համայն հայության ու հայոց պետականությանը վերաբերող օրախնդիր բոլոր հարցերը: Մեր այդ հայտարարությանը հանրապետության նախագահը դրական է արձագանքել, և մենք հրավերն ընդունել ենք:

Չարց – Ձեր կարծիքով, ո՞րն է առավել վտանգավոր՝ նախկին իշխանությունների իշխանության գալը, թե՞ ներկայիս իշխանությունների վերարտադրումը:

Ա.Գեղամյան – Առավել վտանգավոր է նախկին և գործող իշխանությունների առճակատումը, որի ակնատեսն ենք մենք՝ դրանից բխող կործանարար հետևանքներով: Եթե մենք հարցը դիտարկեինք այդ հարթության վրա, ապա այս կամ այն կողմը կընտրեինք, և ոչ թե «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունն այսօր որոշում կկայացներ նախագահական ընտրություններին սեփական թեկնածուով հանդես գալու մասին: Մենք գերխնդիր ենք դնում ամբողջ քարոզարշավն օգտագործել՝ այն ծառայեցնելով մեկ նպատակի. երկիրը զերծ պահել հետագա առճակատումից, զերծ պահել քաղաքացիական բախումներից, զերծ պահել մեր ժողովրդին հուսահատության գիրկը նետվելուց, որովհետև ազգաբնակչության մի որոշակի մաս չի ընդունում գործող իշխանություններին, որոշակի մաս էլ չի ընդունում նախկին իշխանություններին: Եվ հիմա երկու կողմից ստիպում ու պարտադրում են մարդկանց, որ ընտրեն կամ սևին, կամ սպիտակին, ինչն անթույլատրելի է մեզ համար: Եվ, վերջապես, մենք գիտակցում ենք, որ ստեղծված իրավիճակում, երբ ԱԺ-ում մեծամասնությունը կազմում են Հանրապետական կուսակցությունը, «Բարգավաճ Հայաստանը», Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, երբ բարեփոխված Սահմանադրությամբ նրանց առաջարկությամբ է նշանակվում վարչապետ, մենք պարտավոր ենք անել ամենը, որ եթե իրենք, այո, ընտրում են բարեփոխումների ճանապարհը, ինչի մասին հայտարարում են, ապա դրանք անդառնալի

լինեն: Իսկ անդառնալի լինելու մի ճանապարհ կա, որ համրապետության նախագահը չլինի ոչ գործող և ոչ էլ նախկին իշխանություններից, որ նախագահը ինքը կարողանա հակակշիռ լինել այն մարդկանց, ովքեր այսօր էլ դարանակալած են կամ իշխանության մեջ, կամ կանգնած են նրանց թիկունքում ու չեն թողնում, որ իրականացվեն բարեփոխումները, չեն թողնում, որ պայքար իրականացվի կաշառակերության, կոռուպցիայի դեմ: Շատ վտանգավոր երևույթներ, որոնք կարող են կործանարար հետևանքներ ունենալ հայոց պետականության համար:

Չարք– Պարոն Գեղամյան, վերջին համաժողովի ժամանակ Դուք հավանություն տվեցիք Սերժ Սարգսյանի, մասնավորապես, սոցիալական քաղաքականությանը: Այդ դեպքում ո՞նց եք պատկերացնում սոցիալական հարթությունում պայքարը Սերժ Սարգսյանի հետ:

Ա.Գեղամյան – Ես հավանություն չեմ տվել այդ քաղաքականությանը, ես արձանագրել եմ միայն փաստը, որ բյուջեի ծախսային մասը ավելանալու է 30%-ով՝ կազմելով 2,5 մլրդ դոլար: Թոշակներն են ավելանալու շուրջ 60%-ով, այն էլ՝ ոչ բոլոր 500 հազար թոշակառուներինը, այլ՝ 300 հազարինը: Դրանից հետո՝ ստորակետ, ինտոնացիայունս էլ այդ ստորակետը կար, ասել եմ. «Բա որ ասում էինք՝ այդ ամենը իրագործելու համար հնարավորություն կա, հիմա ի՞նչ, որ մեր ասածը կյանքի են կոչում, դրա համար տխրենք կամ էլ ասենք՝ վատ գործ ե՞մ անում»: Ահա թե ինչ եմ ասել ես: Եթե ձեզ պետք էր, որ հարցի մեջ նաև ձեր մեկնաբանությունը լինի, դա ձեզ հաջողվեց: Բայց իրականությունն այն է, ինչ ասացի: Սիրով կարող եմ կոնֆերանսում ունեցած իմ ելույթի տեսահոլովակը տրամադրել ձեզ և կտեսնեք՝ բառ առ բառ կրկնեցի ինչ ասել էի: Եթե լավ գործ արվի, անկախ նրանից՝ ում կողմից է իրականացվում, եթե այդ գործի բարերար պտուղները զգալու է մեր ժողովուրդը, ինչ խոսք, դա ինձ ուրախություն է պատճառելու: Ուրիշ բան, որ մեր մատնանշած ճանապարհը ոչ թե եղածն ավելի բարելավելու բանալի է իր մեջ պարունակում, այլ ավելի՛ն՝ այն ճեղքում կատարելու թեզեր է մեջտեղ բերում, ճեղքում իրա-

կանացնելու բանալիներն է հուշում: Ահա սա է խնդիրը:

Չարք – Կառավարությանը պլագիատի մեջ չե՞ք մեղադրելու Ձեր «Չակաճգնաժամային ծրագիրը» օգտագործելու համար:

Ա.Գեղամյան – Կառավարությանը պլագիատի մեջ մեղադրելու անհրաժեշտություն չկա: Ասեմ՝ ինչո՞ւ. այն պարզ պատճառով, որ ես օգտվում եմ մակրոտնտեսության այսօրվա ամենաժամանակակից տեսություններից՝ լինի դա Միլտոն Ֆրիդմանը, Ջոն Մեյնարդ Թեյնսը (թեպետ նրանց տեսությունները արմատապես տարբեր մոտեցումների վրա են հիմնված), լինի Ջեֆրի Սաքսը, Ստենլի Ֆիշերը լինի, Ջոզեֆ Ստիգլիցը լինի, կարող եմ մի կես ժամ էլ թվարկել համրահայտ այլ հեղինակների: Բայց դա չի բացառում, որ այդ նույն հեղինակներից կարող է օգտվել նաև Կառավարությունը: Այ, եթե Ջոզեֆ Ստիգլիցը Կառավարությանը և Գեղամյանին մեղադրի, որ պլագիատ ենք արել, իր դրույթները մեր ծրագրում նշել ենք, բայց անունը չենք տվել, ճիշտ կանի: Հասկացա՞մք իրար: Չարքը մեկնաբանության մեջ է: Խնդիրը հետևյալն է. «Ազգային Միաբանություն կուսակցությունը» հրատարակել է իր «Չակաճգնաժամային ծրագիրը»: Եթե այդ ծրագրի մայր սկզբունքներն ընդունվում են և դրվում են որպես պետական ծրագրի բաղկացուցիչ մաս, բնականաբար, այդ պայմաններում մենք պարտավոր ենք, այո, օգնել իրենց: Եվ ոչ թե ֆրագմենտար ասել, որ այս կամ այն մոտեցումը, այո, վատ մոտեցում չէ:

Չարք – Ձեզ հաջողություն մաղթելով՝ ուզում եմ հարց տալ: Եթե 2-րդ փուլում, այնուամենայնիվ, հայտնվեն Լևոն Տեր-Պետրոսյանն ու Սերժ Սարգսյանը, ո՞ւմ եք հակված Ձեր ընտրազանգվածին կողմնորոշելու՝ նախկին, թե ներկա իշխանություններին:

Ա.Գեղամյան – Ես բացառում եմ, որ 2-րդ փուլում կարող են հայտնվել Սերժ Սարգսյանն ու Լևոն Տեր-Պետրոսյանը: Իսկ ինչ ես բացառում եմ, բնականաբար, դրա շուրջ եզրակացություններ և վերլուծություններ չեն անում, պարապ զբաղմունք կլինի: Կարծիք կա, որ 2-րդ փուլում մեր ամբողջ ակտիվը և համակիրները հնարավորություն կունենան պաշտպանելու Արտաշես Գեղամյանին:

Հարց – Առաջիկա ընտրություններին քաղաքական ո՞ր ուժի օժանդակությունն եք սկսնկալում: Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ Արցախյան պատերազմը սկսվել է Շուշիի գրավումից:

Ա.Գեղամյան – Ձեր առաջին հարցին պատասխանեմ. մենք ապավինում ենք ոչ թե այս կամ այն քաղաքական ուժի սատարմանը, մենք ապավինում ենք ժողովրդի ամենալայն զանգվածների աջակցությանը: Այդ պարագայում, եթե այս կամ այն քաղաքական ուժը կհամարի, որ մեր ծրագրային հիմնադրույթները հոգեհարազատ են նաև իրենց համար և եթե կհայտարարի այդ սատարման մասին, ըստ որում, առանց վերապահումների՝ ընդունելուն մեր տված գնահատականները թե՛ գործող իշխանություններին, թե՛ նախկին, մենք միայն շնորհակալ կլինենք:

Ինչ վերաբերում է պատերազմի սկսմանը՝ Շուշիի գրավմամբ մայիսի 8-9-ին, ապա դա այդպես չէ: Կարծում եմ, որ դա պարզապես ուրիշ ենթատեքստով է ասված եղել, իսկ եթե ուրիշ ենթատեքստով չէ, այլ ուղղակի հենց դա էլ ուզեցել են ասել, ինչ խոսք, ես դա մերժում եմ: Որովհետև դեռ այն ժամանակ, երբ Խորհրդային Միությունը վերջնականապես չէր փլուզվել, կային պատերազմական գործողություններ հիշեցնող դրսևորումներ հատկապես Գետաշենի ենթաշրջանում, Շահումյանի շրջանում և Ասկերանի, Ոսկեվազի: Ասել կուզի, որ պատերազմական գործողությունները սկսված էին դեռ այն ժամանակ, որին հաջորդեց, եթե հիշում եք, տխրահռչակ «Օղակ» օպերացիան: Այնպես որ, գտնում եմ, դա, այնուամենայնիվ, կոպիտ վրիպում է, որը թույլ տվեց առաջին նախագահը, և, թվում էր, որ հետո այդ հարցի կապակցությամբ անպայմանորեն պարզաբանումներ կհնչեն, բայց որը, ավա՛ղ, չհնչեց:

Հարց – Պարոն Գեղամյան, չե՞ք կարծում, որ, քննադատելով նախկին իշխանություններին, նպաստում եք Ս. Սարգսյանին, մինչդեռ նա Ձեր հասցեին, մեղմ ասած, այնքան էլ «սիրալիր» չի արտահայտվել:

Ա.Գեղամյան – Արման ջան, ո՞նց ես, ո՞նց: Արման ջան, քո լավը

գիտե՞ս որն է, որ դու ուզում ես Հռոմի Պապից ավելի կաթոլիկ լինել, ուզում ես իմ առջև ինձնից ավելի թասիբով երևա: Արխային, ինքն իմ հասցեին է բաներ ասել, ես էլ՝ իր: Դրանցից, կարծում եմ, ոչ ինքն է բավարարված, ոչ էլ՝ ես: Ինչ վերաբերում է նրան, որ չսատարելով Լևոն Տեր-Պետրոսյանին՝ դրանով իսկ սատարում եմ Սերժ Սարգսյանին. չարաչար սխալվում ես, ես սատարում եմ «Ազգային Միաբանության» այն ծրագրերը և այն գաղափարները, որոնցով հիմնվել է կուսակցությունը սրանից դեռ 10 տարի առաջ, և որոնցով մենք առաջնորդվելու ենք: Ստեղծված իրավիճակում չի կարելի ժողովրդին նետել մի այնպիսի կացության մեջ, որ նա կարողանա ընտրություն կատարել միմիայն սևի ու սպիտակի միջև: Եվ եթե դուք ուշադիր լսեիք, մասնավորապես, Գագիկ Թադևոսյանի խոսքը, այնտեղ կար հետևյալ միտքը՝ մենք չենք պայքարել, որ մրից մրջուրն ընկնենք...

Հարց – Պարոն Գեղամյան, բա ինչո՞ւ նախկինում ժխտում էիք, որ հանդիպել եք Սերժ Սարգսյանի հետ:

Ա.Գեղամյան – Խնդրո՞ւ հարցի շուրջ հեռախոսով ինձ ուղղված լրագրողների հարցերին, այն էլ, երբ կողքից աղջիկների քչքչոց է լսվում, չեմ պատասխանում: Ժխտելու խնդիր չկա, որովհետև հանդիպումից 1-2 օր առաջ մերոնց ասել եմ, որ հարցնեն, եթե լուրջ մարդ հարցնի, ասեք, այո, հանդիպել են: Կրկնում եմ, անհրաժեշտության դեպքում, հանուն Հայաստանի Հանրապետության կայունության, քաղաքական դաշտի ցանկացած ուժի հետ պատրաստ եմ հանդիպել, ցանկացած ուժի հետ: Ահա սա է մեր դիրքորոշումը: Եվ այդ դիրքորոշումը պայմանավորված է այն խոր վերլուծություններով, որոնք կատարվում են մեր կողմից, խոսքս, մասնավորապես, տարածաշրջանային այն լուրջ մարտահրավերների մասին է, որի ակամատեսն ենք մենք:

Հարց – Պարոն Գեղամյան, կասեք, թե Դուք ե՞րբ եք հանդիպել նախագահի հետ:

Ա.Գեղամյան – Գիտեք, այդ հանդիպումը օրացույցիս կարմիր

օրերից չի եղել, որ միանգամից հիշեմ, վերջերս, այո, վերջերս:

Հարց – Պարոն Գեղամյան, եթե ընդդիմությունն ազատ արտահայտվելու հնարավորություն չունի, խոսքի ազատություն չկա, կարելի՞ է արդյոք ասել, որ Հայաստանի Հանրապետությունում ընդդիմադիր մամուլ չկա:

Ա.Գեղամյան – Հայաստանի Հանրապետությունում խոսքի ազատությունը կրում է մերթընդմերթ բնույթ: Հիմա այնպես է ստացվել, որ «Ազգային Միաբանություն կուսակցության» որդեգրած քաղաքականությունը, որն ուղղված է հայոց պետականության ամրապնդմանը, համընկել է իշխանության կողմից վարվող քաղաքականության որոշակի սեգմենտի հետ: Դա էլ պատճառ է դարձել, որ հիմա «Ազգային Միաբանության» համար որոշակիորեն բացել են առանձին հեռուստաալիքների դռները: Տա Աստված, որ սա անդառնալի պրոցես լինի, տա Աստված, որ այս պրոցեսը շարունակական բնույթ կրի և տա Աստված, որ, մասնավորապես, մեր կոնֆերանսի նյութերը առաջիկայում կարողանանք հեռուստաալիքներով, վճարովի հիմունքներով, ներկայացնել ժողովրդի դատին:

Հարց – Պարոն Գեղամյան, Դուք հայտարարել եք ազգը միաբանելու մասին, երբ 2003 թ. համախմբվում էին Ստեփան Դեմիրճյանի շուրջ, իսկ հիմա էլ Լևոն Տեր-Պետրոսյանի շուրջ՝ չեք պաշտպանում:

Ա.Գեղամյան – Ասա, Արման ջան, ասած ռուսի՝ а почему я так тебя люблю: Հետաքրքիրն այն է, որ ես գիտեի՝ Արմանը էդ հարցը չի կարող չտալ: Իրոք, գիտեի և հետո բերեցի 2003 թ. փետրվարի 19-ին ՀՀ նախագահի ընդդիմադիր ճամբարից թեկնածուների էդ չարաբաստիկ հայտարարության տեքստը: Հայտարարության տեքստում, որի տակ ստորագրել են պարոններ Դեմիրճյանը, Արամ Կարապետյանը, Արամ Գասպարի Սարգսյանը, Գառնիկ Մարգարյանը, Վազգեն Մանուկյանը և ես, ընտրությունների օրը՝ ժամը 17.00-ին, ուղղակիորեն հայտարարվել էր, որ մենք չենք ճանաչելու ընտրության արդյունքները: Դեռ քվեատուփերը բացված չեն եղել, դեռ չգիտեինք՝ ով ինչքան ձայն է ստացել: Բայց, ավա՛ղ: Դրանից հետո, անհասկանա-

լի պատճառներով, այսինքն, հիմա լավ էլ հասկանալի է, մեկ էլ հանկարծ ասում են՝ գնում ենք 2-րդ փուլ: Դա առաջին: Երկրորդ. բոլորի համար ակնհայտ էր, որ 2-րդ փուլ անցածների մեջ եղել է նաև Արտաշես Գեղամյանը: Դա անժխտելի փաստ էր: Այդ նույն ՀՀԾ-ական մամուլը քանիցս գրում էր, որ գործող նախագահի ռեյտինգը 3-5%-ից չի անցնում, ես 17,6 % եմ հավաքել: Այդ օրերին Սևանի ձկնորսները սիգի հետ բռնում էին նաև քվեաթերթիկներ, որոնք եղել են Գեղամյանի օգտին քվեարկված: Այսինքն, այո, ընտրությունների ընթացքում մեծ խարդավանք է տեղի ունեցել. ի սկզբանե, իմանալով, որ 1-ին փուլի արդյունքները կեղծված են, կարողացել են ոմանց համոզել, որ գնան 2-րդ փուլ՝ դրանով իսկ վավերացնելով 1-ին փուլի կեղծված արդյունքները: Ահա սա է ճշմարտությունը: Օրը կգա, այս ամենի հետևում կանգնածներն անպայմանորեն կբացահայտվեն:

Ընդդիմությունն այսօր չի համախմբվել Լևոն Տեր-Պետրոսյանի շուրջ, պարզապես մեկ-երկու կուսակցություններից տրոհված մի շարք կուսակցություններ են հայտարարել նրան սատարելու մասին: Եթե վաղը, մյուս օրը ես կամենամ՝ «Ազգային Միաբանությունը» կդառնա 17 կուսակցություն: Մուրադխանյան Սարգիսը առանձին կուսակցություն կհիմնի, Կորյուն Առաքելյանը՝ առանձին, Լևոն Հակոբիչ Գալստյանը ձեռի հետ 2 հատ կհիմնի: Բոլորը կհիմնեն, հետո բոլորին կհավաքենք, կասենք՝ տասնը քանի կուսակցություն է մեզ սատարում: Մենք իրար հասկացա՞նք, մի հատ թափով ԼԱԶ լինի՝ Լևոնին սատարող բոլոր կուսակցությունները կտեղավորվեն մեջը: Ինչի՞ մասին է խոսքը, և ինչի՞ եք ժողովրդին թյուրիմացության մեջ գցում: Դրել է թեկնածությունը, իր վրա վստահ է, ապա ինչո՞ւ է այդքան մրմռում, որ ես իրեն չեմ միացել: Չնայած ինձ դրանով գովազդում է, նա հասկանում է, որ ուժը մեր կողմն է, նա հասկանում է, որ արդարությունը և ճշմարտությունը մեր կողմն է, դրա համար ինքն ու տղերքը էդքան նեղվում են: Ինչի՞ են նեղվում, ես իմ ճշմարտությունն եմ ասում: Մինչև այսօր իր անունը բացարձակապես ոչ

մի տեղ չէր եղել, որ բացասական երանգով տայի: Նեղվեցին, վառվեցին, նյարդերը տեղի տվեցին, էլ բան ու գործ չունեն, իրենց որ թերթը բացում ես, գրում են՝ Գեղամյանի մասին էս մեկին հարցրեցին՝ էս ասաց, էն մեկն էլ՝ էս ասաց: Ուրեմն, մարդկանց են վարձում, ասում են՝ գնացե՛ք ու երթուղային տաքսիների մեջ, ճանապարհին խոսակցություն սկսե՛ք քաղաքականությունից, դեսից դենից, վերջում էլ ասե՛ք՝ էս ինչի՞ դավաճանեցին, չմիացան Լևոն Տեր-Պետրոսյանին: Ե, մեքենաներում մի երկու հոգի էլ մերոնք են եղել, սիրուն, խելոք հետևել են, տեսել են, թե ո՞ր գրասենյակն են մտել և ումից՝ ի՞նչքան փող են ստացել: Ե, եթե չենք ասում, դա չի նշանակում՝ չգիտենք, պարզապես չենք ուզում: Սա ուղղակի ընդունեք որպես բարեկամական նախազգուշացում նախկին իշխանություններին: Թող թարգեն իրենց այդ արատավոր քաղաքականությունը, դա լավ բանի չի հանգեցնի: Ասելիք այնքա՛ն կա, որ էլ ասելու չէ, հեչ որ չէ, Լևոն Յակոբի Գալստյանը իր հուշերը կկարդա, որը գրավոր՝ գրքով հրատարակել է: Յեչ որ չէ, ես մարդ կիրավիրեմ, հենց այս նույն սենյակում կասի՝ ով ինչքան փող է տվել, որ ուն գնդակահարեն: Թող չխոսեցնեն մեզ: Եթե չենք ասում, չենք ուզում, որ վաղը, մյուս օրը մեր ասածը դրսի ուժերը օգտագործեն մեր պետության դեմ:

Յարց – Պարոն Գեղամյան, Ձեր ձեռքի տակի բլոկնոտն ի՞նչ է: Կարո՞ղ է աֆորիզմներ են այնտեղ գրված:

Ա.Գեղամյան – Էս բլոկնոտից որոշ բաներ կարդամ հա՞, ձեզ համար: Սա բացարձակապես աֆորիզմների ժողովածու չէ, ես դրա 40 քանի հատորը ունեմ՝ աշխարհի տարբեր երկրներում տպված: Եթե աշխարհաքաղաքական այս կամ այն վերլուծությունն են կարդում, իսկ իմ աշխատանքային օրը սկսվում է, որքան էլ տարօրինակ լինի, երեկոյան 10-ից մինչև լուսադեմը՝ 4-ը, ինտերնետում, մամուլում և ուշագրավ ինչ-որ փաստերի են հանդիպում, որոնք հետաքրքրում են ինձ, մասնավորապես, մեր տարածաշրջանին, ինչու չէ, նաև համաշխարհային քաղաքականությանը վերաբերող, ես դրանք անպայման գրի են առնում: Գրի են առնում, որ վաղը, մյուս օրը, եթե օգ-

տագործելու լինեն, հարցնեն՝ իսկ սկզբնաղբյուրը ո՞րն է, ես էլ պատասխանեմ: Սասնավորապես, դիցուք, «Գարդիան» կամ «Ֆայնեյշնլ թայմս» թերթի էսինչ համարի, էսինչ հրապարակումն է: Եվ այստեղ, բնականաբար, կան նաև շատ հետաքրքիր վերլուծություններ, շատ հետաքրքիր: Թուրքիա-Ռուսաստան: Էստեղ, բացարձակապես, սև ցուցակ չկա: Շատ հետաքրքիր վերլուծություններ կան...

Չարց – Պարոն Գեղամյան, Լևոն Տեր-Պետրոսյանն Արարքցյանի տանը Ձեզ փո՞ղ է առաջարկել:

Ա.Գեղամյան – Այո, ասաց աշխարհիս հարստությունը ոտքերիդ տակ դնեն, միայն թե սատարի ինձ:

Չարց – Ընտրական գործերում Ղարաբաղի հիմնահարցի շահարկումներից և հատկապես արտաքին ազդեցություններից ու, մասնավորապես, մեր մոտիկ հարևանների ազդեցություններից խուսափելու համար, այնուամենայնիվ, ի՞նչ եք առաջարկում:

Ա.Գեղամյան – Շատ տեղին հարց է: Ես առաջարկել էի, և դա մեր հայտարարության մեջ նշված կար, հետագայում էլ «Եվրապոլիսի»՝ Արթուր Սահակյանի հետ հարցազրույցի մեջ կար, որ նախագահական ընտրությունների բոլոր մասնակիցները, հանրապետության նախագահի բոլոր թեկնածուները պետք է ստորագրեն կոնսենսուսային փաստաթղթի տակ: Փաստաթղթում մատնանշված կլինեն Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծմանն ուղղված սկզբունքային այն մոտեցումները, որոնք զերծ կպահեն օտարերկրյա ուժի կենտրոններին միջամտելու մեր ներքաղաքական գործընթացներին:

Չարց – Այդպիսի փաստաթուղթ արդեն ստորագրված կար:

Ա.Գեղամյան – Միանգամայն ճիշտ եք, 1999 թ. գարնանը: Այդ փաստաթղթի տակ կա նաև «Ազգային Միաբանության» ստորագրությունը, ԱԺՄ-ի ստորագրությունը, ԶՅԴ-ի, Հանրապետականի, պառլամենտական բոլոր խմբակցությունները, լինեն դա դիմադիր, թե ընդդիմադիր, ստորագրել են դրա տակ: Նախագահական առա-

ջիկա ընտրություններին, քանի որ մասնակցելու են նաև մարդիկ, ովքեր այդ փաստաթղթի տակ չեն ստորագրել, ուստի այդ փաստաթուղթն իր արդիականությունը չի կորցրել: Դա է մեր մոտեցումը:

Հարց – Պարոն Գեղամյան, ասում են նաև, որ Ղարաբաղի հարցը իշխանություններն են շահարկում: Մեր հանրությունը արդյոք պե՞տք է իմանա այս կամ այն թեկնածուի մոտեցումը Ղարաբաղի հիմնահարցին:

Ա.Գեղամյան – Շատ տեղին է հարցը, տեսե՞ք՝ ի՞նչ իրավիճակ է ստեղծվել: Քաղաքական ցանկացած ուժ, որը հայտնում է իր տեսակետները այդ հարցի մասին և դրանք համահունչ են լինելուն կամ գործող իշխանությունների, կամ նախկին իշխանությունների մոտեցումներին, երկու կողմի մամուլն էլ այլակարծություն հայտնած քաղաքական ուժին մեղադրում է շահարկումների մեջ: Այ, սա է խնդիրը: Մինչդեռ ԼՂՀ-ի հիմնահարցը համապետական, բախտորոշ հարց է: Եվ այստեղ մենք պարտավոր ենք որդեգրել միասնական մոտեցում՝ ելնելով ստեղծված իրավիճակից, գիտակցելով վերահաս վտանգները, հասկանալով, որ, ցավոք, մեր այդ արդարացի պայքարում շրջապատված և շրջափակված ենք ոչ բարեկամաբար տրամադրված երկրների ու նրանց թիկունքում կանգնած ուժի միջազգային կենտրոնների կողմից: Մասնավորապես, Եվրախորհրդի, պատահական չէր ասացի՝ Գլխավոր քարտուղար և Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Թերի Դևիսը, Ռեներ վան դեր Լինդենը: Վերջիններս քանիցս հայտարարել են Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասին: Անգամ իսկ ԱՊՀ-ի անդամ մեր ռազմաքաղաքական դաշնակից Ղազախստանը, ի դեմս պրեզիդենտ Նուրսուլթան Նազարբաևի, քանիցս նույնն ասել է, այսինքն, որ ճանաչում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: ԵԱՀԿ-ն է քանիցս հայտարարել նույն բանը... Եթե այս ամենը դու գիտես, եթե գիտակցում ես դրանց հետևանքները ինչպիսին կարող են լինել, և հիմա ընտրում ես բախտախնդրության ճանապարհը՝ հաճո լինելու համար ազգաբնակչության որոշակի զանգվածին, ապա դա

ոչ այլ ինչ է, քան քաղաքական ավանտյուրիզմ: Ինքնին հասկանալի է, որ ժողովուրդը հոգնել է շրջափակումից, հոգնել է պատերազմից և ակնկալում է շուտափույտ լուծումներ: Սակայն առաջարկել այնպիսի լուծումներ, որոնք առավել ևս հաճո կլինեն դրսի ուժերի համար, սկզբունքորեն դա մեզ համար ընդունելի չէ: Եվ եթե այդ հարցում մեր մոտեցումները համընկնում են իշխանությունների կարծիքի հետ, մենք խնդիր չունենք դա թաքցնել: Ուրիշ բան, որ երբ մեր և իշխանությունների դիրքորոշումը գեթ մի հարցի շուրջ հանկարծ համընկնում է, ապա նախկին իշխանության խոսափող հանդիսացող մամուլը սկսում է քարկոծել մեզ: Ահա սա է ճշմարտությունը:

Հարց– Պարոն Գեղամյան, Հայաստանում և Ադրբեջանում նախագահական ընտրություններից հետո, ի՞նչ եք կարծում, Ղարաբաղի բանակցությունների լծացված վիճակը վերացած կլինի, թե ոչ:

Ա.Գեղամյան – Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման շուրջ բանակցությունները լծացված վիճակում չեն, պարզապես կողմերի դիրքորոշումները գնալով էլ ավելի են կարծրացել: Այն, ինչ ընդունելի է Հայաստանի Հանրապետության համար, մերժում է ադրբեջանական կողմը և ընդհակառակը: Ահա այս ամենը հաշվի առնելով, այս գիտակցումով էր, որ իմ հրապարակային ելույթներում ես առանձնահատուկ կարևորություն են տալիս Հայաստանի Հանրապետության տնտեսության առաջընթաց զարգացման խնդիրներին: Որովհետև եթե մենք պատերազմում հաղթանակած ենք դուրս եկել, ցավոք, նույնը չի կարելի ասել տնտեսական մրցակցության մասին: Ահա դրա համար էլ մենք շատ ենք կարևորում, որ տնտեսական մրցակցությունում նույնպես հաղթող լինենք: Իսկ դրա եզակի նախապայմանը երկրի կայուն վիճակն է, երկրի կայունությունն է: Ահա այդ համոզմամբ է, որ մենք չենք խարխուլում պետականության հիմքերը: Ահա այս գիտակցումով է, որ մենք այսօր փոքր-ինչ ավելի մեղմ գնահատականներ ենք տալիս գործող իշխանություններին: Գնահատականներ, որոնք, ցավոք, վաղը այլ կերպ կմեկնաբանվեն և կծառայեցվեն մի խնդրի լուծմանը՝ երկրի վիճակը ապակայունացնելու գոր-

ծին, որը դրսի ուժերին հնարավորություն կտա միջամտել մեր ներքին գործերին, ինչն անթույլատրելի և կործանարար կլինի Հայաստանի Հանրապետության համար: Եվ այն, ինչ հիմա ասում են, վաղը դրա համար էլ են ինձ վրա հարձակումներ գործելու, արխային, թող հարձակվեն: Իմ այս բոլոր ասածները, որ մերոնք էլ են ձայնագրում ու տեսագրում, վավերագրական փաստաթուղթ է, մի քանի տարի անց հանգիստ խղճով կդնեն սեղանին, կասեն՝ ահա այս դիրքորոշումներն էինք մենք պաշտպանում, իսկ մյուս թևը դավաճանություն, ծախվածություն, էլ ինչ պիտակ ասես չկայցրեց մեզ, բայց մեր խիղճը հանգիստ է: Մենք իշխանության չենք գալու, որ իրենց դատենք, մենք գալիս ենք ասելու. այո, կրակը վերցնում ենք մեզ վրա... Երկու կողմից մեզ խփում են՝ լինի դա իշխանություն, թե ընդդիմություն, երկու կողմից փորձում են վարկաբեկել: Երկու կողմից այնպիսի զրպարտություններ են տարածում, մտածում են, ըի՛ր, համբերությունից դուրս կգա: Ինչո՞ւ պետք է դուրս գամ: Եթե մարդ գիտի՝ ինքը ճիշտ է, ապա՝ աշխարհն էլ ինձնից հետ կանգնի, ես իմ ասածից հետ չեմ կանգնի: Կարող է լռեմ՝ չվտանգելու համար ընկերներիս: Բայց հետ չեմ կանգնի: Ինչ 1997թ. ասել ենք, այսօր էլ տեր ենք: Ինչ հին ու գործող իշխանությունների հասցեին ասվել է, այսօր տեր ենք: Ինչ ասվել է անկախության տարիների ընթացքում և ինչ գրել են, տեր են: Սա է իմ դիրքորոշումը և, բնականաբար, այդպես էլ պետք է լիներ: Մեկ այլ լուրջ քաղաքական գործչի, որը նմանօրինակ դաժան փորձությունների հորձանուտով է անցել ու չի կոտրվել, դուք դժվար թե գտնեք: Բիրդան աղաներ կան, քաջ նազարներ կան, ովքեր, բառիս իսկական առումով, կյանքում բացարձակապես և ոչ մի բան չարած, աշխարհաքաղաքական զարգացումների արդյունքում մեկ էլ հանկարծ կանգնեցին հրապարակում ու դարձան ազգիս առաջնորդ: Նման մարդիկ շատ կան: Մեր անցած ուղին տռուդավոյ է: 1972 թվականին, երբ մեր ընդդիմախոսներն ընդհանրապես, ինձ թվում է, բակ էլ չէին դուրս գալիս, վախենում էին ծեծ ուտելուց, 660 ուսանող են ես տարել խոպան, նրանց աշխատանքը ղեկավարել: Ասում են՝

Ես եմ տարել, որովհետև հանրապետական ջոկատի հրամանատար եմ եղել Կարելիայի Ինքնավար Հանրապետությունում: 660 հոգի: Դեռ էն թվականներին, 22 տարեկան ամենաերիտասարդ մարդն եմ եղել, որ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատվոգիր եմ ստացել: Հայրս ասում էր ինձ՝ ա՛յ տնաշեն, 25-30 տարի ամենադժվար տեղերում բանում եմ, հլա էդ պատվոգիրը ես չեմ ստացել: Մենք անցել ենք այդ բոլորը: Ներկայի մասին էլ ասեմ՝ ձախորդ օրերը ձմռան նման կուզան ու կերթան, մենք մեր ճիշտը կպահենք:

Ուշագրավ մի փաստի մասին էլ ասեմ. եթե դուք տեսանկարեիք այսօրվա մեր ակտիվին և արխիվներից էլ հանեիք 10 տարի առաջվա մեր ասուլիսները պատկերող տեսաերիզները, ապա կհամոզվեիք, որ ով կա այսօր, կար նաև 10 տարի առաջ: Կրկնում եմ, 10 տարի առաջ: Այսինքն, այս մարդիկ հոգեհարազատ և հավատարիմ են միմյանց: Նրանք գիտեն՝ ինչ ասում ենք, տեր ենք: Հիմա թող ինչքան ուզում են արհեստականորեն կրքեր բորբոքեն, ինչքան ուզում է ՀՀԾ-ական մամուլը փորձի կեղտոտել, ցեխոտել մեզ՝ մեկ է, ասած ռուսի՝ “и это пройдёт”: Ներողություն, ռուսի չէ, Սողոմոն իմաստունն է ասել:

Հարգելի լրագրողներ, շատ շնորհակալություն ասուլիսին ակտիվորեն մասնակցելու համար: Ասուլիս, որ իր տևողությամբ, ինչու չէ, նաև բովանդակությամբ, ասես թե, ռեկորդ սահմանեց ու տևեց 1 ժամ 57 րոպե:

... ԴՐԱ ՀԱՄԱՐ Է ԱՀԱԶԱՆԳՍ, ՈՐ ՄԱՐԴԻԿ ՍԹԱՓԿԵՆ, ԿԱՆԳ ԱՌՆԵՆ

Սիրելի ընթերցող, Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում դեկտեմբերի 13-ին կայացած «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի մամուլի ասուլիսի սղագրությունը (տպագրվում է կրճատումներով): Ծանոթանալով պատասխաններին, կարծում ենք, պարզ կդառնա Ա.Գեղամյանի, որպես ՀՀ նախագահի թեկնածու առաջադրվելու անհրաժեշտությունը: Անհրաժեշտություն, որը պայմանավորված է երկրի զարգացմանը միտված Ա.Գեղամյանի սոցիալ-տնտեսական ծրագրերի իրագործման հրամայականով, ինչպես նաև ակնհայտ դարձած այն իրողությամբ, որ նախագահական առաջիկա ընտրություններին Լևոն Տեր-Պետրոսյանի մասնակցության հարցը կրում է որքան ձևական, այնքան էլ վտանգավոր բնույթ: Անզեն աչքով էլ երևում է, որ մասնակցության նպատակներից մեկը ընդդիմադիր քաղաքական դաշտը պառակտելն է՝ դրանով իսկ դյուրին դարձնելով իշխանական թեկնածուի հաղթանակը: Դրա հետ մեկտեղ խնդիր է դրված ամեն զնով ապակայունացնել իրավիճակը երկրում, դրանով իսկ պարարտ հող ստեղծել դրսի ուժերի համար՝ միջամտելու հանրապետության ներքին գործերին: Եվ, վերջապես, հետագայում իշխանությունների հետ սակարկությունների մեջ մտնել՝ տարբեր տարիներին սեփական թիմակիցների կողմից կատարված հանցագործությունները պարտակելու նպատակով:

Ահա այս վտանգավոր զարգացումների բացահայտմանն ու դիմակայելու հարցերին էր նվիրված Արտաշես Գեղամյանի մամուլի ասուլիսը:

Ա.Գեղամյան – Հարգելի լրագրողներ, այսօր «Ազգային Միաբանություն կուսակցությունը» Ձեզ հրավիրել է տարեմուտի ասուլիսի:

Ինչպե՞ս կառուցենք մեր այսօրվա հանդիպումը, հարցեր կտանք պատասխանեն, թե՞ սկզբից ես խոսեմ:

Լրագրող – Մի բանից սկսեք, որ իմանանք՝ ի՞նչ հարցեր տանք:

Ա.Գեղամյան – 2007 թ., ինչ խոսք, բավականին լարված տարի էր «Ազգային Միաբանություն կուսակցության» (ԱՄԿ) համար: Ինչպես հիշում եք, մայիսի 12-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին, ավա՛ղ, ճաշակեցինք անհաջողության դառը պտուղները: Հետո տևական ժամանակ ԱՄԿ տարածքային սկզբնական բոլոր կազմակերպությունների հետ, որոնք 411-ն են (հիշեցման կարգով նշեմ, որ մարզային ընդամենը տարածքային մի կազմակերպություն ունենք, դա Շիրակի մարզն է և Լևոն Հակոբի Գալստյանն է այն գլխավորում, մնացած բոլորը սկզբնականի իրավունքով են), հանգամանորեն վերլուծում էինք խորհրդարան չմտնելու պատճառները: Վերլուծությունների արդյունքում, նախ՝ սեպտեմբերի 29-ին տեղի ունեցավ ԱՄԿ կոնֆերանսը, ապա նոյեմբերի 27-ին կայացավ ԱՄԿ նախագահության նիստը, որտեղ և որոշվեց, որ նախագահական առաջիկա ընտրություններին մենք պետք է հանդես գանք սեփական թեկնածուով. իմ գործընկերները միահամուռ ինձ լիազորեցին, որ հանդես գամ որպես նախագահի թեկնածու: Անցած ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձություններն ապացուցեցին իմ ընկերների ճշմարտացիությունը, որ, այո, անհրաժեշտ էր հանդես գալ ինքնուրույն, որովհետև այն զարգացումները, որ կատարվում են երկրում ու նրա շուրջ և որոնց ակնատեսն ենք այսօր, գալիս են համոզելու, որ ամենն արվում է, որ Հայաստանի Հանրապետությունում նախագահական ընտրությունների կամ ընթացքում, կամ հետո քաղաքացիական բախումներ հրահրվեն: Արդեն իսկ դա ակնհայտ է: Եվ դրա ջատագովները նախկին իշխանություններն են: Իրենք արդեն իսկ գիտակցում են, որ բացարձակապես և ոչ մի շանս չունեն անգամ 5-6% ձայներ հավաքելու, դրա համար էլ ձգտելու են երկիրը ապակայունացնել: Տեղեկություններ կան, որ ընտրությունների օրն առնվազն 4-5 հարյուր ընտրատեղամասերում մարդկանց հրահրե-

լու են անկարգություններ, կռիվ-շամաթա սարքեն, որ հետո պարարտ հող ստեղծեն մեր երկրի ներքին գործերին միջազգային կառույցների միջամտության համար: Հունվար-փետրվար ամիսներին, կարծում եմ, միգուցե արտասահմանյան, միգուցե տեղական մամուլով ծայրաստիճան ստահող, սենսացիոն կոմպրոմատների հեղեղ է լինելու թե՛ ընդդիմադիր դաշտի, թե՛ իշխանությունների հասցեին: Ըստ որում, դրանցում այնպիսի նյութեր են գետեղելու, որից մարդիկ դրանք կարդալիս կարող է զարհուրեն: Այդ ամենը պատրաստվում է: Կրկնում եմ, այդ ամենը պատրաստվում է, արդեն դրա կատարողներն էլ կան: Եվ ցավն այն է, որ ժողովրդի որոշակի հատվածը, ըստ որում՝ նաև ազնիվ մարդիկ, դեռ մինչև հիմա վերջնականապես չեն համոզվել այն պարզ ճշմարտության մեջ, որ Հայաստանի Հանրապետությունում, ի դեմս նախկին իշխանությունների, ունենք 5-րդ շարասյուն: Չեն համոզվել այն պարզ ճշմարտության մեջ, որ նախկին նախագահը բացարձակապես խնդիր չի դրել հանրապետության նախագահ դառնալ, այլ խնդիր է դրել պառակտել ընդդիմադիր դաշտը, դրանով իսկ հաճոյանալ իշխանություններին, և պարզապես արդեն 10 տարին լրացել է, նա փոխելու է իր քաղաքացիությունը: Ահա սա է ողջ ճշմարտությունը: Եվ բացարձակապես պատահական չէ, որ նախկին իշխանությունների հիմնական թիրախն է դարձել «Ազգային Միաբանությունը», կրկնում եմ, ի ուրախություն գործող իշխանությունների: Նրանց այդ քաղաքականության դրդապատճառները, ինչ խոսք, մեզ հայտնի են: Դեռ 1990 թ. սկսած ՀՀԿ-ականներն այդպես էլ ի գորու չեղան փաստարկված որևէ կոմպրոմատ գտնել իմ դեմ: Խնդիր, որն ուզում էին ամեն գնով լուծել, որովհետև այդպես էլ չկարողացան իրենց վրայից մաքրել անմեղ մարդկանց արյունը, որը նրանց սադրանքի արդյունքում առաջին անգամ թափվեց 1990 թ. մայիսի 27-ին Երևանի երկաթուղային կայարանում, հետո՝ Երևան-Սովետաշեն մայրուղու վրա: Հրաշք տեղի ունեցավ, որ հնարավոր դարձավ այդ օրը կանխել, կրկնում եմ, մեծագույն սադրանքի արյունոտ շարունակությունը: Ավա՛ղ, այնուամենայնիվ, կո-

րուստները շատ մեծ էին, 16 անմեղ մարդ զոհվեց:

«Ազգային Միաբանությունը» գնալով համոզվում է, որ խիստ պահանջված է այսօրվա քաղաքական դաշտում, որ նա իրապես 3-րդ ուժ է, 3-րդ բևեռ է: Ակնհայտ է, որ ո՛չ գործող և ո՛չ էլ նախկին իշխանությունները բան չեն գտնում, որով կարողանան խոչընդոտել մեր քաղաքական պայքարին՝ փորձելով վարկաբեկել մեզ: Նոյեմբերի 27-ին այստեղ ներկա իմ գործընկերները փաստարկված, հիմնավոր մեղադրանքներ ուղղեցին թե՛ գործող իշխանություններին, և թե՛ նախկիններին: Ավելին, այդ ամենը տպագրվեց «168 ժամ», «Փակագիծ» թերթերում և ռուսերեն լեզվով “Голос Армении” թերթում: Արդեն անցել է շուրջ 15 օր: Մեր ասածները հերքող և ոչ մի արծագանք չի եղել: Թող մի հակափաստարկ բերեին, ասեին, այ, պարոն Կարապետյան, մեր հասցեին ուղղված Ձեր ասած այսինչ մեղադրանքն անհիմն է: Նույնն ասեին Սարգիս Մուրադխանյանի, Կորյուն Առաքելյանի, Լևոն Հակոբի Գալստյանի, Գագիկ Թադևրոսյանի, Արայիկ Սիմոնյանի, Վիլեն Արևշատյանի, Տիգրան Պոչմակյանի ասածներին: Փոխարենը քաղաքական բանավեճը փորձում են տեղափոխել անձնական վիրավորանքների դաշտ: Մեկ է չի ստացվելու, ու թեկուզ այսօրվա հրապարակումները, ինչքան էլ տարօրինակ հնչի, խոսքս, մասնավորապես, «Հայք» և «Հայկական ժամանակ» թերթերի հրապարակումների մասին է, ոգևորում են մեզ: Կնշանակի, այդ մարդիկ այնքան սնանկ են, հակափաստարկներից զուրկ, որ բանավեճը տեղափոխում են բացահայտ ստի, զրպարտանքի տիրույթ, ինչը, անշուշտ, մեր կողմից կարժանանա քաղաքական զնահատականի:

Ներածական այս կարճ խոսքից հետո՝ սիրով կպատասխանեմ ձեր հարցերին:

Լրագրող – Դուք ասացիք, որ Լևոն Տեր-Պետրոսյանը ՀՀ նախագահ դառնալու ցանկություն չունի: Դուք ի՞նչ սպասելիքներ ունեք այս իրադրությունում:

Ա.Գեղամյան – Այս իրավիճակում, կարծում եմ, ակնհայտ է, որ իշխանության պետք է գա 3-րդ ուժը, քանզի ո՛չ նախկինները, ո՛չ էլ գոր-

ծողները, ինչպես նաև նրանց հետ ժամանակին համագործակցողները չեն կարող Հայաստանի Հանրապետության ժողովրդին խաղաղություն բերել: Նրանք չեն կարող ազգը միավորել, կոնսոլիդացնել, դրանում մենք օրեցօր համոզվում ենք, երբ ականատեսն ենք դառնում, որ հասարակության պառակտվածությունը, ցավոք, գնալով էլ ավելի է խորանում: Դա մեծապես պայմանավորված է նախկին նախագահի քաղաքական ասպարեզ վերադառնալով: Վերջինս, բանուգործը թողած, ասես թե, նպատակ է դրել իրեն ծառայող լրատվամիջոցներով միտումնավոր թունավորել ՀՀ նախագահի բոլոր թեկնածուներին: Ըստ որում, կրկնեմ, ինքը թաքնվում է ՀՀԾ-ին սպասարկող լրատվամիջոցների հետևում: Դուք տեսե՞ք՝ իրենց էջերում ի՞նչ ստոր բնութագրականներ են տալիս Վազգեն Մանուկյանին, Արտաշես Գեղամյանին, Արթուր Բաղդասարյանին, Սերժ Սարգսյանին: Լավ, է՞ղ մարդիկ մի՞թե չեն հասկանում, որ դրսում էլ են այդ ամենը կարդում, որ թուրքիայում էլ են այդ թերթերն ընթերցում, Ադրբեջանում էլ, Վրաստանում էլ: Աշխարհով մեկ այդ ամենը տարածվում է: Փաստորեն, ամբողջ աշխարհին նրանք մեզ ներկայացնում են որպես արժանիքներ չունեցող մարդկանց, ասելով՝ տեսե՛ք, հայ ժողովուրդն ինչ ողբալի վիճակում է հայտնվել, եթե հարկադրված է ընտրություն կատարել նման մարդկանցից: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ Հայաստանի Հանրապետության բոլոր կարող, կայացած քաղաքական գործիչներին վարկաբեկելուն ուղղված քարոզարշավ: Դա անընդունելի է, մերժելի է մեր կողմից:

Ինչ վերաբերում է առաջիկա ընտրություններից մեր սպասելիքներին, ապա նշեմ, որ ես չեմ բացառում, որ կլինեն ընտրակեղծիքներ: Բայց ես նաև չեմ բացառում, որ մեր նորագույն պատմության մեջ այդ ընտրակեղծիքները կլինեն վերջինը, որովհետև հասարակությունը կմերժի, չի ընդունի այն նախագահին, որը կեղծված ընտրությունների արդյունքում կգա իշխանության:

Լրագրող – Պարոն Գեղամյան, բավականին վստահ ասացիք, որ փետրվարին 400 – 500 տեղամասերում սպասվում են հեղափոխա-

կան զարգացումներ, քաղաքացիական պատերազմ:

Ա.Գեղամյան – Այո, հրահրելու են բախումներ:

Լրագրող – Բավականին լուրջ հայտարարություն է, ազգային անվտանգությանը սպառնացող հոտ է փչում դրանից:

Ա.Գեղամյան – Դուք միանգամայն ճիշտ եք: Բավական է ամենայն ուշադրությամբ կարդալ ելույթները, որով հանդես է եկել նախկին նախագահը և կտեսնեք, որ դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ նման գործողությունների կոչ: Բավական է ուշադրությամբ հետևել, թե նրանք ո՞ւմ, ի՞նչ հարցերով են դիմել, միջազգային ո՞ր կառույցին ի՞նչ են հրամցրել և ի՞նչ առաջարկել, որ գաք նման եզրակացության: Եթե այսօր իրենք այն աստիճանի շանտաժի ու ստի ճանապարհն են ընտրել, որ գրում են, թե, իբր, ԱՄԿ Գավառի տարածքային կազմակերպության ներկայացուցչին՝ Պապին Գալոյանին, Երևանի ոստիկանապետ Ներսես Նազարյանի մոտ, իբր, դաժան ծեծել են, ես էլ այնտեղ եմ եղել, էլ ինչի՞ մասին է խոսքը: Լավ, սուտը պետք է զոնե չափ ունենա, չէ՞:

Լրագրող – Ի՞նչ տվյալներ ունեք ...

Ա.Գեղամյան – Մի ընդհանուր խոսքս մինչև վերջ ասեմ. եթե ես իմանայի դիմացս «Արմենիայի» լրագրող չէ, այլ դատախազության քննիչ է, բնականաբար, քննիչին անհրաժեշտ բացատրություններ կտայի: Ես հասկանում եմ, դուք շատ մտահոգվեցիք, դուք պատրիոտ եք, ձեր դեմքին ես հիմա վախ եմ կարդում: Ոչինչ, ամեն ինչ կանենք, որ քաղաքացիական բախումներ չլինեն: Մենք նրանց տարածած ստերի առաջը կառնենք: Թույլ չենք տա ժողովրդին ապակողմնորոշել, թույլ չենք տա խաղալ գործող իշխանությունների մեղքով երկրում ստեղծված սոցիալական ծանր վիճակում հայտնված մարդկանց զգացմունքների վրա:

Միտքս շարունակեմ և ասեմ, որ վերջին 2 տարում Երևանի ոստիկանապետ Ներսես Նազարյանին չեմ տեսել: Վերջին անգամ նրան տեսել եմ 2004 թ. ապրիլի 12-ի հանրահայտ հանրահավաքի ժամանակ: Ահա սա է ճշմարտությունը: Եթե այս մարդիկ դեռ էս գլխից այս աստիճանի ստեր են տարածում, ուրեմն, պատկերացրեք, թե Աստ-

ված մի արասցե, հանկարծ իշխանության գան, ինչպես են երկրի դեկավարումն իրականացնելու:

Լրագրող – Պարոն Գեղամյան, մի այնպիսի հետաքրքիր իրավիճակ է ստեղծվել, որ և՛ իշխանությունները, և՛ ընդդիմադիր շատ գործիչներ խոսում են բացառապես Լևոն Տեր-Պետրոսյանի մասին, որը Ձեր և իշխանության կարծիքով 5-6% ձայն ունի: Հարցս հետևյալն է. Դուք բավականին փաստարկված ներկայացրեցիք, թե ինչ է անելու նախկին իշխանական թևը, իսկ Ձեր կարծիքով՝ ի՞նչ է անելու ներկա իշխանական թևը:

Ա.Գեղամյան – Բիրտ ուժին հակադրելու են ավելի բիրտ ուժ, որը և հանգեցնելու է քաղաքացիական բախումների: Ահա սա է, որ արդեն ակնհայտ նշմարվում է:

Լրագրող – Եվ մի հարց էլ պարոն Գեղամյան, եթե, այնուամենայնիվ, 5-6 %-անոց է Լևոն Տեր-Պետրոսյանը, Ձեր կարծիքով ինչպե՞ս է հրահրելու քաղաքացիական բախումներ: Չէ՞ որ ընտրազանգված պետք է լինի: Սեխանիզմն ինչպիսի՞ն է լինելու:

Ա.Գեղամյան – Թե մեխանիզմն ինչպիսին է լինելու, դա ճիշտ կլինի Լևոն Տեր-Պետրոսյանին հարցնեք, որովհետև մենք մեր պայքարով զինանոցում սադրանքներ կազմակերպելու հրահանգներ չունենք, մենք արարիչ ուժ ենք: Մենք կարող ենք ասել՝ ինչպես ենք արարելու, որ երկիրը զարգանա, այ, դրա մեջ ենք հմտացած: Շանտաժ, պրովոկացիա անելու մեջ իրենք են մասնագետ: Ինչպե՞ս հրահրեցին քաղաքացիական ընդվզում 1990 թ. մայիսի 27-ին: Ի՞նչ արեցին: 15-20 հոգով սադրանք կազմակերպեցին Երևանի երկաթուղային կայարանում: Սադրանքի արդյունքում արյուն հեղվեց, ժողովուրդը ոտքի կանգնեց, որովհետև հայի արյուն էր թափվել և կայարանի դեպքերից արդեն 2-3 ժամ անց Երևան-Սովետաշեն մայրուղու վրա հազարավոր մարդիկ էին հավաքվել: Ահա ձեզ հրահրված քաղաքացիական բախման ցայտուն օրինակ: Կրկնում են, նրանք այդ գործում հմտացած են: Ես նրանց դեռ են գլխից են ճանաչում, քանի որ այդ թոհուբոհով անցել են և, բարեբախտաբար, այն, ինչ

ասում եմ՝ բոլորը տեսահոլովակում կա, տեսաերիզն էլ տանը պահում եմ ու ցանկացած ժամանակ հեռուստատեսությամբ ցույց կտամ, որ ժողովուրդը մեկ անգամ էլ տեսնի, թե հետո այդ նույն սադրիչներից, որը որ անկյունը մտավ ու կորավ: Հարցնում եք՝ սադրանք ինչպե՞ս կանեն, լավ, խնդրեք և Լևոն Հակոբիչը (խոսքս պարոն Գալստյանի մասին է)՝ այն ժամանակվա ՀՀ ներքին գործերի նախարարը, կասի թեկուզ իր աշխատանքային պրակտիկայից, թե ինչպես էին հրահրում, որ միլիցիան կրակ բացի ՀԱԲ-ի տղաների վրա: ՀՀՇ-ականները նման գործեր սարքելու մեջ վարպետներ են: Ասեմ ավելին. ցավոք, արդեն կան մարդիկ, ովքեր կարիքից դրդված կան կուրորեն հավատարիմ լինելով նրանց, պատրաստ են, այո, նման սադրանքի մասնակիցը դառնալ: Չէ՞ որ հայտնի է, ժողովրդի մի զգալի մասի համար գործող իշխանությունները երբեք ու երբեք նվեր չեն եղել: Դա բոլորս ենք գիտակցում: Եվ նախկինների հույսը նրա վրա է, որ ժողովուրդը մերժում է գործող իշխանություններին: Եվ հիմա իրենք հետևյալ մտայնությունն են փորձում տարածած լինել մարդկանց մեջ, այն է՝ թեկուզև Լևոնենք զան, միայն թե սրանք գնան: Ահա սա է նրանց քարոզարշավի մեխը, ահա սա է նրանց որդեգրած խորամանկ քաղաքականությունը:

Լրագրող – Պարոն Գեղամյան, Դուք մեկ ժամից ավելի հանդիպում եք ունեցել Լևոն Տեր-Պետրոսյանի հետ...

Ա.Գեղամյան – 3 ժամ 15 րոպե:

Լրագրող – Դուք այդ 3 ժամ 15 րոպեի ընթացքում չե՞ք խոսել, չե՞ք պայմանավորվել այդ հարցերի շուրջ:

Ա.Գեղամյան – Ձեր հարցը միանգամայն տեղին է: Մենք պայմանավորվել էինք, որ երկուստեք միմյանց նկատմամբ կոռեկտություն ենք պահպանելու: Անգամ իսկ ասվել էր, որ այն թերթերը, որոնք վերահսկվում են ՀՀՇ-ի կողմից, իրենց կոռեկտ են պահելու: Ավելին. նրանք նրբորեն ակնարկել էին, որ համկարծ չստացվի, որ իրենց հսկողությունից դուրս գտնվող թերթերը հրապարակումներ անեն իմ դեմ ուղղված և ես դա վերագրեմ իրենց ու քննադատությունս ուղղեմ

իրենց վրա: Ավա՛ղ, տղերքի նյարդերը տեղի տվեցին, նրանք սեփական խոստումը դրժեցին. 15 օր շարունակ, օրական մի ՀՀԸ-ական թերթում զրպարտչական բնույթի նյութեր են տպագրվել «Ազգային Միաբանության» և անձամբ իմ դեմ ուղղված: Ընկերներս ասում էին՝ սրանց վերջ տանք, հակափաստարկներով ճնշենք, խեղդենք: Պատասխանում էի՝ սպասեք, մի քիչ էլ համբերեք, միգուցե սա պատահականություն է: Ըստ որում, սկզբից շատ լոյալ էին, հույսեր էին փայփայում, որ «Ազգային Միաբանությունը» կարող է միանալ Լևոն Տեր-Պետրոսյանին, կարող է սատարել նրան, որովհետև մենք իշխանությունների հասցեին մեր գնահատականները չէինք փոխել, իսկ Լևոնենց հասցեին էլ զսպվածություն էինք դրսևորում: Կրկնում եմ, 15 օր շարունակ լուտանքներ, վիրավորական հողվածներ տպելուց հետո տեսանք, որ դա նրանց կողմից ուղղորդվում է, օրինաչափություն է դառնում: Եթե նման պայմաններում նրանց հողվածներին չէիր պատասխանում, արհամարհում էիր, հիմա արդեն, երբ քարոզչության երկրորդ փուլ էինք մտնելու, ասելու էին՝ տեսաք ո՞նց սկսվեցին, է, որովհետև բան չունեն պատասխանելու: Ղե, մենք էլ մեր խոսքն ասացինք նոյեմբերի 27-ի ասուլիսի ժամանակ: Կրկնում եմ, ասացինք, 3 լրատվամիջոցում էլ մեր գնահատականները տպագրեցինք: Ասվածից թող մի որևէ փաստ հերքեն: Պայմանավորվածությունն իրենք խախտեցին, խախտեցին ու կրակն ընկան: Հիմա, առիթից օգտվելով, ես զգուշացնում, անգամ իսկ խնդրում եմ՝ թարգեք նման հողվածների տպագրությունը, թե չէ հարկադրված կլինենք այնպիսի բաներ հրապարակ հանել, որոնք, ավա՛ղ, պատիվ չեն բերի երկրին՝ ի դեմս առաջին նախագահի: Ավելին, քաղաքական ասպարեզից վերջնականապես կհեռացնեն թե՛ Լևոն Տեր-Պետրոսյանին, թե՛ իր թիմակիցներին: Թող մեզ չխոսեցնեն: Իսկ Ալիկ Արզումանյանին ուզում եմ օգնած լինել, հերթական միտինգի համար էլ նյութ տալ: Առաջիկա հանրահավաքում թող դիմի ժողովրդին ու հարցնի՝ այդ ինչո՞ւ սպանեցին Պետական անվտանգության կոմիտեի նախկին նախագահ Մարիոս Յուզբաշյանին: Կարո՞ղ է նա գիտեր, որ «Ղարաբաղ» կոմիտեում

ներդրված ՊԱԿ-ի գործակալներ կան: Ինչո՞ւ սպանեցին Յամբարծում Աղասու Ղանդիլյանին, փառավոր մարդուն, որն անգամ իսկ այդ ծանր տարիներին երկաթգիծը ժամացույցի պես աշխատացնում էր: Չլինի՞ թե Յամբարծում Աղասիևիչը գիտեր, որ երկաթգծով Յայաստան ոչ թե ապրանք է մտնում, այլ դրանց ֆակտուրաներն են գալիս, իսկ ապրանքը Ռուսաստանում է վաճառվում: Ինչո՞ւ գնդակահարեցին երկաթուղային գործերի գեներալ Իսահակյանին: Չլինի՞ թե նրա համար, որ նա հրաժարվել էր իրականացնել դատարկ վագոնների ուղեկցությունը, ինչն էլ պատրանք կստեղծեր, թե Յայաստան մտնող վագոնները դատարկ չեն: Ինչո՞ւ սպանեցին Երևանի նախկին քաղաքապետ Յամբարծում Գալստյանին: Չլինի՞ թե նա էլ գիտեր մանրամասնություններ, թե կողոպտված հաստոցները, սարքավորումները քարավաններով Պարսկաստան ո՞ւմ բարձր հովանավորությամբ են գնում և որպես մետաղի ջարդոն վաճառվում: Թող ժողովրդին այս հարցերն էլ տա, որտեղ խեղճանա, տասնյակ ուրիշ հարցեր էլ կհուշեն: Եվ եթե իրենք ընտրել են կոմպրոմատի ճանապարհը, ապա թող իմանան, որ «Յագար ու մի գիշերվա» նման մեր պատմություններն իրենց մասին ոչ սկիզբ կունենան, ոչ վերջ, մի փաստից կսկսենք՝ մյուսով կավարտենք և այդպես շարունակ:

Բայց դա չէ մեր խնդիրը, մենք արարիչներ ենք: Այստեղ բոլոր նստածները կյանքում միայն բարիք են ստեղծել: Ալեքսան Կարապետյանը, Գագիկ Թադևոսյանը շինարարներ են, ես ինժեներ եմ, Կորյուն Առաքելյանը մի մեծ շրջանի՝ Իջևանի, ղեկավարներից է եղել, գրականությամբ է զբաղվել: Բռռիս իսկական առումով, քնքշական, մորը նվիրված այնպիսի ոտանավորներ է գրել, որ ցանկացած մարդ կարդալիս կարտասվի: Նույնը Սարգիս Մուրադխանյանը, որն էլ ժամանակին Երևանի 26 կոմիսարների շրջանի ղեկավարներից է եղել: Էլ չեմ ասում Լևոն Յակոբի Գալստյանի, Գագիկ Կոստանդյանի մասին, որոնց ողջ գիտակից կյանքը հանցագործների դեմ պայքարի մեջ է եղել: Տեր-Պետրոսյանականները դեռ այսօր էլ հանդգնում են թասիբից խոսել, էլ չեմ ասում՝ Երևանի կինո «Նարիրի» ճանաչված ու

հարգված տղա լինելու իմ անցյալն են հեզնում: Հիմա կանգնես ասես՝ այդ մարդիկ կհին «Նաիրիում» մեր խնած պիվայի դատարկ շշերն էին հանձնում, դրանով պիվա առնում ու խմում, էդ չէի՞ք դուք: Հիմա էլ կդժգոհեն՝ Գեղամյանն էլի խոսեց: Էդ են սրանք եղել, դա է եղել, էդ են սրանք: Հիմա մեկ էլ խորոզլամիչ են եղել, խոսում են սրանից, նրանից: Շատ ճիշտ էր գրել Էրեբունու թաղապետ Սեդրակյան Միերը, շատ տեղին էր գրել: Լավագույն դեպքում, երբ Թոխմախի հայտնի տղերքը լողացել են, սրանց տեսակին իրենց շորերին պահակ են կանգնեցրել: Ես են եղել: Հիմա մեկ էլ հանկարծ Բոշի մայլից են խոսում, տո Երևան քաղաքը նույնիսկ չգիտեն, լավ, էլ չչարունակեմ:

Հարգելի լրագրողներ, այս ամենի մասին հարկադրված եմ խոսում, հետո ամբողջ գիշեր մտքումս ինքս ինձ քննադատում եմ, ասում, Արտաշես, դու լուրջ մարդ ես, ինչո՞ւ ես դրանց թայը դառնում:

Լրագրող – Պարոն Գեղամյան, ի՞նչ կարգախոսովք եք հանդես գալու ընտրություններին և, արդյո՞ք, արդեն իսկ եղել են հրավերք եվրոպական դեսպանների հետ ճաշկերույթների:

Ա.Գեղամյան – Շատ տեղին հարց էր, մենք արդեն իսկ ընտրել ենք մեր կարգախոսը: Կարգախոսը լինելու է՝ «Հանուն ազգային միաբանության»։ Խոսքը կուսակցության մասին չէ, խոսքը բովանդակային առումով է: Մենք ամենն անելու ենք ազգը կոնսոլիդացնելու համար, ազգը միաբանելու համար: Ինչ վերաբերում է՝ եվրոպացիների հետ ճաշի եղել են, չեն եղել հարցին, ապա ասեմ, ոչ, նրանց հետ ճաշի չեն եղել: Առանձին դեսպանների կողմից հրավերներ եղել են, բայց որ հավաքվեինք այսպես, սեղանի շուրջ, խաշ ուտեինք, չէ, չի եղել:

Լրագրող – Ես ուզում եմ մեկնաբանություն ստանալ. այս գիշեր պայթեցվել է «Չորրորդ իշխանության» գրասենյակը, որը մեկ տարի առաջ էլ հրդեհվել էր: Եվ, մասնավորապես, Ձեր կարծիքով, իշխանությունների կողմից նախընտրական մթնոլորտը շիկացվում է, թե՞ հանդարտեցվում:

Ա.Գեղամյան – Ցանկացած բռնություն, ում կողմից էլ, որ դա դրսևորվի մամուլի նկատմամբ, մենք խստորեն դատապարտում

ենք: Ինչ վերաբերում է սովյալ դեպքին, ապա երբ ես մանրամասնություներն իմանամ, իմ կարծիքը, իմ եզրակացությունները, անշուշտ, կիրապարակեմ: Բայց միարժեքորեն ես խստորեն դատապարտում եմ ցանկացած թերթի նկատմամբ բռնություն, ցանկացած բռնություն ընդհանրապես: Եվ հատկապես այն թերթերի նկատմամբ, որոնք ընդդիմադիր դիրքերից են հանդես գալիս: Ես հիմա ինձնից կախված ամենն անելու եմ, որ հատկապես «Չորրորդ իշխանություն», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երևան», «Հայք» թերթերի հանդեպ հանկարծ որևէ մեկը ոտնձգություն չիրականացնի, քանի որ դրանք վերջերս «առանձնահատուկ քննչություն» են դրսևորում անձիս հանդեպ:

Լրագրող – Խնդրում եմ պատասխանեք նաև երկրորդ հարցին էլ՝ նախընտրական իրավիճակի շիկացման վերաբերյալ:

Ա.Գեղամյան – Կրկնեմ, իրավիճակը երկու կողմերն էլ շիկացնում են՝ թե նախկին, թե գործող իշխանությունները: Նախկին իշխանությունները սադրանքներ անելով, գործող իշխանություններն էլ դրանց հակադրելով բիրտ ուժ, փոխանակ, ի սկզբանե, ստեղծեն բարոյահոգեբանական այնպիսի մթնոլորտ երկրում, որ այդ սադրանքները պարարտ հող չունենան:

Լրագրող – Պարոն Գեղամյան, կարելի է ենթադրել, որ Վազգեն Մանուկյանի և նյուս ընդդիմադիր թեկնածուների հետ քաղաքական բանավեճի մեջ չեք մտնելու:

Ա.Գեղամյան – Քաղաքական բանավեճի մեջ ես կմտնեմ ցանկացած թեկնածուի հետ, ում հետ բանավիճելու հող և հիմք ունենամ: Ես այսօր խստորեն քննադատում եմ թե՛ գործող, թե՛ նախկին իշխանություններին: Նույնն անում է Վազգեն Մանուկյանը: Այս մայր հարցում պարտնյորներ ենք, նույն դաշտում ենք: Եթե նույն դաշտում ենք, մենք կարող ենք բանավիճել, թե որիս ծրագիրն ավելի կարճ ժամանակում, ավելի մեծ արդյունք կտա:

Լրագրող – Պարոն Գեղամյան, ասացիք, որ ամեն ինչ անելու եք, որ բիրտ ուժի դեմ բիրտ ուժի կիրառումը կանխեք: Ինչպե՞ս եք դա

անելու, մանավանդ, եթե նրանք պատրաստ են գնալ քաղաքական բախումների:

Ա.Գեղամյան – Շնորհակալություն հարցի համար, այն շատ տեղին է: Ասեմ՝ ինչպես ենք կանխելու: Մենք մեր ժողովրդին խնդրելու ենք, համոզելու ենք, հիմնավորելու ենք, որ զերծ մնան ՀՀԾ-ականների նախաձեռնած զանգվածային միջոցառումներին մասնակցելուց, որովհետև նման միջոցառումների ժամանակ նախկին իշխանությունների կողմնակիցները, անտարակույս, սադրանք կկազմակերպեն, չեն բացառում նաև, որ իրենց իսկ կողմից որևէ մեկին կվնասեն: Ինչո՞ւ են ես դա ասում: Դրա վկան ենք եղել 2004 թ. ապրիլ ամսին, երբ մի շարք թերթերում հրապարակվեց, թե միտինգների ժամանակ մահափորձ է պատրաստվում Արտաշես Գեղամյանի դեմ: Երկու հոգու ձերբակալել էին: Այդ երկուսի հետ ես հանդիպեցի Ազգային անվտանգության մեկուսարանում: Նրանք ուղղակի ցուցմունք էին տվել, թե ով է իրենց վարձել ինձ սպանելու համար: Կրկնում են, ինձ հետ հանդիպելիս էլ ուղղակի ասացին, թե ով է պատվիրատուն: Մոտս աղոթագիրք կար, այն տվեցի նրանցից մեկին և հարցրեցի. դու ինչո՞ւ ես մեղք վերցնում քեզ վրա, չէ՞ որ ում մասին դու ասում ես, նա էլ քո պես հարազատներ ունի, չէ՞ որ այդ մարդը կին ունի, երեխաներ ունի, ծնող ունի, ինչպես քո մայրը: Այդ հանդիպմանը մասնակցում էր նաև Անդրանիկ Միրզոյանը, այն ժամանակ Գլխավոր դատախազության կարևորագույն գործերի գլխավոր վարչության պետն էր: Բայց չէ՞ որ այդ մարդկանց մոտ, իրոք, զենք էր եղել, որն առգրավվել էր, չէ՞ որ նրանք թերթի նկարով ցույց էին տվել, թե ում դեմ պետք է այդ զենքն օգտագործվի:

Ցավոք, մանսօրինակ սադրանքներն արդեն իսկ դարձել են Հայաստանում լայնորեն կիրառվող քաղաքացիական անհնազանդություն հրահրող տեխնոլոգիաներ:

Լրագրող – Պարոն Գեղամյան, Ձեզ չի թվում, որ, այնուամենայնիվ, Լևոն Տեր-Պետրոսյանի դեմ նման ելույթներով Դուք, փաստորեն, ստացվում է, որ օգնում եք Սերժ Սարգսյանին: Չի՞ ստացվում, որ ավելի լավ է ՀՀ նախագահ ընտրվի Սերժ Սարգսյանը, քան թե

Լևոն Տեր-Պետրոսյանը:

Ա.Գեղամյան – Ես բացարձակապես չեմ բաժանում ձեր այն մտայնությունը, որ եթե ոչ Լևոն Տեր-Պետրոսյանը, ապա՝ Սերժ Սարգսյանը: Եթե դրա մեջ համոզված լինեինք, էլ ինչո՞ւ էր մեր կուսակցությունն առաջադրելու իր թեկնածուին: Ճիշտ այդ մտայնության վրա է, որ նախկին իշխանությունները կառուցում են իրենց քարոզարշավը: Իսկ ինչ վերաբերում է Լևոն Տեր-Պետրոսյանի քաղաքականության դեմ ուղղված իմ ելույթներին, ապա քաղաքական գործչին, որը հավակնում է դառնալ երկրի նախագահ, դու պարտավոր ես որպես կուսակցության նախագահ տալ քո քաղաքական գնահատականները: Այլապես մարդկանց հասկանալի չի լինի, թե երկրի ճակատագրի համար այս հույժ կարևոր ժամանակաշրջանում ինչո՞ւ է ԱՄԿ-ն հանկարծ լռում: Իրենք են սկսել, մենք էլ պատասխանում ենք՝ երկու շաբաթ համբերատար լռելուց հետո: Ինչ վերաբերում է, որ գործող իշխանություններին չեմ քննադատում, դա իրականության հետ աղերս չունեցող հարցադրում է, որի նպատակն է մարդկանց ապատեղեկացնելը: Իմ քննադատական սուր խոսքը գործող իշխանություններին նրանց սպասարկող լրատվամիջոցների կողմից լռեցվում են, ինչպես նաև լռեցվում են ԶՅԾ-ական մամուլում, այդտեղ էլ խնդիր ունենալով ընդդիմադիր ներկայացնել միայն Լևոն Տեր-Պետրոսյանին: Ահա սա է գաղտնիքը: Ավելին ասեմ. չէ՞ որ 1999 թ. մինչև 2007 թ. մի հողված, մի հարցազրույց, մի ելույթ չկա, որ գործող իշխանություններին ամենախիստ գնահատականները տված չլինեն:

Լրագրող – Բա հիմա ի՞նչը փոխվեց:

Ա.Գեղամյան – Բացարձակապես ոչինչ չփոխվեց. 2007թ. փետրվար ամսին լույս տեսավ մեր «Հակաճգնաժամային ծրագիրը»: 78 էջի վրա գործող իշխանություններին տրված են ամենասուր և ամենախիստ գնահատականները: Երբ մենք այս բոլորն ասել ենք, հիմա նույնը էլի՞ կրկնենք: Առաջինը հենց դուք՝ ԶՅԾ-ական լրատվամիջոցները, կասեք, մարդիկ կասեն, դե, լավ, հասկացանք, հա քննադատել եք, 10 անգամ 10 տարի շարունակ նույնն եք ասում, ելքերը, ուղիները ցույց

տվեք մեզ, ելքերի մասին խոսեք: Ես Տեր-Պետրոսյանին ընդհակառակը նաև անաչառ եմ գնահատել: Մասնավորապես, սեփականաշնորհմանը վերաբերող վերջին ելույթում իր բուլոր վերլուծությունների համար շնորհակալություն եմ հայտնել, որովհետև նա մասսայականացրել է անցած 8 տարիների ընթացքում իմ և իմ գործընկերների կողմից խնդրո առարկայի շուրջ իշխանություններին տված գնահատականներն Ազգային ժողովի ամբիոնից: Տեր-Պետրոսյանի խոսքում միայն մի բաց կար, որ նա շնորհակալություն չէր հայտնել սեփականաշնորհմանը տրված գնահատականների առաջին հեղինակներին:

Մեկ դիտարկում ևս. սեզոնային հայրենասերներին ես չեմ ընդունում: Հանրահավաքին հայտնում է, որ տասնյակ ձախողումներ կան արտաքին գերատեսչության գործունեության մեջ: Բա լավ, առաջին ձախողումից հետո սիրտդ երկրիդ համար չէ՞ր ցավում, զնայիր ու ասե՛իր՝ այս ի՞նչ էք անում: Քո տեսակետն ասեիր, ճիշտ ճանապարհը ցույց տայիր, բա 10 տարի լռել ես, ի՞նչ, սպասում ես երկիրդ տապալվի, որ չարախնդաս ու ասես՝ տեսա՞ք, թե առանց ինձ երկիրը ոնց կործանվեց: Այս հարցում մեր մոտեցումները լրիվ այլ են: Մեր աշխարհայացքը խարսխված է մի պարզ ճշմարտության վրա. ձախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան, իսկ հավերժ կմնան հայոց պետականությունն ու մեր երկիրը: Եվ գիտակցելով դա, ի՞նչ, կանգնեինք մի կողմ, տեսնեինք, թե ինչպես են բախվում նախկիններն ու գործողները, թե ինչպես է դրա արդյունքում Հայաստանը փլատակներ՞ի վերածվում: Հետո ուրախանայինք, ասեինք՝ տեսա՞ք, որ զգուշացնում էինք՝ ոչ սրանք են մի բան, ոչ էլ նրանք: Լավ, մի՞թե չեն վերլուծում, թե Հայաստանի շուրջ ինչ զարգացումներ են ընթանում: Դիցուք, նոյեմբերի 27-ին Աստանայում կայացել է ԱՊՀ երկրների պաշտպանության նախարարների գագաթաժողովը: Դրանից հետո Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևը բառացիորեն ասել էր հետևյալը. այնքան ժամանակ, քանիդեռ Հայաստանն օկուպացրել է Ադրբեջանի տարածքները, պատերազմը վերսկսելու վտանգը կազմում է 100%: Ուրեմն, պատերազմը սկսելու հավանականությունը, ըստ Ադրբեջանի այդ

պաշտոնյայի, 100% է: Մի՞թե սա չի հուշում, որ մի փոքր անկայունություն եղավ մեր երկրում, թուրքն ու ազերին մտնելու են: Դա արդեն քարոզչությամբ են նախապատրաստում: Կարդացեք արևմտյան մամուլը, որտեղ թուրքական «Ջումհուրիեթ», «Չաման» թերթերից մեջբերումներ են անում: Թուրք-ադրբեջանական քարոզչությունն այս օրերին ապատեղեկացնում է միջազգային հանրությանը, որ ԼՂ-ի ազատագրված տարածքներում տեղակայված են Քրդական Բանվորական կուսակցության ռազմակայանները: Չեզ, ի՞նչ է, թվում է, պատահականությո՞ւն է դա: Իհարկե, ոչ, որովհետև Քրդական Բանվորական կուսակցությունն աշխարհի կողմից ճանաչվել է որպես տեռորիստական կազմակերպություն: Թուրքական իշխանություններն ակնկալում են, որ տեռորիզմի դեմ պայքարի շրջանակում համաշխարհային հանրությունը հանդուրժողականություն կդրսևորի: Հարցը կներկայացնեն, թե, իբր, անկախ երկրում, տվյալ դեպքում Հայաստանին անմիջապես հարող ազատագրված տարածքներում տեղակայված են քրդական «ահաբեկչության օջախներ», որոնք և պետք է ճնշվեն ռազմական միջանտությամբ: Բա որ էլ պատրվակով էլ ԼՂՀ-Ադրբեջան հակամարտության սահմանն անցնեն, մտածո՞ւմ են, թե ինչ կլինի: Չէ՞ որ այնտեղ, ռուս սահմանապահներ չկան, ո՞վ է թուրք-ադրբեջանական ռազմական հնարավոր գործողությունների առաջն առնելու: Ինչո՞ւ չեք ուզում մտածել, որ կարող են սահմանն անցնել, հետո խաղաղարար ուժերը կզան, կմտնեն հայ-ադրբեջանա*իրանական սահմանամերձ տարածքը՝ դրանից բխող բոլոր ծանր հետևանքներով: Արդյունքում էլ կփակվի Լեռնային Ղարաբաղի հարցի հայանպաստ կարգավորման հնարավորությունը: Երբ այս հնարավոր զարգացումները աչքի առաջ ունես, երբ դու տեսնում ես, որ գործը դրան է գնում, ինչպե՞ս լռես: Դրա համար է ահազանգս, որ մարդիկ սթափվեն, կանգ առնեն: Երկու կողմերն էլ կանգ առնեն:

Арташес ГЕГАМЯН: "Если АОД вовремя не остановить, будет большая беда!"

Лидер партии "Национальное Единение", кандидат в президенты Арташес Гегамян выступил на днях с разгромной критикой в адрес АОД. "Прежняя власть стремится спровоцировать гражданские столкновения, потому что прекрасно осознает - серьезных шансов победить на предстоящих президентских выборах у нее нет. У нас есть информация, что в день выборов как минимум в 400-500 избирательных участках будут спровоцированы беспорядки. Все это будет делаться с целью привлечь внимание международных организаций, создать предпосылки для их "оправданного" вмешательства во внутренние дела республики, - утверждает Арташес Мамиконович и предрекает: - В зарубежной прессе с подачи АОД будут публиковаться сенсационные "разоблачения", чернящие как власти, так и оппозиционных кандидатов, разумеется, за исключением Левона. Уже сегодня СМИ, обслуживающие АОД, пишут клеветнические, компрометирующие статьи обо всех кандидатах, не задумываясь о том, какое мнение об Армении и армянах будет формироваться. Ведь всю эту муру будут читать "за бугром". Партлидер не скрывал своего разочарования по поводу поведения бывших и лично экс-президента Левона Тер-Петросяна, напомнил про ряд громких убийств, имевших место в годы его правления. В беседе же с корр. "НВ" заявил, что "считает своим святым долгом предупредить общественность о готовящихся искусных провокациях Тер-Петросяна и его окружения".

- От нарисованных вами мрачных перспектив с гражданскими столкновениями, страшными публикациями становится как-то не по себе. Может, вы все-таки несколько сгустили краски?

- Человек, который был очевидцем трагических столкновений между населением и войсками, имевших место в Ереване 27 мая 1990-го года, не понаслышке знаком с излюбленными кровавыми аодовскими технологиями. После всего, что я видел тогда, будучи мэром столицы, я не могу оставаться равнодушным к процессам, инициируемым бывшим президентом уже в наши дни. Думаю, если бывшие все-таки смогут спровоцировать волнения, именно мы будем способны утихомирить страсти...

- Но вам наверняка известно, что и другие политические деятели, кандидаты в президенты претендуют на роль "голубя мира". Собираетесь ли вы сотрудничать с ними?

- Безусловно. Все эти вопросы в той или иной мере обсуждались с коллегами во время различных встреч и консультаций - с представителями Дашнакцутюн Вааном Ованесяном и Арменом Рустамяном, с руководителем "Оринац еркир" Артуром Багдасаряном, с национал-демократом Шаваршем Кочаряном, с главой Демпартии Арамом Саркисяном, в частности и во время встречи в "Метелице". Эти вопросы мы неоднократно обсуждали с Паруйром Айрикияном. Он также разделяет наши опасения по поводу происходящего...

- Вы чувствуете в почерке "эксав" влияние извне?

- Не берусь говорить о географическом положении центров влияния, но факт остается фактом в ход идут давно испытанные технологии, которые применялись в Украине, в Грузии. И они в принципе срабатывают, потому что значительная часть населения неудовлетворена своим социальным положением, многие армянские семьи все еще не видят достойного будущего для своих детей. АОД умело спекулирует на всем этом, манипулирует сознанием недовольных слоев, и если их вовремя не остановить, то будет большая беда!

- На пресс-конференции вы заявили, что цель Тер-Петросяна

вовсе не президентское кресло...

- Все так. В стане бывших прекрасно знают, что их кандидат не наберет и 5% голосов избирателей. У них одна забота – приобщить международные организации к нашим внутренним делам, особенно те организации, которые работают под патронажем стран, не желающих продолжения армяно-российского стратегического партнерства. Других секретов не ищите. Наше партнерство с Россией как кость в горле у членов так называемой пантюркистской коалиции... Я не могу воспринимать серьезно социсследования, указывающие на то, что ЛТП будет фаворитом предвыборной гонки. Подобные опросы – часть пропагандистской шумихи, которую поднимает как проаодовская пресса, так и провластная. Да-да, не удивляйтесь... Властям куда легче оппонировать экс-президенту, компромат на которого, если сбить в кучу, будет исчисляться вагонами, чем Арташесу Гегамяну или Вазгену Манукяну...

- Зато вам активно, мягко говоря, оппонирует проаодовская пресса. А после недавней убойной порции критики в адрес ЛТП вас в очередной раз обвинили в пособничестве властям.

- Я одинаково не приемлю ни сегодняшних власть предержащих, ни прежний режим. "Национальное Единение" если и заостряет внимание на эках, то лишь по одной причине: их действия чреваты дестабилизацией ситуации в Армении, а это на руку нашим недругам по ту сторону границы, будь то Азербайджан или Турция. И зная, к чему это может привести, ты волея-неволей делаешь то, что делаешь. Другое дело, что действия твои, твоя позиция очень выгодны властям. В итоге получается как бы совпадение интересов. Однако мотивация у нас совершенно разная: руководство страны стремится удержать власть, моя же забота – спасение армянской государственности. Касательно же критики в мой адрес отвечу словами великого поэта: "Хвалу и клевету приемли равнодушно и не оспаривай глупца. "

Беседовала Анна САТЯН

"Новое Время", 15. XII. 2007.

**«ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՁԵՐԾ ՊԱՅԵԼ
ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՎԵՐԱՀԱՍ ՎՏԱՆԳԻՑ»**

ՀՀ նախագահի ընտրություններին սեփական թեկնածուով մասնակցող «Ազգային Միաբանություն կուսակցությունը» (ԱՄԿ) հանդես է գալիս երրորդ ուժի դիրքերից՝ ժողովրդին առաջարկելով զարգացման այն ուղին, որը նրան կբերի առավելագույն բարեկեցություն:

- Դուք ժամանակին ստանձնել էիք մի սեղանի շուրջ իշխանական և ընդդիմադիր ուժերի լիդերներին համախմբելու առաքելությունը: Մինչդեռ այսօր հանդես եք գալիս միայնակ և Ձեզ համարում եք երրորդ ուժ:

- Մենք խնդիր ենք դրել դառնալ երրորդ ուժ, եթե կարողանանք, որ ժողովրդական լայն զանգվածները դա ընկալեն որպես այլընտրանք նախկին և գործող իշխանություններին: Ինչ վերաբերում է իշխանություն – ընդդիմություն համատեղ հանդիպման կազմակերպման գաղափարին, ապա խոսքը մայր հարցի՝ ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորման սկզբունքների շուրջ միասնական, կոնսենսուսային փոխհամաձայնության անհրաժեշտության մասին է եղել: Նպատակ, որն այսօր էլ ենք շատ կարևորում: Մենք խնդիր էինք դրել գալ մի այնպիսի համաձայնության, որը կբացառեր թուրք-ադրբեջանական լրատվամիջոցներին և դրանց հովանավորող շահագրգիռ միջազգային ուժի կենտրոններին հրապարակավ նախապատվություն տալ ՀՀ նախագահի այս կամ այն թեկնածուին: Հան-

գամանք, որը ծանր կացության մեջ կղներ ոչ միայն մայր հարցի խաղաղ կարգավորումը, այլև նախագահի այն թեկնածուին, որին կփորձեն հովանավորել մեր երկրից դուրս գտնվող ուժերը: Ավա՛ղ, այս մտավախությունների իրականացման ականատեսը մենք արդեն իսկ դարձանք, երբ Լևոն Տեր-Պետրոսյանը վստահորեն գրավել է թուրքական լրատվամիջոցների սիրտը, ճիշտ այնպես, ինչպես են՝ հառակ իմաստով, գերել են ԶԳԾ-ական մամուլի ոգին:

Ահա սա է եղել մեր կողմից հետապնդվող հիմնական նպատակը, որի լուծման համար հանդիպումներ են ունեցել քաղաքական դաշտի գրեթե բոլոր երևելի լիդերների հետ, լինի դա Պարույր Զայրիկյանը, Լևոն Տեր-Պետրոսյանը, Սերժ Սարգսյանը, Ռոբերտ և Շավարշ Քոչարյանները, ԶՅԴ Գերագույն մարմնի ներկայացուցիչներ Վահան Զովհաննիսյանը և Արմեն Ռուստամյանը: Իսկ «Մետելիցա» սրճարանում հանդիպել են Ստեփան Դեմիրճյանի, Արթուր Բաղդասարյանի, Արարատ Ջուրաբյանի և այլոց հետ: Ցավոք, չհաջողվեց բոլորին մեկտեղել մի սեղանի շուրջ: Բայց մեր սրբազան պարտքն ենք համարել հանդիպումների մասին իրազեկել ժողովրդին, որպեսզի չլինեն զանազան ասեկոսեներ, որպեսզի մարդիկ տեղեկացված լինեն ճշմարտության մասին, այլ ոչ թե հայտնվեն սև քարոզի ազդեցության տիրույթում: Առաջիկայում ևս, անհրաժեշտության դեպքում, հանուն ազգի միաբանության պարտավոր են հանդիպել Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի, Լևոն Տեր-Պետրոսյանի և քաղաքական ցանկացած լիդերի հետ, որովհետև սա այն դեպքն է, երբ գիտակցում են, որ վտանգված է հայոց պետականությունը, և այդ պարագայում այլևս իշխանություն կամ ընդդիմություն լինելը չպետք է միասնական ճակատով գործելուն խոչընդոտ հանդիսանա:

- *Եվ ինչպե՞ս են արձագանքում Ձեր նախաձեռնությանը:*

- Իմ գործողություններով ցանկանում են վերահաս վտանգից զերծ պահել մեր ժողովրդին, հաշվի չառնելով, թե ինչպիսի թշնամական արձագանքի կարժանանամ թե՛ նախկինների և թե՛ գործող

իշխանությունների կողմից, բարեկամական քայլով ընդառաջ են գնում բոլորին: Չէ՞ որ առճակատման այն ճանապարհը, որն երկուստեք ընտրել են, լի է փորձություններով: Ու եթե «Ազգային Միաբանությունը» կողքի կանգնի ու ծափ տա ընթացող զարգացումներին, խրախուսի երկու կողմերի թվացյալ վճռականությունը, հրահրի այդ առճակատման սրացումը՝ փայփայելով ճիզվիտական տեսլական, որ դրա արդյունքում երկու կողմերն էլ կթուլանան, մենք էլ մաքուր կմնանք քաղաքական դաշտում, ապա դա մեզ համար անընդունելի, ավելին, խիստ դատապարտելի է: Դա ոչ այլ ինչ է, քան դավաճանական քաղաքականություն մեր ժողովրդի, մեր պետության նկատմամբ:

Ահա այսպիսի գիտակցությամբ ենք առաջնորդվում մեր կուսակցության քաղաքականությունն իրականացնելիս: Ջարմանում են, որ ԱՄԿ-ի այդ գործելաոճը այլ մեկնաբանություն է ստանում: Եվ, այո, հիմա էլ կրկնում են, ես պատրաստ եմ հանուն ՀՀ-ի, հանուն ազգային միաբանության շարունակել աշխատել թե՛ նախկին, թե՛ գործող իշխանությունների հետ, միայն թե հասարակությանը զերծ պահենք պառակտվածությունից, երկիրը՝ հնարավոր ապակայունացումից, և որ հանկարծ դրանից չօգտվեն մեր դարավոր թշնամիները: Պետության շահը մեզ համար այն սրբությունն է, որն ամենևին մենք չենք պայմանավորում իշխանության դեկին հայտնված մարդկանց նկատմամբ մեր ունեցած վերաբերմունքով: Հիշո՞ւմ եք, Ռոմանովների դինաստիայի վերջին շառավիղներից մեկի հայտնի խոսքերը: Երբ գեներալ-լեյտենանտ Անդրեյ Վլասովի խնդրանքին՝ սովետական բանակի դեմ կռվի մեկնելուց առաջ ընդունել իրեն, նա իր համհարզի միջոցով փոխանցել էր, որ Ռոմանովները հայրենիքի դավաճանների հետ չեն հաղորդակցվում: Եվ ասողն այն մարդն էր, որի ողջ գերդաստանին սովետական վարչակազմի հրամանով գնդակահարել էին 1918-1921 թթ.: Այ, երբ արժեհամակարգային այս բարձրությունից ես երբ գնահատում քո քայլերը, ապա այնքան էլ չես կարևորում, թե ինչպիսի գնահատականների

կարժանանաս:

- *Ձեր ելույթներում մշտապես քննադատել եք նախորդ և ներկա իշխանություններին: Համոզված եք, որ Ձեզ կհաջողվի մեղմել երկու բևեռների միջև առկա լարվածությունը:*

- ԱՄԿ-ն հավասարապես և հրապարակավ մերժել ու մերժում է և՛ նախորդ, և՛ ներկա իշխանություններին, ու դա բնավ էլ գաղտնիք չէ: Ես, կրկին նշեմ, որ վտանգավոր եմ համարում օրըստօրե շիկացող նրանց առճակատումը՝ դրանց բախման կործանարար բոլոր հետևանքներով: Այդ է պատճառը, որ ԱՄԿ-ն հանդես է գալիս սեփական թեկնածուով: Մեր խնդիրն է քարոզարշավը ծառայեցնել երկրի համար արարումների ճանապարհ ցույց տալուն, հասարակությանը քաղաքացիական բախումներից զերծ պահելու նպատակին: Ակնհայտ է, որ հասարակության որոշակի մասը չի ընդունում թե՛ գործող և թե՛ նախորդ իշխանություններին: Մինչդեռ երկու կողմերից մարդկանց պարտադրում են ընտրություն կատարել սևի և սպիտակի միջև, ըստ որում՝ յուրաքանչյուր կողմը սպիտակ, լուսաբեր է համարում միայն իրեն՝ ժխտելով մյուսներին: Իրավիճակ, որն անթույլատրելի և մերժելի է մեր կողմից: Մենք խնդիր չունենք բարոյական ավերածություններ անել նախկին և ներկա իշխանությունների դաշտում, որովհետև մեր երկրում այսօր դա կարող է կործանարար հետևանքներ ունենալ պետության համար: Ահա այս գիտակցումով է, որ մենք չենք խարխլում պետականության հիմքերը, այս գիտակցումով է, որ այսօր փոքր-ինչ ավելի մեղմ գնահատականներ ենք տալիս իշխանություններին: Նախորդ իշխանությունների լրատվամիջոցների ստի և կեղծիքի վրա հիմնված ու մեր հասցեին ուղղված հերյուրանքները ստիպեցին մեզ տալ շատ մեղմ «բացատրություններ»: Ցավոք, այս գնահատականները վաղն այլ կերպ կմեկնաբանվեն և կծառայեցվեն մի խնդրի լուծման՝ երկրի վիճակն ապակայունացնելու գործին: Կրկնում եմ, լեռնականների նպատակը մեկն է՝ ամեն գնով ապակայունացնել իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում, ստեղծել նախադրյալներ, որոնք

հնարավորություն կտան դրսի ուժերին միջամտել մեր ներքին գործերին, ինչը կործանարար կլինի Հայաստանի համար: Իմ դեմ վաղը թե՛ հանրահավաքային, թե՛ ՀՀԾ–ի շխտանական լրատվամիջոցների կողմից մի նոր արշավ է սկսվելու, թող հարձակվեն: Կարճ ժամանակ անց իմ բոլոր ասածները մամուլում հրապարակվելուց հետո կդառնան փաստաթուղթ, որը հանգիստ խղճով կդնեն պատմության սեղանին:

Ահա այս դիրքերն ենք մենք պաշտպանում, մինչդեռ ընդդիմադիր ինքնահռչակված մյուս թևը դավաճանության, ծախվածության, էլ ինչ պիտակ ասես, որ չի կայցնում մեզ, բայց մեր խիղճը հանգիստ է: Մենք գալու ենք իշխանության, բայց չենք գալու իրենց դատելու, մենք գալիս ենք ասելու, որ առճակատման արդյունքում բռնկված հրդեհի մարումը վերցնում ենք մեզ վրա:

Նախընտրական այս փուլում մեր նպատակն է մեղմել իրավիճակը երկրում: ԱՄԿ-ն գիտակցում է, որ բարեփոխված Սահմանադրությամբ վարչապետը ներկայացվում է ԱԺ մեծամասնություն կազմող ՀՀԿ, ԲՀԿ և ՀՅԴ առաջարկով: Եվ եթե հիմա գործադիր իշխանությունը հայտարարում է, որ ընտրում է բարեփոխումների ճանապարհը, ապա այս իրավիճակում, կարծում են, ՀՀ նախագահը չպետք է լինի իրենցից: Հանրապետության նախագահը պետք է հակակշիռ լինի այն մարդկանց, ովքեր այսօր էլ իշխանության մեջ կան նրանց թիկունքում կանգնած խանգարում են բարեփոխումների իրականացմանը, կոռուպցիայի, կաշառակերության դեմ պայքարին:

- Մի առիթով ասել եք, որ երբ Լևոն Տեր-Պետրոսյանին ես լսում՝ կրիմինալը իշխանություններն են, իշխանությունների ասելով էլ՝ Լևոնն է: Դուք ո՞ւմ եք համարում կրիմինալ:

- Նախկինների գործունեության իմ տեսակետը 1997թ. հոկտեմբերի 17-ին համայն հայությանն ուղղված հայտնի կոչում է արտահայտված, որի տակ ստորագրել են մեր ազգի մեծ մտավորականները: Մենք այնտեղ տվել ենք նախկին իշխանությունների անաչառ

գնահատականները, ինչը վերահաստատում ենք և այսօր: Ինչ վերաբերում է գործող իշխանություններին տված գնահատականներին, ապա դրանք նշված են 2007թ. իմ հեղինակած «Հակաճգնաժամային ծրագրում»: Ծրագրում 78 էջի վրա մանրակրկիտ տրված են մեր խիստ քննադատական գնահատականները Հայաստանի իշխանություններին՝ ցանկացած ոլորտի հիմնավոր վերլուծության հիման վրա: Եվ այդ ամենը ներկայացրել ենք ազգաբնակչության դատին:

Մենք ի վերուստ օժտված չենք որևէ մեկին դատապարտելու առաքելությամբ, բայց եթե ազնիվ քաղաքական գործիչ ես, ապա պարտավոր ես քաղաքական գնահատական տալ, այլ ոչ թե դատավորի կեցվածք ընդունել: Եվ, ի վերջո, Աստվածաշնչյան հայտնի պատվիրան կա՝ «Մի դատիր, որ չդատվես»:

- Առաջիկա ընտրություններում քաղաքական ո՞ր ուժերի աջակցությանն եք ապավինում:

- Մենք ապավինում ենք ժողովրդի ամենալայն զանգվածների աջակցությանը: Եթե այս կամ այն քաղաքական ուժը մեր ծրագրային դրույթները կհամարի հոգեհարազատ և կհայտարարի դրան իր սատարման մասին, ընդ որում, սկզբունքային գնահատականներն կընդունի առանց վերապահումների, կընդունի նաև նախկին ու ներկա իշխանություններին տված մեր գնահատականները, ապա մենք միայն շնորհակալ կլինենք:

- Վերջին շրջանում ԱԻՄ և ԺՈՒԿ առաջնորդների հետ հաճախակի հանդիպումների վերջնարդյունքում ԺՈՒԿ ղեկավար Մանուկ Գասպարյանի կտրուկ շրջադարձը դեպի Տեր-Պետրոսյանը Ձեզ համար անակնկալ էր:

- Ես դուրս եմ եկել այն տարիքից, երբ առօրեական դրսևորումներն ընկալեմ որպես անակնկալ: Սակայն դրա հետ մեկտեղ նշեմ, որ եթե լինի փորձառու և հայոց պետականության կայացման ռավիրայի այնպիսի գործչի աջակցությունը, ինչպիսին Պարույր Հայրիկյանն է, դա մեզ համար բարոյական խթան կհանդիսանա: Ինչ

վերաբերում է Մանուկ Գասպարյանին, ապա մեր հանդիպումների արդյունքները նորմալ են գնահատում: Ցանկացած մարդ, կուսակցության լիդեր ազատ է իր որոշումների մեջ: Ահա սրանով են առանձնահատուկ եղել մեր հանդիպումները: Որևէ քաղաքական ուժի որևէ որոշում ընդունելու պարտավորեցնող հանդիպում չի եղել: Ես հարգանքով եմ մոտենում ցանկացած կուսակցության դիրքորոշմանը, դա կլինի հօգուտ մեզ, ընդդիմադիր դաշտի կամ իշխանության ներկայացուցչի: Վերջին հաշվով, եթե քարոզում ես ժողովրդավարություն, ապա պետք է հարգես ժողովրդավարության պտուղներից օգտվող ամգամ քաղաքական քո մրցակցի որոշումները: Ամփոփելով միտքս՝ ասեմ, որ եթե այդպիսին չլիներ մեր սկզբունքային դիրքորոշումը, ապա ո՞րը կլիներ մեր և ՀՀԸ-ի պարագլուխների տարբերությունը:

- Եթե, այնուամենայնիվ, երկրորդ փուլում հանդես գան Տեր-Պետրոսյանը և Սերժ Սարգսյանը՝ ո՞ւմ կսատարեք:

- Ես բացառում եմ, որ երկրորդ փուլում կարող են հայտնվել Սերժ Սարգսյանն ու Տեր-Պետրոսյանը, իսկ այն, ինչ բացառում եմ, դրա մասին եզրակացություններ և վերլուծություններ չեմ անում: Կարծիք կա, որ երկրորդ փուլում մեր ակտիվն ու համակիրների ստվար զանգվածը հնարավորություն կունենան պաշտպանելու Արտաշես Գեղամյանին, իսկ թե ով կլինի երկրորդը՝ ժողովուրդը կորոշի:

- Մամուլում Ձեզ բազմիցս համարել են ական ընդդիմության դաշտում: Մինչդեռ Ձեր կուսակցության հիմքում, հիրավի, գործում էր ական, քանի որ վերջերս ակտիվացել են կուսակցության շարքերը լքող մարդիկ: Ինչպե՞ս եք վերաբերվում նրանց:

- Տեսնո՞ւմ եք, որ դուք էլ եք հայտնվել ՀՀԸ-ական մամուլի ապատեղեկատվության «գոհերի» շարքում: Սակայն հարցը հնչել է, ուստի պարզաբանեմ: Ալեքսանդր Սերգենիչ, բայց ոչ Պուշկինը, այլ Գրիբոյեդովն իր գրական հերոսի շուրթերով մի առիթով ասել էր. իսկ դատավորներն ովքե՞ր են: Ձեր տված այդ հարցերից մեկին, իմ

կարծիքով, սպառիչ պատասխան տվեց ԱՄԿ Շիրակի տարածքային կազմակերպության բազմափորձ ղեկավար, մեծ հայրենասեր Լևոն Չակոբի Գալստյանը, երբ ասաց. «Արտաշես Գեղամյանը ոչ թե ական է, այլ միջնայրցամաքային հրթիռ է, որն ավերածություններ է առաջացրել թուրք-ադրբեջանական քարոզամեքենայի տիրույթում՝ բարձր պահելով ՀՀ պատիվը»: Ինչ վերաբերում է ձեր խոսքերին՝ մեր կուսակցությունում ներդրված ական լինել-չլինելուն, ապա չարաչար սխալվում եք: Մենք մեծապես հարգում ենք մեր կուսակցության յուրաքանչյուր անդամի, ով իր տեսակետն է բարձրաձայնում, եթե անգամ այն տարբերվում է կուսակցության տեսակետից: Դա ևս վկայում է, որ մեր կուսակցությունը ժողովրդավարության հիմքի վրա խարսխված կուսակցություն է: Ուրիշ բան, որ կուսակցության ընդունած որոշումներին չենթարկվող մարդիկ դուրս են մնում մեր շարքերից: Իսկ ինչ վերաբերում է երեքունու համայնքի 7 տարածքային կազմակերպություններից մեկի ղեկավարին, ապա ես շատ շնորհակալ եմ ՀՀԾ-ական լրատվամիջոցներից, որ այդքան բժախնդիր են ԱՄԿ-ի նկատմամբ, որ այդքան ցավում են կուսակցության «անհաջողությունների» համար: Չորս հարյուր տասնմեկ (411) տարածքային կազմակերպություններից միայն մեկի ղեկավարը բարձրաձայնեց Լևոն Տեր-Պետրոսյանին սատարելու մասին և հաջորդ օրը հայտնի թերթերի առաջին էջերում զետեղվեցին դա ավետող հայտարարությունները: Իսկ թե դրան ի՞նչ հաջորդեց, նրանք համեստորեն կամ լռեցին, կամ կցկտուր ինչ-որ բաներ գրեցին: Իրողությունն էլ այն էր, որ հայտարարության տակ ստորագրած ընդամենը երեք հոգուց, կրկնում են՝ 411 տարածքային ղեկավարներից, երկուսը հրաժարվեցին Լևոն Տեր-Պետրոսյանին սատարելու հրապարակ նետված գաղափարից: Այո, կյանքն ապացուցել է, որ ԱՄԿ-ին երբեք ու երբեք դավաճանել չի կարելի, դա անհեռանկար զբաղմունք է և անփառունակ վախճան կունենա:

- *ԼՂ հարցը շահարկումներից, ինչպես նաև արտաքին ուժերի ազդեցությունից խուսափելու ի՞նչ տարրերակ եք առաջարկում:*

- Ես առաջարկել եմ (և սեպտեմբերի 7-ին կուսակցության հայտարարության մեջ էլ նշվում է), որ ՀՀ նախագահի ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր թեկնածու պետք է ստորագրի կոնսենսուսային փաստաթղթի տակ, որտեղ մատնանշվում են ԼՂ-ի հիմնահարցի լուծմանն ուղղված սկզբունքային մոտեցումները: Դա զերծ կպահի ուժի միջազգային կենտրոններին միջամտելու մեր ներքաղաքական գործընթացներին: Դեռևս 1999 թ. գարնանը նման բովանդակության փաստաթղթի տակ ստորագրել են ԱՄԿ, ԱԺՄ, ՀՀԿ, ՀՅԴ, «Օրինաց երկիր» խորհրդարանական խմբակցությունների ներկայացուցիչները: Բայց քանի որ նախագահական առաջիկա ընտրություններին մասնակցում են մարդիկ, ովքեր չեն ստորագրել նման բովանդակություն ունեցող փաստաթուղթ, ուստի նմանատիպ հայտարարության տակ իրենց ստորագրությունը դնելն իր արդիականությունը չի կորցրել:

- ԼՂ-ի հարցի հանգուցալուծումը շահարկվող թեմա է նախկին և ներկա իշխանությունների համար: Հանրությունը, ի վերջո, պետք է տեղեկանա՞ հարցի լավագույն լուծման տարբերակին:

- Ստացվում է մի այնպիսի իրավիճակ, որ երբ ցանկացած քաղաքական ուժի հայտնած տեսակետը համահունչ չէ գործող կամ նախկին իշխանությունների տեսակետներին, ապա երկու կողմի մամուլն էլ շահակումների մեջ մեղադրում է այլակարծություն հայտնած քաղաքական ուժին: Սա համապետական բախտորոշ հարց է, և բոլորս պարտավոր ենք որդեգրել միասնական մոտեցում՝ գիտակցելով վերահաս վտանգները, հասկանալով, որ, ցավոք, մեր այս արդարացի պայքարում շրջապատված և շրջափակված ենք ոչ բարեկամաբար տրամադրված երկրների, միջազգային ուժի կենտրոնների կողմից: Քանիցս ասել եմ, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչման մասին հայտարարել է անգամ իսկ մեր ռազմաքաղաքական դաշնակից Ղազախստանն ի դեմս նախագահ Նուրսուլթան Նազարբաևի: Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասին հայտարարել են Եվրախորհրդի գլխավոր

քարտուղար Թերի Դևիսը և Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ռեննե վան դեր Լինդենը: Էլ չեն ասում խնդրո առարկայի շուրջ ԵԱՀԿ անդամ երկրների կողմից ստորագրված լիսաբոնյան գազաթափողովի հայտնի փաստաթղթի մասին, որի տակ Տեր-Պետրոսյանը հարկադրված էր չստորագրել և, ի պատիվ իրեն, վետո դնել:

Ահա այս բոլորը գիտակցելով է, որ ես ընտրել եմ մեր ազգաբնակչության որոշակի զանգվածին հաճո չլինելու ճանապարհը: Պարզ ասենք, որ, այո, կա մարդկանց որոշակի զանգված, որը հոգնել է շրջափակումից, պատերազմի վտանգից, խիստ դժգոհ է իր ապրուստից: Եվ եթե նրանց ականջին հաճո լուրեր ես հասցնում՝ ԼՂ-ի հիմնահարցի շուտափույթ լուծման մասին, ապա նրանք այնքան էլ հակված չեն հարցնել՝ իսկ այդ բաղձալի լուծումների գինն ի՞նչ է: Ահա այստեղ է, որ պետք է փնտրել հայտնի ուժերի կողմից հատկապես վերջերս դրսևորվող թշնամական վերաբերմունքի արմատները անձիս նկատմամբ: Եվ եթե այս հարցում մեր մոտեցումները համընկնում են գործող իշխանությունների հետ, մենք դրանք թաքցնելու խնդիր չունենք: ԼՂ շուրջ բանակցությունները չի կարելի համարել լճացում, պարզապես կողմերի դիրքորոշումները գնալով ավելի են կարծրացել: Այն, ինչ ընդունելի է Հայաստանի համար, մերժում է Ադրբեյջանը, և ճիշտ հակառակը: Այս ամենի գիտակցումով էր, որ մշտապես կարևորում ենք ՀՀ տնտեսության առաջընթաց զարգացման խնդիրը, որովհետև եթե մենք պատերազմում հաղթանակած ենք դուրս եկել, ցավոք, նույնը չի կարելի ասել տնտեսական մրցակցության մասին: Ահա դրա համար էլ շատ ենք կարևորում հաղթանակը նաև տնտեսական մրցակցության ոլորտում, ինչի նախապայմանը երկրի կայուն վիճակն է:

- *Ինչպե՞ս եք գնահատում ՎՈՒԱՄ-ի գործունեությունը, մի կառույց, որում ընդգրկված չէ ՀՀ-ն:*

- Հայաստանի Հանրապետությունը չէր էլ կարող լինել այդ կառույցում, որովհետև ՎՈՒԱՄ-ը ստեղծվեց, “чтобы дружить против

России”, իսկ Յայաստանը, ունենալով Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական սերտ հարաբերություններ, ի սկզբանե, չէր կարող անդամակցել մի կառույցի, որի առանցքը կազմում են Ուկրաինան, Մոլդովան, Վրաստանն ու Ադրբեջանը: Վերջին երկու երկրների իշխանությունների վարած քաղաքականությունը, ցավոք, դեմ է մեր ազգային շահերին: Ես խիստ մտահոգ եմ մեր վրաց եղբայրների առանձին որոշումներով, որի առիավատչյան Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթգծի կառուցումն է, իսկ դա էլ այն դեպքում, երբ կար Կարս-Գյումրի երկաթգիծը:

Ջրույցը վարեց Անուշ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է, ՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԻՄԱՆԱ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին շրջանում ընդդիմադիր բևեռ ինքնահռչակված ուժերին սպասարկող լրատվամիջոցները զրպարտության, ապատեղեկատվության քարոզարշավ են սկսել նախագահական առաջիկա ընտրություններին մասնակցության մասին հայտարարած գրեթե բոլոր թեկնածուների դեմ: Առավել ջանադրաբար են մրտտում «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ, ՀՀ նախագահի թեկնածու առաջադրված Արտաշես Գեղամյանին: Նրա հասցեին ուղղված «մեղադրանքներին» ու թղթակցի տված հարցերին պատասխանում է հենց ինքը՝ պարոն Գեղամյանը:

– Պարոն Գեղամյան, ինչո՞վ եք բացատրում այն հանգամանքը, որ վերջին շրջանում ՀՀԾ-ական մամուլն առանձնակի կատաղությանը է հարձակվում թե՛ Ձեր, թե՛ «Ազգային Միաբանություն կուսակցության» ընտրանու վրա: Մասնավորապես, Ձեզ մեղադրում են, որ դեռ 1998 թ. նախագահական ընտրությունների 2-րդ փուլում Դուք չպաշտպանեցիք Կարեն Դեմիրճյանին, իսկ 2003 թ. նախագահական ընտրությունների 2-րդ փուլում նրա որդուն՝ Ստեփան Դեմիրճյանին: Հիմա էլ չէք սատարում Լևոն Տեր-Պետրոսյանին:

– Ձեր դիտարկումը միանգամայն տեղին է, ուստի հերթով անդրադառնամ վերը նշված հարցերին: Դեռ 1997 թ. հոկտեմբերի 17-ին «Ազգային Միաբանություն կուսակցությունը» հանդես եկավ համայն հայությանն ուղղված կոչ ընդունելու նախաձեռնությամբ, որտեղ, մասնավորապես, տրված էր Լևոն Տեր-Պետրոսյանի վարչակազմի գործունեության սկզբունքային և խիստ գնահատականը: Մեր այդ նա-

խածնունությունը պաշտպանեցին, ավելին, արժեքավոր առաջարկություններ, լրացումներ կատարեցին հանրապետության, բառիս իսկական առումով, խիղճը հանդիսացող այնպիսի մեծություններ, ինչպիսիք են՝ ակադեմիկոսներ Սիլվա Կապուտիկյանը, Լենդրուշ Խուրշուդյանը, Սերգեյ Աբրահամյանը, Վլադիմիր Խոջաբեկյանը, Լենսեր Աղալովյանը, Ռաֆայել Ղազարյանը, Դավիթ Սեդրակյանը, ԽՍՀՄ ժողովրդական դերասան Սու Սարգսյանը, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Սարգիս Մուրադյանը, վաստակաշատ արձակագիրներ Պերժ Ջեյթունցյանը, Անահիտ Սահինյանը, Ալվարդ Պետրոսյանը, նշանավոր բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը, արձակագիր և կինոդրամատուրգ Ռուբեն Յովսեփյանը, հրապարակախոս Արմեն Յովհաննիսյանը... Բոլորին չթվարկեմ, մարդիկ, ովքեր իրենց ողջ կյանքով ապացուցել են սեփական ժողովրդին, հայրենիքին անբասիր ծառայելու և անմնացորդ նվիրված լինելու փաստը: Կոչում տրված գնահատականները մեկնաբանելու փոխարեն, ես այդ ընդունված փաստաթղթից մեջբերումներ ներկայացնեմ ընթերցողներին, որպեսզի ժողովուրդը մեկ անգամ ևս ծանոթանա ուղերձում տրված գնահատականներին, որոնք հիմնավոր և ոչ մի փաստարկված նյութերով չհերքվեցին: Ձեր ուշադրությանն են ներկայացնում 1997թ. հոկտեմբերի 18-ին «Գոլոս Արմենիի» թերթում հրապարակված կոչի տեքստը (կրճատումներով).

*«ԱՆՅՐԱԺԵՇՏ Է ԱԶԳԱՅԻՆ ՎՍՏԱՅՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ
Կոչ համայն հայությանը*

Չայրենակիցներ, մեր Չայրենիքը կանգնած է աղետի եզրին, ինչը օբյեկտիվ իրողություն է դարձել Չայաստանի Չանրապետության ղեկավարության հանցավոր գործունեության հետևանքով: Մի խումբ ամբոխավարներ, որոնք իրենց տվել են հավակնոտ «Չայոց համազգային շարժում» անունը, բռնազավթելով Արցախը Չայաստանի հետ միավորելու հայ ժողովրդի փայփայած նվիրական երազանքը և այդ ալիքի վրա գալով իշխանության, կարճ ժամանակ անց դեն մետեցին ազգային-ազատագրական զաղափար-

ները, ի չիք դարձրին համայն հայության սրբազան սպասումները, ի վիճակի չեղան մշակել ու իրականացնել, իրոք, համազգային ծրագրեր:

Ավելին, ԴՅԸ-ական ղեկավարների և նրանց կցված նախկին ռեժիմի շողորթ ու անտաղանդ պաշտոնաժողովների 6-ամյա կառավարումը երկրին բերեց անդառնալի կորուստներ: Կենսագործունեության բոլոր ոլորտներում փոշիացված է նախորդ սերունդների ջանքերով կուտակված մեր վիթխարի ժառանգությունը: Շուկայական հարաբերությունների անցման քողի տակ քարուքանդ արվեց և թալանվեց մեր հզոր արդյունաբերությունը: Դռնուս պահպանված արտադրական և գիտատեխնիկական ներուժին սպառնում է վերջնական կործանում: Արտասահմանյան տարբեր աղբյուրների կողմից տրամադրված միջոցները հիմնականում վատնված և թալանված են: Երկիրը դատապարտված է դառնալ էժան աշխատուժ մատակարարող կիսագաղութային կցորդ, ստացված վարկերը նյութական և հոգեբանական ծանր բեռ են դարձել ներկա ու ապագա սերունդների համար:

Քաղաքական շահարկումների գոհ է դարձել գյուղատնտեսությունը: Հողի սեփականաշնորհման արդար և հուսադրող գաղափարը փոխարինվել է արկածախնդրությամբ: Արդյունքում՝ խոշոր ապրանքային տնտեսությունը վերածվեց բնատնտեսության, թալանվել և վերացվել են հիմնական ֆոնդերը: Գյուղացին զրկվել է արտադրության միջոցներից: Վերացվել են բարձրաապրանքային տնտեսությունները, ավերվում են խաղողի և պտղատու այգիների հսկայական զանգվածներ: Գյուղատնտեսական շրջանառությունից դուրս է մնացել հողային մակերևույթների հսկայական քանակություն:

Քայքայման են հասցված կրթության և առողջապահության համակարգերը, մշակույթի օջախները, երբեմնի համաշխարհային հռչակ ունեցող մեր գիտությունը: Սրընթացորեն փոխվում է հանրապետության ժողովրդագրական տեսքը: Մեր երկիրը դատարկվում է՝ ի ուրախություն թշնամու, որը հենց այդ նպատակն է հետապնդում: Բնակչության գրեթե 1/3-րդը ժամանակավոր կամ վերջնականապես հեռացել է երկրից՝ արտասահմանում ենթարկվելով բարոյական և հոգեկան աննկարագրելի նվաստացումների: Սկսվել է գիտատեխնիկական ընտրանու արտահոսքը: Այդպես էլ չեն բուժվել աղետի գոտու վերքերը:

Բնակչությունը հայտնվել է սոցիալական ծանր պայմաններում: Աննա-խաղեպ բևեռացումը ակնհայտ փաստ է. ՄԱԿ-ի «1996 թ. ընթացքում մարդու զարգացման մասին» զեկույցի համաձայն՝ Հայաստանի բնակչության շուրջ 85%-ը ապրում է աղքատության մեջ կամ աղքատության սահմանից ցածր: Ազգային հարստության 75%-ը կուտակված է 7-8% ճարպիկների՝ հիմնականում հանրապետության ղեկավարների, բարձրաստիճան պաշտոնյաների, նրանց բարեկամների և մերձավորների ձեռքում:

Մի բևեռում ծայրահեղ աղքատություն է, մուրացկանություն և գործազրկություն, մյուսում՝ հարստության անօրինական կուտակում, անբարոյակա-նություն, անամոթություն: Բացահայտ մեծամտությամբ արհամարհելով հասարակական կարծիքը, իշխանավորները զբաղված են թալանով, գանձագողությամբ, շքեղ առանձնատների կառուցմամբ, հասարակական նշանակության շենքերի, նույնիսկ՝ ուսումնական հաստատությունների զավթումով: Կաշառակերությունն աներևակայելի չափերի է հասել: Հանրապետությունը հայտնվել է իշխանության հետ սերտաճած մաֆիոզ տնտեսական կլանների աքցաններում, ինչը ծախողում է իրական շուկայական հարաբերությունների և ազատ ձեռներեցության արմատավորումը:

Ղեկավարության անհանդուրժողականությունը, ջղաձիգ ձգտումը միանձնյա և հավերժ իշխանության՝ ծայրահեղորեն սրել է քաղաքական հակամարտությունը, գործը հասցնելով անթաքույց թշնամանքի: Փոխանակ ապահովեն ժողովրդի բոլոր ուժերի միասնականությունը, ինչը հրամայական պահանջ է մեր փոխվող հայրենիքի պետականության կայացման և կայունության գործում, Արցախի հիմնախնդրի արդարացի լուծման պայքարում, իշխանություններն ընտրել են քայքայման, ազգային ուժերին իրար հակադրելու քաղաքականություն, հրաժարվել են «Մեկ ազգ, մեկ հայրենիք» նվիրական գաղափարից, օտարելով սփյուռքը՝ զրկել են նրան ողջ հայ ազգի ճակատագրի համատեղ կերտմանը մասնակցելու առաքելությունից: Նախաձեռնվում են վտանգավոր փորձեր՝ անդունդ բացել Արցախի և Հայաստանի հայության միջև: Պատվիրված քաղաքական դատական պրոցեսները, չբացահայտված հանելուկային սպանությունները, գործող վարչակարգի ամեն մի լուրջ քննադատության պարագայում՝ պատե-

րազմի ուրվականի մշտական շահարկումը ուժեղացնում են վախի, սոցիալական անելանելիության զգացումը ժողովրդի գիտակցության մեջ, որն առանց այն էլ ապրում է ծանր կյանքով:

Խոր մտահոգություն են առաջացնում զինված գաղտնի խմբավորումների կողմից սանձազերծված ինքնակամ գործողությունները, որոնք ոչ միայն չեն պատժվում, այլ նաև հովանավորվում են իշխանությունների կողմից:

Ժողովրդավարության, մարդու իրավունքների խախտման խայտառակ օրինակ էր բիրտ ուժի կիրառումը 1996 թ. սեպտեմբերին կայացած ընտրությունների կեղծումից վրդովված ժողովրդական բազմահազարանոց զանգվածի հանդեպ՝ օգտագործելով բանակի, ինչպես նաև Արցախում կռված երկրապահ ջոկատների ուժերը: Դա անթաքույց սադրանք էր, որի իրական հեղինակը վաղ թե ուշ կկանգնի ժողովրդի և պատմության դատաստանի առջև:

Մենք խորապես ցավում ենք, որ իշխանությունների բաժանարար քաղաքականության արդյունքում մեզանում այդպես էլ չձևավորվեց քաղաքական լուրջ ընդդիմություն: Իսկ ներկայիս ընդդիմության որոշ ղեկավարներ ժողովրդի կողմից արդարացիորեն ընկալվում են որպես մարդիկ, ովքեր ծառայել են ԳԳՇ-ի գաղափարախոսությանը և սերվել են նրա տարբեր խմբավորումներից, որոնց ժամանակ և որոնց անմիջական մասնակցությամբ սկիզբ է դրվել այսօրվա բացասական երևույթներին ու դրանց հետևանքներին:

Սեպտեմբերյան մամլո ասուլիսում հանրապետության նախագահի հայտարարությունները վերջնականապես բացահայտեցին երկրի ղեկավարության անճարակությունը նաև արտաքին քաղաքականության բնագավառում: Տապալված է դիվանագիտական ճանապարհով Արցախի անկախության ճանաչման գործի պաշտպանության փորձը: Սեփական ժողովրդին սպառնալ արտաքին ռազմական միջամտությամբ, թշնամու առջև բացել բոլոր խաղաքարտերը բանակցություններից առաջ, ակնհայտորեն ցուցադրել մեր դիրքորոշման հնարավոր ուժեղ և թույլ կողմերը՝ այս ամբողջը աննախադեպ բան է ցանկացած պետության ղեկավարի համար: Դա հավասարազոր է հանձնվելուն՝ առանց նախապայմանների: Դա անհարգալից վե-

րաբերմունք է հազարավոր հայ հերոսների հիշատակի հանդես, ովքեր պատերազմի դաշտում զոհաբերած իրենց կյանքի գնով ապահովեցին Արցախի հաղթանակը:

Հանրապետության տխուր իրավիճակը բացատրել միայն Արցախի հիմնախնդրով և Հայաստանի շրջափակումով, ավելին սպառնալ, որ այս իրավիճակը շարունակվելու է, եթե ժողովուրդը շարունակի մնալ «ոչ իրատես», ինչպես արեց հանրապետության նախագահը, դա փորձ է սեփական վարչակազմը հեռացնել համընդհանուր աղետի պատասխանատվությունից: Լևոն Տեր-Պետրոսյանը և նրա կամակատարներն այդպես էլ չստեղծեցին ճգնաժամից դուրս գալու իրական ծրագիր: Մարդ, որն ունի փոփոխական հայացքներ և պարտվողական ոգի, երբեք ու երբեք չի կարող լինել ժողովրդի մեծամասնության երազանքների ու վճռականության արտահայտողը: Նրա մամլո ասուլիսը ևս մեկ փորձ է դուր գալ վերջին շրջանում իրենից երես թեքած Արևմուտքին՝ հույս ունենալով շարունակել պահպանել սեփական՝ սվինների միջոցով պահպանվող աթոռը:

Նախագահի պարտվողական կոչերն էլ ավելի են բարոյազրկում բնակչությանը, նրա մեջ սերմանում հուսահատություն և զրկում ժողովրդին լավատեսությունից ու ազգային հեռանկարից:

Այսուհետ ակնհայտ է, որ իշխանությունները վերածվել են հակաազգային ուժի, և վարչակազմի գոյատևման յուրաքանչյուր օրը սպառնում է երկրի անվտանգությանը ու կարող է կործանարար լինել մեր անկախ պետականության ապագայի համար:

Հայաստանում մենք ունենք կաթվածահար եղած գործադիր իշխանություն, խանաճիկային Ազգային ժողով և ցուցադրական Սահմանադրական դատարան, որոնք ի վիճակի չեն դեկավարել ազգային կյանքը ...»:

Սիրելի ընթերցող, ծանոթանալով մեր գնահատականների հետ, ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս կարող էի ես 1998 թ. նախագահական ընտրությունների 2-րդ փուլում պաշտպանել, այո, իմ կողմից շատ հարգված Կարեն Սերոբի Դեմիրճյանի թեկնածությունը: Գործիչ, որը, անտարակույս, մեծագույն ծառայություններ ունենալով մեր ժողովրդի նորագույն պատմության մեջ, 1996 թ. նախագահական

խայտառակ ընտրությունների ժամանակ սատարել էր Լևոն Տեր-Պետրոսյանին: Ոչ միայն սատարել էր, այլև ընտրություններից 3-4 օր առաջ գրավոր հանդես էր եկել «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի սեպտեմբերի 21-ի համարում՝ «Ուրաբաղի հարցը՝ գլխավորն է, մնացածը ժամանակի հետ կլուծվի» վերտառությամբ հարցազրույցով: Հարկադրված են պարոն Դեմիրճյանի հարցազրույցից՝ ի սատարումն Լևոն Տեր-Պետրոսյանի, առանց մեկնաբանությունների մեջբերումներ անել: Եվ, այսպես, լրագրողի այն հարցին՝ «Պարոն Դեմիրճյան, առաջիկա նախագահական ընտրություններում ինչպե՞ս եք գնահատում Լևոն Տեր-Պետրոսյանի շանսերը», հարգելի Կարեն Սերոբիչը պատասխանել էր. «Բարձր: Նախ, նախագահի ընտրական ծրագիրը իրատեսական է, համապարփակ, և որ շատ կարևոր է, արտացոլում է նախագահի վճռականությունը հանրապետության կենսագործունեության տարբեր ոլորտներում դրությունը բարելավելու, սոցիալական հարցերը հնարավորին չափ արագ լուծելու: Այնուհետև, ինձ թվում է, թե նախագահը, հենվելով կառավարման արդեն իր կուտակած փորձի վրա, արել է ճիշտ եզրահանգումներ, որոնք կերաշխավորեն նրա առավել արդյունավետ գործունեությունը:

Հին համակարգը վերացնելու համախոհների ժամանակն անցել է, այժմ ստեղծագործ աշխատանքի ժամանակն է: Առհասարակ, ինչպես ցույց է տալիս կյանքը, յուրաքանչյուր ղեկավար իր կառավարման հաջորդ փուլում առավել արդյունավետ է գործում:

Ես լիովին համաձայն եմ նախագահի այն արտահայտության հետ, թե ազատ և արդար ընտրությունների ապահովումն արդեն իսկ իր հաղթանակն է»:

Սրանից հետո, եթե 1998 թ. ես, անգամ իսկ որպես անձ սատարելի Կարեն Դեմիրճյանի թեկնածությունը, ապա մի ամբողջ կուսակցություն և «Ազգային Միաբանության» համակիրները, ինչո՞ւ չէ, ցանկացած ազնիվ մարդ տրամաբանական հարց կուղղեր ինձ. այդ ինչպե՞ս է պատահում, որ 1997թ. հոկտեմբերից մինչև 1998 թ. փետր-

վար՝ 4 ամիսների ընթացքում, Արտաշես Գեղամյանն արմատապես փոխեց իր դիրքորոշումը և հիմա էլ պաշտպանում է Լևոն Տեր-Պետրոսյանի, թերևս, ամենահեղինակավոր սատարողին: Մինչդեռ անգամ այս պարագայում, մեծագույն պարտավորվածություն զգալով սեփական գործողություններիս համար, 1998 թ. նախագահական ընտրությունների երկրորդ փուլից առաջ Հանրային հեռուստատեսությամբ դիմեցի 2-րդ փուլ անցած ՀՀ նախագահի 2 թեկնածուներին՝ պարոններ Դեմիրճյանին և Քոչարյանին, հրապարակավ հայտարարելով, որ և՛ իմ և՛ մեր կուսակցության համակրանքը կլինեն այն թեկնածուի օգտին, ով պաշտոնապես ոչ միայն կընդունի համայն հայությանն ուղղված կոչում բերված մեր գնահատականները, այլ նաև պատրաստակամություն կհայտնի մեր երկրում ստեղծված տնտեսական, բարոյահոգեբանական, սահմանադրական խորը ճգնաժամի մեղավորներին պատժելու: Դրա հետ մեկտեղ ակնարկ եղավ, որ Լևոն Տեր-Պետրոսյանին հեռացնելով նախագահի պաշտոնից՝ Ռոբերտ Քոչարյանն այդ առումով փոքր-ինչ հույս է ներշնչում: Ահա այսպիսին են եղել 1998 թ. նախագահական ընտրությունների 2-րդ փուլի նախաշեմին «Ազգային Միաբանություն կուսակցության» կողմից տրված գնահատականները:

Ինչ վերաբերում է 2003 թ. նախագահական ընտրությունների 2-րդ փուլում Ստեփան Դեմիրճյանին չմիանալուն, ապա դա ևս ունի խորը հիմնավորումներ, որոնք անհերքելի են: Մեկ անգամ ևս հիշեցնեմ ընթերցողին, իսկ ավելի շատ ՀՀԾ-ական այն պարագլուխներին, ովքեր արդեն իսկ 10 տարի է շարունակ շահարկում են այդ թեմաները: Ես նկատի ունեմ 1998 թ. և 2003 թ. նախագահական ընտրությունները:

Եվ այսպես, ընտրությունների օրը՝ 2003 թ. փետրվարի 19-ին ժամը 17⁰⁰-ին, այն է՝ դեռ մինչև ընտրությունների ավարտը, երբ կար 3 ժամ, ըստ որում, հիշեցնեմ, որ ընտրությունները փակ և գաղտնի էին, նախագահի թեկնածուներից 6-ը (Արտաշես Գեղամյան, Վազգեն Մանուկյան, Ստեփան Դեմիրճյան, Գառնիկ Մարգար-

յան, Արամ Կարապետյան, Արամ Գ.Սարգսյան) ԴժԿ գրասենյակում ստորագրել էին հայտարարություն: Հարկ են համարում մեր կողմից ընդունված հայտարարության տեքստը նույնպես ներկայացնել ձեր ուշադրությանը.

«ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հանրապետության նախագահի ընտրությունների ընթացքը ցույց է տալիս, որ պետական մեքենայի բոլոր լծակները նպատակաուղղված օգտագործվում են ընտրությունների արդյունքները կեղծիքների միջոցով կանխորոշելու նպատակով:

Գործող վարչակազմը՝ կանխավ համաձայնության գալով առանձին քաղաքական ուժերի, թաղային հեղինակությունների և օլիգարխների հետ, ընտրությունները վերածեց նախօրոք ծրագրված շինծու արդյունքների վավերացման խայտառակ գործընթացի: Ընտրական տեղամասերում կատարվող ահաբեկումները, ընտրողների նկատմամբ իրականացվող շանտաժը, սպառնալիքները, բաժանվող ընտրակաշառքը, հանցագործ խմբերի կողմից անօրինական քվեարկված իրենց թերթիկները բռնի ուժով քվեարկվելը լցնելը, ընտրակառուսելը և մյուս աղաղակող անօրինականությունները կատարվում են անարգել՝ գործող իշխանությունների և նրանց աջակցող քաղաքական ուժերի կողմից նշանակված հանձնաժողովի անդամների, պետական մարմինների ներկայացուցիչների թողտվությամբ ու մասնակցությամբ:

Այս ամենը ցույց է տալիս, որ ընտրությունների ընթացքը միտումնավոր խեղաթյուրվել է և նրա արդյունքները չեն կարող ճանաչվել օրինական»:

Նույն օրը, ժամը 18⁰⁰-ին այդ փաստաթուղթը հանձնվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Ընտրությունների ավարտից մեկ ժամ առաջ հանկարծ մեզ տեղեկացնում են, որ նախագահի թեկնածուներից ոմանք հրաժարվել են իրենց ստորագրությունից: Երբ մենք հարց ուղղեցինք վերջիններիս, արդյո՞ք այս 2-3 ժամերի ընթացքում ինչ-որ դրական տեղաշարժեր են նկատվել ընտրական գործընթացներում, ի՞նչ, չլինի՞ թե Ընտրական օրենսգրքի կոպիտ

խախտումներ այլևս թույլ չեն տրվում, ընտրակեղծիք կատարող որևէ մեկը չլինի՝ թե պատասխանատվության ենթարկվեց, բնականաբար, մեր գործընկերները մնան փաստեր չբերեցին: Այդ դեպքում հարց էր ծագում. այդ ի՞նչ կատարվեց 2-3 ժամերի ընթացքում, կրկնում են, երբ դեռ ընտրություններն ավարտված չէին և դեռ բացարձակապես ոչ ոք չգիտեր, թե ընտրությունների արդյունքում ինչպիսի պատկեր է լինելու, որ մարդիկ հրաժարվեցին իրենց ստորագրությունից:

Սրան հետևեց «Ազգային Միաբանություն կուսակցության» հայտարարությունը, որտեղ մենք հիմնավորում էինք 2-րդ փուլին մասնակցելու անթույլատրելիությունը: Մեր փաստարկը թե՛ շատ հասկանալի էր, թե՛ տրամաբանական և թե՛ բարոյականության ցայտուն վկայություն էր: Մասնակցելով 2-րդ փուլին, մեր գործընկերները, ըստ էության, վավերացրեցին ընտրակեղծիքներով, Ընտրական օրենսգրքի բազմաթիվ բացահայտ խախտումներով, սկզբից մինչև վերջ անօրեն անցկացված 1-ին փուլի արդյունքները: Ռա մի վառ օրինակ էր, որ մարդիկ պետության համար այդ ճակատագրական պահին մեկ-երկու ժամերի ընթացքում կարող են դրժել սեփական սկզբունքները, անգամ իսկ գրավոր հաստատված պայմանավորվածությունները: Եվ վերջին հաշվով կար տարրական բարոյականության խնդիր. մի՞թե այն ժամանակ սոցիոլոգիական ցանկացած հարցումով, ինչպես նաև ժողովրդական ամենալայն շրջաններում իշխող տրամադրություններով ակնհայտ չէր, որ եթե անգամ իսկ 2-րդ փուլ պետք է լիներ, ապա 2-րդ փուլի մասնակիցներից մեկը, անտարակույս, պետք է լիներ «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը: Հիմա այս ամենից հետո, ով է ո՞ւմ դավաճանել, իսկ ո՞վ է մնացել իր սկզբունքներին հավատարիմ, թող դատի ընթերցողը: Պարզապես մարդիկ, երբ սեփական մեղավորությունը ակնհայտորեն գիտակցում են, օգտվում են դիմացի կողմի խոհեն վերաբերմունքից, որը զսպվածություն էր դրսևորել նախագահական ընտրությունների առաջին փուլից հետո՝ խնդիր ու-

նենալով անգամ իսկ գործընկերների կողմից դավաճանության գոհ լինելու պայմաններում չասել ողջ ճշմարտությունը, որպեսզի ժողովրդին չհիասթափեցնի: Չբարձրաձայնել, որ ընդդիմության շարքերում դավեր են նյութվում և այդ դավերի արդյունքն ընտրությունների անփառունակ 2-րդ փուլին մասնակցելն էր:

«Ազգային Միաբանությանը» այսօր էլ հանդիմանում են՝ ինչո՞ւ չմիացաք առաջին փուլից հետո լայն թափ ստացող համաժողովրդական շարժմանը: Չէ՞ որ եթե «Ազգային Միաբանությունը» միանար՝ իշխանափոխությունն ակնհայտ էր: Դա նույնպես միտումնավոր տարածվող մոլորություն է: Պարզապես 2003 թ. նախագահական ընտրությունների ժամանակ մեզ համար ակնհայտ դարձավ, որ ընդդիմադիր դաշտի որոշակի թեկնածուն ուղղորդվում էր ՀՀԾ-ի կողմից, ինչն իր հերթին արդեն իսկ կողմնորոշել էր մեր հետագա անելիքները: Այդ անգամ էլ նրանք զրկվեցին ռևանշ անելու հնարավորությունից և հիմա փորձում են կրկին գնալ նույն ճանապարհով: Արդյունքում, Հայաստանը նորից կհայտնվի 1990-ական թվականների թշվառ վիճակում: Եթե 2003 թ. փետրվար-մարտին նրանք համոզված էին սեփական պայքարի ճշմարտացիության մեջ, ապա ո՞վ էր նրանց բռնել, ո՞վ էր համոզում, որ չդիմեցին ավելի վճռական գործողությունների, չզնացին, ինչպես հիմա են վանկարկում, «մինչև վերջ»՝ իշխանափոխության: Չէ՞ որ 2004 թ. ապրիլի 12-ի հայտնի դեպքերի ժամանակ հրապարակում 2-3 անգամ ավելի պակաս ժողովուրդ կար, սակայն մենք գնացինք, այդ ժողովրդին առաջնորդեցինք... գնացինք նախագահի նստավայր՝ խնդիր ունենալով, այո, ստիպել իշխանություններին հրաժարական տալ: Ինչո՞ւ դա չարվեց 2003 թ.: Չէ՞ որ «Ազգային Միաբանություն կուսակցությունը» նրանց բացարձակապես չէր խոչընդոտում: Միակ բանը, ինչ այն օրերին ասել ենք, այն էր, որ չպետք է ճանաչել 1-ին փուլի արդյունքները, չպետք է գնալ 2-րդ փուլ: Անցած տարիները անգամ իսկ ծուլերին համոզեցին մեր որդեգրած մոտեցումների եզակի ճշմարիտ լինելը:

Ինչ վերաբերում է Լևոն Տեր-Պետրոսյանին միանալ-չմիանալու

հարցին. նշեն, որ այդ առաջարկը, ի սկզբանե, կոռեկտ չէ: Ինչո՞ւ քաղաքական ծանրակշիռ ուժ ներկայացնող գործիչը, որը կուսակցության առաջնորդ է, և որն երկու անգամ անընդմեջ, հաղթահարելով իշխանությունների բիրտ ճնշումները, ընտրվել է Ազգային ժողով և ոչ միայն ընտրվել է, այլ նաև մեծ դերակատարություն է ունեցել Հայաստանի Հանրապետության թե՛ ներքին, և թե՛ արտաքին կյանքում, որի հետևանքով էլ 2007 թ. մայիսի 12-ի ընտրությունների ժամանակ օտարվել է Ազգային ժողովում մասնակցություն ունենալու հնարավորությունից, պետք է սատարի մեկ այլ ուժի, այն էլ ժամանակին ձախողված և հասարակության կողմից մերժված: Եթե մենք հանկարծ ենթադրեինք, որ 2008 թ. կայանալիք նախագահական ընտրությունների ինչ-որ փուլում կարող ենք սատարել Լևոն Տեր-Պետրոսյանին, ապա մենք ի՞նչ բացատրություն պետք է տայինք մեր կուսակցության տասնյակ հազարավոր անդամներին, թե ինչո՞ւ փոխվեց մեր դիրքորոշումը: Եվ այս օրերին մենք վերստին համոզվում ենք, որ, ի դեմս նախկին իշխանությունների, ունենք վրեժխնդրությամբ լցված մարդկանց: Մարդկանց, ովքեր խոսքով ժողովրդավարություն են քարոզում, իսկ գործով անում են ճիշտ հակառակ գործողություններ: Ինչո՞վ բացատրել, որ ՀՀԾ-ն, խոսելով արդարության, ընտրությունները ժողովրդավարական մթնոլորտում անցկացնելու մասին, դեռ մինչև պաշտոնական քարոզարշավի մեկնարկը, սկսել է լրատվական սանձարձակ շանտաժ: Բոլոր այն քաղաքական գործիչներին, ովքեր չեն բաժանում Լևոն Տեր-Պետրոսյանի տեսակետները, շտապում են պիտակավորել, դավաճանության մեջ մեղադրել: Եվ, վերջապես, խոսք է գնում ծախվածության մասին: ՀՀԾ-ական պարագլուխների տրամաբանության համաձայն՝ քաղաքական այն գործիչը, ով շարունակաբար և՛ բանավոր, և՛ գրավոր պնդում է իր սկզբունքային տեսակետները, չգիտես ինչու, նրանց կողմից հանկարծ ճանաչվում է ծախված: Եվ դա հասարակությանը հրամցվում է այն դեպքում, երբ այսօր Լևոնին սատարող քաղաքական գործիչներից շատերն անցած տարիների ընթացքում 2-3 ան-

գամ ճամբարափոխության մեջ են նկատվել ու ոչ միան ճամբարափոխության, այլ նաև տրամագծորեն իրարամերժ կարծիքներ են հայտնել թե՛ գործող իշխանությունների, թե՛ նախորդների հասցեին: Մեկ էլ տեսնում ես, որ ՀՀԾ-ական մամուլի էջերում սրանք հանկարծ դառնում են նվիրված ու հավատարիմ, իսկ մյուսները՝ ծախված: Եվ վերջապես. մարդ պետք է տարրական բարոյականություն ունենա, երբ հարևան Թուրքիայի մամուլը հեղեղված է հողվածներով, ուր ուղղակիորեն գրվում է Լևոն Տեր-Պետրոսյանի ընտրարշավը ֆինանսավորելու նպատակահարմարության մասին ու դա արվում է անթաքույց, լկտիություն ունենա և ասի՝ ծախվածը «Ազգային Միաբանությունն» է: Եվ այս հարցում, ի՞նչ եք կարծում, ո՞վ է առավել աչքի ընկնում. Հայ-թուրքական հաշտեցման տխրահռչակ հանձնաժողովի հայկական կողմի համանախագահ Ալիկ Արզումանյանը: Բա եղա՞վ, Ալիկ, վերջ տուր չարաճճիությանդ, քո սիրած թուրքերի խոսքով ասած՝ քյալլազոյոլթյանդ: Ծախվածության թեման բարձրացնողներին ասեմ. այդ գործում ձեր փեշերը վաղուց են այրված, և երիցս տեղին ու ճիշտ է հայտնի ասացվածքը, երբ գողը բղավում է՝ բռնի՛ր գողին:

– *Ձեր հանդիպումները հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի, վարչապետ Սերժ Սարգսյանի հետ և հետագայում Ձեր առաջադրումը ՀՀ նախագահի պաշտոնում ՀՀԾ-ական քարոզչամեքենան որակեց որպես «ծախվածության դրսևորում»:* Ինչպե՞ս կարծազանքեք այդ «մեղադրանքներին»:

– Հենց նոր ես հպանցիկ անդրադարձա այդ հարցին, այժմ տամ հիմնավոր պարզաբանում: Այս տարվա սեպտեմբերի 7-ին «Ազգային Միաբանություն կուսակցությունը» հանդես էր եկել հայտարարությամբ, որտեղ, կարևորելով Հայաստանի Հանրապետության առջև ծառայած թե՛ ներքին և թե՛ արտաքին մարտահրավերները, նաև խնդիր ունենալով բացառել արտաքին ուժերի միջամտությունը նախագահական առաջիկա ընտրությունների ժամանակ, նպատակահարմար էր գտել նախաձեռնել հանդիպումներ քաղաքական ազդե-

ցիկ բոլոր ուժերի հետ: Այդ հայտարարության ոգուն հարազատ մնալով՝ ես հանդիպումներ եմ ունեցել ՀՀԾ-ակաճներ Լևոն Տեր-Պետրոսյանի, Արարատ Ջուրաբյանի, ԱԻՄ-ի անփոփոխ նախագահ Պարույր Հայրիկյանի, ինչպես և Շավարշ Քոչարյանի, Արթուր Բաղդասարյանի ու այլոց հետ: Մեր կոչումն անված էր, որ անհրաժեշտ է այդ հանդիպումներին մասնակից դարձնել հանրապետության իշխանական թևի քաղաքական ուժերի ներկայացուցիչներին: Դրա շրջանակում հանդիպել եմ նաև ՀՀԴ ներկայացուցիչներ Վահան Հովհաննիսյանի, Արմեն Ռուստամյանի, Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի հետ: Ըստ որում, հետաքրքրականն այն է, որ այդ հանդիպումների ժամանակ բոլոր մասնակիցներն արձանագրել են երկրում ծավալվող գործընթացների կարևորությունը և դրանց վտանգավորությունը՝ անհրաժեշտ համարելով ձեռնարկել ամենը, ինչը գերծ կպահի հանրապետությունը անցանկալի զարգացումներից:

«Ազգային Միաբանություն կուսակցությունը», մանրամասն վերլուծելով Հայաստանի քաղաքական դաշտում ծավալվող զարգացումները, եկել է այն եզրահանգման, որ հին ու գործող իշխանությունների առճակատումը գնալով ահագնացող բնույթ է կրում և հղի է հետագայում քաղաքացիական բախումների վերաճելու վտանգով: Դա անթույլատրելի է Հայաստանի Հանրապետության շուրջ ստեղծված իրավիճակում, դա անթույլատրելի է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման տեսանկյունից: Այս ամենը մկատի ունենալով, մենք արձանագրել ենք. երբ կուսակցությունը մերժում և դատապարտում է թե՛ նախորդ իշխանություններին և թե՛ գործողներին, ապա միայն և միայն երկու կողմերին մերժելով, սակայն սեփական ճանապարհը, սեփական մոտեցումները չիրապարակելով, քաղաքական ուժը դադարում է կուսակցություն կոչվելու իրավունքից: Կուսակցությունը կայացած է համարվում, երբ տվյալ երկրի, հատկապես շրջադարձային փուլերում, հանդես է գալիս հստակ ձևակերպումներով և ժողովրդին առաջարկում է քաղաքական իր գիծը: Ահա այս ամենը հաշվի առնելով, հաշվի առնելով դեռ 1997թ.

հոկտեմբերի 17-ին նախորդ իշխանություններին տված գնահատականները, հաշվի առնելով իմ «Չակաճգնաժամային ծրագրում» տեղ գտած գնահատականները գործող իշխանություններին, ինչպես նաև այն փաստարկները, որոնք բերվեցին մեր կուսակցության նախագահության վերջին նիստի ժամանակ, ինձ համոզեցին, որ ստեղծված իրավիճակում եզակի ճշմարիտ ճանապարհն է հանդես գալ ինքնուրույն թեկնածությամբ: Հանդես գալ ինքնուրույն ծրագրով և փորձել այդ ծրագրի մասնակիցն ու սեփականատերը դարձնել մեր ժողովրդին:

Հետաքրքրականն այն էր, որ, մինչև կուսակցության նախագահության կողմից այդ որոշման ընդունումը, մենք քանիցս զգուշացրել ենք ՀՀԾ-ական պարագլուխներին, որ մամուլի միջոցով քաղաքական գործիչներին շանտաժի ենթարկելու իրենց որդեգրած քաղաքականությունը մերժում ենք: Մինչդեռ Տեր-Պետրոսյանին սպասարկող լրատվամիջոցները թիրախ են դարձնում բոլոր այն քաղաքական գործիչներին, ովքեր իրենց սեփական ծրագրերն ունեն և սեփական թեկնածությամբ են հանդես գալու նախագահական առաջիկա ընտրություններին: Լևոնականների քարոզչության հիմքում դրված է պիտակավորումը, անձնական վիրավորանքներ հասցնելը:

Այսօր էլ մենք մեր ժողովրդին հին ու գործող իշխանությունների մասին ասելիք չատ ունենք, փաստարկված և հիմնավոր շատ գնահատականներ կարող ենք տալ նրանց, սակայն մենք կրկին կոռեկտություն պահպանելու կոչ ենք անում: Մենք կրկին կոչ ենք անում, որ քաղաքական պայքարն ընթանա Հայաստանի ապագայի տեսլականի քննարկումների տիրույթում: Այո, քաղաքական պայքարը ծավալվի քաղաքական տարբեր մոտեցումների վերլուծությունների շրջանակում և գնահատվի, թե դրա արդյունքում հաղթող տեսակետի կենսագործումն որքան բարիք է բերելու և որքան բարիք է խոստանում մեր ժողովրդին, և, վերջին հաշվով, ազգային միաբանության հասնելու ճանապարհին որքանով են ծառայելու ազգային անվտանգության խնդիրների լուծմանը:

Կրկնում են, ստեղծված իրավիճակի անկողմնակալ ու սթափ վերլուծությունը և բերված հիմնավոր փաստարկները հանգեցրին մեր հայտնի որոշմանը: Եվ նման պարագայում խոսել «ծախվածության» մասին, կնշանակի մեր դեմ վարել սուտ և ստոր քարոզչություն, ինչը, ի սկզբանե, դատապարտված է...

– Այնուամենայնիվ, որո՞նք էին այն գլխավոր դրդապատճառները, որ հանդեցին Ձեզ տալ համաձայնություն նախագահական առաջիկա ընտրություններում առաջադրվելու որպես նախագահի թեկնածու:

– Երբ ուշադրությամբ հետևում ես Հայաստանի Հանրապետությունում ծավալվող գործընթացներին, ինչպես նաև վերլուծության ես ենթարկում Հայաստանի շուրջ ընթացող զարգացումները, ապա տեսնում ես այն վտանգները, որոնք դարանակալել են հայոց պետականության առջև: Հարցեր, որոնց ես առիթ ունեցել եմ անդրադառնալու: Սակայն այսօր Հայաստանի Հանրապետությունում ընդդիմադիր ինքնուրույն բևեռ ինքնահռչակվածները իրենց ողջ քաղաքականությունը նպատակաուղղել են երկիրը ապակայունացնելու գործին: Իշխանություններն էլ իրենց հերթին ամենն անում են, որ ինքնահռչակ ընդդիմադիր բևեռին հակադրեն բիրտ ուժ: Դրանով իսկ հուժկու հարված է հասցվում մարդկանց գիտակցությանը, հարված, որն էլ ավելի է հիասթափեցնում ժողովրդին, որն էլ ավելի է հուսահատեցնում հասարակությանը: Ի դեմս գործող իշխանությունների և ինքնահռչակ ընդդիմադիր բևեռի՝ ժողովուրդը տեսնում է, որ ազգի ճակատագիրը հավակնում են տնօրինել այնպիսի ուժեր, որոնք իրենց գործողություններով Հայաստանի Հանրապետությանը, ժողովրդին չեն խոստանում խաղաղություն, որոնք մեր երկրին զարգացում չեն խոստանում: Այդ ուժերը ազգին զրկում են ապագայի տեսլականից, ապագայի նկատմամբ վստահության զգացումից: Սակայն, ինքնին հասկանալի է, որ դրա տեսլականի առկայությունը հնարավոր կդարձնի Հայաստանը լքած հարյուր հազարավոր մարդկանց հետդարձը հայրենիք: Հնարավոր կդարձնի առնվազն մինչև

2015-2020 թթ. մեր երկրի ապագայի, արարման ճանապարհները տեսնել: Իսկ դրանց բացակայությունը, բնականաբար, կարող է բերել համազգային ապատիայի, անտարբերության, անհաղորդության, ապատիայի գիրկը նետված ժողովուրդն էլ չի կարող ազգային և ոչ մի լուրջ խնդիր լուծել: Չի կարող դիմակայել մարտահրավերներին, որոնք ծառացած են երկրի, պետականության առաջ, իսկ, որն ամենավտանգավորն է, չի կարող հաղթական ավարտի հասցնել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի հայանպաստ լուծումը: Ահա, երբ այս իրավիճակում ճիգեր են գործադրվում, որ քաղաքական ամբողջ ներկապատկերը բաժանվի սև ու սպիտակ գույների, երբ կարգախոս են ընտրել՝ «Ով մեզ հետ չէ, նա դավաճան է», ապա այստեղ է, որ կորչում է հայ մարդը, հայ քաղաքացին: Տպավորություն է ստեղծվում, որ նա այլևս ոչ մեկին չի հետաքրքրում և ոչ մի գործչի ծրագրերում, որպես որոշիչ գործոն, դեր չի խաղում:

Ստեղծված պայմաններում, գիտակցելով սեփական պատասխանատվությունը մեր ժողովրդի, մեր նորանկախ պետականության և պատմության առաջ, մենք չէինք կարող մնալ դիտորդի կարգավիճակում, և դա էր, թերևս, որպես նախագահի թեկնածու իմ առաջադրման ամենագլխավոր դրդապատճառներից մեկը: Արդեն 11-րդ տարին է, ինչ «Ազգային Միաբանություն կուսակցությունը», լինելով ընդգծված ընդդիմադիր քաղաքական ուժ, երբեք չի խուսափել պատասխանատվության իր բաժնից: Մենք երբեք չենք առաջնորդվել այն սկզբունքով, որ եթե իշխանության մեջ չենք, ապա պետք է ամեն ինչ անենք, որ մեր քաղաքական հակառակորդները պարտադիր տապալվեն, թեկուզ և պետության կործանման գնով: Իսկ մենք էլ այդ ողբերգական զարգացումների արդյունքում սեփական դիրքորոշումների ճշմարիտ լինելը հաստատած լինենք: Ինչ խոսք, դա մեզ համար անընդունելի է: Ամեն մի կորուստ, որը կրում է մեր պետականությունը, մենք վերագրում ենք նաև մեզ, որ չենք կարողացել հավուր պատշաճի ներագդել իշխանությունների վրա, որ նրանք կարողանային երկիրը զերծ պահել կորուստներից:

Դարձյալ կրկնում են՝ թվարկված վերոհիշյալ դրդապատճառներից ելնելով, նաև երկրում տեսնելով տագնապահարույց բազում այլ խնդիրների առկայությունը՝ «Ազգային Միաբանություն կուսակցությունը» նպատակահարմար գտավ նախագահական առաջիկա ընտրություններում հանդես գալ սեփական թեկնածուով:

– Ինչպիսի՞նք են տեսնում Հայաստանը 2008 թ. նախագահական ընտրություններից հետո: Ո՞րն է լինելու ապագայում Ձեր և «Ազգային Միաբանություն կուսակցության» անելիքը:

– «Ազգային Միաբանություն կուսակցությունն» այսօր իր հիմնական խնդիրներից մեկը համարում է մեր ժողովրդին բացատրել և ապացուցել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքական դաշտում արդեն իսկ գործում է քաղաքական երրորդ ուժը, ձևավորվել է քաղաքական երրորդ բևեռը, որը մերժում է առճակատմամբ հղի այն զարգացումները, որոնք դրվել են թե՛ գործող և՛ թե՛ նախորդ իշխանությունների գործունեության հիմքում: «Ազգային Միաբանությունը» ամենն անելու է, որ մեր կողմից առաջարկվող «Արարման ծրագրում» ժողովուրդը տեսնի սեփական դերակատարությունը, որ գիտակցի՝ իշխանության բերելով «Ազգային Միաբանություն կուսակցության» թեկնածուին, նա ինքն է գալիս իշխանության, նա ինքն է գալիս կերտելու սեփական ճակատագիրը: Նա ինքն է գալիս ասելու ո՛չ կլանային, օլիգարխիկ այն համակարգին, որը ձևավորվել է դեռ նախորդ իշխանությունների ժամանակ և, ավա՛ղ, շարունակում է գործել ներկա իշխանությունների պարագայում: Որ ժողովուրդը հասկանա ու գիտակցի, որ դրական իմաստով այն փոփոխությունները, ինչն արձանագրվել է գործող իշխանությունների կողմից առաջարկվող 2008 թ. բյուջեում, անշրջելի կլինեն միայն և միայն այն պայմաններում, երբ հզորանա ուժի երրորդ բևեռը, ուժի երրորդ կենտրոնը: Բևեռ, որը թույլ չի տա այդ նույն կլաններին, օլիգարխիկներին, ովքեր տարիներ շարունակ թալանել են բյուջեն, հանկարծ խոչընդոտեն 2008 թ. բյուջեի կատարմանը: «Ազգային Միաբանություն կուսակցությունը» ազատ է հակակոռուպցիոն ցանկացած

գործողությունն իրականացնելու հարցում, քանզի մենք անկախ ենք թե՛ նախորդ իշխանություններից, թե՛ գործող իշխանություններից և թե՛ նրանց հովանավորությունը վայելող կլաններից: «Ազգային Միաբանություն կուսակցությունը» պատրաստ է սատարել երկրի ներսում ծավալվող ցանկացած դրական գործընթացին, ում կողմից էլ, որ դա նախաձեռնվի: Կա մի պարզ ճշմարտություն. եթե դու իսկապես երկրիդ պատրիոտն ես, եթե դու, իրոք, ապրում ես ժողովրդիդ հոգսերով, ապա քո կողմից թեկուզև չընդունված քաղաքական ուժը եթե դրական որևէ գործ է կատարում, դու պարտավոր ես հանուն քո երկրի ապագայի համագործակցել այդ ուժի հետ: Համագործակցել, բնականաբար, միայն և միայն հայրենիքումդ իրականացվող դրական փոփոխությունների տիրույթում: Եվ եթե դրա գիտակցումը դարձնենք մեր ժողովրդի սեփականությունը, անտարակույս, 2008 թ. նախագահական ընտրություններին մենք կունենանք մեծագույն հաջողություն: Եվ, կարծում եմ, այս տեսանկյունից եթե գնահատելու լինենք մեր գործերը, ապա մեր հաջողությունը կլինի, այո, ինչու էլ, նաև իշխանության դեկը ստանձնած կուսակցությունների հաջողությունը: Որովհետև ես չեմ ուզում հավատալ, թե բոլոր իշխանավորներն էլ առաջնորդվում են գեթ մեկ գաղափարով, այն է՝ օրինականացնել սեփական անօրինական գործողությունների արդյունքում կուտակված հարստությունը կամ էլ՝ շարունակել կեղեքել բյուջեն, այսինքն՝ շարունակել գործել ստվերում: Համոզված եմ, որ այս ամենի առաջն ի գորու է առնել քաղաքական այն ուժը, որը բացարձակապես և ոչ մի կապանքով շղթայված չէ այս իշխանությունների ստվերային հատվածը կազմող մարդկանց հետ:

– *Ձեր ընդդիմախոսներն ասես թե նպատակ են դրել Արտաշես Գեղամյան – Սերժ Սարգսյան մինչև մեկ տարի առաջ շարունակվող հեռակա բանավեճը վերակենդանացնել և տեղափոխել միմյանց անձնական վիրավորանքներ հասցնելու ոլորտ. ինչպե՞ս դա կմեկնաբանեք:*

– Դա երկու բացատրություն ունի: Առաջին բացատրությունը, թերևս, այն է, որ «Ազգային Միաբանություն կուսակցության» նա-

խագահության նույնքերի 27-ին կայացած նիստի ժամանակ իմ գործընկերների, նաև իմ կողմից անողոք գնահատականներ տրվեցին նախորդ իշխանությունների, ինչու չէ, նաև գործող իշխանությունների հասցեին: Այդ ամենը տպագրվեց հայաստանյան 3 լրատվամիջոցներում՝ թե՛ հայերեն լեզվով և թե՛ ռուսերեն լեզվով: Հետաքրքրվողներն այդ նյութերին կարող են ծանոթանալ, մասնավորապես, «Փակագիծ», «168 ժամ» և «Голос Армении» թերթերում: Այնտեղ սևը սպիտակի վրա տրված են գնահատականներ, կրկնում են, թե՛ նախորդ իշխանությունների գործունեությանը և թե՛ գործող իշխանություններին: Անցած օրերի ընթացքում բացարձակապես և ոչ մի փաստարկ չգտնելով մեր կողմից բերված հիմնավորումները հերքելու օգտին, նախորդ իշխանությունները կրկին գործի դրեցին ընդդիմախոսներին շանտաժի ենթարկելու իրենց ներհատուկ ծրագրերը, ուր պիտակավորում էին թե՛ կուսակցությանը և թե՛ անձիս: Անպտուղ փորձ կատարվեց լարվածություն ստեղծել կուսակցության տարածքային կազմակերպությունների ղեկավարների շրջանում: Փորձ կատարվեց նաև նեղացածության մթնոլորտ ձևավորել «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահության կազմում: Սև PR-ի ՀՀԸ-ական մասնագետները գործընկերներիս անաչառ և սկզբունքային ելույթները փորձեցին վերագրել ինձ՝ սին հուլյսեր տածելով, որ մերոնք դրանից կմեղվեն: Բնականաբար, նրանց նկրտումները ձախողվեցին: Բայց փոխարենը նրանք պետք է ինչ-որ կերպ արձագանքեին մեր սուր քննադատությանը և մեղադրանքներին: Սեփական զինամոցում չունենալով և ոչ մի հակափաստարկ՝ մեր միջև իրենց նախաձեռնությամբ ծավալված բանավեճը տեղափոխեցին ամձնական հարաբերությունների ոլորտ: Ըստ որում, այստեղ տեղին է նշել գործող իշխանությունների կողմից դրսևորած մի հետաքրքիր փաստ. ՀՀԸ-ական մամուլում իմ հասցեին ուղղված ողջ սուտը, զրպարտությունները, մեղադրանքները մեկ էլ հանկարծ այս կամ այն «պատասխանատու» հեռուստաալիքների կողմից մամուլի տեսության հաղորդման ժամանակ լսեցնել էին

տալիս ժողովրդին, էլ չեն խոսում «Ազատություն» ռադիոկայանի առանձին թղթակիցների մեկնաբանությունների մասին: Երբ նրանցից ոմանց հարցազրույց էիր տալիս, քեզ թվում էր, որ հարցազրույց վարողը ՀՀ-ական «Հայք» պաշտոնաթերթի թղթակից է և ոչ թե «Ազատություն» ռադիոկայանի: Ահա, տեսնելով, որ այս հնարքները իրենց ազդեցությունը բացարձակապես չեն թողնում «Ազգային Միաբանություն կուսակցության» հետևողական դիրքորոշումների վրա, տղերքը բանավեճը տեղափոխեցին անձնական հարաբերությունների դաշտ: Որպես դասականի՝ մեծագույն հրճվանքով և հաճույքով սկսեցին ցիտել Սերժ Սարգսյանին՝ ակնկալելով իմ անհապաղ պատասխանը: Ժողովրդական լեզվով ասած՝ տղերքը շիրա էին տալիս: Այդ մարդկանց հիասթափեցնեմ. Սերժ Սարգսյանի հետ ես անձնական խնդիրներ չունեմ: Վերջինիս կողմից իմ հասցեին ասված քաղաքական գնահատականների մասին ուզում եմ հիշեցնել «Ազգային Միաբանության» ընդդիմախոսներին, մասնավորապես՝ ՀՀ-ականներին: Այսպես, 2004 թ. դեկտեմբերի վերջին տասնօրյակում էր, երբ Ազգային ժողովի փակ նիստում քննարկվում էր Հայաստանի Հանրապետությունից Իրաք հայ զինվորականներ գործուղելու հարցը: Այդ օրը ձեր խոնարհ ծառա Արտաշես Գեղամյանը ԱԺ-ում երկու ելույթ ունեցավ: Ըստ որում, գործող իշխանություններին սատարողները, ասես թե, պապանձվել կամ լռում էին, կամ էլ պետության շահին հակառակ մոտեցումներով էին հանդես գալիս: Իմ այդ երկու ելույթներից հետո Ազգային ժողովում հարցը ներկայացնող այն ժամանակվա պաշտպանության նախարար, ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Սերժ Սարգսյանը խորհրդարանի ամբիոնից հայտարարեց, որ Արտաշես Գեղամյանի փաստարկված ելույթներից հետո այլևս կարելի էր դադարեցնել քննարկումները, քանի որ բոլոր հարցերի համոզիչ պատասխանները տրված էին և դժվար թե գտնվեր որևէ մեկը, որը կարողանար հակափաստարկներ բերել: Ես չեմ կարծում, որ Սերժ Սարգսյանը, որը հրապարակավ, այն էլ Ազգային ժողովի ամբիոնից

նման գնահատականի է արժանացրել ինձ՝ Արտաշես Գեղամյանիս (ինչն ամենևին ինձ ոչ ոգևորում է, ոչ էլ տխրեցնում է. ես պարզապես փաստն եմ արձանագրում), հանկարծ ինքն իրեն հակասեր քաղաքական մեկ այլ գնահատական տալով անձիս: Քաղաքական ուրիշ գնահատական, կրկնում եմ, քաղաքական գնահատական, ես նրանից չեմ լսել: Իսկ արտահայտած անձնական կարծիքներին արձագանքելն անիմաստ եմ համարել և համարում: Հակառակ դեպքում դա, բնականաբար, չէր խոսի թե Ս.Սարգսյանի և թե իմ օգտին: Այնպես որ, այս մարդկանց հիասթափեցնեմ. պատմության մեջ մնում են միայն քաղաքական գնահատականները, իսկ քաղաքական գնահատականները, որոնք տրվել են Գեղամյան քաղաքական գործչին, թող անհամեստություն չհնչի, արձանագրված են ԵԽԽՎ-ի, ինչպես նաև ԵԱՀԿ-ի Խորհրդարանական վեհաժողովներում իմ ունեցած 21 ելույթների արձագանքներում, ելույթներ, որոնք արձանագրված են այդ կազմակերպությունների պաշտոնական փաստաթղթերում և այլևս դարձել են եվրոպական նորագույն պատմության սեփականությունը: Այստեղ ես մտածելու խնդիր չունեմ: Սակայն ակնհայտ է, որ խնդիր ունեն ընդդիմախոսներս: Դրանց ամբողջ քարոզչական մեքենան հայտնվել է ողորմելի վիճակում: Այդ ի՞նչ օրն եք ընկել պարոնայք ՀՀԾ-ականներ, որ ձեր քաղաքական հակառակորդին վարկաբեկելու նպատակով մեջբերումներ, ցիտատներ եք անում, ձեր իսկ բնորոշմամբ, ձեր մյուս քաղաքական հակառակորդ Սերժ Սարգսյանից: Կարծում եմ, այս հարցում մեկնաբանություններն այլևս ավելորդ են:

Եթե ուշադրությամբ վերլուծում ես ընթացող զարգացումները, ապա չես կարող չզգալ մի եզրակացության: Ո՞րն է դա: Իմ համոզմամբ Լևոն Տեր-Պետրոսյանն ամենևին էլ խնդիր չունի հանրապետության նախագահ դառնալ: Հանրապետության նախագահի թեկնածուն, այն էլ այս բախտորոշ շրջանում, կարծում եմ, իրենից կախված ամենը պետք է աներ ազգը կոնսոլիդացնելու, ազգը միաբանելու ուղղությամբ, երկրի առաջ ծառայած լրջագույն խնդիրների լուծման հա-

մար, այլ ոչ թե սկսեր վնասակար աշխատանք՝ ազգը բաժանելով իմի ու քոնի: Տպավորություն է ստեղծվում, որ հերթական անգամ փորձ է կատարվում ամայացնել ընդդիմադիր դաշտը: ՀՀԸ-ական մամուլն այսօր ավելի շատ քննադատության է ենթարկում ընդդիմադիր գործիչներին, քան իշխանություններին: Նրանք փորձում են ամլացնել ընդդիմադիր դաշտը՝ խնդիր ունենալով դրսի ուժերին, այո, ես չըս-խալվեցի, դրսի ուժերին ապացուցել, որ կա գործող իշխանություն և կա միայն ու միայն նրանց հակազդող քաղաքական մի ուժ՝ ի դեմս Լևոն Տեր-Պետրոսյանի: Եվ նպատակ է դրված ոչ թե երկրի վիճակը բարելավել, այլ խնդիր է դրված երկիրն ապակայունացնել: Այլապես չի կարելի քաղաքական այնպիսի հայտարարություններով հանդես գալ, որոնք ակնհայտորեն ուղղված են երկիրն ապակայունացնելու գործին: Մի՞թե չգիտեն, որ գործող Սահմանադրության պայմաններում Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժերն են ձևավորում Կառավարություն և առաջարկում վարչապետի թեկնածությունը: Եվ այդ պարագայում մի՞թե արկածախնդրություն չէ այն հայտարարությունը, որ երկրի նախագահ դառնալով՝ Լևոնը կփոխի վարչապետին: Ի՞նչ ճանապարհով, ի՞նչ գնով: Միզո՞ւցե ուզում են կրկնել այն, ինչ տեղի ունեցավ 1998 թ., երբ գրեթե մի գիշերվա ընթացքում ներսից պայթեցվեց այն ժամանակ մեծամասնություն կազմող խորհրդարանական դաշինքը: Միզո՞ւցե խնդիր է դրված, որ 2008 թ. Հայաստանի իշխանությունները պետք է ձևավորվեն առնետավազքի արդյունքում առաջացած քաղաքական ուժերով: Եթե նման հեռանկար է խոստանում Լևոն Տեր-Պետրոսյանական բևեռը, մենք դա կտրականապես մերժում ենք: Բնականաբար, մերժում ենք նաև գործող իշխանությունների՝ նախկինների դեմ վարվող, սակայն ուշացած քաղաքականությունը:

Եվ, վերջապես, մի կարևոր հանգամանք. ինչպե՞ս կարելի է դեռ քարոզարշավը չսկսած, քաղաքական բոլոր կուսակցություններին, ովքեր նախագահական առաջիկա ընտրություններին առաջադրել են իրենց թեկնածուներին, սևացնել, վարկաբեկել, զրպարտել մի-

ջազգային հանրության առաջ: Մի՞թե չեն գիտակցում այն պարզ ճշմարտությունը, որ երբ ընտրությունների արդյունքում Լևոնից բացի ցանկացած մեկ այլ թեկնածու է ընտրվում երկրի նախագահ, ի սկզբանե, դրսի ուժերի համար դառնում է խոցելի: Չէ՞ որ արդեն իսկ այնքան վիրավորական, այնքան վարկաբեկիչ մեղադրանքներ են հնչեցրել ՀՀԾ-ական, ինչու չէ, նաև իշխանական մամուլով նախագահի բոլոր մյուս թեկնածուների հասցեին, որ միջազգային հանրությունը կասի. տեսեք, թե այսօր հայ ժողովուրդը ո՞ւմ միջև է դատապարտված նախագահի ընտրություն կատարել, ինչպիսի՞ հանցավոր տարրերի միջև: Վերջին հաշվով եկել է այն ժամանակը, որ հարկ է գիտակցել՝ նախագահական ընտրություններն այս կամ այն կուսակցության մենաշնորհը չէ, այլ ազգային արժանապատվության հաստատման գործառույթ է:

Նախագահական ընտրություններն ուղղակիորեն կախված և պայմանավորված են ազգային արժանապատվության հաստատման հետ: Դա ինձ ստիպում է հորդորով դիմել նախագահի բոլոր թեկնածուներին ու նրանց թիկունքում կանգնած քաղաքական ուժերին. ժամանակն է վեր կանգնել կուսակցական, շահադիտական մեղ մկրտուններից և չփորձել սեփական գործողություններով որպես զենք ծառայել ուժի միջազգային կենտրոնների համար, ինչքան էլ վերջիններս հրապուրիչ խոստումներ շռայլեն...

**ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. «ԱՄԵՆԱԿԱՐԳ
ՃԱՆԱՊԱՐԶԸ ԴԵՊԻ ՅԱՐԹԱՆԱԿ՝ ՄԻՆՉԵՎ
ՎԵՐՋ ԺՈՂՈՎՐԴԻ ՅԵՏ ԱՆԿԵՂԾ ԼԻՆԵՆ Է»**

- *Ընտրությունների մոտենալուն մշտապես զուգահեռվում են մեղադրանքների, լուտանքների տարափներն ու դրա անունն էլ դնում են պայքար կոմպրոմատներով: Այս հարցում, թերևս, շատ հաճախ և խիստ ընդգծված առաջին գծում է լինում Ձեր անունը: Ձեզ հայտնի պատճառները որո՞նք են, պարոն Գեղամյան:*

- Այդ «մեղադրանքները» ներկայացնողները ճիշտ այն նույն մարդիկ են, ում ժամանակին ես գրավոր խոսքով ասել եմ իրենց հանցավոր լինելու փաստի մասին: Այդ «մեղադրանքները» հնչում են այն ուժերի կողմից, որոնց մերժել և հերքում եմ սկսած 1990-ի մայիսի 27-ից, երբ տեղի ունեցան ողբերգական այն դեպքերը, որոնց արդյունքում Երևանի երկաթուղային կայարանում և Սովետաշենի ճանապարհին 16 անմեղ մարդ զոհվեց. դրանից էլ սկիզբ առավ Արտաշես Գեղամյան-ՅՅԸ հակամարտությունը: Ականատեսը եղա, թե ինչպես մի խումբ բախտախնդիր ՅՅԸ-ական պարագլուխներ կարողացան հրահրել այդ մեծագույն սադրանքը, որը, բարեբախտաբար, վավերացված է տեսագրությամբ: Բնականաբար, ամեն կերպ պետք էր չեզոքացնել Արտաշես Գեղամյանին, ինչը և նրանց հաջողվեց: Ժողովրդավարություն հռչակած քաղաքական ուժը եկավ իշխանության և, խորհրդարանում մեծամասնություն ունենալով, 1990-ի նոյեմբերի 30-ին օրենքում փոփոխություններ ընդունելով՝ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների ընտրովի պաշտոնները դարձրեց նշանակովի: Այդ

ժամանակ ես Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահն էի, ընտրվել քաղխորհրդի 416 պատգամավորների կողմից: Խնդիր էր դրված քաղաքական ասպարեզից հեռացնել Գեղամյանին: Նույնը փորձեցին, բայց չհաջողեցին կատարել, երբ որպես ձեռներեց Ռուսաստանի ռազմաօդային զինուժի ինքնաթիռներով շրջափակման մեջ գտնվող Հայաստանի Հանրապետություն էի ներկրում տնտեսության համար հույժ կարևոր տրանսֆորմատորային յուղ: Այդտեղ էլ ջանք չխնայեցին առաջս առնել՝ անզոր գտնվեցին, ինչպես նաև չհաջողվեց 1995-ին, երբ մեծամասնական ընտրակարգով Դավիթաշենում ընտրվեցի Ազգային ժողովի պատգամավոր՝ մրցակից ունենալով ՀՀՇ վարչության անդամ Ռաֆայել Պապայանին: Արդեն 1997-ի փետրվարին հիմնադրեցի «Ազգային Միաբանություն կուսակցությունը» և ութ ամիս անց՝ հոկտեմբերի 17-ին, երբ ակնհայտ էր, թե ինչ ազգակործան քաղաքականություն է վարում ՀՀՇ-ական իշխանությունը, նախաձեռնեցի և ընդունեցինք համայն հայությանն ուղղված կոչ, ուր տրված էին օբյեկտիվ, սկզբունքային և շատ կոշտ գնահատականներ Լևոն Տեր-Պետրոսյանի վարչախմբին և ուր անհրաժեշտ էր համարվում օր առաջ ձերբազատվել նրա իշխանությունից: Այսինքն՝ իմ քաղաքական գնահատականը ՀՀՇ-ական վարչախմբին տվել եմ գրավոր, երբ Լևոն Տեր-Պետրոսյանը հանրապետության նախագահն էր և դեռ բացարձակապես խոսք չկար, որ պարտվողական քաղաքականություն դրսևորելու համար հարկադրված կլինի հրաժարական տալ:

- *Հաջորդած քաղաքական գործընթացներում էլ առանձնապես շիտակ ընթացք չեն համարում ձեր անցած ուղին և մեղադրանքներ են հնչեցվում նաև այդ ժամանակի համար:*

- Շարունակեմ: 1998-ի նախագահական ընտրություններին ընդառաջ գնացի իմ կուսակից գործընկերներին և համաձայնեցի թեկնածությունս դնել նախագահական ընտրություններին ու

երկրորդ փուլից առաջ հանդես եկա հայտարարությամբ, որում դիմեցի ՀՀ նախագահի երկու թեկնածուներին՝ պարոններ Կ. Դեմիրճյանին և Ռ. Քոչարյանին, ասելով, որ «Ազգային Միաբանություն կուսակցությունը» և, մասնավորապես, ես կատարեմ այն թեկնածուին, որը հրապարակավ ոչ միայն կարծանագրի Տեր-Պետրոսյանի իշխանավարության տարիներին կատարված հանցագործությունները, այլև կստանձնի մեղավորներին օրենքի ողջ խստությամբ պատասխանատվության ենթարկելու պարտավորվածություն: Այնտեղ կես նախադասություն կար ասված, որ դա խոստանում է գործող վարչապետը՝ Ռոբերտ Քոչարյանը: Սա է եղել 1998-ին իմ դերակատարությունը: 2003-ի նախագահական ընտրությունների երկրորդ փուլին մասնակցելը, այսինքն՝ ընդդիմադիր իմ գործընկերոջը միանալս, կնշանակեր մեկ շաբաթվա ընթացքում երկու հակադիր մոտեցումներ դրսևորել, և դրանով իսկ կորցնել մարդկանց վստահությունը: Ընտրությունների օրը, ժամը 17-ին նախագահի թեկնածուներից վեցս, բոլորս էլ ընդդիմադիր ճամբարից, ընտրությունների ավարտից երեք ժամ առաջ այն ճանաչեցինք անօրինական: Ժամը 18-ին բոլորիս կողմից ստորագրված այդ հայտարարությունը հանձնվել է ԿԸՀ և հանկարծ թույլտվություններ անց մեր գործընկերներից ոմանք հրաժարվեցին սեփական ստորագրություններից: Ակնհայտ էր՝ որոշ մարդկանց երաշխիքներ էին տվել՝ դուք հետ կանչեք ձեր ստորագրությունները և ձեզ համար ամեն ինչ լավ կլինի: Գնացին երկրորդ փուլին և տեղի ունեցավ այն, ինչի մասին բոլորս գիտենք: Անձնական վախը, սեփական անճարակությունը, սեփական անվճռականությունը և ուղղորդված լինելու հանգամանքը քողարկելու համար մեղավոր են փորձում գտնել ու գտնում են Արտաշես Գեղամյանին: Արդյունքում ստացվում է, որ ՀՀԿ-ական մանուլը լուտանքներ, զրպարտություններ, զազրախոսություններ է սփռում իր էջերում Գեղամյանի դեմ, իշխանական

«պատասխանատու» հեռուստամիջոցներն էլ մամուլի տեսությունների միջոցով այդ ամենը դարձնում են ժողովրդի սեփականությունը:

- *Ասվածով հանդերձ, ինչպիսի՞ն էք տեսնում ներկայիս իրավիճակը:*

- Ասեմ՝ ՀՀԸ-ական մամուլի մատերոն, հոգևոր հայրն ու առաջնորդը Լևոն Տեր-Պետրոսյանն է: Ամեն ինչի թիկունքում նա է կանգնած և նա է ուղղորդում՝ ունենալով շատ պարզունակ խնդիր. քննադատել, լուստանքներ թափել Գեղամյանի հասցեին, որպեսզի պատասխան տրվի կատարողին և ոչ թե հեղինակին: Մինչդեռ պատասխանը ներկայացվում է փաստերի տեսքով և ոչ այսօրվանից. 2006-ին լույս տեսավ 1064 էջանոց իմ հեղինակած ելույթների, հողվածների, հարցազրույցների ժողովածուն, ուր անաչառ գնահատականներ են տրված նախկին ու ներկա վարչախմբերին: Եթե չծուլանան ընթերցել, ապա կտեսնեն, որ կոնկրետ փաստերով քննադատությունը տպագրում են, տալիս են թղթին: Եթե այնտեղ որևէ չփաստարկված, առավել ևս որևէ մեկին վարկաբեկող նյութ կա, ապա ինչո՞ւ օրենքի շրջանակներում չեն դիմում դատարան՝ զրպարտության, անձը վիրավորելու համար: Չէ՞ որ, եթե դատի տան և հիմքեր ունենան դատի տալու, հավասարաչափ կգոհացնեն թե՛ գործող իշխանություններին, թե՛ նախորդները կգոհանան: Հակափաստարկ չունենալու պարագայում իրենք անցնում են անձնական վիրավորանքի ոլորտ: Եվ անձնական վիրավորանքով, նշավակող մեղադրանքներով փորձում են ինձ շեղել իմ նախընտրած և ինձ հոգեհարազատ ոլորտից՝ նախընտրական ծրագրերի շուրջ պայքարելուց: Հետաքրքրականն այն է, որ ավելի շատ դա անում է տերպետրոսյանական թիմը, քան իշխանությունները, որովհետև վերջիններս իմ «Արարման ծրագրի» մեջ ոչ այնքան վտանգ են տեսնում, որքան իրենց իսկ իշխանավարության տարիներին հսկայական ռեզերվների չօգտագործման բացահայտում:

- *Սա նշանակո՞ւմ է արդյոք, որ ներկայիս իշխանություններից*

արարչական մղումներ և գործելակերպ եք ակնկալում:

- Ավելի խիստ, քան ես, ոչ ոք գործող իշխանություններին չի քննադատել, բայց եկեք տեսեք, որ 2008-ի բյուջեն ինչ-որ հույս է արթնացնում: Մեկ տարվա ընթացքում հեշտ չէ 750-800 մլն դոլարով ավելացնել բյուջեն: Եվ ծախսային մասի աճի տեմպը նախորդ տարվա համեմատությամբ կազմելու է 130 տոկոս: Եթե դու օբյեկտիվ ես ուզում լինել, դա տեսնելով հանդերձ, եթե ուրիշ ռեզերվներ էլ կան, մատնացույց արա, ինչը և արել եմ իմ ծրագրում: Կամ՝ չեմ կարող ուրանալ, որ շուրջ 500 հազար թոշակառուներից 300 հազար կենսաթոշակառուների թոշակը 60 տոկոսով ավելանալու է: Կրկնում եմ, այս ամենը գիտակցելով՝ փոքր-ինչ հույս է արթնացել, որ իշխանությունները հասկանում են՝ հնի պես շարունակել գործել այլևս չեն կարող: Այդ գիտակցումը, հավանաբար, դարձի է բերել նրանց: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ աստիճանի էին հասցրել գործող իշխանությունները դժգոհությունը, որ հանկարծ Լևոն Տեր-Պետրոսյանը հանդգնեց, իրավունք վերապահեց իրեն վերադառնալ քաղաքական ասպարեզ: Թերևս դա էլ է սթափեցրել իշխանություններին: Միայն թե սրանք գնան՝ ով ուզում է գա: Այդ պատճառով երկրի համար վտանգավոր զարգացումների առաջը նաև պետք է «Ազգային Միաբանություն կուսակցությունը» առնի, որովհետև մենք պատասխանատու ենք ոչ թե նախորդ կամ գործող իշխանությունների առաջ, մենք պատասխանատու ենք մեր ժողովրդի առաջ, մեր պետության առաջ:

- Այսինքն՝ նախագահական ընտրություններում Ձեր թեկնածությունը առաջադրել եք արգե՞լք հանդիսանալու համար, թե՞ կա հաղթանակի նպատակ:

- Առաջադրվել եմ ոչ թե որևէ մեկի դեմ պայքարելու, այլ սեփական ճշմարտությունս մեր ժողովրդի սեփականությունը դարձնելու համար: Ուրիշ բան, որ այդ ճանապարհից շեղել եմ ուզում ինձ, ուրիշ բան, որ արգելակում եմ: Եվ առավել ջանադիր է այդ հարցում Տեր-

Պետրոսյանի թիմը: Թող չչեղեն ինձ իմ ծրագրային հիմնադրույթները մեր ժողովրդի սեփականությունը դարձնելու առաքելությունից, որովհետև ութ տարիների ընթացքում Տեր-Պետրոսյանի և իր վարչախմբի օրոք կատարված հանցավոր դրսևորումներն այնքան շատ են, այնքան բազմաբնույթ ու բազմաբովանդակ, որ, ինչպես 1000 ու մի գիշերի հեքիաթները, բայց ոչ որպես հեքիաթ, այլ փաստարկված մեղադրանք, կարող են մեկը մյուսին հաջորդել: Լևոն Տեր-Պետրոսյանի հրապարակ գալը հետապնդում է մեկ խնդիր՝ ամենն անել, որ երկիրը ապակայունանա, ամենն անել, որ սադրանքների արդունքում պայթյունավտանգ իրավիճակ ստեղծվի երկրում, որից էլ կօգտվեն ճիշտ այն նույն ուժերը, որոնք այսօր շռայլորեն ֆինանսավորում են Տեր-Պետրոսյանին, ովքեր սահմանից անդին նրա գովքն են անում, մասնավորապես, թուրք-ադրբեջանական մամուլը: Իշխանությունները սեղանին կղնեն Լևոնի մերձավոր զինակիցների հարազատների կատարած հանցանքների ցանկը, և այդ ամենը բնականոն ընթացք կունենա, այնպես որ թող լևոնականները սեփական անելիքները պարզեն: Անելիքն էլ այն է, որ իմիտացիա է անում, թե պայքարում է ընտրությունների համար, նախ, որպեսզի քերծենների ոհմակի անհագուրդ ախորժակը բավարարի, ապա, որ կարողանա փետրվարի 20-ին նեղացածի, հալածյալի կեցվածք ընդունել և լքել Հայաստանը: Սա է իր երազանքը: Նա հայրենիքի հետ և ոչ մի բան չի կապում:

- Կանխատեսում ու ձևակերպում եք նախագահի մյուս թեկնածուների առաքելությունն ու նպատակները, Ձեր առաքելությունը այս ընտրություններում ո՞րն է:

- Այս ընտրություններում իմ խնդիրը տեսնում եմ Հայաստանի Հանրապետության երրորդ նախագահ դառնալը: Այլ խնդիր չեմ տեսնում: Դրա ճանապարհին հարկադրված եմ անընդմեջ հակահարված տալ իմ հասցեին հնչող քննադատությանը և պարզաբանումներ անել իմ «Արարման ծրագրի» առանձին

դրույթների շուրջը: Հեղափոխական կոչեր ծրագրում չկան, արարչական հարցադրումներ են, որոնք եթե դառնան մեր ժողովրդի սեփականությունը՝ ժողովուրդը կնախընտրի «Ազգային Միաբանություն կուսակցության» թեկնածու Արտաշես Գեղամյանին, որովհետև ժողովուրդը աշխատանք, հանգիստ, խաղաղություն է ուզում: Եվ եթե Ռոբերտ Քոչարյանը կաշկանդվածություն ուներ ու չպատժեց Լևոն Տեր-Պետրոսյանի թինակիցներին կատարած հանցանքների համար, կաշկանդվածությունն էլ, հավանաբար, պայմանավորված էր Արցախյան հերոսամարտում, այնուամենայնիվ, համագործակցելով, նաև երրորդ հանրապետության առաջին նախագահ լինելու փաստով, ապա ես նման կաշկանդվածություն չունեմ, որովհետև ինձ համար անընդունելի և անթույլատրելի է 1988-1990-ականների սկզբին համազգային միաբանությունն ու վերելքն ընդամենը 3-4 տարվա ընթացքում ջարդուփշուր անել, կազմաքանդել Հայաստանի առաջատար արդյունաբերական ճյուղերը և դրանից հետո ոչ միայն հավակնել կրկին դառնալ նախագահ, այլև դատավորի կեցվածք ընդունել և «մեղադրանքների» շարան ներկայացնել այն մարդկանց, ովքեր դեռ իր նախագահ եղած ժամանակ ասել են, որ վարչակազմը հանցավոր է, պետք է հեռանա: Խնդիրը, որ հետապնդում եմ՝ մինչև վերջ ազնիվ լինելն է սեփական ժողովրդի նկատմամբ: Գալիք սերունդն է գնահատելու յուրաքանչյուրի որդեգրած քաղաքականությունը: Վաղ թե ուշ ես հաղթանակելու եմ: Սա ինձ համար ակնհայտ է, ինչպես դա ակնհայտ է նույն Տեր-Պետրոսյանի, կարծում եմ նաև՝ գործող իշխանությունների համար, որովհետև ամենակարճ ճանապարհը դեպի հաղթանակ՝ մինչև վերջ ազնիվ ու անկեղծ լինելն է ժողովրդի առաջ: Ես էդ ճանապարհն անցել եմ: Ով կաշակցի ինձ՝ համագործակցության ավելի բարձր մակարդակի կիսանենք:

Հարցազրույցը վարեց Նանա Պետրոսյանը



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|--|
| ԱՆՈՒՇԱԿԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ - ԵՐԿՈՒ ԽՈՍՔ | |
| ԽՓԻՐ ՅՈՒՐԱՅԻՆԻԴ, ՈՐ ՕՏԱՐՆԵՐԸ ՎԱԽԵՆԱՆ | |
| ԵՐԲ ՎՏԱՆԳՎԱԾ Է ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ | |
| ԵՐԲ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՏԵՐ ԿԿԱՆԳՆԻ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ | |
| ՈՒՐԵՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՓԱ՞Յ ՈՒՆԵՆ | |
| ԲԱՎԱԿԱՆ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ ՂԱՐՁՆԵՔ ԽՈՊԱՆ, ԹՈՂԵՔ ԳՆԱՑԵՔ | |
| «ВОРОВАТЬ НАДО МЕНЬШЕ!» — «ՊԵՏՔ Է ՔԻՉ ԳՈՂԱՆԱԼ» | |
| «ՉԿԱՆ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ՈՒ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐ, ԿԱՆ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՇԱՅԵՐ» | |
| ԻՆՏԵԳՐՄԱՆ ՄԻԱԿ ԾԻՇՏ ԸՆԱՆՊԱՐՀԸ | |
| ԸՆԴԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՏԱՊԱՐՏՎԱԾ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ | |
| ГДЕ ЕСТЬ НЕФТЬ И ГАЗ, ТАМ ГОСПОДСТВУЮТ ДВОЙНЫЕ СТАНДАРТЫ | |
| СВЕРНУТЬ СТРАНУ С ДЕМОКРАТИЧЕСКОГО ПУТИ РАЗВИТИЯ — ЗНАЧИТ СОВЕРШИТЬ ПРЕСТУПЛЕНИЕ ПЕРЕД АРМЯНСКИМ НАРОДОМ | |
| ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՂԱՏԱԽԱԶ ՊԱՐՈՆ ԱՐԿԱՆ ՀՈՎԱԵՓՅԱՆԻՆ | |
| ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԿՈՌՈՒՊՑԻՈՆԵՐՆԵՐԻ ԽՐԱԽՃԱՆՔԸ | |
| ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ, ՈՌՔԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԿՈՐՈՇԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ | |
| ԳԵՂԱՄՅԱՆՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՔՆՆԱՂԱՏԵԼ Է ԷՍՏՈՆԻԱՅԻՆ | |
| ԳՈՐԾ ԵՆՔ ԱՆՈՒՄ, ԳՈՐԾ | |
| НЕЛЬЗЯ ЛГАТЬ ВО БЛАГО, НЕЛЬЗЯ ПРОМОЛЧАТЬ ВО БЛАГО... | |
| «ՀՀ-ն ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՐՋ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ» | |
| «ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ՄԻՆՉԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԿԵՆՏՐՈՆԱՆԱԼՈՒ Է . | |

«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ԿԵՆՏՐՈՆԱՆՈՒՄ Է

«ԵՍ ՉԵՄ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔԵԱՄՈՈՎՑ ԶԲԱՂՎՈՂՆԵՐԻՆ»

«ՀԱՅԵԼԻ» ԱԿՈՒՄԲԻ ՀՅՈՒՐՆ ԷՐ «ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ» ԴԵԿԱԿԱՐ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԸ

«ՄԵՂՔԻ ԻՐԵՆՑ ԲԱԺԻՆՆ ՈՒՆԵՆ ՄԵՐ ԱՅՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԸ,
ՈՐՈՆՔ ԳԵՐԱԴԱՍԵՑԻՆ ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔԸ»

«ՆՐԱՆՑ ՊԵՏՔ Է ՄԵԾ ՑՆՑՈՒՄՆԵՐ, ՄԵՁ ՄԵԾ ՀԱՅԱՍՏԱՆ»

ՀԱՐԿԱՎՈՐ Է ԱԶԳԸ ՄԻԱԲԱՆՈՂ ԾՐԱԳԻՐ

... ԳՈՒՐԳՈՒՐԵԼ ԵՎ ՍԻՐԵԼ ՔԵՁ ՎԻՐԱՎՈՐՈՂՆԵՐԻՆ...

ՇԱՀՐՈՂ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՆ ԵՆ

ԶԿԱ ԹՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ԱՊԱՇԽԱՐԱՆՔԻ

«ԿԳՈՐԾԻ՞ ՀԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԽԵԼՔԸ»

ԳԵՂԱՄՅԱՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ

ՍՑԵՆԱՐԻՍՏԸ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

ԲԱԳՐԱՏՅԱՆԸ ՎԻՐԱՎՈՐԵ՞Լ Է ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ՉԵԿԱՎՈՐՈՒՄ Է ԵՐՈՐՈՐԴ ՈՒԺ, ՈՐԸ ՄԵՐԺՈՒՄ Է ԵՐԿՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՈՈՒ ԲԱՐՔԵՐԸ

«ԵԹԵ ՄԱՐԴՈՒՆ ԱՆԸՆԴՀԱՏ ԱՍՈՒՄ ԵՍ, ՈՐ ՆԱ ԽՈՋ Է,
Ի ՎԵՐՋՈ, ՍԿՍՈՒՄ Է ԽՈՋԻ ՆՄԱՆ ԽՈՒՆՈՎԼ»

ԳԵՂԱՄՅԱՆԸ ԴԵՄ Է ՍԵՎ ՈՒ ՄՊԻՏԱԿԻՆ

«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ՀԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՎԱԽԹԱՆԳ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ «ԵՐԿՐԻ ԹԵՄԱՆ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ
ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

«ԿԵՆՏՐՈՆ» ՀԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՐՈՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
«ՈՒՐՎԱԳԻԾ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒՐԸ
ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

«ԱՐ» ՀԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՓՍԻՄԵ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
«ԱՍՊԱՐԵՁ» ԾՐԱԳՐԻ ՀՅՈՒՐԸ
ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱԳԱՀ ԱՐՏԱՇԵՍ
ԳԵՂԱՄՅԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ

... ԴՐԱ ՀԱՄԱՐ Է ԱՅԱԶԱՆԳՍ, ՈՐ ՄԱՐԴԻԿ ՍԹԱՓՎԵՆ, ԿԱՆԳ ԱՌՆԵՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԱՌԱՋԻԿԱ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ՝
ՈՐՊԵՍ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ»
ՆԱԽԱԳԱՀ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ

АРТАШЕ ГЕГАМЯН: ЕСЛИ АОД ВОВРЕМЯ НЕ ОСТАНОВИТЬ, БУДЕТ
БОЛЬШАЯ БЕДА!

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ԶԵՐԾ ՊԱՅԵԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ
ՎԵՐԱՀԱՍ ՎՏԱՆԳԻՑ

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է, ՈՐ ԺՈՂՈՎՈՒՐՆ ԻՄԱՆԱ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. «ԱՄԵՆԱԿԱՐԾ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԵՊԻ ՀԱՂԹԱՆԱԿ՝
ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ ԱՆԿԵՂԾ ԼԻՆԵԼՆ Է ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ» . .